ՈՒՐԲԱԹ
1
ԴԵԿՏԵՄԲԵՐ
VENDREDI
1er DECEMBRE
1972

Le Numéro 0,70 F.

ՅԱՌԱՋԱԳ

ՕՐԱԹԵՐԹ
ՀԻՄՆԱԴԻՐ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

HARATCH

Le Seul Quotidien Arménien en Europe Occidentale
Directrice : Arpik Missakian
32, RUE DE TRÉVISE PARIS 9

— Tél. : 770-86-60 —
C. C. P. Paris 15069-82

Fondé en 1922
R. C. Seine 57 A 2731

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա	Տար. 120 ֆր.	Վեցամսեայ	65 ֆր.
Արտասահման	Տար. 135 ֆր.	Հատը	0,70 ֆր.

48ԴՊ ՏԱՐԻ — ԹԻՒ 12.578

Fondateur : SCHAVARCH MISSAKIAN

48e ANNÉE — N° 12.578

ՀԵԼՍԻՆՔԻԻ ԺՈՂՈՎԸ ԵՒ ԲՐԵԺՆԵԻԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

—o—

(Բ. եւ վերջին մաս)

«Թուսիոյ համար, կ'ըսէ ան, առաւիւ – նուքեան ժամանակաշրջանը ալիցած է»: Այդ առանձնութիւնը պիտի տանէր անշրամարգութեան եւ վճացումի: Մոս – կուա կը գտնուի դիմացը աւելի կենսունակ եւրոպայի ու Չինաստանի մը, ո – րուն ի նպաստ կը գործէ ժամանակը: Կրեմլին իր երեք մտահոգութիւններուն տիպիկները կը գտնէ Միացեալ Նահանգներու եւ ճերմակ աշխարհին հետ իր գործակցութեան մէջ: Այդ երեք մտահոգութիւնն են ազգային ապահովութիւնը, Չինաստանի հետ պատերազմի մը վախը, նոր սպրեյկերպի մը հաստատումը: Մոսկուայի մէջ, Մայիսին, Խորհրդային Միութիւն եւ Միացեալ Նահանգներ խոստացան իրարու դէմ չպատերազմիլ եւ վտանգաւոր կերպով իրարու չհակազդելու: Կրեմլին այս ձեւով պիտի չէզո – քացնէ չինական սպառնալիքը:

«Կը մնար անտեսութիւնը: Ամերիկեան մանանա մը, ամերիկեան ճարտարագիտական թեքնոլոժիան եւ նոր արիւնը բացարձակ անհրաժեշտութիւն մըն են խորհրդային զեկավարներուն համար: Անոնցմէ կը սպասեն մարտակի վերջնական հարուած մը, որպէսզի Ջուրին երեսը բերին իրենց անտեսութիւնը եւ — նուա – զեցնելով իրենց գինուորական ծախքերը – այլեւս իրենց ժողովուրդին բարօրութիւնը չզոհեն երկրին մեծութեան, բան մը, որ չկրցան ընել ցարդ»:

Նախագահ Փոմփիտու, որ վճռական է ուժերու նուազման հարցին մէջ, կը հաստատ սակայն նոր մթնոլորտի մը: Փոմփիտու Ինները համոզեց Ռուսերուն ներկայացնել «անձերու եւ զաղափարներու ազատ շրջապատութիւն եւ տեղեկութիւններու ազատ հաղորդումի» ծրագիրը մը: Վերի հեռուն պէտք է երթալ, պատասխանեցին Հոլանտացիք: Պահանջել այժմու արգելքներուն վերացումը»:

Բայց Փոմփիտու մերժեց նեղ կացութեան մը մատնել Ռուսերը: «Ազատ շրջապատութիւնը», իրրեւ սկզբունք, տեւէ չկրնար դէմ չի կրնար ըլլալ: Գրուած է 1936ի Սահմանադրութեան մէջ, որ հրապարակուր է իր ազատականութեամբ: Սակայն, որուն համար հակասութիւնները նշանակութիւն չունէին, այդ սահմանադրութիւնը յղացաւ այն օրերուն, երբ կը պատրաստէր Սարսափը: Գործնականին մէջ, զաղթել ուզող Հրեաներու պարագան ծանօթ է: Փոմփիտուի ոումբը Քրջուած է: Ռուսերը, եթէ ընդունին «արդար եւ զաղափարներու ազատ շրջապատութիւնը», զայն պիտի չգործադրեն առանց խարականութեան: ԹԱՍ գործակալութեան անօրէնը՝ Լէոնիտ Զաձիքին արդէն կ'ըսէ. «Չկարծեն, թէ խաղաղ գոյակցութեան պատրուակով, կարելի պիտի ըլլայ ճեղք բանալ եւ աւերիչ գաղափարաբանութիւն մը ներմուծել»:

Փոմփիտու մէկ կէտի մէջ յաջողեցաւ: Շնորհիւ իր յամառութեան, Հելսինքի պրոքէ պրոք ճակատում մը պիտի չըլլայ, այլ իւրաքանչիւր երկիր պիտի ստանձնէ իր պատասխանատուութիւնը, նոյնիսկ Սէն-Մարքէն: Բայց, Մոսկուա – Ուաշինկթըն խօսակցութիւնը սկսած է Եւրոպացիներու դլխուն վրայէն: Սեպտեմբերին

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ԱԶԳԱԺՈՂՈՎԸ ԵՒ ՄԵՐՁԱԻՈՐ ԱՐԵՒԵԼՔԸ

—o—

Ազգաժողովի մէջ կրկին օրակարգի հարց դարձաւ Մերձ. Արեւելքի տագնապը, թէեւ, ինչպէս ուրիշ առիթներով տեսնուած է, դրական ոչ մէկ լուծում կը նախատեսուի այդ ուղղութեամբ: Երկու կողմերը՝ Իսրայէլ եւ Եգիպտոս, կը յամառին իրենց տեսակէտներուն մէջ եւ, ինչպէս դէտեր նկատել կուտան, նոյնիսկ աւելի կարծրացուցած են իրենց դիրքը:

Ազգաժողովին մէջ առաջին խօսողը եղաւ Եգիպտոսի Արտաքին նախարարը՝ Մոհամմէտ Զայաթ, որ Իսրայէլի նկատմամբ «պատժական միջոցներ» պահանջեց: Անհրաժեշտ է տնտեսական եւ դինուորական պատժական միջոցներ սահմանել, եթէ Իսրայէլ չպատրաստ տեսնել Մերձ. Արեւելքի հարցին խաղաղ լուծումը: Եգիպտոսի ներկայացուցիչը նոյնիսկ Իսրայէլի արտաքսումը կը նախատեսէ ՄԱԿէն: Մոհամմէտ Զայաթ յիշեցուց նաեւ թէ ՄԱԿը ներկայիս «ծանր տագնապ» մը կը ըոլորէ, որովհետեւ «անկարող» է լուծելու միջազգային տագնապալի հարցեր:

Ի պատասխան Եգիպտոսի Արտաքին Նախարարի խօսքերուն, Իսրայէլի ներկայացուցիչը՝ Թեքոահ կրկին յիշեցուց իր երկրին պայմանը — խաղաղութեան չուրջ ուղղակի բանակցիլ արաբ երկիրներու հետ: Եգիպտոս կը մերժէ բանակցիլ, նկատել տուաւ ան:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԱԶԳ. ԺՈՂՈՎԻ նախագահը Փէրէթթէ, ըստ աւանդութեան վայրկեան ընդունելութիւն մը տուաւ առջի երիկուն, որու կը մասնակցէին Հանրապետութեան Նախագահը եւ 4000 հիւրեր: Զանազան պատյաներու եւ հանդիպումներու ընթացքին Նախագահ Փոմփիտու որամիտ եղյթներ

Բրեժնեւ եւ Հէնրի Քիսինճէր պատրաստին զաղանի խօսակցութիւններու ժամանակացոյց մը, զոր կոչեցին «դէպքերու յայտագիր»: Ֆրանսացիք, որոնք տեղեակ չէին պահուած, զայրացած են ու կը կարծեն, թէ միայն անվերջանալի ժողով մը կրնայ թուլցնել Արեւելքի երկիրներուն կապերը Մոսկուայի հետ:

Պրոքէ պրոք խօսակցութիւններու ուրիշ օրինակ մը. մինչ Եւրոպացիք անտեսական խօսակցութիւններու մէջ կը վախնան խորհրդայինեւամերիկեան սերտակցութենէ մը, Թոյլ տուին, որ ՕՊԱՆԷ միջոցով, Ուաշինկթըն պատրաստէ ըոլոր թղթածրարները: Ինները այնուհետեւ միայն փոքր վոփոխութիւններ մտցուցին:

Ի վերջոյ, Եւրոպացիներէն կախում ունի ինքնապաշտպանութիւնը: Ամերիկան բնական է: Որովհետեւ աղերսարկուն Բրեժնեւն է: Բրեժնեւ, որ տէրն է սառած զինանակալութեան մը եւ խափանուած երկրի մը, պէտք ունի անչարժ, իր հսկային զոյավիճակին մէջ զամուած Եւրոպայի մը: –

Ինքն է որ կը պոռայ. «Պահպանողական ուժեր Եւրոպայի բոլոր երկիրներու, միացէ՛ք»:

ԵՐԵՒԱՆ ⇔ ՓԱՐԻԶ
ՀԵՌԱՏԻՊ

ԵՐԵՒԱՆ (Արմէնփրէս, Նոյ. 23էն 27)

ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐՈՒ ԳՈՐԾԵՐ՝ ՌՈՒՍԵՐԷՆ

«Սովետական Պրոսաեվ» (Սովետական դրող») հրատարակչականը ծրագրած է յաջորդ տարի ռուսերէնով լոյս ընծայել տասնհ աւելի հայ դրագէտներու գործեր՝ 250·000է աւելի տպաքանակով: 1973ին Մոսկուայի մէջ առանձին հատորով լոյս կը տեսնեն Ե. Զարենցի բանաստեղծութիւնները՝ չտեր նոր թարգմանութեամբ: Տարեվերջին լոյս կը տեսնէ Գևորգ Էմինի «Դար, երկիր, սէր» հատորն, որ բաղկացած է երեք բաժինէ: Առաջին բաժնին մէջ կայ «Փարիզեան բանաստեղծութիւններ»ու շարքը: Երկրորդին մէջ հեղինակին ուշադրութիւնը

ունեցած է կօլխոս թէ ձախ պարագլուխներու հետ: Այս առթիւ յայտնած է նաեւ թէ ինք անձնապէս դէմ է մահավճիռի ընդումին բայց դէմ չէ որ Ազգ. Ժողովը այդ հարցը ծեծէ:

ԿԱՌՔԵՐՈՒ վիեննէթքը պնդելու վերջին պայմանաժամն է Ուրբաթ, Դեկտ. մէկ, կէս գիշեր: Այդ ժամէն ետք գնողները տուգանք ալ կը վճարեն: Միւս կողմէ կառքերու ապահովագրութիւնը 4էն 5 առ հարիւր յաւելում պիտի կրէ:

ԴՐԱՄԱՏՈՒՆԵՐՈՒ եւ թղթատարի գործադադուլի չարժումները դադրած կը նկատուին երկու սպասարկութեանց կողմէ նորմալ գործունէութիւնը:

ՀՈԼԱՆԴԱՑԻ ընտրութիւնները ձախի որոշ յառաջդիմութիւն ցոյց տուին բայց կը թուի թէ երիտասարդները մեծ դեր չունին այդ ուղղութեամբ: Արդարեւ, առաջին անգամն էր որ 18 տարեկան երիտասարդները քուէի իրաւունք ունէին: Կը կարծի թէ Հոլանտա դէպի սքանտինաւեան ընկերվարութիւն կ'երթայ:

ՖՐԱՆՍԱՑԻ եմատական նախարարը յաջորդ Նախարարաց Խորհուրդէն ա – ռաջ խակ, կը փորձէ միջոցներ ձեռք առնել պինելու յաւելման դէմ: Այսպէս, դեռնախձորը քիլօն հինգ տոնթիմ պիտի պակսի, ըստ սակայն տեսակին եւ նահանգին: Ամէնէն ժամանը Ֆրանսայի հիւսիսը պիտի ըլլայ: Միւս կողմէ Ընկերատիրոյ Հարցերու նախարարը՝ Խակար Ֆօռ չատ գոհ չէ գահլիճի իր ընկերներէն, որուած ըլլալով որ կառավարութիւնը իր մասը ընկերային ծրագիրներէն միայն հինգը ընդունեցաւ:

ԱԼՊԱՆԻԱ կը մերժէ «հաչտուիլ» Մոսկուայի հետ: Ինչպէս հաղորդած էինք երէկ, Մոսկուա կ'ուզէ բարելաւել իր յարաբերութիւնները Թիրանայի հետ: «Իզվեստիա» այս իմաստով յօդուած մը լոյս ընծայած էր: Ալպանիոյ Համայնավար կուսակցութեան Ա. քարտուղարը՝ Ենվեր Հօճա ճառ մը խօսելով նկատել տուաւ, թէ «Ալպան ժողովուրդը եւ իր կուսակցութիւնը պէտք է պինուին եւ երբեք չընկրկին, որպէսզի դէմ դնեն ամերիկեան զաղթատիրութեան եւ խորհրդային վերաքննականներու»:

Զեխ ճառարակի ախոյեանը՝ Փաչման, Միւնիխի մէջ հաղորդեց, թէ ներկայիս 40 չեխ մտաւորականներ բանտարկուած են, իրրեւ «վարչակարգի թշնամի»: Հաղորդեց նաեւ, որ անցագիր ստանալու համար իրմէ պահանջուած է 26·000 քրաուն (չուրջ 10·000 Ֆր.):

ուղղուած է հայ ազգի ճակատագրին՝ նայիլերեան հինաւուրց երկրին պատմութեան:

Երիտասարդ սերունդի բանաստեղծները պիտի ներկայացնէ Լուդվիգ Դուրեան, իր «Եղէգնի ստուերը» հատորիկով: Անոր անդրանիկ գրքոյկն է ռուսերէնով: Բանաստեղծներու շարքին տեղ գտած է նաեւ Ղարաբաղցի Աբրահամ Բախչունի: Աբմակը կը ներկայացնէ աւագ սերունդի դրագէտները: Զարզանդ Դարեանի «Սայաթ-Նովա» վէպը, Անահիտ Սեկոյեանի «Եթէ Որոտանը խօսէր» վէպը, Լեւոն Հուրունցի «Ղարաբաղեան պոէմ» վէպը (Լ. Հուրունց ռուսերէն կը գրէ) մաս կը կազմեն հրատարակելի հատորներու շարքին: 1973ին պիտի հրատարակուի նաեւ Գեղամ Սեւանի «Հրկիզուող ձիթենիները» հատորը: Նախապէս (1965ին) հրատարակուած էր անոր «Բիւրեղապակեայ ամրոցը» գիրքը՝ հայկական կեանքի մասին արտասահմանի մէջ: Լոյս կը տեսնեն նոյնպէս Սուրէն Գայթարեանի «Պոէզիայի երկրում» եւ Սուրէն Ալթարեանի «Գրականութիւնը եւ արուեստականութիւնը» գրագատական գործերը:

×

ՆՈՅԵՄԲԵՐԵԱՆ ՇՐՋԱՆԸ

Ներկայ Հայաստանի հիւսիս –արեւմուտքը կը գտնուի այս շրջանը՝ 538 քառ. քիլոմեթր տարածութեամբ: Կը նկատուի Հանրապետութեան 37րդ վարչա–տնտեսական շրջաններէն մէկը: Ակագ. Վ. Համբարձումեանի բնորոշումով շրջանը «Հայկական Քալիֆորնիա» մըն է, քանի որ մերձարեւադարձային մշակութիւններու «հայրենիք»ն է: Հոն կը բուսնին ձիթապտուղ, ալնիւ գաւինի, նուռ, թուղ, ճաճանական արմաւ եւայլն: Բնական է ըսել, որ ամէն տարի շրջանը պետութեան կը ծախէ 11·000 թոն պտուղ:

Այժմ Լոռիի ձորին մէջ օր ու գիշեր կը հնդկան 16 մեծ կայաններ, որոնք ամէն երկվայրկեան 7–8 խորանարդ մեթր ջուր կը հայթայթեն դաշտերուն: Աւոնցմէ ամէնէն մեծը 1965ին չինուած ջրհանն է, որու վեցերորդ աստիճանը դեռ վերջերս գործածութեան դրուեցաւ: Այժմ Զովազ գետին վրայ չինուելու վրայ է նոր ջրհան մը, որու օգտագործմամբ ոռոգելի կը դառնան աւելի քան 3000 հեկտար նոր հողեր: Մօտ 500 հեկտար հող ալ ջուր կը տանայ չինութեան վրայ եղող Աբճիսի կայանէն:

Բոլոր տուեալները կան հաստատելու, թէ հնգամեակ մը ետք շրջանը կը գտնայ երկրին պղպեղաւծութեան ամէնէն մեծ կեդրոնը: Երբ նորատունկ դաշտերը գտնան բերքատու, տարեկան կ'արտադրէ 25–30 հազար թոն զանազան պտուղ, այնքան, որքան տարիներ առաջ կ'արտադրէր ամբողջ Հայաստանը: Այբռւմ քաղաքը ունի պահածոներու գործատուն, որու տարեկան արտադրութիւնը մօտ 20 միլիոն տուփ է:

×

ՀԱՅ ՄԱՄՆԱԳԻՏԸ ՄԻԶԱԶԳԱՅԻՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆԴԱՄ

Զուիցերիոյ Մակլինեան քաղաքի մէջ տեղի ունեցաւ մարմնամարզի հոգեբան – ներու եւրոպական Դաշնակցութեան խորհրդաժողովը, որուն խորհրդային պատուիրակութեան կողմէ մասնակցեցաւ նաեւ Փրոֆ. Ալեքսանդր Լալայեան, Ե–րեւանի «Ֆիզկուլտուրայի Ինստիտուտ»ի հոգեբանութեան ամպիոնի վարիչ: Հայ մասնագէտը զեկուցեց «Մարզիկի հոգեբանական նախապատրաստութիւնը» նիւթին մասին: Ժողովը համաձայն գտնուեցաւ անոր տեսակէտներուն: Փրոֆեսէօրը անդամ ընտրուեցաւ յիշեալ Դաշնակցութեան տեղեկատուութեան մարմնին:

ԸՆԿ. Ս. ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ ՅՈՒՇԵՐԻՆ

—o—

Բ.

Սարհատ վերցուց կեղծ դրամները, դրաւ խուրջինի մէջ: Բէկին տուաւ սակայն մը: Այդ թուղթով բէկը պիտի ներկայանար կառավարութեան տունը եւ սանար իրական դրամներ: Մենք, կեղծ ասիկանները, շրջապատեցինք Փայթոնը. Սիմոնը ցատկեց իր տեղը, Հինովնիկ Սարհատը դրամներու խուրջին առած տեղատուութեան կառքի մէջ ու ելանք ճամբայ: Առանց վանդի հասանք Կարս: Դրամը յանձնեցինք Կ. Կոմիտէին:

Քանի մը օր եաք բէկը կը ներկայանայ Կարսի քաղաքապետին: Յոյց կուտայ հնիքով զարդարուած պաշտօնական թուղթը: Հոն, իբրեն կը յայտնեն, թէ խաբուած է. զոհ գացած՝ կեղծարարներու: Անշուշտ, հասկցան, թէ Հայերու, մասնաւորաբար, Դաշնակցականներու գործն է: Սկսան փնտռտուքի. բայց, ինչպէս պիտի գտնեն: Դրամը գնա՛ց ու գնաց:

Այդ դրամով կազմուեցաւ Թումանի եւ Որսորդ Գէորգի «Որսորդ» խումբը, որ հապճեպ ահմանը անցած, կռուի բռնուելով՝ մեծ մասամբ ջարդուեցաւ:

Այդ խումբի մէջ էի, նաեւ ես:

Խումբը կը բաղկանար 61 հոգիէ: Բաժնուած էինք չորս տասնեակի: Խմբապետ նշանակուած էին Թորգոմը (Թումանի Թումանց) եւ Որսորդ Գէորգը: Խումբի մէջը կար տարեց քահանայ մը՝ Տէր Ղազարը: Ցունիսի վերջին դիշերը քահանան պատարագեց. հաղորդութիւն տուաւ բոլորիս. օրհնեց մեր դէօշակը: Մութին ճամբայ ելանք, բարձրացանք լեռ: Հանգչելու համար կեցանք Բուլիկ Ագըլըի մօտ: Պահակ դրինք տեղին ծանօթ գինուոր մը Զարդանիս դիւղէն՝ Միսաքը:

Այդ օրերուն Ռուսաց սահմանապահ գինուորները «Բլաստուն Կոպակ»ներն էին: Իրենց հրամանատարը գնդապետ Բլիւմն էր, որի ընտանիքը կը բնակէր Օլթի քաղաքը: Իրեն յանձնուած էր Ճորոխ–Ղարա Ուրհան – Բերդուզ – Օլթի սահմանագլուխը: Վատ, հայատեաց մարդ էր Բլիւմը:

Դժբախտաբար, պահակ Միսաքը կը քնանայ գէնքը ձեռքին: Կոզակներու չըրջուն պահակախումբը կը տեսնէ գինուած մարդ մը եւ լուր կուտայ իր պետին. ան ալ՝ Տաճիկներուն: Արդէն գիտեն եղեր, որ խումբ պիտի անցնի: Առաւօտուն պատրաստ էինք ռուս, տաճիկ գինուորներէ: Մենք չէինք ուզեր Ռուսերու հետ կռիւ ունենալ: Թորգոմի հրամանով, Տէր Ղազարը խաչը բարձր բռնած յառաջացաւ դէպի Ռուսերը բացատրելու, թէ մենք կը կռուինք Տաճիկներու դէմ, եւ կ'երթանք պաշտպանելու մեր հալածուած եղբայրները: Ռուսերը կրակ բացին Տէր Ղազարի վրայ: Ղրկեցինք ուրիշ պատգամաւոր մը: Զինուորը եւ չեկաւ: Որսորդ Գէորգը խնդրեց Թորգոմէն կռուիլ Ռուսերու դէմ եւս, քանի որ ռուսական հողի վրայ չէինք եւ անոնք կը կրակէին մեր վրայ: Թորգոմը չհաղնեց:

Մեր առաջին զոհը եղաւ Համբարձում անունով ընկեր մը: Մականունը մոռցած եմ: Նրան յանձնեցինք Կարնեցի Գաբրիէլեան, որպէսզի Զարդանիս հայկական դիւղը տանի: Ռուսերը խիեցին երկուքին ալ: Մեր կացութիւնը չատ վատ էր: Ինկած էինք երկու կրակի միջեւ: Մէկ կողմէն խաչապաշտ Ռուսը, միւսէն՝ Տաճիկը: Կռիւը չարունակուեցաւ մինչեւ լրիւ մութ: Բայց, առանց մեզ մտիկ ընելու՝ խմեց: Արդէն լուսնալուս մօտ էր: Ինչ մըն ալ յառաջանալով տեսանք, որ Զարդանիսի մօտ ենք: Դիւղացիները անմիջապէս փոխեցին մեր հագուստները: Մենք եղանք դիւղացիներ:

Այդ դիւղի մէջ ունէի մի մօրաքոյր: Գնացի մօտը եւ յայտնեցի՝ թէ ազգիւրի մօտ մի վիրաւոր ունինք: Քանի մը տղամարդիկ վազեցին հոն: Վիրաւորը մեռած էր: Բերին դիակը, որպէսզի ռուս կառավարութիւնը չգտնէ: Ժամը 10ին, Նաչալնիկի հրամանով հաւաքեցին դիւղի բոլոր տղամարդիկ եւ տարին Բուլիկ Ագըլիւրի մօտ նահատակուած ընկերների դիակները հաւաքելու: Մեզ էլ տարան հետերնին: Հաւաքեցինք ազատագրու – թեան պայքարի մէջ նահատակուած մեր զոհերու դիակները, եւ դաւառապետի հրամանով թաղեցինք զանոնք ու կը փոխադրուին Օլթիի բանտը՝ հարցաքննուելու:

Ես, Մշեցի ընկերոջ մը հետ պահուըտեցայ քարերու արանքը: Մեզի հետ էր ծանր վիրաւոր ընկեր մը: Մութը կոխեց: Երբեմն քալելով, երբեմն չալակով կը տանէինք վիրաւորը: Կ'աշխատէինք հասնիլ, լոյսը չբացուած, Զարդանիս դիւղը: Մեր չորերը եղան կատը–կատը: Ծարաւէն կը մեռնէինք: Բերանիս չորցած էր. չէինք կրնար խօսիլ: Յանկարծ չչուկ մը լսեցինք: Եռնչերնիս բռնած մնացինք ցախերու մէջ: Մշեցի ընկերս լսաւ. «Տըղայ, էդ ջուրի ձայն է»: Կարծես ուժ առինք: Ձայնի ուղղութեամբ սկսանք յառաջանալ եւ գտանք ազբիւր մը: Ագահօրէն խմեցինք: Չէինք ուզեր վիրաւոր ընկերոջ ջուր տալ. բայց, առանց մեզ մտիկ ընելու՝ խմեց: Արդէն լուսնալուս մօտ էր: Ինչ մըն ալ յառաջանալով տեսանք, որ Զարդանիսի մօտ ենք: Դիւղացիները անմիջապէս փոխեցին մեր հագուստները: Մենք եղանք դիւղացիներ:

Այդ դիւղի մէջ ունէի մի մօրաքոյր: Գնացի մօտը եւ յայտնեցի՝ թէ ազգիւրի մօտ մի վիրաւոր ունինք: Քանի մը տղամարդիկ վազեցին հոն: Վիրաւորը մեռած էր: Բերին դիակը, որպէսզի ռուս կառավարութիւնը չգտնէ: Ժամը 10ին, Նաչալնիկի հրամանով հաւաքեցին դիւղի բոլոր տղամարդիկ եւ տարին Բուլիկ Ագըլիւրի մօտ նահատակուած ընկերների դիակները հաւաքելու: Մեզ էլ տարան հետերնին: Հաւաքեցինք ազատագրու – թեան պայքարի մէջ նահատակուած մեր զոհերու դիակները, եւ դաւառապետի հրամանով կողոպտեցինք զանոնք ու կը փոխադրուին Օլթիի բանտը՝ հարցաքննուելու:

Ես, Մշեցի ընկերոջ մը հետ պահուըտեցայ քարերու արանքը: Մեզի հետ էր ծանր վիրաւոր ընկեր մը: Մութը կոխեց: Երբեմն քալելով, երբեմն չալակով կը տանէինք վիրաւորը: Կ'աշխատէինք հասնիլ, լոյսը չբացուած, Զարդանիս դիւղը: Մեր չորերը եղան կատը–կատը: Ծարաւէն կը մեռնէինք: Բերանիս չորցած էր. չէինք կրնար խօսիլ: Յանկարծ չչուկ մը լսեցինք: Եռնչերնիս բռնած մնացինք ցախերու մէջ: Մշեցի ընկերս լսաւ. «Տըղայ, էդ ջուրի ձայն է»: Կարծես ուժ առինք: Ձայնի ուղղութեամբ սկսանք յառաջանալ եւ գտանք ազբիւր մը: Ագահօրէն խմեցինք: Չէինք ուզեր վիրաւոր ընկերոջ ջուր տալ. բայց, առանց մեզ մտիկ ընելու՝ խմեց: Արդէն լուսնալուս մօտ էր: Ինչ մըն ալ յառաջանալով տեսանք, որ Զարդանիսի մօտ ենք: Դիւղացիները անմիջապէս փոխեցին մեր հագուստները: Մենք եղանք դիւղացիներ:

Այդ դիւղի մէջ ունէի մի մօրաքոյր: Գնացի մօտը եւ յայտնեցի՝ թէ ազգիւրի մօտ մի վիրաւոր ունինք: Քանի մը տղամարդիկ վազեցին հոն: Վիրաւորը մեռած էր: Բերին դիակը, որպէսզի ռուս կառավարութիւնը չգտնէ: Ժամը 10ին, Նաչալնիկի հրամանով հաւաքեցին դիւղի բոլոր տղամարդիկ եւ տարին Բուլիկ Ագըլիւրի մօտ նահատակուած ընկերների դիակները հաւաքելու: Մեզ էլ տարան հետերնին: Հաւաքեցինք ազատագրու – թեան պայքարի մէջ նահատակուած մեր զոհերու դիակները, եւ դաւառապետի հրամանով

Arménie de toujours!

B) L'ESPRIT DES LOIS

Le code de lois arméniennes (le datastanagirk) composé au XIIe siècle par Mekhitar Gosch dit par exemple : « le pays appartient au roi et à la noblesse. Il est vrai que *l'homme est né libre*. Mais il doit se soumettre à une autorité supérieure pour que la culture des terres et *leur irrigation* puissent être assurées ». On ne peut qu'être confondu devant la nuance et le modernisme de la réflexion de ce penseur.

Cette affirmation renforce l'autorité royale mais on ne peut qu'admirer l'esprit — moderniste au sens de période historique — de ce législateu philosophe.

La population des villes comptait parmi elle de nombreux artisans qui menaient une vie mi-urbaine et mi-rurale, travaillant l'hiver dans la ville et l'été cultivant leur lopins de terre dans les environs.

Si l'on se refère à la conquête arabe on peut trouver ici *un compromis* (dans le processus de redistribution des pouvoirs et des terres propriété des nobles) entre les mondes de l'occident chrétien et de l'orient islamique. Les Arméniens ont assumé un rôle de médiation civilisatrice entre l'occident et l'orient, en sade le démontrer, leur propre spécificité.

A l'exemple de Byzance et du *monde arabe* le monde des métiers était organisé en un système de corporations. Le livre

Ծաղկած Փշալարեր

(ՎԻՊԵՐԳ)

Զկայ եւ գործարար բակը, չկան նրա արհեստանոցները: Գուցէ քո պա – ուերից մէկն ու մէկը կանգնած է դեռ, այստեղ այնտեղ թրծուած ամանների կտորները, մի ղերան... նստել եւ լալ, լալ կարօտով ու սիրով, վայելել քո մնացորդները...

Ես գիտեմ ինչու, ես գիտեմ:

Որովհետեւ եթէ վանի բերդի պա – րիսպների խստահայեաց, քարէ թաթ – թիչների տակ թաղուեց իմ ղանդրահար ու խլրտուն մանկութիւնը, ապա քո փլատակների տակ թողի ես իմ ճղակոտոր ու խոշտանգուած երիտասարդութիւնը, անյուշ ու անվերադարձ, անյուշ ու անդարձ:

Բրուտանոց դու իմ, բրուտանո՛ց:

. . . . . .

Երեկոյեան կողմ բրուտանոց մտաւ Բիչխոն, անբաժան, կարճ մտրակը ձեռքին, եւ ու առաջ չալմելով: Ի դէպ, ասած, այդ մտրակը նա զործի էր դնում, երբ հարկաւոր էր մի բան յոյց տալ: Այս անգամ նա դիմելով Գերմա – նուհուն, յոյց տուեց երկու բաժին հաց:

— Գո՞հ ես, — հարցրեց նա:

— Շնորհակալութի՛ւն, — պատասխանեց Գերմանուհին:

Բիչխոն հասկացաւ, որ Գերմանուհին դառնացած է: Նա աջ ձեռքով մտրակը խփեց ձախ ձեռքի ափին մի քանի անգամ եւ աւելի մօտեցաւ Գերմանուհուն:

— Ես գիտեմ, որ քո աշխատանքն աւելի արժէ... դուցէ եւ կարողանամ մի կերպ երկու բաժին հաց եւս, իմ միջոցներից...

— Պէտք չէ, քաղաքացի պետ, — բողոքեց Լիուդմիլան, — այդ մասին, խընդրում եմ, ոչ մի խօսք... Ես կալանաւոր եմ, պարտաւոր եմ կատարել բոլոր հրամանները... դրա համար օրաբաժին եմ ստանում... Ես չեմ ուզում յիշել, քաղաքացի պետ, իմ թշուառ կացութիւնը... Ես իմ արուեստը երբեք վաճառքի չեմ հանել...

— Բաժանմունքի պետը եւ ձամբարի պետը չատ զոհ մնացին քո աշխատան – քից, — ասաց Բիչխոն, այնպիսի տոնով, ասես չէր լսել Գերմանուհու բողոքը, — ինձ յանձնուեց թոյլատուութիւն վերցնել, որ դու ազատ ժամերին զբաղուես քո սիրած զործով: Միայն, ի սէր Աստուծոյ (նա իր խօսքն ուղղեց նաեւ Աչոտ դատարանին), կասկածելի մարդկանց զլուխները մի՛ սաթքէք, ձեզ հետ ես էլ կը տուժեմ... սաթքէք Վորոշիլովին, բանից... սաթքէք... ըըը... — նա մտրակի կոթով ականջի եաեւը քորեց եւ դուռ, — սաթքէք երկու Ստալին, նոյն պայմաններով... եղա՞ւ...

— Ոչ, չեղաւ, քաղաքացի պետ, — մի փոքր լռելուց յետոյ առարկեց Գերմանուհին, — ժողովրդի թշնամիների ոտների տակ հանցուած կաւից, լրտեսի մատներով... դա բարդ զործ է, կապուած բարդութիւնների հետ... Ինձ հետ դուք էլ կը տուժէք... կարող էք հանդիսատ լինել, իմ քանդակած բոլոր զլուխները...

— Համոզուեցի՛, — ընդհատեց Բիչխոն, — այնուամենայնիւ մտածիր իմ առաջարկութեան մասին... ես, ես կը մտածեմ քո առարկութեան մասին: Մտածելու բան է, հըմ...

Նա մի ծխախոտ վառեց ու դուրս եկաւ թողնելով իսկական ծխախոտի հաճելի բուրմունքը:

Օրուայ այն ժամն էր, երբ Մամօն պատրաստում էր նախընթրիքն, իսկ նա այսօր կարծես այդ մասին չէր մտածում: Լիուդմիլան մի–երկու անգամ եաւ նայեց Մամոյի կողմը. վերջինս նստած պատուհանի մօտ՝ ծխում էր տարուած ինչ–որ անուրախ մաքերով: Օրը թեքւում էր դէպի երեկոն, չուտով կը հնչէր բանթողի զանգը, ի՞նչ է մտածում Մամօն: Իսկ Լիուդմիլան ուտել է ուզում: Մամօն քիչ բան հասկացաւ, ինչպէս ինքն է ասում. «Լիուդմիլայի» եւ «Բիչխոյի» բանակցութիւններից: Նա այն կարծիքին է, որ Լիուդմիլան դժգոհ է իր վարձատրութիւնից: Նա երեւի կ'ուզենար աւելին: Միւս կողմից, պետը տուեց այնքան, որքան խոստացել էր, իսկ Լիուդմիլան չէր առարկել, էլ ինչո՞ւ դժգոհել: Ի՞նչ, քիչ բան է որ երկու բաժին հացը: Այսօր Մամօն կարտոֆիլ չի խաչել, այսօր կը նստեն հաց կ'ուտեն, այս բառն ոչ թէ փոխաբերական, այլ իսկական իմաստով: Հա՛ց կ'ուտեն, ի՞նչ ուրախութիւն եւ կ'ուտեն ոչ թէ իրենց օրաբաժինը, այլ ուղղակի երկնքից ընկած հաց: Իսկ ճամբորդ սպասում է իրենց օրաբաժինը: — Ինչ լա՛ւ բան է առաւտութիւնը, — մտածում է Մամօն:

Առանց երկար մտածելու պատռեց այդ տուփը:

Իմ մօրաքոյրս ամուսնացած էր Սպո Պօյաճեան անունով հակապաշնակցական մարդու մը հետ: Կառավարական պաշտօնեայ էր: Գնացինք անոր տունը: Համբուրուեցանք մօրաքոյրիս հետ: Սամա – վարէն թէյ չինեց. պահրով հացը կէսօրանք, կշտացանք: Ըսի մօրաքոյրիս, թէ երկու–երեք դիշեր իրեն հիւր պիտի մընանք՝ եթէ կարելի է: Բարի կինը առանց կասկածելու, ուրախութեամբ ընդունեցաւ. մանաւանդ որ ամուսինը բացակայ պիտի ըլլար: Շնորհակալութիւն յայտնելով, Համլետին հետ դուրս ելանք, գացինք այն փողոցը ուրկէ կ'անցնէր դաւառան ռուս գնդապետը ու ընտրեցինք տեսարժան վայրը: Յետոյ, գացինք մեր ընկերներուն լուր տալու, որ կարզադրած ենք տունի խնդիրը: Շատ յարմար գտան: Բոլորն ալ ուրախացան: Մտաը կարած եփրեմը մեզ տարաւ Հալիլի սրճարանը ու լաւ հիւրասիրեց: Այնտեղ որոշեցինք տեսարժան վայրը կատարել Շաբաթ օր, երբ Բլիւմը գիւղ կ'երթայ: Գիտէինք, թէ ռուսիկ – տութիւնը պիտի ձեռնարկէ դաժան խուզարկութեան. անհրաժեշտ էր գտնել պահուելու յարմար թաքստոց մը: Մօրաքոյրս ունէր խոտով լեցուն մարագ մը: Համլետիկը պիտի պահէինք այդ խոտերուն տակը. որովհետեւ, ինչպէս ըսի, տունը, մարագը կը պատկանէին հակապաշնակցականի մը. ռուսիկանութիւնը չէր խուզարկեր այդ տունը: Զմռնամ ըսել, ո՛չ մօրաքոյրս, ոչ ալ իր ամուսինը լուր ունէին այս բաներէն:

Այս հարցն ալ լուծուեցաւ այսպէս:

Եկաւ սպասուած Շաբաթ օրը:

ՍԵՐՈԺ Ա. ԱԲՐԱՀԱՄԵԱՆ

(Մնացեալը յաջորդով)

(18 – Շար.)

du Préfet de la bibliothèque de Genève qui est le code des corporation de Byzance vers le Xe siècle montre le degré de développement de cette institution en orient *avant* son essor en occident.

Nous savons que la Nouvelle Arménie reçut une organisation analogue à celle des Etats fondés en Syrie par les croisés : les assises d'Antioche y eurent force de loi, mais dans le cas arménien tempéré par la tradition, la coutume et la conquête d'une nation « déplacée » et restructurée.

LA PORTEE HISTORIQUE DE LA NOUVELLE ARMENIE

Pour Byzance, l'Arménie était non seulement un Etat tampon mais un bouclier qui protégeait une des frontières les plus sensibles de l'empire contre les dangers de l'est, représentés par l'Iran, les Arabes et les Touraniens. Par *haine religieuse* par désir d'*accroître ses possessions*, Byzance ne fit rien pour renforcer l'unité et la puissance de résistance du royaume d'Arménie ni celle des Etats croisés. Les empereurs byzantins semblaient porter plus d'intérêt à imposer par les armes leur suzeraineté à la Nouvelle Arménie et aux Etats croisés, les obligeant ainsi à lutter sur deux fronts plutôt qu'à parer au véritable danger commun : l'expulsion des envahisseurs d'Asie Mineure. Par cette politique Byzance se porta elle-même un coup dont elle ne se releva jamais complètement.

Avec l'arrivée des Mongols, vers le milieu du XIIIe siècle dans le moyen orient, des projets furent caressés par les Arméniens de *convertir les Mongols au christianisme* mais ils n'aboutirent pas. En effet il nous faut constater que les Mongols n'attaquèrent ni la Nouvelle Arménie, ni les Etats des croisés et concentrèrent leurs assauts sur les Turcs et les Arabes, rétablissant en faveur des Etats chrétiens l'équilibre des forces en présence, en prolongeant dans le temps cette conjoncture.

La Nouvelle Arménie a assuré ce contact de la civilisation orientale, représentée par la culture de Byzance à laquelle participèrent les Arméniens (dont plusieurs princes furent même empereurs de la dynastie dite Macédonienne et qui firent surtout de Byzance une grande puissance militaire) avec l'Europe occidentale qui a été un des *stimulants de la Renaissance* humaniste de l'occident. Nous avons vu qu'elle fut longtemps seule liaison entre l'occident médiéval et les peuples de l'orient et les Balkans.

L'histoire de la Nouvelle Arménie marqua aussi le premier contact des Arméniens avec la civilisation « montante » de Germanie (Frédéric Barberousse dont nous avons évoqué plus haut l'intérêt pour la Nouvelle Arménie et Léon II). L'Arménie fut *alliée des chevaliers de l'ordre Teutonique* avec lequel elle noua de profondes et durables relations.

L'histoire de la Nouvelle Arménie marque également une période de *collaboration entre le Saint Siège et les Arméniens* et l'union de l'église arménienne avec l'église catholique. Mais Léon II se heurta, et il en fut de même pour ses successeurs au farouche attachement du clergé et du peuple arménien à leur ancienne église, à leur tradition et à leur individualisme. Rappelons pour finir que l'Arménie fut le premier pays du monde à proclamer le *christianisme religion officielle* à la fin du IIIe siècle après J.-C. convertie par Grégoire l'Illuminateur.

Telle peut être rapidement évoquée par l'analyse de l'historien « L'Epopée » économique, sociale, politique de ce petit royaume médiéval en Asie Mineure méditerranéenne, que seul le génie traditionnel de tout un peuple, aidé de sa culture ancestrale, a pu accomplir envers et contre les vicissitudes de son temps, de son environnement et de son destin tragique. La *contribution* des Arméniens aux différentes civilisations et les ponts qu'ils ont lancés entre elles, leur permet d'être les citoyens à part entière d'un monde qu'ils ont particulièrement façonné jusqu'à nos jours et qui leur doit une place de choix dans son histoire universelle : mémoire du passé, somme de l'expérience et guide pour le futur.

GUY MIKAELIAN

(Fin)

Գաղութէ Գաղութ

ՊՈՄՊԷՅԻ (Հնդկաստան) մէջ ամերիկեան հիւանդական ուժի յանձնախումբի վարական ներկայացուցիչն է Ճոն Փինա – ճեան: Հայ պիտականը, որ նոր նշանակուած է իր այդ պաշտօնին, 1955էն ի վեր անդամ է Օք Ռիճի հիւանդական տարածաշրջանի պիտական անձնակազմին: Ճ. Փինաճեան, որ մանուպէտ է «իպթովի»ներու մարզին մէջ, մօտ ատոր ամիս դանուած է Պանգոկ, ուր ծառայած է Թայլանդի հիւանդական ուժի խաղաղ չհակազդման պրոպեներուն մէջ: Գտնուած է նաեւ Հոլանտա, ուր ծառայած է իբրեւ անօրէն պիտական տարրաշրջածարանի:

ԹՈՒՐՔԻՈՅ ճատարակի 1972ի ախոյեան հռչակուած է Օր. Լինտա Օհանեան: Հայուհին 19 տարեկան է:

ՆԿԱՐԱՀԱՆԴԷՍ

Երիտասարդ նկարիչ Հրաչեայ (Պարսումեան) նկարահանդէսը որ կազմակերպուած էր Պիւրատ ընկերութեան Շան պ'Էլիզէի սրահներուն մէջ, վերջ գտաւ յաջողութեամբ:

Այցելուներու մեծամասնութիւնը կը բազկանար Եւրոպացիներէ, եւ ի մասնաւոր Գերմանացիներէ, որոնք մեծ հետաքրքրութիւն ցոյց տուին, իր տեսակին մէջ արտակարգ նկարիչի պատառներուն:

Անկեղծօրէն պէտք է խոստովանիլ, որ նկարիչ Հրաչեայ կը ներկայանայ իբրեւ բայառուկ եւ հատուածուն յատկութիւն – ներով: Մէ՛դմ, չատ մեզմ նկարագրի աէր, բայց զօրաւոր կամքով:

Իր գունապեղ, քնքոյշ, ներդաշնակ եւ բանդապնակը հակադատկերն է իր նկատած պատառներուն փոնեներուն:

Զանազան նկարները զրաշմուած են առեղծուածով, որ մեծ թովչանք կը թուղն դիտողին վրայ:

Իր թիւ 2 մեծադիր պատառին առջեւ երկ՛ր վայրկեաններ բաւական չեղան վերլուծելու համար նիւթը, ու պահ մը վերապած, յանկարծ յիշեցի Սիամանթոյի «Մօր մը երազը»... «Զորս եղրայրներդ յանկարծակի իմ առջեւս ծունկի ինկան»: «Ոչ պատանք կար իրենց վրայ, եւ ոչ ալ հետքը մսի, «Խաւարի մէջ սրսփալով եւ աչքերնին մէյ-մէկ անդունդ»...:

Կարծես սոյն բանաստեղծութենէն ներշնչուած է նկարիչը, վրձինը ձեռքին:

Որքա՜ն մեղմութիւն երանգներու ու կերպարի մէջ, բայց ի՜նչ մթութիւն խորութեան մէջ, որ նկարին մեծ արժէք կուտայ եւ խորհրդաւորութիւն:

Հրաչեայ Հոմի ցուցահանդէսին մէջ չհած է երկրորդ մրցանակը իր մէկ նկարով, խակապէս արժէքաւոր, զոր անդլիացի անձնաւորութիւն մը գնած է:

Նկարիչի արժէքը ի յայտ կուգայ այն իրողութենէն, որ իր ցուցադրած երեսուն նկարներէն 17 հատը արդէն գնուած է պանագան անձնաւորութիւններէ:

Գալով իր փոքրադիր, բայց մեծարժէք նկարներուն, մեծ հետաքրքրութիւն եւ ապատորութիւն կը թողուն դիտողին վրայ:

Բաց-գոյն փոնով նկարը համարժէք չէ միւսներուն, որով նախընտրելի է կերպարը չարունակել իր անձնական մուէ փոներով:

Ապագայի մեծ նկարահանդէսներու եւ նարանար յաջողութիւններու չերմ մաղթանքներ երիտասարդ տաղանդաւոր նկարիչին:

ԿԻՒԼԷՆԻՄ ՉՊՈՒՔՃԵԱՆ

ԼՐԱՏՈՒ ԱՐՈՒԵՍՏԻ

Մօտ օրէն հրապարակ կ'ելլէ վոկ Ընկերութեան նոր երգչախումբը նուիրուած Հայ Ռոմանթիք երաժշտութեան, պատրաստած Ալա Պարթեւեանէ:

Հայեր Գաւառէն

ՅԱՋՈՂ ԹԷՅԱՍԵՂԱՆ ՄԸ

Կապոյտ Խաչի Տէսթի մասնաճիւղի վարչութիւնը կազմակերպած էր թէյարեղան մը, զպրոցի վերամուտի առթիւ ի պատիւ ուսուցչուհի Տիկին Փափազեանի եւ նախկին ուսուցչուհի՝ ընկերուհի Մարի Կարապետեանի: Այս ձեռնարկը յաջողութիւն մը պէտք է նկատել: Գաղութիս ընտրեալ հասարակութիւնը ներկայ էր, ինչպէս միշտ այս անդամ եւս, քաջալերելու կանայի այս մեծ կազմակերպութեան պարզարանքի առարկայ հայկ. զպրոցը:

Բացումը կատարեց ընկերուհի Վ. Զերոնեան կարդալով պրաւոր ուղերձ մը, ուղղուած ծնողքներուն եւ հանդիսականներուն: «Պէտք է պիտակցօքէն քաջալերել մեր մանուկները, որպէսզի անոնք սորվին մեր մայրենի դեղեցիկ եւ սքանչելի լեզուն, Ս. Մեսրոպեան գիրերը պահելով անբիծ ու մաքուր, վառուած նայիրեան մեր ապրին հուրովն ու սիրովը»: Պ. Մ. Պայլոնեան չինիչ խօսքերով ներկայացուց Կապոյտ Խաչի տարած աշխատանքը պատերազմի մէջ եւ իր գնահատանքի խօսքը ուղղեց Տէսթինի Կապոյտ Խաչի անդամուհիներուն եւ սկիզբէն մինչեւ այսօր, Տէսթինի մէջ պաշտօնավարող բոլոր ուսուցիչ – ուսուցչուհիներուն, մասնաւորապէս Տիկին Մարի Կարապետեանի, վեր հանելով անոնց կատարած ազգասիրական գործին արժէքը: Ան աւելցուց, թէ մեր տարագիր կեանքին մէջ մեր դպրոցները յարաւեւման միակ դրաւականը հայ զպրոցն է, որ կը հանդիսանայ մեր բանդակ գործունէութեան ձղտութեան կեդրոնը: Ի մէջ այլոց յիշեց մեր նախնիքներու կատարած քրանային աշխատանքը հայ մշակոյթի անդաստանին մէջ, եւ մաղթեց որ չարունակենք աշխատիլ, եթէ չենք ուզեր մեզմէ հեռ եկողներուն անէծքին արժանանալ:

Խօսքու հրաւիրուեցաւ նաեւ Վահան Վրդ. Թօփալեան, որ իր խօսքը ուղղեց ազգային մշակներուն, անոնց մաղթելով կորով եւ համբերութիւն:

Ներկաներէ Օր. Ս. Կարապետեան, մեներգեցին Տիկին Ա. Նաճարեան, Պր. Գազանճեան եւ Ա. Իշխանեան:

Այս տաքուկ միջոցառումէն հեռ ներկաները իրենց սրտաբուխ նուէրները ըրին: որմէ գոյացած գումարը հեղաւ 820 ֆր.:

ԽԱՉՈՒՀԻ ՄԸ

ՀԱՅԱՊՈՐԾ ԿԻՆԸ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ՀՐՉԻԳԸ

Ը.

Տիկին Ֆօրթիէ նորէն քիչ մը հայ ու չոքալ տուաւ զաւկին եւ սկսաւ յառաջանալ ըստ դիպուածի: Բայց մեծ յոյս պրած էր իր ուժերուն վրայ. իր ցաւած ոտքերը հազիւ կը տանէին դինքը. դիչերը՝ քիչ մը ճամբայ առաւ ու ամիսներ քանիցս կանգ առնել. յոգնութիւնը անօթութեան միացած՝ կ'ընկճէր ժանիքը:

Գիչերը անցաւ ու լոյսը ծագեցաւ: Մանկամարդ այրին միշտ կը յառաջանար, քնացած ժորժը գրկին մէջ: Ժանն նչմարեց պիւղակի մը տուները: Գեղջկուհի մը դիմացէն կուգար: Ժանն կեցուց պայն ու հարցուց.

— Տիկին, կը հաճի՞ք ըսել թէ սա դիմացի դիւղը ո՞րն է:

— Շէյվրի դիւղն է, Պրի-Քոնթ-Ռոպէրի մօտ, պատասխանեց դեղջկուհին:

Ու չարունակեց ճամբան: Տիկին Ֆօրթիէ այլեւս չէր կրնար քալել: Իր ոտքերը կը մերժէին յառաջանալ: Ան սիրելեցաւ ճամբուն եղերքը նստիլ: Կուլա – րած տատը տարու աղջնակ մը կեցաւ Ժաննի դիմաց: Այս վերջինը ըսաւ աղջկան.

— Աղջիկս, ըսէք տեսնեմ, դիւղին ո՞ր մասին մէջ կը գտնուի ժողովրդապետին տունը:

Աղջնակը դիւղին կողմը գառնալով պատասխանեց.

— Պ. ժողովրդապետին տունը ձեր տեսած առաջին տունն է, հունա. սակայն տակ աշտարակիկ մը, սրածայր տանիք մը եւ մեծ ծառեր ունի:

— Շնորհակալ եմ, զաւակս:

Ժանն ոտքի ելաւ, ժորժը թեւերուն մէջ առաւ, ու մաղնիսական քունի մէջ եղող դիչերաշրջիկի մը պիրկ քայլերով սկսաւ յառաջանալ:

Շէյվրիի ժողովրդապետին բնակարանը, հին ու չատ պարզ տուն մը, լաւ դիրք ու չատ հաճելի երեւոյթ մը ունէր: Տան առջեւ կը գտնուէր մարմանդ մը, ուր ծառեր կային: Բնակարանին առին կը տարածուէր բաւական ընդարձակ բանջարանոց մը, ուր պաղատու չատ մը ծառեր ալ կային: Աւելի քան քսան տարիէ ի վեր, միեւնոյն ժողովրդապետը կը ծառայէր այդ համայնքին, որուն բնակչութիւնը չորս հարիւրը չէր անցներ:

Աբրայ Ֆէլիքս Լաժիէ դրեթէ չորսուն տարեկան մարդ մըն էր, դիւրահաղորդ ու ժպտուն դէմքով, քաղցր եւ անկեղծ նայուածքով: Բոլոր թեմականները կը սիրէին ու կը յարգէին պայն: Երիցատան մէջ կը բնակէր իր վաթսունամեայ քրոջ ու ապատուհի մը հետ:

Իր քայլը, տիկին Ֆլարիս Տարիէ, եօթը տարիէ ի վեր այրի, քրոջը քով հատուցած էր, ամուսինը կորսնցնելէն յետոյ. զաւակ չունէր ու բաւական կոկիկ հարստութեան մը տէր էր:

Տիկին Ֆլարիս գորով ու ակնածանք կը ղդար իր եղբօր նկատմամբ ու եղբօրը հետ դիւղին համակրանքը կը վայելէր, որովհետեւ բարեսիրական գործերու կը յատկացնէր իր եկամուտներուն մէկ մասը:

Մեր ընթերցողներէն կը խնդրենք մեզի ընկերանալ Շէյվրիի երիցատունը, քանի չորս ժամ դէպի եռ երթանք, այսինքն առտուն այն օրուան, երբ արեւը փոթորկալից դիչերէ մը յետոյ կը բարձրանար հրկիզուած գործարանին ծխացող փլատակներուն վրայ, ու Ժանն Ֆօրթիէ անտառի մը մէջ կը քնանար իր զաւկին քով:

Ժամը ութուկէս էր: Քահանայ մը երիտասարդ մը կառախումբին վար իջաւ: Ան իր հետ ունէր դիւղանկարչի ամբողջ կազմածը՝ պատկերակալ, ծալածոյ աթոռ, հովանոց, ձեռնակալ, ներկառւիեր: Նկարիչը արագ քայլերով եւ ուրախ դէմքով յառաջացաւ դէպի Շէյվրի տանող ճամբէն, որ հովանաւորուած էր մեծ ծառերով:

Նուրբ եւ կանոնաւոր դիմագծեր, ուշիմ ու ժպտուն դէմք մը ունէր: Իր մութ գոյն կապոյտ աչքերը լմացականութիւն եւ վճռականութիւն կը յայտնէին: Այդ երիտասարդը կը կոչուէր Էթիէն Քասթէլ: Ան բնաւ չէր ճանչցած մայրը: Իր հայրը, Մոնմարթը թաղին մէջ առեւտրական, չորս տարի առաջ մեռած էր, Էթիէնի ձգելով փոքր հարստութիւն մը, որուն չնորհիւ կրցած էր իր նախասիրութեան հետեւիլ եւ այն դեղարուեստական աշխարհին մէջ մուտք գործել, ուր կը յուսար յաջողիլ աշխատանքով ու պատուաւոր տեղ մը գրաւել:

ԿԶԱՎԻԻ ՏԸ ՄՈՆԹԼՊԱՆ

(Շար.)

ՀԱՅԱՊՈՐԾ ԿԻՆԸ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ՀՐՉԻԳԸ

Ը.

Տիկին Ֆօրթիէ նորէն քիչ մը հայ ու չոքալ տուաւ զաւկին եւ սկսաւ յառաջանալ ըստ դիպուածի: Բայց մեծ յոյս պրած էր իր ուժերուն վրայ. իր ցաւած ոտքերը հազիւ կը տանէին դինքը. դիչերը՝ քիչ մը ճամբայ առաւ ու ամիսներ քանիցս կանգ առնել. յոգնութիւնը անօթութեան միացած՝ կ'ընկճէր ժանիքը:

Գիչերը անցաւ ու լոյսը ծագեցաւ: Մանկամարդ այրին միշտ կը յառաջանար, քնացած ժորժը գրկին մէջ: Ժանն նչմարեց պիւղակի մը տուները: Գեղջկուհի մը դիմացէն կուգար: Ժանն կեցուց պայն ու հարցուց.

— Տիկին, կը հաճի՞ք ըսել թէ սա դիմացի դիւղը ո՞րն է:

— Շէյվրի դիւղն է, Պրի-Քոնթ-Ռոպէրի մօտ, պատասխանեց դեղջկուհին:

Ու չարունակեց ճամբան: Տիկին Ֆօրթիէ այլեւս չէր կրնար քալել: Իր ոտքերը կը մերժէին յառաջանալ: Ան սիրելեցաւ ճամբուն եղերքը նստիլ: Կուլացած տատը տարու աղջնակ մը կեցաւ Ժաննի դիմաց: Այս վերջինը ըսաւ աղջկան.

— Աղջիկս, ըսէք տեսնեմ, դիւղին ո՞ր մասին մէջ կը գտնուի ժողովրդապետին տունը:

Աղջնակը դիւղին կողմը գառնալով պատասխանեց.

— Պ. ժողովրդապետին տունը ձեր տեսած առաջին տունն է, հունա. սակայն տակ աշտարակիկ մը, սրածայր տանիք մը եւ մեծ ծառեր ունի:

— Շնորհակալ եմ, զաւակս:

Ժանն ոտքի ելաւ, ժորժը թեւերուն մէջ առաւ, ու մաղնիսական քունի մէջ եղող դիչերաշրջիկի մը պիրկ քայլերով սկսաւ յառաջանալ:

Շէյվրիի ժողովրդապետին բնակարանը, հին ու չատ պարզ տուն մը, լաւ դիրք ու չատ հաճելի երեւոյթ մը ունէր: Տան առջեւ կը գտնուէր մարմանդ մը, ուր ծառեր կային: Բնակարանին առին կը տարածուէր բաւական ընդարձակ բանջարանոց մը, ուր պաղատու չատ մը ծառեր ալ կային: Աւելի քան քսան տարիէ ի վեր, միեւնոյն ժողովրդապետը կը ծառայէր այդ համայնքին, որուն բնակչութիւնը չորս հարիւրը չէր անցներ:

Աբրայ Ֆէլիքս Լաժիէ դրեթէ չորսուն տարեկան մարդ մըն էր, դիւրահաղորդ ու ժպտուն դէմքով, քաղցր եւ անկեղծ նայուածքով: Բոլոր թեմականները կը սիրէին ու կը յարգէին պայն: Երիցատան մէջ կը բնակէր իր վաթսունամեայ քրոջ ու ապատուհի մը հետ:

Իր քայլը, տիկին Ֆլարիս Տարիէ, եօթը տարիէ ի վեր այրի, քրոջը քով հատուցած էր, ամուսինը կորսնցնելէն յետոյ. զաւակ չունէր ու բաւական կոկիկ հարստութեան մը տէր էր:

Տիկին Ֆլարիս գորով ու ակնածանք կը ղդար իր եղբօր նկատմամբ ու եղբօրը հետ դիւղին համակրանքը կը վայելէր, որովհետեւ բարեսիրական գործերու կը յատկացնէր իր եկամուտներուն մէկ մասը:

Մեր ընթերցողներէն կը խնդրենք մեզի ընկերանալ Շէյվրիի երիցատունը, քանի չորս ժամ դէպի եռ երթանք, այսինքն առտուն այն օրուան, երբ արեւը փոթորկալից դիչերէ մը յետոյ կը բարձրանար հրկիզուած գործարանին ծխացող փլատակներուն վրայ, ու Ժանն Ֆօրթիէ անտառի մը մէջ կը քնանար իր զաւկին քով:

Ժամը ութուկէս էր: Քահանայ մը երիտասարդ մը կառախումբէն վար իջաւ: Ան իր հետ ունէր դիւղանկարչի ամբողջ կազմածը՝ պատկերակալ, ծալածոյ աթոռ, հովանոց, ձեռնակալ, ներկառւիեր: Նկարիչը արագ քայլերով եւ ուրախ դէմքով յառաջացաւ դէպի Շէյվրի տանող ճամբէն, որ հովանաւորուած էր մեծ ծառերով:

Նուրբ եւ կանոնաւոր դիմագծեր, ուշիմ ու ժպտուն դէմք մը ունէր: Իր մութ գոյն կապոյտ աչքերը լմացականութիւն եւ վճռականութիւն կը յայտնէին: Այդ երիտասարդը կը կոչուէր Էթիէն Քասթէլ: Ան բնաւ չէր ճանչցած մայրը: Իր հայրը, Մոնմարթը թաղին մէջ առեւտրական, չորս տարի առաջ մեռած էր, Էթիէնի ձգելով փոքր հարստութիւն մը, որուն չնորհիւ կրցած էր իր նախասիրութեան հետեւիլ եւ այն դեղարուեստական աշխարհին մէջ մուտք գործել, ուր կը յուսար յաջողիլ աշխատանքով ու պատուաւոր տեղ մը գրաւել:

ԿԶԱՎԻԻ ՏԸ ՄՈՆԹԼՊԱՆ

(Շար.)

ԶՀՐԱՏԱՐԱԿՈՒՄԸ ՉԵՌԱԳԻՐՆԵՐԸ ՉԵՆ ՎԵՐԱԴԱՐՁՈՒԻՐ

Այրի Տիկին Ղազարեան, Ղազարեան, Ագնուսեան, Քէլէչեան, Տմիւրտմէ, Մուրատեան ընտանիքները խոր ցաւով կը ծանուցանեն իրենց ամուսնոյն, հօր, մեծհօր, եղբօր, քեռայրին, մօրեղբօր ու զարմիկին՝

ՎԱՀԱՆ ԽԸՏՏԸՇԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Նոյեմբեր 28ին 75 տարեկանին։

Յուղարկաւորութիւնը կը կատարուի այս Ուրբաթ մէկ Դեկտեմբեր ժամը 10ին ննջեցեալին տունը՝

24, Rue Clémeanceau, 93-Gagny
(près Gare de Gagny)
par la Gare de l'Est.

Այրի Տիկին Նուարդ Բապուճեան, Օր. Բլօմին–Լօրանս Բապուճեան, Տէր եւ Տիկին Յովհ. Պօյաճեան եւ զաւակները, Տէր եւ Տիկին Բարսեղ Մերճինեան եւ զաւակները, Տէր եւ Տիկին Ժան–Փիէռ Պօյաճեան եւ զաւակները, Պ. Ռոպէր Պօյաճեան, Տէր եւ Տիկին Զիփթէեան եւ զաւակները, Պ. Վահէ Մերճինեան, Տէր եւ Տիկին Ժիլպէր Մերճինեան եւ զաւակները, Տէր եւ Տիկին Ալէն Լօրան եւ զաւակները, Տէր եւ Տիկին Ժան Փանոսեան, Տիկին Ալիս Փանոսեան, Տէր եւ Տիկին Փօլ Կիւմէ, Տէր եւ Տիկին Գրիգոր Թաշճեան եւ զաւակները (Ամերիկա),

Պ. Իվան Քուտճօ խոր ցաւով կը ծանուցանեն իրենց զաւկին, քրոջ, քրոջ զաւկին, զարմուհիին եւ կնքամօր

ՍՈՆԻԱ ԲԱՊՈՒՃԵԱՆԻ

յանկարծական մահը, որ պատահեցաւ Նոյ. 27ին։

Յուղարկաւորութիւնը կը կատարուի ԱՅՍ ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, ԴԵԿՏԵՄԲԵՐ 4, ԺԱՄԸ 13·45ին Փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցին ուրկէ մարմինը կը փոխադրուի Փանթէն – Փարիզիէնի պարեզմանոցը, ամփոփուելու համար ընտանեկան դամբարանը։

ԿԱՐԵՒՈՐ.— ԿԸ ԽՆԴՐՈՒԻ ՁԵՂԵԱԼ ՆԿԱՏԵԼ ԵՐԻԿՈՒԱՆ ԱԶԴԻՆ ՅՈՒՂԱՐԿԱՒՈՐՈՒԹԵԱՆ ԹՈՒԱԿԱՆԸ։

Մահազդ հաւատացողներէն կը խնդրուի ներկայիս իրրեւ այդ նկատել։

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Այս կիրակի, Դեկտ. 3ին, Փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցւոյ մէջ հոգեհանգստեան պաշտօն կը մատուցուի կեսօրին յետոյ եւ չորեքշաբթի ազէտներուն նահատակուած ննջեցեալներու հոգիներուն համար։

Իրենց յիշատակը յարգող հայրենակիցներէն կը խնդրուի ներկայ գտնուիլ։

×

Տիկին Արամ Գալաֆեան եւ զաւակները, Տիկին Օննիկ Գալաֆեան եւ զաւակները, կը ծանուցանեն թէ հոգեհանգստեան պաշտօն կը կատարուի իրենց ամուսնոյն, հօր, զաւկին եւ եղբօր՝

ԱՐԱՄ ԳԱՎԱՖԵԱՆԻ

մահուան քառասունքին առթիւ, այս կիրակի առաւօտ Փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցին։

Ի պիտութիւն ողբացեալին յիշատակը յարգողներուն։

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Պօտոնի Ս. Գր. Լուսաւորիչ եկեղեցւոյ հոգաբարձութիւնը շնորհակալութեամբ առած է տարբեր ձեւերով ընծայուած գումարները հոգեհանգիստին առթիւ.—

Այրի Տիկին Ագնիւ Եազըճեան 100, Տիկին Քէլէչեան 50, Տէր եւ Տիկին Սահակեան 25, Տէր եւ Տիկին Արսլանեան Յ. 30, Պ. Պ. Հրանդ, Տիգրան Արսլանեան 30, Տէր եւ Տիկին Արսլանեան Գ. 30, Տէր եւ Տիկին Ղազարեան Յ. 20 ֆր.։

Տիկին Թագուհի Մեհտէրեանի յուղարկաւորութիւն.— Տէր եւ Տիկին Տէյիր – մէնճեան 50, Տէր եւ Տիկ. Ս. Տէյիրմէնճեան 30, Պ. Կ. Ամուրեան 20, Տիկին Ճղնաւորեան 20, Տէր եւ Տիկին Ժաք Գասպասեան 20, Տիկ. Ա. Գասպասեան, Տէր եւ Տիկին Յակոբ Տէյիրմէնճեան, Մ. Գասպասեան 10ական։

Հ. Յ. Գ.

Վիէն.— Հ. Յ. Դ. Անի կամիտէի ընդհ. ժողովը այս Շաբաթ (Դեկտ. 2) իրիկուն ժամը 20·30ին Գ. Իփէկեան սրահը։ Կարեւոր օրակարգ։ Ներկայանալ անպայմանապէս։

×

Սարսել – Ալֆորվիլ.— Հ. Յ. Դ. Վարդան Ենթակոմիտէի ժողովը այս Ուրբաթ երեկոյ ժամը 21ին, սովորական հաւաքատեղին։

×

Փարիզ.— Հ. Յ. Դ. Փոքրորիկ խումբի ժողովը այս Ուրբաթ (1 Դեկտ.) ժամը 21ին, Մշակ. Տան մէջ։ Խիստ կարեւոր օրակարգ։ Բոլոր ընկերներու ներկայութիւնը պարտաւորիչ։ Ներկայ կ'ըլլայ Շրջ. Կոմիտէի ներկայացուցիչը։

×

Փարիզ.— Հ. Յ. Դ. Թէիլիրեան խումբին ժողովը այս Ուրբաթ (1 Դեկտ.) ժամը 21, Մշակ. Տան մէջ։ Կարեւոր օրակարգ։ Ներկայութիւնը պարտաւորիչ։ Ներկայ կ'ըլլայ Շրջ. Կոմիտէի ներկայացուցիչը։

«ՅԱՌԱՋ»Ի ԲԱՐԳԱՒԱՃՄԱՆ ՀԱՄԱՐ

(Համակրաւիճ տեղահանուրեան առթիւ)

Պ. Յովհ. Տէր–Յովհաննէսեան 100 ֆր. կը նուիրէ։

×

Մարսէյլէն Պ. Մխիթար Տէր–Պօղոսեան 100 ֆր. կը նուիրէ։

ՆՈՒԷՐ

Տիկին Աբջալոյա Քէնէրճեան իր ամուսնոյն՝ Սարգիս Քէնէրճեանի մահուան 5րդ տարելիցին առթիւ, կը նուիրէ 40 ֆր. Կապոյտ Խաչին, 40 ֆր. Կարմիր Խաչին (ստանալ «Յառաջ»էն) եւ 20 ֆր. «Յառաջ»ի։

ՓԱՐԻԶԱՀԱՅ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹԵԱՆ
ՈՐԲԵՐՈՒ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՄԱՐՄԻՆԻ

ՏԱՐԵԿԱՆ ՄԵԾ ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ

Կիրակի, Դեկտեմբեր 3, ժամը 16էն կէս գիշեր
Dans les Salons de l'Hôtel George V, 31 Avenue George V, Paris (8e)

Նախագահութեամբ Տէր եւ Տիկին ԳԷՈՐԳ ՊԱԳԴՐՃԵԱՆԻ
DON DIEGO et SON ORCHESTRE

Մուտք 20 ֆր. — ուսանողներու կէս գին
Ապահովել սեղանները՝ 924–38–54

ՁԱՇ - ՀԱՆԴԷՍ ԵՒ ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Կազմակերպուած Կապոյտ Խաչի Շաւիլի մասնաճիւղին կողմէ
Մասնակցութեամբ Շաւիլի Հ. Յ. Դ. Նոր Սերունդի մասնաճիւղին
2 Դեկտեմբեր Շաբաթ երեկոյ ժամը 20·30էն մինչեւ լոյս Շաւիլի Թաղապետարանի սրահին մէջ 47, Rue Stalingrad

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԲԱԺԻՆ

Մասնակցութեամբ Պ. Պ. ՊԵՏԻԿԵԱՆԻ եւ «ՆԱՅԻՐԻ» ՊԱՐԱԽՈՒՄԲԻՆ

ԿԻՍ ԳԻՇԵՐԻՆ ՅԵՏՈՑ ՊԱՐԱՀԱՆԴԷՍ — ՆՈՒԱԳԱԽՈՒՄԲ ՊԵՏԻԿԵԱՆ

Մասնակցութիւն՝ ճաշ, հանդէս եւ պարահանդէս 35 ֆր. — ուսանողներուն եւ Ն. Սերունդի անդամներուն զեղչուած գին

Հաւատքը պիտի յաղթականօրէն կապոյտ Խաչի կայանի չինութեան։

Հ.Բ.Ը.Մ.Ի ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ԱԿՈՒՄԲԸ
կը ներկայացնէ

ՀԱՅԱՍՏԱՆ
ՇԻՆԱՐԱՐՆԵՐՈՒ ԵՐԿԻՐ

Երկու բաժիններէ բաղկացած ճայնապիր լուսարձակում

Առաջին մաս
ՕՇԱԿԱՆԷՆ ՀԱՂԱՐԾԻՆ
Պտոյտ մը մեր միջնադարեան հրաշակերտ եկեղեցիներու միջեւ

Երկրորդ մաս
ՍԱՐՏԱՐԱՊԱՏԷՆ ԲԻՒՐԱԿԱՆ
1918 Մայիսեան ճակատամարտներէն մինչեւ այսօրուան Հայաստանի վերելքը

LYON — SAMEDI 2 DECEMBRE A 20 H. 45
Salle de l'Eglise Arménienne — 295, Rue Boileau

VALENCE — SAMEDI 9 DECEMBRE A 20 H. 45
Dans les locaux de l'U.G.A.B. — 6, Rue Favantine

Կ'ՈՒԶՈՒԻ
ՍՏԻՊՈՂԱԿԱՆ

Pharmacie SILVESTRE
46, Rue de Trévise, Paris (9e)
Կը փնտռէ.—
Manutentionnaire, de préférence homme, mi-temps ou temps complet
URGENT

IMPRIMERIE SPÉCIALE
DU JOURNAL «HARATCH»
32, RUE DE TRÉVISE — PARIS (9e)

ԿԸ ՓՆՏՌՈՒԻ

Բնիկ էլզասասի, Թոզաման չքնաղ, Տիկին Կլլիմիա Մըսրեան (ծնեալ Մղռեան Մանուկեան) կը փնտռէ իր եղբօր՝ Հաճի Մանուկին զաւակները։ Արմենակ 14 տարեկան, Սիրանոյշ 5 տարեկան, Կարապետ 4 տարեկան, Գէորգ 3 տարեկան. ասոնք Մալաթիա ուեռնուած են։ Իրենց մօրը անունը Վարդուհի։ Կը փնտռէ մեծ քոյրը Եղիան, զաւակները՝ Լեւոնը, 14 տարեկան, Աղաւնին 13 տարեկան. ասոնք իրենց քովը մեռած են։ Փերուզը 12 տարեկան մնաց Պերաճակի Խանը։ 8 տարեկան Միհրանը, 5 տարեկան Գրիգորիկը, այս երկուքը կորսուած են։ Իր հօրը անունը Օհաննէս Քէչիչեան։

Իրենց մասին լուր ունեցողներէն կը խնդրուի խմացնել հետեւեալ հասցէին.

G. M. Djnbachian
62, Ave. Sadi Carnot
Valence 26000 (France)

Կը խնդրուի արտասահմանի թերթերէն արտատպել։

ԻՄԻԻ ՄՇԱԿՈՒԹԻ ՏՈՒՆ

Իմիի Հայ Մշակոյթի Տան նպատակին համար եղած են հետեւեալ նուէրները.—

Պր. Սաքայեան Գրիգոր (Նանթէր) 100, Պ. Պ. Քահվէճեան Վրէժ եւ Վարուժան 500, Տէր եւ Տիկ. Նալպանտեան Ժան 200, Տէր եւ Տիկ. Գալակէօզեան Մարտիրոս 200, Պր. Գասպարեան Ժան 500, Գալակէօզեան դրասենեակ 500։ Այրի Տիկ. Գըչճեան, ողբացեալ Հայկազ Մանուկեանի մահուան առթիւ փոխան ծաղկեպսակի 50, Տէր եւ Տիկ. Պէնկեան Մխալ, ողբացեալ Փերուզ Պօյաճեանի մահուան առթիւ փոխան ծաղկեպսակի 50 ֆր.։

Ս. ՅՈՎՀ. ՄԿՐՏԻՉ ԵԿԵՂԵՑԻ

Այս Շաբաթ օր, 2 Դեկտ. ուն է Սրբոց Առաքելոցն եւ առաջին Լուսաւորչացն մեծոյ Թադէոսի եւ Բարթողիմէոսի։

Այս առթիւ, Փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ մայր եկեղեցւոյ մէջ ժամը 10ին պատարագ պիտի մատուցուի։

Կը հրաւիրուի մեր ժողովուրդը ներկայ գտնուելու պատարագին եւ աղօթելու Հայաստանեայց Առաքելական Եկեղեցւոյ անսասանութեան համար։

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ԸՆԴՀ. ԺՈՂՈՎ

Փարիզի Էսաեան Սանուց Միութեան ընդհ. ժողովը 2 Դեկտ. Շաբաթ օր ժամը 15ին, Ռիժան սրճարանի վերնայարկը, Ռիւ Լաֆայէթ, Մէթրօ Քաաէ։ Կը խնդրուի ճշդապահ ըլլալ։ Ներկաներու թիւը մեծամասնութիւն կը նկատուի։

Օրակարգ.— Տեղեկատուութիւն, Հաշուետուութիւն, Նոր վարչութեան ընտրութիւն։

×

ԿԱՊՈՑ ԽԱՉԻ Փարիզի մասնաճիւղի ընդհ. ժողովը տեղի կ'ունենայ Շաբաթ 2 Դեկտ. ժամը 3·30ին Միութեան դրասենեակը, 17 Ռիւ Պլէօ։

Ընկերուհիները կը խնդրուի ճշդապահ ըլլալ։ Կարեւոր օրակարգ։

×

ՀԱՄԱԽԱՌԲԵՐԴՅԱԿԱՆ Միութեան Վալանսի մասնաճիւղի վարչութիւնը կը հրաւիրէ իր բոլոր անդամները ընդհ. ժողովի, այս Ուրբաթ երեկոյեան ժամը 9ին, Հ. Բ. Ը. Միութեան Վալանսի մասնաճիւղի սրահին մէջ՝ 6 Ռիւ Ֆավանթին Վալանս։

×

ԿԱՊՈՑ ԽԱՉԻ Պուլ. Օտտոյի վարչութիւնը ընդհ. ժողովի կը հրաւիրէ իր բոլոր ընկերուհիները 6 Դեկտ. Զորեքշաբթի կէսօրէ վեր ժամը 15·30ին, սովորական հաւաքատեղին։ Կարեւոր օրակարգ։

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Կապոյտ Խաչի Մարսէյլ քաղաքի պլըրոյական ուսնամառը Կիրակի 7 Յունուար ժամը 3ին Ա. Հարութեան սրահը եւ մասնաւորաբար կը հրաւիրուին կայան եղած բոլոր երախաները։

×

Կապոյտ Խաչի Մարսէյլ քաղաքի ճաշ–պարահանդէսը Շաբաթ Մարտ 24ին։

ՇԱԲԱԹ
2
ԴԵԿՏԵՄԲԵՐ
SAMEDI
2 DECEMBRE
1972

Le Numéro 0,70 F.

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ
ՀԻՄՆԱԴԻՐ ՇԱՒԻԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

HARATCH

Le Seul Quotidien Arménien en Europe Occidentale
Directrice : Arpik Missakian
32, rue de Trévise Paris 9

— Tél. : 770-86-60 —
C. C. P. Paris 15069-82

Fondé en 1921
R. C. Seine 57 A 2731

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա	Տար. 120 ֆր.	Վեցամսեայ	65 ֆր.
Արտասահման	Տար. 135 ֆր.	Հատը	0,70 ֆր.

48րդ ՏԱՐԻ — ԹԻՒ 12·579

Fondateur : SCHAVARCH MISSAKIAN

48e ANNÉE — N° 12.579

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

Մի՛ ՈՒՐԱՆԱՔ ԵՐԵՍՈՒՆ ԱՄԻՍՆԵՐՈՒ ԲԵՂՆԱՒՈՐ ՎԱՍՏԱԿԸ

—o—

Մեծ եղեռնի ահաւոր տարիները դե – պիմանի դուռն էին հասցուցած Հայու – թիւնը ո՛չ միայն արեւմտեան, այլ նաեւ Կիւլեխեան Հայաստանի մէջ :

Օրհասական օրեր ապրեցաւ հայ ժո – ղովուրդը, — աննախընթաց՝ իր պատ – մութեան մէջ :

Ամէն ինչ մութ էր հայկական հորիզո – նին վրայ : Ռուսական բանակը կը հեռա – նար դրաւեալ նահանգներէն, Մոսկուայի հրամանով : Թիւրքի ու բանուոր ռուս զինուորները լքելով Թրքական ճակատը՝ համապատասխան կը վտանգին դէպի տուն՝ բոլշեւիկեան յաղթութեան առարկան իրենց բաժինն ունենալու յոյսով :

Հայերը կը լքուէին իրենց բախտին, մինչ Թրքական կառավարութիւնը ու բանակները կը շարունակէին ապստամբ ու ջարդարար պաշտպօգուէհներու իմաստութիւնը :

Ճակատագրական այդ օրերուն Հայու – թեան ճակատը զուարկները կիսատ – պատրաստ կուծք տալ Թրքական բանակներուն, որոնք դաւադրաբար խզելով 1917 Նոյեմբերին Երզնկայի մէջ կնքուած զինադադարը՝ կը յարձակէին ամբողջ Հայ կամաւորական դունդերուն վրայ :

Հինգ ամիս պիտի տեւէր պատերազմը, 1918 Յունուարէն Մայիս : Հայ զինուորը միշտ աւ թիզ պաշտպանելով հայրենի հո – ղը, դէպի ապահով հորիզոններ կ՝առաջ – նորդէր ջարդերէն վերապրող բեկորները : Հայկական ազատամարտի վերջին ա – միսը կը վերածուէր յաղթականի դիւ – ցազնամարտի 1918 Մայիսի վերջին տասնօրեակին : Արարատեան դաշտի երեք ճա – կատներուն վրայ Հայու վերիժառու բա – նակը ծունկի կը բերէր զարաւոր պահիճը : Այսօր Սարդարապատի հոյակապ յուշ – արձանն է, որ Թրքական սահմանադրու – թիւն ոչ–հեռու, կը խորհրդանշէ հայ ժո – ղովուրդի վերաւոր յաղթանակը իր պատմութեան ամէնէն բախտորոշ մէկ շրջանին :

Այդ յուշարձանը զարձած է սրբավայր ուր, որ երկիւղածութեամբ ուխտի կ՝եր – թան Հայաստանի մեր եղբայրներն ու քոյրերը այցելութեան :

Սարդարապատի կոթողը ճակատամար – քի մը ոգեկոչումը չէ միայն : Անիկա զե – տեղեալ օրէն կը խորհրդանշէ Հայաստանի վերածնունդը, անկախ հայրենիքի ստեղ – ծումը :

1918ի Մայիսեան վերապրած ճակա – տամարտներուն չնորհիւ է, որ իր ա – զատութիւնը վերահաստատած հայկական պետութիւնը : Հռչակուեցաւ Հայաստանի Հանրապետութիւնը :

Արեան ճապաղիքներուն, համաճարակ պետնդութեանց եւ համատարած աւե – րումներուն մէջէն է, որ ծնաւ անկախ Հայաստան : Քաոս էր ամէն կողմ եւ ոչ – մայ՝ ամէն ինչ, ճիշդ ինչպէս՝ երբ Եհո – վան կը ստեղծէր տիեզերքը :

Գերմարդկային ճիգերը, անհուն զոհո – ղութիւններ կատարուեցան անձեւ նիւ – թին ձեւ ու հոգի տալու, խառնիճաղանճը կազմելու եւ միաճոյլ հայրենիք մը պար – զեւելու համար հայ բազմաչարչար ազ – գին :

Երեսուն ամիս միայն չնչեց Հայաս – տանի Հանրապետութիւնը, որ բոլորէն պաշտօնապէս ճանչցուեցաւ իբրեւ անկախ Պետութիւն, վայելելով անկախութեան բոլոր առորոշելիները :

Յետոյ կրկին աղջամուղջ :

Կարճ է փոքրոգի մարդոց յիշողու – թիւնը :

Այսօր, երբ յետամուտ խորթ վարչաձեւի մը տարեդարձ կ՝ոգեկոչէն, անորակելի հատուածամոլութեամբ, գիտակցօրէն, ապերախտութեամբ մոռացութեան կու – տան, կ՝ուրանան 1918 Մայիս 28էն մին – չեւ 1920 Դեկտեմբեր 2՝ երեսուն ամիսնե – րու հրաշապատում վաստակը :

Այդ երեսուն ամիսները հմայուին փո – խեցին Հայկական Հարցի դիմագիծը : Ան – կախութեան հանգանակին ու ազատութեան սէրը ներշնչեցին եւ ժառանգ թողուցին հանուր Հայութեան, ի սիրելս աշխարհի :

Հայաստանի ժամանակակից պատմու – Հայաստանի Հանրապետութիւնը 4էն 4,5ի բարձրացնե – լով վարկի իր սակը :

Միւս կողմէ Ֆրանսայի մէջ գեռնա – խնձորին զինը կ՝իջնէ եւ չուկային վրայ կը բերուի «միջամտութեան կարապը», որպէսզի անոր զինն ալ ղլուխը չառնէ չերթայ : Այս կարապը կուզայ Եւրոպայի պահեստներէն : Արդարեւ Եւրոպա 346 հազար թոն կարապի պահեստ ունի, որ – պէսզի, երբ երկրի մը մէջ (եւրոպական) կարապի զինը բարձրանայ ձմրան նախօր – եակին, կարելի ըլլայ այդ պահեստէն մաս մը մէջտեղ հանել : Այդ պատճառով

—o—

ՊԱՅՔԱՐ ԳԻՆԵՐՈՒ ՅԱՐԵԼՄԱՆ ԴԷՄ

Անգամ մը եւս զրամը կը սղէ Ֆրան – սայի մէջ, քանի չատ կարճ ժամանակա – միջոցի մը ընթացքին ելմտական նախա – բերը երկրորդ անգամ ըլլալով բարձրա – ցուց վարկի սակը, որ 7,5 առ հարիւրի կը հասնի ներկայիս : Նոյեմբեր 2ին ար – դէն բարձրացում մը եղած էր եւ 5,75էն եղած էր 6,50ի : Ինչպէս ըսած էինք ան – ցեալին, ելմտական նախարարը կ՝ուզէ այս ձեւով առաջքն առնել գիներու բար – ձրացման կասեցնելով զրամի արիւնահո – սութիւնը : Երբ սպառումը կը չատնայ, ապրանքը կը սկսի պակսիլ եւ առոր հե – տեւանքով գիները կը բարձրանան : Այդ պատճառով ժիսքար տ՝էմթէն զրամին գինը կը բարձրացնէ, ինչ որ կը կասեցնէ դիմադրաբար վարկով գնումներու քա – նակը : Արդարեւ ներկայ պայմաններու տակ Ֆրանսայի Դրամատունը 7,5 առ հա – րիւրով զրամ պիտի տրամադրէ զրամա – տուներուն, որոնք իրենց կարգին աւելի բարձր սակով վարկ պիտի բանան իրենց յաճախորդներուն :

Նոյն որոշումը առաւ Դաշնակցական Հանրապետութիւնը 4էն 4,5ի բարձրացնե – լով վարկի իր սակը :

Միւս կողմէ Ֆրանսայի մէջ գեռնա – խնձորին գինը կ՝իջնէ եւ չուկային վրայ կը բերուի «միջամտութեան կարապը», որպէսզի անոր գինն ալ դլուխը չառնէ չերթայ : Այս կարապը կուզայ Եւրոպայի պահեստներէն : Արդարեւ Եւրոպա 346 հազար թոն կարապի պահեստ ունի, որ – պէսզի, երբ երկրի մը մէջ (եւրոպական) կարապի գինը բարձրանայ ձմրան նախօր – եակին, կարելի ըլլայ այդ պահեստէն մաս մը մէջտեղ հանել : Այդ պատճառով

ՀՐԱՆՏ–ՍԱՄՈՒԷԼ

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՖՐԱՆՍԱ ԻՐ ՀՈԳԵՐՈՎ

—o—

«ԱՐԱՐԱՏ»Ի ՓԱՅԼՈՒՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ

Իէֆայի բաժակի մրցաշարքի մրցում – նեւրան «Արարատ» առջի օր 2–0 կէտով յաղթեց Թայլեզաւաեւրն վերման խում – բին :

Կ՝ որ այդ պորթողութիւնը կը կոչուի «միջամտութեան կարապ» :

× Արժէքին վրայ աւելցած տուրքը (Թ. Վ. Ա.) 23 առ հարիւրէն 17,6 առ հարիւրի կ՝իջնէ աշխատանք փնտռողնե – րուն տղերուն համար :

× Դրամատուներու գործադուլը կը չարունակուի եւ վախ կայ որ խանգա – րումներ ըլլան նաեւ գալ չարթու :

ՆՈՐ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ՎԻԼԹՆԱՄԻ ՇՈՒՐՋ

Նախագահ Նիքսըն երկու տեսակցու – թիւն ունեցաւ Հար. Վիլսընամի նախա – գահի անձնական խորհրդատուին հետ : Ծանօթ է, որ նախագահ Թիէօ առար – կութիւններ ըրած էր պինդուլի համա – ձայնագրի կարգ մը կէտերուն մասին :

Նկուլչէն Ֆիւ Տիւք, Թիէօյի անձնական խորհրդատուն, Նիքսընի հետ իր ունե – ցած խօսակցութիւններու ընթացքին բա – ցատրած է Հանոյի տեսակէտները : Յայտ – նի չէ, թէ Նիքսըն ի՛նչ չափով համաձայն գտնուած է անոնց : Այս ուղղութեամբ յատկանշական կը նկատուի Սպիտակ Տան բանբերին մեկնաբանութիւնը Նիքսընի – Տիւք խօսակցութիւններու առթիւ : Բան – բերը «անկեղծ» դտած է զանոնք ինչ որ կը նշանակէ, թէ դժուար եղած են. դէ – տեր նկատել կուտան, թէ Տիւք Սպիտակ պիտի վերադառնայ այն յոյսով եղած – կացութեամբ, որ Նիքսըն այլեւս տրա – մադիր չէ ձգձգելու պինդուլի համա – ձայնութեան կնքումը :

Միւս կողմէ, ըստ երեւոյթին, Հանոյ նոր պնդումներ ըրած է : «Նիւ Եորք Թայմզ» թերթը կը հաղորդէ, թէ Հանոյ ընդունած է յայտնել ապագինման գօտին 17րդ զուգահեռականի վրայ : Երկրորդ՝ պինդուլը անմիջապէս պիտի գործադրու – ուի նաեւ Լաոսի եւ Քամպոճի մէջ, ուրկէ «օտար ուժերը» պիտի հեռանան : Կարեւոր է նաեւ երրորդ պնդումը՝ Հար. Վիլսը – նամ պիտի չարունակէ ստանալ դէնք եւ ռազմամթերք պինդուլի կնքումէն եաք, Մ. Նահանգներէ :

Կ՝ենթադրուի թէ Հանոյ բացարձակա – պէս կը մերժէ խօսել Սայկոնի հիմնական պահանջին չուրջ, որ է Հիւս. Վիլսընամի պինդողական ուժերու հեռացումը Հար. Վիլսընամէ :

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՀՌՈՄԻ մէկ մեծ չէնքին մէջ պայթում մը պատահած է որու հետեւանքով 17 մեռեալ կայ եւ 120 վիրաւոր :

ՄԻՍՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ Արտաքին նախարար կը մնայ՝ Ու. Ռոճըրս :

ՍՈՒՐԻԱ որոշեց վերատին բանալ իր սահմանը Յորդանանի հետ : Սահմանը փակ կը մնար 1971 Յուլիսէն ի վեր :

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ արձանագործ՝ Նեզ – վեսթնի գրեթէ լրացուցած է Խրուչչեւի չիրիմը, զոր իրեն ապսպրած է ընտանիքը : Այս նոյն արձանագործն էր որ 1962 Դեկ – տեմբերին չատ դէշ կերպով քննադատ – ուած է Խրուչչեւի կողմէ, ցուցահանդէսի մը առեն : Խրուչչեւ կատղած է վերացա – կան նկարներ տեսնելով եւ պոռացած .— «ինչի՞ կը ծառայէ : Միլիոան ծածկե – լո՞ւ : Դրամ կը ծախսենք ձեզ ապրեցնելու համար : Միասեռակա՞ն էք թէ բնական մարդիկ : Այս ամբողջը մեկ կոպեկ չար – ժեր. անբարոյական է : Կարծես էշ մը իր պոչով գծած է այս նկարները» :

ԵՐԵՒԱՆ ⇄ ՓԱՐԻԶ ՀԵԹԱՏԻՑ

ԵՐԵՒԱՆ (Արմէնփրէս, Նոյ. 23–27)

ՅԱՏՈՒԿ ՆԻՍՏ

Տեղի ունեցաւ Խորհ. Միութիւն–Ֆրան – սա բնկերութեան հայկական բաժնի ընդ – լայնուած նիստը :

Հայկական ընկերութեան 1966–1972ի գործունէութիւնը ներկայացուց վարչու – թեան փոխ–նախագահը՝ Հայաստանի Ար – ուեստի Հիմնարկութեան տնօրէն Ռուբէն Զարեան : Վարչութեան նախագահ ըն – տրուեցաւ այս վերջինը, իսկ քարտուղար՝ Մելիս Մշեցեան :

×

ԵԼԵԿՏՐԱԿԱՆ ՄԱՆՏՈՒԻՆ

Երեւանի գաշնակի գործատունը դե – դեկիկ արտադրնով եւ լաւ հնչականու – թեամբ էլեկտրական մանտոլիններ կ՝ար – տադրէ : Մինչեւ տարեվերջ՝ 200 մանտո – լին պիտի պատրաստուի :

×

ԿՈՓԱՄԱՐՏ

Թալլինի (Էստոնիա) մէջ տեղի ունեցան կոփամարտի մրցումներ, որոնց մասնակ – ցեցան Հարիւր կոփամարտիկներ խոր – հրդային երկիրներէ : Կամօ Սարոյեան իր դասին մէջ (ծանր) առաջին հանդի – սացաւ : Երեք պրոնզէ չքանչան ստացան Աչոտ Բարսեղեան, Սամուէլ Յարութիւն – եան եւ Տիգրան Բեզոյեան :

×

ՈՏՆԱԳՆԴԱԿ

Վերջ գտան Խորհ. Միութեան ատեա – պնդակի 1972ի ախոյենական մրցումները :

Առաջին կը հանդիսանայ 40 կէտով «Զարիա» : Երկրորդ՝ 35 կէտով կիեւի «Դինամօ»ն : Երրորդ՝ 35 կէտով Թիֆլի – սի «Դինամօ»ն, իսկ չորրորդ՝ 34 կէտով «Արարատ», որ 30 խաղի ընթացքին յաղ – թած է 12 անգամ, հաւասար մնացած է 10 անգամ եւ պարտուած է 8 անգամ :

×

Ն. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ՊԱՐԳԵՒԱՏՐՈՒԱԾ

Խորհ. Միութեան Գերագոյն Խորհուր – դի նախագահութեան հրամանագրով Նա – զուշ Յարութիւնեան Լենինի չքանչանը ստացաւ, իր ծննդեան 60ամեակին առ – թիւ :

Ն. Յարութիւնեան, Հայաստանի Գե – րագոյն Խորհուրդի նախագահութեան նա – խագահը, անգամ է Հայաստանի Գիտու – թիւններու Ակադեմիայի : Թոռն է Լէոյի : Աւարտած է Մոսկուայի ռազմա–ճարտա – րագիտական ակադեմիան : Մասնակցած է համաշխարհային Բ. պատերազմին :

Պատերազմէն եաք երկար տարիներ պատասխանատու աշխատանք կատարած է ակադեմիային մէջ : 1961–63ին Ն. Յա – րութիւնեան, որ անուանի պիտանականնե – րէն է մեքենագիտութեան բնագաւառին մէջ, դլխաւորած է Երեւանի պետական համալսարանը : Ունի աշխատութիւններ :

1963էն ի վեր կը վարէ ներկայ պաշ – տօնը :

ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ ՀԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Քրիստոնէութիւնը Հայաստանի եւ ա-նոր սահմանակից արեւմտեան երկիրներ-ու մէջ պետական կրօնք ընդունուելէ քանի մը տասնամեակ ետք նոյն կրօնքին պատկանիլը անհրաժեշտ պայման նկատուեցաւ պատուելու համար։ Ասոր հակ-ազդեցութեան պարտականութիւնը յանձնուե-ցաւ կղերականներու։ Այսպէս՝ առեղ-ծուեցաւ «հաւատացեալի» եւ «անհաւատի» բաժանում երկրին մէջ։ Հայաստան բնա-կող Հրեաները, Պարսիկները եւ այլ ժո-ղովուրդներ հաւատարիմ մնացին իրենց ցեղակիցներու դաւանանքին։ Երկրին դա-ւանական բաժանումը զարձաւ Հայոց պատմութեան անբաժանելի ուղեկիցը Դ. եւ բոլոր յետագայ դարերուն։ Ե. դարու երկրորդ կէսին, Բագկեդոնի ժողովի ո-րոշումներէն ետք, քրիստոնէական եկե-ղեցւոյ միութիւնը ծանր ցնցում մը կրեց քրիստոնէական աշխարհը դաւանական պետնի վրայ բաժնուեցաւ միաբնակներու եւ երկաբնակներու։ այդ բաժանումը Հայերու համար չափազանց լուրջ եւ կարեւոր նպատակ ունէր՝ մնալով քրիս-տոնեայ, պահպանել հայ ժողովուրդին ազգային դիմագիծը եւ ինքնութիւնը։

Դաւանական հակամարտութիւնը իր կնիքը դրաւ դարաշրջանի ամուսնական օ-րէնսդրութեան վրայ։ Արգիլուեցաւ խնա-միութիւնը հեթանոսներու, հերձուածող-ներու, ի վերջոյ, նոյն կրօնքին երկու ուղղութիւններուն՝ միաբնակներու եւ երկաբնակներու միջեւ։

Հայոց կանոնագիրքին մէջ կան երկու տասնեակ աւելի կանոններ, որոնք կապ ունին այս հարցին հետ։ Կանոնները կ'ար-գիլեն ամուսնանալ՝ « Հրէայի », « հեթա-նոսի», «այլազգի», «անհաւատի», «անօ-րէնի», «հերձուածողի», «հերետիկոսի» եւ այլ աղանդաւորներու հետ։

Լաւագոյնէն ժողովը (365) երկու կա-նոն սահմանեց դաւանակից ըլլալու հար-ցին, ամուսնութեան համար։ Անոնցմէ ԼԱ. կանոնը, թէեւ որոշ համամտանութիւն ունէր Պօղոս առաքեալի պատուիրանին հետ, բայց նոր քայլ մը կ'առնէր, ազ-գարարելով՝ «Զէ արժան առ ամենայն այլազգիս խնամութիւն առնել... բայց եթէ յանձն առնուցուն հաւատալ ի սուրբ կաթողիկէ եկեղեցի»։ Ուրեմն, կանոնին արգելքը պայմանական էր։ Եթէ այլազ-գին (այլազաւանը) կ'ընդունէր մեր դա-ւանանքը, արգելք չէր դրուեր ամուսնու-թեան համար, իսկ եթէ չընդունէր՝ խոր-հուրդ կը տրուէր այդպիսի մէկու մը հետ չամուսնանալ։ Աւելի որոշ է նոյն ժողովին Ժ. կանոնը. «Զէ մարթ ոյք յե-կեղեցւոյ մերոյ են ի պէսպէս եւ ի ցուի հարսանիս այլազգեաց մերձենալ զուստերս եւ զդստերս, կին տալ նոցա կամ կին առնուլ նոցանէ»։ Ինչպէս կը տեսնուի, այս երկու կանոնները, թէեւ կ'արգիլէին այլազգիի կամ այլազաւանի հետ ամուսնութիւնը, բայց զանցառնե-րու համար պատիժ չէին սահմաներ։ Ո՛չ ալ անվաւեր կը նկատէին նման յարակ-ցութիւնը։

Ս. Ներսէս հաւատարիմ մնալով հան-ղերձ իր նախորդներուն կանոնական սահ-մանումներուն, ան իր ԺԲ. եւ ԺԳ. կա-նոններով պատժելի համարեցաւ հեթա-նոսի հետ մտերմանալը։ Աւելին, ԺԲ. կանոնով խստիւ արգիլուեցաւ հեթանոսի հետ ամուսնանալը եւ ծանր ապաշխա-րանք սահմանեց այդ զանցառութեան հա-մար։ «Վասն որ զհեթանոսս կին առնէ կամ լինի առն՝ չար է, մանաւանդ եթէ յանհաւատութեան կան մնան...»։

Այս ուղղութեամբ սահմանուած կա-նոնները այսքան են Դ. դարուն։ Նոյն ինդրին նուիրուած կանոններով հարուստ չէ նաեւ Ե. դարը։ Յետագայ դարերուն, մինչեւ Ը. դարու կէսը, հայ կանոնագրու-թեան մէջ օրէնքներ չեն սահմանուած՝ հեթանոսին հետ ամուսնութիւնը արգել-լելու մասին։ Հաւանաբար այս իրողու-թեան մէջ փոքր դեր չէ խաղացած Հա-յաստանի քաղաքական կացութիւնը, Պարսիկներու, իսկ ապա՝ Արաբներու տի-րապետութիւնը Հայաստանի վրայ եւ այն, որ հայ նախարարները քաղաքական չահերէ առաջնորդուած կը խախտէին կա-նոնները եւ խնամիութիւն կը հաստատէին այլազգիներու հետ։ Յովհան Մանդակու-նի «Վասն չառնելոյ սէր բարեկամութեան ընդ թշնամիսն աստուծոյ» ճառին մէջ կ'ըսէր զայրոյթով. «Եւ արդ որո՞ւմ նե-րելոյ եւ թողութեան արժանի լինեցիմք, դի զհրամանս եւ զպատուիրանս Աստու-ծոյ կոխան արարաք. նա ընդ աղահի եւ ընդ արբեցողի չհրամայեաց առնել բա-րեկամութիւն, եւ մեք ընդ Հրեայս եւ ընդ հեթանոսս եւ ընդ հերձուածողս առ-նեմք բարեկամութիւն եւ խնամութիւնս»։ «Եւ որ եւս ահագին անօրէնութիւնք են քան զամենայն չարիս, եւ հաւասար կաս-պաչտութեան, որք քրիստոնեայքն լինին, եւ ընդ անօրէնսն խառնակին, ամուսնա-նան եւս... եւ ոչ խմանան եւ զղջանան, եւ ոչ դառնան եւ ապաշխարեն»։

Սիոն Հայոց կաթողիկոս 768ին Պար-տաւի մէջ եկեղեցական ժողով գումարե-լով, ԺԱ. կանոն մը կը սահմանէ. «Քա-հանայք պատուէր արասցեն արանց եւ կանանց եւ դստերոց նորա, զի ոչ արաս-ցին ընդ հեթանոսի զուգութիւն, զի չէ ամուսնութիւն, այլ անաւրէնն պիղծ խառ-նակութիւն, զի ի՞նչ բաժին կայ հաւա-տացելոյն ընդ անհաւատին, զի չար է քան զչնութիւն, եւ որ պարշաւոյն է քան զչնութիւն՝ բնական յանցանք»։

Վերջին կանոնագրութիւնը, որ օրէնք-ները կը պարունակէ այս խնդիրներուն չուրջ, Բարսեղի վերագրուած «Վասն պէսպէս եւ բիւրապատիկ ախտից» հա-տաքածոն է։ Նախորդներու օրինակով, ՃԻԴ յօդուածը կ'արգիլէ հաւատացեալ-ներուն «ճաշակել... ընդ անհաւատից եւ ոչ համբուրել եւ ոչ ի տունս նոցա մտա-նել»։

Մեր նախնիքները թէեւ ընդհանուր առ-մամբ կարողացած են պահպանել այս օրէնքները, սակայն յաճախ նաեւ չեզած են անկէ։ Նկատելի է, որ այլազաւան-ներու հետ կ'ամուսնանային երբեմն իշ-խանական տուներու անդամները՝ տըն-տեսական եւ քաղաքական նկատումներով։

Այլազաւանին հետ ամուսնանալը արգիլելու համար պատիժները սահմանուած էին։ Ս. Ներսէսի ԺԲ. կանոնի ուժով հեթանոսին հետ ընացողը «թ ամ ապաշ-խարեսցին», իսկ հեթանոս կին առնելու համար՝ «եթէ թողցէ կամ մխացի անհա-ւատն՝ ԺԵ. ամ ապաշխարեսցէ եւ զծը-նունդն ածիցէ ի հաւատս» (ԺԴ.)։

Կիւրեղ Ալեքսանդրացիի Գ. կանոնը նոյն հարցը կը լուծէ այլ ձեւով. «Որք ամուսնացեալ են ընդ հեթանոսաց եւ ատցէ նոցա Աստուած ժամանակ ապաշ-խարութեան, զամենայն ժամանակս ա-պաշխարեսցեն արտասուաւք եւ ողորմու-թեամբ, որպէսզի զամենայն ինչս իւրա-նց ատցեն ազքատաց, ի տարւոջն մի-անգամ հաղորդեսցին աւրինաց։ Ապա ե-թէ ոչ դոյ տեղի եւ ոչ վերծանի ի կապա-նաց անաւրէնութեան, դնեսցեն ծա-ռայս և ապառնեսցեն քանի եւ կարասցեն. եւ ապա յետին թոշակին արժանի լինի-ցին»։

Կեսարացիի վերագրուած «Վասն պէս-պէս...» կանոնախումբը կը յիշեցնէ Ս. Ներսէսի կանոնները։ Անոր ԾԱ. կանոնը կը սահմանէր. «Թէ ոք ամուսնասցի ընդ առն անաւրինի, թէ թողցէ զպղծութիւնն եւ յապաշխարութիւնն եկեսցէ՝ Գ. ամ ընդ ունկնդիրս կացցէ, Բ. ամ՝ ընդ ձե-ռամբ, Ա.՝ ընդ ապաշխարողս մտցէ եւ ելցէ յեկեղեցին, տրաւք եւ արտասուաւք արժանի լիցի աւրինաց։ Ապա եթէ դար-ձուսցէ զայրն ի մոլորութենէ ըստ գրե-ցելումն, թէ «որ դարձուցանէ զմոլորս ե-ալն նա մեծ կոչեսցի», բայց սակայն վասն անաւրինացս սուրբ պահպին՝ Ա. ամաւ սրբեսցի եւ հաղորդեսցի աւրի-նաց»։

Նկատելի է, որ ո՛չ մէկ կանոն ան-վաւեր կը հռչակէ այլազաւանի մը հետ կնքուած ամուսնութիւնը։ Եկեղեցին բա-ւարարուած է ապաշխարանքով եւ քանի մը պատիժներով, խուսափած է աւելի կարուկ միջոցներու դիմելէ, մասնաւո-րապէս, պահքը անվաւեր նկատելէ՝ կրօ-նամոլութեան առաջքն առնելու մտադ-րութեամբ։

Ս. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ԸՆԿ. Ս. ԱԲՐԱՀԱՄԵԱՆԻ ՅՈՒՇԵՐԷՆ

(Գ. Եւ Վերջին Մաս)

Լաւ չեմ յիշեր այդ Շաբաթ օրուան ճիշդ թուականը։ Յուլիս ամսուան վեր-ջերն էր։ (Յուլիս 31 — խմբ.)։ Ժամը 4ի մօտերը, մենք չորս ընկերներով կը սպա-սէինք մեր որսին։ Սարսափելի են սպա-սումի այդ վայրկեանները։ Արեւը գը-լուխդ կը խուժէ. վրադ տեսակ-տեսակ տաքութիւն կուգայ։ Վախէն թէ քաջու-թենէն, ո՛չ ոք պիտէ. այլ՝ միայն Աստ-ուած։

Վերջապէս փողոցին ծայրէն երեւաց Բըկովը, անբաժանելի իր երկու «Բլաս-տոն Կոզակ»ներովը։ Այնպէս որոշած էինք, որ նախ եւ առաջ կրակ պիտի բա-նար Դաւիթը՝ Կոզակներուն վրայ, զա-նոնք խուճապի մատնելու, կամ՝ անշար-ժութեան դատապարտելու համար։ Հե-տմայեակը պիտի կրակէր Բըկովի վրայ։ Եթէ յաջողէր, մենք պիտի պաշտպանէինք իր վախտատը։ Եթէ չյաջողէր, մեր կարգին պիտի կրակէինք չունին վրայ։

Ահա կը մօտենայ մեզի։ Գրեթէ քա-վէրնիս է։ Եաղկուբենց Դաւիթը քաշեց ատրճանակը ու կրակեց Կոզակներուն վը-րայ։ Իրենց վախէն մարդիկը մնացին քարացած։ Այդ միջոցին դուրս ցատկեց Հմայեակը եւ ատրճանակի երեք հար-ուածով զետին փռեց արիւնարբու գա-զանը։

Պատահեցաւ զարմանալի բան մը։

Հմայեակը ինքզինքը կորնցուց լոլո-րովին։ Աչքերը դուցած, եղած տեղը մնաց փայտի նման անշարժ։ Մօրեղբայրս՝ Գասպար Մխքայէլեանը, բարեբախտա-բար, փորձառու էր այսպիսի գործերու մէջ։ Վազեց Հմայեակի քով եւ զօրաւոր ապտակ մը իջեցուց անոր երեսին։ Հմայ-եակի աչքերը բացուեցան։ Մինչ այդ, ես ալ հասած էի քովը։ Բռնեցի թեւէն ու քաշելով, վազելով մտանք քովի փողոց-ները։ Ցետոյ, տարի մարագ. պահեցի օճախին մէջ, խոտերուն տեւը։

Մէկ ժամ չանցած քաղաքը պաշար-ուեցաւ «քուպանսկի Կոզակ»ներով։

Սկսան խուզարկութիւնները։ Տակնու-վրայ ըրին բոլոր կասկածելիներու տու-ները, սակայն չգտան Հմայեակը։ Որո՞ւ մտքէն կ'անցնէր, թէ ան պահուած էր հակապաշկինականի մը մարագը։ Կա-ռավարութիւնը վստահ պիտէր, որ տե-ղը կազմակերպողը Դաշնակցութիւնն է. սակայն, ի՛նչպէս գտնել յանցաւորը։ Քանի մը շաբաթ ետք, Կարսի Կ. Կոմի-տէն թուղթիկով մը յայտարարեց, թէ չանպատակ եղաւ «Որսկան» խումբի ջար-դարարը՝ գնդապետ Բըկովը, եւ տեղո-ւվրան ազատ է։

Հիմա կը մնար Հմայեակը հեռացնել քաղաքէն։ Դժուարութիւնը այս էր։ Գի-ւղ նա պէտի նոր պատուէրը մերժէր։ Պէ՞տք է մի կերպ ազերել թէ ոչ։ Իսկ ա-զատութեան մէջ եղող քանդակագործ-ներն ու նկարիչները սրտով եւ հոգո՞վ են քանդակում ու նկարում նրա բոյ-րու-սաթը... ճիշդ ասաց մի անգամ պետը, — ժամանակները ծանր են, պէտք է յար-մարուել։ Իրե՞ն է մնացել հերոսութիւ-նը։ Ի՞նչ հերոսութիւն։ Խփիր գլուխդ պատին, պատը չես ջարդի, գլուխդ կը ջարդես։ Դա ի՞նչ մի հերոսութիւն է...0, մայն կոթ, օ, մայն կոթ, չէնջայ նա, ոտքի կանգնեց, երկու ձեռքով վերցրեց երկու օրաթաժինները եւ դորդերի վրայ քայլող ատաղերուհու չորսրան քայլերով դիմեց դէպի չորանոցը։

— Մումու, գնանք...

Մամօն ժպտաց չփոթուած մանկան ժպիտով եւ հետեւեց նրան։

Դուռը ծածկուեց։

— Այսպիսի բաներ, հայդուկ, — քե-թեւացա՞ծ թէ զառնացած բացագանչեց Աչոտ դային արագանցելով անիւների ըն-թացքը։ Իռնասը չէր ժպտում։

— Օդը ղժուար է, — ասաց նա։ Երեւի ուզում էր ասել՝ ծանր է։

ԳՈՒՐԳԻՆ ՄԱՀԱՐԻ

(Շար. – 19)

Ծաղկած Փշալարեր

(ՎԻՊԵՐԳ)

Ուրիշ են ըստ երեւոյթին Գերմանուհու մտքերը։ Կոլիայի բերած հացը նրա մէջ զարթնեցրեց զանազան յիշողութիւններ։ Ճիշդ ասաց Աչոտ դային, նա յիշեց իր դինը... նրա մէջ զարթնեց անզուսպ մի առելութիւն ղէպի աշխարհը եւ մարդիկ, հանդէպ նրանց, որոնք հասցրին նրան այդ օրին, երբ երկու բաժին հացը նրա համար վարձատրութիւն է եւ ուրախու-թիւն։ Նա որոշեց չդիպչել այդ հացին, պատուհանից չպրտել ձորը, նետել պա-հակների շներին, թող լափեն ու չյարձակ-ուեն կալանաւորների վրայ կամ տանել, դնել պետի սեղանին եւ ասել.— Վերցրէք ձեր հացը, ես իմ ներշնչումը չեմ ծախի երկու բաժին հացով։

Մամօն վերջացրեց ծխելը, պէտք է ևն-թադրել, որ նա հիմա կը վերցնի թի-թեղէ՝ ներսը սեւ, դուրսը դորշ ճաշա-մանը, կը մանի չորանոց եւ այնտեղից դուրս կը գայ մի քանի ցրտահար կար-տոֆիլներով։ Իռնասը մի երգ է երգում քթի տակ եւ ժպտում իր նորածին ա-մաններին, Աչոտ դային աշխատում է մի երկարավիզ սափորի վրայ, եւ ըստ երե-ւոյթին նա էլ ինձ նման մտածում է Լիուդմիլայի, Մամոյի եւ աշխարհի դոր-ծերի մասին. ես վառում եմ վառարանը, ջուր տաքացնելու վաղուայ կաւահողը թացելու համար, վառում է վառարանը, վառարանը երգում է Երեւանի ներքին եւ քաղաքական բանտերում այնքան տա-րածուած անյայտ բանաստեղծի եւ եր-գչհոնի երգը.

Ամէն կիրակի օր մայրս գալիս է,
Ձեկայի դրան կանգնած լալիս է.
Ուրիշին խնդրելով հացս տալիս է,
Մայրիկ, անմեղ բալէդ բանտում է

ընկած։

Իսկ Մամոյի ճաշամանը վառարանի վրայ չի երեւում, իսկ «Լիուդմիլան» ու-տել է ուզում, իսկ... գլուխը բարձրա-ցրեց աշխատանքից (Նա Դոստոյեւսկու ճախ ականջն էր զգուշութեամբ փոր-փրում) եւ նայեց Կոլիայի բերած հացի երկու բաժիններին։ Այն միտքը, որ նա օրինական տէրն է այդ օրաթաժինների, հիմա նրան զոհունակութիւն է պատճա-ռում։ Գերմանուհին զգաց, որ քաղցը խլրտաց ներսում, նա մինչեւ անգամ զգաց հացի սուր եւ թթու, ախորժելի բուրմունքը։

Օրաթաժիններից մէկի վրայ լուցկուց հատ փայտիկով ամրացուած էր մի կտոր հաց, ըստ երեւոյթին կէս կիլոգրամը լրացնելու համար։ Նա սերտ կ'ուսէր դոնէ այդ կտորը։ Չի էլ նկատուի, որ օրաթաժինից մի բան պակասեց.— «Ի՞նչ-պէս Կոլիան այդ կտորը ճանապարհին չի կերել, — մտածեց նա, — երեւի կուշտ է...»։ Նա ինքն էլ չհմացաւ, թէ ի՞նչպէս փոքրիկ կտոր հացը մայր կտորին ամ-րացնող փայտիկը դուրս եկաւ, ընկաւ պատուհանի գոգը, իսկ կտոր հացը յայտնուեց իր բերանում։ Ծամեց արագ, կուլ տուեց, ուտելու ցանկութիւնից նա ասես դողաց։ Նա զգաց, որ Մամօն չար-ժուեց տեղում, ու նորից անշարժացաւ։ Ու զգաց իր արածի ողջ անհեթեթու-թիւնը։

Մամօն, այդ խեղճ, բարի Մամօն ամէն օր իրեն հիւրասիրել էր իր խեղճ հնա-րաւորութիւններով, իր չունեցածից, իսկ նա երբ որ հիմա տէր է դարձել մի ան-դամից երկու օրաթաժին հացի, նոտած յիմարաբար ամէն բանի մասին մտա-ծում է, բացի այն մասին, որ Մամոյին պէտք է կերակրել գէթ մի անգամ։ Եւ ի զուր նա պետի նոր պատուէրը մերժէց։ Պէ՞տք է մի կերպ ազերել թէ ոչ։ Իսկ ա-զատութեան մէջ եղող քանդակագործ-ներն ու նկարիչները սրտով եւ հոգո՞վ են քանդակում ու նկարում նրա բոյ-րու-սաթը... ճիշդ ասաց մի անգամ պետը, — ժամանակները ծանր են, պէտք է յար-մարուել։ Իրե՞ն է մնացել հերոսութիւ-նը։ Ի՞նչ հերոսութիւն։ Խփիր գլուխդ պատին, պատը չես ջարդի, գլուխդ կը ջարդես։ Դա ի՞նչ մի հերոսութիւն է...0, մայն կոթ, օ, մայն կոթ, չէնջայ նա, ոտքի կանգնեց, երկու ձեռքով վերցրեց երկու օրաթաժինները եւ դորդերի վրայ քայլող ատաղերուհու չորսրան քայլերով դիմեց դէպի չորանոցը։

— Մումու, գնանք...

Մամօն ժպտաց չփոթուած մանկան ժպիտով եւ հետեւեց նրան։

Դուռը ծածկուեց։

— Այսպիսի բաներ, հայդուկ, — քե-թեւացա՞ծ թէ զառնացած բացագանչեց Աչոտ դային արագանցելով անիւների ըն-թացքը։ Իռնասը չէր ժպտում։

— Օդը դժուար է, — ասաց նա։ Երեւի ուզում էր ասել՝ ծանր է։

ԳՈՒՐԳԻՆ ՄԱՀԱՐԻ

(Շար. – 19)

ՀԱՅԿԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ՀՐԱՏ

Ը.

Եղիսաբեթը Հայկի հատ միմիայն զոյգ մը ինքնագործ բոլորեցուցած ունէր ծնօթներէն, որոնց տունը կ՚երթար, երբ ուզէր ինքզինքը ուրախացնել։ Հայկ ալ, երբ կ՚ուզէր ինքզինքը զբաղեցնել, կ՚երթար Եղիսաբեթի տունը։ Ասոնք ամէն անգամ իրարու կը պատմէին իրենց ապրումները, ինչ որ ամէն անգամ նոր բան մը կ՚ըլլար։ Հայկ կը պատմէր իր ճակատագրին դէպքերը, Եղիսաբեթ ալ իր ամուսնական կեանքին մանրամասնութիւնները։ Հայկ կը պատմէր, թէ ինչպէս ինքզինքը ազատած էր Ռուսիոյ զինուորական ծառայութենէն, Եղիսաբեթ ալ կը պատմէր, թէ ինչպէս ամուսինը ինքզինքը ազատած էր Թուրքիոյ զինուորական ծառայութենէն։ Հայկ կը պատմէր, թէ ինչպէս ինքզինքը ազատած էր Ռուս

Այրի Տիկին Նուարդ Բապուճեան, Օր· Թլօմին–Լօրանս Բապուճեան, Տէր եւ Տիկին Յովհ· Պօյաճեան եւ զաւակները, Տէր եւ Տիկին Բարսեղ Մերճինեան եւ զաւակները, Տէր եւ Տիկին Ժան–Փիէր Պօյաճեան եւ զաւակները, Պ· Ռոպէր Պօյաճեան, Տէր եւ Տիկին Զիֆթէեան եւ զաւակները, Պ· Վահէ Մերճինեան, Տէր եւ Տիկին Ժիլպէր Մերճինեան եւ զաւակները, Տէր եւ Տիկին Ալէն Լօրան եւ զաւակները, Տէր եւ Տիկին Ժան Փանոսեան, Տիկին Ալիս Փանոսեան, Տէր եւ Տիկին Փօլ Կիւմէ, Տէր եւ Տիկին Գրիգոր Թաշճեան եւ զաւակները (Ամերիկա),

Պ· Իվան Քուռնօ խոր ցաւով կը ծանուցանեն իրենց զաւկին, քրոջ, քրոջ զաւկին, զարմուհիին եւ կնքամօր

ՍՈՆԻԱ ԲԱՊՈՒՃԵԱՆԻ

յանկարծական մահը, որ պատահեցաւ Նոյ· 27ին։

Յուղարկաւորութիւնը կը կատարուի ԱՅՍ ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, ԴԵԿՏԵՄԲԵՐ 4, ԺԱՄԸ 13·45ին Փարիզի Ս· Յովհ· Մկըրտիչ եկեղեցին ուրկէ մարմինը կը փո – խադրուի Փանթէն – Փարիզիէնէ գերեզմանատունը, ամփոփուելու համար ըն – տանեկան դամբարանը։

Մահադէպ չսպասցողներէն կը խնդրուի ներկայիս իրրեւ այդ նկատել։

ԿԸ ՓՆՏՐՒԻ

Բնիկ էլպասան, Թոզատի շրջան, Տիկին Կլէմիա Մըսրեան (ծնեալ Մզռեան Մանուկեան) կը փնտռէ իր եղբօր՝ Հաճի Մանուկին զաւակները։ Ամենամէկ 14 տարեկան, Սիրանոյշ 5 տարեկան, Կարա – պետ 4 տարեկան, Գէորգ 3 տարեկան· ասոնք Մալաթիա տեղնուած են։ Իրենց մօրը անունը Վարդուհի։ Կը փնտռէ մեծ քոյրը Եղսան, զաւակները՝ Լեւոնը, 14 տարեկան, Ազատին 13 տարեկան· ասոնք իրենց քովը մնած են։ Փեթուղը 12 տարեկան մնայ Պերաճակի Խանը։ 8 տարեկան Միհրանը, 5 տարեկան Գրիգորիկը, այս երկուքը կորսուած են։ Իր հօրը անունը Օհաննէս Քէչիչեան։

Իրենց մասին լուր ունեցողներէն կը խնդրուի խմացնել հետեւեալ հասցէին.

G. M. Djnbachian
62, Ave. Sadi Carnot
Valence 26000 (France)

Կը խնդրուի արտասահմանի թերթերէն արտատպել։

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Տիկին Սրամ Գալաճեան եւ զաւակները, Տիկին Օննիկ Գալաճեան եւ զաւակները, կը ծանուցանեն թէ հոգեհանդստեան պաշտօն կը կատարուի իրենց ամուսնոյն, հօր, զաւկին եւ եղբօր՝

ԱՐԱՄ ԳԱՎԱՃԵԱՆԻ

մահուան քառասունքին առթիւ, այս կիրակի առաւօտ Փարիզի Ս· Յովհ· Մկրտիչ եկեղեցին։

Ի պիտութիւն աղբացեալին յիշատակը յարգողներուն։

Հ. Յ. Դ.

ՎԻԼԻՆ — Հ· Յ· Դ· Անի կոմիտէի ընդհ· ժողովը այս Շաբաթ (Դեկտ· 2) իրիկուն ժամը 20·30ին Գ· Իփէկեան սրահը։ Կարեւոր օրակարգ։ Ներկայանալ անդամատեղով։

×

ԻՍԻ — Հ·Յ·Դ· Զաւարեան կոմիտէի ժողովը այս հինգշաբթի, (Դեկտ· 7) ժամը 21ին ընկ· Սեբոբեանի բնակարանը, 25 Ավընիւ Պուրկէն, Իսի։ Կարեւոր օրակարգ։։

ՆՈՒԻԷՐ

Տէր եւ Տիկին Հայկ Ադապեկեան Ս·Ղազարի դպրոցարանին նուիրած են հայկ· թերթերու հատաքածոներ եւ մեծագիր արժէքաւոր իւզանկար մը, գործ՝ Արշակ Թոխմանեանի։

L'UGAB

Présente
le Mercredi 6 Décembre à 20 h. 45
Une Soirée Musicale
BABADJANIAN
HAROUTIOUNIAN
DJAMBAZIAN
KAZANDJIAN
TJEKNAVORIAN
Manifestation proposée par la QUATRA Association d'Action Artistique Arménienne
Musée GUIMET, 6 Place d'Iéna

ՃԱՇ - ՀԱՆԴԷՍ ԵՒ ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Կազմակերպուած Կապոյտ Խաչի Շաւիլի մասնաճիւղին կողմէ
Մասնակցութեամբ Շաւիլի Հ· Յ· Դ· Նոր Սերունդի մասնաճիւղին
2 Դեկտեմբեր Շաբաթ երեկոյ ժամը 20·30էն մինչեւ լոյս Շաւիլի Թաղապետարանի սրահին մէջ 47, Rue Stalingrad

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԲԱԺԻՆ
Մասնակցութեամբ Պ· Պ· Պետիկեանի եւ « ՆԱՅԻՐԻ » ՊԱՐԱԽՈՒՄԲԻՆ
ԿԷՍ ԳԻՇԵՐԻՆ ՑԵՏՈՑ ՊԱՐԱՀԱՆԴԷՍ — ՆՈՒԱԳԱԽՈՒՄԲ ՊԵՏԻԿԵԱՆ
Մասնակցութիւն՝ ճաշ, հանդէս եւ պարահանդէս 35 ֆր· — ուսանողներուն եւ Ն· Սերունդի անդամներուն զեղչուած գին
Հասոյթը պիտի յատկացուի Կապոյտ Խաչի կայանի չինութեան։

ՓԱՐԻԶԱՀԱՅ ՏԻԿՆԱՆՑ ՄԻՈՒԹԵԱՆ
ՈՐԲԵՐՈՒ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՄԱՐՄԻՆԻ
ՏԱՐԵԿԱՆ ՄԵԾ ՊԱՐԱՀԱՆԴԷՍԸ
Կիրակի, Դեկտեմբեր 3, ժամը 16էն կէս գիշեր
Dans les Salons de l'Hôtel George V, 31 Avenue George V, Paris (8e)
Նախագահութեամբ Տէր եւ Տիկին Գէորգ Պաղըճեանի
DON DIEGO et SON ORCHESTRE
Մուտք 20 ֆր· — ուսանողներու կէս գին
Ապահովել սեղանները՝ 924–38–54

Կ'ՈՒԶՈՒԻ
ՍՏԻՊՈՂԱԿԱՆ
Pharmacie SILVESTRE
46, Rue de Trévise, Paris (9e)
Կը փնտռէ·—
Manutentionnaire, de préférence homme, mi-temps ou temps complet
URGENT

IMPRIMERIE SPÉCIALE
DU JOURNAL «HARATCH»
32, RUE DE TRÉVISE — PARIS (9e)



RECITAL DE PIANO
Huguette AGEDERIAN
SALLE GAVEAU
45, Rue La Boëtie — Paris (8e)
Jeudi 7 décembre à 21 h. précises
Oeuvres de : HAENDEL — CHOPIN — DEBUSSY — LISTZ
Prix des places 10, 15, 20, 25 Frs.
Vente des billets : Agederian, 67, Rue de Cléry, Paris (2e) et à la Salle Gaveau

ՁՄԵՌՕՆՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ
RÉVEILLON en ARMÉNIE
DU 23 DECEMBRE AU 3 JANVIER
en classe Touriste 1780F
en Première classe 1880F
Pension complète à Moscou à l'aller et au retour et 10 jours en chambre et petit déjeuner à Erévan
RÉVEILLON TZIGANE en Bulgarie
DU 30 DECEMBRE AU 3 JANVIER
Prix Paris-Paris 750F
Demandez nos brochures détaillées !
Ադամապրութիւն
Renseignements et inscriptions :
ՓԱՐԻԶԻ ՄԷՋ SONIA COUMRYANTZ
TRIM VOYAGE
1, Rue de Sèze — PARIS (9e)
Téléphone : 742-57-84 et 742-22-12
de 9 h. 30 à 18 h. — tous les jours
ԼԻՈՆԻ ՄԷՋ Լիոնէն մեկնումը օդաճաւով
VOTRE AGENCE DE VOYAGES ARMENIENNE
agence de voyages SEVAN
50, Cours de la Liberté — LYON — Téléph. 60-13-66
de 10 h. à 19 h. — tous les jours
ՄԱՐՍԷՑԼԻ ՄԷՋ JACQUES CHELELEKIAN
VOYAGES WASTEELS
87, La Canebière, Marseille 1er — Téléphone : 62-03-44 et 64-09-49
de 15 h. à 19 h. — tous les jours

ԿԻՐԱԿԻ
3
ԴԵԿՏԵՄԲԵՐ
DIMANCHE
3 DECEMBRE
1972

Le Numéro 0,70 F.

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ
ՀԻՄՆԱԴԻՐ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

HARATCH

Le Seul Quotidien Arménien en Europe Occidentale
Directrice : Arpik Missakian
32, rue de Trévise Paris 9

— Tél. : 770-86-60 —
C. C. P. Paris 15069-82

Fondé en 19[illegible]
R. C. Seine 57 A 27[illegible]

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա	Տար. 120 ֆր.	Վեցամսեայ	65 ֆր.
Արտասահման	Տար. 135 ֆր.	Հատը	0,70 ֆր.

49ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 12.580

Fondateur : SCHAVARCH MISSAKIAN

48e ANNÉE — N° 12.580

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ՄԱՔՐԱԳՈՐԾՈՒՄՆԵՐ ԼԱՈՐՀՐԴԱՅԻՆ ԴՐԱԽՏԻՆ ՄԷՋ

———o———

Ա.

Անձնական մըն էր Հայաստանի վարչապետ Բագրատ Ա. Մուրատեանի պաշտօնազրկումը եւ իրեն տեղ Գրիգոր Արզումանեանի նշանակումը : Որոշումը տուած է Հայաստանի Գերագոյն Խորհուրդի Նախագահութիւնը Նոյեմբեր 21ին : Մուրատեան 57 տարեկան է եւ 1971 Յուլիս 6էն ի վեր կը վարէր վարչապետի պաշտօնը, որ խորհրդային հաւասարակշռութեան մէջ համայնավար կուսակցութեան կեդրոնական կոմիտէի առաջին քարտուղարութենէն ետքը առորդան է :

Գերագոյն Խորհուրդը Բագրատ Մուրատեանը իր «պարտականութենէն ազատելու» իրեւ պատճառաբանութիւն կը յիշատակէ անոր «առողջական վիճակը» :

Դիւանագիտական բացատրութեամբ «առողջական վիճակի» պատրուակը հոմանիշ է չնորհազրկումի : Գաղտնիք մը չ՚այս : Բոլոր երկիրներու մէջ ալ ի զոյ է այս բացատրութիւնը :

Հայաստանի թերթերը առհասարակ ցած ժլատ են : Երկրի քաղաքական ներքին անցուդարձերուն մասին ո՛չ մէկ մանրամասնութիւն կուտան : Ամէնէն կարեւոր լուրերը յաճախ չորրորդ էջի վրայ քանի մը տողով միայն կ՚արձանագրեն, աննշան դէպքի մը նման :

Այս պայմաններուն մէջ անկարելի է թափանցել վարչապետի փոփոխութեան իսկական պատճառներուն : Երեւանի Հեռատիպը չըսեր թէ ուրիչ պաշտօնի կոչո՞ծ է Մուրատեան թէ բոլորովին չնորհազրկուած է : Ժամանակը պիտի պարզէ անշուշտ Հայաստանի Գերագոյն Խորհուրդի նախագահութեան այս պատասխանատու որոշման ներքին ծալքերը :

Նորընտիր վարչապետը՝ Գրիգոր Արզումանեան 53 տարեկան է եւ վարած է կուսակցական եւ քաղաքական պատասխանատու պաշտօններ : Գերագոյն Խորհուրդի որոշումով, Հայաստանի Կոմկուսի կեդրոնական Կոմիտէի քարտուղարութեան մէջ առնուած են երկու նոր անդամներ : Հեռացուած ո՞ր անդամներուն փոխարէն :

Մաքրագործումներն ու չնորհազրկումները մենաչնորհը չեն Հայաստանի : Խորհրդային Միութեան 15 Հանրապետութենց մեծ մասին մէջ քանի մը ամիսէ ի վեր սանձարձակ կը զործէ «հարթիչ գլան» : Օրը օրին արձագանգ եղած ենք Ուկրայինայի, Վրաստանի եւ Պալթեան երկիրներու՝ Լիթուանիոյ, Լատուիոյ եւ Էսթոնիոյ մէջ կատարուած մաքրագործումներուն, իրրեւ հետեւանք այդ երկիրներու մէջ ծայր առած ներքին խլրտումներուն, որոնք սկսեր էին մտահոդել Կրեմլինի վարիչները : Մանաւանդ Պալթեան ծովեզերքը կը նկատուէին Ուկրայինայի մէջ պատահած դէպքերը :

Խորհրդային Հանրապետութենց մէջ ամէնէն ուժեղ ուշադրութիւն դրաւող երկիրն է Ուկրայինան իր տարածութեամբ, բնակչութեան թիւով, հարստութեամբ, մանաւանդ Ռուսերու հանդէպ առնչութեամբ : Ազգայնական զգացումը առկայծ կը մնայ ժողովուրդի հոգիին մէջ :

Տարիներ Ուկրայինացիները արտասահմանի մէջ կազմակերպուած են եւ երկրէ երկիր կապեր կը պահեն իրարու հետ : Ունին իրենց Խորհրդարանը (Ռատա) եւ «կառավարութիւնը» : 1917ի բոլշեւիկեան յեղափոխութեան վաղորդայնին Ուկրայինա վայելեց անկախութեան կարճատեւ շրջան մը : Ի վերջոյ ինկաւ կրկին Ռուսիոյ (կրեմլինի) մականին տակ :

Շատ բնական է, որ Մոսկուա իր մաքրագործումները սկսէր Ուկրայինայէն, բոլորէն առաջ :

ՀՐԱՆՏ-ՍԱՄՈՒԷԼ

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՄԻԱՑԵԱԼ ԶԱԽԻՆ ՀԱՆՐԱԺՈՂՈՎԸ

ՄԱՌՆԵ ՖՐԱՆՍԱԿԱՆ ԸՆԿԵՐՎԱՐՈՒԹԻՒՆ ԿՈՒԶԷ

———o———

Կազմակերպիչները 100 հազար կը հաշուեն այն բազմութիւնը որ հաւաքուած էր Փորթ տը Վերսայլ, Ուրքաթ երեկուն, լսելու համար միացեալ ձախի երեք պատգլուխները՝ Միթերան (ընկերվարական) Մարշէ (համայնավար) եւ Ֆապր (ձախ արմատական) :

Ըստ ոստիկանութեան, միայն 50 հազար էր ներկաներու թիւը բայց պարզ է որ զանգուածային համախմբում մըն էր, որ նաեւ խանդավառ մթնոլորտ ստեղծեց :

Մասնաւոր նորութիւն չկար անշուշտ, բայց միացեալ ձախին գլխաւոր նպատակն էր, միայն մէկ անդամ, միացեալ ճակատով մը ներկայանալ հանրութեան՝ ընտրութիւններէն առաջ :

Ամէնէն քաղաքական եւ կարեւոր ճառը արտասանեց Ժոլժ Մարշէ : Ազգարեւ, միացեալ ձախին Ազիլէսի կռունկը՝ համայնավար կուսակցութիւնն է : Կը մնար ուրեմն վոխ-քարտուղարին այնպիսի լեզու մը զործածել, որ ամբոխները համոզէ : Այդ առընչութեամբ Մարշէի ելոյթը շատ յաջող կարելի է նկատել.— «Վասնզի դէպի ընկերվարութիւն կ՚երթանք : Ընկերվարութիւնն է որ պիտի իրագործէ աշխատաւորներու իսկական շահագործութիւնը, որ վերջ պիտի դնէ մարդուն շահագործման, որ թոյլ պիտի տայ անհատին ամբողջական ծաղկումը : Աւելցնեմ, որ այսօրուան իրականացած միութիւնը կարելի եւ օգտակար կը դանեմ նաեւ ընկերվարական Ֆրանսայի մը մէջ : Ընկերվարութիւնը Ֆրանսայի մէջ, աշխատաւորները զոյն պիտի կառուցանեն նկատի առնելով միաժամանակ զոյն յատկանշող ազնիւ սկզբունքները, միութիւնը, ժողովուրդներու վերածնութիւնը, մեր երկրին եւ ժամանակին յատուկ պայմանները : Վասնզի ընկերվարութեան «մոտէլ» մը չի կրնար ըլլալ, զոր կարելի է փոխադրել մէկ երկրէն միւսը : ... Մեզի կ՚ըսեն նո՞ր ճամբայ մըն է : Այո՛, այն ճամբան է զոր կը հրահանգեն մեր երկրին յատկանիշները, մեր ժողովուրդի չահերը : Ձախին հաւաքակայ ծրագիրը չենք կարզար օտար լոյսի մը : Զայն կը կարզար Ֆրանսական երկնքին լոյսին, Ֆրանսայի հողին վրայ, Ֆրանսայի աշխատաւորներու աչքերով» :

Պարզ է որ նման բանաձեւում մը չատ հրապուրիչ է եւ այդ պահուն ամէն մարդ կը մտածայ (երեւի Մարշէն ալ) որ Ֆրանսական ընկերվարութիւն քարոզելու համար, պէտք է նախ Մոսկուայէն չառնել հրահանգները ... :

Միթերան չատ քնարական ոճով խօսած է ժողովուրդին. «Ուրկէ՞ կուզաք, բարեկամներ եւ ընկերներ, եկած էք քալող ժողովուրդի մը ոտնը ապրելու : Այլին, զրամին եւ զժբախտութեան իշխանութեան եւ ձախին միջեւ, ձեր ընտրութիւնը կատարած էք» :

Ցանուն ձախ արմատականներու, Ռոպէր Ֆապր լաւատես է եւ վստահ որ՝ «յաղթանակը մեր ձեռքն է» :

Եթէ իշխանութիւն եւ կազմակերպիչ, ինչպէս միշտ, համաձայն չեն ներկաներու թիւին չուրջ, մէկ բան սակայն անվիճելի է, ելքի առեն մուտքէն մէկ հոգի աւելի եղած է, քանի կին մը պատակ բերած է հանրաժողովի ընթացքին :

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՖՐԱՆՍԱՅԻ մեծամասնութեան թեկնածուներու ցանկը ծանօթ պիտի ըլլայ Դեկտեմբեր 12ին, ինչպէս պահանջած է Հանրապետութեան Նախագահը :

ԱԶԳԱԺՈՂՈՎԻՆ մէջ Անգլիոյ պատուիրակը պահանջեց, որ Սուէզի ջրանցքը բացուի եւ իսրայելեան ուժերը հեռանան հոնկէ :

ՀՌՈՄԻ հիւանդանոցի մը մէջ մեռաւ Իտալիոյ նախկին նախագահներէն Անթոնիօ Սեննի, 81 տարեկանին, երկարատեւ հիւանդութենէ մը ետք : Ծնած էր 1891 Փետրուար 2ին եւ քանի մը համալսարաններու մէջ իրաւագիտութեան փրոֆեսէօր էր : Քրիստոնեայ – դեմոկրատ պիտակին տակ երեսփոխան ընտրուած էր 1944ին : Ցաջորդաբար վարած է երկրագործութեան, պաշտպանութեան եւ Արքին նախարարութիւնները : Մեծ «Եւրոպայի» մըն էր :

ԴԱՇՆԱԿՑԱՅԻՆ ԳԵՐՄԱՆԻՈՅ վարչապետը՝ Պրանտ Արեւելեան Պերլին պիտի չերթայ ստորագրելու համար երկու Գերմանիաներու համաձայնագիրը : Արեւելեան Գերմանիա «ժամանակացոյցի» նոր կարգադրութիւն մը ըրած է, որպէսզի Պրանտ հրաժարի Արեւելեան Պերլին երթալէ : Այս կարգադրութեան բուն պատճառն այն է, որ Պրանտ մեծ ժողովրդականութիւն վայելելով Արեւելեան Գերմանիոյ մէջ՝ իր այցելութիւնը կրնայ առիթ տալ ժողովրդական խանդավառ ցոյցերու, ինչպէս պատահած էր 1970ին Էրֆուրթի մէջ :

ՏՐՊԼԻՆԻ մէջ երկու հոգի մեռաւ եւ երկու հարիւր հոգի ալ վիրաւորուեցաւ երկու ռումբերու պայթումի հետեւանքով :

ՀԵԼՍԻՆԲԻի մէջ Ռումանիոյ ներկայացուցիչը պահանջեց, որ Եւրոպայի ապահովութեան Խորհուրդը յատուկ բանաձեւումով մը արգիլէ օտար երկիրներու որեւէ ձեւի միջամտութիւնը՝ ուրիչ երկիրներու զործերուն : Այս ակնարկը Մոսկուայի ուղղուած է, որ Չեխոսլովաքիոյ ներքին զործին միջամտեց :

ԵՐԵՒԱՆ ⇐⇒ ՓԱՐԻԶ
ՀԵՌԱՏԻՊ

ԵՐԵՒԱՆ (Արմէնփրէս, Նոյ. 28–29)

ԿԷՕՐԼՍԻ
ԳԱՒԱՌԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԸ

... Կէօրլսը ունէր եկեղեցի մը ...

Այդ եկեղեցին հիմա ալ կանգուն է քաղաքի վողոցներէն մէկուն վրայ եւ կը պրաւէ անցորդներուն ուշադրութիւնը : Օրուան ընթացքին տասնեակ այցելուներ կը մտնեն հոն, բայց ոչ աղօթելու համար, ինչպէս անցեալին : Քանի մը տարի առաջ եկեղեցին զարձաւ Գորլսի զատառապիտական թանգարանը :

Հնադիտական բաժինին մէջ ցուցադրուած են քարէ զործիքներ, կաւէ երկրաբաճիճ կօշիկներ, ափսէներ, կինեղու զարդեր : Ուշադրաւ է ատանգական սանդը, քարէ կամբ, քարէ կուռքը : Աստնք ցոյց կուտան, որ Ք. Ա. 3–2 զարերուն չրջանը զարգացած ճարտարապետութիւն եւ բրուտագործութիւն ունեցած է : Այցելուները մեծ հետաքրքրութեամբ կը դիտեն տաւիղի պրոնզէ արձանիկը, որ կը կշռէ 5,5 քիլօ : Ուսումնասիրութիւնները ճշդած են անոր թուականը՝ կը պատկանի Ք. Ա. 14–12րդ զարերուն :

Ճարտարապետական բաժինին մէջ կան բեկորներ չրջանի կարեւոր յուշարձաններէն՝ Տաթեւ, Գլաձոր, եւայլն :

Ազգագրական բաժինը կը բովանդակէ Սիւնեցիներու տարազները, տնական զործածութեան առարկաներ, հայ զեղջուկին ճախարակը եւ մելիքներու ատանգական բուխարին :

ՄԱՌԵՇԱԼԸ, ՇԱՄԲԱՆԵԼ ԵՒ ՋՈՒՐԸ ...

———o———

Առջի օր, Պաշտպանութեան խորհրդարանին նախարարը մտաբերալ Գրեչկօ կ՚այցելէր Սեպեմա զործատունը, ուր կը պատրաստուին Միրաժ եւ Ֆոնթոմ օդանաւներու ինքնամուղ մեքենաները բայց ըստ երեւոյթին չատ չէ խանդավառուած եւ ըսած .— «Ի՞նչ կ՚ուզէք որ հասկնամ ձեր զործատունէն, ճարտարապետ չեմ» : Ու չի հետեւիր տրուած լուսաբանութիւններուն եւ կը նախընթերէ այլ հարցերով դրաղիլ .— « անհատակո՞ն ձեռնարկ է » կը հարցնէ տնօրէնին :

— Ոչ, դրամագլուխներուն 80 առ հարիւրը Պետութեան կը պատկանի :

— Ձեզ ո՞վ կը նշանակէ :

= Կառավարութիւնը :

— Ի՞նչ քաղաքական կուսակցութեան կը պատկանիք :

= Ոչ մէկ կուսակցութեան :

— Բանուորնե՞րը :

= Կրնամ ձեզի յայտնել իրենց ընկերակցական պատկանելիութիւնը, բայց ոչ՝ քաղաքական ձգտումը :

— Որքա՞ն ընկերվարական բանուոր կայ :

= Ձեմ դիտեր : Բայց գիտէք որ – տարրութեան որակը կախում չունի քաղաքական զոյնէն :

Բանուորները անտարբեր են : Այցելութեան վերջաւորութեան տնօրէնը կը հարցնէ խորհրդային նախարարին թէ զովացուցիչ մը կ՚ուզէ՞ :

— Ի՞նչ զովացուցիչ, կ՚ըսէ Գրեչկօ :

= Շամփանեը :

— Շամփանեը չուր է : Երբեք չեմ խմեր :

= Բայց Պ. նախարար, ի՞նչ կը խմէք,

— Ֆոնեաք :

Բայց ֆոնեաք չկայ ու նախարարը կը զարմանայ.— «Աստ՛ղակ զործատուն մը առանց ֆոնեաքի : Դուք ինձի չուր կ՚ուզէք հրամցնել, էհ, ես ալ ձեզի թէյ հրամցնեմ» : Ու ծրարը կը բանայ եւ լայն ժպիտով մը սամավար մը կը նուիրէ Սեպեմայի տնօրէնին, որ այդ օրը, տարեվերջ, չնորհիւ խորհրդային նախարարին որ չամփանեը չուր է մինչ հաւանաբար իրենց զերեզմաններուն մէջ կը զատնային բոլոր այրի Քլիքօները եւ Տօն Փերինիոնները :

ԵՐԵՎԱՆԻ

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ԻՄԱՑԻՔ ...

(ՁՕՂ ՀԱՅՏ ՀԵՂԻՆԱԿԻ)

(ՇԱՐ.)

Ծանոթ փաստեր

*

— Ա՛խ, ախտերդ ի՛, Մեծոն ասաց ու ինքն էլ ծիծաղեց: Ծանոթ էր ինձ, գիտեր, որ ես էլ նրա պես սիրում եմ ծաղրել ուրիշների թերությունները, ինքս էլ ոչ հոչակաւոր եմ: Ես ու նա մանկութեան ընկերներ էինք, միասին էինք մեծացել, միասին էինք խաղացել, միասին էինք ուսում ստացել, միասին էինք ծաղրել ուրիշներին: Ես ու նա մեր ուսումը վերջացրինք միասին, միասին էլ ուզեցինք գնալ Պետերբուրգ, բայց ես չկարողացայ, նա գնաց միայնակ

ԴԻՊՔԵՐ ՈՒ ԴԵՄՔԵՐ

«ՀԱՅԱՍՏԱՆ ԵՐԿԻՐ ԴՐԱԽՏԱՎԱՅՐ»

—0—

Երկերու կարիք ունին ժողովուրդները: Յաճախ թէ վիշտի առեն, խնջոյքի սեղանին վրայ թէ սուգի վայրկեաններ – րուն, պաշտպանելու պահանջ կը զգան անոնց սրտերը: Հայ ժողովուրդը ինք եւս մկին է անոնցմէ, որոնք երկերով են օրը փոթորիկներով եւ յաղթանքներով ապրած իրենց դարաւոր կեանքը:

Ու նման այն ժողովուրդներուն, որոնք երկերու տպաւորած են հայրենասիրու – թիւնը եւս հրահրելու համար սերունդ – ներուն մէջ, հայ ժողովուրդը եւս իր – գերով գեղեցկած է իր հայրենասիրու – թիւնը՝ ազատագրական պայքարի ամէ – նէն փշոտ օրերուն:

Ու բնական էր, որ իր մեծ բանաս – տեղծներէն շատերը հայրենասիրական եր – գերու մէջ պարզէին իրենց նեբչնչում – ները: Թալիադեանէն, Ալիշանէն եւ Դո – ղոխանէն սկսեալ՝ որոնք ամէնէն առոյշ երկերը թողուցին հայ երգարաններու մէջ՝ մինչեւ Շահազիզ, Նարպէյ ու Քա – մառ Գաթիպա, որոնց քնարը ձայնակցե – ցաւ Րաֆֆիի եւ Ծերենցի, Պօշեանի եւ Մուրացանի հայրենասիրական վկայերուն, ու նաեւ մինչեւ մեր օրերու երգիչները, որոնք Թումանեան եւ Իսահակեան, Վա – ւուժան ու Սիամանթօ կոչուեցան ու չե – փորհարներն հանդիսացան մեր նոր յարանշումներուն, հայ ժողովուրդի բա – վանդակ քերթողահրքը իր բոլոր էջե – րուն մէջ կը թրթռայ զմայլելի այն յու – զումներով՝ որոնք քալեցին մեր տառա – պանքին ու մեր ընդվզումներուն հետ:

Ժամանակին հետ այդ երկերէն շա – տերը, անշուշտ, կորսնցուցին իրենց եր – բեմնի քաղցրութիւնն ու ուժը՝ որպէսզի կարենային նոր օրերու մէջ ալ փոթորկել մեր հոգիները նոյն այն կրակով, որով համակեր էին մեզմէ առաջ այնքան սե – րունդներ, սակայն դեռ մինչեւ այսօր ալ կարելի չէ առանց խռովքի բանալ հին երգարանները զմայլելու համար յոյսին ու հաւատքին վրայ, որով ղեմացան այդ սերունդները չնորհիւ նոյն այդ երկերուն:

Այդ հին երկերուն մէջ կան եւ այնպէ – սիները, որոնք երբեմնի իրենց անուշու – թիւնն բան մը կը պահեն մեր նոր օրե – րուն ալ:

« Հայաստան երկիր դրախտավայր »ը մկին է անոնցմէ, երգ մը, որ միշտ թարմ մնայ եւ զոր մեր օրերուն ալ մեզ քաղ – ցրացուցին Կոմիտաս ու Շահմուրատեան:

×

Յովհաննէս Միրզա Վանանդեցին էր ե – ղեր զոյն պարզեւողը հայ գրականու – թեան, անուն, որ յանկարծ կ'ելլէ մեր ղէմը մեր պատմութեան արձանագրած

ՇԱՐԱԿՈՊԱՏԿԵՐԸ ԱՆՑԵԱԼԻՆ ԵՒ ԵՐԷԿ

ԱՆԳԼԻԱ

Պատերազմէն անմիջապէս եաք, Անգ – լիոյ չարժապատկերի արհեստը ոզոզ – ուած էին ամերիկեան արտադրութիւն – ներով: Կամաց–կամաց սակայն երեւան եկան անուններ, որոնք պիտի վայելէին միջազգային համբաւ:

Այս անուններէն յիշենք՝ Ձէյմս Ֆից –

թուականներուն մէջ դարագլուխը որո – նած տաեն եւ որ մեր նոր գրականութեան առաջին գլուխը կը բանար Հ. Աբեղեան բազրատունիին հետ մէկտեղ — մեր նոր դպրոցական դասական պահը՝ որուն պէ – տի պար խոկոյն կցուէր զարթօնքի ան – դրանիկ տենդը իր Ալամդարեանով ու Թագիադեանով, իր Աբովեանով ու Ալի – շանով:

Արդարեւ Վանանդեցիի ծննդեան երկու հարիւրամեակը կը լրանայ այս տարի: Ան ծնած էր Վան, 1772ին, եւ իր ուսումը տացած Պոլիս, Գումկապուի համբաւա – ւոր Մայր դպրատան մէջ: 1798ին պատ կը դառնէ արդէն Ջմիւռնիա, ուր պիտի գործէր ամբողջ չորս տասնամեակ, իր աչքերը փակելու համար 1841ին: Մեծ – դասական վարժարանը, որ 1799ին հիմ – նուեր էր հոն, Վանանդեցիի կը պարտի իր փառքն ու համբաւը, ու չարանը տա – նաւոր ղէմքերուն, որոնք անոր ծոցէն դուրս եկան անցեալ դարու առաջին տաս – նամեակներուն: Նոյն այդ քաղաքին մէջ էր, որ պարակերէնի թարգմանեց մէջ – նադարեան պարսիկ նշանաւոր բանաս – տեղծ Ազդարի բանաստեղծութիւնները փեռնի Ազդար խորագրով եւ յօրինեց դոյզ տասնեակ երկեր:

Վանանդեցի հռչակաւոր գործաւ իր չափածոյ վաստակով: Իր բանաստեղծու – թիւններէն պիտի դիմանար առաւելապէս «Ա. Հայաստան»ը, որ աւելի չատ ծանօթ է իր առաջին տողով — «Մայր Հայաս – տան, երկիր գրախտավայր»:

×

Միրզա Վանանդեցի գլուխ մը կը բա – նար հայրենասիրութեան մէջ: Ժամանա – կը ուժ չունեցաւ այդ գլուխը փակելու: Անով անան սերունդները, որոնք պիտի գային դեր ստանձնել հայ վերածնունդի չարժման մէջ եւ գանգուածներուն տա – նել վերելքի տենդը: Հայրենասիրական երգերով պիտի սնէր հայ յեղափոխու – թիւնը եւ պիտի փորձէր բռնկցնել լայն խաւերը ազատութեան ծարաւով: Երգե – լով լեռ պիտի բարձրանային ու պիտի գոհուէին հայ ֆեհայիները, ու երգերով պիտի պանծացնէր հայ ժողովուրդը իր հերոսները:

Յ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ

վենթրիք, Ինթըլնի Էսքիթ եւ Հերպըրթ Ուիլքոքս, որոնք կը բեմադրեն ընդհան – րապէս պատմական ժապաւէններ: Այդ չրջանին է, որ պատահներու վրայ կ'ե – րեւի, անուն մը, որ պիտի գառնար մի – ջազգային չարժապատկերի ամէնէն նչա – նաւորներէն մէկը, Ալֆրէտ Հիչքոք: Իր սկանակի ժապաւէնները կը կոչուին «Զամ – փէյն», «Անցեալը չի մեռնիր»: Իսկ դե – րակատարներու մէջ ուշագրաւ անուններ պիտի գառնային էլսա Լենչեսթըը եւ մա – նաւանդ Զաբլդ Լոթըն:

Դժբախտաբար, Անգլիա բաւական մի – ջոցներ չունէր՝ օգտուելու համար իր ար – ուեստագէտներու տաղանդէն, որոնք մէ – կիկ–մէկիկ Հոլիվուտ կը մեկնէին, որոչ համբաւի հասնելէ եաք:

ՊԱԼԻԱՆԵԱՆ ԵՐԿԻՐՆԵՐ

Եւրոպական միւս երկիրներու մասին չատ բան չկայ ըսելիք: Զուիցերիա, Պել – ժիա, Հոլանտա, Լեհաստան եւ Չեխո – սլովաքիա տուին կարգ մը յատկանչական ժապաւէններ, բայց առանց կարենալու իրենք գիրենք պարտադրել միջազգային բեմի վրայ:

Պալքանեան երկիրներու մասին ալ կա – րելի է ըսել նոյն բանները: Հայերուն հա – մար կրնայ հետաքրքրական նկատուիլ Ռումանիոյ եւ Թուրքիոյ պարագան: Ռու – մանիոյ մէջ հայտգի Իոն Սահակեան ա – նուն ապահովեց կարգ մը ժողովրդական ժապաւէններով, որոնցմէ յիշենք «կղէո – պատրայի աստղերը»:

Թուրքիոյ մէջ Հայերը մեծ դեր կատա – րեցին չարժապատկերի յառաջդիմութեան մէջ, սակայն արուած ըլլալով, որ եր – կերը կազմակերպուած չէր պետարուես – տական պետնի վրայ, Թրքական չարժա – պատկերը չուտաւ որեւէ գործ, որ կա – րենայ ինքզինք պարտադրել միջազգային չուկաներու վրայ: Ամէնէն յատկանչա – կան ժապաւէնը կը նկատուի «Լեպլեպիճի հոր–հոր աղա»ն, ներչնչուած՝ Զուհա – ճեանի նոյնանուն օփերէթէն:

ԼԱՏԻՆ ԱՄԵՐԻԿԱ

Այս ցամաքամասը, որ մչակութային դետնի վրայ կապուած է Սպանիոյ եւ Փորթուկալի, կը դանուէր Հոլիվուտի ազդեցութեան տակ՝ չարժապատկերի մարզին մէջ: Այնպէս որ, կարելի չէ բե – մադրիչ մը կամ ժապաւէն մը յիշել, որ նորութիւն բերած ըլլայ սինեմայի աշ – խարհին: Ընդհանրապէս, Լատին Ամերի – կայի մէջ պատրաստուած ժապաւէնները առեւտրական բնոյթ ունին եւ քիչ անգամ կը ներչնչուին տեղական հարուստ ֆոլք – լորէն, թէեւ յատկանչական բացառիկ գործեր եղած են:

ՃԱՓՈՆ

Այս երկիրը ծանօթացաւ չարժապատ – կերի արուեստին՝ չնորհիւ Ֆրանսացի արուեստագէտներուն: 1904ին սթիւտիօ մը հաստատուած էր արդէն Թոքիոյ մէջ, որուն յաջորդեցին ուրիչներ: Ճափոնցի բեմադրիչները կը գտնային չարժա – պատկերի վերածելով թատերական կատա – ներ: Բայց արուած ըլլալով, որ կինոջա – կան դերերը կը կատարէին այր դերա – սանները, ժողովուրդը լայն ընդունելու – թիւն գոյց չէր տար տեղական արտադ – րութիւններու հանդէպ: Համաչխարհա – յին Առաջին Պատերազմէն եաքն է, որ սկսան երեւիլ կին դերասանուհիները: Բեմադրիչները սկսան աւելի լաւ գործել արտադրել եւ որոչ համբաւի արժանանալ միջազգային չուկաներու վրայ:

ՀՆԴԿԱՍՏԱՆ

Այս երկրին մէջ, 1913ին գոյութիւն ու – նէր արդէն չարժապատկերի ընկերութիւն մը, որ կը գործէր Պոմպէյի մօտերը: Տե – ղացի բեմադրիչներու կողքին, կը գոր – ծէին նաեւ օտար արուեստագէտները: Պատկերահանուած նիւթերը առնուած էին Հնդկաստանի հարուստ ֆոլքլորէն եւ առասպելներէն: Հնդկական ամէնէն նչա – նաւոր ժապաւէններէն յիշենք՝ «Պուտտա – յի կեանքը», «Վիչնուի կեանքը» եւ «Լու – սաւոր Աչխան»:

ԵԳԻՊՏՈՍ

Այս երկիրը չարժապատկերին ծանօ – թացաւ չնորհիւ Ֆրանսացիի մը՝ Ֆելիքս Մեսգիչ, որ 1897ին, կարգ մը կարճ ժա – պաւէններ ցուցադրելու համար մեկնած էր Գահիրէ: Չարժապատկերի առաջին սրահը բացուեցաւ 1905ին: Պատերազմի վերջաւորութեան, այսինքն 1920ին, այդ սրահներուն թիւը բարձրացած էր 40ի: Անոնք կը պատկանէին Փաթէ եւ Կոմոն Ֆրանսական ընկերութիւններուն: Այն – պէս որ, ցուցադրուած գործերուն չափ – չափիչ մեծամասնութիւնը Ֆրանսական էր:

Եգիպտական առաջին ժապաւէնը լոյս տեսաւ 1926ին՝ Ուատտա Ուրֆիի գեկա – վարութեամբ: 1928ին, Իպրահիմ Լամա կը բեմադրէր «Համբոյր մը անապատին մէջ» սիրային ժապաւէնը: Սթեֆան Ռոս – թիի կը պատրաստ «Լէյլան»՝ դվխաւոր գերակատարութեամբ՝ Ամիզ Ամիրի, որ կրկին բեմ պիտի գար Ահմատ Կալալի «Նեղոսի աղջիկը» գործին մէջ:

Այս քանի մը անուններէն կրնանք հե – տեւցնել, որ եգիպտական չարժապատ – կերը այդ չրջանին կը գոհանար պատկերի վերածելով սիրային – ողբերգական նիւ – թերը, պատչաճելու համար ժողովուրդի պահանջներուն: Այս մարզին մէջ ան կը բախէր օտար արտադրութիւններու բուռն մրցակցութեան, արուած ըլլալով, որ բո – լոր ժապաւէնները ալ համր էին: Յետա – պային, եգիպտական չարժապատկերը օգ – տուելով ձայնէն, պիտի կարենար աւելի ազգային բնոյթ մը տալ իր արտադրու – թիւններուն եւ գանոնք համեմել ժողո – վուրդին սիրած երգերով: Այս ալ ու – րիչ ազէտ մը, որմէ մինչեւ այսօր չէ ձերբազատուած ոչ միայն եգիպտական, այլ ամբողջ արաբական չարժապատկերի արուեստը:

ՀԱՑԱԳՈՐԾ ԿԻՆԸ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ՀՐՋԻԳԸ

Ը.

— Կը մաղթեմ, ու զրեթէ կը յուսամ, որովհետեւ ձեր բարեկամութիւնը միշտ բարեբաստիկ եղած է ինծի:

Աբրայ Լոժիէ բարի ժողովրդապետի կատարեալ տիպարն էր: Ուղիղ հոգի մը եւ բարձր միտք մը ունէր. ոչ թէ արհես – տով, այլ կոչումով կրօնաւոր էր: Էթիէնն ցաւթէվի հօրը դասընկերն ու մտերիմ բա – րեկամ, երէցը տեսած էր անոր զաւկին մեծնալը ու հօրը ներչնչած բովանդակ գուրգուրանքը էթիէնի վրայ տարածած էր հիմա, մանաւանդ անոր համար որ նկարչին մէջ կը դանէր այն ընտիր բնա – ւորութիւններէն մէկը, որոնք բնաւ չեն չեզրը ճամբէն: Հա՞րկ կայ ըսելու թէ էթիէնն ալ նոյնքան գուրգուրանք ունէր աբբային նկատմամբ:

Ժամը ձիշդ տասնըմէկին, երեքն ալ միացած էին ճաշասրահին մէջ: Տիկին Քլա – րիս Տարիէ հարուստ էր, ինչպէս պի – տենք: Ուստի անոր չնորհիւ, աբբային սեղանը եթէ ոչ ճոխ, գէթ առատ էր, ինչ որ գոհացում կը պատճառէր: Էթիէնն մեծ ախորժակով ճաշեց, եւ որովհետեւ այդ օրը միտք չունէր աշխատելու, ճաշէն եաքը գուրս ելաւ:

Էթիէն յաջորդ առաւօտ կանուխ ելաւ, երանգապնակը պատրաստեց, պարտէզ ե – լաւ, հոն տեղաւորուեցաւ ու արագօրէն ուրուագծեց մէկ էթիւտը գլուխին, որ հագիւ արթնցած էր առտուան թափան – ցիկ մշուշին տակ: Ժամը եօթուկէսի ա – ռին, աբբան եկեղեցիէն գարձաւ, պա – տարագն յետոյ: Էթիէնը գործի վրայ գտնելով ըսաւ.

— Կեցցե՛ս: Թէեւ լաւ չեմ հասկնար, բայց կը կարծեմ որ չեմ սխալիր, հա – րայ կը կարծեմ որ չեմ սխալիր, հա – տաատելով թէ լաւ էթիւտ մըն է ատ: Ին – ծի այնպէս կը թուի որ դուն լաւ կը դի – տես ու լաւ կ'արտայայտես դիտածդ:

— Ոչ մէկ գովեստ աւելի փաղա – քիչ չի կրնար ըլլալ:

Աբբայ Լոժիէ գնաց նստաւ չազանակե – նիներուն տակ: Ներսը, Տիկ. Տարիէ առ – նիներուն տակ: Ներսը, Տիկ. Տարիէ առ – անին գործերով կը զբաղէր: Սպասուհին Պրիժիթ, ուսելիք կուտար այն ճաղարնե – րուն եւ հաւերուն, որոնք կը գտնուէին պարտէզին մօտ գտնուղ հաւնոցին մէջ՝ արմկենիներով բաժնուած անկէ: Հաղիւ տասը վայրկեան անցած էր, երբ վանդա – կաղարան գտնգակը հնչեց: Սպասուհին փութաց հեռանալ վառեակներու եւ ճա – գարներու քովէն. աւելը վար գրաւ ու վանդակապուրը վազեց: Սեմին վրայ ծունկի եկած էր ուժասպառ կին մը, որ – գայ մը գրկին մէջ: Պրիժիթ խոկոյն անոր մօտեցաւ:

— Գութ ունեցէք, օգնեցէք լնծի եւ գաւկիս. թոթովեց ժանն, որուն կ'ընկե – րանար գաւակը:

Զափազանց յուզուած եւ խանգազա – ած, Պրիժիթ այրերին մէջքէն բռնելով՝ ուզեց օգնել, որպէս զի ոտքի ելլէ: Ժանն ձիգ մը ըրաւ, ոտքի ելլելու, բայց իր ու – ժերը չթոյլատրեցին, ու քիչ մնաց որ գե – տին իյնար կռնակի վրայ:

— Պարո՛ն ժողովրդապետ, հոս եկէ՛ք, չուտ եկէ՛ք, աղաղակեց սպասուհին:

Այդ կանչին վրայ, Լոժիէ եւ էթիէն խոկոյն ոտքի ելան ու հոն փութացին:

— Ի՞նչ կայ, Պրիժիթ, հարցուց ժողո – վրդապետը:

— Մանկամարդ կին մը, որ օգնութեան կը կարօտի ու նեղացելու վրայ է:

— Մայրի՛կ, ո՞ւր տեղը կը ցաւի, ա – զաղակեց ժօրժ, մօրը դունատ այտերը համբուրելով:

— Այս խեղճ կինը եւ իր գաւակը յոչ – նութենէ կը մեռնին, ըսաւ նկարիչը, ժաննի թեւը բռնելով:

— Թերեւս անօթութենէ ալ, յարեց ժողովրդապետը:

Տիկին Տարիէ ալ այդ բացագանչու – թիւններէն հետաքրքրուած, օդնութեան հասաւ:

— Քլարիս, սիրելի քոյրս, կ'ազաչեմ, չուտով երկու գաւաթ արգանակ բե՛ր սա խեղճ արարածներուն համար: Պօտայլ հին գինի ալ բե՛ր: Մայրը եւ մանուկը ա – նօթութենէ ուժասպառ եղած են: Պրիժիթ անոնց պիտի ապատարկէ բաց օդին մէջ, չափանակենիներուն տակ:

Պրիժիթ հետեւեցաւ Տիկին Տարիէի, տան նստարանի մը վրայ հանդչեցնելէ յետոյ: Էթիէն գնաց, պաղ ջուր բերաւ ու ժաննի քունքերը թրջեց: Տիկին Ֆօրթիէ իր կիսափուխ աչքերը բացաւ ունա – չացածքը պարզուց իր չուրջը, գաւակը փնտռելու համար: Ժօրժ նչմարեց ու ա – նոր կարկառեց թեւերը:

— Տիկին, հանդարտեցէ՛ք, հոգ պիտի տանինք ձեզի, ըսաւ կրօնաւորը::

— Օ՛հ, չնորհակալ եմ... չնորհակալ եմ, թոթովեց ժանն, որուն դէմքը այլեւս պրկուած չէր ու արցունքներ կը հոսէին աչքերէն: Խեղճ փոքրիկը անօթի է:

ԿԶԱՎԻԻ ՏԸ ՄՈՆԹԻՊԱՆ

(Շար.)

Այրի Տիկին Վարդիթեր Այրամճեան, Տէր եւ Տիկին Լեւոն Այրամճեան եւ զաւակները, Տէր եւ Տիկին Ալպէր Այրամճեան եւ զաւակները, Պ. Յարութիւն Աղապէկեան խոր ցաւով կը ծանուցանեն իրենց ամուսնոյն, հօր, մեծ–հօր եւ քեռայրին՝

ԱՆԴՐԱՆԻԿ ԱՅՐԱՄՃԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Նոյ. 30ին, 83 տարեկանին:

Յուղարկաւորութիւնը կը կատարուի Հոգեբարձի (Դեկտ. 6) ժամը 10·30ին Փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցին, ուրկէ մարմինը կը փոխադրուի Պանեէօ–Փարիզիէնի գերեզմանատունը:

Ըստ ողբացեալին վախճին, կը խնդրուի ոչ ծաղիկ, ոչ ծաղկեպսակ ղրկել:

Մահազդ չստացողներէն կը խնդրուի ներկայս իբրեւ այդ նկատել:

ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

Կազ. Խաչի Առնուվիլ–Սարսէլի մասնաճիւղը ցաւակցութիւն կը յայտնէ Տէր եւ Տիկին Բէօսէեանի իրենց մօր՝ ընկերուհի Անոյշ Բէօսէեանի կսկծալի մահուան առթիւ:

ՓՈԽԱՆ ԾԱՂԿԵՊՍԱԿԻ

Տէր եւ Տիկին Հայկ Պայրամեան իրենց խնամիին, ողբացեալ Յակոբ Մարկոսեանի (Պէյրութ) մահուան առթիւ, յիսունական Ֆրանք կը նուիրեն Կապոյտ, Կարմիր Խաչերուն, Ազգաժանամին եւ «Յառաջ»ին: (Մասնակ «Յառաջ»էն):

ԾԱԽՈՒ Է

Ծախու է — բացի աժանոնեբու — փաղիլոն մը, Քոլոմպ, 10 վայրկեան կայարաններէն (3) փաղիլոնի թաղի մէջ, ամրողջութեամբ նորոգուած, անմիջապէս ապատ, հինգ սենեակ, բաղնիք, կեդր. ջեռմութիւն, մեծ կառաժուն, շատ մեծ նկուղ, պարտէզ:

Հեռաձայնել ժամը 12·30էն 13·30, 253–38–83

Ա. Յ. Դ.

ԻՍԻ.— Հ.Յ.Դ. Զաւարեան կոմիտէի ժողովը այս հինգշաբթի, (Դեկտ. 7) ժամը 21ին ընկ. Սերոբեանի բնակարանը, 25 Ալբինի Պուրկէն, Իսի: Կարեւոր օրակարգ::

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Կապոյտ Խաչի Լիոնի մասնաճիւղը յարհակալութեամբ ստացած է պարտատոմսի 200 ֆր. Պր. Ս. Սանճեանէ (Վիլֆրանչ) եւ Պր. Ժանօ Մանիկեանէ 100 ֆր.

ՆՈՒԷՐ

Տիկին Շուշան Քամպարեան 30 ֆր. կը տուրէ Կապոյտ Խաչի Սէն Մօրիսի մասնաճիւղին, փոխան ծաղկեպսակի ընկեր Հայկազ Մանուկեանի մահուան առթիւ, եւ 10 ֆր. «Յառաջ»ի:

Տէր եւ Տիկին Գեւորգեան կը նուիրեն 30 ֆր. Սէն Մօրիսի Կապոյտ Խաչին իրենց ապաքինման առթիւ:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Պոմոնի Ս. Գր. Լուսաւորիչ եկեղեցւոյ հոգաբարձութիւնը շնորհակալութեամբ ստացած է Տիկին Ղազարեանի հոգեհանգստեան առթիւ.— Տէր եւ Տիկին Պէրպէրեան 20, Տիկին Հայկանոյշ Երեմեան 20, Արամ Ասպետեան 50, Պ. Զիւրիւքճիեան 50, Տիկ. Մարգարեան 15, Տիկին Զ. Գալուստեան, Տիկին Ա. Կիրակոսեան, Տիկին Հ. Փաչաճեան 10ական:

(Շար.)

ԿՈՐԱԶՈՒԻ

ՍՏԻՊՈՂԱԿԱՆ

Pharmacie SILVESTRE
46, Rue de Trévise, Paris (9e)
կը փնտռէ.—
Manutentionnaire, de préférence homme, mi-temps ou temps complet
URGENT

ԿԸ ՓՆՏՌՈՒԻ

Բնիկ էլզասահ, Թոզատի չէլեան, Տիկին Կլիմիա Մըսրեան (ծնեալ Մղռեի Մանուկեան) կը փնտռէ իր եղբօր՝ Հաճի Մանուկին զաւակները: Ամենակ 14 տարեկան, Սիլանոյշ 5 տարեկան, կարապետ 4 տարեկան, Գէորգ 3 տարեկան. ասոնք Մալաթիա ուսնուած են: Իրենց մօրը անունը Վարդուհի: Կը փնտռէ մեծ քոյրը եղբան, զաւակները՝ Լեւոնը, 14 տարեկան, Ազատնին 13 տարեկան. ասոնք իրենց քովը մեռած են: Փերուզը 12 տարեկան մնաց Պերաճակի Խանը: 8 տարեկան Մխրանը, 5 տարեկան Գրիգորիկը, այս երկուքը կորսուած են: Իր հօրը անունը Օհաննէս Քէչիչեան:

Իրենց մասին լուր ունեցողներէն կը խնդրուի իմացնել հետեւեալ հասցէին.

G. M. Djnbachian
62, Ave. Sadi Carnot
Valence 26000 (France)

կը խնդրուի արտասահմանի թերթերէն արտատպել:

L'UGAB

Présente
le Mercredi 6 Décembre à 20 h. 45
Une Soirée Musicale
BABADJANIAN
HAROUTIOUNIAN
DJAMBAZIAN
KAZANDJIAN
TJEKNAVORIAN
Manifestation proposée par la QUATRA Association d'Action Artistique Arménienne
Musée GUIMET, 6 Place d'Iéna

ՏՕՆԱԾԱՌ ՄԱՐՄՆԻՅԻ ՄԷՋ

ՊՈԼՍԱՀԱՅԵՐՈՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ
ԿԻՐԱԿԻ 14 ՅՈՒՆՈՒԱՐ ՍՓԼԱՆՏԻՏԻ ՄԷՋ

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Փարիզահայ Տիկնանց Մխիթեան Ողբերու Օգն. Մարմինը շնորհակալութեամբ ստացած է 200 ֆր. Պ. Եղուարդ Մուրատեանէ իր ծնողաց Արտաշէս եւ Ֆրիթիւնէ Մուրատեանի եւ մեծ–մօր՝ Վիքթորիա Սահիանեանի յիշատակին:

×

Փարիզի Ազգաժանամի Վարչութիւնը շնորհակալութեամբ ստացած է հետեւեալ նուէրները.–

Մոնմորանսիի Հանգստեան Տան մէջ կատուցուելիք մատրան է նպաստ.— Տէր և Տիկ. Դանիէլեան (Պա Ռէն նահանգէն) 300 Ֆ. Տէր եւ Տիկին Ա. Սարեան (Միլանօ) 200 Ֆ. Տիկին եւ Օրիորդ Տէր Ներսէսեան 200 Ֆ. Օրիորդ Լուիզ Սերվիչէն 200 Ֆր. Տիկին Քօչունեան 100 Ֆր.:

Տէր եւ Տիկին Յակոբ Սալմասեան ողբ. Տիկին Ազարէկեանի յիշատակին 50 Ֆ.

ՊՊ. Անորէ Մանիսեան, Ժակ Ֆրանկիւլեան, Կարապետ Ազպիկեան, Գալուստ Կիւլպէնկեան Հիմնարկութիւն, Տէր եւ Տիկին Ամէն Տատպազեան, 100 ական Ֆրանք, Տիկին եւ Օրիորդ Տէր Ներսէսեան եւ Օրիորդ Լուիզ Սերվիչէն 20 ական, Յունիա ամուսնաց Դաշտահանդէսի առթիւ: Պ. Էքնեան եւ Տիկին Նուարդ Չալվաճեան 10 ական նոյն առթիւ:

Պ. Թորոս (Փարիզէն) 100 Ֆ. Տիկին Ալինէ Տէրօեան Վարդավառի ոճնին առթիւ 100 Ֆ.

Տէր եւ Տիկին Անդրանիկ Խաչամեան, ողբ. Տիկին Ազատնի Պէկոնեանի մահուան առթիւ 100 Ֆ. Օրիորդ Նիկողոսեան Արփի 30 Ֆ. Տիկին Լուսաբեր Հայրապետեան, Հանգստեան Տան 50 Ֆ.

Պ. Գալուստ Փօլատեան, փոխան ծաղկեպսակի ողբ. Թագուոր Պարթընլեանի մահուան առթիւ 50 Ֆ. Տէր եւ Տիկին Թագուոր Ղազարոսեան ողբ. Տիկրան Սըրմաքէչեանի յիշատակին 30 Ֆ. Պ. Յարութիւն Ժամկոչեան ողբ. Յովհաննէս Սարգիսեանի մահուան առթիւ 50 Ֆ.—:

ՀԱՅԵՐԷՆԻ ԴԱՍԸՆԹԱՑՔ

Վերսկսած են Կապոյտ Խաչի Փարիզի մասնաճիւղի դասընթացքները, որոնք տեղի կ'ունենան Զորեքշաբթի օրերը ժամը 2·30էն սկսեալ:

Մասնաճիւղը ջանք չէ խնայած օժտելու դասարանը հանգստաւէտ պայմաններով:

Ծնողքներէն կը խնդրուի չզլանալ իրենց պարտականութեան մէջ:

IMPRIMERIE SPÉCIALE
DU JOURNAL «HARATCH»
32, RUE DE TRÉVISE — PARIS (9e)

THEATRE DE TERTRE
81, Rue Lepic (Métro Lamarck)

HEUREUSEMENT CE N'EST PAS TOUS LES JOURS DIMANCHE

de
Jean-Jacques VAROUJEAN

Tous les soirs à 20 h. 30 précises
sauf dimanche et lundi

ԾՈՒՇԱՏԵՏՐ

ԿԱՊՈՑՑ ԽԱՉԻ Պուլ. Օտտոյի վարչութիւնը ընդհ. ժողովի կը հրաւիրէ իր բոլոր ընկերուհիները 6 Դեկտ. Զորեքշաբթի կէսօրէ վեր ժամը 15·30ին, սովորական հաւաքատեղին: Կարեւոր օրակարգ:

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

ՀԱՆԳՍՏԵԱՆ ՏՈՒՆԵՐԸ

Նախաձեռնութեամբ Կապոյտ Խաչի Իսիի մասնաճիւղին այցելութիւն մը կազմակերպուած է Մոնմորանսիի եւ Անտիլիի հանգստեան տուները, Դեկտ. 10–ին, կիրակի օր:

Օթոքառը կը մեկնի Լէոն Պլում հրապարակէն, (կառ տ'Իսի) ժամը 13·30ին:

Արձանագրուիլ Խաչուհիներուն մօտ:

Ծախքերու մասնակցութիւն 10 ֆր.

ՀՐԱՒԻՐ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻ

Ֆրանսահայ Գրողներու Ընկերակցութեան վարչութիւնը ընդհ. ժողովի կը հրաւիրէ իր բոլոր անդամ ղրողները եւ անդամագրուիլ փափաքող ղրողները, 11 Դեկտ. Երկուշաբթի երեկոյ ժամը 20ին «Ռէժան» սրճարանի վերնայարկը (Մեթրօ Քաւէ), Փարիզ:

Օրակարգ.— Բարոյական եւ նիւթական հաշուետուութիւն եւ նոր վարչութեան ընտրութիւն:

Ներկաներուն թիւը մեծամասնութիւն կը համարուի:

ԳՈՅԱՄԱՐՏ ՕՐԱՑՈՅՑ

1973

Մօտ աւելէն լոյս կը տեսնէ 1973ի Գոյամարտ Օրացոյցը:
Գունաւոր կողք, 12 էջեր պատմական, աղգային ու այժմէական նիւթերով:
Խնամուած պատրաստութիւն

ՀՄՐԱՆ ԱՐՇԱԿՈՒՐԴ

Ծնունդի եւ Ամանորի առթիւ կազմակերպուած է սովորական ճամբորդութիւնը Աւստրիա, Ս. Եոհան: Մեկնում Դեկտեմբեր 23, կառ տը Լ'Էսթէն, վերադարձ Յունուար 3ին:

Ս. Եոհան կը գտնուի Սալցպուրկի չըրջանը, պատսպարուած հովերէն, մշուշէն: Բնակութիւն կոլտըները Հիրշ պան–դոկը, հանգստաւէտ սենեակները, տաք եւ պաղ ջուր, հեռաճայն, կեդրոնական ջեռուցում, խնամուած ճաշ:

Սահմանափակ տեղեր:

Մասնակցութիւն 545 ֆր.
կանխավճար 95 ֆր., մնացեալը Դեկտեմբեր 8էն առաջ:

RELATIONS TOURISTIQUES EDUCATIVES
12 Allée Leonide — Le Perreux
Tél. 324-14-96
Association sans but lucratif, régie par la loi du 1-7-1901

Լ.Տ. ՃԷՋԻՐԵԱՆ
Ընդհ. Գատուիրակ

ԸՆԹԱՑԻԿ ԱԶԴԵՐՈՒ ՍԱԿԱԳԻՆ

ՄԻԿ ԱՆԳԱՄՈՒԱՆ ՀԱՄԱՐ

ՄԱՀԱԶԴ	70 Ֆ.	միջնեւ 1/4 սիւնակ
ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ	30 Ֆ.	միջնեւ 1/8 սիւնակ
ՑԱԽԱԿՑՈՒԹԻՒՆ	15 Ֆ.	» » »
ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ	30 Ֆ.	» » »
ՀԱՐՍԱՆԻՔ, ՆՇԱՆՏՈՒՔ	30 Ֆ.	» » »
ԾՆՈՒՆԴ	30 Ֆ.	» » »
«ԿԸ ՓՆՏՌՈՒԻ»	15 Ֆ.	» » »
ԾԱԽՈՒ Է	25 Ֆ.	» » »

Այս գիները մէկ անգամ հրատարակելի եւ ձշաճակուած ծաւալով ազդերու համար են, չորրորդ էջը:

Կանխիկ վճարումը պարտաւորիչ է:

Առեւտրական կամ այլ ազդերու մասնաւոր պայմաններուն համար դիմել վարչութեան

ԵՐԵՔՇԱԲԹԻ
5
ԴԵԿՏԵՄԲԵՐ
MARDI
5 DECEMBRE
1972

Le Numéro 0,70 F.

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ
ՀԻՄՆԱԴԻՐ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

HARATCH

Le Seul Quotidien Arménien en Europe Occidentale
Directrice : Arpik Missakian
32, rue de Trévise Paris 9

— Tél. : 770-86-60 —
C. C. P. Paris 15069-82

Fondé en 1922
R. C. Seine 57 A 2731

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Հոկտեմբերեան յեղափոխութենէն անմիջապէս եաք, 1917 Դեկտեմբերին (5էն 17) Մինսկի մէջ կը դումարուի բելոռուսական ընդհանուր համաղումար՝ 1·872 պատգամաւորներու մասնակցութեամբ: Անոնք կը ներկայացնէին բելոռուս քաղաքական կուսակցութիւնները: Համագումարին կ'որոշուի Բելոռուս Հանրապետութեան հաստատումը՝ ազգային ինքնորոշման սկզբունքով: Հոն կ'ընտրուի Ռատան (Ազգային Խորհուրդը) 71 անդամներով: 1918 Մարտ 25ին Ռատան, Վիլնայի Ռատայի մասնակցութեամբ, Բելոռուսիոյ ազգային Հանրապետութեան անկախութիւնը կը հռչակէ՝ բելոռուս ժողովուրդի ցեղապրական հողամասին վրայ: 12 Պետութիւններ տէ ֆաքթօ կը ճանչնան զայն:

Ո· Ռուսիա նկատի չառնելո բելոռուս ժողովուրդին կամքը, և Կարմիր Բանակը կը յարձակի բելոռուս նորաստեղծ Հանրապետութեան վրայ, որու տակաւ բանակը՝ հրամանատարութեամբ Ռադկեվիչի եւ ժդանովիչի ի վիճակի չէր լուծ ընդդիմութիւն ցոյց տալու: Ռուսերը Մինսկը կը գրաւեն 1918 Դեկտեմբեր 10ին եւ նոյն ամսոյն 26ին կը հիմնեն Բելոռուսիոյ Համայնավար կուսակցութիւնը Սմոլենսկի մէջ:

1919 Յունուար 1ին համայնավարները «Բելոռուս խորհրդային սոցիալիստական Հանրապետութիւնը» կը հիմնեն:

Այսուհանդերձ, խորհրդային ղեկավարութիւնները տեղի կ'ունենան: Կարեւորագոյններէն արձանագրենք 1920 Նոյեմբերի այսպէս կոչուած Սլուցկի ապստամբութիւնը եւ բելոռուս զօրավար Բիւլակ–Բիւլաչովիչի ըմբոստութիւնը: Առաջին ապստամբութեան ընթացքին 107 պատգամաւորներու մասնակցութեամբ կը գումարուի Սլուցկի – նայի համագումարը, ուր ժողովուրդին ներկայացուցիչները «խստիւ կը բողոքեն իրենց հայրենիքի գրաւման դէմ՝ ինքնակոչ համայնավար իշխանութիւններու կողմէ»:

Ժողնատանչ աշխատանքի ընթացքում, երբ օրը կիսում էր, երբ մարդկանց երակներում արեան փոխարէն թուում էր թէ հոսում էր յոգնութեան թոյնը, հեռու տեսնող այս կամ այն կալանաւորը մի լոպեով դուրս էր գալիս ծածկի տակից այնպէս, որ պահակները չնկատէին, նայում ճամբարից սառն սողացող գաչաչին ճանապարհին, սուտկելու համար, թէ ճաշը գալի՞ս է: Երբ հեռում նկատում էր շարժուն մի կէտ, ականջից ականջ ու սրտից սիրտ, չշուկով, անցնում էր համբաւը, — գալի՞ս է, ճաշը գալի՞ս է···

Դաչայի մեծ ճամբով առաջ էր շարժւում կեանքից ակնյայտ կերպով ճանճ – րացած, յոգնած մի երիվար, քաշ տա – լով միջնադարեան մի սայլակ, սայլակի վրայ՝ մի մեծ տակառ: Ձին վարում է խոհարարի օգնականը, իսկ կողքից քայլում է ձիուն նստած պահակը: Երբ ճաշը տեղ է հասնում, բրիգադիրի հրահանգով ընդհատւում է աշխատանքը, կալանաւորները իրենց տոպրակներից դուրս են քաշում Աչոտ դայու թրծած ամանները, ով հերոս է մի կտոր հաց պահել է պեռ, եւ հերթի են կանգնում:

ԳՈՒՐԳԻՆ ՄԱՀԱՐԻ

(22 – Շար·)

ԿԱՐԴԱՑԷՔ
ՏԱՐԱԾԵՑԷՔ
ՅԱՌԱՋԸ

Ծաղկած Փշալարեր

✳

(ՎԻՊԵՐԳ)

Սակայն զործարար բակի արհեստա – նոցների զաչա զուրս զալը չէր բաւ – ձրացնում այն ազմուկն ու աղաղակը, ինչ բարձրացնում էր, երբ զրասենեակի պաշտօնեաներին էին զաչան հանում: Նրանք հաղնւում էին քիչ թէ շատ քաղաքավարի, ունէին դէմքի աւելի հանդիստ արտայայտութիւն, չարքի էին կանգնում պատրաստակամ, վայելուչ, մինչեւ անզամ հանդիսաւոր, ինչպէս ժամերգու – թիւն լսելիս:

— Եկան Լամոնոսովի թոռները···

— Երեւի զրիչ ու մատիտ են վերցրել հետները···

— Գրիչ ու մատիտ չի անցնի, տալան կը տան ձեռները···

— Ինտելիգե՛նցիա···

Աւելի խոհեմները մտածում էին, որ ուշ թէ շուտ՝ միեւնոյն է, նրանք էլի կ'անցնեն իրենց պարտականութիւնների կատարմանը եւ իրենք տախտակած պիտի լինեն նորից նրանց դիմել զանազան խընդիրներով· այդպիսիք զղաստանում էին, լուռ, անզա՛մ սաստում, որ ծաղրողները լեզուները կարճ պահեն:

Դաչային աշխատանքներից աւելի ձեռնտու աշխատանք էր համարւում այսպէս կոչուած «տան»ներում աշխատելը: Կային թուով երեք տաններ, ուր կենտրոնացուած էր հայցահատիկը խոտով ծածկուած ծածքերի տակ: Կալանաւորներն այնտեղ զրաղւում էին հայցահատիկների տասնեակ երկար, հսկայական, չեղչերը թիակներով էրանելով, որ չայրուեն, ինչպէս նաեւ սերմացուումով: Կալանաւորները ձեռքով աշխատեցնում էին մի քանի սերմատիչներ, ամէն մեքենայի վրայ աշխատում էին մի քանի կալանաւորներ, ուրիշներ զուռած ցորենը լցնում էին «չափերի» մէջ եւ երկու հոգով տանում մօտակայ ամբարը· (բեռը հրում է, — պնա···):

Տաններում աշխատելը լաւ էր նրանով, որ անձրեւաւ օրերին կալանաւորները չէին աշխատում անձրեւի տակ, ինչպէս զաչայում· նրանք պաշտպանուած էին անձրեւից· ոչ միայն այդ տաններում աշխատողները ճաշի միժամեայ հանդիստը վայելում էին ոչ թէ արեւի կամ անձրեւի տակ, թաց հողի վրայ, այլ ծածկերի տակ կիսուած խոտերի մէջ:

ԺՈՒՈՆՏԻ ԱՌԵՒԱՆԳՈՒՄԸ

(Բ· եւ վերջին մաս)

Սեպտեմբեր 8ին, ոստիկանները կը ձերբակալեն Փոսթրովիոքի անունով մէկը, որ կը զբաղի զրականութեամբ: Մեզի ծանօթ բանաստեղծ Ափոլինէրն է այս կասկածելին: Ձերբակալութեան պատճառը հետեւեալն է: Օգոստոս 29ին, Ափոլինէրի քարտուղարը «Փարի ժուռնալ» թերթին նամակով մը կը խոստովանէր, որ ինք յաճախ այցելութիւններ կուտար Լուվրի թանգարանը եւ հոնկէ կը զողնար փխրնիկեան արձանիկներ· բայց տեսնելով, որ ուրիշներ ալ նոյն զործը կ'ընէին, որոշած էր զանոնք վերադարձնել պետական թանգարանին: Ուրիշ նամակով մըն ալ, զրուած Նիս քաղաքէն, քարտուղարը կը յայտնէր, որ 150·000 ոսկի Ֆրանքի փոխարէն կրնար ժոքոնտը յանձնել Լուվրի տնօրէնին:

Ափոլինէր քանի մը օր արգելափակուեցաւ: Ոստիկանութիւնը խուզարկեց անոր բնակարանը, բայց բան մը չգտաւ: Պէտք է ըսել, որ Ափոլինէր իր քարտուղարէն դնած էր փխրնիկեան արձանիկներէն մէկը· բայց լմնանալով Լուվրի զողութիւնը, զայն պահած էր ապահով տեղ մը: Պահած էր նաեւ երկու յունական զիմակները, զորս իրեն յանձնած էր իր բարեկամներէն՝ անծանօթ նկարիչ մը:

Եւ ահա առտու մը, հարցաքննիչ զաստաւորի զրասենեակին մէջ դէմ յանդիմանի կը զտնուի այն բարեկամ նկարիչին հետ, որ նոյնպէս ձերբակալուած էր իրեւ կասկածելի: Այդ երիտասարդ նկարիչը կը կոչուէր Փապլօ Փիքասօ: Հարցաքննութեան ընթացքին, երկու բարեկամները՝ բանաստեղծն ու նկարիչը կը սկսին բարձրաձայն լալ, մանուկներու պէս: Փիքասօ ազատ կ'արձակուի, Ափոլինէրը տասը օր կը մնայ բանտ:

Եւ հռչակաւոր նկարը կը մնայ անգտանելի: Կ'անցնին ամիսներ ու տարիներ: 1913 Դեկտեմբեր 11ին, այսինքն՝ զողութենէն 28 ամիս եաք, Իտալիոյ զեղեցիկ արուեստներու նախարարը, որ կը մասնակցէր միջազգային ժողովին, կը կանչուի հեռաձայնի խուցը: Ընկալուչը կ'առնէ ձեռքը եւ կը լսէ հետեւեալը·

— Ես Պր· Ռիչին եմ, Գեղարուեստներու նախարարութեան տնօրէնը· ձեզի կը հեռաձայնեմ Ֆլորանսէն: Պր· նախարար, ժոքոնտը գտանք:

Պր· Ռիչիի ձայնը կը զողար յուզմունքէն: Նախարարը կը պահէ իր թերահաւատութիւնը: Անմիջապէս մտանպէտներու խումբ մը կը ժամանէ Ֆլորանս, կը քննէ պատահարը· կը ստուգէ զայն: Այո՛, ժոքոնտին նկարը գտնուած է: Բայց ի՞նչպէս Լուվրի զոհարը հասած է Ֆլորանս: 1913 Նոյ·ի վերջերուն Ֆլորանսի կալբրիներէն մէկը որոշած էր ցուցադրութիւնը ընել կարգ մը արուեստի զործերու, որոնք զեռ անծանօթ կը մնային հանրութեան: 1913 Դեկտեմբեր 2ին, կալբրիի տնօրէնը նամակ մը կը ստանայ Փարիզէն: Նամակագիրը անծանօթ մըն է: Ան կ'առաջարկէ, որ զրամարի մը վախճրէն, Իտալիոյ վերադարձնել այն գլուխ զործոցը, որ Նափոլէոն գողցած էր Իտալիայէն:

Նախ ըսենք, որ ժոքոնտը գնուած էր 4·000 հնչուն ոսկիի՝ Ֆլորանսու Ա· թագաւորին կողմէ եւ չորս հարիւր տարի – ներէ ի վեր կը գտնուէր Ֆլորանսի թանգարաններուն մէջ: Կալբրիի տնօրէնը նախ հաւատք չընծայեր այս նամակին պարունակութեան: Բանի մը օր եաք կը ստանայ ուրիչ նամակ մը: Անծանօթը գինք կը հրաւիրէ Փարիզ, որպէսզի զայ եւ աչքովը տեսնէ նկարը եւ ինք որոշէ գինը:

Կալբրիին տնօրէնը, Պր· ձերի չի պատասխաներ այս նամակին: Շաբաթ մը չանցած, երբ Պր· ձերի նստած էր իր զրասենեակին առջեւ, կալբրիին դուռը կը բացուի եւ ներս կը մտնէ երեսուն տարեկանի մօտ, կարճահասակ եւ պեխաւոր մարդ մը: Անծանօթը աչք մը կը պտըտցնէ իր չուրջը եւ տեսնելով, որ ինք ու տնօրէնը առանձին են, կ'ըսէ·

— Անունս Լէոնար է··· Ձեզի կը բե-

քեմ ժոքոնաը: Հետս եկէք պանդոկ: Միակ պայմանս հետեւեալն է. երդում ըրէք, որ ժոքոնաը պիտի մնայ իր, այս-ինքն՝ ի'մ հայրենիքիս մէջ եւ երբեք պիտի չվերադառնայ Լուվրի թանգարանը:

Յաջորդ օրը, Պր. ճերի եւ Ֆլորանոի քանդարանին տնօրէնը կը ժամանեն «Քրիփփլ» պանդոկը: Էմնար իրենց կը սպասէր սենեակին մէջ:

— Իտալական կառավարութիւնը ձեզի պէտք եղած իրաւասութիւնները տուա՞ծ է, որպէսզի կարենաք ինծի հետ բանակցիլ:

— Այդ կողմէն կրնաք վստահ ըլլալ, — կ'ըսէ թանդարանին տնօրէնը:

Այն ատեն, Էմնար մահճակալին տակէն կը քաշէ ճամբորդական պայուսակ մը եւ մէջէն կը հանէ ոլորուած պատառ մը: Պատառը կը բանան... Այո՛, ժոքոնին նկարն է: Երկու այցելուները իրենց յուզումէն կը սկսին դողալ: Պր. ճերի պատառը կը սեղմէ կուրծքին վրայ ու կ'ըսէ.

— Պէտք է զայն թանգարանի մտանելու ցոյց տանք: Եթէ ոստուհամը ձիշդ ըլլայ, այն ատեն կը ոստնաս պահանջդ դումարէ:

Հազիւ երկու այցելուները հասած էին պանդոկի մուտքին, երբ Ֆլորանոի ոստիկանութիւնը կը խուժէ Էմնարի սենեկին ներս, զայն կը ձերբակալէ եւ կը տանի ընդհանուր ոստիկանապետին դրասենեակը: Հոն, Էմնար կ'ընէ հետեւեալ խոստովանութիւնը.

«Իմ քոյր անունս Վինչենզօ Փերուճիա է, ծնած եմ Տուրինծօ, եւ երկու օր առաջ ժամանեցի Փարիզէն, ուր մեկնած էի վեց տարի առաջ: Շինարարութեան յանձնառուի մը հով գործ գտայ. 1911ին, մեր խումբը ղրկուեցաւ Լուվրի թանգարանը, կարգ մը նորոգութիւններ ընելու համար: Սրահներէն անցնելու ատեն նկատեցի, որ պատերուն վրայ կային ինտալացի վարպետներուն գլուխ գործոցները, եւ որոշեցի գանոնք վերադարձնել իմ հայրենիքիս: Նորոգութիւնները վերջացան, բայց ես բարեկամացած էի հոն աշխատող գործաւորներուն եւ պահակներուն հետ, այնպէս որ կրնայի ազատօրէն մտնել ու ելլել: Առտու մը, գացի հոն, ինչ մը խօսեցայ գործաւորներուն հետ, ու ներս մտայ: Քառակուսի Սրահը ամայի էր: Ժոքոնտը ինծի կը ժպտէր ծանօթ կնոջ մը պէս: Անմիջապէս զայն վար առի, պատառը հանեցի շրջանակէն, փաթթեցի, պահեցի ծոցիս մէջ ու դուրս եկայ առանց նշմարուելու: Երկու տարի զայն պահեցի սենեակիս մէջ: Երբեմն կը բանայի պատառը, վայելելու համար Մոնա Լիզայի անմահ ժպիտը: Անգամ մը միայն վախցայ, երբ Լուվրի նկարներու բաժնին տնօրէնը եկաւ զիս տեսնելու: Ժոքոնտը կը գտնուէր պայուսակի մը մէջ, մահճակալիս տակ: Հիմա կը կատարեմ խոստումս, Լէոնարտօ տա Վինչիի գլուխ գործոցը կը վերադարձնեմ հայրենիքիս...»:

Աշխարհի բոլոր թերթերը կ'աւետեն զղայցունց լուրը: Ֆրանսացիներուն համար ծնունդի լաւագոյն նուէրն է: Մինչեւ 30 Դեկտեմբեր, ժոքոնտը թագուհիի մը պէս կը ընդունի Իտալիոյ մեծ քաղաքները, ոստիկաններու բանակով մը շրջապատուած:

Յաջորդ 4ին Փարիզի ժողովուրդը կը խուժէ Քառակուսի Սրահէն ներս՝ տեսնելու համար իր վերադարձած սիրուհին:

Գալով Վինչենզօ Փերուճիայի, ան դատարան կը ներկայանայ Ֆլորանոի մէջ 1914 Յունիս 4ին: Այդ ժամանակի օրէնքներուն համաձայն, իտալացի մը պէտք էր դատուէր իր հայրենիքին մէջ: Պաշտպան փաստաբանը դիտել կուտայ, որ Վինչենզօ մեծ ոճիր մը չէ գործած: Նախ ան առիթ տուած է հաղարաւոր Իտալացիներու՝ որպէսզի վայելեն Մոնա Լիզայի ժպիտը, ցոյց տուած է Ֆրանսական իշխանութիւններուն, որ իրենց թանգարանները անձեռնմխելի չեն. յետոյ՝ երկու տարի զուրկ պահած է զայն: Դատարանը խիստ չի դատուիր: Վինչենզօ կը դատապարտուի մէկ տարի եւ 15 օր բանտարկութեան: Ազատ արձակուելէ ետք, կը հաստատուի Ֆրանսայի հարաւային գիւղերէն մէկուն մէջ, ուր կը մեռնի 1947ին:

ՆՈՒՊԱՐ ՋԱՐԽՈՒԹԵԱՆ

Ա.ԿԱԴ. ՍԱԽԱՐՈՎԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑԸ

—o—

ՆՄԲ.— Փարիզի «Ռոսկայա Մըսլ» շաբաթաթերթը (Նոյեմբեր 23) հետեւեալ տեղեկութիւնները հրապարակած է Ա-կադ. Սախարովի եւ արեւմտեան թղթակիցներու հետ ունեցած հարցազրոյցին մասին: Յիշեցնենք, որ Սախարով Մարդկային Իրաւանց Պաշտպան Կոմիտէի նախագահն է Խորհ. Միութեան մէջ, որ, սակայն, կառավարութեան կողմէ ճանչցուած չէ:

Ջրածին ռումբի հայր Անդրէյ Դմիտրիեւիչ Սախարով կը պատկանի Օրբէնհէյմերներու եւ Թելլերներու հռչակաւոր փաղանգին: Զորս տարի առաջ ան ղրկեց «Յառաջդիմութիւն, համագործակցութիւն եւ մարդի ազատութիւն» խորագիրը կրող մանիֆեստը, որով ան խոհոյն զարձաւ ռուս ապառաժոհ չարժումի ղեկավարը՝ Սոլժենիցինի հետ: Գիտական մտանդէսի իր մեծ համբաւին պատճառով Սախարով չենթարկուեցաւ այլ կերպ մտածողներու ընդհանուր ճակատագրին (հոգեբուժարանի կամ ճամբարի մէջ արգելափակում), եւ թէեւ ան կորնցուց իր բարձր դիրքը, բայց դեռ կը յաջողի Լեբեռեւի անունը կրող հիմնարկութիւնը՝ մտանկցելու համար քուանտային մեքենաբանութեան եւ տարրական մասնիկներու սեմինարներուն:

Սախարով միշտ մերժած է հանդիպում ունենալ օտար քաղաքացիներու հետ: Բայց վերջերս ան ընդունեցաւ հանդիպիլ արեւմտեան քանի մը թղթակիցներու: Անոր առաջին հարցազրոյցը տեղի ունեցաւ անցեալ չաբաթ՝ «Նիւզուիք» պարբերականի Մոսկուայի թղթակից Ալեքսեյպանկի հետ:

Ահա թէ ի՛նչ կը պատմէ թղթակիցը. «Հանդիպում ունենալ Սախարովի հետ, ըսել է լսնալ տխուր աչքերով այդ համակրելի մարդուն համայքին տակ: Ան բարձրահասակ է՝ քիչ մը կոր, մազերը ալեխառն են, խօսակցութիւնը մեղմ է, որ յաճախ կ'ընդհատէ՝ մտածելով: Այդ օր ան նոր էր վերադարձեր համեստ ձեւով կահաւորուած երկսենեականի իր բնակարանը՝ Մոսկուա, երկար սպասելէ ետք այն դատարանի չէնքին առջեւ, ուր տեղի էր ունեցած հակախորհրդային դրժանէութեան մէջ ամբաստանուած ասպրանտ Լիւպարսկիի դատաւարութիւնը:

«Պուռ... խակապէս չատ ցուրտ էր հոն՝ դատարանին առջեւ, ըսաւ Սախարով չըփելով իր սառած ձեռքերը: Հոն մենք սպասեցինք ինը ժամ եւ մեղի ներս չթողուցին մտնել»: Սախարով թէյ տալըսպրեց իր հնոջ Էլենայի եւ մեղի համար, ապա նստեցաւ թուղթերով ծանրաբեռն դրասեղանին առջեւ ըրուած բազկաթոռին վրայ:

— Այսօրուան դատավարութիւնը սարսափելի էր եւ խայտառակ, ըսաւ Սախարով յուսալքուած: Դատարանը Լիւպարսկին դատապարտեց հինգ տարուան բանտարկութեան: Եւ ի՛նչ բանի համար: Անոր համար, որ ան պայքարած է ղրօքննութեան դէմ»:

Ան խօսակցութիւնը դարձուցի իրեն վերաբերող խնդիրներուն չուրջ: Տակաւին չորս տարի առաջ Սախարով կ'ապրէր Հեռաւոր Ակադէմ քաղաքի բարձր մտանդիսութեան դաղանի հետազօտական հիմնարկութիւնը: Բայց իր աշխատանքէն եւ աշխատակիցներէն կարուեցաւ, երբ պաշտօնապէս չհորհարկուեցաւ Արդեօք ատիկա ծանր զոհողութիւն մը չէ՞ր անոր համար:

— Ընդհանուր առմամբ ո՛չ, պատասխանեց ան: Երբ ամբողջ 20 տարի կ'աշխատէի պետական դաղանի նախագիծերու վրայ, յարաբերութիւն ունէի միայն մտանդէականերու հետ... Ատոնք իսկական բարեկամներ չէին: Իսկ այժմ ես կ'ապրիմ իմ սկզբունքներուս համար, արդէն ունիմ բազմաթիւ հաւատարիմ եւ ջերմ բարեկամներ ոչ թէ առանձնաշնորհեալներու, այլ հասարակ մարդոց մէջ»:

Իշխանութիւնները իր անունին կցած են «ժողովուրդի թշնամի» պիտակը. ասոր համար ան մտահոգ չէ. «Ես կը շարունակեմ գործս, պատասխանեց Սախարով, եւ ոչ ոք դիս կ'անհանդստացնէ, բացի Պետական Անվտանգութեան կոմիտէն, որ հսկողութեան տակ առած է դիս: Ես մտահոգ եմ միայն այն պատճառով, որ գործունէութեանս հետեւանքով ազդականներս կրնան նեղութիւններու ենթարկուիլ»:

Սենեակ մտաւ 22 տարեկան Դանիան (Էլենա Սախարովնայի աղջիկը՝ առաջին ամուսնութենէն): Ան ըսաւ, որ երկու չաբաթ առաջ հեռացուցած են դինք համալսարանէն:

Ես հարցուցի Սախարովին, թէ արդեօք կը դղջա՞յ, որ հիմնական դեր ունեցած է խորհրդային ջրածին ռումբի ստեղծումին մէջ:

Ան դլխու չարժումով «ոչ» ըսաւ: «Սրեւմուտքի մէջ մտանք կը կարծեն, թէ ես սկսայ բողոքել անարդարութեան դէմ, որպէսզի քաւեմ այդ ռումբը ստեղծած ըլլալու մեղքս: Այդպէս չէ: Բարոյական դիտակցութեան հասայ աստիճանաբար յիւնականի թուականներուն, եւ կարծեմ անկիւնադարձը եղաւ այն բողոքի նամակը, որ ուղարկուած է 1958ին՝ հիւլէական դէնքի մեր փորձերուն դէմ, որ կրկնուեցաւ 1961ին ալ: Մինչեւ 1964 Նիկիտա Սերդեեւիչ Խրուշչեւ աշխատեցաւ, որ լռեմ եւ հրաժանդեց վարկաբեկիչ

նկատումներ դնել դէմս: Խրուշչեւ ըսաւ. «Սախարով դէմ է հիւլէական դէնքերու փորձերուն: Ան քիթը կը խոթէ քաղաքականութեան մէջ, պէտք է դաս տալ ատոր»: Սախարով ցոյց տալով իր մատնիֆեստոն տեւրակը, ըսաւ. «Երբ դրեցի այս դրքոյկը, քիչ մը խէդալիստ էի: Բայց այժմ հայեացքներս փոխուած են: Այլեւս ինքզինքս ընկերվարական չեմ անուաներ, այլեւս մարքսեան – լենինեան կամ համայնավար չեմ: Ես ինքզինքս պիտի նկատէի ազատական: Վերջին չորս տարիներու ընթացքին ես այն եզրակացութեան եկայ, որ ընկերվարութիւնը Ռուսիոյ մէջ ծանր յուսախարութիւն պատեղծեց: Խորհրդային հասարակութեան դլխաւոր կողմերը բնաւ չեն մեր հասարակարգի ինչ–որ առաւելութիւններէն, անոնք այլ հասարակութեան բնական յատկանիշներն են: Կեանքի այլ դլխաւոր կողմերը կարելի է դանել դրամատիրական հասարակարգին մէջ եւս, ուստի ես պաշտպանած եմ եւ կը պաշտպանեմ երկու հասարակարգերու մերձեցման դաղափարը:

Հարցազրոյցը չարունակուեցաւ խոհանոցին մէջ: Ընթրիքը բաղկացած էր տապկած ձուկէ, պանիրէ եւ հացէ:

Ի՛նչ ձեւի հասարակակարգ կ'ուզէր տեսնել ան Ռուսիոյ մէջ:

Ես կ'ուզէի հոն տեսնել աւելի մարդասիրութիւն, աւելի ազատութիւն, կ'ուզէի ունենալ իրաւունք կարդալու եւ դրելու այն, ինչ որ կը ցանկամ»:

Ան յուզուեցաւ, երբ սկսաւ խօսիլ Լենինդրադի հոգեբուժարանի մէջ արգելափակուած երկու ազատախոհներու մասին՝ արուեստագէտ Վիկտոր Ֆայնբերկ եւ ճարտարագէտ Վլադիմիր Բորիսով: «Ասոնք այժմ, բողոքի համար կամաւոր ծամ կը պահեն եւ մահուան եզրին կը դանուին: Ֆայնբերկ – Բորիսովի հարցը ամէնէն սարսափելին է այն խնդիրներէն, որոնցմով մենք կը զբաղինք ներկայիս»:

Սախարով ըսաւ, որ Ռուսիոյ մէջ բողոքի չարժումը դեռ երբեք այսպիսի ծանր վիճակի չէր մատնուած: «Նկատելի է, որ կացութիւնը վատթարացաւ Նիքսընի այցելութենէն ետք, իշխանութիւնները բոլորովին լրացած են: Անոնք դիտեն, որ չնորհիւ լարուածութեան թուլացումին, այժմ կրնան անտեսել արեւմուտքի հանրային կարծիքը»:

Սախարով ընդգծեց, թէ ինք բնաւորութեամբ լաւատես է, բայց ան համաձայն է իր հնոջ այն կարծիքին թէ իրենց պայքարը անօդուտ եւ անիմաստ է: Ոչ մէկ բան կը փոխուի: Եթէ այդպէս է, ինչո՞ւ չարունակել պայքարը:

«Որովհետեւ, պատասխանեց Սախարով, մեղի համար ասիկա ոչ թէ քաղաքական, այլ բարոյական պայքար է: Այո՛, պէտք է հաւատարիմ ըլլանք մենք մեղի հանդէպ»:

«ՅԱՌԱՋ»Ի ԹԵՐԹՕՆԸ (52)

ՀԱՅԱԳՈՐԾ ԿԻՆԸ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ՀՐՋԻԳԸ

Թ.

— Տիկին ապահով եղէք որ Պ. Լապրուի պարտական եղած դումարները ամբողջովին պիտի վճարուին այն ընկերութիւն-ներուն կողմէ, որոնք ապահովագրած էին ողբացեալ գործատիրոջ գործարանը եւ կազմածները: Ամուր ընկերութիւններ են մար մը պիտի հայթայթեն: Ուրեմն, կը կրկնեմ, ամէնուն պիտի վճարուի, ու ձեր եղբայրը ոչ մէկուն վնասած պիտի չըլլայ:

— Ապահովագրական ընկերութիւններու լուր տրուա՞ծ է հրդեհի մասին:

— Գրած նամակներուս չնորհիւ, այս առաւ ընկերութեանց քննիչները հոս եկան ու տեղեկագիրը պատրաստեցին:

— Ուրեմն ամէն ինչ կորսուած է, յարեց տիկին Պերթէն հառաչագին: Եղբօրս իրիս բան մը պիտի չժառանգէ:

— Միայն պիտի սիրանայ այն դեռնէն, որուն վրայ կառուցուած էին գործարանին չէնքերը:

— Այդ դեռինը մեծ արժէք մը չունի առանց չէնքին, ու դժուարաւ պիտի ծախուի: Բարեբախտաբար, Լիւսիէն ինձմէ պիտի չբաժնուի ընաւ: Իմ ունեցած քիչ մը դոյքերս անոր պիտի մնան մահէս յետոյ: Գէթ իր ապրուստը ապահովուած է:

Տիկին Պերթէն բանեց արկղակալին ձեռքերը ու սեղմեց զանոնք, ըսելով.

— Սրտանց չնորհակալ եմ այն դրութիւնին եւ անձնուիրութեան համար, զորս ցոյց կուտաք հանդուցեալին նկատմամբ:

Այդ օրը, մէջօրեայքին, ամէն կողմէ կը հասնէին, յուղարկաւորութեան ներկայ դանուելու համար...: Բարեկամներ, յաճախորդներ, հայթայթիչներ, գործաւորներ, տեղացիներ ու շրջականերէն անձեր եկած էին, մեծարանք ընծայելու համար իրենց ծանօթ այդ բարի, սիրուած ու յարդուած մարդուն: Մարմինը եկեղեցի ու գերեզմանատուն առաջնորդուեցաւ բոլոր ներկաներու լինքնամփոփումին ու տխրութեան մէջ:

Ցետոյ տիկին Պերթէն փարիզ դնաց արկղակալին հետ: Հոն երկուքը միասին գացին հարցաքննիչ դատաւորին դրասենեակը: Դատաւորը խակոյն ընդունեցաւ զանոնք:

— Տիկին, նախ պէտք է ձեզի խմացնեմ թէ ձեզ սուզի մատնող ոստկալի ոճիրը պիտի պատժուի: Կը յուսամ որ իրավունքը չեզած՝ արդարութեան ձեռքը պիտի իջնայ այն թշուառական կինը, որուն մեղադարտութիւնը անտարակուսելի է:

— Ափսոս, ատով պիտի չվերակենդանանայ իմ եղբայրս:

— Դժբախտաբար այդպէս է: Իայց դոնէ վրէժը լուծուած պիտի ըլլայ: Տիկին, ուղեցի ձեզ տեսնել, ճշդելու համար պ. Լապրուի վերադարձի ատենը: Ինծի ըսին թէ ձեր եղբայրը սէն ժերվէ դացած է, հիւանդ տղուն այցելութիւն տալու նպատակով:

— Այո, պարոն, հեռագրով մը տուի – պղպարար կանչեցի զինքը: Եղբօրորդիս, փոքրիկն Լիւսիէն փողացաւէ բռնուած էր, որ կրնար ծանր կնճռոտութիւններ ունենալ: Հօրը ներկայութիւնը անհրաժեշտ կը թուէր ինծի: Հայրը հասած պահուն, տղուն վիճակը լաւ էր... ամէն վտանգ անհետացած էր: Եղբայրս խակոյն ապահովուեցաւ, եւ որովհետեւ կարեւոր գործեր անհրաժեշտ կը դարձնէին Փարիզ վերադարձը, յաջորդ օրն իսկ մեկնեցաւ, փոխանակ երկու օր մնալու իմ քովս, ինչպէս մտադրած էր նախապէս:

ԿԶԱՎԻԻ ՏԸ ՄՈՆԹԻՊԱՆ

(Շար.)

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Տէր եւ Տիկին Սբա Պիպէրեան եւ զաւակները եւ ընտանեկան պարագաները կը ծանուցանեն թէ հոգեհանգստեան պաշտօն կը կատարուի այս Կիրակի առաւօտ Փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցին իրենց քրոջ եւ հօրաքրոջ՝

ՍՈՆԱ ՊԻՊԷՐԵԱՆԻ

մահուան քառասունքին առթիւ։

Ի պիտոյիս ողբացեալին յիշատակը յարգողներուն։

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Այրի Տիկին Նուարդ Խժտահարեան, Տէր եւ Տիկին Արտաշ Խժտահարեան, Տէր եւ Տիկին Բարգէն Խժտահարեան եւ զաւակը շնորհակալութիւն կը յայտնեն Լիոնի Հայ Առաքելական Եկեղեցւոյ, Սբ. Գայիան Միութեան վարչութեան եւ բոլոր անոնց որոնք ծաղկեպատկով, խոնհան ծաղկեպատկի նուէրներով, անձամբ թէ պրուար ցուցակութիւն յայտնեցին իրենց ամուսնոյն, հօր եւ մեծ–հօր՝

ՄՄԱՐՏԻՐՈՍ ԽԺՏԱՀԱՐԵԱՆԻ

կսկծալի կորուստին առթիւ։

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՊՈՐՏՈՅԷՍ

Պորտոյի հայ գաղութի մէջ անհատական նախաձեռնութեամբ կազմուեցաւ քանի մը տարիէ ի վեր անկախ յանձնախումբ մը Հայաստանէն բերուած չափաժապաւակերի ժապաւէններ ցուցադրելու նպատակով։

Շնորհիւ Պր. Մխիթար Մալխեանի անձնուէր գործակցութեան, քիչ ծախքերով ցուցադրուեցան չորք մը հայրենական ժապաւէններ։

Յաւօք, մանաւանդ սոխպուած է գաղրեցնել իր գործը։ Իր չորս անդամներէն երկուքը վախճանեցան, երրորդը գաղթեց քաղաքէս, մնաց միայն մէկը։ Պէտք է աւելցնել նաեւ, որ ծախքերը թէեւ համեստ, սակայն ղժուարութեամբ կը գոյուէին, այդու, չարունակելն անկարելի է։

Մանաւանդ հանգոցօք որոշումով, իր գործունէութիւնը գաղրեցնելու պատրաստին, հիմնադրամի մնացորդը պէտք է յատկացնել Ֆրանսահայ ազգուտ հաստատութիւններու։

Որոշեցինք մնացորդ 600 ֆրանքը երեքի բաժնել.— 200 «Դպրոցասիրաց» օրիորդաց դպրոցին (ստանալ «Յառաջ»էն), 200 «Ազգաստախնամ»ի օրինակելի հաստատութեան (ստանալ «Յառաջ»էն։

Եւ 200 ֆր. Եւրոպայի վաստակաւոր եւ մինուճար հայ օրաթերթ «Յառաջ»ին։

Յանձնաժողովի անդամներ՝
Ս. ԳՈՆԻԱԼԵԱՆ եւ Մ. ՄԱՒՒԱՆԶԵԱՆ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐԸ

Նախաձեռնութեամբ Կազ. Խաչի Շրջ. Վարչութեան, մասնակցութեամբ Փարիզեան շրջանի իր մասնաճիւղերուն, Մանուկներու Օրը կը տօնուի Փարիզի մէջ
ՅՈՒՆՈՒԱՐ 28ԻՆ

«ՅԱՌԱՋ»Ի ԲԱՐԳԱՒԱՃՄԱՆ ՀԱՄԱՐ

(Համակրանիք տեղահանութեան առթիւ)

Վալանսէն այրի Տիկին Դաւիթեան 100 ֆր. կը նուիրէ իր ամուսնոյն յիշատակին։

×

Վիլմոմպլէն՝ Գուլումճեան ընտանիք՝ 80 ֆրանք։

ԿՈՒԶՈՒԻ

ՍՏԻՊՈՂԱՔԱՐ

Շատ լաւ տաքթիլօ մը պրտաեներեակի աշխատանքի համար։

Դիմել՝
Mondotours
2, Rue de Sèze — Paris (9e)
Տիկին Գումրուեանցի

ՅՈՒՇԱՏՈՏ

ԿԱՊՈՑՏ ԽԱՉԻ Պուլ. Օտտոյի վարչութիւնը ընդհ. ժողովի կը հրաւիրէ իր բոլոր ընկերուհիները 6 Դեկտ. Չորեքշաբթի կէսօրէ վեր ժամը 15·30ին, սովորական հաւաքատեղին։ Կարեւոր օրակարգ։

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Կազ. Խաչի Շրջ. Վարչութիւնը շնորհակալութեամբ ստացած է Անիէս–Պուա Բոլոմպի իր մասնաճիւղէն 6000 Ֆր. կայանի նոր չէնքի կառուցման ի նպաստ։

×

Պօմոնի Ս. Գր. Լուսաւորիչ եկեղեցւոյ Հոգաբարձութիւնը շնորհակալութեամբ ստացած է Շահլամեան – Պաղըճեան հոգեհանգիստին առթիւ, Պ. Ալէն Պագըճեան 50, Պ. Ռոպէր Սարաճեան 50, Դարբինեան ընտանիք 50, Միսաիլ 10 Ֆր.։

×

Հոգեհանգիստ Ազարայի հերոսամարտի, Գր. Թիւթիւնեան 20, Տէր–Գասպարեանի յուղարկաւորութիւն, Տէր եւ Տիկին Պ. Պօղոսեան 50, Տիկին Ղեւոնդեան 50, Տիկին Շուշանիկ Աբծուեան 20, Գ. Տէր–Ղազարեան 15։ Տիկին Վ. Ամէմեանի յուղարկաւորութիւն, Ամէմեան ընտանիք 50, Ոմն 50, Ամէմեան ընտանիք Սէն – Ժերմէն 50, Պազալեան ընտանիք 50, Յովհ. Ամէմեան 25, Տէր եւ Տիկին Տոբումեան 6· 20։

Հ. Ց. Դ.

ԻՍԻ.— Հ.Յ.Դ.· Զաւարեան կոմիտէի ժողովը այս հինգշաբթի, (Դեկտ. 7) ժամը 21ին ընկ. Սերոբեանի բնակարանը, 25 Ալընիս Պուրկէն, Իսի։ Կարեւոր օրակարգ։։

×

ԱԼՖՈՐՎԻԼ.— Հ. Յ. Դ. «Ս. Մինասեան» ենթակոմիտէն ընդհ. ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերները այս Ուրբաթ ժամը 21ին ծանօթ հաւաքավայրը։ Ներկայանալ անպայմանաւորով։ Կարեւոր օրակարգ։

ԱՇԽԱՏԱՆՔ ԿԸ ՓՆՏՌԻ

J. H. 30 ans, diplômé Collège Arménien, lic. en droit + D. E. S. de doctorat, I. E. P. Paris. Anglais, Arménien, bonnes conn. italien. Cherche situation rég. Paris. Libre immédiat.

Ecrire à « Haratch », qui transmettra.

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

H. PASDERMADJIAN

Professeur à l'Université de Genève

Histoire de l'ARMÉNIE

DEPUIS LES ORIGINES JUSQU'AU TRAITE DE LAUSANNE

Troisième édition, Paris, 1971, 437 pages
Reliure pleine toile

Prix : 36 Frs
Avec les frais d'envoi : 39 Frs

LIBRAIRIE ORIENTALE H. SAMUELIAN
51, Rue Monsieur-le-Prince, Paris (6e)
C. C. P. 1278-35, Tél. : 324-88-65

ԿԸ ՓՆՏՌՈՒԻ

Բնիկ էլպաասի, Թողաթի շրջան, Տիկին Կիլիմթա Մըսրեան (ծնեալ Մղռեան Մանուկեան) կը փնտռէ իր եղբօր՝ Հաճի Մանուկին զաւակները։ Ամենայն 14 տարեկան, Սիրանոյշ 5 տարեկան, Կարապետ 4 տարեկան, Գէորգ 3 տարեկան։ Տունք Մալաթիա տեսնուած են։ Իրենց մօրը անունը Վարդուհի։ Կը փնտռէ մեծ քոյրը Եղիսան, զաւակները՝ Լեւոնը, 14 տարեկան, Ազաւնին 13 տարեկան։ Տունք իրենց քովը մեռած են։ Փերուզը 12 տարեկան մնաց Պերճակի Խանը։ 8 տարեկան Միհրանը, 5 տարեկան Գրիգորիկը, այս երկուքը կորսուած են։ Իր հօրը անունը Օհաննէս Քէչիչեան։

Իրենց մասին լուր ունեցողներէն կը խնդրուի իմացնել հետեւեալ հասցէին։

G. M. Djnbachian
62, Ave. Sadi Carnot
Valence 26000 (France)

Կը խնդրուի արտասահմանի թերթերէն արտատպել։

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

ՀԱՆԳՍՏԵԱՆ ՏՈՒՆԵՐԸ

Նախաձեռնութեամբ Կազդայ Խաչի Իսիի մասնաճիւղին այցելութիւն մը կազմակերպուած է Մոնմորանսիի եւ Անթիլիի Հանգստեան տուները, Դեկտ. 10ին, կիրակի օր։

Ծիածանը կը մեկնի Լէոն Պլում հրապարակէն, (կառ տ'Իսի) ժամը 13·30ին։

Արձանագրուիլ Խաչհինեբուն մօտ։
Ծախքերու մասնակցութիւն 10 Ֆր.

ՀՐԱՒԻՐ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻ

Ֆրանսահայ Գրողներու Ընկերակցութեան վարչութիւնը ընդհ. ժողովի կը հրաւիրէ իր բոլոր անդամ գրողները եւ անդամագրուիլ փափաքող գրողները, 11 Դեկտ. երկուշաբթի երեկոյ ժամը 20ին «Ռէժան» սրճարանի վերնայարկը (Մեթրօ Քաստէ), Փարիզ։

Օրակարգ.— Բարոյական եւ նիւթական հաշուեհաւուութիւն եւ նոր վարչութեան ընտրութիւն։

Ներկաներուն թիւը մեծամասնութիւն կը համարուի։

ՀՈՒՇԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ս. Ստեփանոսի Առաքելական Եկեղեցւոյ Հոգաբարձութիւնը շնորհակալութեամբ ստացած է Ազնիւ–Պուա Բոլոմպի իր մասնաճիւղէն 6000 Ֆր. կայանի նոր չէնքի կառուցման ի նպաստ։

×

Պօմոնի Ս. Գր. Լուսաւորիչ եկեղեցւոյ Հոգաբարձութիւնը շնորհակալութեամբ ստացած է Շահլամեան – Պաղըճեան հոգեհանգիստին առթիւ, Պ. Ալէն Պագըճեան 50, Պ. Ռոպէր Սարաճեան 50, Դարբինեան ընտանիք 50, Միսաիլ 10 Ֆր.։

×

Հոգեհանգիստ Ազարայի հերոսամարտի, Գր. Թիւթիւնեան 20, Տէր–Գասպարեանի յուղարկաւորութիւն, Տէր եւ Տիկին Պ. Պօղոսեան 50, Տիկին Ղեւոնդեան 50, Տիկին Շուշանիկ Աբծուեան 20, Գ. Տէր–Ղազարեան 15։ Տիկին Վ. Ամէմեանի յուղարկաւորութիւն, Ամէմեան ընտանիք 50, Ոմն 50, Ամէմեան ընտանիք Սէն – Ժերմէն 50, Պազալեան ընտանիք 50, Յովհ. Ամէմեան 25, Տէր եւ Տիկին Տոբումեան 6· 20։

ՀՈՒՇԱՏՈՏ

ԿԱՊՈՑՏ ԽԱՉԻ Պուլ. Օտտոյի վարչութիւնը ընդհ. ժողովի կը հրաւիրէ իր բոլոր ընկերուհիները 6 Դեկտ. Չորեքշաբթի կէսօրէ վեր ժամը 15·30ին, սովորական հաւաքատեղին։ Կարեւոր օրակարգ։

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Տէր եւ Տիկին Սբա Պիպէրեան եւ զաւակները եւ ընտանեկան պարագաները կը ծանուցանեն թէ հոգեհանգիստեան պաշտօն կը կատարուի այս Կիրակի առաւօտ Փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցին իրենց քրոջ եւ հօրաքրոջ՝

ՍՈՆԱ ՊԻՊԷՐԵԱՆԻ

մահուան քառասունքին առթիւ։

Ի պիտոյիս ողբացեալին յիշատակը յարգողներուն։

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Այրի Տիկին Նուարդ Խժտահարեան, Տէր եւ Տիկին Արտաշ Խժտահարեան, Տէր եւ Տիկին Բարգէն Խժտահարեան եւ զաւակը շնորհակալութիւն կը յայտնեն Լիոնի Հայ Առաքելական Եկեղեցւոյ, Սբ. Գայիան Միութեան վարչութեան եւ բոլոր անոնց որոնք ծաղկեպատկով, խոնհան ծաղկեպատկի նուէրներով, անձամբ թէ պրուար ցուցակութիւն յայտնեցին իրենց ամուսնոյն, հօր եւ մեծ–հօր՝

ՄՄԱՐՏԻՐՈՍ ԽԺՏԱՀԱՐԵԱՆԻ

կսկծալի կորուստին առթիւ։

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՊՈՐՏՈՅԷՍ

Պորտոյի հայ գաղութի մէջ անհատական նախաձեռնութեամբ կազմուեցաւ քանի մը տարիէ ի վեր անկախ յանձնախումբ մը Հայաստանէն բերուած չափաժապաւակերի ժապաւէններ ցուցադրելու նպատակով։

Շնորհիւ Պր. Մխիթար Մալխեանի անձնուէր գործակցութեան, քիչ ծախքերով ցուցադրուեցան չորք մը հայրենական ժապաւէններ։

Յաւօք, մանաւանդ սոխպուած է գաղրեցնել իր գործը։ Իր չորս անդամներէն երկուքը վախճանեցան, երրորդը գաղթեց քաղաքէս, մնաց միայն մէկը։ Պէտք է աւելցնել նաեւ, որ ծախքերը թէեւ համեստ, սակայն ղժուարութեամբ կը գոյուէին, այդու, չարունակելն անկարելի է։

Մանաւանդ հանգոցօք որոշումով, իր գործունէութիւնը գաղրեցնելու պատրաստին, հիմնադրամի մնացորդը պէտք է յատկացնել Ֆրանսահայ ազգուտ հաստատութիւններու։

Որոշեցինք մնացորդ 600 ֆրանքը երեքի բաժնել.— 200 «Դպրոցասիրաց» օրիորդաց դպրոցին (ստանալ «Յառաջ»էն), 200 «Ազգաստախնամ»ի օրինակելի հաստատութեան (ստանալ «Յառաջ»էն։

Եւ 200 ֆր. Եւրոպայի վաստակաւոր եւ մինուճար հայ օրաթերթ «Յառաջ»ին։

Յանձնաժողովի անդամներ՝
Ս. ԳՈՆԻԱԼԵԱՆ եւ Մ. ՄԱՒՒԱՆԶԵԱՆ

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐԸ

Նախաձեռնութեամբ Կազ. Խաչի Շրջ. Վարչութեան, մասնակցութեամբ Փարիզեան շրջանի իր մասնաճիւղերուն, Մանուկներու Օրը կը տօնուի Փարիզի մէջ
ՅՈՒՆՈՒԱՐ 28ԻՆ

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Տէր եւ Տիկին Սբա Պիպէրեան եւ զաւակները եւ ընտանեկան պարագաները կը ծանուցանեն թէ հոգեհանգիստեան պաշտօն կը կատարուի այս Կիրակի առաւօտ Փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցին իրենց քրոջ եւ հօրաքրոջ՝

ՍՈՆԱ ՊԻՊԷՐԵԱՆԻ

մահուան քառասունքին առթիւ։

Ի պիտոյիս ողբացեալին յիշատակը յարգողներուն։

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Այրի Տիկին Նուարդ Խժտահարեան, Տէր եւ Տիկին Արտաշ Խժտահարեան, Տէր եւ Տիկին Բարգէն Խժտահարեան եւ զաւակը շնորհակալութիւն կը յայտնեն Լիոնի Հայ Առաքելական Եկեղեցւոյ, Սբ. Գայիան Միութեան վարչութեան եւ բոլոր անոնց որոնք ծաղկեպատկով, խոնհան ծաղկեպատկի նուէրներով, անձամբ թէ պրուար ցուցակութիւն յայտնեցին իրենց ամուսնոյն, հօր եւ մեծ–հօր՝

ՄՄԱՐՏԻՐՈՍ ԽԺՏԱՀԱՐԵԱՆԻ

կսկծալի կորուստին առթիւ։

Ի պիտոյիս ողբացեալին յիշատակը յարգողներուն։

ՀԻՆԳՇԱԲԹԻ
7
ԴԵԿՏԵՄԲԵՐ
JEUDI
7 DECEMBRE
1972

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ
ՀԻՄՆԱԴԻՐ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

HARATCH

LE SEUL QUOTIDIEN ARMÉNIEN EN EUROPE OCCIDENTALE
Directrice : ARPIK MISSAKIAN
32, RUE DE TRÉVISE PARIS 9

LE NUMÉRO 0,70 F.

— Tél. : 770-86-60 —
C. C. P. Paris 15069-82

Fondé en 1921
R. C. Seine 57 A 2731

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա	Տար. 120 ֆր.	Վեցամսեայ	65 ֆր.
Արտասահման	Տար. 135 ֆր.	Հատը	0,70 ֆր.

ՏԱՐԻ — ԹԻՒ 12·583

Fondateur : SCHAVARCH MISSAKIAN

48e ANNÉE — N° 12.583

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ՔՐՏԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԿՐԿԻՆ ՕՐԱԿԱՐԳԻ ՎՐԱ՞Յ

—o—

Ի՞նչ կ'անցնի կը դառնայ քրտական ճա-
կատին վրայ։

Միջազգային մամուլը պարբերաբար արձագանգ կը դառնայ Պարզանիի կամա-
ւորներուն եւ Պաղտատի կառավարու-
թեան զինուորներուն միջեւ պատահած ընդհարումներու, որոնք ծանրակշիռ հան-
գամանք մը չեն ներկայացներ։

Պատճառներ խաղաղութիւնը վերա-
հաստատած է կռիւներու միջեւ՝ 11 Մարտ 1970ի համաձայնագրէն ի վեր։

Եօթը կէտեր կը պարունակէր այդ հա-
մաձայնագիրը, որ վերջ կը դնէր 1961 Հոկտեմբերէն ի վեր տիրող պատերազ-
մական վիճակին։ Այդ կէտերու դէմ ա-
ռարներն էին՝

Լուծում Իրաքի կառավարութեան կող-
մէ զինուորագրուած վարձկան քիւրտ զօրագունդերու (ճահշ = ֆշ)։ Մարզա-
համարի կազմակերպում Քէրքիւքի շըր-
ջանին մէջ, ուր բնակչութիւնը չափազանց մեծամասնութեամբ բաղկացած է Քիւր-
ներէ եւ որուն խոստացած է վարչական ինքնավարութիւն։ Վերադարձ իրենց հայրենի բոյներէն հեռացուած քիւրտ գեղամարբերու։ Անուանում քիւրտ փոխ-
վարչապետի մը՝ Պաղտատի կառավարու-
թեան մէջ, բացի երկու նախարարներէ, եւայլն։

Հակառակ մթնոլորտի մեղմացումին, 1971 Յուլիսին անյայտող մահափորձ մը կազմակերպուեցաւ Մուլլա Մուսթաֆա Պարզանիի դէմ՝ իր բանակատեղիին մէջ։ Պահակները աչալուրջ կը հսկէին։ Ահ-
բեկիչները — յարզելի անձնաւորութիւն-
ներ — իրրեւ բարեկամական ներկայացեր էին։ Բոլորն ալ զոհ պային ինքնաշարժերու մէջ զետեղուած ռումբերու պայթումին։ Դատավիրները ենկան իրենց լարած թա-
կարդին մէջ։

Քրտական հարցը կրկին օրակարգի վրայ է։ Պէյրութի էլ-Հայաթ թերթին համաձայն, իրաքեան բանակի 500 սպա-
ներ ու զինուորներ մխացեր են Պարզանիի կամաւորական զունդերուն։ Անցեալ Օ-
գոստոսէն ի վեր ընդհարումները անպա-
կաս են եղեր Քիւրտերու եւ կառավարա-
կան ուժերու միջեւ։

Վերջ տալու համար այս կացութեան, կառավարութիւնը պատգամաւորներ ղըր-
կեր է Քէրքիւք՝ բանակցելու համար Պարզանիի ներկայացուցիչներուն հետ։ Ասոնք իրրեւ նախապայման պահանջեր են լուծել «Յեղափոխութեան Վարիչ Խոր-
հուրդ»ը՝ բաղկացած Պաասականներէ՝ ո-
րուն ձեռքն է ամբողջ իշխանութիւնը։ Պաասականները կ'ամբաստանուին իրրեւ կազմակերպիչ 1971 Յուլիսի մահափոր-
ձին։

Մինչ այդ կարեւոր զէպքեր հիմնովին փոխելու իրաքի զիմագիծը՝ վերջին ամիսներուն։ Մէկ կողմէ Պաղտատի կա-
ռավարութիւնը ազդայնացուց Իրաքի Քարիւղի Ընկերութիւնը (Ա.յ· Փի· Սի·), որուն կեդրոնն էր Քէրքիւք։ Միւս կողմէ Հարաւային Միութիւնը տուն — տեղ ե-
ղաւ հիւսիսային Ռամէյլայի քարիւղաշատ շրջանին մէջ։ Կոսիպին անձամբ իրաք գնաց՝ Պաղտատի կառավարութեան հետ կնքելու համար բարեկամական դաշնա-
գրի մը եւ կատարելու հանդիսաւոր բա-
ցումը քարիւղի հորերուն։

Մոսկուա կարեւոր զումարներ յատկա-
ցուցած ըլլալով այս ձեռնարկին՝ չու-

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՓՈՄՓԻՏՈՒ ԻՆՁՈ՞Ի ՄՈՍԿՈՒԱ Կ'ԵՐԹԱՅ

—o—

Բոլորովին անսպասելի էր առջի երեկուան Էլիզէի զեկոյցը, որ կը յայտնէր թէ Նախագահ Փոմփիտու Խորհ· Մեւթիւն կ'երթայ Յունուար 11–12ին եւ թէ այդ ճամբորդութիւնը պաշտօնական չէ։

Պարզ է որ զանազան մեկնաբանութիւն-
ներ կը տրուին, տրուած ըլլալով մանա-
ւանդ որ Էլիզէի զեկոյցը կը չեշտէ թէ այս կարճ այցելութեան նպատակն է խո-
սակցութիւններ ունենալ Լէոնիտ Բրէժ-
նեւի հետ։ Ծանօթ է նաեւ թէ այդ խո-
սակցութիւնները տեղի պիտի ունենան քաղաքներէ հեռու տաչայի մը մէջ մինչ-
պէս Փոմփիտու — Հիթ խօսակցութիւն-
ները որոնք Չէքերս տեղի ունեցան։

Բուն բացատրութիւնը հետեւեալն է։— «Հանդիպումը տեղի պիտի ունենայ հե-
ռու եւրոպական Ռուսիոյ որեւէ քաղա-
քէ»։ Ցոյակ է սակայն որ այս այցելու-
թիւնը «կը խանգարէ» համայնավարները ընտրութեանց նախօրեակին։ Եւ Իւմա-
նիթէ չի ծածկեր որ «ընտրական յետին մտքեր» կան այս գործին մէջ։ Այդ կէտը ոչ ոքի ուշադրութենէն կը վրիպի բայց կան նաեւ այլ կէտեր։

Վերջերս Նիքսընի տեսակցութիւնները Մոսկուայի թէ Փեքինի պետերուն հետ անդամ մը եւս այն տպաւորութիւնը կը թողուն թէ աշխարհ կը կառուցուի ա-
ռանց Եւրոպայի։ Գալով Եւրոպայի, իր պարագլուխը դարձած է Վիլի Պրանտ որ նաեւ ամէնէն «մաերիմ» խօսակիցն է Ռուսերուն։ Այս երեւոյթներն ալ պատ-
ճառ են անշուշտ որ Փոմփիտու ուզէ չեշտել Ֆրանսայի ներկայութիւնը։

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԱՏԼԱՆՏԵԱՆ ՈՒԽՏԻ 10 երկիրներու Պաշտպանութեան նախարարներ համա-
ձայնեցան Պրիւսէլի մէջ զարկ տալ նոր զէնքերու արտադրութեան եւ զօրացնել իրենց զինուորական ուժերը։ Տասը եր-
կիրներն են Անգլիա, Դաշնակցային Գեր-
մանիա, Հոլանտա, Պելժիա, Դանիա, Նորվեկիա, Իտալիա, Յունաստան, Թուր-
քիա եւ Լիւքսէնպուրկ։ Տասները յայ-
տնեցին, որ Ֆրանսա եւս իր զործօն

ԶԻԼԻԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՃԱՌԸ

—o—

Զիլիի նախագահը Ազգաժողովին առջեւ կարեւոր ճառ մը արտասանեց, որու ընթացքին պարզեց իր երկրին տեսակէտները ներքին տնտեսական քաղաքականութեան մարզին մէջ։ Առանց Մ· Նահանգներու անունը արտասանելու դատապարտեց մեծ ընկերութիւնները՝ ինչպէս ամերիկեան Քենեկոթ պղինձի ընկերութիւնը, իր վարած չհաղորդման քաղաքականու-
թեան համար։ Վերջին 40 տարիներուն օտար ընկերութիւններ 4 միլիառ տոլարի չհ ապահոված են Զիլիի պղինձի չա-
հաղորդումով, մինչդեռ անոնք միայն 30 միլիոն տոլար ղրամագլուխ զետեղած են Զիլիի մէջ, նոյն ժամանակամիջոցին։ Զիլիի պղինձին ազդայնացումը կատարուած է միջազգային օրէնքներու համա-
ձայն։ Աւելնալ յիշեցուց, թէ ամերիկեան Ի· Թ· Թ· ընկերութեան ղրամագլուխը Հար· Ամերիկայի բազմաթիւ երկիրներու ազգային պիւտճէէն աւելի է, նոյնիսկ աւելի՝ քանի մը ճարտարարուեստականացած երկիրներու ազգային պիւտճէէն։

Ծանօթ է, որ Ուաշինկթընի եւ Սան-
թիակոյի յարաբերութիւնները լարուած են այն օրէն ի վեր, երբ Զիլի ազդայնացուց պղինձի հանքերը, որոնց չհաղոր-
ծումը կը դանուի ամերիկեան ընկերու-
թեան մը ձեռքը։

ԱՏԼԱՆՏԵԱՆ ՈՒԽՏԻ 10 երկիրներու Պաշտպանութեան նախարարներ համա-
ձայնեցան Պրիւսէլի մէջ զարկ տալ նոր զէնքերու արտադրութեան եւ զօրացնել իրենց զինուորական ուժերը։ Տասը եր-
կիրներն են Անգլիա, Դաշնակցային Գեր-
մանիա, Հոլանտա, Պելժիա, Դանիա, Նորվեկիա, Իտալիա, Յունաստան, Թուր-
քիա եւ Լիւքսէնպուրկ։ Տասները յայ-
տնեցին, որ Ֆրանսա եւս իր զործօն

ՎՐԱՍՏԱՆԻ ՍԷՋ

ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ ԾԱՆՐ Է

—o—

Վրացական Համաչխարհայ կուսակցու-
թեան պաշտօնաթերթը՝ Զարիա Վոստո-
կա կը հաղորդէ որ կուսակցութեան կեդ-
րոնական Կոմիտէն շատ խիստ կերպով զատապարտած է երկրին տնտեսական վիճակը, Թիֆլիսի մէջ գումարուած ժո-
ղովի մը ընթացքին։ Ամէնէն խիստ քննա-
դատութիւնները կը վերաբերէին դիւղա-
տնտեսական արտադրութեանց, կոլխոզ-
ներու եւ սովխոզներու արդիւնաբերու-
թեան։ Սակէ կը պարզուի որ դիւղատըն-
տեսական ձեռնարկութեանց կէսէն աւե-
լին պետական ծրագիրը չեն իրագործած տարիներէ ի վեր։ Նոյեմբեր մկկին, պղպատու ծառերու տնկումը միայն՝ 18 առ հարիւր, այլին՝ 11 առ հարիւր, նա-
խընջեղէն 25 առ հարիւր, թէյ՝ 29 առ հա-
րիւր եւ հողի մշակումը՝ 68 առ հարիւր համեմատութեամբ իրագործուած է։

Վրաստանի կուսակցական պաշտօնա-
թերթը կը ճշդէ նաեւ թէ անցեալ տարի 270 կոլխոզ ի վիճակի չեն եղած վճարելու իրենց բոլոր անդամները եւ թէ 1966էն 1971 (բացի 1970էն) սովխոզները չեն ի-
րագործած դիւղատնտեսական արտադ-
րութեան ծրագիրը։

Զգուշացած են նաեւ աշխատանքի ճիւ-
ղերուն մէջ «անրաւարարութիւնները»։ Թերթը կը գրէ· «Ոչ ոքի համար գաղտ-
նիք է, որ ամէն տարի 11 հազար կոլխոզ-
նիք, աշխատելու է վիճակի, երբեք չեն մտանակցիր աշխատանքի եւ թէ 60 հազար ուրիշներ տարին հազիւ 50 օր կ'աշխա-
տին։ Անցեալ տարի սովխոզներու աշխա-
տատրութեան միջինը եղած է 182 օր, այլ խօսքով՝ ամիսը 15 օր։

մտանակցութիւնը կը բերէ այս ծրագրի իրականացման։ Ֆրանսա անդամ մնալով հանդերձ Ատլանտեան Ուխտի՝ չի մաս-
նակցիր անոր զործօն ձեւով։

ՄՈՍԿՈՒԱՅԻ Պուշկինի հրապարակին վրայ 24 ազատախոհներ, դլխաւորու-
թեամբ Ակադ· Ա· Սախարովի, վայրկեա-
նի մը յոտնկայս լռութեամբ յարգեցին յիշատակը Ալեքսանդր Պուշկինի, որ գա-
րական բռնատիրութիւնը քննադատած էր։ 1965էն ցայսօր ամէն տարի խորհրդային Սահմանադրութեան օրուան տարեդար-
ձին նոյն ձեւի ցոյց կը կատարուի Պուշ-
կինի արձանին առջեւ՝ յիշեցնելու հա-
մար խորհրդային իշխանութիւններուն, թէ պարտաւոր են յարգել մարդկային ի-
րաւունքները։ Ոտնկանութիւնը անմի-
ջապէս ցրուեց ցուցարարները։

ԱՄԵՐԻԿԱՅԻ բժիշկներ յայտարարեցին, թէ ցուրտ, հարբուխի, հազի, դումի (կրիպ) դէմ պայքարելու լաւագոյն մի-
ջոցն է տաք ապուրը եւ ասպիրինը։ Միւս դեղերը անօգուտ են եւ, նոյնիսկ, երբեմն վտանգաւոր։

ԶՈՒՑԵՐԻԱ, որոշեց լուծել իր հեծելա-
զօրքը։ Վերջերս աւելի քան 400·000 հո-
դի դիմումնագիր մը տտորագրած էին, որով կը խնդրէին որ չլուծուին հեծելա-
զունդերը։

ԱՆՏԻՈՔԻ Ս· Պետրոս եկեղեցին, որ կը նկատուի աշխարհի ամէնէն հին եկեղե-
ցին, պիտի նորոգուի Թուրք իշխանու-
թիւններու կողմէ։ Այս լուրը հաղորդեց Թուրք դրօսաշրջիկութեան դրասենեակը։

ԳԱՀԻՐԻՒ դիւանագիտական աղբիւրնե-
րու համաձայն Մոսկուա մերժած է նոր զէնքեր յանձնել Եգիպտոսի։ Եգիպտական զինուորական պատուիրակութիւն մը՝ դլխաւորութեամբ Զօր· Հոսնի Մուբարա-
քի, ձեռնունայն վերադարձած է Մոս-
կուայէ։ Մոսկուա տրամադիր է միայն զէնքերու սարքեր դրկել։

ՀՐԱՆՏ–ՍԱՄՈՒԷԼ

ԽՈՐՀ. ՄԻՈՒԹԵԱՆ ԿԱԶՄՈՒԹԵԱՆ

50 ԱՄԵԱԿԸ

Գ.

1917ի Փետրուարեան յեղափոխութիւն – նէն կարճ ժամանակ եաք՝ Մարտ 17ին, Ուկրանիոյ իշխանութեան գլուխը կ'անցնի Ուկրանիոյ Կեդրոնական Ռատան (Ազգային Խորհուրդը), որ Ազգային Համագումար մը կը կազմակերպէ Ապրիլ 22ին, ուր Ուկրանիոյ ինքնավարութիւնը կը հռչակուի: Կերենսկիի ժամանակաւոր կառավարութիւնը ընթացք չի տար Ուկրանիացիներու առաջարկին՝ երկու երկիրներու ազգային յարաբերութիւնները ճշդել բանակցութեանց ճամբով:

1917 Հոկտեմբերին համայնավարները իշխանութիւնը ձեռք առնելու փորձ կը կատարեն Կիեւի մէջ: Փորձը կը ձախողի: Ուկրանիոյ Կեդրոնական Ռատան, Նոյեմբերին, « Ուկրանիոյ Դեմոկրատ Հանրապետութիւնը » կը հռչակէ: կը ճշդէ երկրին սահմանները եւ իրեւ կառավարութիւն կը յանձնձէ երկրին ներքին եւ արտաքին գործերը (ուկրա – նիական բանակի կազմութիւն, կրթական գործի ուկրանիացում եւայլն): Ուկրա – նիոյ Պետութեան նախագահ կ'ընտրուի՝ պատմաբան Փրոֆ. Միխայլօ Հրուշեւսկի:

Լենին 1917 Դեկտեմբեր 3ին (16) կը ճանչնայ նոր Հանրապետութիւնը. «Մանիֆեստ ուկրանիական ժողովուրդին» մէջ ան կը գրէ. «Մենք՝ ժողովրդական կոմիսարներու սովետը, ճանաչում ենք Ուկրանիական ժողովրդական Հանրապետութիւնը, ճանաչում ենք Ռուսաստանից լիակատար անջատման կամ Ռուսաստանի հետ պայմանագիր կնքելու նրա իրաւունքը՝ փեդերատիվ եւ այլ կարգի փոխ–յարաբերութիւնների մէջ լինելու վերաբերեալ» (Մ. Արզումանեան, « Գրական Թերթ», Յունիս 23):

Աւելցնենք, որ այդ «Մանիֆեստ»ին մէջ Լենին կը ճշդէ նաեւ, թէ «Ամէն ինչ, որ կապ ունի ազգային իրաւունքներուն եւ ուկրէն ժողովուրդի ազգային անկախութեան հետ՝ կը ճանչնանք անվիճելապէս, առանց սահմանափակումի եւ պայմանի» (Վ. Ի. Լենին, Երկեր, հատոր 26, էջ 378–380):

Խորհրդային պատմագրութեան իւրայատուկ դիմագիծը ցոյց տալու համար նշենք, թէ Մ. Արզումանեան «Գրական Թերթ»ի մէջ յիշատակելէ եաք Լենինի Դեկտեմբեր 3ի (16) «Մանիֆեստ»ը, անմիջապէս կ'աւելցնէ. «Յայտնի է, որ ուկրանիական ժողովուրդը իր ինքնորոշման իրաւունքը օգտագործեց՝ հռչակելով սովետական Հանրապետութիւն եւ փեդերատիվ կապերի մէջ մտաւ Ռուսաստանի հետ»:

Լենին իր «Մանիֆեստ»ը գրեց 1917 Դեկտեմբեր 3 (16)ին: Արդ, Ուկրանիա 1918 Յունուար 22ին, այսինքն Լենինի « Մանիֆեստ »ի հրապարակումէն ճիշդ ամիս մը եաք իր անկախութիւնը կը հռչակէ եւ Բրեստ–Լիտովսկի մէջ խաղաղութեան դաշնագիրը կը կնքէ Գերմանիոյ, Աւստրեւհունգարիոյ, Պուլկարիոյ եւ Թուրքիոյ հետ, իրրեւ առանձին, անկախ պետութիւն: Կը հաստատէ իր պետական դրօշը՝ կապոյտ եւ դեղին, եւ կը վաւերացնէ իր քաղաքացիական օրինագիրքը:

Լենին ընդունելով հանդերձ Ուկրանիոյ անկախ Հանրապետութեան գոյութիւնը, միեւնոյն ատեն, մատհոգ աչքով կը դիտէ Ուկրանիոյ եւ Դոնի Կոզաքներու անջատումը Ռուսիայէն: Այս է պատճառը, որ իր «Մանիֆեստ»ին հետ «Վերջնագիր» մը կ'ուղղէ Ռատայի, ամբաստանելով այս վերջինը «երկդիմի խաղաքաղաքականութեամբ»: Ուկրանիացիք, ըստ Լենինի նամակին, կը քայքայեն ճակատը՝ ուկրանական ուժերը հեռացնելով հոնկէ. միաժամանակ զինադադար կ'ընեն Ուկրանիա դանուղ կարմիր բանակային – ները եւ զօրավիգ կը կենան Կալեդինի «դաւ»ին Դոնի մէջ(*): Ուկրանիա պէտք է վերջ տայ իր այդ քաղաքականութեան: «Եթէ 48 ժամուան մէջ գոհացուցիչ պատասխան չստացուի, ժողովրդական կոմիսարներու խորհուրդը ինքզինք պատերազմական վիճակի մէջ պիտի նկատէ Ռատայի դէմ»:

Պարզ էր, որ համայնավարները անհրաժեշտ կը նկատէին Ուկրանիոյ դրաւումը, քանի որ այս վերջնոյն անջատումով Խորհ. Ռուսիա կը զրկուէր Դոնբասի ածխահանքերէն, Կրիվոյի մանկանեզէն եւ Հարաւային Ուկրանիոյ հացահատիկէն: Իսկ եթէ Դոն եւ Ուկրանիա դաշնակցէին իրարու հետ՝ Կովկասի ճամբան իր Պաքուի քարիւղով փակուած կ'ըլլար Խորհ. Ռուսիոյ առջեւ:

Հակառակ Բրեստ – Լիտովսկի խաղաղութեան դաշնագրի կնքումին, 1918 Ապրիլին գերման – աւստրիական ուժեր Ուկրանիա կը մտնեն եւ իշխանութիւնը կը յանձնեն Սկորոպադսկիի: Այս վերջնոյն ռուսասէր քաղաքականութեան հետեւանքով համաժողովրդական ըմբոստութիւն մը ծայր կուտայ Նոյեմբերին: Իշխանութիւնը կը տանձնէ Ղեկավար Մարմին մը (Վ. Վիննիչենկօ, Ս. Պետլիուրա, Անդրիեվսկի, Շվեծ, Մակարենկօ), նշանակուած Ուկրանիոյ Ազգային Խորհուրդի կողմէ:

Տրոցկի՝ օգտուելով այս կացութենէն, չարժման մէջ կը դնէ Խորհ. Ռուսիոյ բանակը՝ Ուկրանիոյ նորակազմ բանակի դէմ: Գերմանացիներն ու Աւստրիացի – ները արդէն հեռացած են Ուկրանիայէ՝ խռովութիւններ ծագած ըլլալով Պերլինի եւ Վիէննայի մէջ: Համայնավար ուժերը կը զբաղեն Խարքով քաղաքը, ուր ուկրէն Համայնավար կուսակցութեան գործադիրը մարմինը կը հաստատեն:

Ուկրանիոյ բանակի ընդհ. հրամանատար եւ Ղեկավար Մարմնի նախագահ կը դառնայ Սիմոն Պետլիւրա (**):

1919 Յունուար 22ին, հակառակ տեղի ունեցող մարտերուն, կը դումարուի Համուկրանիական համագումարը, որ Ա–բեւելեան եւ Աբեմտեան Ուկրանիոյ վերամիացումը կը հռչակէ:

1919ի վերջերը բանակցութիւնները տեղի կ'ունենան Ուկրանիոյ կառավարութեան եւ Լեհաստանի (մասնաւոր Փիլսուտսկի) հետ եւ 1920 Ապրիլին խաղաղութեան դաշնագիրը մը կը կնքուի երկու երկիրներու միջեւ: Արդէն 1919 Օդոստոս 30ին երկու երկիրներու միացեալ ուժերը գրաւած են Կիեւը: Սակայն հիւսիսէն կը յարձակին Խորհ. Ռուսիոյ ուժերը, իսկ Աբեւելքէն՝ սպիտակ Ռուսերու գունդերը: Լեհաստան կը հարկադրուի առանձին համաձայնագիր (խաղաղութեան) կնքել Ռիկայի մէջ, Խորհ. Ռուսիոյ հետ: Տրոցկի մաքրագործած ըլլալով սպիտակ Ռուսերու բանակները (Կոլչակը՝ Ուրալի կողմերը, Եուդենիչը՝ Պալթեան երկիրներու մէջ, Դենիկինն եւ անոր յաջորդած Վրանգելը՝ Դոնի եւ Կրիմի մէջ) խորհրդային ամբողջ ուժը կը կեդրոնացնէ Ուկրանիացիներու դէմ:

Երկար եւ բուռն կռիւներէ եաք ազատ Ուկրանիոյ մարտիկները 1920 Նոյեմբեր 20ին կ'ապաստանին Լեհաստան:

Մինչ այդ՝ Խորհ. Ռուսիա Խարքովի մէջ իր հիմնած եւ հաստատած Գործադիրը Մարմինը կը հռչակէ Խորհ. Ուկրանիոյ կառավարութիւն (Զուբար, Պետրովսկի, Մանիւլսկի եւ ուրիշներ):

Այս է ամփոփ պատմութիւնը Ուկրա – նիոյ կարճատեւ անկախութեան եւ երկրին խորհրդայնացման՝ Խորհ. Ռուսիոյ բանակին կողմէ:

Ուկրանիոյ եւ Դոնի դրաւումով Խորհ. Ռուսիոյ առջեւ կը բացուէր Կովկասի ճամբան:

Ժ. ՄԻՐԻՃԵԱՆ

(*) Դոնի Կոզաքները կը մերժեն ճանչնալ խորհ. Ռուսիոյ կառավարութիւնը եւ կ'որոշեն անկախ Հանրապետութիւն ընտեղծել: Կը հաստատեն կառավարութիւն: Զօր. Կալեդին եւ իր կոզաքներու բանակը իրենց կեդրոնատեղի կ'ընտրեն Նովո – չերկասկը, Դոմբասի հարաւը:

(**) Սիմոն Պետլիւրա 1926 Մայիս 25ին կը սպանուի Փարիզի մէջ խորհրդային գործակալի մը (Շուարծպարտ) ձեռքով:

ՊԱՐՍԿԱՀԱՅ ԴԷՄՔԵՐ

ՄԻՐԶԱ ՄԱԼՔՈՄ ԽԱՆ

(Յապաւումներով)

—o—

Մալքոմ Խանի կենսագիրը, ժամանակակից պատմաբան Իսմայիլ Ռային բնորոշելով անոր տեղը Պարսկաստանի հանրային – քաղաքական միտքի պատմութեան մէջ, կը գրէ. «Վերջին հարիւրամեակին Պարսկաստանի քաղաքական գործիչներու շարքին մէջ Մալքոմ Խան եթէ ոչ ամէնէն հռչակաւորը, յամենայն դէպս ամէնէն փառաբանուածը եղած է»:

Միրզա Մալքոմ Խան (Յովսէփ Մել – քումեան) ծնած է Նոր Ջուղա 1833ին: Անոր հայրը՝ Միրզա Եաղուպ (Յակոբ Մելքումեան) երկիրներ ճամբորդած, անոնց ժողովուրդներու ապրելակերպին եւ կենցաղին ծանօթ, օտար լեզուներ գիտցող անձնաւորութիւն մըն էր: Ան Պարսկաստանի մէջ ռուսական հիւպատոսարանի թարգմանն էր, միաժամանակ հրատիրուած էր արքունիք՝ իրրեւ արքայազն Զել Էս–Սոլթանի Փրանսերէնի ուսուցիչը:

Ան իր տասը տարեկան պատակը կ'ուղարկէ Փարիզ՝ Սամուէլ–Մուրատ վարժարանը ուսանելու: Փարիզի մէջ Մալքոմ Խան կ'աւարտէ նաեւ Բազմարուեստից Բարձրագոյն դպրոցը, ուր բնական եւ քաղաքական գիտութիւններէ գատ կը հետեւի ճարտարապետութեան ալ:

1850ին կը վերադառնայ Պարսկաստան եւ կ'աշխատի իրրեւ պետական թարգման: Ցետագային ան կը վարչ նաեւ Շահի թարգմանի պաշտօնը:

1856ին իր այդ հանդամանքով կ'ընկերակցի Ամին Էդ–Տովլէ Ֆարսիս Խանին մինչեւ Ֆրանսա: 1858ին վերադառնալով Պարսկաստան՝ հիմը կը դնէ հեռագրական գործին:

Այդ տարիներուն կը սկսի Մալքոմ Խանի լուսաւորական գործունէութիւնը: Իր առաջին՝ «Երկնային դրքոյկ» աշխատութեան մէջ ան արդէն կ'արծարծէ չահեկան միտքեր՝ սահմանափակել միահեծան Շահին իրաւունքները, փոփոխութիւններ մտցնել պետական կեանքին մէջ: Ան կ'առաջարկէ վեց վեզիրներէ կազմուած Պետական Խորհուրդ մը ստեղծել, որ միապետին անմիջական հսկողութեան տակ պիտի կառավարէր երկիրը: Թէեւ անոր ծրագիրը կ'ընդունուի Շահին կողմէ, բայց կը հանդիպի յետադիմական պալատականներու եւ պահպանողական խաւերու բուռն ընդդիմութեան:

Մալքոմ Խան չի յուսահատիր: Ան կը

Ծաղկած Փշալարեր

✳

(ՎԻՊԵՐԳ)

«Բալանդեոր»ի ընթերցը՝ պէտք է ասել, արդար է եւ անաչառ, դա մէկ լիարանոց պաշտօնական չափ է եւ նա պարտաւոր է տալ լրիւ: Այս՝ խնդրի, այսպէս ասած՝ արտաքին, ձեւական կողմն է, դալով ընթերի որակին, այսինքն բովանդակութեանը... այդ արդէն կախուած է ամենակարող «բալանդեոր»ի ճարպիկ ձեռքից: Իսկ «բալանդեոր»ը Մշարն է, ասում են նա Ամերիկայում է եղել, ասում են սեփական էլեկտրաղաց է ունեցել, բայց այդ ի՞նչ կարեւոր է, կարեւորն այն է, որ նա կալանաւորների մէջ ունի բարեկամներ, ոչ բարեկամներ, անծանօթներ: Ի՞նչպէս նա կարող է այլի բարձունքին կանգնած բաժանել ճաշն՝ առանց նայելու, թէ պարզուած հերթական ամանի տէրն ո՞վ է, ինչացու է...

Պրոֆեսոր Եֆրեմինը կուլ է տալիս վերջին դդալ ապուրը. նա ամանը տեղաւորում է տոպրակում, տոպրակը կախում ծածկի սիւնի մեխերից մեկից, նստում է ճարտարապետ Սասի մօտ եւ ըրթունքները ծփծփացնելով ասում է.

— Հիմա չէր խանդարի մի լաւ ճաշել...

— Ես էլ ճիշդ ձեր կարծիքին եմ, Ալեքսանդր Եֆրեմովիչ, — յօրանջում է Սասը եւ տիրում է լռութիւն:

Ցետոյ անձրեւն է խշշում ասես ամբողջ աշխարհի վրայ: Այստեղ–այնտեղ ծածկն սկսում է կաթկթել: Կալանաւորները ննջում են պառկած խոտերին: Իսկ դաշտում հիմա անձրեւի տակ են կալանաւորական ըրիգադանները:

— Այս անձրեւի խշշոցը լսելու եւ հընձած խոտի բուրմունքը ընչելու համար թէկուզ՝ արժէր Սիբիր աքսորուել, — ասես քնի մէջ խօսում է Նորից պրոֆեսորը:

Սասը խայթուածի պէս վեր է թռչում եւ նայում Եֆրեմիչի դէմքին, — լո՞ւրջ է խօսում թէ ցնդել է ծերուկը: Իսկ ծերուկը մշմշում է յետաձգեայ անոյշ նինջով:

Պակաս երջանիկ չեն եւ այն բրիգադները, որոնք ընկնում են կարտոֆիլի ամբարների վրայ, որոնք նման են լափիրինթոսների, ունեն զանազան մուտքեր եւ ուր տիրում է ագամայ մութը: Այս այն պատճառով, որ ամբարները նկուղային են եւ պատուհաններից լեցուած կարտոֆիլի հսկայական չեղքերն արդելում են լոյսի մուտքը: Կալանաւորները հերթով «իջեցնում են» կիսատուած քները, լոյս առնելու եւ աշխատելու համար, որը կայանում է տեսակաւորմանն, միաժամանակ փճացածները ջոկելու մէջ:

Կալանաւորներն այստեղ իրենց առաջադրանքը լցնում են հում կարտոֆիլով, ուսում ախորժակով ինչպէս խնճոր են ուսում: Այս դեռնադամբարանում մի ուրիշ դռնից կարող է ներս մտած լինել կանանց բրիգադը եւ հնարաւոր է, որ նրանցից ոմանք մուխ մի խորշում իրար հանդիպեն: Նման դէպքերում նրանք կոյրերի նման չօշափում են իրար եւ առանց քաչքչուկի չեն խնայում սէր ու փաղաքշանք: Նման հանդիպումների անպատեհութիւնն այն է, որ աշխատանքի աւարտից յետոյ, երբ բրիգադները դուրս են գալիս զանազան դռներից եւ առանձին–առանձին շարքի կանգնում, Աստծոյ լոյսի տակ նրանք դիտում են իրար եւ ոչ մի կերպ չեն կարող դուշակել կամ գտնել, թէ ո՞րն էր իրենց՝ նորից բանաստեղծի ասած պէս՝ «վերջինը թիւրիմացաբար եւ միակը ճակատագրով...»: Այո՛:

Դաշտում, ստանների թէ կարտոֆիլի կատակոմբներում՝ ընդհանուր աչքատանքների վրայ՝ Աչոտ դայու կատմանների նման թրծուած կալանաւորները չարախնդութեամբ էին նայում «ինտելիգենցիա»յի անվարժ, քրտնաթոր աշխատանքին, իսկ Աչոտ դային, որի համար ամէն տեսակ ֆիզիքական ուժութիւն խաղ ու պար է, սիրով օգնում էր դրեթէ բոլորին. նա ուեյի մօտ էր Նեստոր Կուլայեւին, որը մի անգամ դաշտային ընդհանուր աշխատանքի յետաձգեայ հանդիսին՝ պատմեց իր սիրած պատմութիւնը:

Իսկ յետոյ, ի՞նչ պատահեց յետոյ:

Պատահեց այն, ինչ մարդկային տրամաբանութեամբ եւ բնական օրէնքով պէտք է պատահէր. Նինա Բենիամինով – նան ծանրացաւ: Այս խնդրում ուրիշ էր սակայն ճամբարային տրամաբանութիւնն ու օրէնքը. պատահածը ոչ այլ ինչ էր, եթէ ոչ օրէնքի խախտում, զանցանք ու յանցանք. ճամբարը, յատկապէս կանոնց դօսին, չունէը պահած, անհամբեր սպասում էր, ինչ պիտի լինի յետոյ:

Ցետոն չուշացաւ:

Նինա Մելլէրը չէր ծածկում իր զրութիւնը, քիչ է ասել չէր ծածկում, — նա ամէն օր, որոշուած ժամին, պահակների հեղնական նայուածքների ուղեկցութեամբ մտնում էր տղամարդկանց դօսին եւ ընդգծուած, հպարտ քայլերով ղեմում էր դրասենեակը:

ԳՈՒՐԳԵՆ ՄԱՀԱՐԻ

(Շար. – 23)

ջարանակէ լուսաւորական – հանրային գործունէութիւնը իր հիմնադրած «Ցառաջ» կազմակերպութեան միջոցաւ, որ կարեւոր դեր խաղայ այդ ուղղով, որ կարեւոր դեր խաղայ այդ ուղղութեամբ:

«Ցառամուշեանէ»ի հիմնադիրները եւ ղեկավարները Մելքոմ Խան Շահին կրտսեր զաւակը՝ Մելքոմ Խան Շահին կրտսեր զաւակը՝ Մելքոմ Խան Շահին կրտսեր զաւակը՝

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Տէր եւ Տիկին Ալա Պիպէրեան եւ զաւակները եւ ընտանեկան պարագաները կը ծանուցանեն թէ հոգեհանգստեան պաշտօն կը կատարուի այս կիրակի առաւօտ Փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցին իրենց քրոջ եւ հօրաքրոջ՝

ՍՈՆԱ ՊԻՊԷՐԵԱՆԻ

մահուան քառասունքին առթիւ։

Ի վիաւորթիւն ողբացեալին յիշատակը յարգողներուն։

ՑԱԽԱԿՑՈՒԹԻՒՆ

Կապոյտ Աչի Փարիզի մասնաճիւղի վարչութիւնը իր խոր ցաւակցութիւնները կը յայտնէ մասնաճիւղի անդամուհի Տիկին Վարդիթեր Այրամճեանի ամուսնոյն Անդրանիկ Այրամճեանի ցաւալի կորբսեան առթիւ։

ՍԱՄՈՒԷԼ-ՄՈՒՐԱՏ ՎԱՐԺԱՐԱՆ

ՏՕՆԱԾԱՌ

Կիրակի 17 Դեկտ. ժամը 16·30էն սկսեալ

ԵՐԳ, ՊԱՐ, ՆՈՒԱԳ
ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ
Ընտանեկան հաճելի մթնոլորտ, ճոխ սեղան, ճոխ վիճակահանութիւն
ԿԱՂԱՆԴ ՊԱՊԱՆ
իր նուէրներով
26, Rue Troyon — SEVRES

ԿԸ ՓՆՏՌՈՒԻ

Բնիկ էլպաասի, Թոզատի շրջան, Տիկին Կլիմիա Մըսրեան (Ծննեալ Մզռեսի Մանուկեան) կը փնտռէ իր եղբօր՝ Հմայեակ Մանուկին զաւակները։ Ամենամեծ 14 տարեկան, Սիրանոյշ 5 տարեկան, կարապետ 4 տարեկան, Գէորգ 3 տարեկան. ասոնք Մալաթիա ապրած են։ Իրենց մօրը անունը Վարդուհի։ Կը փնտռէ մեծ քոյրը եղբայրները՝ Լեւոնը, 14 տարեկան, Ազատին 13 տարեկան. ասոնք իրենց քովը մեռած են։ Փերուզը 12 տարեկան մնայ Պերաճակի Խանը։ 8 տարեկան Միհրանը, 5 տարեկան Գրիգորիկը, այս երկուքը կորսուած են։ Իր հօրը անունը Օհաննէս Քէչիչեան։

Իրենց մասին լուր ունեցողներէն կը խնդրուի իմացնել հետեւեալ հասցէին.

G. M. Djnbachian
62, Ave. Sadi Carnot
Valence 26000 (France)

Կը խնդրուի արտասահմանի թերթերէն արտատպել։

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐԸ

Նախաձեռնութեամբ կապ. Աչի Շրջ. վարչութեան, մասնակցութեամբ Փարիզեան շրջանի իր մասնաճիւղերուն, Մանուկներու Օրը կը տօնուի Փարիզի մէջ

ՅՈՒՆՈՒԱՐ 28ԻՆ

Լիոնի մէջ

Նախաձեռնութեամբ կապոյտ Աչի Լիոնի մասնաճիւղին Յունուար 14ին։

Հ. Յ. Դ.

ԻՍԻ.— Հ.Յ.Դ. Զաւարեան կոմիտէի ժողովը այս հինգշաբթի, (Դեկտ. 7) ժամը 21ին ընկ. Սերոբեանի բնակարանը, 25 Աւընիւ Պուրկէն, Իսի։ Կարեւոր օրակարգ։

×

ԱԼՖՈՐՎԻԼ.— Հ. Յ. Դ. «Ս. Մինասեան» ենթակոմիտէն ընդհ. ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերները այս Ուրբաթ ժամը 21ին ծանօթ հասցէին։ Ներկայանալ անդամատետրով։ Կարեւոր օրակարգ։

ԿԱՐՄԻՐ ԽԱՉ

Տէր եւ Տիկին Ալա Սահակեան կը նուիրեն 150 Ֆր. Հայ Կարմիր Խաչի օգնութեան կայանը կեդրոնական Ջեռուցման ժամով օժտելու Ֆոնտին։

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

ԱԼՖՈՐՎԻԼ.— Հ. Յ. Դ. «Ս. Մինասեան» ենթակոմիտէն շնորհակալութեամբ ստացած է հետեւեալ նուէրները որպէս ծախքերու մասնակցութիւն, իր շրջանի ողբացեալ ընկերներուն նուիրուած հոգեհանգստեան պաշտօնին առթիւ.—

Պ. Ոսկեան Գալայճեան 200 Ֆր., Պ. Ծերան Յովհաննէսեան, Տիկ. Պերճուհի Պաղտասարեան, Տիկ. Զարուհի Քէչիչեան, Տիկ. Հրանոյշ Քիւրքճեան 100ական, Տիկ. Սուլթան Փափազեան, Տիկ. Վազգէն Ուրքաթեան, Տիկ. Սրբուհի Նշանեան, Տիկ. Մարիամ Գոստիկեան, Պ. Արտաշէս Զապունեան, Պ. Սեդրակ Խաչատուրեան 50ական, Տիկ. Զապէլ Տէր-Խաչատուրեան 30, Պ. Գրիգոր Փափազեան 20 Ֆր.։

×

Կապոյտ Աչի Փարիզի մասնաճիւղի վարչութիւնը շնորհակալութեամբ ստացած է ընկերուհիներ Գալֆայեանէ 50 Ֆր. իր ամուսնոյն ոգեկոչման առթիւ եւ Սարգիսեանէ 10 Ֆր.։

ԳՈՅԱՄԱՐՏ ՕՐԱՑՈՅՑ 1973

Հրատարակութիւն Հ. Յ. Դ. Ն. Ս.ի Մարսէյլի շրջան։ Գունաւոր կողք, 12 էջեր պատմական, աղգային ու այժմէական նիւթերով։

Գին 10 ֆրանք

Ապսպրանքներու համար դիմել իւրաքանչիւր շրջաններու մէջ Հ. Յ. Դ. Նոր Սերունդի անդամներուն կամ հետեւեալ հասցէին՝

G. HOVSEPIAN
51, Bd. des Grands Pins — 13010 Marseille — C.C.P. 254289 Marseille

Մարսէյլի շրջանին համար դիմել հետեւեալ անձերուն՝

Սէնթ Անթուան.— Ա. Շաուչեան եւ Մ. Սուքիասեան
Պալ Օստօ.— Հ. Սարգիսեան եւ Յ. Արզումանեան
Մարսէյլ Ֆաղամ.— Ա. Քէօսէեան, Ծերիկեան ղրասուն
Սէնթ Մարկրիթ.— Վ. Մուրատեան
Սէն Ժերոմ.— Խ. Ուլուսեան եւ Մ. Ատոյեան
Պօմոն.— Ղ. Տէրտէրեան եւ Յ. Տէր-Վարդանեան
Սէն Լու, Լափոմ, Վալպարէյ.— Գր. Փիլիկեան, Մ. Նազաչեան, Ս. Գինոսեան
Կարտան-Էքս.— Վ. Գամպերեան եւ Ա. Տէր-Սահակեան
Նիս.— Ս. Ալեքսանեան եւ Գ. Խոսրովեան
Ավինեոն.— Թ. Մարճոյեան

ԿՈՒԶՈՒԻ

ՍՏԻՊՈՂԱԲԱՐ

Շատ լաւ տափքիլօ մը ղրասենեակի աշխատանքի համար։

Դիմել՝
Mondotours
2, Rue de Sèze — Paris (9e)
Տիկին Գումրուեանցի

ԱԶԴ

Մոնմորանսիի եւ Անտիեիի Հանդըստեան տուներուն այցելութիւնները արտօնուած են ամէն օր, միմիայն ժամը 14էն 18 (նահանգապետութեան հրամանով)։

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ԱՂՔԱՏԱՆԱՄԻ
(կնիք)

ՇՈՒՐՋԱՊՏԱՏՈՒՄ

Ընդհանուր ժողովը 12 Դեկտ. Երեքշաբթի կէսօրէ վերջ ժամը 3ին Ապպային Տան մէջ։ Կարեւոր օրակարգ։ Կը խնդրուի բոլոր ընկերուհիներէն ներկայ ըլլալ։

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

ՀԱՆԳՍՏԵԱՆ ՏՈՒՆԵՐԸ

Նախաձեռնութեամբ կապոյտ Աչի Իսիի մասնաճիւղին այցելութիւն մը կազմակերպուած է Մոնմորանսիի եւ Անտիյիի հանգստեան տուները, Դեկտ. 10ին, կիրակի օր։

Ողջոյնը կը մեկնի Լէոն Պլում հրապարակէն, (կառ տ'Իսի) ժամը 13·30ին։

Մրճանագրուիլ Խաչուհիներուն մօտ։

Ծախքերու մասնակցութիւն 10 ֆր.

ՀՐԱՒԻՐ ԸՆԴՀ. ԺՈՂՈՎԻ

Ցրանսահայ Գրողներու Ընկերակցութեան վարչութիւնը ընդհ. ժողովի կը հրաւիրէ իր բոլոր անդամ գրողներն եւ անդամագրուիլ փափաքող գրողները, 11 Դեկտ. Երկուշաբթի երեկոյ ժամը 20ին «Ռէժան» սրճարանի վերնայարկը (Մետրօ Քաառէ), Փարիզ։

Օրակարգ.— *Բարոյական եւ նիւթական հաչուետուութիւն եւ նոր վարչութեան ընտրութիւն։*

Ներկաներուն թիւը մեծամասնութիւն կը համարուի։

IMPRIMERIE SPÉCIALE
DU JOURNAL «HARATCH»
32, RUE DE TRÉVISE — PARIS (9e)

ԸՆԹԱՑԻԿ ԱԶԴԵՐՈՒ ՍԱԿԱԳԻՆ

ՄԷԿ ԱՆԳԱՄՈՒԱՆ ՀԱՄԱՐ

ՄԱՀԱԶԴ	70 Ֆ.	*միջեւ 1/4 սիւնակ*
ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ	30 Ֆ.	*միջեւ 1/8 սիւնակ*
ՑԱԽԱԿՑՈՒԹԻՒՆ	15 Ֆ.	» » »
ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ	30 Ֆ.	» » »
ՀԱՐՍԱՆԻՔ, ՆՇԱՆՏՈՒՔ	30 Ֆ.	» » »
ԾՆՈՒՆԴ	30 Ֆ.	» » »
«ԿԸ ՓՆՏՌՈՒԻ»	15 Ֆ.	» » »
ԾԱՒՈՒ Է	25 Ֆ.	» » »

Այս գիները մէկ անգամ հրատարակելի եւ ձշգրտուած ծաւալով ազդերու համար են, չորրորդ էջը։

Կանխիկ վճարումը պարտաւորիչ է։

Առեւտրական կամ այլ ազդերու մասնաւոր պայմանագրութեան համար դիմել վարչութեան

ՆՈՒԷՐ

Տիկին Պերճուհի Սօֆեան (Ֆրեզնօ) 50 Ֆր. կը նուիրէ Հ. Յ. Դ. Նոր Սերունդին Սոնա Պիպէրեանի մահուան քառասունքին ի յիշատակ (ստանալ «Յառաջ»էն)։

ՏՕՆԱԾԱՌ
ԴՊՐՈՑԱՍԷՐԻ ՄԷՋ

Դպրոցասէր Տիկնանց Վարժարանի Տօնածառի Հանդէսը տեղի պիտի ունենայ Դեկտ. 17ին, կիրակի կէսօրէ վերջ ժամը 4ին վարժարանի նոր բակատոյց սրահին մէջ,

Նախագահութեամբ
ՍԵՐՈՎԲԷ ԱՐՔ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ
(Հայրապետական Պատուիրակ Եւրոպայի Հայոց)

Գեղարուեստական բաժին,
Ձոլս պիւֆէ
Պետիկ ՊԵՏԻԿԵԱՆ իր երգերով եւ նուագախումբով պիտի աւելցնէ փայլը այս ցերեկոյթին

ԿԸ ՓՆՏՌՈՒԻՒՆ

Յարութիւն Յովհաննէսի Մանուկեան կը փնտռէ իր եղբօրորդին՝ Մանուկ Սարգսի Գրիգորեան, ծնած 1912ին Վանի Կարճկան Քարվակ գիւղը։ Կինը՝ Կիկեան Աբջալոյա, աղջիկները՝ Էմմա եւ Լուսիա, որոնք կ'ապրին Երեւան։

Սուսաննա Մուրատեան կը փնտռէ իր քեռին՝ Լեւոն Ախոյի Ներսիսեան, ծնած 1915ին։ Իր տղան Թաֆիկը եւ աղջիկը Էմման, ինչպէս նաեւ Սաթենիկ, Մամիկոն եւ Շուշան ողջ են եւ Երեւան կ'ապրին։

Հայաստանի Կոտայքի շրջանի Բաչ գիւղէն Յովակ Մնացականեան, կը փնտռէ իր եղբայրները Վարդան, Արտաշէս, Արթամ Շահումեաններ, որոնց հետքը կորսընգուցեր է Բ. Համաշխարհային պատերազմին։

Մանուչակ Մկրտիչի Զաքարեան կը փնտռէ իր եղբայրը, Սերոբ Մկրտիչի Զաքարեան, ծնած 1921ին, Ապարանի Ղոյթուր գիւղը։ Իր հետքը կորսնցուցած են Բ. աշխարհամարտին։

Որեւէ տեղեկութիւն փոխանցել հետեւեալ հասցէին.

Mr. HOUNANIAN K.
39, Rue des Petites Maries
13001 — Marseille

Կը խնդրուի արտասահմանի թերթերէն արտատպել։

ՀՄՐԱՆ ԱՐՋԱԿՈՒՐԻ

Ծնունդի եւ Ամանորի առթիւ կազմակերպուած է սովորական ճամբորդութիւնը Աւստրիա, Ս. Եոհան։ Մեկնում Դեկտեմբեր 23, կառ տը Լ'Ինթէն, վերադարձ Յունուար 3ին։

Ս. Եոհան կը գտնուի Սալցպուրկի շրջանը, պատսպարուած հովերէն, մչուշէն։ Բնակութիւն կոտրնըր հիրշ պանդոկը, հանգստաւէտ սենեակներ, տաք եւ պաղ ջուր, հեռաձայն, կեդրոնական ջեռուցում, խնամուած ճաշ։

Սահմանափակ տեղեր։

Մասնակցութիւն 545 Ֆր.
Կանխավճար 95 Ֆր., մնացեալը Դեկտեմբեր 8էն առաջ։

RELATIONS TOURISTIQUES EDUCATIVES
12 Allée Leonide — Le Perreux
Tél. 324-14-96
Association sans but lucratif, régie par la loi du 1-7-1901
ԷՏ. ՃԷՋԻՐԵԱՆ
Ընդհ. Պատուիրակ

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Հայ Կարմիր Խաչի տարեկան ցերեկոյթ – պարահանդէսը 1973 Մարտ 11։

×

Կապոյտ Աչի Պօմոնի մասնաճիւղի բրնկենդանի ճաշը։ Մանրամասնութիւնները յետագային։

×

Հայ Արիներու Միութեան տարեկան ցերեկոյթը կիրակի Մարտ 4ին կէսօրէ վերջ ժամը 14·30ին Սալ տը լա Շիմի։

×

Կապ. Աչի Սեւրանի մասնաճիւղի տոնածառը Յունուար 14ին։

ՈՒՐԲԱԹ
8
ԴԵԿՏԵՄԲԵՐ
VENDREDI
8 DECEMBRE
1972

Le Numéro 0,70 F.

ՅԱՌԱՋԱԴ

ՕՐԱԹԵՐԹ
ՀԻՄՆԱԴԻՐ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

HARATCH

Le Seul Quotidien Arménien en Europe Occidentale
Directrice : Arpik Missakian
32, rue de Trévise Paris 9

— Tél. : 770-86-60 —
C. C. P. Paris 15069-82

Fondé en 1922
R. C. Seine 57 A 2731

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա	Տար. 120 ֆր.	Վեցամսեայ	65 ֆր.
Արտասահման	Տար. 135 ֆր.	Հատը	0,70 ֆր.

48րդ ՏԱՐԻ — ԹԻՒ 12·584

Fondateur : SCHAVARCH MISSAKIAN

48e ANNÉE — N° 12.584

ԹՕԹԱՓԵ՛ՆՔ ՄԵԾԱՄՏՈՒԹԻՒՆԸ

—o—

Անպայման խմբագիրը ըլլալու կամ քերթի մը վարչական սեղանին առջեւ նստելու պէտք չունիք, տեսնելու համար համայնապատկերը ներքրդասիրութեան տեսակներու :

Այնքա՞ն ընդհանրացած է երեւոյթը որ պէտք չենք տեսներ օրինակներով խօսելու :

Սակայն անհրաժեշտ կը նկատենք պարզել կարգ մը կէտեր, խնդրելով որ չհաղրդուողները յարգանքի պակաս կամ դիտակցական թերագնահատում չվերագրեն հայ թերթերուն՝ երբ անոնք յապաւումներ կը կատարեն թղթակցութիւններու մէջ, ածականներ կամ մակդիրներ կը ջնջեն ու նոյնիսկ ծանուցումներ կ'ենթարկեն որոշ փոփոխութիւններու :

«Պարզ խօսիմք եւ ոչ ամաչեմք» : — Քանի մը օր առաջ յայտարարութիւն մը ընդունեցինք թերթին... «աննախընթաց» ձեռնարկի մը առիթով : Կարեւոր չէ դիտնալ թէ ո՛վ ըսաւ : Կարեւոր է ըսել առանց բառերը ծամծմելու՝ թէ ամէնէն ընթացիկ (չսպասելու համար սովորական) ձեռնարկներէն մէկուն մասին գրի առնուած ծանուցում մըն էր :

Յայտարարութիւնը տպագրութեան տրուղ միութիւնը գիտէ՞ր «աննախընթաց» բառին իմաստը, — չենք գիտեր : Իրաւունք չենք ունար չդիտութիւն վերագրելու : Մղուած ենք ընդհակառակն հաւատալու՝ թէ գիտէ՛ր բառին իմաստը, սակայն... համոզուա՞ծ էր թէ այս նոր ու «աննախընթաց» ձեռնարկը նմանութեան որեւէ եղր չունէր ուրիշ «աննախընթաց»ներու հետ :

Փափկանկատօրէն գիտենք տուիք թէ լաւ պիտի ըլլար աւելի համեստ վերապիր մը գործածել, եւ կամ — աւելի լաւ — բնաւ վերապիր չգործածել :

Թէ ինչ եղաւ հակազդեցութիւնը մեր առաջարկին՝ հետաքրքրական չէ : Սակայն բնորոշիչ ու յատկանշական է այն մտայնութիւնը, որուն կը ծառայեն թերթերու մէջ ծանուցում տուող մարդիկ :

— «Պիտի վճարեմ այս յայտարարութեան համար. ինչո՞ւ կ'ուզեմ որ փոփոխութիւն կատարուի. ի վերջոյ թերթին խմբագրութիւնը եւ վարչութիւնը չեն որ կատաղ զայն»...

Այս ձեւի առարկութիւն մը մօտաւորապէս կը նշանակէ : — Երբ եղածը ծանուցում է կամ յայտարարութիւն, մէկն ու միւսը իրենց ուզածը կրնան գրել՝ իրենց ուզած չափով ու ձեւով :

Հանդիպած ենք արդարեւ չատերու, որոնք... տրամաբանական դատած են այս անկախութիւնը : Չէ՞ որ Ամերիկացին կամ օտարը կը քաջալերէ առհասարակ այս ձեւը. նոյնիսկ... «իրաւունք» կը դասնի յաճախորդին կամքը :

Այդպէս չէ սակայն հայ թերթերու պարագան, — այդ չէ դատումի հիմն ու ձեւակերպը՝ գիտակից որեւէ թերթի համար : Ու պիտի պարզենք թէ ինչո՛ւ չէ :

×

«Աննախընթաց»ի օրինակը մէկն է միայն չատերէն...

Փորձա՞ծ էք որեւէ ձեռնարկէ եւ որեւէ ճառէ վերջ, որեւէ անձնական ներկայութենէ եւ առուղումէ յետոյ բաղդատել թերթերու մէջ լոյս տեսնող ծանուցումներն ու թղթակցութիւնները՝ վերջ գտած հանդիսի որակին ու տարողութեան հետ, հրատարակուած դրքի արժէքին հետ, տարփողուած առեւնախօսութեան հետ, ներկայացուած գրչի կամ արուեստի գործի իսկական կշիռին հետ, եւ վերջապէս՝ գովաբանութեան ու չողչողուն յայտարարութեանց նիւթ կազմած ո՛րեւէ անձի, ո՛րեւէ դէպքի, ո՛րեւէ անցուդարձի, ո՛րեւէ իրագործումի հետ...

Նոյնիսկ թուանշական տեղեկատուութիւնները տուելու առիթ ունեցա՞ծ էք...

Հարցումները կը թողունք կախման կէտերուն առջեւ, այն խոր համոզումով որ ազնմտութիւնը լուութեան մէջ միայն գերծ կրնայ մնալ արատէն աղտակներէ, — մարդկային տկարութիւններէ եւ նկատումներէ :

«Շէեղ»ներու, «հմուտ»ներու, «տագանդաւոր»ներու, «հիանալի»ներու, «մեծարժէք»ներու, «համբաւաւոր»ներու ու տակաւին այլ տեսակի հրապուրիչ եւ կախարդական վերապիրներու տեղատարափով մը ողողուած են մեր թերթերը : — Այնքան առատաձեռնօրէ՞ն կը բաշխուին անոնք, որ իսկական արժէքներն ու ծառայութիւնները որակելու համար բառ դանելու դժուարութեան կը մատնուինք :

Չերկարենք :

Հայ Մամուլը հանրային բեմ է : Ծանօթ ու բազմատեսակ իր պարտականութիւններուն առընթեր՝ բարոյական պարտաւորութիւնը ունի նաեւ իրմո՛վ, իր կեցուածքով ու վերաբերումով յարգելու սկզբունքներ, արժէքի չափանիշներ, ընկերային պատշաճութիւններ, աղգային աւանդութիւններ եւ իմացումներ :

Իրենց վարձակալներու նիստուկացին մէջ «մաղ փնտռող» տանուտէրներ ունինք ամէն տեղ. մարդի՛կ՝ որոնք մանկիկին եւ մանուկին անմեղ աղմուկն իսկ աններելի կը նկատեն ու կը մերժեն բնակութեան իրաւունք ճանչնալ երիտասարդ զոյգերու : Այդ նոյն տանուտէրները կը պարմանա՞ն սակայն, որ իրենց չքե՛ղ եւ աննախընթաց յայտարարութիւններուն մէջ փոփոխութիւն կ'առաջարկեն հայ թերթեր...

Ցայտարարութիւններ եւ ծանուցում — ներ վհան չեն, որպէսզի վճարողը կարենայ պաշտպանուիլ խմբագրական-վարչական միջամտութիւններու դէմ : Պէտք չէ կարծէ որ մարդիկ բարեւի կը կենան մի՛շտ դրամին առջեւ ու յանձնառու կ'ըլլան հանրային նուաստացումներու : Մենք յաճախ կը մտածենք նոյնիսկ, որ արդե՞օք ժամանակը եկած չէ մանուած դասընթացք մը հաստատելու չափի զգացումի մասին՝ որպէսզի մարդիկ փորձեն իրենց իսկական կշիռով երեւիլ, չնմանիլ կիներու այն դասին՝ որ ամրան օթին կիներու աչ դասին՝ որ ամրան օթին իսկ մուշտակ կ'ուզէ կրել ուսերուն վրայ...

«ՀԱՅՐԵՆԻՔ»

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ԱՄԵՐԻԿԱՑԻՔ ՎԵՐՋԻՆ ԱՆԳԱՄ ԼՈՒԻՍԻՆ Կ'ԵՐԹԱՆ

—o—

Ափոլլօ–17ի արձակումը, որ այս չարքին վերջինն է, յաջողութեամբ կատարուեցաւ Քէփ Քենըտիէն :

Արձակումը, որ այլեւս պարզ գործողութեան մը վերածուած է, փոքր «մէջադէպ» մը ունեցաւ, երբ էլեկտրոնիք հրահանգիչներէն մէկը «մոռցաւ» իր հրա-

հանգը փոխանցել : Ասիկա փոքր յապաղում մը ստեղծեց :

Ափոլլօ–17ին մէջ կը գտնուին երեք աստղանաւորդներ՝ Ա. Սերնան, Ռ. Իվանս եւ Հ. Շմիթ :

Այեքանաւին ճամբորդութիւնը (երկիր–Լուսին երթուդարձ) պիտի տեւէ 12 օր : Նաղայի պիտանականներու ծրագիրն է նոր ժայռաբեկորներ ձեռք ձգել Լուսնի մէկ այնպիսի շրջանէն, որ իրենց համար «առեղծուածային» կը թուի ըլլալ : Գիտնականները նոր ժայռաբեկորներու քան – նութեամբ կ'ուզեն պարզել այս պաղ մոլորակին կազմութեան առեւանները : Մոլորակը 4,5 միլիառ տարուան «պատմութիւն» ունի, ըստ մասնագէտներու :

Սերնան եւ Շմիթ 75 ժամ պիտի մնան Լուսնի վրայ, երկու լեռներու միջեւ տարածուող բարձրութեան մը մէջ : Կը ծրագրեն նոր մրցանիշ մը հաստատել 23 մղոն քշելով իրենց «ինքնաչարժը» : Իրենց ընկերը՝ Իվանս վեց օր չարունակ մոլորակին չուրջ պիտի դառնայ նոր մեքենաներով պիտական քննութիւն կատարելով :

Ափոլլօ–17ի ծախքը 450 միլիոն տոլար կը հաշուեն, իսկ Ափոլլոյի ընդհանուր ծրագրի ծախքը՝ այսինքն առաջին արձակումէն մինչեւ այս մէկուինը՝ 25 միլիառ տոլար :

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

Վիլթնամի չուրջ համաձայնութիւնը անմիջական կը նկատուէր Հինգշաբթի առաւօտ : Օտոռ նոյնիսկ լաւատեղեակ աղբիւրէ կը հաստատէր թէ ատորպրութիւնը կը կատարուի յետագայ ժամերուն : Քիսինճէր ատիպլոմական ժամադրութիւն մը ուղած էր Ֆրանսայի Արտաքին Նախարարէն, որ քանի մը ժամուան համար Պրիւսէլէն Փարիզ կուգար :

Զիլիի նախագահը Սալվատոր Այեն– տէ Մոսկուա հասած է եւ ընդունուած Ալեքսիս Կոսիկինի կողմէ : Պիտի տեսնուի Լէոնիտ Բրեժնեւի հետ :

ՓՐԱԿԱՅԻ համալսարանի ոսկի չքանչանը պաշտօնապէս չնորհուած է Զեխոսլովաքիոյ խորհրդային բանակին :

ՋՈՒԻՅԵՐԻՈՅ նախագահ ընտրուեցաւ յառաջիկայ տարուան համար, Ռոժէ Պոնվէն : Ջուիցերիա ամէն տարի նոր նախագահ կ'ունենայ :

ԻՏԱԼԻՈՅ թղթատարական պաշտօնեաները կրկին գործադուլի մէջ են եւ միայն Հռոմի մէջ երեքուկէս թոն պարզ նամակ եւ 15 հազար յանձնարարեալ նամակ կը մնան դրասենեակներու եւ Թերմինի կայարանին մէջ :

ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ նախկին նախագահ՝ Թրումըն 88 տարեկան, ծանր վիճակի մէջ հիւանդանոց փոխադրուած է առջի օր :

ԴԱՇՆԱԿՑԱՅԻՆ ԳԵՐՄԱՆԻՈՅ նորընտիր ժողովը (Պունտըսթակ) առաջին անգամ ըլլալով կիներ նախագահ մը կ'ունենայ, յանձին Տիկին Ռէնկէլի :

ՆԻՒ ԵՈՐՔԻ Ազգաժողովին մէջ փեքինի եւ Մոսկուայի ներկայացուցիչները պիրար ամբաստանած են Մերճաւոր Արեւելքի հարցին առընչութեամբ : Ջինաստան կը յայտնէ թէ եթէ Իսրայէլ զլուխ կը բռնէ, պատճառն այն է որ Միացեալ Նահանգներն ու Խորհ. Միութիւն զօրավիգ կը կենան իրեն, մինչ Մոսկուա կը պատասխանէ թէ Ջինաստան ոչ մէկ օժանդակութիւն կը բերէ արաբ երկիրներուն բաղդատմամբ Խորհ. Միութեան եւ թէ անկորելի չէ որ Տիկին Կոլտա Մէյըր Ազգաժողովին ներկայանայ չնորհակալութիւն յայտնելու համար Փեքինի...

ՀԱՅԱՍՏԱՆ

ՀՈՒԻՓՍԻՄԷ ՊՕՂՈՍԵԱՆԻ ՄԱՀԸ

Նոյեմբեր 26ին մեռած է դերապետուհի Հուիփսիմէ Պօղոսեան :

Դերապետուհին ծնած էր Թիֆլիս, 1899 Ապրիլ 24ին : Անոր հայրը ուսուցիչներէն մէկն է եղած Ցովհ. Թումանեանի :

Հուիփսիմէ Պօղոսեանի առաջին բեմադրութիւնները եղած են մամուլի մէջ 1919ին : Անոնք իրենց պատկերներու թարմութեամբ ուշագրութիւն գրաւեցին :

1930ին լոյս տեսաւ անոր բանաստեղծութիւններու առաջին գիրքը : Ապա լոյս տեսան «Մեռաքս», «Մեքենաների երգը», «Մայրական», «Որդիների հետ», «Բերկրանք», «Մեր փողոցը», «Հաւատարմութիւն» եւ այլ հատորներ :

Վերջին տարիներուն բանաստեղծուհին կը պատրաստէր իր յուշերը, որոնք կէս մնացին :

ԹՈՒՐՔԻԱ

ՅԱՒԵՐԺԱՑՆԵԼ ՊԱՇԱՐՄԱՆ ՎԻՃԱԿԸ

Թուրքիոյ վիճակը միշտ խառնակ է եւ կը թուի թէ այլեւս անտարբերութիւն կը տիրէ ժողովուրդին մէջ ալ, այն բացառիկ պայմաններուն նկատմամբ, որ կը տիրեն երկրին մէջ : Կառավարութիւնը կը պատրաստուի անգամ մը եւս վերաքննելու 1961ի Սահմանադրութիւնը, որ արդէն բարեփոխուած էր անցեալ տարի : Այս նոր բարեփոխումը կը նախատեսէ Պետութեան Ապահովութեան տեսան մը, որ կազմուած ըլլայ զինուորականներէ եւ քաղաքացիներէ : Անոնք պիտի չարունակեն ներկայ դատերը : Կառավարութիւնը կ'ուզէ նաեւ յօդուած մը աւելցնել ըստ որուն 15 օրուան բարձրանայ այն պահմանաժամը, որ ներկայիս ութ օր է կանխաւ կատարուղ արդելափակումներու համար :

Այս բոլորը կը ձգտին անչուշտ յաւերժացնելու պաշարման վիճակը եւ համապատասխան չեն Եւրոպայի Խորհուրդի Կանոնադրին (Թուրքիա անդամ է) ինչպէս նաեւ Մարդկային Իրաւանց Եւրոպական պայմանագրութեան, զոր տորա – զրած է : Կը հակասեն նաեւ Թրքական Սահմանադրական Առեանի մէկ չատ կարեւոր որոշումին հետ : Արդարեւ, այս Առեանը վերջերս ջնջեց 1402 թիւ օրէնքին երկու տրամադրութիւնները, որոնք պաշարման վիճակին կը վերաբերէին : Ասոնցմէ մէկը իրաւունք կուտար պաշարման վիճակի հրամանատարին մինչեւ 30 օր երկարաձգել կանխաւ արդելափակման ընդհանը :

Այս բոլորին առթիւ Մոնտի աշխատակիցը կը գրէ.— «Այս օրինակները ցոյց կուտան թէ Թուրք պինուորական արդարութիւնը որեւէ կարեւորութիւն չի տար մարդու տարրական իրաւունքներուն «վերնատակար դաղափարական հոսանքներու» դէմ իր կատաղի հետապնդումին մէջ : Պէտք է նաեւ նշել չարչարանքի բազմաթիւ պարագաներ որոնց ամէն մարդ տեղեակ է Թուրքիոյ մէջ : Չարչարանքի չէնքերուն հասցէներն ալ ծանօթ են : Մէկը կը գտնուի Պոլսոյ ասիական ափը՝ էմէրկէնտի ճամուէսի Թուրքարպաչը Սոքաք թիւ 8» :

Կը թուի թէ Մոնտի աշխատակիցը չատ ծանօթ չէ Թուրքերուն, քանի որ վրդոված կը թուի թէ անոնք չեն յարգեր մարդկային տարրական իրաւունքները : Բայց եթէ հասցէ կ'ուզէ, կարելի է իրեն տալ չատ մը հասցէներ, քիչ մը աւելի հին, կեդրոնական բանտէն մինչեւ Տէր–Զօր...

ԽՈՐՀ. ՄԻՈՒԹԵԱՆ ԿԱԶՄՈՒԹԵԱՆ 50 ԱՄԵԱԿԸ

Դ. եւ վերջին մաս

Խորհ. Միութեան այսպէս կոչուած «պետական կառուցուածք»ին ընդլայնումը առաջին ճառագայթները նետեց ոչ միայն Ռուսիոյ, այլ նաեւ Արեւելեան Եւրոպայի վրայ։ Այսպէս, 1925 Մայիսին Խորհ. Միութեան խորհուրդներու (սովետներու) Յրդ համագումարը Միութեան անդամ կը հռչակէ Թուրքմէնն եւ Ուզբէկ խորհրդային Հանրապետութիւնները, որոնք կազմուած էին Թուրքեստանի ինքնավար Սովետական Հանրապետութենէն, Բուխարայի եւ Խորեզմի ժողովրդական Հանրապետութիւններէն։ Հինգ տարի ետք նոր բաժանումով (Ուզբէկիստանէն) կը կազմուի Տաճիկ Հանրապետութիւնը, որ Միութեան անդամ կը դառնայ 1931ին։ 1936ին միութենական Հանրապետութիւններ կը դառնան Ղազախ եւ Կիրղիզ ինքնավար Հանրապետութիւնները։ Այդ թուականին է, որ Անդրկովկասեան Ֆեդերացիայի լուծումով Վրաստան, Ազրբէյճան եւ Հայաստան, իրրեւ առանձին Հանրապետութիւններ, մաս կը կազմեն Խորհ. Միութեան։ Աւելորդ է կրկին յիշեցնել, թէ ըստ խորհրդային պատմագրութեան, բոլորն ալ Խորհ. Միութեան անդամ կը դառնան համաձայն իրենց փափաքին՝ այսինքն՝ «նրանց կամքի յայտնութեամբ»։

Ճշդենք, որ Խորհ. Միութեան կազմի մէջ մտնող նոր Հանրապետութիւնները հաստատուած էին համաձայն Մոսկուայի մշակած պայմաններուն։ Այսպէս, անոնք պէտք է ներկայացնէին հողային եւ լեզուական միասնականութիւն մը, ինչպէս նաեւ տնտեսական, ենթակային նուազագոյնը մէկ միլիոն բնակչութիւն եւ իրենց սահմաններէն ներսը ապրող մէկը սահմանակից պետութեան հետ չունենար տարածքային հակասութիւններ։ Այս պայմաններուն տակ բազմաթիւ ազգային հանրապետութիւններ չէին ունենար տարածքային Հանրապետութիւն դառնալու։

Խորհ. Միութեան սահմաններու ընդլայնումը՝ հողային նոր գրաւումներու ճամբով, կ'որակուի «այդ տերիտորիա – ներու ազատագրում», իսկ անոնց կցումը իրեն՝ «ժողովրդի բաղձանք»ի իրականացում։

1939 Օգոստոս 23ին Մոսկուայի մէջ կը կնքուի գերմանեւխորհրդային ոչ – յարձակման դաշինքը՝ Ֆոն Ռիպպենթրոփ եւ Մոլոթովի կողմէ։

Նացիական Գերմանիա՝ ապահովելէ ետք Խորհ. Ռուսիոյ բարեկամութիւնը, Սեպտեմբեր 1ին կը յարձակի Լեհաստանի վրայ, եւ հակառակ լեհ ուժերու բուռն դիմադրութեան, երկու շաբթուան մէջ կը հասնի Վարշաւա։ Լեհ ժողովուրդի ամէնէն օրհասական պահուն, նացիական Գերմանիոյ Լեհաստանի վրայ կատարած յարձակումէն 15 օր ետք, Մոսկուա Վարշաւայի եւ իր միջեւ կնքուած բոլոր դաշնագիրները անվաւեր հռչակելով, իր կարգին, կը խուժէ Լեհաստան Սեպտեմբեր 17ին։ Լեհ ուժերը զօրաւոր ընդդիմութիւն կը ցուցնեն, սակայն կը պարտուին վերջնապէս երկու մեծ պետութիւններու հարուածներուն տակ։ Գրաւուած հողերը 1939 Հոկտեմբեր 31ին կը կցուին Խորհրդային Ուկրանիոյ եւ Բիլոռուսիոյ, Խորհ. Միութեան Գերագոյն Խորհուրդի 5րդ արտակարգ նիստի որոշումով։

Արեւելեան Լեհաստանի գրաւումէն ետք Մոսկուա 1939 Նոյեմբեր 28ին անվաւեր կը հռչակէ Ֆինլանտայի եւ իր միջեւ կնքուած ոչ–յարձակման դաշինքը, իսկ Նոյեմբեր 29ին՝ կը խզէ իր դիւանագիտական յարաբերութիւնները Հելսինքիի հետ՝ յարձակելով Ֆինլանտայի վրայ։

Ֆին ժողովուրդի հերոսական դիմադրութիւնը ի դերեւ կը հանէ Մոսկուայի ծրագիրը՝ գրաւել հիւսիսի այս փոքր երկիրը։ Ի դէպ, Դեկտեմբեր 14ին, Ֆինլանտոյ վիմումին վրայ Խորհ. Միութիւն իր յարձակումին համար կը վտարուի Ազգաժողովէն։

Այս իրագործութիւնները հետեւեալ ձեւով կը մեկնաբանուին խորհրդային պատմագրութեան կողմէ.— «1940 թուականի Մայիսին, ՍՍՀՄի եւ Ֆինլանտայի միջեւ կնքուած պայմանագրով, ՍՍՀՄին անցան Կարելական Աւտոնոմ Հանրապետութեան կազմին մէջ գտնուող շրջանները։ Այստեղ ստեղծուեց իմֆնուրոյն Կարելո–Ֆիննական Սովետական Սոցիալիստական Հանրապետութիւն, որ 1956 թուականին ներքին վերակազմուեց Կարելական Աւտոնոմ ՍՍՀի եւ մտաւ ՌՍՖՍՀի կազմի մէջ» (գոցենա Շ. Պետրոսեան, «Սով. Հայաստան», 1971 Դեկտեմբեր 31)։

Նկատելի է, որ չրջանը 1940ին կը կոչուէր «Կարելո–Ֆիննական Սովետական Սոցիալիստական Հանրապետութիւն», մինչդեռ 1956ին ան կը վերածուի «աւտոնոմ» շրջանի, կը կորսնցնէ «Ֆիննական» անունը եւ կը կցուի՝ Խորհ. Ռուսաստանի Հանրապետութեան։

Ֆին անունին չնչումը նպատակ ունէր, բնականաբար, շրջանը միանգամ ընդմիշտ ռուսական հող նկատել։

Արեւելեան Լեհաստանի գրաւումէն ետք կարգը եկած էր Պալթեան երեք փոքր երկիրներուն։ Մոսկուա ի դէպ «նուրբ» ռազմավարութիւն մը։ Խորհ. Միութեան Արտաքին նախարարը՝ Մոլոթով Մոսկուա կը հրաւիրէ Էստոնիոյ Արտաքին նախարարը, որու կը պարզուի «իրերօգնութեան» դաշինք մը Սեպտեմբեր 28ին։ Նոյնա – նման դաշինքներ կը կնքուին Լատուիոյ (Հոկտեմբեր 5) եւ Լիթուանիոյ (Հոկտեմբեր 10) հետ։ Ըստ այդ «իրերօգնութեան» դաշինքներուն Պալթեան երեք Հանրապետութիւնները կը պարտաւորէին ուժին տակը տարուան ժամանակամիջոցի մը համար թոյլ տալ, որ խորհրդային ցամաքային, օդային եւ ծովային կայանները հաստատուին իրենց երկիրներուն մէջ։ Իւրաքանչիւր Հանրապետութիւն կը պարտաւորուէր ընդունիլ 30·000նոց կարմիր բանակ մը։ Խորհ. Միութիւն փոխադարձաբար կը խոստանար յարգել Պալթեան երկիրներու քաղաքական համակարգութիւնը, ներքին կարգ ու սարքը եւ պաշտպանութեան համար անոնց տրամադրել զէնք եւ ռազմամթերք։ Պարզ է, որ Պալթեան երկիրները երբեք չստացան այդ զէնքերը։

1940 Յունիս 14ին, Մոսկուա վերջնագիր մը կը ներկայացնէ Լիթուանիոյ՝ ոչ միայն ընդդիմութիւն ցոյց տալ խորհրդային նորանոր ուժերու մուտքին։ Երկրորդ պայմանն այն էր, որ «բարեկամ» կառավարութիւն մը հաստատուի Լիթուանիոյ մէջ։ Յունիս 15ին խորհրդային բանակը կը խուժէ Լիթուանիա։ Յունիս 16 եւ 17ին Մոսկուա յար եւ նման պահանջներ կը ներկայացնէ Էստոնիոյ եւ Լատուիոյ։

Երեք Հանրապետութիւններու նոր կառավարութիւնները ձեւական բնոյթ կը ստանան։ Օրինակ, Էստոնիոյ մէջ Անդրէյ Վիշինսկին էր, որ փաստօրէն կը կառավարէր երկիրը։ Մամուլ, ձայնասփիւռ եւ տեղեկատուութեան այլ միջոցները խորհրդային հակակչռի տակ կը մտնեն Պալթեան երկիրներու մէջ։

1940 Յուլիս 14ին եւ 15ին «ժողովրդական» ընտրութիւններ կը կազմակերպուին Պալթեան երեք Հանրապետութիւններու մէջ, ուր թեկնածուներու միայն մէկ ցանկ կը ներկայացուի խորհրդարանական ընտրութիւններուն համար։ Ցանկերը կը պատկանէին «Աշխատաւորներու Միութեան» (իմա՛ համայնավար)։

Աւելորդ է խօսիլ ընտրութիւններու արդիւնքներու մասին, քանի որ խորհրդային բանակը արդէն իսկ զրաւման տակ առած էր երեք փոքր Հանրապետութիւնները։ Կը մտածենք, թէ խորհրդային պատմագիրները այնքան միամիտ չեն հաւատալու, թէ հզօր բանակի մը ներկայութեան, փոքր ժողովուրդներ հնարաւորութիւն կ'ունենան ազատ արտայայտելու իրենց ձայները։

Այսուհանդերձ խորհրդային պատմագրութիւնը կ'արձանագրէ, թէ «1940 թուականի Օգոստոսի սկիզբները (ճշդրիտ թուականը՝ 3–6) ՍՍՀՄ Գերագոյն Սովետի առաջին գումարման 7րդ սեսիան, լսելով Լաթուիական, Լիթուական եւ Էստոնական ՍՍՀների լիազօրաժողովների յայտարարութիւնները, օրէնք ընդունեց այդ Հանրապետութիւնները ՍՍՀՄի մէջ ընդունելու մասին»։ (Դր – գենա Շ. Պետրոսեան, «Սով. Հայաստան», 1971 Դեկտեմբեր 31)։

ՀԱՅԵՐՈՒ ՄԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ՅԱՏԿԱՆԻՇՆԵՐԸ

—0—

ԽՄԲ.— «Պատմա–բանասիրական Հանդէս»ի վերջին (3) թիւին մէջ Լ. Բարսեղեան շահեկան ուսումնասիրութիւն մը ունի «Հայերի էթնիկական մարդաբանու – թեան ուսումնասիրութեան արդի վիճակի» մասին։ Կը ներկայացնենք առանձին գլուխ մը արեւմտահայերէնով։

Ամէն ազգ դունապեղ ձեւով պատկերացուցած է իր դիւցազները՝ զանոնք ներկայացնելով դեղեցիկ եւ առնական։ Սակայն հերոսներու նկարագրութեան ժամանակ երբեք անոնց չեն վերագրուած այնպիսի յատկանիշներ, որոնք ընդհանրապէս խորթ են եղած տուեալ ազգին համար։

Միջնադարու հայ պատմիչները, զուտ աններն եւ քնարերգուներն են, որ առաջին անգամ ըլլալով նկարագրած են Հա–

ՍՍՀՄի մէջ ընդունելու մասին»։ (Դր – գենա Շ. Պետրոսեան, «Սով. Հայաստան», 1971 Դեկտեմբեր 31)։

×

Խորհ. Միութիւնը 1952 Նոյեմբեր 14ին Ազգաժողովին կը ներկայացնէ իր բանաձեւումը՝ «յարձակում» տարազին մասին։ Ըստ այդ բանաձեւումին երկիր մը «յարձակող» կը նկատուի «նոյնիսկ երբ առանց պատերազմ հռչակելու կը խուժէ օտար Պետութեան մը սահմաններէն ներս», երբ անոր «ցամաքային, ծովային կամ օդային ուժերը ցամաքահանում կատարած կամ սահմանէն ներս մուտք գործած են, առանց այդ Պետութեան կառավարութեան արտօնութեան» եւ կամ՝ երբ «բռնաբարած են տրուած արտօնութեան պայմանները»։

Խորհրդային բանաձեւը կը չեչտէր, թէ «ո՛չ մէկ քաղաքական, ռազմավարական կամ տնտեսական նկատում կրնայ արդարացնել յարձակումը այն ձեւով, որ սահմանուած է վերոյիշեալ պարբերութեան մէջ»։ Նկատումներուն մէջ կար նաեւ հետեւեալը.— «Ուրիշ Պետութեան մը մէջ հաստատել քաղաքական, տնտեսական կամ ընկերային որոշ վարչակարգ մը»։

Խորհ. Միութեան կազմութեան բոլոր փուլերը ա՛յս կամ այն սահմանումին մէջ կը մտնեն։

Կը հետեւի, ուրեմն, թէ նոյնինքն խորհրդային բանաձեւումով, Խորհ. Միութեան կազմութիւնը ոչ թէ կամաւոր միութիւն մըն է եղած ժողովուրդներու, այլ՝ պինու ուժով պարտադիր զոյավիճակ մը։

Ժ. ՄԻՐԻՃԵԱՆ

Ծաղկած Փշալարեր

(ՎԻՊԵՐԳ)

Ինչ խօսք, եղան եւ բամբասողներ, չբախինդ մարդիկ երկու սեռէից էլ, բայց աւելի մեծ էր թիւն այն կալանաւորների եւ կալանաւորուհիների, որոնք պատրաստ էին կնքահայրեր ու կնքամայրեր դառնալ մարդկային սիրոյ, ողբերգական պայմաններում չունչ ու հոգի առած ապագայ նորածինի, եթէ ամէն ինչ բարեյաջող ընթանար...

Աւա՛ղ, բազմաթիւ անձնուրաց ու անձնուէր կնքահայրերն ու կնքամայրերը բախտ չունեցան տեսնելու իրենց սանիկին։ Ինչ կնքահայր, երբ հարազատ հայրն անգամ չկարողացաւ տեսնել իր նորածին որդուն... Մի անձրեւոտ օր, Նինա Միլլէրին հրամայուեց հաւաքել իրերը։ Սառնարիւն եւ հաւասարակշիռ Նեստոր Կուլայեւը կորցրեց իրեն։ Նրան յաջողուեց մի քիչ փող, խոպի ճարպ եւ մի քանի կտոր չաքար խօթել Նինա Միլլէրի պրպանը։ Հակոզութեան տակ ճամբարից հանեցին եւ տարան Նինա Միլլէրին։ Գրաւենեակում տիրում էր լռութիւն։ Ոչ ոք չէր աշխատում։ Կուլայեւը, նստած էր տեղում, ծխում էր եւ մէկ–մէկ կակղուն էր մաքրում, յուզմունքը ծածկելու համար երեւի։ Ներս մտաւ պահակը։ Դռնեբի մօտ նա կանգնեց, չվիտես ինչու խոր չունչ քաշեց եւ նայեց բոլորին, ուշադիր ու զգօն։

— Կուլայեւ, — արտասանեց նա։

— Ես եմ։ — Ոտքի կանգնեց Կուլայեւը։

— Գնացինք, — պահակը մի կողմ քաշուեց, որպէսզի կանչուածն առաջ ընկնի։

— Ո՞ւր, — այնուամենայնիւ համարձակուեց հարցնել նա։

— Ուր հրամայուած է։

— Իրերը... հաւաքե՞լ։

— Առանց իրերի։

Կուլայեւ ընկաւ պատժախուց։

Այո, հիմա չատ բան պարզ է, հիմա ճամբարային բնակիչները չատ լաւ դիտեն, թէ ի՞նչ կարող է պատահել նման դէպքերում։ Անցան, այո, անցան խաւար ժամանակները...

Կուլայեւի դէպքին յաջորդեցին եւս մի քանի դէպքեր։ «Այրուեց» զորկիական բեխերով Մաւրինը, բաղնիքի վարիչ Բադիրբեւկովը, սափրիչ Յուլուկիձէն, խանութի վարիչ Բոչը, զրասենեակային եւ ուրիշ պատասխանատու աշխատողների բարաքի աւազ՝ Շարումը եւ... եւ ուրիշներ։ Պատահեց եւ այնպէս, որ ճամբարից փոխադրուեց նաեւ պատճառաւոր ըրիգադավարուհի Լիզա Զաւուչկինկօն, մի առոյգ եւ յաղթահասակ Ուկրաինուհի, բայց... բայց մէջտեղ ոչ մի կալանաւոր չայրուեց։ Երբ պետը հարցրեց նրան, թէ ո՞վ է իր «հետոյ»ը, այսինքն հերոսը՝ նա անդէմ դուրս եկաւ եւ միայն ուսերը թօթուեց։ Եւ իրաւացի էր...

Դուլչինաները քչուեցին ո՞ւր... հիմա պարզ է թէ ուր։

Առաջին ճամբարային կէտը դանուում է մեր ճամբարից տասներկու, գուցէ մի քիչ աւելի, հնարաւոր է նաեւ քիչ պակաս կիլոմետրի վրայ։ Այնտեղ էլ կան կանայք, բայց չվիտես ինչու, նրանք ապրում են ընդհանուր դօտում, տարբեր բարաքներում։ Ճամբարը փոքր է, ընդամէնը չորս բարաք, երեւի այս էր պատճառը, որ նպատակայարմար չեն համարել կիսել ճամբարը։ Բայց ճամբարն ունի իր առանձնացած կցորդը, մի հինգերորդ բարաք, որը օրգանական կապ չունի մայր ճամբարի հետ, չնայած որ մի պատով, այսինքն մի ցանկապատով միայն բաժանուած է նրանից։ Կցորդն ապրում է իր ինքնուրոյն, անկախ կեանքով, ունի իր խոհանոցը, բաղնիքը, անգամ տասը մահճակալանոց մի փոքրիկ հիւանդանոց։ Սա է (ականջդ բեր, ասեմ) ծննդաբերական տունը։

Բարաքը մեծ չէ, մօտ քսան տեղանոց, վայտէ մահճակալները լայն են, վաղնային սիստեմով չինուած։ Ահա այստեղ են բերում ճամբարային օբէնպրութեան դէմ մեղանչածներին, բոլոր Մարիամ Մագդաղինացիներին։

Ինչպէս ծննդատանն, այնպէս բարքում երեխաների ճիչ կամ ճիչեր չեն լսուում։ Նրանք ծնւում են վախեցած եւ կարզապահ, երեւի ժառանգաբար։ Նրանք նւում, ննւում են հիւանդ աղաւնիների նման։ Ըստ երեւոյթին կարգին ճչալու համար առողջ թոքեր պէտք է ունենալ, իսկ ճամբարում ծնուածները ծնւում են թոյլ, մանր, մանր, հիւանդկախ։

Մայրերի անունդը ընդհանուր, կալանաւորական նորմաներից չի անցնում։

Միակ տարբերութիւնը աշակերտական տետրի չափի կարագն է, քան դրամ չաքարը եւ մի բաժակ իւղագործից թորուած կապտաւուն կաթը։

ԳՈՒՐԳԻՆ ՄԱՀԱՐԻ

(Շար. – 24)

ԸՆԿԵՐ ՅԱԿՈԲ ՏԷՐ-ՄԵԼՔՈՆԵԱՆԻ ՅՈՒՂԱՐԿԱԽՈՐՈՒԹԻՒՆԸ

Ազգային յուղարկաւորութեամբ եւ խոր յարգանքով, Նոյ. 28ին հոգին յանձնուած է Յակոբ Տէր-Մելքոնեանի մարմինը:

Հանգուցեալ ընկերոջ իր վերջին յարգանքը մատուցանելու եկած է յուղար-կաւորներու հոծ բազմութիւն մը, — Ազգային Իշխանութեանց ժողովականները, Համազգային Մշակութային Ընկերակցութեանց անդամները, կրթական եւ բարեսիրական հաստատութեանց, մշակութային եւ մարզական միութեանց ներկայացուցիչները, երեւելի ազգայիններ, բարեկամներ, հարազատներ եւ բազմաթիւ ընկերներ:

Յուղարկաւորութեան արարողութիւնը տեղի ունեցած է Մ. Նշան Մայր եկեղեցւոյ մէջ, կէսօրէ ետք ժամը 3ին, նախագահութեամբ Լիբանահայոց առաջնորդ Տաճատ Արք. Ուրֆալեանի, կողքին ունենալով Թեհրանի Թեմի Հայոց առաջնորդ Արտակ Արք. Մանուկեանը, Ներսէս Ծ. Վրդ. Բախաիկեանը, Պեդրոս Վրդ. Պէրպէրեանը, Տիրայր Վրդ. Փանոսեանը, որոնք կը ներկայացնէին Հայրապետական ու Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Մխիթարեանը եւ լիբանահայ Թեմի քահանայից դասը:

Արարողութենէն ետք, դամբանական խօսած է Առաջնորդ Սրբազանը: Ամփոփ գծերու մէջ ներկայացնելէ ետք հանգուցեալին կենսագրականը, ընդգծած է անոր հանրանուէր բեղուն գործունէութիւնը թէ՛ ազգային, եկեղեցական, մշակութային, կրթական, բարեսիրական եւ մասնագիտական մարզերու մէջ:

Այնուհետեւ, ընկ. Յակոբ Տէր-Մելքոնեանի Եռագոյնով ծածկուած գաղտը, Հ. Յ. Դ. Լիբանանի Կեդր. Կոմիտէի ընկերներուն կողմէ ուսանողական դասը հանուած է եկեղեցիէն, եւ ինքնաշարժներու թափօրով փոխադրուած է Ֆուրճ էլ Շըպպէքի Ազգ. գերեզմանատունը, ուր, թաղման արարողութիւններէ ետք, դամբանական խօսած են յանուն Համազգայինի Կեդր. Վարչութեան եւ մասնաճիւղերու՝ ընկ. Տոքթ. Արամ Պաղտա-սարեան եւ յանուն Լիբանանի Հ. Յ. Դ. Մարմիններուն՝ ընկ. Գառնիկ Բանեան, որոնք վեր առած են Յակոբ Տէր-Մելքոնեանի մշակութային, կրթական, ազգային եւ կուսակցական բազմաբեղուն եւ անձնուէր գործունէութիւնը, նշած են անոր օրինակելի ազգասիրութիւնը եւ իրեւ բարերարի, անոր կատարած նուիրատուութիւնները:

Հայերու մօտ կը զբաղչէ նաեւ սեւ մազերու թուխ գոյնը՝ իր երանգներով: Քիչ չեն նաեւ շիկահեր Հայերը: Ինչպէս յայտնի է, հնդեւրոպական մարզաբանական տիպարը կը յատկանշուի նաեւ մազերու սեւ գոյնով: Շարքերի քննութիւնները համաձայն, չէկ մազերով Հայերը հազուագիւտ են, թէեւ անոր ուսումնասիրած 341 Հայերու մէջ չէկ մազ ունեցողներու թիւը 11 տոկոս կը կազմէ: Զալախիչվիլի իր ուսումնասիրած 729 Հայերու մազերու գոյնը հետեւեալ ձեւով կը ներկայացնէ. չէկ՝ 6 %, մուգ չէկ՝ 27 % եւ 67 %՝ սեւ կամ թուխ: Մ. Աբդուչելիչվիլի Հայաստանի տասը չափահասներու մէջ 806 Հայեր քննելով նկատած է, որ անոնց 14,7 %ը չէկ մազ ունի:

Հայերու մազերը խիտ են: Քիչ են տատմազերը: Քննութիւնները ցոյց տուած են, որ միջին խտութեան մազ ունեցողներու թիւը 30 առ հարիւրը չէ անցած, իսկ թաւ մազ ունեցողները միշտ գերակշիռ դիրք գրաւած են (68–70 տոկոս): Հայերու մազի ձեւը ընդհանրապէս հարթ է, քիչ չեն նաեւ ալիքաձեւ մազեր ունեցողները:

Հիմնականին մէջ թուխ է նաեւ Հայերու աչքի գոյնը: Շարքը 341 Հայերու մօտ հանդիպած է սեւ գոյն աչք ունեցող 192 (56 %), շագանակագոյն՝ 113 (33 %) կապոյտ կամ բաց գոյն՝ 36 հոգիի (11%): Զալախիչվիլիի քննած 2141 Հայերու մէջ բաց գոյն աչք ունեցողները 9 տոկոս ներկայացուցած են, թուխ գոյն ունեցողները՝ 81, այլ գոյն ունեցողները՝ 10 տոկոս: Արդի Հայաստանի տասը չափահասներու մէջ Արդուչելիչվիլիի կողմէ ուսումնասիրուած հազար Հայերու մօտ բաց գոյնը կազմած է 6 տոկոս, տարբեր գոյները 66, իսկ թուխը՝ 28 տոկոս:

Ժամանակակից Հայերը իրենց տիպարին առանձնայատուկ չեշտուած քիթ ունին: Ինչպէս ցոյց կուտան մարմնական տուեալները, Հայերու քիթի արմատը միջակ է ու նեղ, քիթի եռեւի մասը՝ միջակ նեղ, ուռուցիկ եւ հարթ, քիթին ծայրը՝ յաճախ խիտ, նաեւ թեթեւ մը կոր:

Հայերը հիմնականին մէջ ունին նուրբ եւ բարձրամասն քիթ, բերանը սովորաբար փոքր է, ականջը՝ բնական, աւելի մեծ, քան փոքր:

Ժամանակակից Հայերու պանկարանական տուեալներու համաձայն, Հայերու մեծագոյն մասը կարճագանկ է եւ լայնադէմ, երբեմն՝ միջակ: Երկարագանկները գրեթէ չկան: Ա. Զալախիչվիլի 833 Հայերու մօտ գտած է մէկ տոկոս երկարագանկ, երեք տոկոս միջագանկ եւ 96 տոկոս կարճագանկ:

Հնագիտական նիւթերը ցոյց կուտան, որ Ք. Ա. առաջին հազարամեակին արդէն հայկական լեռնաշխարհը ապրող տեղարնակ ցեղերը մարմնական եւ գանգրանական տեսակէտէն կը կազմէին մարդաբանական յատկանիշներու ամբողջութիւն մը, որ ընդհանուր ձեւով պահպանած է ժամանակակից Հայերու մօտ:

Լ. Բ.

ՀԱՑԱԳՈՐԾ ԿԻՆԸ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ՀՐՋԻԳԸ

Թ.

— Այո, մէկուն, որ կրնար եղբօրս դիւրը ձեռք անցընելու դաշափարը ունենալ, իր հաշուին չահագործել եւ բուն հնարիչին ի վնաս հարստանալ: Անկախ ընդունելէ յետոյ՝ դողութիւնը, գործարանին հրդեհը, գործատէրին սպանութիւնը կրնար հաւատալ որ կին մը կարող ըլլայ այդպիսի քանդում մը ընել, ինչ որ ալ ըլլան իր ֆիզիքական ուժը եւ առնութիւնը:

— Պ. Լապրուս որո՞ն վստահած է իր դաշտնիքը:

— Ժաք Կարօ անուն մէկ գործակիցին:

Արկղակալ Ռիքու տեղէն վեր ցատկեց: Հարցաքննիչ դատաւորը ծաղրական կարեկցութեան չարժումով մը ըսաւ.

— Տիկին, կը սխալիք, ձեր մատնած նշած անձը ամէն կասկածէ վեր է:

— Ինչո՞ւ:

— Որովհետեւ մեռած է:

— Մեռա՜ծ, գոչեց տիկին Պերթէն:

— Այո, տիկին, իր անձնուիրութեան գոհ զոհած է, բոցերուն մէջ նետուելով, պ. Լապրուի թուղթերը եւ դրամարկղը ազատելու համար:

— Կը հաստատեմ տիկա, յարեց Ռիքու: Իմ աչքերովս տեսայ որ տաղաւարին տանիքը անոր վրայ փլաւ, ու այնքան հրակէզ հնոցի մը մէջ ընկղմուեց գայն, որ նոյնիսկ պիտի չկրնանք դիակին խակ գտնել: Ժաք Կարօ պարտականութեան գոհ եղաւ:

— Մեռա՜ծ, կրկնեց տիկին Պերթէն, ներեցէք, պարոն, անխորհուրդ ամբաստանութիւն մը ըրի: Այդ կարիճ երիտասարդին եղերական մահուան մասին բան մը չէին ըսած ինծի:

— Տիկին, ներելիք բան չկայ, պատասխանեց դատաւորը: Դուք ալ մեղմ պէս կ'ուզէք որ ձեր եղբօր սպաննիչը պատժուի, դուք ալ կը փնտռէք գայն... Ինչ որ չատ բնական է: Բայց հաւատացէք որ բուն, միակ յանցաւորը այն զարչելի արարածն է, որուն վրայ կը ծանրանայ ամէն ամբաստանութիւն, Ժանն Ֆօրթիէն է ան: Տիկին, տալիք ուրիչ լուսաբանութիւններ ունի՞ք:

— Ոչ պարոն:

— Ուրեմն ազատ էք: Պատիւ պիտի ունենամ ձեզի դրելու, եթէ պէտք ունենամ:

— Ձեր տրամադրութեան տակ կը գտնուիմ:

Ժ.

Ինչպէս պիտեն մեր ընթերցողները, Ժանն եւ իր զաւակը արդէն Լոժիէի բնակարանին մէջ տասցած էին առաջին խոհնամքները:

— Քիչ յետոյ լաւ ճաշ մը պիտի ընէք, ըսաւ ժողովրդապետին քոյրը, որպէսզի տիկին Ֆօրթիէի երախտապիտական փղձկումները վերջ գտնեն: Յետոյ հանգիստ պիտի ընէք, որուն չատ պէտք ունիք... Շո՜տ քալեցիք:

— Այո, այո, տիկին... չատ... չատ քալեցինք, գոչեց Ժորժ, որ իր խաղալիքը ձեռքէն չէր ձգած: Ես ալ չատ յոգնած եմ... թէեւ մայրիկս պիս գիրկը առաւ միշտ:

— Մինչեւ որ ճաշը բերուի, քիչ մը պիտի քնանաս, սիրունիկս, ըսաւ տիկին Տարիէ, տղան համբուրելով: Ինձ կ'ըսէ, դուք ալ պիտի քնանաք, յարեց խօսքը Ժաննի ուղղելով: Պրիժիթ ձեզի համար անկողին մը պատրաստած է, որուն վրայ պիտի կրնաք երկննալ:

Մանկամարդ այրին սկսաւ հեծկլտալ: Երախտապիտութիւնը կը յորդէր իր ուռած կուրծքէն:

— Օ՛հ, չնորհակալ եմ, թոթովեց Ժանն Ֆօրթիէ:

— Տիկին, կրնամ փոքր ձիս մխսին տանիլ, այնպէս չէ՞, հարցուց Ժորժ:

— Այո, սիրունիկս, հետդ տար:

Ժանն իր զաւկին ձեռքը բռնած էր: Երկուքն ալ ընկերացան տիկին Տարիէի՝ մինչեւ այն սենեակը, որ իրենց համար պատրաստուած էր:

— Հանգիստ քնացէք, ըսաւ արբայն քոյրը: Ձաշին առեն ձեզ պիտի արթընցնեն:

— Դարձեալ չնորհակալ եմ... Աստուած օրհնէ ձեզ:

— Այո, այո, տիկին, յարեց Ժորժ, իր շրթունքներուն վրայ սեղմելով Քլարիս Տարիէի ձեռքը:

ԿԶԱՎԻԻ ՏԸ ՄՈՆԹԻՊԱՆ

(Շար.)

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Այրի Տիկին Սերոբ Սահաթճեան, զաւակներն ու թոռները եւ բոլոր պարա – պանները կը ծանուցանեն թէ հոգեհան – պատեան պաշտօն կը կատարուի այս Շաբաթ (Դեկտ· 9) ժամը 14ին Փարիզի Ս· Յովհ· Մկրտիչ եկեղեցին իրենց ա – մուսնոյն, հօր, մեծ–հօր եւ ապզականին՝

ՍԵՐՈԲ ՍԱՀԱԹՃԵԱՆԻ

(Սերոբ փաշայի եղբօր թոռը)

մահուան քառասունքին առթիւ։

Ի պիտուիթիւն ողբացեալին յիշատակը յարգողներուն։

×

Այրի Տիկին Հայկազ Մանուկեան, Տէր եւ Տիկին Կայծակ Մանուկեան եւ զաւակները, Տէր եւ Տիկին Սուքիաս Ասլանեան եւ զաւակները կը ծանուցանեն թէ հոգեհանդստեան պաշտօն կը կատարուի այս Կիրակի առաւօտ Փարիզի Ս· Յովհ· Մկրտիչ եկեղեցին իրենց ամուսնոյն, հօր եւ մեծ–հօր՝

ՀԱՅԿԱԶ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ

մահուան քառասունքին առթիւ։

Կը հրաւիրուին իր յիշատակը յարգողները։

Այս առթիւ այրի Տիկին Հայկազ Մանուկեան 100 Ֆր· կը նուիրէ Իսիի Մշակոյթի Տան, 50 Կսպ· Աջէ Իսիի մասնաճիւղին, 50 Ֆր· «Յառաջ»ին եւ 20 Ֆր· Մէօտոնի նահատակաց մատրան։

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Կապոյտ Աջէ Պօմոնի վարչութիւնը շնորհակալութեամբ առացած է հետեւեալ նուէրները։—

Տարաբախտ Տիկին Թագուհի Մեհեաբեանի մահուան առթիւ Տէր եւ Տիկին Սիմոն Տէրմէնճեան 10, ողբացեալ Տիկին Ղազարեանի հոգեհանդստեան առթիւ Տէր եւ Տիկին Բիւզանդ Պէրպէրեան 20, Տիկին Ղարաօղլանեան (դպրոցին) 10, տարաբախտ Վարդգէս Էքսէրճեանի հոգեհանդստեան առթիւ այրի Տիկին Մարի Էքսէրճեան 100, Պաղըճեան եւ Շահլամեան ընտանիքներուն հոգեհանդստեան առթիւ Պր· Ալէն Պաղըճեան 50, Տէր եւ Տիկին Ռոպէր Սարաճեան 20 Ֆր·։

ԾԱԽՈՒ Է

Ծախու է — բացի աժանոններու — փափիյոն մը, Քոլոմպ, 10 վայրկեան կայարաններէն (3) փափիյոնի թաղի մէջ, ամբողջութեամբ նորոգուած, անմիջապէս ազատ, հինգ սենեակ, բաղնիք, կեդր· ջերմութիւն, մեծ կառատուն, շատ մեծ նկուղ, պարտէզ։

Հեռաձայնել ժամը 12·30էն 13·30, 253–38–83

Հ·Բ·Ը·Մ·Ի ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ԱԿՈՒՄԲԸ
կը ներկայացնէ

ՀԱՅԱՍՏԱՆ

ՇԻՆԱՐԱՐՆԵՐՈՒ ԵՐԿԻՐ

երկու բաժիններէ բաղկացած ձայնապիր լուսարձակում

Առաջին մաս

ՕՇԱԿԱՆԷՆ ՀԱՂԱՐԾԻՆ

Պտոյտ մը մեր միջնադարեան հրաշակերտ եկեղեցիներու միջեւ

Երկրորդ մաս

ՍԱՐՏԱՐԱՊԱՏԷՆ ԲԻՒՐԱԿԱՆ

1918 Մայիսեան ճակատամարտներէն մինչեւ այսօրուան Հայաստանի վերելքը

VALENCE — SAMEDI 9 DECEMBRE A 20 H. 45
Dans les locaux de l'U.G.A.B. — 6, Rue Favantine

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ԿԱՊՈՅՏ ԽԱՉԻ Լիոնի մասնաճիւղի ընդհանուր ժողովը 12 Դեկտ· երեքշաբթի կէսօրէ վերջ ժամը 3ին Ազգային Տան մէջ։ Կարեւոր օրակարգ։ Կը խնդրուի բոլոր ընկերուհիներէն ներկայ ըլլալ։

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ

ՀԱՆԳՍՏԵԱՆ ՏՈՒՆԵՐԸ

Նախաձեռնութեամբ Կապոյտ Խաչի Իսիի մասնաճիւղին այցելութիւն մը կազմակերպուած է Մոնմորանսիի եւ Անտիլիի հանգստեան տուները, Դեկտ· 10–ին, Կիրակի օր։

Օթոբասը կը մեկնի Լէոն Պլում հրապարակէն, (Կառ տ'Իսի) ժամը 13·30ին։

Արձանագրուիլ Աջուհիներուն մօտ։

Ծախքերու մասնակցութիւն 10 Ֆր·

ՀՐԱՒԻՐ ԸՆԴՀ· ԺՈՂՈՎԻ

Ֆրանսահայ Գրողներու Ընկերակցութեան վարչութիւնը ընդհ· ժողովի կը հրաւիրէ իր բոլոր անդամ գրողներն եւ անդամագրուիլ փափաքող գրողները, 11 Դեկտ· երկուշաբթի երեկոյ ժամը 20ին «Ռէժան» սրճարանի վերնայարկը (Մեթրօ Փասէ), Փարիզ։

Օրակարգ·— Բարոյական եւ նիւթական հաշուետուութիւն եւ նոր վարչութեան ընտրութիւն։

Ներկաներուն թիւը մեծամասնութիւն կը համարուի։

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Կապոյտ Խաչի Պօմոնի վարչութիւնը շնորհակալութեամբ առացած է հետեւեալ նուէրները։—

Տարաբախտ Տիկին Թագուհի Մեհեաբեանի մահուան առթիւ Տէր եւ Տիկին Սիմոն Տէրմէնճեան 10, ողբացեալ Տիկին Ղազարեանի հոգեհանդստեան առթիւ Տէր եւ Տիկին Բիւզանդ Պէրպէրեան 20, Տիկին Ղարաօղլանեան (դպրոցին) 10, տարաբախտ Վարդգէս Էքսէրճեանի հոգեհանդստեան առթիւ այրի Տիկին Մարի Էքսէրճեան 100, Պաղըճեան եւ Շահլամեան ընտանիքներուն հոգեհանդստեան առթիւ Պր· Ալէն Պաղըճեան 50, Տէր եւ Տիկին Ռոպէր Սարաճեան 20 Ֆր·։

ԾԱԽՈՒ Է

Ծախու է — բացի աժանոններու — փափիյոն մը, Քոլոմպ, 10 վայրկեան կայարաններէն (3) փափիյոնի թաղի մէջ, ամբողջութեամբ նորոգուած, անմիջապէս ազատ, հինգ սենեակ, բաղնիք, կեդր· ջերմութիւն, մեծ կառատուն, շատ մեծ նկուղ, պարտէզ։

Հեռաձայնել ժամը 12·30էն 13·30, 253–38–83

ԿՈՒԶՈՒԻ

ՍՏԻՊՈՂԱԿԱՐ

Շատ լաւ տաքթիլօ մը դրասենեակի աշխատանքի համար։

Դիմել՝
Mondotours
2, Rue de Sèze — Paris (9e)
Տիկին Գումրուեանցի

ԿԸ ՓՆՏՌՈՒԻ

Բնիկ Էլպասի, Թոպատէ չէլեան, Տիկին Կիլիմիա Մըսրեան (ծնեալ Մղտեսի Մանուկեան) կը փնտռէ իր եղբօր՝ Հաճի Մանուկին զաւակները։ Ամենակ 14 տարեկան, Սիրանոյշ 5 տարեկան, Կարապետ 4 տարեկան, Գէորգ 3 տարեկան· ասոնք Մալաթիա տեսնուած են։ Իրենց մօրը անունը Վարդուհի։ Կը փնտռէ մեծ քոյրը Եղսան, զաւակները՝ Լեւոնը, 14 տարեկան, Ազաւնին 13 տարեկան· ասոնք իրենց քովը մեռած են։ Փերուզը 12 տարեկան մնաց Պերամաճի Խանը։ 8 տարեկան Միհրանը, 5 տարեկան Գրիգորիկը, այս երկուքը կորսուած են։ Իր հօրը անունը Օհաննէս Քէչիչեան։

Իրենց մասին լուր ունեցողներէն կը խնդրուի խմացնել հետեւեալ հասցէին·

G. M. Djnbachian
62, Ave. Sadi Carnot
Valence 26000 (France)

Կը խնդրուի արտասահմանի թերթերէն արտատպել։

Հ. Յ. Դ.

ԱԼՖՈՐՎԻԼ·— Հ· Յ· Դ· «Ս· Մինասեան» ենթակոմիտէն ընդհ· ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերները այս Ուրբաթ ժամը 21ին ծանօթ հասցէին։ Ներկայանալ անդամատետրով։ Կարեւոր օրակարգ։

ՍԱՄՈՒԷԼ-ՄՈՒՐԱՏ ՎԱՐԺԱՐԱՆ
ՏՕՆԱԾԱՌ

Կիրակի 17 Դեկտ· ժամը 16·30էն սկսեալ

ԵՐԳ, ՊԱՐ, ՆՈՒԱԳ
ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ
Ընտանեկան հաճելի մթնոլորտ, ճոխ սեղան, ճոխ վիճակահանութիւն
ԿԱՂԱՆԴ ՊԱՊԱՆ
իր նուէրներով
26, Rue Troyon — SEVRES

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐԸ

ՓԱՐԻԶԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Կապ· Խաչի Շրջ· Վարչութեան, մասնակցութեամբ Փարիզեան չրջանի իր մասնաճիւղերուն, Մանուկներու Օրը կը տօնուի Փարիզի մէջ

ՅՈՒՆՈՒԱՐ 28ԻՆ

×

ԼԻՈՆԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Կապոյտ Խաչի Լիոնի մասնաճիւղին Յունուար 14ին։

ԾԱԽՈՒ Է

ՍՏԻՊՈՂԱԿԱՆ

Փարիզէն 17 քիլմ· Շելլի բարձունքին վրայ տուն մը, շինուած 1960ին երկու ընտանիքի համար· 8 սենեակ, 2 խոհանոց, 1 լոգարան, 1 տուչ, կառատուն։ Կեդր· ջերմութիւն (մազութ), հող 500 քառ· մեթր, պտղատու ծառեր։

Գինը 140 հազար Ֆր։ դիմել հասցէին·
32, Avenue Pascal — 77-Chelles
Տեսնելու համար հեռաձայնել՝ 939–92–38

ՏՕՆԱԾԱՌ

ԴՊՐՈՑԱՍԷՐԻ ՄԷՋ

Դպրոցասէր Տիկնանց Վարժարանի Տօնածառի Հանդէսը տեղի պիտի ունենայ Դեկտ· 17ին, Կիրակի կէսօրէ վերջ ժամը 4ին վարժարանի նորակառոյց սրահին մէջ,

Նախագահութեամբ
ՍԵՐՈՎԲԷ ԱՐՔ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ
(Հայրապետական Պատուիրակ Եւրոպայի Հայոց)

Գեղարուեստական բաժին,
ձոխ պիւֆէ

Պետիկ ՊԵՏԻԿԵԱՆ իր երգերով եւ նուագախումբով պիտի աւելցնէ փայլը այս ցերեկոյթին

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Հայ Կարմիր Խաչի տարեկան ցերեկոյթ – պարահանդէսը 1973 Մարտ 11։

×

Կապոյտ Խաչի Պօմոնի մասնաճիւղի Բաբեկենդանի ճաշը։ Մանրամասնութիւնները յետագային։

×

Հայ Արիւներու Միութեան տարեկան ցերեկոյթը Կիրակի Մարտ 4ին կէսօրէ վերջ ժամը 14·30ին Սալ տը լա Շիմի։

×

Կապ· Խաչի Սեւրանի մասնաճիւղի տօնածառը Յունուար 14ին։

ՄԱՐԶԱԿԱՆ

Իսի լէ Մուլինոյի մէջ կազմուած է Փութպոլի «Ապարատ» խումբը, որ սրտէն իսկ վայելուն յաղթանակ մը տարած է Նոյ· 26ին Ֆրանքեւելէնէն խումբին դէմ մէկի դէմ երեք կէտով։

Գալ Կիրակի, Իսիի Ռապէյ պաշտօնավայ խումբը կը մրցի Հունգարներու դէմ եւ սկզբնական առաջին հարուածը (fnւտ տ'աւնվուա) կուտայ՝ Ժաք Քէչիչեան։

ՊԱՏԱՐԱԳ ՊՕՄՈՆԻ

Ս· ԳՐ· ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՆ

Այս Կիրակի (10 Դեկտ·) առաւօտեան կը պատարագէ Հայր Նշան Գուշումճեան։ Ժամերգութիւնը առաւօտեան ժամը 8·30–ին, պատարագ՝ 10ին, քարոզ՝ 11·25ին, հոգեհանդիստներ ժամը 11·45ին։

Ի պիտուիթիւն մեր հաւատացեալ ժողովուրդին։

ԿԸ ՓՆՏՌՈՒԻՆ

Յարութիւն Յովհաննէսի Մանուկեան կը փնտռէ իր եղբօրորդին՝ Մանուկ Սարգսի Գրիգորեան, ծնած 1912ին վանի կարճկան Քարվակ գիւղը։ Կինը՝ Կլիկեան Արշալոյս, աղջիկները՝ Լիմմա եւ Լուսիա, որոնք կ'ապրին Երեւան։

Սուսաննա Մուրադեան կը փնտռէ իր քեռին՝ Լեւոն Ախոյի Ներսիսեան, ծնած 1915ին։ Իր տղան Ռաֆիկը եւ աղջիկը Լիմման, ինչպէս նաեւ Սաթենիկ, Մամիկոն եւ Շուշան ողջ են եւ Երեւան կ'ապրին։

Հայաստանի Կոտայքի չրջանի Բաչ գիւղէն Յովակ Մնացականեան, կը փնտռէ իր եղբայրները Վարդան, Արտաշէս, Աբրահամ Շահումեանները, որոնց հետքը կորսընցուցեր է Բ· Համաշխարհային պատերազմին։

Մանուչակ Մկրտիչի Զաքարեան կը փնտռէ իր եղբայրը, Սերոբ Մկրտիչի Զաքարեան, ծնած 1921ին, Ապարանի Ղոյլաուր գիւղը։ Իր հետքը կորսնցուցած են Բ· աշխարհամարտին։

Որեւէ տեղեկութիւն փոխանցել հետեւեալ հասցէին·
Mr. HOUNANIAN K.
39, Rue des Petites Maries
13001 — Marseille
Կը խնդրուի արտատպման թերթերէն արտատպել։

ՀՄՐԱՆ ԱՐՇԱԿՈՒՐԳ

Ծնունդի եւ Ամանորի առթիւ կազմակերպուած է սովորական ճամբորդութիւնը Աւստրիա, Ս· Եոհան։ Մեկնում Դեկտեմբեր 23, Կառ տը Լ'Էսթէն, վերադարձ Յունուար 3ին։

Ս· Եոհան կը գտնուի Սալցպուրկի չրջանը, պատապարուած հովերէն, մշուշէն։ Բնակութիւն կոլտըները Հիրշ պան–գոկը, հանգստաւէտ սենեակներ, տաք եւ պաղ ջուր, հեռաձայն, կեդրոնական ջեռուցում, խնամուած ճաշ։

Սահմանափակ տեղեր։

Մասնակցութիւն 545 Ֆր·
Կանխավճար 95 Ֆր·, մնացեալը Դեկտեմբեր 8էն առաջ։

RELATIONS TOURISTIQUES EDUCATIVES
12 Allée Leonide — Le Perreux
Tél. 324-14-96
Association sans but lucratif, régie par la loi du 1-7-1901

ԽՏ· ՃԻԶԻՐԵԱՆ
Ընդհ· Պատուիրակ

IMPRIMERIE SPÉCIALE
DU JOURNAL «HARATCH»
32, RUE DE TRÉVISE — PARIS (9e)

ՏՕՆԱԾԱՌ ՄԱՐՍԷՅԼԻ ՄԷՋ

ՊՈԼՍԱՀԱՅԵՐՈՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ
ԿԻՐԱԿԻ 14 ՅՈՒՆՈՒԱՐ ՍՓԼԱՆՏԻՏԻ ՄԷՋ

ՇԱԲԱԹ
9
ԴԵԿՏԵՄԲԵՐ
SAMEDI
9 DECEMBRE
1972

Le Numéro 0,70 F.

ՅԱՌԱՋԴ

ՕՐԱԹԵՐԹ
ՀԻՄՆԱԴԻՐ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

HARATCH

Le Seul Quotidien Arménien en Europe Occidentale
Directrice : Arpik Missakian
32, rue de Trévise Paris 9

— Tél. : 770-86-60 —
C. C. P. Paris 15069-82

Fondé en 1922
R. C. Seine 57 A 2781

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա	Տար. 120 ֆր.	Վեցամսեայ	65 ֆր.
Արտասահման	Տար. 135 ֆր.	Հատը	0,70 ֆր.

ԽԴ. ՏԱՐԻ — ԹԻՒ 12.585

Fondateur : SCHAVARCH MISSAKIAN

48e ANNÉE — N° 12.585

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ՁԵՒՆԹԱՓ ՁԸԼԼԱՆՔ...

———o———

Հանրային ծառայութեան մարդկանց հետ զրուցող մարդոց եւ հանրային մտաքննութիւններով ապրող հայ տարբերին համար՝ տարեվերջի քանի մը չաբաթ – ները անդրադարձումի պահերով կը յատկանշուին առհասարակ :

Ոչքան ալ զրական կամ բացատական հասատանուն տուեալներ ունեցած ըլլանք տարուան ընթացքին ու այդ ճամբով ալ տանած ըլլանք մեզի համար եզրափակիչ համոզումներու՝ հարցումը մեր կամքէն անկախ կը դամուի մտքերու մէջ. «ո՞ւր ենք եւ դէպի ո՛ւր կ'երթանք» :

Աշխարհաքաղաքականօրէն հակապիր պայմաններու մէջ, միջավայրի ու շրջապատի տեսակէտով աննպաստ ապրակներու ենթակայ, հայրենական եւ սփիւռքեան մեր թիւերով տարածուն — չըսելու համար ցանուցիր, — մենք որեւէ ժողովուրդ աւելի ենթակայ ենք պատահանքներու խաղերուն, դէպքերու եւ վերիվայրումներու՝ որոնք ներքին թէ արտաքին մեր կեանքին կ'անդրադառնան յատկապէս բացատական հետեւութիւններով, — ամէն բանէ առաջ հոգեկան բեկումի պատճառներ ստեղծելով մեզի համար :

Բացորոշ է մաշումի երեւոյթը : Գլխաւոր չարիքը ատատնդական կեանքի, պետականութենէ զուրկ ժողովուրդի : Հոգին եւ ինքնուրոյն դոյութեան բացակայութիւնը հիմնական այն պրկանքն է, որով ապրելի որեւէ հատաքակարութիւն, որքան ալ կենսունակ ու առեղծապործ ըլլայ, ընկերային մարդերու մէջ մշտապէս ենթակայ կը մնայ ընկրկումներու, եթէ չ նահանջի :

Սակայն եթէ ասիկա «ճակատագրական» թուին է ապրելի մեր ապրելակերպին, մաշումի եւ քայքայումի գործընթացները կրնան ու պէտք է կասեցուին, մեզի համար ստեղծուած ապրել

ԴԷՄՔԵՐ ՈՒ ԴԷՊՔԵՐ

ՀԱՅՐ ՎԱՀԱՆ ՎՐԴ. ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

—o—

Ցանկարծ չկարծէ՛ք որ Հայր Վահանը մեռեր է եւ ատոր համար կը գրեմ : Ատուսած չընէ : Շատ ալ մեղապրելի չէք, եթէ մտածէք այդպէս կարծելու, քանի որ բանս-գործս մեռեալներու մասին գրել է բանս-գործս մեռեալներու մասին գրել է եղած՝ այս էջերուն մէջ :

Հայր Վահանի մասին կը գրեմ առանց օրհ պատճառի (*) աւելի ճիշդ՝ չո՛ւ մը պատճառներով, որոնցմէ կարեւորագոյ-նը՝ նոյնիսկ Մխիթարեաններու մէջ անոր քացառիկ Մխիթարեան ըլլալն է :

Հայրենասիրութիւն եւ աննուաճ հայրենասէր մըն է Հայր Վահան, որ հաւանաբար բանաստեղծ մը ըլլալէ ա-ւելի նախընտրէ հայրենասէր մը ըլլալ : Անակարիկ, անկաշառ հայրենասէր մը, որ կ'արհամարհէ բանաստեղծական մար-պանդները, ամբողջ հոգիով ծառանալու համար յանուն Հայութեան :

Շինծու ոչինչ կայ իր մէջ : Իտալական բանակին մէջ իր ծառայութեան ոչ միայն բարի այլեւ քաջ համբաւը լսի՛ր թէ օր մը թուղթին տրուէր եւ չմոռցուէր : Անխարդախ մարդասիրութեան՝ այս կըր-կին Մխիթարեանը կը խառնէ հայրենա-սիրական նուիրումը, գառնալու համար անպերազանցելի հայ եկեղեցական մը՝ մեր այս ոչ շատ խանդավառիչ օրերուն :

1931ի ահալից օրերուն, երբ Երեւան եւ էջմիածին այցելելէ վերջ դէպի տուն ճամբուս վրայ, շատ սովորութեան, Ս. Ղազար կը հանդիպէի՝ իմ անմոռանալի բարեկամներուս հանդիպելու, կ'իմանայի որ Հայր Վահան անօրինակ քաջութեամբ (նոյնիսկ մահ ու բանտարկելութիւն աչք առնելով) այցելեր է հայրենիք : Շատե-րուս համար անհաւատալի անհետե-մուտիւն պիտի սեպուէր առիկա, սա-կայն Հայր Վահանին համար պա՛րզ բան էր... Զէ՞ որ իր հայրենիքն էր եւ հոն էին ազգականները, որոնց հետ այնքան խորունկ, հոգեկան սիրով կապուած էր : Հայր Վահանին համար քնական էր հոն իր այցելութիւնը : Ո՞վ իրաւունք ունէր իրեն արգելք ըլլալու :

Տարիներ վերջ, 1960ին, պատահեցաւ որ խումբ մը արեւելագէտներու հետ ե՛ս ալ Երեւան հասնիմ, Մոսկուայի մեր ժո-ղովին վերջ : Հազիւ իջած էինք մարդա-տար փոքր ինքնաշարժէն՝ Արմենիա պան-դոկին առջեւ, երբ հոն հաւաքուած խուռն բազմութեան մէջ յանկարծ երկու հուժ-կու բազուկներ գլխս կը գրկէին եւ եղբայ-րական համբոյրով մը կ'ողջունէին : Ա-նակնկալի եկած (քանի որ ոչ ոք ունէի եւ ոչ ոք կ'ակնկալէի Երեւանի մէջ, պան-դոկի մը առջեւ նման ողջագուրման մը համար) ու չփոթած պահ մը նայեցայ խիտ մօրուքով եկեղեցականի մը փայ-փայող աչքերուն : Անհաւատալի էր : Զիս գրկին մէջ պահողը արդեօք... Հայր Վա-հա՞նն էր : Շփոթութեան յորձանքի մը մէջ, մղուեցայ հարց տալու. «Հայր Վա-հա՞նն ես թէ ուրիշ մարդ» :

— «Զէ՛, չէ, մի՛ վախնար, Հայր Վա-հանն եմ», ըսաւ, չունչ առնել տալով ինծի :

×

Իրրեւ Իսրայէլ Օրին գլխաւորները, Երեւանեան հրատարակութեանց գրախօս-քննադատ, «Հայրենիք»ի մէջ պարբերա-կան յօդուածներով երեւցող, Երեւանի մէջ թերեւս գլխ բարի ծաղիկ մը չնկա-տէին... կարծես ասիկա ինծի զգացնե-լու համար էր, որ Աչոտ Յովհաննէսեան, որ մինչեւ Սեւան եկեր էր արեւելագէտ-ներու փոքր խումբը գլխաւորելու, Օ-րիորդ Սիրարփի Տէր-Ներսէսեանն ու Փարիզէն հայ տիկին մը կենցաղագիտու-րէն առնելով՝ մեկներ էին Երեւան, որա-չազգս չերեւելով իմ ողորմելիութիւնս, մանաւանդ օտար գլխաւորներու առ-ջեւ, որոնց մեծ մասին ծանօթ էի :

Հիմա ալ Երեւանի մէջ Հայր Վահանին հետ ողջագուրուի՛լս : Եթէ մանաւանդ ան «Հայր Վահանը» չէր, պարզապէս հարկ պիտի ծագէր որ Երե-ւան քիչ մնայի, ցանկացած գիրքերս չա-պահովէի, ո՛չ ալ առիթ ունենայի հին կամ նոր բարեկամներու հանդիպելու, թանգարան ու մատենադարան պրպտե-լու :

Երբեք չէի յուսար որ Երեւանի մէջ խորհէին թէ ես իրաւունք ունիմ ուզածս գրելու եւ գրածս ալ հրատարակելու հիւրընկալ էջերու մէջ, ըլլան անոնք «Անահիտ», «Բազմավէպ» «Հասկ» կամ «Հայրենիք» :

Գրախօսականներս անհատական կամ անձնական ոչինչ ունէին իրենց մէջ, իմ գրախօսած չատ մը Երեւանեան գիրքերու հեղինակներուն այր կամ կին ըլլալն իսկ ծանօթ չէր ինծի : Իսրայէլ Օրին ինծի համար պատմական անձնդութիւն մըն էր, եւ ա՛յդքան միայն, եւայլն, եւայլն :

Հայր Վահան անմիջապէս իր սենեակը տարաւ զիս : Ազգականներէն երիտասարդ մը գրկեց որ ձմերուկ բերէ. եւ մենք երկա՛ր երկար, անո՛յշ անոյշ խօսեցանք :

Ժամանակ ըսելու որ Երեւանի մէջ ինծի հանդիպ ցոյց տրուած պաշտօնական թէ անպաշտօն վերաբերումը այնքան բար-եացակամ ու ջերմ եղաւ՝ որ ամչցայ... Ամօթ գլացի նոյնիսկ պահ մը տարա-կուսելո՛ւս՝ Երեւանեան գրչեղբայրներուս արդարամտութեան մասին : 1960ին եւ անկէ վերջ բազմաթիւ այցելութիւննե-րուս առեն ինծի հանդիպ ցոյց տրուած պաշտօնեայի մը եւ պարզապէս խոր չնորհակալութիւն ունիմ :

Հայր Վահանի անօրինակ նուիրումին մասին կ'ուզեմ միջադէպ մը եւս պատմել հոս :

Վենետիկի եւ Ս. Ղազարի հեղեղներուն առեն, քաղաքը թէ արբանեան կղզին հըս-կայական վնասներու ենթարկուեցան : Վենետիկի հինաւուրց քաղաքին մէջ կայ հայկական եկեղեցի մը՝ Երեւման Թաչ անուանով :

Պատահեցաւ որ չաբաթասիրկ այդ օ-րերուն ճամբորդութեան մէջ ըլլալէ եւ անմիջապէս ամպարձակի վենետիկ ել-թալ, չունչս Ս. Ղազար առնելու համար :

Վնասը աներեւակայելի չափով մեծ եւ յուսահատեցուցիչ էր կղզիին վրայ : Նո՛յ-նը եւ գժբախտ ու գեղատեսիլ քաղաքին մէջ :

Հայր Վահան պնդեց որ եկեղեցի հան-դիպէի : Կ'ենթադրէի տեսնել ամբաթա-խիս վայր մը, սակայն անակնկալի մատ-նուեցայ, տեսնելով կատարեալ պատ-րաստած սրբավայր մը, որ հեղեղի հետե-ւանքով մեծ վնասի ենթարկուած էր : Իրապէս, հրաշքի մը առջեւ կը գտնուէի : Անհաւատալի էր որ Հայր Վահանը մխ-ճինակ կարենար տարածուն, չատ կըզ-չուն եւ աւերիչ ալիքէն փրկել ու մաք-րել ամբողջ եկեղեցին ու անոր հարեւան կարասիները : Աւիկա ոչ միայն մեծ ուժ եւ կարողութիւն կը պահանջէր, այլեւ անսովոր նուիրում՝ հայկական այդ նըշ-խարքը մաքրելու, պահելու – պահպա-նելու եւ ապահովելու : Հայր Վահան վըս-տահօրէն իր նմանը չունի մերօրեայ Հա-յութեան մէջ, այդքան ծանր, սրտմտա-չուք, յուսահատեցուցիչ գործ մը գլուխ հանելու համար :

Անոնք որ ծանօթ են Հայր Վահանին, անկարելի է որ խորունկ սիրով եւ յար-պանքով չհպատուին իրեն : Ճակատ ճակա-տի խօսող, ամէն ձեւի երկերեսութեան ու կեղծիքի դէմ, քաջ ու մաքրամիտ : Հայուն մէջ ո՛չ միայն Հայութիւնը, այլեւ մա՛րդը կը փնտռէ եւ ասով է որ ան կը մեծնայ մեր աչքին՝ իր բնականութեամբ : Ատոր համար է նաեւ որ կը յանդգնիմ ըսել թէ ան ի բոլոր սրտէ պիտի նախընտ-րէ հայրենասէր ու մարդասէր ըլլալ աւելի՝ քան քահանայ :

Բո՛լոր ալ հայրենասէրը ենք : Աւիկա ատոնուածային իրաւունք մըն է : Ոչ ոք զայն կրնայ մեզմէ խլել : Ծիծաղելի է հայրենասիրութիւնը (կամ Հայասոնա-սիրութիւնը՝ եթէ կը նախընտրէք) մե-նաշնորհ նկատել եւ մերժել կամ ղլանալ ուրիշներուն : Ոչ ոք իրաւունք ունի մեր հայրենասիրութիւնը իր անձնական նժա-րին ենթարկելու : Եթէ կան ողորմելիներ, որոնք չունին այդ ղգացումը, պարզապէս հիւանդներ են...

Հայր Վահան՝ իր բարութեան եւ լա-ւութեան համար վարձատրուած է Աս-տուծմէ, հայրենասիրութեամբ :

Ց. ՔԻՒՐՏԵԱՆ

(*) «ՅԱՌԱՋ»·— Ի դէպ յիշենք որ Հայր Վահանի յիսնամեայ յոբելեան էր այս աշնան :

ԵՐԿՈՒ ՀԱՐԻՒՐ ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Հայաստանի մէջ առաջին տպագիրը վեր-քը լոյս տեսած է 1772ին : Որով այս տա-րի 200ամեակն էր այդ բախտաւոր թուա-կանին :

Ըստ որոշ աղբիւրներուն՝ 1560ական թուականներուն Աբգար Թոխաթեցի փոր-ձած է Կ. Պոլսոյ իր տպարանը փոխադ-րել էջմիածին, բայց անոր փորձը ձա-խողած է : Ամսթերտամի հայկական տպա-րանին (1685–1717) տնօրէնը՝ Թովմաս Վանանդեցին նպատակ ունեցած է իր տպարանը Հայաստան տեղափոխել : Այս ջանքն ալ ապարդիւն կ'անցնի : Այսպէս, անյաջողութեան մատնուած են Հայաս-տանի մէջ տպարան հիմնելու քանի մը այլ փորձեր ալ : Երկրին ծայր ատեձան յետամնացութիւնը, մեծ հեռաւորութիւնը Եւրոպայի տպագրական զարգացած կեդ-րոններէն, աղբային պետականութեան բացակայութիւնը անկարելի կը դարձնէին այս ծրագրին իրականացումը : Հայաս-տան իր տպարանները կը հիմնէր եւրո-պական քաղաքներու եւ Կ. Պոլսոյ մէջ : Այս ձեւով հայկական տպագրութիւնը թափառեցաւ օտար երկիրներ եւ մեր իր հիմնադրութենէն (1512) 260 տարի հեռ մուտք գործեց Հայաստան :

Ժ.Ը. դարու 60ական թուականներուն Արեւելեան Հայաստանի մէջ թուլցած էր Պարսկաստանի կեդրոնական իշխանու-թեան ազդեցութիւնը, եւ իրարու հետ անընդհատ կռիւներու մէջ էին տեղական իշխանութիւնները : Կաթողիկոս գահա-կալ 1763ին՝ Սիմէոն Երեւանցի լաւ յա-րաբերութիւններ հաստատեց Երեւանի Խան Հուսէյնի եւ անոր ղէմաւոր մըցա-կից Վրաց Հերակլ Բ. Թագաւորին հետ : Բարեղրացիական կապեր ստեղծեց նաեւ չորջակայքի խաներու հետ : Ան կարողա-ցաւ անոնցմէ եւ ստանալ կարգ մը կալ-ուածներ եւ դիւղեր, որոնք նախապէս էջմիածնին կը պատկանէին, որով ամ-րացաւ Մայր Աթոռին նիւթական վիճակը : Կարելի դարձաւ էջմիածնի մէջ կա-ռուցումներ կատարել, բարեկարգել կրթա-կան գործը, մատենադարանը եւայլն : Սակայն Սիմէոն Երեւանցիի կատարած մշակութային ամէնէն մեծ գործը Հա-յաստանի առաջին տպարանին հիմնա-դրումն է :

Գահակալ գառնալէ առաջ, Սիմէոն իրրեւ էջմիածնի նուիրակ՝ տպրած էր Կ. Պոլիս, ծանօթացած էր պոլսահայ գաղութի մշակութային կեանքին եւ, մտանատրապէս, տպարաններու աշխա-տանքին : Գտնուած էր նաեւ Զմիւռնիա, մանաւանդ աշակերտութիւն ցոյց տուած էր հոնտեղի հայկական տպարանին : Հայրե-նիքի մէջ տպարան հիմնելու գաղափարը անոր մօտ հաստատուած էր այդ օրերուն, դուցէ աւելի կանուխ, երբ նուիրակ էր Գերմանուհին մէկ-մէկ իջեցնում է իր քանդակները ու մաքրում փոշին : Ամառ-ւայ ընթացքում նրանք կարծես ծերացել են, խունացել : Բայց ահա անցնում են օրեր ու չաբաթներ, եւ ամէն բան գըզ-նում է իր տեղը, ուրիշ խօսքով՝ կեանքը մտնում է իր սովորական հունը :

Աչխատանքային օրը վերջացաւ : Բրու-տանոցում մթնոլորտն, ինչպէս խոնաւը կ'ասէր՝ «գժուար էր», այսինքն ծանր էր :

Լիուդմիլան պատրաստուած կաւը խը-նամքով ամբացրեց իր աչխատանքային քառակուսի տախտակին, որպէսզի ա-ւտեան չորանոցը կարգի բերելուց յե-տոյ փորի ու քչփորի :

Սկսեց ձիւնել : Հնչեց բանթողի զանգը եւ մենք դուրս եկանք բրուտանոցից :

Օրհնուած լինես դու կեանք· կարելի է ազատ կերպով շնչել այս մաքուր, պղ-պջպղակի նման ախորժելի օդն, առանց խախտած լինելու օրէնքը :

ԳՈՒՐԳԻՆ ՄԱՀԱՐԻ

(Շար· – 25)

Ծաղկած Փշալարեր

(ՎԻՊԵՐԳ)

Դրա փոխարէն մայրերն իրաւունք ու-նեն խոհանոցից գերեկ թէ գիշեր առա-նալու եռացած ջուր անսահմանափակ քա-նակութեամբ : Մայրերը եռացած ջուր չատ են խմում, նրանք հնարել են մի հետա-քրքիր տեսութիւն, ըստ որի «երկու լիտր եռացուած ջուրը փոխարինում է այս-քան դրամ հացի» : Ու խմում են :

Եթէ երեխան ի հեճուկս բոլոր օրյեկ-տիւ եւ սուբյեկտիւ պայմանների չարու-նակում է յամառել եւ ապրել, ապա կա-թից կտրելուց, աւելի շուտ՝ կաթի կորը-ուելուց յետոյ, մօրն, առաջին իսկ հետա-պով ուղարկում են ուրիշ, հեռուոր մի ճամբար, որպէսզի երազում անգամ չփայփայի զաւակին ու նրա հօրը տես-նելու յոյսը : Իսկ եթէ երեխան մարում էր մոմի նման, մօրն ուղարկում էին այն ճամբարը, որտեղից եկել էր· վերադար-ձողները չարաթներով լրենց չէին ղըզ-նում ծանր ապրումներից, պատմում էին լրենց ապրած մայրութեան բերկրանք-ների մասին այնպիսի մանրամասնութիւն-ներ, որ ունկնդիրները մայր դառնալու մտքից անպատմ սարսափում էին : Հակա-ռակ այս ամէնին՝ մայրանալու ղէպքերը չէին պակասում : — Եթէ այս է կեանքը եւ սրանով էլ պիտի վերջանայ՝ ապա պէտք է ամէն ինչ փորձել, տանել ամէն դառնութիւն եւ որքան չատ դառնութիւն՝ այնքան լաւ, — երեւի այս էր երիտա-սարդ կալանաւորուհիների հոգեբանու-թիւնը :

Երբ հայրերը նիհարած եւ դունատուած դուրս էին գալիս պատժախուցերից, բա-րքը թուում էր նրանց հայրենի տուն : Նրանք ապրում էին փոքր ազատութեան մեծ ղգացմունքը : Թուով ութ դրասեն – եակային աչխատողները, ամէն օր, մեր ճամբարից, կտրելով տասներկու կիլո-մետր տարածութիւն, գնում էին, աւելի շուտ՝ տարում էին առաջին ճամբարա-յին կէտ· նրանք աչխատում էին բա-ժանմունքի վարչութեան դրասենեակում եւ երեկոյեան վերադառնում էին հետա-քրքիր լուրերով : Նրանք էլ պատմում էին հայրերին, թէ ո՞վ է նորածինը, որ-ղա՞յ թէ աղջիկ, թէ ի՞նչպէս են ղղում մայրերը իրենց եւ երբեմն կարող էին ցանկապատի անցքից որոշ օգնութիւն հասցնել ազեսաւոր մօրը :

Մօր գնալուց յետոյ ապրող երեխան դիմապրկուում էր վերջնահանապէս : Ընդ-հանրապէս դրաւոր ոչ մի տող ու տուեալ չէր ուղեկցում նրա աչխարհ գալուն : Երեխան համարակալուում էր եւ այդքան միայն : Երեխաներին խնամում էին տա-րիքաւոր կալանաւոր կանայք· մայրերի գնալուց յետոյ նրանք զաղարում էին ե-րեխաներին ճանաչելուց, աւելի շուտ՝ ճանաչում էին նրանց համարներով : Այն-պէս որ եթէ մայրերից մէկին ու մէկը ե-կու–երեք ամիս յետոյ եւ վերադառնար եւ փորձէր տեսնել իր որդուն, ոչ մի ուժ չէր կարող որոշել, թէ ո՞րն է նրա հա-րազատը :

... Այո, այո, այս գործում եւս Մա-մօն առաջիններից չէր :

Իսկ հիմա նորից ձմեռ է· մեղրալուսնի դիւերների նման կարճ ամառն անցաւ : Գործարար բակի ու դրասենեակի աչխա-տողներն անցան իրենց անմիջական պար-տականութիւնների կատարմանը : Ծանօթ մամռոցով բացւում է բրուտանոցի դուռը եւ մենք ներս ենք մտնում ինչպէս ամա-րանոցներից վերադարձողներն են մըտ – նում իրենց տուները : Ամէն ինչ թուում է խունացած, փոշոտ, բայց հարազատ : Ա-ռաջին օրն աչխատանքը չի կպչում կար-ծես : Տաչտը դատարկ է, ջեռը նախա – պատրաստուած չէ հունցելու համար : Բա-ցի դրանից հարկաւոր է դրաղուել ընդ – հանուր մաքրութեամբ, կարգաւորումով :

Մաղաքի մէջ եւ ծանօթացած էր տեղւոյն հարուստ վաճառական Գրիգոր Մելքեան – Զակիկեանի: Այս վերջինը պատրաստակամութիւն յայտնած էր հրատարակել տպարանի ծախքերը:

Կաթողիկոս դառնալէ երկու տարի եւք Սիմէոն Երեւանցի նամակներ կը ղրկ. Պոլիս եւ Զմիւռնիա իր ներկայացուցիչներուն՝ յորդորելով անոնց ձեռք ձգել հայկական դիրքեր եւ մամուլ՝ էջմիածին տեղափոխելու համար: Ան կը փորձէ դնել կ. Պոլիս բնակող տպագրիչ Սարգիս Սաֆարեանի հայերէն տպատառերուն հայրերն ու մայրերը: Սարգիս վէնետիկէն կ. Պոլիս բերած էր տպագրական արքեր, սակայն անոնց համար չատ սուղ փոխարժէք կը պահանջէր էջմիածինէն: Սիմէոն Երեւանցի այս անգամ կը փորձէ համոզել Զմիւռնիոյ հայկական տպատանի տէրը՝ Մարկոս, որ իր տպարանը էջմիածին տեղափոխէ, բայց ան անվերջ կը ձգձգէ գործը: Այնուհետեւ, Ամթերտամի հայկական եկեղեցւոյ տեսուչ՝ Յովհաննէսի միջոցով կը փորձէ ձեռք ձգել Ամթերտամցի Առաքել Պօղոսեանի հայկական տառերուն մայրերը՝ նոյնպէս:

Ի վերջոյ կ'որոշէ տեղական միջոցներով հիմնել տպարանը: Նախնական օժանդակութիւն կը առանայ Գ. Միքայէլեան – Զակիկեանէ: Կը սկսին աշխատանքները: Կը հիմնէ դրամագլուխ՝ կը ձուլէ տպատառեր: Աշխատանքներուն եռանդուն կը մասնակցին տեղապահ Միքայէլ Շառաֆեցի եւ ոսկերիչ՝ վարպետ Յարութիւն:

1771ին տպարանը արդէն պատրաստ էր. աշխատողները՝ դրաշարներ, տպագրողներ, սրբագրիչներ էջմիածնի միաբանութեան անդամներն էին եւ անոնց հետ՝ վարպետ Յարութիւնը: Նորաստեղծ տպարանը կ'անուանուի՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ: Աւանդական կարգով նախ կը տպագրուի Սաղմոսարան մը, որ, սակայն լաւ չըլլալով կը փճացուի: 1772ին կը սկսի Սիմէոն Երեւանցիի «Զբօսարան հոգեւոր» դիրքին տպագրութիւնը, որ կ'աւարտի յաջողութեամբ:

Աթկա փոքր չափի (7,5×10,5 մ. 180 էջ) հրատարակութիւն մըն է, պարզունակ, բայց դիւրընթեռնլի չարուածքով: Կաշէ, զեղցիկ պարզանկար կազմը հաճելի տեսք կուտայ այդ նուիրական գրքոյկին, որուն մնացած քանի մը օրի – նահիները մատենագիտական հարուստ նկարներ են այժմ:

Գրքոյկին սկիզբը զետեղուած է հեղինակին յառաջաբանը իսկ վերջին էջերուն մէջ՝ յիշատակարանը, ուր կը նկարագրուի տպարանին հիմնադրութիւնը: Մանուսրապէս կը նկարագրուին երեք տառի Յանին եւ Հերակլ Թագաւորին միջեւ 1768–1771ին տեղի ունեցած ծանր, արիւնալի պատերազմները, որոնք մեծ վնաս պատճառած են հայ բնակչութեան եւ քանի մը տարիով ուշացուցած են տպարանին բացումը:

1773ին էջմիածնի տպարանին մէջ լոյս կը տեսնէ Սիմէոն Երեւանցիի »Տաղարան»ը՝ հեղինակին բանաստեղծութիւն – ներու հատաքածոն: Յաջորդ տարի տպագրութեան կը յանձնուի եւ 1775ին լոյս կը տեսնէ անոր կազմած «Տօնացոյց»ը, որ արդէն մեծածաւալ դիրք է (564 էջ) եւ աչքի կը զարնէ բաւական յաջող տպագրութեամբ: Ունի նաեւ բազմաթիւ պատկերի զարդեր եւ պատկերներ, որոնք Յարութիւն էջմիածինցիի հեղինակածն են: Ան մօտ քսան տարի աշխատած է էջմիածնի տպարանը, անընդհատ կատարելագործելով իր արուեստը: Անոր ձեռագրած չարք մը դիրքերը այսօր ալ հիացում կը պատճառեն իրենց բարձր արուեստով:

Տպարանի բարեկարգումին իր նպաստը կը բերէ անուանի տպագրիչ Պօղոս Արապեան, որ կ. Պոլսէն ժամանելով Կովկաս՝ առեն մը կը մնայ էջմիածին: (Ի դէպ Թիֆլիսի մէջ 1782–83ին Հերակլ թագաւորին տպարանքով կը կարպաւորէ արքունի տպարանը եւ վրացերէն երկու դիրք կը տպէ):

Թուղթը կը բերուէր Եւրոպայէն. ահռելի մեծ դժուարութիւններ կը առեղծէր եւ ծախքերու դուռ կը բանար: Սիմէոն Երեւանցի կ'որոշէ թուղթի գործատուն մը բանալ: Գործատան չինութեան գրամը կը տրամադրէ նոյն հնդկահայ բարեբարը: 1776ին Հայաստանի առաջին թուղթի գործատունը արդէն կ'աշխատէր (բամպակի հումքով): Էջմիածնի թուղթը, որ բաւական լաւ էր, 1779ին կ'օգտագործուի Սիմէոն Երեւանցիի «Պարտաւճառ» դատաստանական գործին տպագրութեան համար: Այդ միջոցին նոր կռիւներ կը ծագին Յան Հուսէյնի եւ Հերակլ Թագաւորին միջեւ: Սիմէոն Երեւանցի ահռելը կը յաջողի հաշտեցնել երկու կողմերը եւ այդ առթիւ, իբրեւ բարեկամութեան նշան, Սիմէոն Վրաց Թագաւորին կը նուիրէ էջմիածնի մէջ նոր պատրաստուած մամուլը, որ յետագային օգտագործուեցաւ Թիֆլիսի վրացական տպարանին մէջ: Սակայն Երեւանի Յանը, որ պարտքեր պէտք է վճարէր Հերակլի, չի կատարեր իր խոստումը, եւ ընդհատումները կը վերսկսին: Կռիւները տեղի կ'ունենան Ախալքալաքի դաշտի մէջ, էջմիածնի մօտերը: Կը կողոպտուին հայկական գիւղերը, էջմիածինը եւ տպարանը:

Մանր վիշտերու մէջ կը վախճանի 1780ին: Իր վերջին խնդրանքը կ'ըլլայ՝ որեւէ գնով աւարտել «Պարտաւճառ»ի տպագրութիւնը:

Հայաստանի առաջին տպարանին հիմնադիրը կը մեռնի, բայց տպարանը կը չարունակէ բանիլ: 1783ին վերջապէս լոյս կը տեսնէ «Պարտաւճառ»ը: Այնուհետեւ լոյս կը տեսնեն Յովսէփոս Երզնկեցիի «Յաղագս պատերազմի Հրէից» դիրքը, Ժամագիրք, Մորվրդատեառ, Սաղմոսարան, երկրորդ եւ երրորդ տպագրութեան կ'արժանանան Սիմէոն Երեւանցիի «Տաղարան»ը եւայլն:

Հիմնադրութեան օրէն մինչեւ գարավերջ էջմիածնի տպարանը կը տպէ 12 դիրք: Այս քանակը մեծ չէ, անշուշտ, ան չէր կրնար բաւարարել դիրքի պահանջը Հայաստանի մէջ, եւ հայերէն դիրքերու մեծ մասը չարունակ դուրսէն կուգար (դիմաւորապէս Պոլսէն եւ Նոր Նախիջեւանէն): Եւ, այնուամենայնիւ, ԺԸ. դարու վերջերը, մօտաւորապէս երեք տասնամեակներու ընթացքին, էջմիածնի մէջ տպագրուած այդ քանի մը դիրքերը արդէն հայատառեան հրատարակութիւններ էին, սկիզբը զործ մը, որ այլեւս պիտի չընդհատուէր, այլ, ընդհակառակն, երթալով պիտի զարգանար ու ճոխանար: Եւ փաստը ինքնըստինքեան չատ հետաքրքրական է այսօր. ազգային պետականութենէ զրկուած, հակառակորդ բանակներու անվերջ թատերաբեմ հանդիսացող Հայաստանը զարճած էր դիրք տպող երկիր:

Ռ. ԻՇԽԱՆԵԱՆ

ՅԱՋՈՂ ՁԵՌՆԱՐԿ ՄԸ

—o—

Կապոյտ Աչէ Շաւիլի մասնաճիւղի ճաշ – պարահանդէսը, անցեալ կիրակի օր քաղաքապետարանի սրահին մէջ, կատարեալ յաջողութիւն մը արձանագրեց, ինչպէս մասնաճիւղին ներկայ տարեշրջանի նախորդ գոյդ ձեռնարկները:

Ընդարձակ սրահը բերնէ բերան լեց – ուած էր: 150էն 170 հայրենակիցները, ճաշակով սարքուած սեղաններու չուրջ բոլորուած, մասնակից եղան ճաշին, պատրաստուած երիտասարդ եւ երէց ընկերուհիներու կազմէ: Ներկաներու թիւը կրկնապատկուեցաւ ճաշէն եաք: Ներկայ էին Շրջ. Վարչութեան նախագահուհին, փարիզեան շրջանի քոյր մասնաճիւղերու ընկեր – ընկերուհիները, Շաւիլի Կապոյտ Աչէ Հուհիները եւ համակիրներու բազմութիւն մը: Ներկաներուն մեծամասնութիւնը բաղկացած էր երիտասարդներէ:

Երեկոյթը անցաւ ուրախ տրամադրութեամբ: Պ. Պեհրիկեան իր նուագախումբով եւ հայերէն երգերով, «Նայիրի» պարախումբը իր լրիւ կազմով եւ հայկական պարերով հայրենական մթնոլորտ ստեղծեցին: Եւրոպական պարերը տեւեցին մինչեւ լոյս:

Շաւիլի Կապոյտ Աչէն այս ձեռնարկը արժանացաւ դնահատանքի: Մասնաճիւղի անդամուհիները նոր ոգիով բնակած – նալար պիտի չարունակեն իրենց օգտակար աշխատանքը միշտ նչանաբան ունենալով հայ ժողովուրդին ծառայել, ըլլալ հայ ժողովուրդին կողքին ի չահ անոր:

Շրջանի երիտասարդուհիները պէտք է քաջալերեն միութեան աշխատանքները, իրենք եւս լծուելով ապագայ գործերուն:

Քաղաքապետարանը Կապոյտ Աչէի սրամադրած էր իր սրահը, սիրայօժար կերպով:

ԹՂԹԱԿԻՑ

Լեզուաբան Կ. Սրապեանի ԴԻՒԱՆԸ

—o—

Լեզուաբան Կիւրեղ Սրապեան ծնած է Կէյվէ 1844ին: Նախնական կրթութիւնը ստացած է իր ծննդավայրին մէջ, ապա աւարտած է Երուսաղէմի Ժառանգաւորաց դպրոցը: 1868ին ձեռնադրուած է վարդապետ եւ 1868–1872ին հոգեւորական եւ ուսուցչի պաշտօններ վարած է Երուսաղէմ: Գէորգ Դ. կաթողիկոս 1875ին կը հրաւիրէ դինքը էջմիածին: Կաթողիկոսին կարզադրութեամբ 1878ին կը մեկնի Կարս ուսումնասիրելու եւ տեղեկագիր կազմելու համար չրջանի հայ բնակչութեան, եկեղեցիներու, վանքերու, հնութիւններու եւ դպրոցներու մասին: 1879ին «Արարատ»ի մէջ ան կը հրատարակէ «Ճանապարհորդութիւն ի Նախիջեւան» յօդուածը:

Կ. Սրապեան 1880–81ին ձեմարանին մէջ կը դասաւանդէ Հայոց լեզու եւ միաժամանակ կը զբաղի հայագիտութեամբ: Կը մեռնի 1895ին Նոր Նախիջեւան:

Սրապեանի դիւանին մէջ (*) կը զըտնուին անտիպ եւ մասամբ տպագրուած հետեւեալ աշխատութիւնները ձեռագիրները՝ Յուշերու մատեանը, «Հայերէն լեզուի նախնական արմատները», «Ազգային միճակի բարւոքման մէկ եղանակ», «Ճիչատակարան անցից Ս. Աչէ վանացն որ ի Նոր–Նախիջեւան», «Քերականութիւն հայերէն լեզուի», «Համեմատութիւն հին եւ նոր գաւառաց Հայոց մեծաց», «Թէ պի՞նչ է մկրտութիւն», «Արեգակնային տարի ըստ Կոպերնիկիայ», «Եւսերիայ ժամանակագրութիւն», «Շարայարութիւն պահասորդի Բ. դրոյն Սեբէոսեանի Տարօնեցւոյ», «Ի խորհրդարան թեմական հոգեւոր դպրոցին Հայոց Նախիջեւանու եւ Պեսարապիոյ», «Օրացոյց 1893 թ.», «Վաղարշապատ՝ մայրաքաղաք Հայոց», «Երուսաղէմի պատրիարքութեան սկիզբն ու չարունակութիւնը», «Հայոց լեզուի այրուբենը», «Պատմութիւն քրիստոնէական եկեղեցւոյ», «Աստուածաբանութիւն ըստ վարդապետութեան Քրիստոնեայ եկեղեցւոյ, «Մ. Խորենացւոյ պատմութիւն Հայոց», «Պատմագիր Ազաթանգեղոս», «Հայոց դպրոցի մանուկներուն», «Հայ դպրոց մատենագրութիւն», «Խորհրդածութիւն երախայի պատրաստութեան մասին», «Աստուածաբանութիւն, ըստ յայտնութեանց հին եւ նոր կտակարանաց», «Ծրագիր Հայոց լեզուի», «Մանրութիւններ առաջին դրոց», «Աձեան ցուցակ ձախուց Ս. Աչէ Վանայ, որ ի Նոր–Նախիջեւան», եւայլն:

Ա. ԱՏԱՄԵԱՆ

(*) Դիւանը կը գտնուի Երեւան:

ՀԱՑԱԳՈՐԾ ԿԻՆԸ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ՀՐՁԻԳԸ

Ֆ.

Աբրայի քոյրը զգաց որ արցունքի երկու կաթիլներ կը սահէին այտերուն վրայ: Նորէն համբուրեց Ժորժը ու դուրս ելաւ, ինքը պատող յուզումը ծածկելու համար:

Տիկին Տարիէ դնաց միացաւ նկարչին ու աբրային. այդ պահուն վերջին երկուքը կը խօսակցէին Ժանն Ֆօրթիէի վրայ, ու կը ջանային կռահել թէ ի՛նչ պարագաներու բերումով՝ այդ խեղճ կինը երիցասուն ապաստանած էր, յոյնութենէ ուժասպառ եւ անօթութենէ կիսամեռ վիճակի մէջ:

— Կեանքի առամ մըն է, ինչպէս կ'ըսեն թերթերը, դիտել առաւ աբրայ Լաժիէ:

— Ծարաւած նորատի աղջիկներ, իրենց ամուսիններէն լքուած կիներ ստիպուած են կեանքի դժուարութիւններուն դէմ պայքարիլ զաւկի մը հետ, ու ասոնց թիւը չատ է, յարեց էրնէսթ: Հոս եկած առաջախատ կիներ ալ անոնցմէ մէկն է թերեւս:

— Տեղացի չէ ան, ըսաւ Քլարիս: Իր յաղնութենէն կը հասկցուի որ հեռուէն կուգայ: Խորունկ վիշտերու հետքը կրող դէմքը ցոյց կուտայ թէ չատ տառապած է ան:

— Արտայայտիչ դէմք մը ունի այդ կինը. անշուշտ պիտի գծեմ զայն, դոչեց արուեստագէտը:

— Եղբայր, ի՞նչ կը խորհիս ընել այդ կնոջ համար:

— Քոյր, ինչ որ կ'ընենք մեզի դիմող բոլոր անձերուն: Դրամական օգնութիւն մը պիտի ընենք, երբ լաւ մը հանդչի: Յետոյ պիտի ձգենք որ իր ճամբան չարունակէ:

Աբրայ Լաժիէ իր ազօթամիտքը բացաւ: Էթիէն իր վրձիններէը առաւ. յետոյ ձգեց պանոնք, մատիտ մը առնելու եւ յաչտեառերին մէկ թերթին վրայ յիշողութեամբ գծելու համար գժբախտ անծանօթուհիին դիմագծերը: Այդ միջոցին հնչեց վանդակապրան զանգակը: Գիւղական նամակատարը սրսուիչը պարտէզ մտաւ, սրբային բերելով այն լրագիրը, որ ամէն օր Փարիզէն կը հասնէր:

Ժողովրդապետը պատրեց լրագրին դօսին, բացաւ զայն ու սկսաւ դանդաղօրէն կարդալ, մէկ տողն իսկ չգատկելով: Ընդհատուղ անցաւ երկրորդ էջը, ուր երկար դրութիւն մը կար, սա խորագրով.

ԵՐՐԵԱԿ ՈՃԻՐ

Աբրան սկսաւ կարդալ այդ դրութիւնը: Քանի՛ կը չահագնար իր ընթերցուածին մէջ, իր չունքերը աւելի կը պռատէին. ի վերջոյ բացականչութիւն մը արձակեց, որ սարսուռ պատճառեց էթիէնի ու խանդարեց անոր աշխատութիւնը: Նկարիչը վեր առաւ իր դլուխը:

— Սիրելի աբբա՛ս, լրագրին մէջ ձեղ չահագրգռող բա՞ն մըզտաք, հարցուց էթիէն:

— Այո՛, չատ կը չահագրգռէ զիս, ինչպէս ձեզ, պատասխանեց կրօնաւորը: Տարօրինակ ու սոսկալի բան է...:

— Ի՞նչ կայ, հարցուց Տիկին Տարիէ, որ այդ պահուն դռնէն դուրս ելլելու վրայ էր:

— Երկուքնիդ ալ ինձի մօտեցէ՛ք, ըսաւ ժողովրդապետը, ձայնը մեղմացնելով, նստեցէ՛ք ու մտիկ ըրէ՛ք:

Էթիէն եւ Քլարիս հետաքրքրուած, մէկ մէկ աթոռի վրայ նստան: Աբրայ Լաժիէ զուսպ ձայն մը սկսաւ կարդալ.

«Առջի գիշեր, երբեակ ոճիր մը գործուած է Ալֆօրվիլի մէջ, ոճիր մը որ երկարօրէն կանխամտածուած ու սոսկալի պարզիւնութեամբ մը գործադրուած է: Ալֆօրվիլի դաչտագետնին մէջ, ամէն բնակութենէ հեռու գտնուղ այն կարեւոր գործարանը, որ ճարտարապետ Պ. Փիւլ Լապրուի կը պատկանի, ոչ եւս է: Ոճրագործի մը ձեռքով հրկիզուած այդ գործարանը հրոյ ճարակ եղած է, ուղիչներ առեն ճամբորդութենէ յանկարծ վերադարձած ճարտարապետն ալ սպանուած է հրձիգին կողմէ, որ գողութիւնը ըրած առեն յանկարծակիի եկած էր:

«Միայն Պ. Լապրու չէ որ զոհ գացած է: Գործարապետ ժաք Կարօ իր անձնուիրութեան անսալով՝ իր մահը գտած է բոցերուն մէջ, այն պահուն երբ կը փորձէր զրամարկղը ազատել:

«Գիշերը, գործարանին մէջ պահապանութիւն կ'ընէր ժանն Ֆօրթիէ անուն կին մը:

ԿԶԱՎԻԻ ՏԸ ՄՈՆԹԻՓԻՆ

(Շար.)

«ՅԱՌԱՋ»Ի ԲԱՐԳԱՒԱՃՄԱՆ ՀԱՄԱՐ

(Համակրաւիճ տեղահանութեան առթիւ)

Իսիէն Տիկին Առաքելեան 100 ֆր. կը նուիրէ։

×

ՎԱԼԱՆՍԻԷն, Եպրմեան ընտանիք 30 ֆր., *Տիկին Տօնիկեան* 30 ֆր.։

ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ԱՌԹԻՒ «ՅԱՌԱՋ» ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

Ալֆորվիլէն Պ. Տիրան Զերչեան մէկ տարեկան «Յառաջ» կը նուիրէ Պ. Վարդան Մաթէոսեանի (Էփինէ)։

ՇԱՒԻԼԻ Ս. ԳՐ. ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

Եկեղեցւոյ վերաշինութեան օծման 15րդ *տարելիցը կը տօնուի* 17 Դեկտ. *Կիրակի առաւօտ։*

Հանդիսաւոր պատարագ կը մատուցուի եւ կը քարոզէ Նորվան Վրդ. Զաքարեան։ Երգեցողութեանց կը մասնակցին հրաւիրեալ ղպիրներ։

Յառաջիկայ պատարագի, մասնաւոր հոգեհանգստեան պաշտօն կը կատարուի եկեղեցւոյ բոլոր բարերարներու հանգուցեալ ծնողաց հոգոյ ի յիշատակ, ի մասնաւորի ողբացեալ Պ. Սարգիս Պալապանեանի մահուան Բ. տարելիցին առթիւ։

ՏՕՆԱԾԱՌ
ԴՊՐՈՑԱՍԷՐԻ ՄԷՋ

Դպրոցասէր Տիկնանց Վարժարանի Տօնածառի Հանդէսը տեղի պիտի ունենայ Դեկտ. 17ին, Կիրակի կէսօրէ վերջ ժամը 4ին վարժարանի նոր դահլիճին մէջ,

Նախագահութեամբ
ՍԵՐՈՎԲԷ ԱՐՔ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ
(Հայրապետական Պատուիրակ Եւրոպայի Հայոց)

Գեղարուեստական բաժին, ձօն պիւֆէ

Պետիկ ՊԵՏԻԿԵԱՆ իր երգերով եւ նուագախումբով պիտի ատելցնէ փայլը այս ցերեկոյթին

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ԿԱՊՈՑՏ ՀԱՋԻ Լիոնի մասնաճիւղի ընդհանուր ժողովը 12 Դեկտ. *երեքշաբթի կէսօրէ վերջ ժամը 3ին Ապպային Տան մէջ։ Կարեւոր օրակարգ։ Կը խնդրուի բոլոր ընկերուհիներէն ներկայ ըլլալ։*

ԿԸ ՓՆՏՌՈՒԻՆ

Յարութիւն Յովհաննէսի Մանուկեան կը փնտռէ իր եղբօրորդին՝ Մանուկ Սարգսի Գրիգորեան, ծնած 1912ին Վանի Կարճկան Քարվակ գիւղը։ Կինը՝ Կչիկ-եան Աբջալոյս, աղջիկները՝ Լմմա եւ Լուսիա, որոնք կ'ապրին Երեւան։

Սուսաննա Մուրադեան կը փնտռէ իր քեռին՝ Լեւոն Ախոյի Ներսիսեան, ծնած 1915ին։ Իր տղան Ռաֆիկը եւ աղջիկը Լմման, ինչպէս նաեւ Սաթենիկ, Մամիկոն եւ Շուշան ողջ են եւ Երեւան կ'ապրին։

Հայաստանի Կոտայքի շրջանի Բաշ գիւղէն Յովակ Մնացականեան, կը փնտռէ իր եղբայրները Վարդան, Արտաշէս, Աբրահամ Շահումեաններ, որոնց հետքը կորսընցուցեր է Բ. համաշխարհային պատերազմին։

Մանուչակ Մկրտիչի Զաքարեան կը փնտռէ իր եղբայրը, Սերոբ Մկրտիչի Զաքարեան, ծնած 1921ին, Ապարանի Ղոյթուր գիւղը։ Իր հետքը կորսնցուցած են Բ. աշխարհամարտին։

Որեւէ տեղեկութիւն փոխանցել հետեւեալ հասցէին.

Mr. HOUNANIAN K.
39, Rue des Petites Maries
13001 — Marseille

Կը խնդրուի արտասահմանի թերթերէն արտատպել։

IMPRIMERIE SPÉCIALE
DU JOURNAL «HARATCH»
32, RUE DE TRÉVISE — PARIS (9e)

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Կապոյտ Խաչէ Փարիզի մասնաճիւղի վարչութիւնը շնորհակալութեամբ առած – ցած է Պր. Հայկ Թորգոմեանէ 50 ֆր. Աբաթսի Հանչերեանի *մահուան տխուր առթիւ։*

ՍԱՄՈՒԷԼ-ՄՈՒՐԱՏ ՎԱՐԺԱՐԱՆ
ՏՕՆԱԾԱՌ

Կիրակի 17 Դեկտ. ժամը 16·30էն սկսեալ

ԵՐԳ, ՊԱՐ, ՆՈՒԱԳ
ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ
Ընտանեկան հաճելի մթնոլորտ, ճոխ սեղան, ճոխ վիճակահանութիւն
ԿԱՂԱՆԴ ՊԱՊԱՆ
իր նուէրներով
26, Rue Troyon — SEVRES

ՊԱՏԱՐԱԳ
ՊՕՄՈՆԻ

Ս. ԳՐ. ԼՈՒՍԱՒՈՐԻՉ ԵԿԵՂԵՑԻՆ

Այս Կիրակի (10 Դեկտ.) *առաւօտեան կը պատարագէ Նշան Քհնյ. Գույումճեան։ Ժամերգութիւնը առաւօտեան ժամը 8·30-ին, պատարագ՝ 10ին, քարոզ՝ 11·25ին, հոգեհանգիստներ ժամը 11·45ին։*

Ի պիտութիւն մեր հաւատացեալ ժողովուրդին։

A VENDRE

Matériel de tricotage en parfait état
1 Métier DIAMANT DX Jauge 5/120 cms
1 Métier SANTAGOSTINO
Jauge 5/120 cms
1 Métier SANTAGOSTINO
Jauge 3/100 cms, avec cames et rayeurs automatiques, mouvement moteurs et chevalement UHLMANN.
3 Métiers à main DIAMANT Dcfgp
Jauge 5/100 cbs.
S'adresser : Ets. T.L.T. « TABAK »
217, rue St-Denis, Paris (2e)
Tél. : 236-22-14

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐԸ

ՓԱՐԻԶԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ կապ. Խաչէ Շրջ. Վարչութեան, մասնակցութեամբ Փարիզեան շրջանի իր մասնաճիւղերուն, Մանուկներու Օրը կը տօնուի Փարիզի մէջ
ՅՈՒՆՈՒԱՐ 28ԻՆ

×

ԼԻՈՆԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ կապոյտ Խաչի Լիոնի մասնաճիւղին Յունուար 14ին։

ՏԷՍԻՆԻ ԱՊՐԻԼԵԱՆ ՅՈՒՇԱՐՁԱՆ

54րդ ցանկ

Այրի Տիկ. Սաթենիկ Պօյաճեան (Տէսին), Պր. Նշան Կօչկակարեան (Լիոն), Պր. Հ. Նալպանտ (Փարիզ), այրի Տիկ. Ովսաննա Եափուճեան, այրի Տիկ. Շաքէ Յակոբեան (Տէսին), այրի Տիկ. Հռիփսիմէ Քէչիչեան, Օր. Լուսանոյշ Քէչիչեան (Փոխիա), Տէր եւ Տիկ. Գըղիրեան (Ս. Ժիւլիէն), Տէր եւ Տիկ. Ալեքս Զօլաքեան (Փոխիա), Տէր եւ Տիկ. Սարգիս Պիւզիւլեան (Ս. Ժիւլիէն), Տէր եւ Տիկ. Յակոբ Ղազարեան, Տէր եւ Տիկ. Յարութիւն Ձիվէլէկեան (Տէսին), Պր. Աւետիս Նահապետեան, Պր. Խորէն Սարգիսեան, այրի Տիկ. Աննա Կօչկակարեան, Պր. Տօնապետ Մինասեան, Պր. Խաչատուր Զօպոյեան, Պր. Աստուածատուր Քըղէլեան, Պր. Ժիրայր Իւղէլեան, Պր. Յարութիւն Մաճոյեան, Պր. Մօսէս Մարգարեան, Պր. Կիրակոս Էօքսիւզեան, Պր. Յովհաննէս Ուզունեան, Տիկ. Վերժին Դաւիթեան, Տիկ. Վարդանոյշ Ֆախրիկեան (Վիէն) 20ական։

Նախկին դումար 151·269,38
54րդ *ցանկի դումար* 500
Ընդհ. դումար 151·769,38

ԿՈՒԶՈՒԻ

ՍՏԻՊՈՂԱԲՄԱՐ

Շատ լաւ տաքթիլօ մը պրտաեն-եակի աշխատանքի համար։

Դիմել՝
Mondotours
2, Rue de Sèze — Paris (9e)
Տիկին Գումրուեանցի

ՀԱՅԱՍՏԱՆ
ՇԻՆԱՐԱՐՆԵՐՈՒ ԵՐԿԻՐ

Երկու բաժիններէ բաղկացած ձայնապիր լուսարձակում

Առաջին մաս

ՕՇԱԿԱՆԷՆ ՀԱՂԱՐԾԻՆ

Պտոյտ մը մեր միջնադարեան հրաշակերտ եկեղեցիներու միջեւ

Երկրորդ մաս

ՍԱՐՏԱՐԱՊԱՏԷՆ ԲԻՒՐԱԿԱՆ

1918 Մայիսեան ճակատամարտներէն մինչեւ այսօրուան Հայաստանի վերելքը

VALENCE — SAMEDI 9 DECEMBRE A 20 H. 45
Dans les locaux de l'U.G.A.B. — 6, Rue Favantine

Հ.Բ.Ը.Մ.Ի ԵՐԻՏԱՍԱՐԴԱՑ ԱԿՈՒՄԲԸ
կը ներկայացնէ

ՀԱՅԱՍՏԱՆ
ՇԻՆԱՐԱՐՆԵՐՈՒ ԵՐԿԻՐ

Երկու բաժիններէ բաղկացած ձայնապիր լուսարձակում

Առաջին մաս

ՕՇԱԿԱՆԷՆ ՀԱՂԱՐԾԻՆ

Պտոյտ մը մեր միջնադարեան հրաշակերտ եկեղեցիներու միջեւ

Երկրորդ մաս

ՍԱՐՏԱՐԱՊԱՏԷՆ ԲԻՒՐԱԿԱՆ

1918 Մայիսեան ճակատամարտներէն մինչեւ այսօրուան Հայաստանի վերելքը

VALENCE — SAMEDI 9 DECEMBRE A 20 H. 45
Dans les locaux de l'U.G.A.B. — 6, Rue Favantine

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՈՒԻՐԱԿ
ՍՐԲՈՅ ԱԹՈՌԻՔԻ ՄԷՋ

ՊՈՒՍԱՀԱՅԵՐՈՒ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ
ԿԻՐԱԿԻ 14 ՅՈՒՆՈՒԱՐ ՍՓԼԱՆՏԻՏԻ ՄԷՋ

ԸՆԹԱՑԻԿ ԱԶԴԵՐՈՒ ՍԱԿԱԳԻՆ

ՄԷԿ ԱՆԳԱՄՈՒԱՆ ՀԱՄԱՐ

ՄԱՀԱԶԴ	70 Ֆ·	մինչեւ 1/4 սիւնակ
ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ	30 Ֆ·	մինչեւ 1/8 սիւնակ
ՅԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ	15 Ֆ·	» » »
ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ	30 Ֆ·	» » »
ՀԱՐՍԱՆԻՔ, ՆՇԱՆՏՈՒՔ	30 Ֆ·	» » »
ԾՆՈՒՆԴ	30 Ֆ·	» » »
«ԿԸ ՓՆՏՌՈՒԻ»	15 Ֆ·	» » »
ԾԱՒՈՒ Է	25 Ֆ·	» » »

Այս գիները մէկ անգամ հրատարակելի եւ ձշաձակուած ծաւալով ազդերու համար են, չորրորդ էջը։

Կանխիկ վճարումը պարտաւորիչ է։

Առեւտրական կամ այլ ազդերու մասնաւոր պայմաններուն համար դիմել վարչութեան

ՅԱՅԵԼՈՒԹԻՒՆ

ՀԱՆԳՍՏԵԱՆ ՏՈՒՆԵՐՈՒ

Նախաձեռնութեամբ կապոյտ Խաչի Իսիլի մասնաճիւղին այցելութիւն մը կազմակերպուած է Մոնմորանսիի եւ Անտիլիի հանգստեան տուները, Դեկտ. 10-ին, Կիրակի օր։

Օթոքառը կը մեկնի Լէոն Պլում հրապարակէն, (Կառ տ'Իսթ) ժամը 13·30ին։

Արձանագրուիլ Խաչուհիներուն մօտ։

Ծախքերու մասնակցութիւն 10 ֆր.

ԿԸ ՓՆՏՌՈՒԻ

Բնիկ Էլպասան, Թոզատի շրջան, Տիկին Կիլիմիա Մըսրեան (Ծնեալ Մզռեսի Մանուկեան) կը փնտռէ իր եղբօր՝ Հաճի Մանուկին զաւակները։ Արմենակ 14 *տարեկան, Սիրանոյշ* 5 *տարեկան, Կարապետ* 4 *տարեկան, Գէորգ* 3 *տարեկան. ասոնք Մալաթիա տեսնուած են։ Իրենց մօրը անունը Վարդուհի։ Կը փնտռէ մեծ քոյրը Եղսան, զաւակները՝ Լեւոնը,* 14 *տարեկան, Ազատին* 13 *տարեկան. ասոնք իրենց քովը մեռած են։ Փերուզը* 12 *տարեկան մնաց Պերամակի Խանը։ 8 տարեկան Միհրանը, 5 տարեկան Գրիգորիկը, այս երկուքը կորսուած են։ Իր հօրը անունը Օհաննէս Քէչիչեան։*

Իրենց մասին լուր ունեցողներէն կը խնդրուի իմացնել հետեւեալ հասցէին.

G. M. Djnbachian
62, Ave. Sadi Carnot
Valence 26000 (France)

Կը խնդրուի արտասահմանի թերթերէն արտատպել։

ԿԻՐԱԿԻ
10
ԴԵԿՏԵՄԲԵՐ
DIMANCHE
10 DECEMBRE
1972

Le Numéro 0,70 F.

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ
ՀԻՄՆԱԴԻՐ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

HARATCH

Le Seul Quotidien Arménien en Europe Occidentale
Directrice : Arpik Missakian
32, rue de Trévise Paris 9

— Tél. : 770-86-60 —
C. C. P. Paris 15069-82

Fondé en 1921
R. C. Seine 57 A 2781

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա	Տար. 120 ֆր.	Վեցամսեայ	65 ֆր.
Արտասահման	Տար. 135 ֆր.	Հատը	0,70 ֆր.

ԽՄԲ. ՏԱՐԻ — ԹԻՒ 12·586

Fondateur : SCHAVARCH MISSAKIAN

48e ANNÉE — N° 12.586

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՓՈՄՓԻՏՈՒԻ ՃԱՌԸ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԵԱՆՑ ՀԱՐԻՒՐԱՄԵԱԿԻՆ

—0—

«ՈՉ ՄԷԿ ԲԱՆ ԱՒԵԼԻ ՏԱԺԱՆԵԼԻ Է ԻՆՁԻ ԲԱՆ ՄԵՂԱՍԱԿՑՈՒԹԵԱՆ ԿՈՉԵՐԸ»

Աւելի քան Հանրապետութեան նախագահ մը, նախկին Նորմալիէն մըն էր որ հասք առաւ առջի օր, Շան գ'Էլիզէի թատրոնը, ուր կը տօնուէր Քաղաքական Գիտութեանց վարժարանի հարիւրամեակը։ Փոմփիտու որ ծանօթ է «իր դասական ներուն» ինչպէս կ'ըսուի, քաղաքական ճառ մը չէ պոր արտասանեց այլ՝ քաղաքախոհութեան ճառ մը, այս բացատրութեան փիլիսոփայական իմաստով։

Նախկին դասախօս Փոմփիտու նախ ոգեկոչեց իր անցեալը Նորմալի թէ Քաղաքական Գիտութեանց նատարաններուն վրայ, հասնելու համար քաղաքականութեան եւ սահմանելու աչքի եւ ձախի մարդը։ Ապա կը չարունակէ եւ ճշդելէ եառք թէ «մէկը որ երբեք մաքին վարպետը չէ եղած, Շառլ Մօռաս, «Քիլ եւ Թանժէ»ի մէջ, արդէն 1910ին նախատեսած էր ներկայ աչխարհը երբ կ'ըսէր. «կարմրուած երկու վարչաձեւերէ, բարմաթիւ կայսրութիւններ կարդ մը փոքր եւ միջին ազդութիւններով երկուքին միջեւ։ Այսպէս կազմուած աչխարհ մը չի կրնար հանդարտ ըլլալ։ Տկարները աւելի տկար պիտի ըլլան, զօրաւորները չատ զօրաւոր եւ մէկուն կամ միւսին խաղաղութիւնը կրճատած է միայն ոտրատիին վրայ դրը կրցած են փոխադարձաբար ներչնչել հանները»։

Փոմփիտու Մօռասով չի բաւականանար անդուլ ոգեկոչել եառք Ռիչըլիէօն ու Տիզրայէլին, Թալլեանը, Պիսմարքը (եր – կաթ ու արիւնը), Սթալլին (խորամանկութիւնն ու անողոքութիւնը), եւայլն, եւայլն, Փոմփիտու կը վերլուծէ Ֆրանսան ու Ֆրանսացին, որ 1918ի յաղթանակի վատահութեամբ կը հասնի 1940ի տապալման։ Եթէ ներկայիս հեռանկարները աւելի փայլուն են, պէտք է սակայն անդրադառնալ թէ «երկու խոչընդոտ կայ մեր առջեւ որոնց պէտք է սիրապետենք։— Առաջինը որ կապուած է վերջին պատերազմին մութ ղեպցում մըն է դատապարտուած ըլլալու, մենք մեր վրայ քաշելու եւ միայն նիւթական յառաջդիմութիւն կամ անհատական երջանկութիւն հետապնդելու։ ... Ոչ մէկ բան աւելի ատելի է ինձի, կը խոստովանիմ, քան միջակութեան կոչերը»։

Փոմփիտու կը խօսի երկրորդ խոչընդոտին մասին զոր ամէնէն ծանրը կը նկատէ. «ան կը վերաբերի, լա՛ւ գիտենք, մեր ցեղին իսկ նկարագրին, այս փոփոխամտութեան զոր կեսար կը տեսնէր եւ կ'օգտագործէր արդէն Կալիացիներու դէմ։ ...Ոչ մէկ երկիր այնքան սահմանադրութիւն օգտագործած է ցորչափ մենք։ Ոչ մէկը այնքան կանոնաւորութեամբ մէկ օրէն միւսը, դատապատուելու համար յետքերուն, վերապատուելու համար յետայնութիւն։ Այսպէս՝ Քլէմանսոյին, Փուան – քարէին, Մառեչալ Փէթէնէն, Նոյեմբեր 9ը։ ոը Կօլին 1969 Ապրիլին»։

Ու Փոմփիտու կ'անցնի հին Աթէնք, և յոյն քաղաքներու փճացումը երբոյ իսկ ձեռքերով մինչեւ այն օրը ուր կ'իյնան Փիլիպպոսի լուծին տակ, կը նկատէ Ի. դարու Եւրոպայի նախապատկերը։ «Վերջերս կրկին կը կարդայի այն հոյակապ ճառը, զոր Թուկիդիտէս կը վերագրէ Պերիկլէսի Պեղոպոնէսի պատերազմին սկիզբը եւ հոն կը գտնէի առ կենսական նախազգուշութիւնը.— «Դաշտերակու – թեան համար, ճիշդ հակառակը այս մարդոց (հարցը Սպարտայի կը վերաբերի բայց արդիական Սպարտաներու ծանօթ ենք) որոնք երիտասարդութենէն իսկ ծաննդը մարդումի կ'ենթարկուին քաջութեան հանելու համար, մենք, առանց ճնշումի մեր կեանքով, նոյնքան ծանր վտանգներ կը տանինք»։ Այո՛, բայց քանեւհինգ տարի եառք, Սպարտա չաղթած էր եւ աթէնք բռնակալութեան ենթարկուած։ Տա՛ր, որ կարենայինք, մենք Ֆրանսա – ցիներս, պահպանելով հանդերձ առանց ճնշումի մեր կեանքը, թոյլ չտալ որ քաջութիւնը կորսուի եւ նախ եւ առաջ քաղաքացիական քաջութիւնը, որ կը կայանայ պիտակցելուն մէջ, կենսական պահերուն, անձնական չահը դնել ընդհանուր չահին եառք»։

Ֆրանսական մաքի այս փայլուն ելոյթով, Նախապահ Փոմփիտու կը պարզէր իր տեսակէտներն ու ըմբռնումները, կոթնելով դասականներուն բայց խօսքն ուղղելով՝ օրուան մարդոց։

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԵԹՈՎպԻԱԿԱՆ օդանաւ մը առեւանդելու փորձ մը ձախողեցաւ։ 94 ճամբորդ փոխադրող օդանաւը ճամբայ ելած էր Ատէս–Ապապայէն, երբ եօթը երիտասարդներ (երկուքը՝ երիտասարդուհի) փոր – ձեցին տէր դառնալ օդանաւին։ Կռիւ մը ծայր առաւ զաղանի ոստիկաններու եւ օդահէններու միջեւ։ Եօթն ալ ապաննուեցան։

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ բանակը բախտ ունեցաւ պաղեստինեան արձակագիրներու հետ, երբ ասոնք դիրք դրաւեցին Հալ։ Լիբանանի սահմանամերձ չրջանի մը մէջ։ Լիբանանցիք պահանջեցին, որ հեռանան։ Մերժումի հանդիպելով կռիւ տեղի ունեցաւ։ Հինգ հոգի մեռաւ։

ՇԻԲԱԿՈՑԻ մօտերը ճամբորդատար օդանաւ մը լինկաւ։ 55 հոգի մեռաւ։

ԱՄԵՐԻԿԵԱՆ «Լայֆ» պատկերազարդ ամսաթերթը, որ հիմնուած էր 1936ին եւ որուն տպաքանակը 7 միլիոն էր (յետոյ՝ հինգուկէս) կը փակուի տարեվերջին։ Պատճառը ծախքերու յաւելումն է (անձնակազմ, թղթատար, եւայլն) որով ժամանակ մը ի վեր բոլոր կ'արձակնպրէր։ Աչխարհի ամէնէն տարածուն ամսաթերթն էր։ Ամսաթերթի անօրէնը նկատել տուաւ, թէ «դաւալի է հաստատել, որ Ամերիկացիք այժմ կը նախընտրեն «Լայֆ»ի տեղ «Փլէյպոյ» եւ «Փենթհաուս» կարդալ»։

ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ Ազատագրութեան կազմակերպութեան առաջնորդը՝ Մահմուտ Համշարի վիրաւորուեցաւ փաթիլեան իր Համշարի վիրաւորուեցաւ փաթիլեան իր տան մէջ, երբ փոքր ռումբ մը պայթեցաւ։ Ոստիկանութիւնը քննութիւն բացաւ։ Կը կարծուի թէ մահափորձ մըն է եղածը։

ԻՐԼԱՆԴԱՑԻ Հանրապետութեան Սզային Սահմանադրութիւնը փոփոխութեան պիտի ենթարկուի։ Կաթոլիկէ եկեղեցին պիտի կորսնցնէ իր «իւրայատուկ վիճակը»։ Կառավարութիւնը հանրաքուէ կազմակերպած էր, որու արդիւնքը եղաւ ի նպաստ իր ծրագրին։

ԵՐԵՒԱՆ ⇄ ՓԱՐԻԶ
ՀԵՌԱՏԻՊ

ԵՐԵՒԱՆ (Արմէնփրէս, Դեկտեմբեր 6)

ԳԵՐ – ՄԱՆԻՇԱԿԱԳՈՑՆ ՃԱՌԱԳԱՅԹԱՀԱՐԻՑ

Գիտական Պ. Տէր–Բաղդասարեանի նախագիծով Երեւանի բնագիտութեան հիմնարկութեան մասնագէտները սեղծեցին հեռադրքրքական սարք մը՝ «Իոն–1»։ Առով կարելի է գեր – մանիչակագոյն ճառագայթահարումները կատարել լորձաթաղանթի վրայ, երբ անձ մը դէմ ունի եւ կամ խրտչափորի տակէ կը տառապի։ Առիկա կարելի է օգտագործել նաեւ մաչկի հիւանդութիւնները, ինչպէս նաեւ յօդերու, ջիլերու որոչ հիւանդութիւն – ներ բուժելու համար։

Գործիքը փոքր է՝ կէս քիլօ, որով կրնայ գործածուիլ տուներու մէջ եւս։ Ատրճանակի տեսք ունի եւ պայն գործածելու համար կը բաւէ ըմբռակը քաչել։

×

ՀԱՅ ԳՐԱԳԻՏՆԵՐՈՒ ԳՈՐԾԵՐ ՍԵՐՊԵՐԷՆԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԱԾ

Եուկոսլաւիոյ «Կօրոպէ» («Բայլեր») պրական – զեղարուեստական հանդէսը իր վերջին թիւերէն մէկուն մէջ լոյս ընծայած է բանաստեղծութիւններու ծաղկաքաղ մը՝ հայ բանաստեղծներէ։ Ներկայացուած գործերը կը պատկանին Ս. Կապուտիկեանի, Ազատչէս Պօղոսեանի, Լեւոն Մխիթեանի եւ Գէորգ Աճէմեանի։

Ծաղկաքաղը կազմած եւ թարգմանած է եուկոսլաւ բանաստեղծ Միլան Նիկոլիչ։

×

ՀԱՅ ԴԵՐԱՍԱՆՆԵՐ Ի ՊԱՏՈՒԻ

Խորհ. Միութեան Գերագոյն Խորհուրդի որոչումով «ժողովրդական ղերասան»ի կոչում տուաւ Ազուս Սարեան եւ Բարսղէն Ներսիսեան, երկուքն ալ Երեւանի Գ. Սունդուկեան պետական թատրոնէն։

×

ՄԱՌԵՇԱԼ ՅՈՎՀ. ԲԱՂՐԱՄԵԱՆԻ 75ԱՄԵԱԿԸ

Մառեչալ Յովհաննէս Բաղրամեան իր ծննդեան 75ամեակին առթիւ Լենինի շքանչանը տացաւ, Խորհ. Միութեան Գերագոյն Խորհուրդի որոչումով։

Երկրորդ համաչխարհային պատերազմի առաջին օրերուն զնդապետի տուն – ճան ունէր, իսկ պատերազմի վերջին օրերուն զարճած էր զօրավար եւ ռազմամասիսի հրամանատար։

×

ՆՈՐԱՎԱՆՔ–

Յառաջիկային, երբ աւարտի Արէնի–Սմալ ճամբուն չինութիւնը, զբօսաչրջիկները կարելիութիւնը կ'ունենան այցելելու Նորավանք, ԺԳ. դարու հայ ճարտարապետութեան ինքնատիպ կոթողներէն մէկը։ Ճարտարապետ եւ նկարիչ Մոմիկի չինած այս զարդաքանդակ վանքը մեծ հետաքրքրութիւն առեղծած է օտար զբօսաչրջիկներու մօտ։ Օրրելեաններու տոհմին զերեզմանատան խաչքարերը, գլխաւոր կառոյցը՝ Նորավանքը (կը կոչուի նաեւ Կարմիր Վանք), այլ չինուածներ աչքի կը զարնեն ճարտարապետական ձեւերու ինքնատիպութեամբ, զարդաքանդակներու արտայայտչութեամբ։

Եղէգնաձորի չրջանին մէջ ներկայիս մեծ աչխատանք կը կատարուի նորոգելու համար տեղւոյն յուչարձանները, որոնց – մով հարուստ է Վայոց Ձորը։ Նորոգութեան մէջ է Արչնի վանքը։

×

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՆԿԱՐԻՉՆԵՐՈՒ ՅՈՒՅԱՀԱՆԴԷՍ

Եղէգնաձորի մէջ բացումը կատարուեցաւ երիտասարդ նկարիչներու ցուցահանդէսին։

Երջանի դիւղերու երիտասարդները ցուցահանած են Վայոց Ձորի բնութեան զեղեցկութիւնը արեւոտ երկրին երանգները։ Այցելուներու հետաքրքրութեան առարկայ դարձան երիտասարդ նկարիչ Վան Եղեանի նկարները։

×

ԱՐՓԻ ԿԻՐՃԻ ԿԱՄՈՒՐՋԸ

Շինուեցաւ Արփի կիրճին կամուրջը, որով կիրճին երկու ծայրերը իրարու կապուեցան, անդնդախոր ձորին վրայէն։ Մասնագէտներու կարծիքով նոր կամուրջը իր թեքնիք տուեալներով եւ չափերով հպատակելու կամուրջներէն մէկն է Ծոր–Հրազդային Միութեան մէջ։ Անոր երկարութիւնն է 116 մեթր։ Կիրճին խորութիւնը 72 մեթր է։ Այս կամուրջը պիտի նպաստէ Ջերմուկ քաղաքի զարգացումին։

Քաղաքը պիտի ընդլայնի Արփիի ձախ ափին, ուր արդէն հիմնուած է բնակելի չրջանը։ Հոս պիտի հաստատուին նաեւ անդաստրութենական կեդրոններ եւ հանրային սպասարկութեան կեդրոններ։ Յառաջիկայ տասնամեակներուն «ձախափնեակ»ի բնակչութեան թիւը 20·000ի կրնայ հասնիլ։ Գալով այժմու քաղաքին՝ ան ամբողջովին պիտի արմատրուի հանքային ջուրէն օգտուող հիւանդներուն՝ առողջարանին կողքին հաստատելով նոր հանդստեան տուներ, պանդոկներ եւայլն։ Քաղաքին այս երկու մասերը իրարու կը միանան նոր չինուած կամուրջով։

×

ՈՐՍՈՐԴՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ

Հայաստանի մէջ բաւական մեծ թիւ կազմեն որսով զբաղողները։ Որսորդներու եւ ձկնորսներու զոյգ Ընկերութեանց անդամ են մօտ 11·000 հոգի, իսկ30·000 երիտասարդներ ալ զանազան խմբակներու մաս կը կազմեն։

Որպէսզի կենդանիներու տեսակները չանհետանան՝ մեծ տարածութիւններ վերածուած են արգելանոցներու։ Առանցմէ մէկը կը զտնուի Դիլիջան, միւսը Խոսրովի անտառը։ Դիլիջանի կոյս անտառներուն մէջ կը բազմանան եղնիկներ, նապաստակներ, սկիւռներ, կղաքիներ, արջեր։ Հայոց Խոսրով թագաւորի հիմնած աւանդական անտառին մէջ առատ է ընկոյզը, կաղինը, վայրի տանձն ու խնձորը, խոտը, բուսականութիւնը։ Անտառին մէջ չատոնց մաքրադործուած են դիչատիչները։ Այս է պատճառը, որ կը բազմանան վայրի այծերը, աչխարհները, կաքաւները, վարազները եւ նապաստակները։ Եւ, վերջապէս, բնաչխարհի թագուհին՝ եղջերուն։

Աղտաեւ, Վաչկան, Գետիկ, Մարմարիկ պետերուն, Այղր լիճին, Հրազդանի եւ Ապարանի ջրամբարներուն մէջ աւելի քան 40 միլիոն ձկնիկ թափուած է, որպէսզի ձուկերը բազմանան։

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ

«ՀԱՅՐ ԵՂԻԱ ՎՐԴ. ՓԷՋԻԿԵԱՆ ԵՒ ԻՐ ԽՕՍՔԸ»

Հ. Վահան Վ. Յովհաննէսեան եւ Հ. Սահակ Վ. Փերահեան, երկու Մխիթարեան բազմավաստակ հայրերը, ոմնեցին իրենց քահանայական ձեռնադրութեան յիսնամեակը՝ 1972 Սեպտեմբեր 8ին, Վենետիկի Մայրավանքին մէջ, Ս. Ղազար:

Զիրենք կը շրջապատէին հոգեկից միաբաններ, երէց եւ կրտսեր, նորընծաներ, նախկին սանները, բարեկամները, համակիրները:

Օրն էր ծննդեան Տիրամօր: Բնականաբար ոմնական օրուան մէջ, յորելեար հայրերուն կողքին կանգնած էր, կարծես, Հ. Եղիա Վ. Փէչիկեան, իրենց դասակիցը, հոգեկից եղբայրը՝ նոյնքան մեծամասնական:

Հ. Եղիա Վ. Փէչիկեան տարաժամօրէն փակած էր իր աչքերը՝ 1964ին, չէր մոռցած երբեք, եւ ահա կը մասնակցէր յոբելենական հանդիսին, իր հոգիի ձայնով:

Արդարեւ, Մխիթարեան կաճառը կը հրատարակէր, ճիշդ այդ օրը, չորս հարիւր վաթսուն էջերէ բաղկացած տառատեսակ մը, որ կը բովանդակէր Հ. Եղիա Վ. Փէչիկեանի քնարերգութիւնները, թարգմանութիւնները, համբաւաբանները, պրահօսականները, արձակներ – րը, օտար ղէմքերը, եւ պատկերը՝ հայ գրականութեան: Ծաւալուն գրական արտադրութիւնէն՝ փունջ մը բազմերանգ եւ քաղցրաբոյր:

Քնարերգութիւնները ինքնանպատակ չեն, յօրինուած են յարուցանելու համար ապրումներ՝ ընթերցողներու սրտին մէջ, արտէ սիրտ հաղորդակցութիւն մը, հրաւէր մը մասնակցութեան՝ ներքին յուզիչ ապրումներու, փառաբանութիւն՝ բարւոյն եւ գեղեցկին, սպեղանի՝ կոտրացող վէրքերու:

Թարգմանութիւնները ճարտարօրէն կատարուած են: Այդ ճարտարութեամբ Հ. Եղիա կարող էր գրական գլուխ-գործոց մը ամբողջութեամբ փոխակերպել հայերէնի: Արհո՞ս, որ իր բազմազբաղ վիճակը չէ թոյլատրած: Երանի՛ թէ աւելի մեծ թիւով Հայր Ալիշանի գրարար քերթուածները թարգմանած ըլլար աշխարհարբի:

Յիմնապրականները գրուած են հոգեւոր շունչով եւ սիրով հայրենի:

Ըստ այմ՝ անոնց հեղինակը արժանաւորապէս կանգնած է լուսաշաւղին վրայ, զոր բացած է Մեսրոպ Մաշտոց եւ զոր շարունակած է, ընդլայնած է Մխիթար Սեբաստացին: Մեծերը ծանօթացնելով՝ մեծերուն նմանելու առաջադրանքը կայ անոնց մէջ:

Գրախօսականները՝ քննադատութիւն – նեը չեն, բառիս խիստ առումով: Տեսութիւններ են քաջալերիչ, հայկական գրականութիւնը կենսունակ պահելու իղձ, հինէն դէպի նորը, եւ նորէն դէպի հինը ծիածանում:

Ինչպէս տաղաչափուած գրութիւննե – րուն, նոյնպէս արձակ գրութիւններուն մէջ Հայր Եղիա կը յայտնուի առաջնորդ հոգեւոր եւ հայրենի, դասական եւ արդիական չունչով:

Օտար ղէմքերը՝ թէպէտ օտար են, բայց «Հայութեան սրտին սիրելի են չա՞տ — Լորա Պայրըն, որ հայերէն սորվեցաւ Ս. Ղազարու մէջ եւ եղաւ չատապով Հայութեան: Ծիրանաւոր Մերսիէ. սա՝ այն վեհոգի անձնաւորութիւնն է, որ Հայոց ահաւոր եղեռնին դիմաց՝ գոչեց. «Եթէ աշխարհ արդարութիւն չընէ հայ ազգին, ուրեմն Հայերը իրաւունք պիտի ունենան դառնալու անիւխանականներ»: Այս ընտրանով կարելի է ամբողջ հատոր մը գրել: Սուրբ Օգոստոսինոս. սա Նարեկացիէն առաջ՝ Նարեկացիին պէս ողբերգեց, պարզեց իր հոգիին «տրամա»ն, մղեց կարծես, հայ խորհրդազգած բանաստեղծը՝ երգելու բոլոր մարդերու հոգիին «տրամա»ն: Վիրկիլիոս, սիրելի՝ Հայոց «ենէականով», զոր թարգմանած էր Հայր Եղուարդ Հիւրմիւզ: Եւ վերջապէս Նի – քոլա Եորկա, բանասէր հայասէր Ռումանացին: Իսկ հայ գրականութեան պատկերը ցոյց կուտայ մեր ժամանակին ցաւառիթ կորուստները, բայց նաեւ յուսադրիչ յայտնութիւնները:

Կատարեալ հայապէտ՝ Հայր Եղիա Վրդ. կը զրէ անթերի՝ թէ՛ գրաբար եւ թէ աշխարհաբար, ուսանելի: Հատորը զարդարուած է Հ. Եղիա Վ. Փէչիկեանի մեծադիր լուսանկարով, որ կը ծածկէ ամբողջ կողքը, ամենաբարի արտայայտութեամբ մը:

Կը դիտեմ այդ ղէմքը, ու վերստին պատանի կը դառնամ կարծես, իր աշակերտը, Մուրատ – Ռափայէլեան, Լիզիոնին մէջ: Ցուզումը կը պատէ սիրտս, ու արցունք կուգայ աչքիս: Արցունք՝ բերկրանքի եւ վշտի:

Վստահ եմ, որ իր լոյսի օթեւանէն ինքն ալ բերկրանքով եւ վշտով կը դիտէ իր աշակերտը՝ միայնակ եւ պանդուխտ:

ՀՐԱՉ ՔԱՉԱՐԵՆՑ

ԼԻՆ ՏՈՒՐԵԱՆԻ ՎԵՐՏԻԱԿԱՆԸ

—0—

Ապրիլի կարօտը հիւրանոցի 9րդ յարկի համարիչ Լին Տուրեանին հանեց 13ը: «Սակայն, ամպերը լինձի պէս չեն բացեր այդ նուիրական պատկերը», ասաց նա մի խորին թախծով:

Նուարդ Տիրատուրեանը, որը նաեւ ուր նէր ֆրանսական փոսրկի անունը, երկի մարդիչի խորհրդով կնքեց իր բեմականը — Լին Տուրեան:

1966 թուականի փարիզն ու աշխարհի լաւագոյն դահլիճները ծափահարում են երկի ու խաղի հազուագիւտ ներդաշնակութեամբ օժտուած արտիստուհուն: Եւ վերջապէս հայրենիք, քաղաքամայր Երեւան — Օպերա:

Լին Տուրեանի հիւրախաղերը այստեղ (ի միջի այլոց Լենինգրադում եւ Օդեսայում նոյնպէս անցան յաղթերգով) կարելի է անուանադրել « Վերթիական Օրեր »: Տուրեանը հանդէս եկաւ վերոյիշեալ երեք նշանաւոր օպերաներում — Ամներիս «Այտա»յում, «Տոն Կարլոս»ում էջուլի, եւ Ազուչենա «Տրուբադուր»ում: Զայնի ու բնաւորութիւնների իմաստով միմեանց միանգամայն հակասող այս դերերի յաղթահարումը պահանջում էր մեծ փորձ ու վարպետութիւն, որով եւ դրսեւորուեց Լին Տուրեան հանգուցեալ – թիւնը:

Մեր օրերում մասերի վրայ կարելի է հաշուել անուններ, որոնց ձայնական տարածքը հասնում է կոնտրալտոյից մինչեւ դրամատիկ ու կոլորատուր սոպրանոյի սահմանները: Լին Տուրեանը այդ հազուագիւտ ձայներից է: Նրա մեծ ցոյն օժտուած է կանացի արտակարգ քնքշութեամբ: Նրան կարելի է լսել անվերջանալի հրճուանքով:

« Այտա »յում Ամներիսի խաղարկման սկզբունքները երկչոտուն ասնում են երգեցողութեան հնարաւորութիւնների համընդհանուր օգտագործման ճանապարհով, որը և կերպարին հասնելու դժուարագոյն միջոցներից է:

Տուրեանը առօրեայ կեանքում լինելով անմիջական, պոռթկումներով լի ու կենսախինդ խառնուածք՝ բեմում բնորոշ – ւում է դրամատիկ խորութեամբ, ներքին ուժով: Նրա խաղի հոգեբանական անցումները դուրս են դալիս օպերային բեմի սահմաններից, որտեղ ճարտարապետական տարածքն ու լոյսերը կլանում են, ոչնչացնում նրբերանգները: Յիրաւի, այստեղ միայն կինոօբեկտիւը կարող է իր խոշոր պլաններով ժապաւէնին զգրոսմել նրա արտիստական առանձնահատկութիւնները:

«Տոն Կարլոս»ում Լին Տուրեան էջուլին բնորոշուեց քէնով ու ղղջմամբ ըղեւռուող կերպարի վոկալ, ձկնապոչայ թռիչքներով ու կոլորատուր պատաժներով:

Ծեր սեփական ձեռքերով, անզղուշ – րէն զաւակին հրոյ ճարակ դարձած մօր ու կոմսից վրէժի ծարաւով ապրող ղընչուհի Ազուչենայի կերպարը Տուրեանը ներկայացրեց «Տրուբադուր»ում: Այս – տեղ, յատկապէս այս օպերայում հմ – նաւորուեց այն կարծիքը, որ Լին Տուրեանի վոկալ առանձնայատկութիւնները բեմական խօսքի համարժէք ունեն: Այլ կերպ ասած, նրա արուեստը վեր է օպերային պայմանականութիւնից ու հնամոլութիւնից եւ յանդուգն է ռէալիստական մեծ արուեստին: Ներա Ազուչենան մի ամբողջական կերտուածք էր, երկի ու խաղի լաւագոյն նմոյշ:

Ընդհանրապէս, օպերային երկիները զժուարութեամբ են ղրսեւորում կամ – բայնութեան սահմաններում: Իր մենահամերգին Լին Տուրեանի վերակենդանացրած երկու հատուածները հիանալի էր: Ներա ծրագրի բարդ, ընդդիմադիր բարձունքները համերգը տարան յաղթարշաւի: Դոնիցետի, Մասկանի, Սէն–Սանս, Մեյերբէր, ահա այն հեղինակները, որոնց Լին Տուրեանը ներկայացրեց բնագրերով ու քաջատեակի վարպետութեամբ: Բիզեի «Կարմէն»ի երկու մենակը աչքի էր զարնում մենակատնման իւրատեսակութեամբ ու թարմութեամբ: Բիզեն նոր յայտ էր հայկական բեմում լսելու Լին Տուրեանի կարմէնը:

Երգչուհու ողջ համերգը եւ յատկապէս հայկական երկերգը բաժինը — Մեսրոպեանցի, Սիւնիի, մեզ դեռեւս անծանօթ դործերը չաղախուած էին տիպիկ հայկականութեամբ, ներքին ջերմութեամբ ու յոյզով: Սակայն Ռոմանոս Մելիքեանի «Մի լար»ը գլուխ դործոց էր: «Մի լար»ը Հայկանոյշ Դանիէլեանից յետոյ, երեւի ոչ մէկին չի յաջողուել ներկայացնել այսքան խորն ու դրամատիկ, այսքան բարձր ու ազդեցիկ: Երգչուհին կարծես իր հոգու, իր ժողովրդի տառապանքներից թրծուած հոգու էութիւնն է դնում՝ կեանքի ու աշխարհի անցողիկութիւնից խօսող «Մի լար»ում: Լին Տուրեանի «Մի լար»ը կը մնայ երգի դասական Ֆոնդում: Յաւում եմ, որ միջազգային իր համերգներին նա ոչ մի հայ երգ չի մատուցում օտարերկրացիներին: Այս մեծ պակաս է, որը ղժմտղրկում է երեւ — Լին Դուրեանին:

«Սակայն, միայն երգեցի ու չտեսայ Հայաստանս: Ես այնքան կը սիրեմ հնութիւնները: Գալ այցելս կը նախընտրեմ համբորդել, հաղորդուիլ մայր հողին, յետոյ — օպերա», — ասաց նա հրաժեշտին:

Այդ առաւօտեան Ապրահամները բացել էին իրենց բերելիական վերմութիւնը:

ԳԷՈՐԳ ԱԼԱԳԷՕԶԵԱՆ

Ծաղկած Փշալարեր

(ՎԻՊԵՐԳ)

Զիւնը ճոճուում է մեր ոտների տակ եւ ինձ թուում է, որ բրուտանոցի միւս բնակիչներն էլ ինձ նման զգում են իրենց թեթեւացած: Առաջից գնում է Լիուդմիլան, նա աշխատում է քայլել թեթեւ եւ այդ նրան դժուարութեամբ է յաջողւում: Մամօն մատով ցոյց է տալիս Աշոտ դայուն Լիուդմիլայի ձախ ոտի թաղիքէ ոտնամանն ու ասում.

— Ռէմո՛նդ ցադա, նորոգել է պէտք...

— Նադօ, պէտք է, — արձագանգում է Աշոտ դային:

Դերձակուհիների փոքր խմբակն ա – ոտնձնանում է, Լիուդմիլան միանում է նրանց: Կալանաւորները կանգնում են հընդեակներով: Հաշւում են: Կազմը լրիւ է: Հնչում է չուլաչ Պետրովի խռպոտ նախազգուշացումը.

— Կարգը խանգարողների վրայ իրաւունք է տրուած կրակել... Գնացինք...

Գնացինք: Իսկ երկինքը չարունակում է ձիւնել այնպիսի եռանդով, որ կարծես արեւ ասած բանը գոյութիւն չի ունեցել երբեք:

Առաջին բանը, որ լսում ենք ճամբարում, դա այն է, որ «կոմխխա է գալիս»: Առաջին դէպքը չէ: Շատ անգամ են «կոմխիա»ները եկել ու գնացել եւ ոչ մի հետք չեն թողել իրենց եռեւից: Ցանձնախումբերը եկել են բաժանմունքից, Մարիինկուց... Բայց ասում են վաղուայ յանձնախումբը գալու է Կրասնոեաբսկուց: Ինձ նման հները յիշում են, որ Կրասնոեարսկուց նոյնպէս յանձնախումբեր են եկել: Նոյն արարողութիւնը, նոյն արդիւնքը: Ինձնից սակաւաթիւ հները պնդում են անգամ, որ ճամբարում երկու անգամ եղել է «Մասկովսկայա կոմխխա», այսինքն Մոսկովեան յանձնաժողովը: Նոյն արարողութիւնը, նոյն արդիւնքը: Ցանձնախումբը կազմուած է մի քանի հոգուց, որոնք առանց բացառութեան պինուորականներ են: Նրանք անցնում են բարաքից բարաք, երկու կողմ չարուած կալանաւորների շարքի միջով: Գանգատուներն արդելուած է, բողոքելն՝ այդ էլ պակաս: Հնարուած է ուրիշ մի ըստ ամենայնի դիւանագիտական դարձուածք.

— Պրեմենպիաներ (բաղձանքներ) կա՞ն:

— Ոչ, ամէն ինչ կարգին է:

Ցանձնաժողովին ուղեկցում է ճամբարի պետը: Եթէ չմտաբանաս եւ որոշ, իրաւացի «պրեմենպիա»ներ ներկայացնես, յանձնախմբի մեկնումից յետոյ ճամբարի պետը հետդ չոր–չոր կը մաքրի հաշիւը եւ այնպէս կը մաքրի, որ քեզանից թացութիւն անգամ չի մնայ:

Ընթրիքից յետոյ, երբ մենք պատրաստւում էինք քնելու, Մամօն բարձրացաւ տախտակամածին եւ նստեց: Նրա մատով ղէմքն աւելի էր մթնել:

— Կոմխխա՞ է գալիս, — հարցրեց նա պրեթէ չշուկով:

— Ի՞նչ կայ որ, — ժպտաց Աշոտ դային, — առաջին անգա՞մն է...

— Օ՛դա դիւզ դըր, այդ էլ ճիշդ է, — համաձայնուեց նա մատախոհ, վար իջաւ եւ վերադարձաւ իր տեղը:

— Սիրտը ահ է ընկել, — ասաց Աշոտ դային, — ինչով–ինչով, կոմխխան Մամոյի ընտանեկան գործով չի զբաղուի...

Բացուեց արեւոտ մի առաւօտ: Եթէ չլինէր նստած թարմ, բամբակի նման փափուկ ձիւնը, անհնարին է հաւատալ, որ պարզ, յստակ, սիրիւեան կապոյտ երկինքը կարող է ամպել եւ ձիւն տեղալ:

Բրուտանոցում ես վառում եմ վառարանը: Ջուր է հարկաւոր, եռման ջուր, որ լեցնեմ տառած կաւահողին եւ բարձրանամ տաշտը: Գործարար բակում Մամօն անհետացաւ: Գերմանուհին անհանգըստացաւ, անգա՛մ հարցրեց.

— Ո՞ւր գնաց Մամոն...

— Մամօն... ո՞վ դիտէ Մամոյի գործերը, — պատասխանեց Աշոտ դային: Մի բան միայն կարող եմ հաստատ ասել, որ Մամօն չի կոբչի...

— Չեն թողնի, — ժպտաց Իոնասը, — կոբչել չկայ...

Եկաւ Մամօն, աջ ձեռքի թաթմանով բռնած ձախ ոտքի հնամաշ, կերպ մի ոտնաման: Նա մօտեցաւ Գերմանուհուն, մատով ցոյց տուեց նրա ձախ ոտի թաղիքէ ոտնամանն ու ասաց.

— Ռէմոնտ ցադա...

Գերմանուհին հասկացաւ, ժպտաց, զղացուեց, նստեց եւ աշխատեց դուրս քաշել երկարափող ոտնամանը: Իր դրութեան բերումով նա զժուարացաւ:

Մամօն կռացաւ, արագ աղատեց Գերմանուհու ոտքը, հագցրեց իր բերած կերպ ոտնամանը, վերցրեց թաղիքէ երկարափողն ու դնաց:

Այս ամբողջ արարողութեան ընթացքում Գերմանուհին նայում էր Մամոյին լայն բացուած աչքերով, կարծես առաջին անգամ էր տեսնում նրան: Ցետոյ, չգիտես ինչու, հանեց նրա ականջակալները եւ բարձրաձայն սկսեց... Մամոյի զբերով զլխարկը, ժպտաց... Մամոյի զբլուխը ակներեւաբար սեխաձեւ էր, երկարաւուն, խորապէս աղղային ադրբեջանական... Նա մատներով չօշափեց Մամոյի գլուխը...

ԳՈՒՐԳԻՆ ՄԱՀԱՐԻ

(Շար. – 26)

ՓԻՓԱՍՕ, ԿԵՆԴԱՆԻ ԿՈԹՈՂԸ

—o—

Ա.

Իննհոնըլուվմէկ տարեկանին Փիքասօ կը մնայ տակաւին կենսունակութեան եւ հմտութեան երեւոյթ մը:

Թայմ պարբերաթերթին համար «Փիքասօ դարուս մշակութային հերոս»ն է: 1967ին իր մէկ նկարը ծախուեցաւ երկուքուկէս միլիոն ֆրանքի եւ կը կարծուի թէ ասիկա ամէնէն բարձր գինն է որ տրուած է ապրող արուեստագէտի մը: Նաեւ ինքն իսկ չէն գիտեր հաշիւը նկարներուն թիւին, հաւանական է որ այս թիւը անցնի տասը հազարը, առանց հաշուելու գծագրութիւնները, փորագրութիւնները, քանդակները եւ սեռա-միքները: Տակաւին իր քով կը պահուին մօտ հազար նկարներ, որոնք կրնար հաշուով կ'արժեն 125 միլիոն ֆրանք, իսկ Փիքասօ կը նկատուի բոլոր ժամանակներու ամէնէն հարուստ արուեստագէտը:

1971 Հոկտեմբեր 25ին երբ իննհուն տարեկան եղաւ, ամբողջ աշխարհի մէջ բացառիկ ցոյցերու առարկայ դարձաւ եւ իր գործերը ցուցադրուեցան ամէն տեղ: Աննախընթաց մեծարանք մըն էր թան-գարանին պատմութեան մէջ երբ Լուվրը իր մեծ նկարասրահներէն մէկ մասը յատկացուց Փիքասոյի գործերուն մէկ մասին:

Ստոյգ է որ Փիքասօ բացառիկ ազդեցութիւն գործած է նկարչական արուեստին վրայ: Երբ առաջին անգամ երեւցաւ Փարիզի մէջ, նկարիչները կը հնազանդէին տակաւին այն ղէմսաւոր կանոնին, որ կը պարտադրէր հաստատել տեսանելի առընչութիւն մը առարկայի եւ իր ներկայացուցածին միջեւ:

Փիքասօ սկսաւ նկարել նիւթերը կտրելով երկրաչափական ձեւով եւ իրարու մէջ ազուցելով զանոնք, գոյնի եւ լոյսի բիծերով: Թէքնիք մը ուրկէ ծնունդ պիտի առնէր Քիւպիզմը: Շուտով իր նկարչական աշխարհը կը սահմանուէր իրեւ բեկբեկեալ պիծերու եւ անկիւններու խառնափնթոռութեամբ մը, ուր առարկան կը կորսնցնէր նմանութիւնը իրականութեան հետ:

Փիքասօ կ'ըսէր թէ քիւպիզմի զլխաւոր նպատակներէն մէկն էր տեղափոխել իրականութիւնը, հոս իրականութիւնը այլեւս առարկային մէջ չէր, այլ նկարին:

Երբ քիւպիսթ նկարիչ մը մտածէ մըզդանուշ ման մը նկարել, ան կը սկսի աշխատիլ վրձնակով որ նկարչութեան մէջ մրգանուշի ման մը ոչինչ ունի հատակաց կեանքի մէջ եղած մրգանուշի ման մը հետ: Փորձ մը ազատագրուելու աչքի պատրանքէն, գտնելու համար մտքի պատրանքը:

Ակէ ծնաւ արուի նկարչութիւնը, մեծ փոփոխութիւն մը վերածնունդէն ի վեր: Թէեւ Փիքասօ միակ պատասխանատուն չէր այս յեղաշրջման: Ինք մղիչ ուժն եղաւ եւ իր բնական ղեղումը, ինչպէս եւ ինքնաբուխ նկարագիրը պատճառ դարձան որ ուրիշ նկարիչներէ աւելի ինք կեանք տայ տարը:

Տարիներ առաջ Փիքասօ կ'ըսէր թէ իրեն համար երջանիկ ըլլալու պայմանը հարուստ ըլլալն էր, բայց աղքատ ապրիլ: Արդարեւ իր փափաքած միակ պերճանքն էր վայելել աշխատութեան ազատութիւնը, առանց ընդմիջուելու, ե՛րբ եւ ո՛ւր որ ցանկար: Շատ կը սիրէ արագ արտադրել, օրական երկու-երեք նկար:

Այս տեսակէտէն շատ յարմար է Քանի մօտ Մուժէնի իր ամարանոցը, ուր կը բնակի տասը տարիէ ի վեր: Հոն ունի բազմաթիւ սենեակներ, որոնք կարտսի չունին եւ կը գործածուին իբրեւ աշխատանոց: Սեղանները եւ աթոռները կը ճմռուին նկարներու, պիրքերու եւ լրա-պիրներու ծանրութեան տակ, որովհետեւ կ'ուզէ պանդոկ ձեռքի տակ ունենալ, քաղելու համար իր պէտք ունեցած տեղեկութիւնները: Ունի բազմաթիւ ծառաներ, որոնք տակաւին չեն տեսնուիր: Իր աշխատութեան տաճն իր կինը՝ Ժաքլին քովը կը մնայ, որպէսզի խնդոյն հոնի երբ կանչէ եւ բանի մը պէտք ունենայ:

Կէսօրէ առաջ Փիքասօ չի տեսնուիր: Ամառը կ'երեւայ կարճ տաբատով եւ առնտալներով, ձմեռը տաբատով եւ շանտայով մը:

Հակառակ բազմաթիւ նկարիչներու, որոնք կը նախընտրեն լոյսը հիւսիսէն թափանցող ապակիներու մէջէն, Փիքասոյի համար ամէն ձեւ լաւ է: Կ'աշխատի որեւէ լոյսի տակ, արեւին մէջ կամ պիշերը, կամ սենեակի մը մէջ ուր առանց լուսամփոփի մեզի լոյսեր կան: Կը գործածէ որեւէ լրագրի կամ խաւաքարտի կտոր իրրեւ դունատախտակ եւ իր ներշնչումի օրերուն կ'աշխատի առաւօտեան ժամը մինչեւ երկու-երեք:

Շատ կը սիրէ կենդանիները, միշա երկու չուն կայ ամարանոցին մէջ: Դժուարահաճ է մարդոց հետ իր յարաբերու-թեանց մէջ: Միայն քանի մը ազգականներ եւ բարեկամներ կուզան այցելութեան: Օրինակ Դանիէլ Հէնրի Քանվէյլէր՝ նկարավաճառը, որու հետ բարեկամ մնացած է 1907էն ի վեր, նաեւ այս վերջերս նոյն ազգականը Լուիզ Էյրիսը, որ կը գնէ բոլոր այն նկարները, որոնցմէ վարպետը կ'ուզէ բաժնուիլ, զանոնք մէկիկ մէկիկ ծախելու համար ուրիշ վաճառականներու կամ հաւաքիչներու:

Երբեմն Փիքասօ պատուղութեան կ'ենթարկէ իր արուեստը, այն ատեն իր խօսքերը պատգամի մը հնչիւնը ունին:

— Ես անզլերէն չեմ հասկնար, կը պատասխանէ այն քննադատներուն, որոնք կը մեղադրեն թէ իր նկարները գիտական

ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՀՐԱՏ ՄՈԼՈՐԱԿԻ ՄԱՍԻՆ

—o—

Պէտք է ըսել, որ Լուսնէն եռք՝ Հրատ մոլորակը մեզի ամէնէն ծանօթ երկնային մարմինն է: Այս մոլորակին մասին պատեհ հետեւեալը.

Անոր տրամագիծը 6·800 քիլոմեթր է, գիտական պիտի ըլլան: Անզլերէն պիրք մը անհրաժեշտ է ինծի համար, ասիկա չի նշանակեր թէ անզլերէնը գոյութիւն չունի: Ինչո՞ւ ուրիշներու հետ բռնուիմ երբ բան մը չեմ հասկնար:

Ատենօք արուեստի գործ մը պէտք էր որ ընդհանուր լեզու մը ըլլար եւ հասկըցուէր բոլորին: Մեծ վարպետները Միքէլ Անճելօ, Ռամպրանտ, Վէլասքէզ նման հիացում եւ ուրախութիւն կը յարուցանէին թէ՛ անցեալին, թէ ներկային եւ ոչ ոք այնքան խորացէս կը պիտակի ատոր, որքան Փիքասօ ինքն իսկ, ինչպէս կը զրէ Ֆրանսուազ Ժիլօ իր զրքին մէջ, ուր կը պատմէ իր կեանքը վարպետին հետ:

— Երբ կը նկարեմ, միշտ կը փորձեմ տալ այնպիսի պատկեր մը, որուն չեն սպասեր մարդիկ: Անոնց մեծ մասը պիտարբի ոգի չունի, ոչ ալ առեղծուածութեան: Ի՞նչպէս ընել ուրեմն անոնց սարսեցնելու համար նոր բան մը: Պատնել միտքին ինչ որ պիտեն եւ ինչ որ չեն պիտեր: Հետեւաբար երբ չիմք կերպով կը նշմարեն բան մը մշուշին մէջ, կ'ըսեն— Ա՛հ, արդէն տեսած եմ ասիկա եւ անոնց միտքը կ'երթայ դէպի անծանօթը:

Փիքասոյի բոլոր զաղափարները կինեմատու եւ քաղաքականութեան մասին ասոր պէս կարուկ են: Այն քանի մը զեղեցիկ կինեներէն մէկը, որ ժամանակաւորապէս կենակցած է Փիքասոյի հետ, կը հաստատէ թէ անոր համար «երկու տեսակի կին կայ· դիցուհի կամ դորվի-խոզանակ» ըստ իր տրամադրութեան: Քաղաքական դեռնի վրայ ալ նոյն տեսակէտը ունի: Այսպէս, երբ Հանրապետական Սպանիոյ կառավարութիւնը Ֆրանքոյի հետ պայքարի ամէնէն բուռն պահուն, նկար մը ապսպրեց 1937ի Փարիզի Միջազգային Ցուցահանդէսի իր տաղաւարին համար, Փիքասօ չտատամնեցաւ զծելու կեռնի-խաչ, լայն յօրինուածք մը, ի փառս այն քաղաքին որ կը ամբակոծուէր ազգայնականներուն կողմէ, գաժանութեան եւ քաղաքացիական պատերազմի քանդումի խկական որմանկար մը: Կարգ մը քննադատներ նոյնիսկ զլուխ զործոց կը նկատեն զայն:

Թ. Ա. Թ.

(Մնացեալը յաջորդով)

այինքն՝ երկրագունդի տրամագիծին կէսը· անոր խտութիւնը 3,8 է, մինչ երկրագունդինը՝ 5,52: Ինքն իր վրայ կը թափառի 24 ժամ 37 վայրկեանէն, իսկ արեւին շուրջը կը դառնայ 687 օրէն:

Անոր մթնոլորտի եւ աշխարհագրական կառոյցի մասին ցարդ տրուած տեղեկութիւնները արդիւնքն էին անկատար փորձերու կամ ենթադրութիւններու:

Վերջերս սակայն, ամերիկեան ՆԱՋԱՆ հրատարակեց «Մարիները 9» արուեստական արբանեակին արձանագրած տեղեկութիւնները:

«Մարիները 9» արուեստական արբանեակը արձակուեցաւ Քէփ Քենըվիէն Մայիս 1971ին, երբ մոլորակը կը դտնուէր երկրագունդէն 400 միլիոն քիլոմեթր հեռու եւ հոն հասաւ 349 օր ետք:

Հրատը երկրաբանօրէն գործօն մոլորակ մըն է: Ունի բազմաթիւ հրաբուխներ, որոնց խառնարանները շատ աւելի ընդարձակ են՝ քան մեր երկրագունդին խառնարանները: Փաստեր կան, որ անոր մակերեւոյթին վրայ գոյութիւն ունեցած են ջուրի հոսանքներ: Ներկայիս ալ մեծ քանակութեամբ ջուրեր գոյութիւն ունին անոր վրայ, մանաւանդ բեւեռային շրջանակներուն մէջ, ուր նշմարուած են սառոյցի հսկայ զաշտեր եւ լեռներ:

Ամպերը ընդհանրապէս կը կազմուին հրաբուխներու խառնարաններուն վերեւը եւ հաւանական է, որ անոնք չափի ամպեր են, այսինքն՝ ջուր կը պարունակեն:

«Մարիները 9» տուած է չափը այդ խառնարաններէն մէկուն, որ կը կոչուի Նիքս Օլիմփիքա: Անոր բարձրութիւնը 17 քիլոմեթր է եւ լայնքը 480 քիլոմեթր՝ տասրտին վրայ: Նոյնպէս Հրատի երկու արբանեակները՝ Ֆոպոս եւ Տէյմոս ծածկուած են անթիւ փոսերով, որոնք արդիւնք են հոն ինկած երկնաքարերու:

ԹԵԼ–Ավիվի մէջ ձերբակալուած են 37 հոգի իրրեւ լրտես : Ասոնք մաս կը կազ – մեն հրէական ծայրայեղ ցանցի մը, որ մտադրած էր Մոչէ Տայեանը առեւանգել : Ձերբակալեմ Փոսք կը գրէ թէ այս ցանցին «ուղեղ»ն էր Քոհն–Պենաթի, որ իր մասին բաւական խօսեցնել տուաւ 1968ի Մայիս – եան դէպքերուն, Փարիզի մէջ :

Ռ.ԱՊԱԹի գատական յատուկ Ատեանին առջեւ քաշուած են վեց նախկին նախա – րարներ եւ երեք բարձրաստիճան պաշ – տօնեաներ, որոնք ամբաստանուած են դեղծարարութեան եւ պղտեցութեան չա – հագործումի համար :

«ՅԱՌԱՋ»ի ՅԱՂԹԱՆԱԿԸ

—o—

Ամիսներէ ի վեր տագնապ կ՚ապրէր Փարիզի մեր պաշտօնակից «Յառաջ» օրա – թերթը : Հարցը կը վերաբերէր խմբա – գրատան եւ տպարանի տեղահանութեան : Փարիզի կեդրոնը գտնուղ Հայ Աղբային Տան անակնկալօրէն փակումը պատճառ դարձաւ, որ «Յառաջ» եւս գտնուի անելի մը դիմաց, որուն ըլլալով որ յիշեալ թերթին խմբագրատունը հոն կը գտնուէր :

Հոկտեմբեր ամսուան մէջ տրուած այս որոշումին իրր հետեւանք «Յառաջ» դա – ճած էր «գաղթական», առժամարար լոյս տեսնելով Հայ Մշակոյթի Տան «Շաւարշ Միսաքեան» սրահը, ուր մեծ զոհողու – թիւններով, պիտակից իր առաքելութեան, ձախողութիւններու դիմաց չընկրկելու իր տոկունութեամբ, թերթը լոյս տեսաւ, առանց դրկելու իրեն համակրող բազմա – թիւ ընթերցողներ :

Այսօր, ուրախութեամբ կ՚իմանանք, թէ «Յառաջ» յաջողած է հարթել դժուարու – թիւնները, եւ թերթը լոյս պիտի տեսնէ նոր խմբագրատան մը մէջ, նոր պայ – մաններով :

Այս առթիւ «Յառաջ»ի կողմէ հրատա – րակուած հաղորդագրութիւնը կ՚ըսէ թէ «Շնորհիւ բանի մը անձնուէր բարեկամ – ներու բարոյական եւ նիւթական աջակ – ցութեան, կարելի եղաւ յարմար տեղ մը գտնել, նոյն շրջանին մէջ, ուր բանի մը շաբաթէն կարելի պիտի ըլլայ վերջնակա – նապէս փոխադրել «Յառաջ»ի խմբագրա – տունը իր տպարանով միասին» :

Հաղորդագրութեան այս բաժինը ար – դէն իսկ պերճախօս է վկայելու համար, թէ 48 տարուան կեանք ունեցող օրա – թերթ մը ինչ ժողովրդականութիւն գտած է, եւ անոր վայելած յարգանքն ու վար – կը տակաւին խորունկ է սիրտերու մէջ, փաստ՝ 48 տարիներ եռք այսպիսի դժ – ուարութեան դիմաց անոր յաղթական կանգնիլը, անոր նեցուկ եւ օժանդակու – թիւն գտնելը : Այս է արդէն յաջողու – թիւնը :

Հայ Մամուլը տակաւին տեղ ունի հայ մարդոց սրտերուն մէջ : Կարեւորը այդ մամուլին արժանաւոր կեցուածքն է եւ իր անաչառ վարմունքը, հանրային կար – ծիքին հանդէպ, ընթերցող հայ գանգ – ուածներուն հետ :

Ֆրանսայի նման գաղութ մը, իր միակ օրաթերթով, տակաւին յոյսեր կուտայ մեզի թէ պիտի տեւէ : «Յառաջ»ի ճակա – տագիրը մեծ վկան է անոր :

Հայ Մամուլը պիտի տպրի Ֆրանսայի մէջ իսկ, այնքան տեն որ Հայու անուն կայ այդ երկրին մէջ, հոգ չէ թէ Ֆրան – սահօս Հայեր, Հայութենէ հեռացած Հա – յեր :

Բուռ մը «խենթերը» կը բաւեն ամ – բոխները դեղատարեցնելու համար :

1973ի սեմին, «Յառաջ»ին կը մաղթենք առաւել բարգաւաճ կեանք, նոր խանդա – վառութիւն, իր նոր Տան մէջ :

«Յառաջ» չէր կրնար գաւաճանել իր անունին :

Ուրեմն՝ ՅԱՌԱՋ ...

ՇԱՀԱՆԴՈՒԽՏ

«Այգ» (Պէյրութ) Դեկտ· 7

եան դէպքերուն, Փարիզի մէջ :

ՋՄԻՒՌՆԻՈՅ ՀԱՅ ԿԵԱՆՔԷՆ

ԽՄԲ.— «Լրաբեր հասարակական գիտութիւնների» հանդէսի Սեպտեմբերի թիւին մէջ Մ. Յակոբեան, 1800–1850 ժամանակաշրջանի Զմիւռնիոյ հայ մշակութային կեանքի մասին շահեկան ուսումնասիրութիւն մը ունի, որմէ կը քաղենք հատուած մը գիտական բնոյթի աշխատանքներու վերաբերեալ:

1800–1850ական թուականներուն Զմիւռնիոյ մէջ համեմատաբար թոյլ զարգացում մը կ'ունենայ վիճակը, առաւել եւս բնագիտութիւնը: Ասիկա յատկանշական է Աբեմատեան եւ Աբեղեան Հայաստանին: Անցած զրեթէ ամբողջ դարաշրջանին հայ մտաւորականը հնարաւորութիւն չունէր վիճակով զբաղելու: Հակառակ ասոր Զմիւռնիոյ մէջ, վիճաբաթար զարգացման, որոշ քայլեր կատարուած են վիճական հարցերով զբաղելու ուղղութեամբ:

Գիտութեամբ զբաղելու առաջնութիւնը արեմտահայ աշխարհի մէջ կը պատկանի Պօղոս Մելիքչահեանի (1788–1855): Անոր անունը (թէեւ ընդհանրապէս աշխատած է Պոլիս) սերտօրէն կապուած է Զմիւռնիոյ հետ: Ծնած է Գրզադաճ վիճաբ. հոն նախնական կրթութիւնը ստանալէ ետք երեք տարի յաճախած է Մեսրոպեան վարժարանը՝ աշակերտելով Յովհ. Վանանդեցիի: Ցեւտպային կարճ ժամանակ մը զբաղուհղած է այդ վարժարանը եւ սերտ կապ հաստատած զբաղութի լուսամիտ գործիչներու եւ, մանաւանդ, Գր. Կոստանդեանի հետ:

Աղքատ ընտանիքի զաւակ ըլլալով, ան մեծ դժուարութիւններ կրած է, բայց պատանի հասարակէն երեւան բերած է բուռն սէր դէպի ուսումը եւ եղակի ընդունակութիւններ՝ վիճաբեան ասպարէզի մէջ: Ասոր համար ան կոչուած է Փիլիքա Պօղոս: 1839 Փետրուարին վինքը կը կանչեն Պոլիս Հայոց Պատրիարքարան, ուր կը բանտարկեն մահապարտներու խցիկը, ապա Թուրք ոստիկաններու հսկողութեան տակ, հիւանդ վիճակի մէջ կ'աքսորեն Սեբաստիոյ Ս. Կարապետ վանքը: Աքսորի պատրուակ ծառայած է իրրեւ թէ անոր բողոքական ըլլալը, սակայն հիմնականին մէջ անոր զաւեռնած ու քարոզած գաղափարներն էին՝ որոնք հակառնայ էին պաշտօնական կրօնական գաղափարախօսութեան:

Փիլիքա Պօղոս կը ձգտէր ինքնուրոյն բացատրութիւններ տալ աշխարհի բնական երեւոյթներուն, դուրս գալ կրօնական գաղափարախօսութեան կաղապարէն, կը զբաղէր աշխարհի ստեղծումի, նախնութեան, տիեզերքի, փիլիքական հոլովոյթներու հարցերով, տրամաբանութեամբ եւ իմաստասիրութեամբ: Այս խնդիրներուն նուիրուած էին անոր ձեռագիրը 16 աշխատութիւնները, որոնք ձերբակալութեան ատեն Պատրիարքա – րանը բռնագրաւած ու կորսուած էր մատնած: Աքսորէ վերադարձին ան գրեց տասնեակ մը ուրիշ նոր աշխատութիւններ, որոնցմէ լոյս են տեսած միայն փոքր հատոր մը՝ «Տրամաբանութիւն Փիլիքա Պօղոս պատուելիոյն ի պէտս դպրոցական» եւ քանի մը հատուածներ մամուլի մէջ: Մնացեալը բացատրութեամբ որոշ ձեռագիրներու, մնացած են անտիպ:

Արեւմտահայ իրականութեան մէջ մեծ համբաւ ունեցող վիճանականը իր վերջին տարիները գրեթէ անցուցած է ճղնաւորի կեանքով եւ մեռած է չարժանանալով որեւէ դնահատանքի: Բացատրութիւն է թերեւս Գր. Կոստանդեանի մէկ նամակը, ուրտեղ ան նկատել տալէ ետք, թէ «Արչալոյս Արարատեանը» չուզեր հրատարակել վիճանականին մէկ փոքրիկ գործը, կ'ըսէ. «Հաւատամ լերուք թէ ոչ ի չարս ցնորական գրուածոց եւ ոչ ընդ անպիտան թուղթս մնացից սոքին, այլ ի լոյս ապրի եւ գոյց աշխարհի տարա – ծեսցին... Գայցէ ժամ պի ձերդ աշխատութիւն պայծառապսակ փայլեսցի ի մատեանս ազգիս»: Միայն անոր մահէն ետքն է, որ հայ մամուլը զրուատական խօսք ուղղեց Փիլիքա Պօղոսի հասցէին, տալ երեւցան անոր նուիրուած քանի մը յօդուածներ, որոնց շարքին նաեւ երիտասարդ Եր. Օտեանի ակնարկը:

Աւելի դառն ճակատագիր ունեցաւ Պետրոս Թընկիրը, որու անունը եւ գործն եւս կապուած է Զմիւռնիոյ հայ գաղութին հետ: Մխիթարեաններու նախկին սանը, որ լաւ ծանօթ էր Եւրոպայի, մանաւանդ Ֆրանսայի, հիմնադիրը աշխարհի «մոլութիւններէն ու մոլորութիւններէն», քաշուած էր Պուճա գիւղը եւ չուրջ յիսուն տարի՝ մինչեւ իր վերջին օրը (1881) մենակեաց կեանք վարած է: Բազմաթիւ լեզուներու ծանօթ՝ ան, տասնեակ տարիներ շարունակ աքնելով, ստեղծեց ուրոյն լեզու մը՝ տաՀլերա (համաչխար – հային լեզու), յօրինեց անոր քերականութիւնը, տառերը, բառարանը, տօրեայ դրուցարանը: Ատոնք տպուած են իր մեջոցներով:

Մարդկութենէն կտրուելով հանդերձ, Պետրոս Թընկիրը կը շարունակէր մտածել անոր մասին, կ'ուզէր, որ ամբողջ մարդկութիւնը խօսի մէկ լեզուով, զանազան կրօնքներու փոխարէն ունենայ մէկ կրօնք: Ան յոյս ունէր, որ այդ պարագային վերջ կը դնուին պատերազմները, տնտեսական կռիւները, անհաշտութիւնները:

Մի ժամանակ իր մենաստանին մէջ, որ անուանած էր Այվերատանդ (Տաճար իմաստութեան), կը զբաղէր նաեւ բնագիտութեամբ՝ հանքային քարերով, բուսարանութեամբ, աշխարհագրութեամբ:

Գ. Կոստանդեան մեծ վիճանական–մտաւորական մը եղած է Զմիւռնիոյ մէջ: Դեռ պատանի տարիքին, երբ կը յաճախէր Մեսրոպեան վարժարան, զանազան թարգմանութիւններ կը կատարէ եւ զանազան լոյս կ'ընծայէ մամուլի մէջ: 1855ին ան կը հրատարակէ եվիլատական նշանարիներու ժան Ֆրանսուա Շամփոլիոնի վերծանած տախտակը, որու համար կ'արժանանայ Սա. Ոսկանեանի խրախուսանքին՝ «Արեւելք»ի էջերուն մէջ: Ապա պատանի Գ. Կոստանդեան լոյս կ'ընծայէ «Սիպիլ», «Տիեզեր», «Զապէլ», «Սաթենիկ» երաժշտական գործերը: Ցետագային, ինչպէս կը կարծուի, ան կը գրէ նաեւ օպերա մը, որու մասին բացի մամուլի մէջ երեւցած անորոշ ծանուցումէ մը, ոչինչ յայտնի է: Սակայն անվիճելի է, որ երաժշտութիւնը անոր մնայուն զբաղումը եղած է:

Առաւել նշանակալից է երիտասարդ Գ. Կոստանդեանի «Հասարակաց Թանգարան» մատենաշարին հրատարակութիւնը՝ 1858–ին: Այդ մատենաշարը բաղկացած է 16 գրքոյկներէ (հատոր Ա.–ԺԶ.), իւրաքանչիւրը նուիրուած առանձին գիտութեան մը: Անոնք են՝ Գանկաբանութիւն, երկրաբանութիւն, Զգայարանութիւն, Քիմիաբանութիւն, Ելեկտրաբանութիւն (եւ Կալուարանութիւն), Կենդանաբանութիւն, Բուսաբանութիւն, Ջերմաբանութիւն, Առողջաբանութիւն, Աստղաբանութիւն, Լուսաբանութիւն, Մագնիսաբանութիւն, Մեխաներաբանութիւն, Նմանաբանութիւն, Մթնոլորտաբանութիւն, Ջայնաբանութիւն:

Առաջին հայեացքէն կը թուի, թէ ամենք 15ամեայ (կամ 18ամեայ) երիտասարդի մը խանդավառութեան արդիւնքն են լոկ: Սակայն Գ. Կոստանդեան իր գործին մօտեցած է հասուն մարդու վիճակագրութեամբ եւ փաստօրէն հայ իրականութեան մէջ անօրինակ գործ մը կատարած է:

Նախ եւ առաջ պէտք է նկատի ունենալ, որ ան իր ձեռնարկը իրագործած է խոպան հողի վրայ, քանի որ գրեթէ ոչ ոք պրաղած էր այդ գործով: Ի հարկէ, անոր գործը ինքնուրոյն չէ, այլ ինչպէս կը յիշատակէ ան, «ծաղկաքաղ մըն է բազմաթիւ բնագիտական» գիրքերէ եւ յօդուածներէ: Բայց ներկայացնելով զանոնք համառօտ գիծերով, փորձած է «անճանճոյթ եղանակով» «վիճութեանց մեայն բուն իմաստը» տալ:

Գ. Կոստանդեան գրքոյկները ձգի բաժնած է՝ «ձգի նուիրեցինք ազգիս՝ յատկապէս, որ նպաստամատոյց ըլլայ անոր ուսումնասիրութեան յառաջ երթալուն»:

Ան իր ներկայացուցած նիւթերուն մէջ «լիովին չէզոք վիճակ» մը բռնած է, որպէսզի չառիթ ընծերցողին «բնագիտական վէճերու մէկ կամ միւս կողմը» յանելու:

Ուշագրաւ է, որ Գ. Կոստանդեան ընտրած է այնպիսի նիւթեր, «որոնց վրայ մինչեւ հիմա հիմնական կերպիւ գրած չէ»: Անոր գլխաւոր փափաքն է եղած, որ «գոնէ քիչ մը բորբոքէր հասարակութեան հետաքրքրութիւնը գիտութեանց վրայ, որով քիչ մըն ալ գոնէ բնագիտութեան հետեւէին, մանաւանդ աղքատ տղայոց համար գործնական արհեստներ գրուին անոնց մէջ, որ երբ աղքատ տղայ մը իր հայկաբանութիւնը լմնցնէ, երկար բարակ ճարտարախօսութեանց չհետեւելով, ան գործնական արհեստներէն մէկուն հետեւէր եւ կամ լեզուագիտութեան, որով երբ գոլորշին ելլէ ընտանիք անուանելու կարող ըլլայ»:

Ան 1878ին հրատարակեց հռչակաւոր «Մեթոտ վրայ» գիրքը, որ մնայուն նշանաձող դարձաւ հայ գիտական միտքին մէջ:

Մ. Յ.

ԿԻԹԱԻԻ ՎԱՐՊԵՏԸ՝ ԱՆՏՐԻ ՍԵԿՈՎԻԱ

«Բայց կիթառը վարպետօրէն կարենալ նուագելը բոլորովին տարբեր պատմութիւն է: Գործիք մըն է անիկա, որուն ձայներանգները անհուն են ու տարածուն, ինչպէս ջուրակը: Իր մատներուն ճկունութիւնը կարենալ պահելու համար, Սեկովիա կը նուագէ օրական հինգ ժամ, մինչեւ այսօր»:

Սեկովիա առաջին անգամ կիթառի ձայն մը լսեց իր անտալուզեան ծննդավայր գիւղին մէջ, երբ ինք մանուկ մըն էր տակաւին. ու իրեն այնպէս թուեցաւ, թէ այդ ձայնն էր, որ կը ցանկար լսել իր ծնած օրէն ի վեր: Ուզեց այդ նոյն եղանակը անձամբ կատարել եւ, տասը տարեկանին, կը ցուցաբերէր արդէն նշանները ապագայ իրաւ արուեստագէտին:

Մեծ դժուարութիւն մը կար ասկայն իր առջեւ: Այս գարուն սկզբնական շրջանին, կիթառը կը նկատուէր գնչու նուագածուներու վայել նուագարան մը, զոր կը գործածէին անոնք գնչու պարուհիներու հետ իրենց կատարած շրջապատյանները ընթացքին: Կրանատայի մէջ, փլամէնկօ կիթառիսթէ մը նուագելու արուեստին տարրական պահանջները սոր – վելէ ետք, երբ ուզեց լրջօրէն հետեւիլ հեղինակաւոր ուսուցչի մը ցուցմունքներուն, կարելի չեղաւ գտնել այդպիսի վարպետ մէկը:

Կրանատա երաժշտական Ուսումնարանին մէջ, ուր անցուց պատանութեան տարիներուն մեծ մասը, Սեկովիա ինքնախաւութեամբ սորվեցաւ նուագելը: Ան կ'ըսէ. «Դարմայ իմ ուսուցիչս, ուճոյն ատեն՝ իմ աշակերտս: Այդպէս ալ կը շարունակուի մինչեւ այսօր»:

Երաժշտական դրացարաններու մէջ երբ փնտռտուքներ կը կատարէր հին ձեռագիրներ գտնելու եւ մեծ երաժիշտնե–

թեան հետաքրքրութիւնը գիտութեանց վրայ, որով քիչ մըն ալ գոնէ բնագիտութեան հետեւէին, մանաւանդ աղքատ տղայոց համար գործնական արհեստներ գրուին անոնց մէջ, որ երբ աղքատ տղայ մը իր հայկաբանութիւնը լմնցնէ, երկար բարակ ճարտարախօսութեանց չհետեւելով, ան գործնական արհեստներէն մէկուն հետեւէր եւ կամ լեզուագիտութեան, որով երբ գոլորշին ելլէ ընտանիք անուանելու կարող ըլլայ»:

Ան 1878ին հրատարակեց հռչակաւոր «Մեթոտ վրայ» գիրքը, որ մնայուն նշանաձող դարձաւ հայ գիտական միտքին մէջ:

Մ. Յ.

Ծաղկած Փշալարեր

(ՎԻՊԵՐԳ)

— Գործիդ անունն ի՞նչ է, — հարցրեց Աչոտ գային:

— Աման–չաման կը լուսամ, պոլ–մոլ... կուխնու բաղնիք մեմ անցում ձե՞ռքս, էլ ժիվի դա ժիվի, ապրի ու ապրի...

Զանցած երկու չաբաթ, Մեսրոպը ակը կանդնեց խոհանոցի մեծ կաթսաներից մէկին: Դա մի քայլ առաջ էր, թէեւ Մեսրոպի իշխանութեան տակ անցած մեծ կաթսան, աւա՛ղ, սահմանուած էր միայն անարատ ջուր եռացնելուն: Առաւօտեան ու երեկոյեան ջուր էր եռացնում ու անաչառ, անդամ չոայլ չերեփով եռացած ջուրը բաժանում էր կալանաւորներին: Ինքն ասում էր՝ «չայ կ'եփեմ»:

Մեսրոպը անից ծանրոց առացաւ: Նա հիւրասիրեց ինձ եւ Աչոտ գայուն, խոպի ճարպով այլեւ հիւթեղ, մսոտ, սեւ սալորի չրով: Նա ծխող չէր, բայց մեծ քանակութեամբ ընդունեց, ոսկեթել ծխախոտ առացաւ, ինչպէս նաեւ զանազան համեմունքներ, դափնետերեւ, սեւ եւ կարմիր պղպեղ, սխտոր, չորացրած ոչխան: Ծըխախոտը նուիրեց խոհարար տաճիկ Եունուսին, կարգադրիչ Սիպորովին, կոմէնդանտ Փիլեկեովսկուն, իսկ համեմունքները...

Մի անդամ լուր տարածուեց, որ ճամբար է ժամանում բաժանմունքի պետը: Հրահանգուեց կարգի բերել ճամբարն, այնպէս որ ամէն ինչ պզպզալիք բան չկար: Լուացին բարաքների տախտակամածները, յատակը: Քիչ թէ շատ պզպզացրին բարաքների փոքրիկ պատուհանների ապակիները:

Մեսրոպը բարաք ընկաւ, փոքրիկ բանալիով բացեց իր արկղը, համեմունքների տոպրակը չտեսաւ,, — «հա, ամկարող Աստուած» բացագանչեց ու գնաց: Այս «ամկարող Աստուած»ը որը ոչ այլ ոք էր, եթէ ոչ ամենակարող Աստուածը՝ պատրաստակամ եւ ուշագիր՝ կանգնեց Մեսրոպի գլխի վերեւ:

Նման դէպքերում խոհարար Եունուսը նախապատրաստուած էր լինում եւ իր գլխին կաշուից գուրս էր գալիս կալանաւորների մթերքներից մի կարգին ճաշ պատրաստելու համար: Զգրուած օրէնքի համաձայն, երբ բաժանմունքի պետը ճամբար էր գալիս, կալանաւորների ճաշը համտես անելու, որակն ստուգելու պատրուակի տակ, ճամբարի պետի հետ, վերջինիս առանձնասենեակում ճաշում էր: Բայց ի՞նչ կարող էր պատրաստել խեղճ Եունուսը կալանաւորների խեղճ մթերքից, իր խոհարարական հմտութիւնը ցոյց տալու համար...

— Լաւ գնը գայ մնէ՛, — Եունուսին ականջին չէնջաց Մեսրոպը, — եա գնայու չաօ գնալայու... այդ գործը թող ինձ, ես պիտեմ ինչ կ'անեմ:

Մեսրոպը չէր խաբում Եունուսին, խոստացաւ, որ նա պիտէր իր գործը:

Եունուսը տուեց իր համաձայնութիւնը:

— Գելայ, գելայ, քալշոյ նէ զավարի ... (արա, արա, մեծ–մեծ մի խօսք...):

Այդ խօսակցութիւնից յետոյ էր, որ Մեսրոպը բարաք ընկաւ եւ իրեն օգնական նշանակեց «ամկարող Աստուած»:

Վերադառնալով խոհանոց, Մեսրոպը յատուկ պահարանից առացաւ պետերի համար միայն գործածելի փոքր չափի պղնձամանը, ընտրեց իր ուզած միսը եւ անցաւ գործի: Երկու ժամ անց ամենաբուխ քիթն անգամ չէր կարող չզգալ աստիճանի համեմունքներով պատրաստուած ճաշի համեղ բուրմունքը: — «Ցրաշիդոնակի կայլա՛, — այսպէս անուանեց Մեսրոպն իր զարմանալի կերակուրը, որը կարողացաւ խլացնել վիճիարի կաթսաներում խաշուող սառած կազամբի ու կարտոֆիլի տհաճ հոտը:

Եունուսի ուրախութեան չափ – սահման չկար: Ստոստացաւ խօսել կարզապրիչի եւ կոմէնդանտի հետ, որ Մեսրոպին նշանակեն իրեն օգնական:

Եկաւ վերջապէս բաժանմունքի պետ Կուչենկոն: Բարձրահասակ, պինուրա – կան տարազով Կուչենկոն, ճամբարի պետի ուղեկցութեամբ, եաեւից ունենալով կարգապրիչին եւ կոմէնդանտին, լայն եւ հաստատուն քայլերով անցաւ բարաքից բարաք, մտաւ բաղնիք, հացատուն... ուշադիրն ընդունեցին նրան «Ուշադրութիւն» զոռալով բարաքով մէկ, կալանաւորները պատկառանքով ոտքի կանգնեցին... Զոհեր չեղան:

Երբ նրանք քաշուեցին ճամբարի պետի առանձնասենեակը, կոմէնդանտի հրաւիրանքով Եունուսն ապխտակ սիրտացով ծածկուած՝ ծանրաբեռնուած ափսէն բարձր բռնած, մտաւ պետի առանձնասենեակը, ազատեց ափսէն եւ դուրս եկաւ:

Անցաւ մօտ կէս ժամ: Արտաքուստ հանդիստ, սակայն անհամբերութիւնից եռալով՝ Մեսրոպը պրպտուած էր ջուր եռացնելու պատրաստութեամբ, երբ լսեց կոմէնդանտի հրահանգը.— Ալբեիմա՛նիէ (ուշադրութիւն): — Մեսրոպը չակուեց: Ներս մտան երկու պետերը. ապա ժիվելեավսկին եւ Սիպորովը: Բաժանմունքի պետը չափեց խոհանոցի երկայնքը, յետոյ լայնքը, ապա մօտեցաւ Եունուսին.

ԳՈՒՐԳԻՆ ՄԱՀԱՐԻ

(Շար. – 28)

ՀԱՅԿ

ՆՈՒՇԱԿԱՆ ՊԱՏՄ

Ը.

Ցեղաց, ասում, չունէաս ամէնէն մե հետաքրքրական ժողովուրդ մը, քան հայկազունները, որոնց պատմութեան մասին եզրակացութիւններ կրնանք հանել ոչ միայն հնագիտական գիւտերէ, այլ եւ ամէնէն առաջ անոնց լեզուին ուսումնասիրութենէն։ Հայերէնը, որ ինդոեւրոպական լեզուներու ընտանիքին կը պատկանի, ունի իր մէջ շատ մը բառեր, որոնք ուրիշ ոչ մէկ լեզուի մէջ կան եւ որոնք կը վերաբերին հայկազունի կեանքին ամէնէն մանր մունր մանրամասնութիւններուն։ Ասոնք կը ցուցնեն, որ հայկազունները ուրիշ ազգերէ առանձնացած ապրած են երկար ատենէ մը ի վեր, եւ որ անոնց կեանքը ամէնէն մանր մունր մանրամասնութիւններուն մէջ ալ ինքնուրոյն է եղած։

Հայկազունները ունին իրենց ազգային աստուածները, որոնք ուրիշ ոչ մէկ ազգի աստուածներուն նման չեն։ Անոնք ունին իրենց ազգային հերոսները, որոնք ուրիշ ոչ մէկ ազգի հերոսներուն նման չեն։ Անոնք ունին իրենց ազգային սովորութիւնները, որոնք ուրիշ ոչ մէկ ազգի սովորութիւններուն նման չեն։ Ամէն ինչ, որ հայկազունին է, ուրիշ ոչ մէկ ազգի կը պատկանի։

Հայկազունները ունին իրենց ազգային ոգին, որ ուրիշ ոչ մէկ ազգի ոգիին նման չէ։ Ասոնք ամէնքն ալ ցեղին ինքնուրոյնութեան նշաններ են։

Ցեղաց, ասում, չունէաս ամէնէն մե հետաքրքրական ժողովուրդ մը, քան հայկազունները, որոնց պատմութեան մասին եզրակացութիւններ կրնանք հանել ոչ միայն հնագիտական գիւտերէ, այլ եւ ամէնէն առաջ անոնց լեզուին ուսումնասիրութենէն։ Հայերէնը, որ ինդոեւրոպական լեզուներու ընտանիքին կը պատկանի, ունի իր մէջ շատ մը բառեր, որոնք ուրիշ ոչ մէկ լեզուի մէջ կան եւ որոնք կը վերաբերին հայկազունի կեանքին ամէնէն մանր մունր մանրամասնութիւններուն մէջ ալ ինքնուրոյն է եղած։

Հայկազունները ունին իրենց ազգային աստուածները, որոնք ուրիշ ոչ մէկ ազգի աստուածներուն նման չեն։ Անոնք ունին իրենց ազգային հերոսները, որոնք ուրիշ ոչ մէկ ազգի հերոսներուն նման չեն։ Անոնք ունին իրենց ազգային սովորութիւնները, որոնք ուրիշ ոչ մէկ ազգի սովորութիւններուն նման չեն։ Ամէն ինչ, որ հայկազունին է, ուրիշ ոչ մէկ ազգի կը պատկանի։

Հայկազունները ունին իրենց ազգային ոգին, որ ուրիշ ոչ մէկ ազգի ոգիին նման չէ։ Ասոնք ամէնքն ալ ցեղին ինքնուրոյնութեան նշաններ են։

— Մկսած է

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Սիփան – Կոմիտաս երգչախումբի վարչութիւնը կը ծանուցանէ թէ հոգեհան – պատեան պաշտօն կատարել կուտայ, այս կիրակի առաւօտ, Դեկտ. 17, Փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցին իր ողբացեալ ղեկավարներուն՝

ԳՈՒՐԳԷՆ Մ. ԱԼԷՄՇԱՀԻ

մահուան 25րդ տարելարձին

եւ

ՍԱՓՕ ՅԱԿՈԲԵԱՆԻ

յիշատակին:

Ի դիտութիւն ողբացեալներու յիշատակը յարգողներուն:

×

Շաւիլէն այրի Տիկ. Տիւրիցա Մեծատուրեան, Տէր եւ Տիկ. Եդուարդ Մեծատուրեան, Տէր եւ Տիկ. Անկօ, Օրիորդ Ալիս Մեծատուրեան կը ծանուցանեն թէ այս կիրակի (17 Դեկտ.) առաւօտ Շաւիլի Ս. Գր. Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ հոգեհանգստեան պաշտօն կը կատարուի իրենց սիրելի հօր՝

ՅԱԿՈԲ ՄԵԾԱՏՈՒՐԵԱՆԻ

յիշատակին, անոր մահուան տարելիցին առթիւ:

Ի դիտութիւն ողբացեալին յիշատակը յարգողներուն:

×

Կապոյտ Աչի Լիոնի մասնաճիւղը հոգեհանգստեան պաշտօն կատարել կուտայ Կիրակի, 17 Դեկտ. Ս. Յակորի օրը, Լիոնի Ս. Յակոբ եկեղեցւոյ մէջ, ի յիշատակ ողբացեալ ընկեր – ընկերուհիներուն:

Յիշատակը յարգողներէն կը խնդրուի ներկայ գտնուիլ:

THEATRE DE TERTRE
81, Rue Lepic (Métro Lamarck)

HEUREUSEMENT CE N'EST PAS TOUS LES JOURS DIMANCHE

de
Jean-Jacques VAROUJEAN

Tous les soirs à 20 h. 30 précises
sauf dimanche et lundi

ՆՈՒԷՐ

Դաշնակցութեան օրուան վայրկեան տօնակատարութեան առթիւ, Լոնտոնի մէջ, ընկ. Հրանդ Շնորհամեան 1000 անգլիական ոսկի նուիրած է Հ. Յ. Դ. Նաւատարիեան կոմիտէին:

Ի ՅԻՇԱՏԱԿ

Տէր եւ Տիկին Գամեր Գարամանեան, իրենց զաւմիկին՝ Պետրոս Ալանկիւլեանի մահուան վեցերորդ տարելարձին առթիւ, կը նուիրեն 30 ֆր. Կապոյտ Աչին, 30 ֆր. Կարմիր Աչին, 30 ֆր. «Յառաջ»ի (առանձնաշնորհ «Յառաջ»էն):

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐԸ

ՓԱՐԻԶԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Կապ. Աչի Շրջ. Վարչութեան, մասնակցութեամբ Փարիզեան չրջանի իր մասնաճիւղերուն, Մանուկներու Օրը կը տօնուի Փարիզի մէջ

ՅՈՒՆՈՒԱՐ 28ԻՆ

×

ԼԻՈՆԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Կապոյտ Աչի Լիոնի մասնաճիւղին Յունուար 14ին:

×

ՊՕՄՈՆԻ ՄԷՋ

Կապոյտ Աչի Պօմոնի մասնաճիւղին պղրոցին տօնածառի հանդէսը 7 Յունուար Կիրակի կէսօրէ վերջ ժամը 3ին եկեղեցւոյ սրահին մէջ:

Կաղանդ պապան կը ներկայանայ պէս-պէս նուէրներ բաշխելու փոքրիկներուն:

ՇԱԽԻԼԻ Ս. ԳՐ. ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

Եկեղեցւոյ վերաշինութեան օծման 15րդ տարելիցը կը տօնուի 17 Դեկտ. Կիրակի առաւօտ:

Հանդիսաւոր պատարագ կը մատուցանէ եւ կը քարոզէ Նորվան Վրդ. Ջաֆարեան: Երգեցողութեանց կը մասնակցին հրաւիրեալ դպիրներ:

Յառաջ պատարագի, մասնաւոր հոգեհանգստեան պաշտօն կը կատարուի եկեղեցւոյ բոլոր բարերարներու հանգուցեալ ծնողաց հոգւոյ ի յիշատակ, ի մասնաւորի ողբացեալ Պ. Սարգիս Պալապանեանի մահուան Բ. տարելիցին առթիւ:

ՏՕՆԱԲԱՐ

Սէն Շամոնի հայ եկեղեցւոյ հովանաւորութեան տակ գործող հայ դպրոցի տօնածառը՝ Դեկտ. 17ին, ժամը 15ին, Սալ ժանն տ'Արք, 10 ռիւ տը լա Ռեփիւպլիք, Սէն-Շամոն:

IMPRIMERIE SPÉCIALE
DU JOURNAL «HARATCH»
32, RUE DE TRÉVISE — PARIS (9e)

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Մարսէյլի Ծագումով Հայ Ֆրանսացի նախկին զինուորականներու Բարեկամական Միութիւնը, ի պատասխան իր հեռագրին, ուղղուած Տիկին տը Կօլլ, Զօր. տը Կօլլ մահուան տարելիցին առթիւ հեռաձայնեալ նամակը առացած է, տը Կօլլ որդիէն.—

«Յարգելի նախագահ,

Մայրս չատ ազդուած է այն յուզիչ հեռագրին առթիւ զոր ուղղած էիք, անցեալ Նոյեմբեր 13ին, Քոլոմպէ Լէ Տէօ գ'Էգլիզ Զօր. տը Կօլլ մահուան տարելարձին առթիւ:

«Կը խնդրեմ ուրեմն ձեզմէ որ բարի ըլլաք փոխանցելու Մարսէյլի հայ նախկին զինուորականներուն, եւ դուք ալ ընդունիք, մեր բուռն չնորհակալութիւնները ձեր ազնիւ մտածումին առթիւ»:

ՁՄՐԱՆ ԱՐՋԱԿՈՒՐԴ

Ծնունդի եւ Ամանորի առթիւ կազմակերպուած է սովորական ճամբորդութիւնը Աւստրիա, Ս. Եոհան: Մեկնում Դեկտեմբեր 23, Կառ տը Լ'Էսթէն, վերադարձ Յունուար 3ին:

Ս. Եոհան կը գտնուի Սալցպուրկի չըրջանը, պատապարուած հովերէն, մշուշէն: Բնակութիւն կոլտըները Հիրշ պանդոկը, հանդստաւէտ սենեակները, տաք եւ պաղ ջուր, հեռաձայն, կեդրոնական ջեռուցում, խնամուած ճաշ:

Տահմանափակ տեղեր:
Մասնակցութիւն 545 ֆր.

RELATIONS TOURISTIQUES EDUCATIVES
12 Allée Leonide — Le Perreux
Tél. 324-14-96

Association sans but lucratif, régie par la loi du 1-7-1901

Լ.Տ. ՃԼՋԻՐԵԱՆ
Ընդհ. Պատուիրակ

SAMOUEL-MOURAT VARJABAN
ՏՕՆԱԲԱՐ

Կիրակի 17 Դեկտ. ժամը 16·30էն սկսեալ

ԵՐԳ, ՊԱՐ, ՆՈՒԱԳ
ԱՐՏԱՍԱՆՈՒԹԻՒՆ
Ընտանեկան հաճելի մթնոլորտ, ճոխ սեղան, ճոխ վիճակահանութիւն
ԿԱՂԱՆԴ ՊԱՊԱՆ
իր նուէրներով
26, Rue Troyon — SEVRES

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Մարսէյլի Հ. Բ. Ը. Միութեան եւ Ս. Սահակ – Մեսրոպ Մայր եկեղեցւոյ վարչութիւններու հովանաւորած հայերէնի պղրոցին տարեկան տօնածառը տեղի պիտի ունենայ 7 Յունուար, Կիրակի օր, կէսօրէ ետքը ժամը 4ին, Միութեանս սրահին մէջ, 7 Ռիւ Փաւիէր:

ԾՆՈՒՆԴ

Մարսէյլէն փոխրիկն կորիւն Յովսէփեան ուրախ է ծանուցցնելու իր ծրոջ՝

ՅՕՍԷ Ի

ծնունդը, Դեկտեմբեր 9, 1972:

Այս ուրախ առիթու կորիւն 200 ֆր. կը նուիրէ «Յառաջ»ի բարգաւաճման

ՀԱՆԴԻՍԱՒՈՐ ՊԱՏԱՐԱԳ

ԵՒ ՄԱՏԱՂՕՐՀՆՈՒԹԻՒՆ
Ս. ՅԱԿՈԲԻ ՏՕՆԻՆ ԱՌԹԻՒ

Կիրակի 17 Դեկտ. Պուլ Օտտոյի Հայոց եկեղեցւոյ պաշտպան Ս. Յակոբ Մծբնացիի տօնին առթիւ հանդիսաւոր պատարագ պիտի մատուցուի եւ յատուկ պատարագի մատաղի օրհնութիւն պիտի կատարուի:

Կը պատարագէ եւ կը քարոզէ Թաղին հովիւ՝ Նշան Քհնյ. Գույումճեան:

ՏՕՆԱԽՕՒՄ

ԴՊՐՈՑԱՍԷՐԻ ՄԷՋ

Դպրոցասէր Տիկնանց Վարժարանի Տօնածառի Հանդէսը տեղի պիտի ունենայ Դեկտ. 17ին, Կիրակի կէսօրէ վերջ ժամը 4ին վարժարանի նոր դահլիճին մէջ,

Նախագահութեամբ
ՍԵՐՈՎԲԷ ԱՐՔ ՄԱՆՈՒԿԵԱՆԻ
(Հայրապետական Պատուիրակ Եւրոպայի Հայոց)

Գեղարուեստական բաժին,
Ճոխ պիւֆէ

Պետիկ ՊԵՏԻԿԵԱՆ իր երգերով եւ նուագախումբով պիտի աւելցնէ փայլը այս ցերեկոյթին

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ԿԱՊՈՑՑ ԽԱՉԻ Պօմոնի մասնաճիւղի վարչութիւնը ընդհ. անդամական ժողովի կը հրաւիրէ ընկերուհիները, բաժակ մը թէյի չուրջ, 13 Յունուար Շաբաթ կէսօրէ վերջ ժամը 3ին, եկեղեցւոյ կից սրահը: Կը խնդրուի ընկերուհիներէն ճշդապահ ըլլալ: Կարեւոր օրակարգ:

×

ՀԱՄԱԽԱՐԲԵՐԴՅԱԿԱՆ Միութեան Մարսէյլի մասնաճիւղի վարչութիւնը ընդհ. անդամական ժողովի կը հրաւիրէ իր բոլոր անդամները 16 Դեկտ. Շաբաթ երեկոյ ժամը 9ին, սովորական հաւաքատեղին: Օրակարգ տեղւոյն վրայ:

Disque VOGUE n° 30152

Chants Romantiques Arméniens

20ème VOLUME

Հրապարակ ելաւ հայ ռոմանթիք երաժշտութեան նուիրուած նոր երգապնակ մը՝ պատրաստութեամբ

ԱՐԱ. ՊԱՐԹԵՒԵԱՆԻ

Խմբերգ – մեներգ եւ նուագախումբ *Կը պարունակէ 12 հետեւեալ երգերը*
Աբովեան — Իմ Անուշ Տաւիղ — Մանուկն ու վարդը — Հոգիս մրմուռ — Երազ — Նաւերգ — Ես լսեցի — — Ոսկի ջուրթակ — Գարուն — Սարեր կ'ազատէմ — Իրիկուն — Եարիս:

Ինչպէս նաեւ երկու եռանուագ (Թռիո) թիւ 790, երկու սրինդի, քլարինէթի եւ տաւիղի համար

Մեծածաւալ երգապնակ, գին 30 ֆրք. յաւելեալ առաքման ծախքը:

Կը դրկուի ֆոնիքրը ռամպուրսըման
Երգարանով միասին ստանալու համար դիմել հեղինակին՝

M. A. BARTEVIAN 14, RUE PETIT, PARIS 19
TÉLÉLHONE : 208-99-22

Նախկին երգապնակները են. Կոմիտասեան Պատարագ (*թիւ* 451), Եկմալեան Պատարագ (442), *Գանձարան Հայ Եկեղեցական երաժշտութեան* (454 եւ 547)
Chants d'Arménie et du Caucase (526) — Arménie (527 et 199) — Reflets d'Arménie (516) — Promenade en Arménie (596) — Soirée Arménienne (20162) — Arménie Légendaire (20181) — Le Caucase (182) — Oeuvres Symphoniques (20176) — Au fil des Songes (714)

ԳՈՅԱՄԱՐՏ ՕՐԱՑՈՅՑ 1973

Հրատարակութիւն Հ. Յ. Դ. Ն. Ս.ի Մարսէյլի չրջան: Գունաւոր կողք, 12 էջեր պատմական, աղգային ու այժմէական նիւթերով:

Գին 10 ֆրանք

Ապսպրանքներու համար դիմել իւրաքանչիւր չրջաններու մէջ Հ. Յ. Դ. Նոր Սերունդի անդամներուն կամ հետեւեալ հասցէին՝

G. HOVSEPIAN
51, Bd. des Grands Pins — 13010 Marseille — C.C.P. 254289 Marseille

Մարսէյլի չրջանին համար դիմել հետեւեալ անձերուն՝
Սէնթ Անթուան.— *Ա. Շաոյեան եւ Մ. Սուքիասեան*
Պուլ Օտտօ.— *Հ. Սարգիսեան եւ Յ. Արզումանեան*
Մարսէյլ Բաղամ.— *Ա. Քէօսէեան, Ծերիկեան գրատուն*
Սէնթ Մարկրիթ.— *վ. Մուրատեան*
Սէն Ժերոմ.— *Խ. Ուլուսեան եւ Մ. Աւտոյեան*
Պօմոն.— *Ղ. Տէրտէրեան եւ Յ. Տէր-Վարդանեան*
Սէն Լու, Լափոմ, Վալպարէյ.— *Գր. Փիլիկեան, Մ. Նապաշեան, Ս. Գինոսեան*
Կարտան-Էքս.— *վ. Գամպերեան եւ Ա. Տէր-Սահակեան*
Նիս.— *Ս. Ալեքսանեան եւ Գ. Խոսրովեան*
Ավինեոն.— *Թ. Մարճոյեան*

ՀԻՆԳՇԱԲԹԻ
14
ԴԵԿՏԵՄԲԵՐ
JEUDI
14 DECEMBRE
1972

LE NUMÉRO 0,70 F.

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ
ՀԻՄՆԱԴԻՐ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

HARATCH

LE SEUL QUOTIDIEN ARMÉNIEN EN EUROPE OCCIDENTALE
Directrice : ARPIK MISSAKIAN
32, RUE DE TRÉVISE PARIS 9

— Tél. : 770-86-60 —
C. C. P. Paris 15069-82

Fondé en 1922
R. C. Seine 57 A 2731

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա	Տար. 120 ֆր.	Վեցամսեայ	65 ֆր.
Արտասահման	Տար. 135 ֆր.	Հատը	0,70 ֆր.

48րդ ՏԱՐԻ — ԹԻՒ 12.589

Fondateur: SCHAVARCH MISSAKIAN

48e ANNÉE — N° 12.589

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ԻՐ ԵՐԳԸ ՄՆԱՑ ԱՆԱՒԱՐՏ

—0—

Դեկտեմբերեան ցուրտ առաւօտը, որ կը բարձրանար Տէթրօյթի վրայ, վեր – կեցաւ էր զոր տեսաւ Գուրգէն Ալէմշահ, ամէն քառնեւէնդ տարի առաջ:

Ու առաւօտները երբարու յաջորդեցին քառնեւէնդ երկար — այնքա՜ն կարճ — տարիներու երկայնքին, մահերը չատցան, Սփիւռքը ամայացաւ, թաղողները պակասցան ու Սփիւռքի հայ երկը տխրեցաւ:

Ս. Ղազարի փոքրիկ վերեզմանատունը ժեհալ մը ունէր ունեցաւ: Հայ Դպրոցին մեծ ապաստարկուներու կողքին, իր վերջին հանդիստը գտաւ, այս անգամ հայ երգին ապաստարկուն:

Հիմա, մշուշը իջած է Ս. Ղազարի վրայ, ուր վանականը կ'ազօթէ «Հոգւոցն հանգուցելոց»: Օրը կը մեռնի, մինչ մառաւուղն կը լսուի, մեղմ ու անոյշ՝ ձայնը հայ չարականին:

Բայց Գուրգէն Ալէմշահ պիտի չսիրէր այս տխրութիւնը, որ կը պատէ հողիները բոլոր անոնց որ պինդը ճանչցած են:

Ինք որ համակ կեանք էր ու խանդավառութիւն, պիտի չուզէր, որ պինդը լլչնք թախիծով: Ինք պիտի նախընտրէր որ Սիհան – Կամիտասի բոլոր տղաքն ու աղջիկները, կողք կողքի, երգէին այսօր «Վարդ կօշկա», «Անուշիկ եար ջան», «Ինչ կանդնել ես»: Ինք պիտի նախընտրէր, որ այսօր մօտեցած «Իմ Հեռուր Հայրենիք»ը չլռնէք չլռնէք տարած – ուէր, ու կեանք տար իրեն:

Տէթրօյթէն Վենեւիկ, առաւօտները իրարու յաջորդեցին: Սփիւռքի հարսնիքները եկեղեցի փոխեցին, հոգեհանգիստները մեղի մնացին:

Փարիզէն Երեւան Ալէմշահի երգը սիրուեր պրաւեց:

Հայաստանը սկսաւ վինտռել իր զործերը: Երգչուհիները ձեռքէ ձեռք փոխանցեին անզուական մեներգները, զբաղ – խոտարար անզատանելի դարձած: Դեղ – նած տեարակները մասունք դարձան: «Իմ երգը» եւ «Նպերը»ը բերնէ բերան անցան, բայց գոհարները մնացին անտեսուած՝ «Գինիկո», «Ծաղիկ էի» (Ա.Ե. Իսահակ – եան), «Սիրուն ասաղեր», «Ես Սիրեցի» եւ որքա՜ն ուրիշներ:

Ինք եղած էր այն բացառիկ հայ հեղինակը, որ գիտցած էր իտալական զպրոցին առած իր հմտութիւնը ծառայ զարձնել հայ երգին, անոր մէջ պահելով այն հարազատ չունչը, զոր ժառանգ թողած էր Կոմիտաս: Ու սիրուն մեղեդիչն մինչեւ «Ալարայր», Ալէմշահ կը մնար հայ երաժիշտը, որ հայրենիքը չնչած էր միայն Մուրատ – Ռափայէլեանի զպրոցականն նատարաններուն վրայ, ու հայ երգը «գտած» կոմիտասեան տեարակի մը մէջ:

Տէթրօյթէն Վենեւիկ, առաւօտները իրարու յաջորդեցին: Ժամանակը փորձեց զոլ մը լլչեցնել վիշտերուն վրայ, չզիտակցելով թէ ժամանակը բան չի կրնար զնել երբ բացակայութիւնները միայն պարապներ կը թողուն: Ու պարապներ կան որ չեն լեցուիր: Անկա յոռետեսութիւն չէ, զժբախտաբար, այլ զառն իրականութեան մը հաստատումը, Սփիւռքի համար: Մեր փէս–լաչէղները հայ անհատին անդին, մանրիկ առ մանրիկ հայութիւն տարին իրենց հետ եւ ամբոխավար ճառերը չեն, որ բան մը կրնան փոխել այս անողոք ճշմարտութեան առջեւ:

Ու եթէ ինքնագիտակցութեան ոչ մէկ ձիգ ըլայ, Սփիւռքի Երգն ալ, օր մը, նման Ալէմշահի Երգին, պիտի մնայ՝ անաւարտ:

«ՅԱՌԱՋ»

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՎԻԵԹՆԱՄ

ՔԻՍԻՆՆԿԷՐ Կ'ՈՒԶԷ ՎԵՐՋԱՅՆԵԼ

—0—

Փարիզի մէջ Ուաշինկթընի եւ Հանոյի բանագնացները կը չարունակեն խօսակցիլ: Շաբթուան առաջին օրէն ի վեր օրական քանի մը հանդիպումներ տեղի կ'ունենան մէկ կողմէ Քիսինկէրի եւ Լը Տիւք Թոյի եւ, միւս կողմէ, մասնագէտներու միջեւ, ինչ որ ենթադրել կուտայ դէպերուն, թէ վերջին կարզադրութիւններն են, որ կ'ըլլան: Շատեր նոյնիսկ համոզուած են, թէ բանակցութիւնները դրական արդիւնքով մը վերջ պիտի զտնեն այս չարաթ:

Հարաւ. Վիեթնամի նախագահը՝ Թիէօ կարեւոր ճառ մը խօսելով Հարաւին առջեւ առաջարկեց Հանոյի, որ Նոր Տարուան օրերուն առթիւ հրադադար հաստատուի, որու ընթացքին երեք կողմերը (Հարաւային եւ Հիւսիսային Վիեթնամ ու Վիեթ–Քոնկ) չփոխեն հաստատուն իրենց միջեւ որեւէ տեղ: Այլ խօսքով՝ Թիէօ կը փորձէ «վիեթնամականացնել» պինդուլի հարցի քննութիւնը: Թիէօ ճշդեց այս առթիւ, թէ եթէ Հանոյ համաձայն է իր այս առաջարկին, իր պատասխանը կրնայ հաղորդել փարիզեան հանդիպումներու ընթացքին: Դրական պատասխանի պարագային փութով խօսակցութիւններու կը ձեռնարկուին, իսկ եթէ այդ խօսակցութիւնները «քաջալերական», այսինքն յուսադրիչ նկատուին, հրադադարը կրնայ չարունակուիլ մինչեւ որ խաղաղութեան լուրջ համաձայնութիւն մը զոյացուի կողմերու միջեւ:

Ինչպէս կ'ակնկալուէր, Հանոյի եւ Վիեթքոնկի պատասխանը ժխտական եղաւ: Ասոնց բաները Փարիզի մէջ յայտարեց, թէ Թիէօ այս ձեւով կը փորձէ ազդել հանդիսանալ խաղաղութեան հաստատման: Համաձայն բաներուն, եթէ Մ. Նահանգները խոստանայ կ'ուզեն վերջ տալ պատերազմին, ոչ մէկ պատճառ ունին չհամագործելու Թիէօյի առաջարկը՝ յեռանգելու համար զինադադարի համաձայնութեան կնքումը:

Ո՞Վ ԸՍԱՒ ՈՐ ԹՈՒՐՔԵՐԸ ՅԵՏԱՄՆԱՑ ԵՆ

—0—

Սովորութիւն դարձած է, մանաւանդ մեր մէջ շատ յետամնաց ժողովուրդ ըլլալ, կատել Թուրքերը: Ընդհակառակն, մարդիկը այնքան յառաջդիմած են, որ տեսէք ինչէ՞ր կը մտածեն:

Ստորեւ նոյնութեամբ կուտանք բրիտանական մամուլի Ռօյթըր գործակալութեան հեռագիրը:

Իմմիրէն կը հաղորդեն, թէ Թուրքիոյ պոռնիկները Դեկտեմբեր 6ին իրենց արհեստակցական միութիւնը կազմած են եւ ծրագրած են մասնաճիւղեր հաստատել մեծ քաղաքներուն մէջ:

Բացման հաւաքոյթին Իմմիրի առաջ – ջադահութեան պատասխանատուն՝ Ռիւքջադահութեան պատասխանատուն՝ Ռիւքջադահութեան կարեւոր մէկոյց մը կ'ընծայեն հասարակութեան սեռային կեանքին մէջ: Ան ըսած է նաեւ, թէ արհեստակցական միութիւնը պիտի պայքարի իր անդամներուն անկախութեան, անոնց մարդկային իրաւունքներուն եւ արժանապատուութեան համար, քանի որ շատեր անոնցմէ անարդար վերաբերումի են թարկուած են: Ժողովի մասնակից պոռնիկները յայտարարած են թղթակիցներու, թէ կը յուսան, որ արհեստակցական միութեան անդամները իրաւունք կ'ունենան ի մօտոյ օգտուելու պետական ընկերային իրաւունքներէն:

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՄԵԾԱՄԱՍՆՈՒԹԻՒՆԸ առջի օր նոր կայացուց իր թեկնածուներու վերջնական ցանկը: Անուշա Ի. Տէ. Խո.ը առիւծի բաժինը իրեն վերապահած է: Ընդհանուր ձեւով մեծամասնութեան երեք կուսակցութիւնները (Ի. Տէ. Խ., ժիքոքառաիչն եւ Տիւհամէլի կեդրոնը) 524 թեկնածու ունի: Ասոնց 302ը՝ Ի.Տէ.Խո. են, 78ը՝ ժիքոքառաիչն: Այս թեկնածուները կը ներկայանան «Յառաջդիմութեան Հանրապետականներու Միութիւն զօրավիզ Հանրապետութեան Նախագահին», պիտակին ներքեւ:

ԱՄԵՐԻԿԱՅԻ այենաւորդները նոր պիտեր ըրած են Լուանին վրայ: Իրենցմէ մէկը որ երկրաբան է, զեղինի մօտեցող քարեր եւ ժայռեր տեսած է, բայց կրնայ նաեւ պատահիլ որ ժանդ ըլլայ եւ այդ պարագային պիտի նշանակէր որ ջուր եղած է Լուանին վրայ:

ԱՂԲԱՀԱՅԱՍՔՆԵՐՈՒ զործադուլը կը չարունակուէր Զորեքշաբթի օր, եւ ոգբալի պատկեր մը պարզուէր զառ, Փարիզի սկսած է նաեւ հոտիլ, մանաւանդ ճաշարաններու առջեւ ուր, չարթուան մը ապր դիզուած է:

ԻՏԱԼԻՈՅ մէջ շատ բուռն գոյգեր տեղի ունեցած են ձախակողմեան տարրերու կողմէ: Յուցարարները կը պահանջէին անիշխանական Վալբրէմտայի ազատ արձակումը: Ենթադրուած է իրրեւ պատասխանատու Միլանոյի զրամատան եղեռնավարձին, ուր 16 հոգի մեռան բայց քննութիւնը դեռ մը չէ կրցած հաստատել:

ՀՆԴԿԱՍՏԱՆ եւ Փաքիստան համաձայնագիր մը ստորագրեցին ճշդելով Քաչմիրի սահմանագիծը երկու երկիրներու միջեւ: Հնդկաստան պիտի պարպէ 5139 քառ. քիլ. տարածութեամբ չրջան մը, որ պիտի յանձնուի Փաքիստանի, իսկ այս վերջինն ալ, իր կարգին, պիտի հեռանայ 69 քառ. քիլ. չրջանէ մը՝ պայն ձգելով Հնդկաստանի:

ԹԻԹՕ ճառի մը ընթացքին նկատել տուաւ, թէ «Եուկոսլաւիա ժամացոյցի ճօճանակի նման մէկ ձախ եւ մէկ աջ չի ճօճիր», ինչ որ կը նշանակէ, թէ Եուկոսլաւիա ընկերվարական երկիր է եւ կը հետեւի իր ուրոյն ճամբուն՝ առանց Արեւմուտքի կամ Արեւելքի չարելու:

ՉԵԽՈՍԼՈՎԱՔԻԱ եւ Միացեալ Նահանգները կ'ուզեն բարելաւել իրենց յարաբերութիւնները: Զորս տարի առաջ չփոմանները խզուած էին, երբ Պորհ. Միութեան վինուորական ուժերը Չեխոսլովաքիա խուժեցին:

ՄՈՒՀԱՆԺ թալքին համար վերջապէս ամբաստանութիւններ եղան: Ծանօթ է որ 41 նորածիններ մեռած էին, այս թալքին պործածութենէն ետք: Ներկայիս երեք հոգի իրրեւ պատասխանատու ամբաստանուեցան:

ԳՈՒՐԳԷՆ ԱԼԷՄՇԱՀ



1907 1947

« Ես իմ երաժշտութեանս հայեցի մասը վարդապետին կը պարտիմ, անոր գործերուն ընթերցումով է որ հայ երաժշտութեան յայտնութիւնն ունեցայ »:

ՄԻութիւնը պիտի պայքարի իր անդամներուն անկախութեան, անոնց մարդկային իրաւունքներուն եւ արժանապատուութեան համար, քանի որ շատեր անոնցմէ անարդար վերաբերումի են թարկուած են: Ժողովի մասնակից պոռնիկները յայտարարած են թղթակիցներու, թէ կը յուսան, որ արհեստակցական միութեան անդամները իրաւունք կ'ունենան ի մօտոյ օգտուելու պետական ընկերային իրաւունքներէն:

ԸՆԿ. ԳԱԲՐԻԷԼ ԹԱԳԻՈՐԵԱՆԻ ՄԱՀԸ

Ազեքսանդրիոյ մէջ Նոյեմբեր 11ին մեռած է մեր վեթերան ընկերընկերէն Գաբրիէլ Թագւորեան, գրագէտ, բազմամասնակ կրթական մշակ, ազգային զործիչ եւ «Յուսաբեր»ի բազմամեայ աշխատակից:

Ողբացեալ ընկերը, որ չուրջ 90 տարեկան էր, հեղինակն էր բազմաթիւ զործերու՝ «Երբ երկինքը անողոք է» (1950), «Պահակը պատնէշին վրայ» (1956), «Գորչ պայը կատղեր է» (1959), «Պայքարը բռցավառած հոգիներու» (1966), եւայլն:

Մնած էր ֆէնէսէ եւ աշակերտած տեղւոյն Ռուբինեան վարժարանը, ուր յետագային՝ 1900–1905 պաշտօնավարած է իրրեւ ուսուցիչ: Ապա անցած է Կեսարիա, ուր տասնմեայ է կիմշեան վարժարանի տնօրէնութիւնը (1908 – 1911): 1911ին կրկին տնօրէն կը կարգուի ֆէնէսէի վարժարանի:

1912ին կը հաստատուի Թալաս, իսկ 1914ին՝ Պոլիս: Կը վարէ տնօրէնի պաշտօններ Թալասի Վարդ – Պատրիկեան եւ Սկիւտարի Ս. Խաչ վարժարաններուն մէջ:

1915ի Ապրիլին ձերբակալուելով կը տարուի Էվկրկի, եւ հանկէ՝ Կեսարիա, ուր Պատերազմական Ատեանը 15 տարուան բերդարգելութեան կը դատապարտէ զինքը 1916ին, իրրեւ յեղափոխական:

Ազատուելէ ետք կ'արձակուի եւ կը զրկուի զաշնակցական կարկառուն դէմքերէն:

Զինադադարին ապատ կ'արձակուի եւ վերադառնալով Պոլիս կը դառնայ դիւանագիտական Ժնամատարութեան Գաղթական – ներու բաժնի (1919–1920): Յետոյ կը նշանակուի տնօրէն Կէտիկ փաչայի Մեսրոպեան վարժարանի (1920–1923):

1923ին կը հաստատուի Ազեքսանդրիա, ուր մինչեւ 1927 փոխ–տնօրէնի պաշտօն կը վարէ տեղւոյն Պօղոսեան վարժարանին մէջ:

Մինչեւ վերջ իր զործօն մասնակցութիւնը բերած է Ազեքսանդրիոյ ազգային բոլոր զործերուն եւ, յատկապէս, «Յառաջդիմասէր» Մշակութային Միութեան աշխատանքներուն:

Ազեքսանդրիոյ Ազգ. Իշխանութիւնը իր յարգանս ողբացեալ ընկերոջ բաժակ – դիւն ու բարեմասնատակ զործին՝ ազգային թաղում կատարած է:

Գ· ԱԼԷՄՇԱՀԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

ԱՐԻ ԿՐ ՀԱՆԳՉԻ ՄԵԾ ՅՈՅՍԵՐԸՆ ԱՆԲԱԺԱՆ

Գուրգէն Ալէմշահ մահէն 25 տարիներ (1947–1972) վերջն ալ մեր մէջն է: Երեւակայութիւն չէ, երազ չէ, ոչ ցնորական վախաք որ նա ողջ ըլլայ· խօսի, տպրի մեր մէջն ու մխսին երգենք իր սրտի ձայները: Այն մարդը կը մեռնի որ աչքարհիս վրայ հետք չի ձգեր· որուն սիրտը մերձաւորի համար չէ բաբախած եւ ճրագ մը չէ վառած անոր լոյսին տակ նստելու եւ առեղծելու համար:

Գուրգէն Ալէմշահ դեռ այսօր ալ վէնեհիկ կը դանուի· Մուրատ Խափայէ – եանի զրաստեղծներուն վրայ· Միլանի եբաժշտանոցին մէջն է· Փարիզ է· Ամերիկա կը դանուի· հոն է ուր իր նուագները կը հնչեն: Ներկայ է Հայաստեան մէջ, հոն է ուր արուեստը կը սիրէ համամարել երգասէր հոգիները: Իր գիմաց շարուած են կիլիկիա երգչախումբին անդամները, որոնք սեւեռած կը նային եւ Գուրգէն ժպտուն է· անթարշամելի ժպիտ ունի, մխայն ժպիտ ոչ բարձրաղաղակ խնդուք, չողի պէս որ կուգայ եւ կը վայլի: Իր ձեռքին մէջ ճկուն ճպռտը կայ, նշան կուտայ եւ նշանը թռիչք կ'առնէ, կը տարածուի, կը սաւառնի ժամանակներուն եւ մեր հոգիներուն վրայ:

Նախախնամութիւնն իրեն չատ քիչ ժամանակ տրամադրեց մարդկութեան հետ խօսելու համար, անոր սիրտը բանալու· ականջն ի վար փոփոխելու Գանձեր ունիմ, ես հարուստ եմ· քեզի համար են այս գանձերն իմ սրտիս մերձաւոր· իմ բարի ըզբայի· Հայ ես մէկ անձ ենք, օտար ես եղբայր ենք: Երգերը որ յօրինեցի բարի եւ սուրբ են, սրտերու սպեղանի են, այսպէս կը խորհէր եւ այսպէս կ'ապրէր հոգեցած երգի քաղցրութեան մէջ:

Ամէն երգահան կամ բանաստեղծ մարդկութիւնը մխիթարելու համար կը ծնի· իր արուեստը հաւատք է· աղօթք է· խմաստասիրութիւն է հոգիներն առաջ – նորդելու համար: Երաժշտութեամբ հա – բուստ ցեղի մը դաւանն էր, կը բաւէր պեղել հայ սիրտը Գողթնի երգերու հեռաւոր արձագանգը լսելու համար· կը բաւէր Նարեկացին կարդալ մենութեան մէջ, համայիչ ձայն մը լսելու երգի, ղպացումի, խոհումի վերածելու համար մեր զարաւոր աներեւոյթ երաժշտութիւնը:

Իտալական զպրոցներուն մէջ իր երաժշտական արուեստը զարգացած էր, անմեղանչելի էր: Տարօրէն դիւրութիւն ունէր իր բարդ ղպացումները խաչերով թարգմանելու համար:

Մեծ էր իր սիրտը եւ քիչ էին ժամանակները· Հպիւ 1930ին ուսումներն աւարտած պատրաստ էր վենեհիկէն Փարիզ մեկնիլ Սամուէլ Մուրատեան վար – ժարանին մէջ իբր երգի դասատու եւ խանդավառ երէց եղբայր սաներուն, հայ երգերով հայրենիքի սէրը վառելու անոնց սրտերուն մէջ:

Մթնոլորտը սիրելի եւ մտերիմ էր· իր մէկ տունէն միւսը կը փոխադրուէր· հոն կար իսկական մեկենաս Գեր– Սրապիոն Ուզունճեանն ուսումնասէր· կար Հ· Սահակ Տէր–Մովսէսեանը, Տարօնի ազ – դանուէր զաւակն ու Փարիզի հռետորը: Զինքը սիրով շրջապատեցին· օտար մը չէր. Աշխարհական Մխիթարեան մըն էր· այսպէս կը սիրէր կոչուիլ եւ այսպէս ալ ապրեցաւ: Ս· Ղազար իրեն տուած էր հոգեկան թռիչք· Ալիշան նուագներու բամբիռը, Փարիզ պէտք էր ամեցնել, զարգացնել եւ միջազգայնացնել:

Նա չուտով սիրապետեց հայկական Փարիզին, իր Հէյեաքն ու Արեւելեան գիշերները· իր հոյակապ Աւարայրի պատերազմը, վարդավառն ու մեներգները, կարծես թէ այդ հսկայ քաղաքին վրայ ոսկեղէն ծիածաններ եղան· եւ եղաւ ժամանակ մը եւ դեռ այսօր ալ Գուրգէն Ալէմշահ Փարիզի երաժշտական քաղաքային է հայկական չքանչանով, առանց Լեժիոն տ'Օնէօրի:

Բախտ չունեցաւ Հայաստանը տեսնելու· այդ ժամանակներն հատա պեղերով մէկը պահակ էր մեր հայրենի սահմաններուն վրայ· հոն մահն ու աքսորը պահակ կեցած էին: Բայց Հայաստան ինքն եկաւ իր սրտին մէջ, քաղցր քրոջ նման եկաւ· սրտով եկաւ, եկաւ իր փառքե – րով, իր պատմութեամբ, հայրենի սէրն ու հոգին երգ եղան իր մէջը: Ազգային տպորութիւնները, աւանդութիւնները, ուխտական օրերն ու պարերը թափօր կազմեցին իր վառ երեւակայութեան մէջ: Ամէն ինչ դեղեցկացաւ, մատաղն ու վճաճակի խաղերը կարծես նոր մուսայի հանդիսեցան: Արցունքն իսկ նուիրական դարձաւ· լայ եւ ողբ չերգեց, այլ հեղութիւն, աղօթք, վանք, եւ խաչքար երգեց: Երգեց սէրը որ զուտ հայկական էր· մաքուր էր, ինչպէս բուրաստանի սպիտակ շուշան մը:

Ինչ ցնծութեամբ պիտի լեցուէր իր հոգին եթէ սրատես աչքերով Ապարատը տեսնէր· եթէ հմայքով շրջապատուած շրջէր Երեւանի վարդապոյն փողոցները, լսէր նազելի հայ օրիորդներուն կաթիլ կաթիլ քրքիջները, որոնք իրեն համար երգ պիտի թուէին: Ամէն դուռ ու պատուհան պիտի տեսնէին դեղնորակ երիտասարդ մը, մկկը որ ժպտով կը խօսէր, եւ ժպիտն երգի կը փոխուէր: Ինքն ալ Ալիշանի պէս պատմութեան աչքերով տեսաւ անմահացած հայրենիք մը տեւականներուն տակ· արեւացած հայրենիք մը երկինքէն ոչ հեռու: Իր կարօտն ամէն Հայու ղպացումն էր· պլպլուկի երգն էր — Ով դու քարեկամ այրած սրտերու:

Բայց ինչո՞ւ ժամանակն այսքան ժլատ եղաւ այս տաղանդաւոր հոգիին հան – դէպ· երիտասարդ էր· կեանքին կէսն հազիւ հասած էր· անմահութեան լեռը բարձրացող ճանապարհորդ էր· 40 տարեկան էր· իր հոգին լեցուն էր հասունացած դաղափարներով· ժամանակն էր որ մանդաղով հունձք քաղէր, ոսկի ցօրենը կրակ առնէր մեր երկինքին մէջ:

Ինչ որ հեղինակած էր դեռ զեկիւռի սոյլեր էին· արտոյտ երգեր էին: Պատրաստ էր հազար բամբիռներ միասին հնչեցնել: Ամերիկայէն ղրած էր թէ պիէս վերազատնար, առաղաստներ լի նաւերու նման, սիրտը լեցուն նոր երգերով· ղրած էր ժբաղտ մահէն քանի մը օր առաջ: Բայց ինչո՞ւ այսքան չուտ բաժնուէր կեանքէն: Երաժշտական տաղանդ ունէր, խոր ներշնչում, կարող էր աչքարհս բանող թեւեր տալ իր երեւակայութեան, եւ մեր վերեւին, Ռոսսինին, կամ Տօնիձէթթի դառնալ: Ա· Ապարատեանի տաղին քով ուրիշ փայլուն տաղ մը պիտի ըլլար:

Դարձաւ Ամերիկայէն, ալիքներու թեւերուն վրայով· դարձաւ դպաղ մը մէջը Գուրգէնը·դարձեալ ժպտում էր, դարձեալ մեր Մխիթարեան ընտանիքին անդամ: Հիմա Ս· Ղազարի դերեզմանատան մէջն է: Անարատ սպիտակ մարմար մը փակած է անդենականի դուռը, որքան պիտի փափաքէինք դոչել — Բացուէ Սեզամ: — Բայց մարմարին վրայ քանի մը խաղեր կան· տող մը երգ կայ որ մեզ ուրիշ աչխարհ կը տանի· Ապարայրի հոդին անմահացնող տող մըն է, — Հապասարեսցէ մահիս մեր ընդ մահու արդարոց: Այդ նուագին մէջ պարուրուած, երջանիկ է Գուրգէն· Նա կ'ուղէ հոն մնալ· Հայութեան տաճարին մէջ· իր նահատակուած ազգին հետ: Մարմարէ չերմին ունի նաեւ իր եղերգը, որ հանդիպում է Գուրգէնին հետ կեանքի եւ մահուան սահմանին վրայ···:

Այնտեղ հեռուն չորս նոճիներ թեւ թեւի
Արտասուելու սիրտ չունին·
Երիտասարդ մ'հոն առանձին կը հանգչի,
Աչքերը բաց տակաւին:
Անոր տրտին երգի շրնորհ մուսաներն
Արեւելեան երազներ·
Բայց սէր ու երգ առանց լարի մընացին,
Կը բաբախէ սիրտը դեռ:
Որքան տեսիչներ շիրմին առջեւ կանգ առին·
Ցոյսը մընաց անբարբառ
Ո՛հ, Տէր, ինչո՞ւ, կը հարցընեմ
վերըստին,
Սոխակն իյնայ նետահար:

Ո՛հ, մի թողներ որ շուտ անցնին
գարուններ
Թող ամէն սիրտ բողբոջի·
Ո՛րքան հոգին դաշնակութեամբ
կը լեցուէր,
Երբ կը նայէր երկինքի:

Ու Աւարայրէ Աւարայր·
Արդարներու սէրն երգեց·
Ո՛հ, կը յիշեմ, աչքերուն մէջ արեւ կար,
Կար հայրենի սէրն անեղծ:
Արդ կը հանգչի մեծ յոյսերէն անբաժան,
Մեծ հաւատքի խաչին տակ·
Այստեղ ընտրեց Հոգիներու հանգրուան,
Մրխիթարի գերդ գաւակ:

(Հոգիներու հանգրուան)

Հ· ՎԱՀԱՆ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ԳՈՒՐԳԷՆ ԱԼԷՄՇԱՀԻ
ՄԱՀՈՒԱՆ 25ԱՄԵԱԿԻՆ ԱՌԹԻԻ

ԻՐ ԵՐԳԸ

—0—

Քանի մը տարի առաջ, երբ Մերձաւոր Արեւելք էի, երեկոյ մը ձայնափիւռ բացի մեր երկրէն խաղրիկներ լսելու համար: Երեւանն էր խօսում: Եւ քիչ հաքը լսուեցաւ դեղեցիկ սոփրանօ ձայն մը որ ղպացուն շեշտով կ'երգէր Գուրգէն Ալէմշահի «Իմ երգը»:

Լաւ կը յիշեմ ոչ միայն այդ եղանակը, այլեւ այդ օրը··· Մայիս 22, Գուրգէնի ծննդեան տարեդարձն էր:

Իր տարեդարձը քանի՛ անդամներ եկեր ու անցեր է, եւ չեմ ուղղած իրեն խօսք մը կամ դիր մը ընելու համար տաղտկալի մաղձանքները··· առողջութիւն, երջանկութիւն, յաջողութիւն, երկար կեանք:

Երկար կեա՞նք: Հազիւ 40 տարու էր երբ 25 տարի առաջ կիսատարտ մնայ իր երգը:

Բայց տարիներու թանձր լռութեան մէջէն՝ դա՛դաճալ կը լսուի իր երգը: Կը դիտակցէր թէ ժողովուրդ'ն է որ կը բխի երաժշտութիւնը, երաժշտապէտ դայն միայն կը մշակէ: Ըմբռնած էր, իր խոկ խօսքով, որ «եթէ արուեստը հայրենիք չունի, նոյնը չէ կարելի ըսել արուեստագէտին համար, եւ հայ արուեստագէտին համար, Արարատի շուրէն անդին հայրենիք չկայ· հայ երաժիշտին համար՝ հայրենի երգէն դուրս ներշնչում չկայ»:

Եւ այս համոզումին նուիրուած, Ալէմշահ երաժշտութիւնով հաղորդած է մեզի իր երգը որ բխելով իր սրտէն, եւ անցնելով իր ոգիէն, կը խօսի մեր սրտերուն: Իր բոլոր գործերուն մէջ կը նշմարուի այս յատկանշական դիծը: Բայց մանաւորապէս երեւան կուգայ իր սրտի եւ մտքի թռիչքը իր «Աւարայր» համանուագային քերթուածին մէջ՝ ուր երաժշտութիւնով տուած է հայկական դիւցազներապութիւն մը սրուն մէջ խտացած է Աւարայրի դպաւինարական եւ հերոսական հազար հինդ հարիւրամեայ այլեւս յաւերժական խմաստը:

Սկսած էր ձեւաւորուիլ իր երգը, եւ իր ստեղծագործական եռուն ներշնչումը թռիչք սկսած էր առնել: Իր երգը դեռ

Գիշերուայ մի ժամին մէկը լռիում է կողս:
— Ձե՞ս լսէ··· քեղի եմ··· — Մեսրոպն է: Ի՞նչ կայ, — հարցնում եմ:
— Փոսփոլները կոտրիլները տարան, — պատասխանում է Մեսրոպը:
— Չեմ հասկանում, — ասում եմ ի՞նչ փոսփոլ, ի՞նչ կոտրիլ:
— Ծօ, դու հայերէն չէ՞ս բէջարէ, — բարկանում է Մեսրոպը, — քեղի կ'ըսեմ՝ փոսփոլները կոտրիլները տարան:
— Կոտրիլը ի՞նչ է, Մեսրոպ, — քունն աչքերիս մտնում եմ մտորամտութեան մէջ:
— Ծօ, ամէն օր կ'ուտես, անուն չգիտե՞ս··· կարտոֆիլ որ ըսեմ, կը հասկընա՞ս:
— Հասկացայ, — ասում եմ ես, — յետո՞յ···
— Փոսփոլները տարան···
— Փոսփոլն ո՞վ է, — հարցնում եմ ես:
— Ծօ, դու փոսփո՞լն էլ չդիտես, ինչ է· ի՞նչ Հայ ես, — յուսահատւում է Մեսրոպը:

Գիշերուայ մի ժամին մէկը լռիում է կողս:
— Ձե՞ս լսէ··· քեղի եմ··· — Մեսրոպն է: Ի՞նչ կայ, — հարցնում եմ:
— Փոսփոլները կոտրիլները տարան, — պատասխանում է Մեսրոպը:
— Չեմ հասկանում, — ասում եմ ի՞նչ փոսփոլ, ի՞նչ կոտրիլ:
— Ծօ, դու հայերէն չէ՞ս բէջարէ, — բարկանում է Մեսրոպը, — քեղի կ'ըսեմ՝ փոսփոլները կոտրիլները տարան:
— Կոտրիլը ի՞նչ է, Մեսրոպ, — քունն աչքերիս մտնում եմ մտորամտութեան մէջ:
— Ծօ, ամէն օր կ'ուտես, անուն չգիտե՞ս··· կարտոֆիլ որ ըսեմ, կը հասկընա՞ս:
— Հասկացայ, — ասում եմ ես, — յետո՞յ···
— Փոսփոլները տարան···
— Փոսփոլն ո՞վ է, — հարցնում եմ ես:
— Ծօ, դու փոսփո՞լն էլ չդիտես, ինչ է· ի՞նչ Հայ ես, — յուսահատւում է Մեսրոպը:

ԳՈՒՐԳԻՆ ՄԱՀԱՐԻ

(Շար· – 29)

Ծակած Փշալարեր

(ՎԻՊԵՐԳ)

— Այսօրուայ քո պատրաստած ճաշի անունն ի՞նչ էր, — հարցրեց նա խոհարարին չոր եւ պաշտօնական:

Եունուսը դունատուեց:

— Ես··· ես չպատրաստեցի այսօր ձեր ճաշը, քաղաքացի պետ··· ներողութիւն եմ խնդրում··· այս մարդը··· խնդրեց··· խոկ ես, յիմարի պէս···

Պետը չափեց Մեսրոպին ղլխից մինչեւ ոտը:

— Ազգանո՞ւն:

— Ուզունեան:

— Դո՞ւ պատրաստեցիր ճաշը:

— Լեզուս պլլուաւ, — պատմում էր նա յետագայում, — ոչ–այոն՝ մոռացայ···

— Ինչո՞վ պատրաստեցիր ճաշը, — չդունակեց պետն իր հարցաքննութիւնը:

— Տոպրակ բայի, զառ–զուտ ղրի ոտոլին, — ահա, — ըսի, — չեստի պուռդուխտ, մաքուր մթերք, էսիկ բիրար լ, էսիկ սեւ, էսիկ կարմիր··· էսիկ ռէհան, էսիկ լավրիկ··· չիստի, բէգապասնի··· մաքուր, անվտանգ···

— Այս մարդն ի՞նչ է անում խոհանոցում, — հարցրեց պետը կարդադրիչին:

— Ժամանակաւորապէս··· ջուր է ածացնում, — ղեւախը կորցրեց Սիզորովը:

— Դագ, դագ··· այղպէս, այղպէս, — ասաց պետը եւ դիմեց ղէպի դռները:

— Տեսա՞ր, — դրեթէ լացակումեց Եունուսը, — ի՛նչ բերեց իմ դլխին:

— Ի՞նչ անեմ, — խեղճացաւ Մեսրոպը, ես ի՛նչ մեղաւոր եմ, որ···

Նա ուղեց ասել, — ես ի՛նչ մեղաւոր եմ, որ նա իր բերնի համը չդիտէ, — ու դեռ աւելացրեց·— էշն ի՛նչ դիտէ, թէ նուշն ի՛նչ է, — բայց բարւոք համարեց լռել: Ինչո՞ւ կատաղել էր պետը, — եբեւի «թարթիր» սխալ եմ կիրառել, բիբար չատ է փախել, — մտածում է Մեսրոպը եւ իրեն յանդիմանում·— քո ի՛նչ գործն էր, օլան···

Միւս առաւօտեան վազեց Ժիդլիեավսկին:

— Ուզունեան, կնաչալնիկու, Եունուս, կնաչալնիկու, — պետի մօտ:

«Վերջացաւ, — մտածում է Մեսրոպը, — տոպրակ թալենք վզերս, էթանք դաչա»: Ի՞նչ լմանար Մեսրոպը նաչալնիկների խաւեաթը, նրանք դոռալով են հարցաքննում, դոռալով քշում էտապ, իզոլեատուր, դոռալով··· նշանակում չէֆ–խոհարար:

— Եունուսին տուին՝ լնծի պամոշնիկ, օդնական:

Այս է պատմութիւնն այն իրադարձութիւնների, որոնց ուժով Մեսրոպ Արութիւնովիչ Ուզունեանը, նոյն ինքը Դեղեա Միշան խոհանոցի բանալին «ձեռք անցուց», իսկ «Եունուսը»՝ դարձաւ նրա օդնականը: Ժիվի, դա ժիվի՛:

Կարճ ժամանակում Մեսրոպի վիզը կարճացաւ, հաստացաւ եւ նրա վրայ ծալքեր երեւացին: Նշանաւոր ուտող էր Մեսրոպը, նա ուտում էր ոչ միայն ցեղեկը, այլեւ դիչերով: Մի դիչեր խոկա– պէս խիստ կարիք զդացուեց թարգմանչի: Այդ օրը, երեկոյեան, Մեսրոպը խոհանոցից մի քանի խաչած կարտոֆիլ էր բերել, տոպրակով պահել, որ դիչերը ղարթնի եւ ուտի: Ուտող–խմող, ոչ միայն ցերեկով այլեւ դիչերով: Տոպրակը կախեց նա սիւնին, մի քիչ զանդատուեց, որ ուտող–խմող կայ, բայց սիրուչ··· — դիչեր դիչեր երգիս ազատնակները տեսայ, քեռատիկ ազատնակները, — հաղորդեց նա: — կարող է ազատուես, — երազը բացատրեցի ես· — Ազատուչ չկայ, էրզի ազատնակ՝ կնիկ ասել է, կնիկ··· Ու քնեց:

ԻՄ ԵՐԳԸ

Գանձեր ունեմ անտա՛կ, անծէ՛ր
ես հարուստ եմ, ջա՛ն ես հարուստ:
Ծով բարութիւն, շընորհիճ ու սէր
ձոխ պարգեւ եմ առել վերուստ:

Անհուն հանէը իմ գանձերի
Սիրտս է ատուտ, լէն ու ազատ՝
Ինչքան էլ որ բաշխեմ ձըրի —
Սէրն անվերջ է, բարին անհատ:

Երկիւղ չունեմ, ահ չունեմ ես
Գողից, չարից, չար փորձանքից,
Աշխարհիով մին՝ ահա էապես
Շաղ եմ տալիս իմ բարձունքից:

Ես հարուստ եմ, ես բախտաւոր
Իմ ծընընդեան պայծառ օրէն,
Էլ աշխարհ չեմ գալու հո նոր,
Իր տրւածն եմ տալիս իրեն:

ՅՈՎՀ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

ԳՈՒՐԳԷՆ ԱԼԷՄՇԱՀ

———o———

Մուրճ մը դանկիս մէջ կը զարնէ անվերջ.

— Գուրգէն Ալէմշահ, Գուրգէն Ալէմշահ, Գուրգէն Ա... ես կը չարունակեմ մտածել, որ «ան ոչ եւս է»:

Ի՜նչ ահաւոր բան է մահը:

Ի՜նչ անհանդուրժելի է մահը երիտասարդի մը, ի՜նչ անհոխարելեի է մահը տաղանդաւոր անձի մը:

Ու այս երեք «մահերը» միացած Գ. Ալէմշահի կորուստով այնպէս կը խոցեն մեր սիրտերը, որ չենք կրնար որոշել ո՞րը աղէ ամէնէն առաջ ու ամէնէն խորը:

Իր երաժշտական արժէքը ձգելով մտանողէտ բարեկամներու զնահատու – թեան, երէկ փորձենք քանի մը տող նուիրել Գուրգէնին երբեւ հայ երիտասարդ, երբեւ պարզ ընկեր եւ երբեւ անկեղծ ու ջերմ բարեկամ, իր կատարած նուաճումներուն, հոս, Ֆրանսահայ գաղութին մէջ, իր յիշատակին նուիրած կ'ըլլանք անթամամ փունջ մը զուրգուրանքի ու յարգանքի:

Գուրգէնը իր խումբին գեկավարն էր եւ այդ խումբին ամէն մէկ անդամին ընկերը, բարեկամը: Գուրգէնը կը մեղադրեն, որ խիստ չէր անոնց հետ, ներողամիտ անոնց չատ մը թերացումներուն, բայց գիտէին որ կը սիրէին գինքը բո – լորն ալ:

Անշուշտ Ալէմշահի ոչ անձին մասին — որ սեռտ կերպով կապուած է իր գործին հետ, ոչ ալ այդ գործին — որ նոյնպէս անմիջական առընչութեան մէջ է հայ երաժշտական պատմութեան հետ կարելի է այս հարեւանցի տողերով բաւական – նենալ:

Անշուշտ չատեր պիտի ըլլան խօսող անոր տաղանդին բազմազան կողմերուն մասին:

Սկեպտիկը պիտի խորհի «ի՜նչ օգուտ այդ բոլորը, քանի մը օր միայն պիտի ապրեցնեն իր յիշատակը»:

Այո՛, քանի մը օր... բայց իր «Նապերը», «Իմ երգը» եւ «Անուշիկ եար ջան»ը պիտի ապրեցնեն գինքը զալոց սերունդ – ներուն համար:

ՍՕՍԻ (*)

1947 Դեկտեմբեր

(*) ԽՄԲ.— Այս գրութիւնը՝ նաեւ ի յիշատակ Տիրուհի Միսաքեանի, որու մահուան Տրդ տարեդարձն էր ֆանի մը օր առաջ:

ԳՈՒՐԳԷՆ ԱԼԷՄՇԱՀ ԵՒ ՍԻՓԱՆ-ԿՈՄԻՏԱՍ ԵՐԳԱԽՈՒՄԲԸ

———o———

Գործն է անմահ, լաւ իմացէք
Որ խօսում է դարէ դար,
Երնէ՛կ ընդրան, որ իր գործով
Կ'ապրի անվերջ, անդադար:

Ց. ԹՈՒՄԱՆԵԱՆ

1947–1972, արդէն իսկ 25 տարի:

Ժամանակը, որ չատ մը ցաւերը կը մեղմացնէ, չի ջնջեր յիշատակը: Եւ տխուր մտածումներ կը լեցնեն հոգիս, Սեպտեմբերի այս առաւօտը, Ս. Ղազարի փոքրիկ գերեզմանատան մէջ, ուր կը հանգչէ Ալէմշահ: Պէտք է ներկայ ըլլայի Պատարագին: Պատարա՛գը: Միտքս կ'երթայ դէպի Ֆրանսա, Փարիզ եւ Նոթր–Տամ, ուր չնորհիւ Ալէմշահի նախաձեռնու – թեան, Պատարագը երգեցինք առաջին անգամ: Ի՜նչ ուրախութիւն, ու մանաւա՛նդ ի՜նչ հպարտութիւն մեզի, Հայերուս համար, երբ կոմիտասեան եղանակները կը թնդացնէինք Նոթր–Տամի կամարներուն ներքեւ, Պախէն եւ Պերլիոզէն եւոք, ոգեկոչելու համար մեր նահատակները:

Ալէմշահ իր տաղանդը, զարգացումը եւ լմացականութիւնը ի սպաս դրաւ իր հայրենիքին:

Այն օրէն երբ ստանձնեց երգչախումբին գեկավարութիւնը եւ մինչեւ իր մահը, չարատեւօրէն աշխատեցաւ անոր վարկին համար, որպէսզի զայն աւելի մօտէն ծանօթացնէ իր հայրենակիցներուն: Ու անոնք, օրէ օր, աւելի գնահատեցին երգչախումբը, որ նաեւ օտար չըրջանակներու մէջ կը տարածէր մեր մելամաղձոտ երգերը, զարերէն եկած, ու միշտ թարմ մնացած:

Այսպէս, երբ ողջ էր, պատրաստեց իր գործը, ու մեռած՝ իր գործն ու մտածումը ողջ կը մնան իր հայրենակիցներուն մօտ, վասնզի մարդուն կեանքը իմաստ եւ մտածումէ զուրկ պիտի ըլլար եթէ ան չձգէր յետագայ սերունդներուն փոխանցելու իր պիտելիքները:

Արուեստագէտի իր կեանքին սկիզբէն իսկ, Ալէմշահ կը հասկնայ թէ որոնք են այն հրամայական պարտադրանքները, զորս ունի իրեններուն հանդէպ, նախ – ղգացումն ունի թէ ինչ գօրաւոր աղղակ է երաժշտութիւնը հայկ. հոգիին համար: Կոմիտասի օրինակով, կը նուիրուի, ուրեմն, ժողովրդական երաժշտութեան: Իր երգահանդէսներուն մէկ, կը նախընտրէ մեր «լօ–լօ»ները, այնքան հարազատ մեր սրտերուն, գասական բարձր կատներէն, զորս կարելի է ամէն տեղ լսել:

Եւ նուագահանդէսները իրարու կը յաջորդեն Ֆրանսայի մէջ, որովհետեւ Ա–լէմշահ ամէն տեղ է, Կալոյի բեմին թէ քաղաքապետարանի Սալ տէ Ֆէթին մէջ: Ամէն տեղ ուր կարելի է հնչեցնել հայկ. մեղեդին, Ալէմշահ ներկա՛յ կը պատաս – խանէ:

Ինչ որ ամէնէն չատ կը սիրէինք իր մէջ, իր պարզ ու անոյշ բնաւորութիւնն էր ու մանաւանդ իր ժպիտը, որով մեզմէ իւրաքանչիւրս կը զիմաւորէր փորձերու աաեն, կարծես մեզմէ ամէն մէկուն կը սպասէր, այն տպաւորութիւնը թողելով թէ ամէն մէկուն ներկայութիւնը անհրաժեչտ էր: Մեզ աշխատացնելու իր ձեւն ունէր: Դաչնակին առջեւ անցած, ժպիտով մեզ կը զիմաւորէր, ձեռքերնիս կը սեղմէր, յետոյ խումբ–խումբ փորձել կուտար, երբեմն նոյնիսկ առանձին–ա – ռանձին, հասնելնուս պէս, զղացնել չտալու համար թէ ուշ մնացողներ կան: Երբեք անտրամադիր չէր, դիտակից իւրաքանչիւրին զոհողութեան, որովհետեւ ո–մանց համար զոհողութիւն էր փորձի գալ, իրիկունը, աշխատանքէն եւոք: Բայց մեղի համար, առիւծ նեղացուցիչ բան մը չէր, ընդհակառակն, կ'ամաչցնէինք որովհետեւ մեր հատաքայթները պատրաստակներ էին բարեկամական հանդիպումներու:

Շուարճն այրի Տիկին Շնորհիկ Փափազեան իր թոռնիկին՝ Յակոբիկի Ծննդեան առթիւ 50ական Ֆրանք կը նուիրէ Շուարճի զպրոցին եւ Կապ. Խաչի մանուհիներին։

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՍ

Կապ. Խաչի Տէսինի վարչութիւնը շնորհակալութեամբ առացած է Կարպիս Սարոյեանէ իր հօր յուշարկաւորութեան առթիւ 50 Ֆր. ի նպաստ զպրոցին։

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

ՄԱՐՍԷՅԻ ՍՐԲԱՎԱՅՐԸ

Դեկտ. 26ին, Երեքշաբթի ժամը 16·30ին *Հոմի Լեւոնեան հայ Դպրեվանքի աշակերտութեան ուխտագնացութեան առիթով Նոթր Տամ տը լա Կառտ, սրբավայրին մէջ ձայնաւոր պատարագ կը մատուցուի։ Յաւարտ պատարագի, սրբավայրի սրահին մէջ մաթըմիկ հանդիսում մը տեղի կ'ունենայ մեր ապագայիններուն հետ։*

Դեկտ. 28ին Հինգշաբթի օրը ժամը 20–22 (Salle Mazenod — Rue d'Aubagne)

Վարդէն Ա. Կաթողիկոսի եւ Կարդինալ Գրիվոր–Պետրոս Ագաճանեանի կեանքին հայոց չարժանիկարներ կը լուսարձակուին։

Այս առթիւ, Լեւոնեան վարժարանի աշակերտներէն ոմանք, հակիրճ կերպով պիտի խօսին մեր ժողովուրդին սրտին մօտ հարցերու չուրջ։

Մուտքը ազատ է բոլորին։

ՀԱՅՐԵՆԱԿՑԱԿԱՆ

Համախաբրեզդեան Միութեան Կարտանի մասնաճիւղը Խարբերդ մնացած ազգաւոր հայրենակիցներու ի նպաստ հանդանակութիւն մը բրած է իր անդամներէն եւ ոչ–անդամներէն եւ դումարը Պոլսոյ Պատրիարքարանի միջոցաւ յանձնուած է կարօտեալներուն։

Այս հանդանակութեան մասնակցած են. Ա. Զախամեան 100 Ֆր., Գ. Գալուստեան 100, Ս. Անտոնեան 100, Մ. Գալայճեանեան 100, Յ. Թորոսեան 50, Օ. Տալօեան 100, այրի Տիկ. Վարդանեան 30, այրի Տիկ. Ա.Հարոնեան 30, Մ. Ուճանեան 50, Ա. Տէմիրճեան 50, Փ. Կիւրճեան 50, Մ. Անտուբեան 50, Հ. Պօյաճեան 50, Ե. Պելոճեան 100, Ս. Յովհաննէսեան 10, Հ. Քիւրքճեան 10, Եր. Յովակիմեան 50, Կ. Գուշակլեան 5, Խ. Գինոսեան 20, Կ. Տէմիրճեան 50, այրի Տիկ. Պօյաճեան 50։

ԳՈՅԱՄԱՐՏ ՕՐԱՑՈՅՑ 1973

Հրատարակութիւն Հ. Յ. Դ. Ն. Ս.ի Մարսէյլի չրջան։ Գունաւոր կողք, 12 էջեր պատմական, ազգային ու այժմէական նիւթերով։

Գին 10 ֆրանք

Ապսպրանքներու համար դիմել իւրաքանչիւր չրջաններու մէջ Հ. Յ. Դ. Նոր Սերունդի անդամներուն կամ հետեւեալ հասցէին՝

G. HOVSEPIAN

51, Bd. des Grands Pins — 13010 Marseille — C.C.P. 254289 Marseille

Մարսէյլի չրջանին համար դիմել հետեւեալ անձերուն՝

Սէնթ Ալբուան — *Ա. Շահեան եւ Մ. Սուքիասեան*
Պուլ Օտտօ — *Հ. Սարգիսեան եւ Յ. Արզումանեան*
Մարսէյլ Բաղամ — *Ա. Քէօսէեան, Ծերիկեան զրատուն*
Սէնթ Մարկրիթ — *Վ. Մուրատեան*
Սէն Ժերոմ — *Խ. Ուլուսեան եւ Մ. Աւտոյեան*
Պօմոն — *Ղ. Տէրտէրեան եւ Յ. Տէր–Վարդանեան*
Սէն Լու, Լափոմ, Վալպարէլ — *Գր. Փիլիկեան, Մ. Նալբաչեան, Ս. Գինոսեան*
Կարտան–Էքս — *Վ. Գամպերեան եւ Ա. Տէր–Սահակեան*
Նիս — *Ս. Ալէքսանեան եւ Գ. Խոսրովեան*
Ավինեոն — *Թ. Մարճոյեան*

ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ԵՒ ԾՆՈՒՆԴԻ ՏՕՆԵՐՈՒՆ ԱՌԹԻՒ

ԱՌՆՈՒՎԻԼԻ ԵՒ ՇՐՋԱԿԱՅՔԻ ՄԻԱԿ ՀԱՅ ՆՊԱՐԱՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ՝

ՆԻԿՈՂՈՍԵԱՆ

Կը շնորհաւորէ իր յաճախորդները զոյգ տօներուն առթիւ եւ կը յիշեցնէ անգամ մը եւս թէ իր մօտ պիտի գտնէք մատչելի գիներով ամէնէն ընտիր եւ նոյն հայկ. աղանդերներն ու անուշեղէնները, եւ չոր պտուղներն որ պիտի զարդարեն ձեր սեղանները

N. NIGOGHOSSIAN

121, Ave. Henri-Barbusse — 95400 - ARNOUVILLE - LES - GONESSE

Tél. : 985-04-46

ԽՆՋՈՅՔ

ՏԷՍԻՆԻ ՄԷՋ

Վասպուրականի Հայր. Միութիւնը Ծնունդի առթիւ խնջոյք մը կազմակերպած է ճաշով, Յունուար 6ին, ժամը 20էն մինչեւ լոյս, Քաղաքապետարանի սրահին մէջ։

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ԿԱՊՈՑՑ ԽԱՉԻ Պօմոնի մասնաճիւղի վարչութիւնը ընդհ. անդամական ժողովի կը հրաւիրէ ընկերուհիները, բաժակ մը թէյի չուրջ, 13 Յունուար Շաբաթ կէսօրէ վերջ ժամը 3ին, եկեղեցւոյ կից սրահը։ Կը խնդրուի ընկերուհիներէն ճշդապահ ըլլալ։ Կարեւոր օրակարգ։

ԽՆՋՈՑՔ

Համախաբրեզդեական Միութեան Փըրանսայի չրջանի Վալանսի մասնաճիւղը կը հրաւիրէ բոլոր հայրենակիցները իր խնջոյքին այս Կիրակի 24 Դեկտ. երեկոյեան ժամը 9էն մինչեւ առաւօտ

Շքեղ ճաշ մը, բուն Խարբերդի մթնոլորտի մէջ, հայկական պարերով եւ երգերով։

Օթել Նասիոնալ, Ռութ տը Սայոն (Առտէշ)

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ Ս. ԽԱՉ ԵԿԵՂԵՑԻ

10 bis, Rue Thouin, PARIS (5e)

25 Դեկտեմբեր — *Ձայնաւոր պատարագ ժամը 10·30ին։*

IMPRIMERIE SPÉCIALE
DU JOURNAL «HARATCH»
32, RUE DE TRÉVISE — PARIS (9e)

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Հ. Բ. Ը. Միութեան Մարսէյլի Տիկնանց Օժանդակ Մարմինի տարեկան մեծ պարահանդէսը 13 Յունուար, Շաբաթ գիշերը, Օթէլ Սվլանահիի սրահին մէջ։ Հայկական չքնաղ միջավայր, ճոխ պիւֆէ եւ ընտիր նուագախումբ։

×

Մարսէյլի Հ. Բ. Ը. Միութեան եւ Ս. Սահակ – Մեսրոպ Մայր եկեղեցւոյ վարչութիւններու հովանաւորած հայերէնի դպրոցին տարեկան տօնածառը տեղի պիտի ունենայ 7 Յունուար, Կիրակի օր, կէսօրէ ետքը ժամը 4ին, Միութեանս սրահին մէջ, 7 Ռիւ Փափէր։

×

Կապոյտ Խաչի Մարսէյլ քաղաքի դպրոցական տօնածառը Կիրակի 7 Յունուար ժամը 3ին Ա.Հարոնեան ակումբը եւ մասնաւորաբար կը հրաւիրուին կապան եղած բոլոր երախաները։

×

Պոմոնի Կապոյտ Խաչի մասնաճիւղին Բարեկենդանի առթիւ կազմակերպելիք հացկերոյթը յետաձգուած է։

×

Կապ. Խաչի Սեւրանի մասնաճիւղի տօնածառը Յունուար 14ին։

×

Հայ Արիներու Միութեան տարեկան ցերեկոյթը Կիրակի Մարտ 4ին կէսօրէ վերջ ժամը 14·30ին Սալ տը լա Շիմի։

×

Հայ Կարմիր Խաչի տարեկան ցերեկոյթը – պարահանդէսը 1973 Մարտ 11։

Disque VOGUE n° 30152

Chants Romantiques Arméniens

20ème VOLUME

Հրապարակ ելաւ հայ ռոմանթիք երաժշտութեան նուիրուած նոր երգապնակ մը՝ պատրաստութեամբ

ԱՐԱ. ՊԱՐԹԵԼԵԱՆԻ

Խմբերգ – մեներգ եւ նուագախումբ Կը պարունակէ 12 հետեւեալ երգերը Աբովեան — Իմ Անուշ Տաւիղ — Մանուկն ու վարդը — Հոգիս մրմուռ — Երազ — Նաւերգ — Ես լսեցի — — Ոսկի ջութակ — Գարուն — Սարեր կ'ազաչեմ — Իրիկուն — Եարիս։

Ինչպէս նաեւ երկու եռանուագ (Թռիո) թիւ 790, երկու սրինգի, քլարինէթի եւ տաւիղի համար

Մեծածաւալ երգապնակ, գին 30 Ֆր. յաւելեալ առաքման ծախքը։

Կը դրկուի ֆոնիքրը ռամպուրսըման

Երգարանով միասին ստանալու համար դիմել հեղինակին՝

M. A. BARTEVIAN 14, RUE PETIT, PARIS 19

TÉLÉLHONE : 208-99-22

Նախկին երգապնակներն են. Կոմիտասեան Պատարագ (թիւ 451), Եկմալեան Պատարագ (442), *Գանձարան Հայ եկեղեցական երաժշտութեան* (454 եւ 547)

Chants d'Arménie et du Caucase (526) — Arménie (527 et 199) — Reflets d'Arménie (516) — Promenade en Arménie (596) — Soirée Arménienne (20162) — Arménie Légendaire (20181) — Le Caucase (182) — Oeuvres Symphoniques (20176) — Au fil des Songes (714)

ՇԱԲԱԹ
23
ԴԵԿՏԵՄԲԵՐ
SAMEDI
23 DECEMBRE
1972

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ
ՀԻՄՆԱԴԻՐ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

LE NUMÉRO 0,70 F.

HARATCH

LE SEUL QUOTIDIEN ARMÉNIEN EN EUROPE OCCIDENTALE
Directrice : ARPIK MISSAKIAN
32, RUE DE TRÉVISE PARIS 9

— Tél. : 770-86-60 —
C. C. P. Paris 15069-82
Fondé en 1928
R. C. Seine 57 A 2731

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա	Տար. 120 ֆր.	Վեցամսեայ	65 ֆր.
Արտասահման	Տար. 135 ֆր.	Հատը	0,70 ֆր.

48րդ ՏԱՐԻ — ԹԻՒ 12·597

Fondateur : SCHAVARCH MISSAKIAN

48e ANNÉE - N° 12.597

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ՏԽՐՈՒԹԻՒՆ ՄԸ ԿԱՅ

———o———

Տօնական օրեր են : Ծնունդ ու Կաղանդ, բայց մեր հոգիներուն խորը անհամման տխրութիւն մը կայ, այսօր :

Փողոցները զարդարուած են, յոյս եւ լոյս կը բերէ Մանուկը, որ անդամ մը եւս պիտի ծնի, բայց մեր սրտերը ուրախ չեն :

Քանի մը օրէն «Շնորհաւոր Նոր Տարի» պիտի ըսեն մարդիկ, «Շատ տարիներու», «Առողջութիւն ու երկար կեանք», պիտի պատասխանեն ուրիշներ, բայց մեր մտածումը կ'երթայ, այսօր, անոր՝ որ չատ տարիներ չունեցաւ, երկար կեանք չունեցաւ, եթէ նոյնիսկ երիտասարդ չէր այլեւս :

Նիկողոս Սարաֆեան, մեռաւ յանկարծ, 67 տարեկանին : Տարիք մը, երբ զրադէտը հասած է հասունութեան եւ նաեւ իմաստութեան : Կեանքի ունայնութիւնը, ուրախութիւններու պատրանքը, փիլիսոփայ դարձուցած են ան, որ չէ դիտցած դահանալ օրերու մակերեսային թովչանքէն : Ուզած է փնտռել ուրիշ բան մը, գտնել՝ ուրիշ բան մը, որ իմաստ տար անիմաստ կեանքին :

Սարաֆեան այդ մարդն էր : Այն գրագէտն էր, որ գրականութիւն ըրաւ միայն ու միայն գրականութեան համար : Այրուսաը անով չճարեց ու կրցաւ, այդ իսկ պատճառով, գրել միայն երբ պահանջն ունէր, երբ ըսելիք ունէր : Գրեց ու սրբագրեց : Երբեմն պատռեց : Յուսահատումներ ունեցաւ յաճախ : Վստահ չէր, որ լաւ բան է գրականութիւնը, բայց եւ այնպէս գրեց : Տառապեցաւ նաեւ, կարծելով որ չէ հասկցուած, չէ գնահատուած : Իրապէս կասկածամիտ, դժուար թէ հատատար որ իր արժէքը դիտցողներ կան : Ի վերջոյ յոբելեանները չեն որ տաղանդի վկայական պիտի տան մեր իրականութեան մէջ :

Յարելեանի պէտք չկայ վաւերական դրագէտին համար — Սարաֆեանի համար — որ դիտակից է իր արժէքին : Ան միայն երբէք կ'ակնկալէ արդարադատ եւ խստապահանջ դատումը իր գործին : Կարեւորը՝ նախ իր դոհ ըլլալն է իրմէ, որպէսզի անկէ ետք ներկայանայ հանրութեան : Այդ իսկ պատճառով, Սարաֆեան քիչ բան տուաւ : Որակը նախընտրեց : Դժուարահաճ ու դժդոհ, աշխատեցաւ ու աշխատեցաւ, լաւագոյնին ձգտումով :

Տարիները անցան ու փորձեց երազ մը իրագործել՝ երթալ իր վերջին տարիները ապրիլ Միջերկրականի ափին, անհամման ծովուն դիմաց «ես եմ ծով՝ կարօտով...» : Դիտել, զգալ ու գրել : Երազը մնաց անաւարտ, տարբեր ձեւ առաւ, ու իր վերջին հանդիստն է, գոր պիտի գտնէ Միջերկրականի ափին, դերեզմանատան մը անկիւնը : Անցորդը որ քարին վրայ, պիտի կարդայ՝ «Աստ հանգչի Նիկողոս Սարաֆեան», պիտի չգիտնայ թէ հոն թաղուած է հայ բանաստեղծ մը, հեռու իր ժողովուրդէն, ամփոփուած իր առանձնութեան մէջ, հոս ալ ինչպէս իր կեանքի ընթացքին :

Սարաֆեան Միջերկրականը պիտի չտեսնէ այլեւս ու փոս մըն ալ պիտի ափերնայ Հայութեամբ լեցուած :

Կաղանդ ու Ծնունդ կուգան : Ուրախութիւն չկայ մեր չուրջը : Այսօր մոայլ է ամէն ինչ, ու մեր հոգիներուն խորը՝ տխրութիւն մը կայ :

«ՅԱՌԱՋ»

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ԲՐԵԺՆԵԻ ՆՈՐ ԲԱՆԵՐ ԸՍԱԻ

———o———

ՀԱՆՐԱՔՈՒԿԻ ՊԻՏԻ ԴՐՈՒԻ ՆՈՐ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ ՄԸ

Խորհրդային Միութեան յիսնամեակին առթիւ Բրեժնեւի արտասանած ճառը նորութիւններ բերաւ որոնց չէր սպասուեր : Արդարեւ Բրեժնեւ յայտնեց թէ հանրաքուէի պիտի դրուի նոր Սահմանադրութիւն մը :— «Խորհ. Միութեան մէջ, ի'րաւ կատարեալ Ա. քարտուղարը, դարդացած ընկերվարական ընկերութիւն մը կառուցուեցաւ : Պրոլետարիատի մենաշնորհութեան պրոլետարիատի մենաշնորհութեան հոն – դրուանը դառնալու համար ամբողջ ժողովուրդին պետութիւնը : Այս է հիմնական դաղափարը :

Մնացեալ հարցերուն մասին, մասնաւոր նորութիւն մը չկար : Երբոպալի, Ջինոսեանի, Վիէթնամի մասին, տեսակէտները չեն փոխուած : Վիէթնամի առթիւ Բրեժնեւ չատ խիստ է ամերիկեան աջակարհակալութեան նկատմամբ, գլխաւորապէս երբ վերջին ռմբակոծութիւններուն կ'անդրադառնայ, կը չեշտէ թէ «ամերիկեան կառավարութիւնը չատ ծանր պատասխանատուութիւնը կը ստանձնէ այդ վայրագ արարքներուն եւ վիէթնամեան արիւնին որ կը չարունակէ հոսիլ» :

× Ցիշենք որ խորհրդային ներկայ Սահմանադրութիւնը Սթալինի գործն է, 35 տարեկան է եւ եթէ տառացի կերպով գործադրուէր, բաւական «ժողովրդավար» արդիւնքներ կրնար տալ :

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՊԵՐԼԻՆԻ մէջ երկու Գերմանիաներու Արտաքին նախարարները մէջ-երման համաձայնագիրը առորակրեցին : Այս ճեւով կը բարելաւուին եւ կը կանոնաւորուին երկու երկիրներու յարաբերութիւնները : Այս դաշնագիրը կարելիութիւն կուտայ Արեւելեան Գերմանիոյ իրականութիւն դարձնել իր վաղեմի ձգտումը՝ միջազգային – դիւանագիտական յարաբերու – թիւններ հաստատել այլ երկիրներու հետ : Դաշնակցային Գերմանիոյ քաղաքացիները հնարաւորութիւն կ'ունենան այցելելու Արեւելեան Գերմանիա : Երկու երկիրներու մէջեւ դեսպանական աստիճանով դիւանագիտական յարաբերութիւն չի հաստատուիր, այլ «մնայուն ներկայացուցիչներ» կ'ունենան :

ԱՄԵՐԻԿԵԱՆ Պ–52 օդանաւերը այս անդամ ռմբակոծեցին Հանոյի կեդրոնը՝ քանդելով կայարանը, հիւանդանոց մը, օդակայանը եւ վնասելով Քուպայի եւ Եգիպտոսի դեսպանատուներուն : Հոյֆոնի մէջ չինական նաւ մը ընկղմած է : Փեքին խստիւ բողոքեց : Բազմաթիւ Պ–52 օդանաւեր վար առնուած են :

ՍՈՒՐԻՈՅ վարչապետը՝ Ասատ Ասատման Ալէյֆաուի առողջական պատճառներով հրաժարած է : Նոր դահլիճ մը պիտի կազմուի :

1905 1972



ՊԷ՞ՏՔ Է ՈՐ ...

ՊԷ՞տք է որ մենք ըլլանք հեզ՝ որ ունենանք մահ մը հեզ,
Եւ բարեհաճ նայուածքով կրնանք մեր աչքը փակել,
Կուշտ, գոհ՝ մենք, փառերէն, վայելքներէն, թէ մենք մեզ
Ատենք, ըզգանք խեղճ, դըժբախտ եւ կամ կեանքին անընտել,
Կամ ըլլանք խենթ, մենք իյնանք կըռուէն գինով բացին պէս :

ՊԷ՞տք է որ մենք հաւատանք Տիրոջ, խաբենք մենք մեզ դեռ
Մահուան առջեւ, (մեծ վախով ես կը նայիմ միշտ անոր),
Տանք մեզի՝ մեր վատութեան սին զրահներ ու զարդեր
— Յաւերժութիւն, բարութիւն, երանութիւն, կեանք մը նոր...

Բայց մենք, ահա, Անոր հետ մեր միացման մէջ, ներքին
Ուրացումէն վերջ նոյնիսկ, գոհաբերման, սըրբացման
Մէջ իսկ կ'ըլլանք միշտ գերին մերթ մեր անձին, մերթ կեանքին՝
Երբ ամէն օր կը թաղենք բիչ բիչ՝ մեր մէջ ամէն բան...
Եւ ռազմիկին բացութիւնն է խեղճ պատրանք մը տարբեր...

Կեղծի՛ք, կեղծի՛ք... Օ՛, խաղաղ, կարեկցելու համար մեր
Բուն, պարզ մահուղ մեռնիլ, հասուն միրգի մը նըման,
Ջըվերջիչենք Տէրն ու մեզ՝ այդ վայրկեանին մահաբեր...
Ջարթընանք մեր բունէն, կամ յանկարծ իյնանք մենք ճամբան,

Իյնանք հիւանդ եւ ցաւէն ըզգայազրկ՝ եւ անբան...

Ն. ՍԱՐԱՖԵԱՆ

ԽԱՉԻԿ ՊԱՊԻԿԵԱՆԻ ՅՕԳՈՒԱԾԸ

———o———

Մոնտ Իր Դեկտ. 22ի թիւին մէկ կարեւոր մասը նուիրած է Լիբանանի : Շահեկան յօդուածներու կարգին զանազան նիւթերու մասին, հրատարակուած է նաեւ Տեղեկատուութեան նախարար՝ Խաչիկ Պապիկեանի մէկ յօդուածը :

Խաչիկ Պապիկեան կը բացատրէ տեղեկատուութեան դերը երկրի մը մէջ, ապա կ'անդրադառնայ նաեւ երկրին բազմազան դիմագիծին :

Իր եզրակացութեան մէջ, Տեղեկատուութեան նախարարը կ'ըսէ նաեւ թէ իր նախարարութեան պարագան է ազատութեան եւ արդարութեան մշտական վերահսկողն ըլլալ :

ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ ՄԸ ԿԱՅ

Ուրախութիւն մը կայ ձմեռը, երբ օրերը մութ են ու տխուր: Ուրախութեան ծնողը կան, Ծնունդն ու Կաղանդը:

Ձմեռը, երբ տերեւաթափ ծառերը խաչեցեալին պէս են պղտոտաներուն վրայ, կապարագոյն երկինքին տակ, կան ծառեր որ կը մնանեն տուներէն ներս եւ խանութներուն ցուցափեղկերուն մէջ, հրապոյրներուն վրայ եւ զարդոցներուն մէջ կը տեսնենք զանոնք: Պզտիկ ու մեծ եղեւիններ, կանաչ տակաւին: Սեղաններուն վրայ են պատուանդաններուն վրայ: Եւ կախարդական միրգեր կը տեսնենք անոնց վրայ, այլազան խաղալիկներ, ասուպեր, արծաթէ թելեր, կապոյտ ու կանաչ գունդեր, ելեկտրական լոյսեր եւ ձիւն՝ ճիւղերուն վրայ, այս բոլորը հրաշքով մը քով քովի եկած՝ կարծէք:

Այս ծառերը՝ մոգերու պէս, եւ այլ բոլոր դեղեցկութիւնները որ տրուած են զարերէ ի վեր, առասպելներն ու երգերը, յոյսի խօսքերն ու աղօթքները, վերապատկան մտածումներն ու բանաստեղծութիւնը, երաժշտութիւնը, դիտութիւնը, Ծնունդի նկարները, այն բոլորը որ, հեթանոսական եւ քրիստոնէական, աշխարհիկ եւ դերբնական, հարստութիւններն են մարդկութեան:

Ուրախութիւն մը կայ ձմեռը, չնորհիւ այս բոլորին, եւ հոգիները, որ տխրութիւններ ունին, բարձրութեան մը վրայ են այս օրերուն, դեղեցկութիւն մը կուտան աշխարհին: Եւ այն բոլորը որ սրտխրութիւն պիտի տային, կ'երեւան դեղեցիկ: Դեղեցիկ՝ նոյնիսկ հեռաւոր տխուր խրճիթները՝ ամայութեան մէջ, ձիւնին տակ: Ուրախութիւն մը կուտան անտառներէն բերուած արմատախիլ այդ ծառերը եւ քիմիական ձիւնը կամ բամպակը՝ անոնց վրայ: Եւ այն բոլորը որ ղժդհութիւն պիտի տային, զոհութիւն մը կուտան, զոնապան, նամակաբաշխ, աւետաբեր, ծխնելոյզ մաքրող, որ դուռը կը զարնեն, նուէրներ կ'ուզեն:

Կայ նուէրները տալու ուրախութիւն մը, այն մանաւանդ՝ զոր տղոց տրուած նուէրները կուտան մեծերուն: Պզտիկներ – դուն ուրախութիւնը, խորհուրդը: Ծառերն են որ կը բերեն այդ նուէրները: Եւ անհիքներուն վրայէն անցնող ծերունի մըն է որ վար կը ձգէ զանոնք՝ ծխնելոյզէն, կօշիկներուն մէջ: Կեանքը, ուրախութիւնը կեանքն ի վեր, օձախը:

Եւ ի՞նչ դեղեցկութիւն՝ այդ նուէրները՝ այսօր, խաղալիկները, այլազան եւ անսպառ, կառքեր, մեքենաներ, չոգեկառքեր, սաւառնակներ, սպուտնիքներ...

Եւ գիրքերը՝ որ կը տրուին տղոց: Անոնք՝ որոնց մէջ ներկայ են մարդկային բոլոր առաքինութիւնները, բարութիւնը, գորովը, արիութիւնը, ուղղամտութիւնը, վեհանձնութիւնը: Անոնք՝ որոնց մէջ անասունները կը խօսին եւ եղբայրութիւն է բոլոր էակներուն միջեւ, եւ միասին են իրականն ու դերբնականը:

Եւ կան նուէրները որ երկինքէն կը տրուին մեծերուն: Մանուկ մըն է զանոնք բերողը: Կը բերէ խաղաղութիւն, եղբայրութիւն, յոյս եւ ուրախութիւն: Եւ տղոց հետ, մեծերը նաեւ, այդ մանուկը ներկայացնող արձանիկներուն կը նային վերացումով եւ խորանին լոյսերուն կը նային յաճախ, աւելի կարօտ աչքերով, վասնզի չատեր խոնջ են:

Սառուցային մանուկ մը՝ աղքատ մըտուրին մէջ:

×

Ուրախութիւն մը կայ մինչ տխրութիւն է: Ճիշդ է երբ կ'ըսուի թէ վաստակ մը կայ երբ կորուստներ կան: Սառած ջուրեր, սառած, լռած, ամլացած հողեր: Բայց գարուն է չուտով, նոր կեանք, նոր արեւ: Նոր տարի՝ նոր բարիքներով: Եւ ձիւնը, ցուրտը բարիքներ են արդասաւորեր: Եւ վերացական գեղեցկութիւն է ձմեռը եւ յաւիտենական կեանքի յոյս է վերացողին մէջ:

Ձմեռը, երբ կապարի գոյն է երկինքը, ոսկի խօսքեր կան, մաղթանքներ, շնորհաւորութիւններ:

Կը մաղթեն փոփոխութիւն, վերանորոգում, երջանկութիւն:

Եւ կան սեղանները: Եւ անոնց չուրջ են մարդիկ, հաւատան կամ ոչ՝ այս գեղեցկութիւններուն եւ յոյսերուն: Ընդհանրական է ուտելու ուրախութիւնը:

×

Մեծ տխրութիւն է սակայն: Քառասային աչխարհ է: Ցեղափոխութիւններ՝ հոս ու հոն, կռիւներ, մահեր, օդանաւի արկածներ: Եւ դաժան տիլոկ է՝ ովկիանոսին մէկ ափէն միւսը: Իրար նախատող խօսքեր, պատերազմի սպառնալիքներ: Մորուք, քառասային, նիւթապաշտ, բիրտ աչխարհ է, մինչ հոյակապ պիտութիւն է:

Եւ մեր մտածումը կ'երթայ անոնց որ կ'ուտեն, կը լամեն, կ'երգեն, կը զուարճանան: Սեղաններուն կ'երթայ մեր նայուածքը, խորովածներուն եւ կարկանդակներուն: Եւ անիրաւութիւն, անձնասիրութիւն, որկրամոլութիւն կը տեսնենք ուրախութեան մէջ, այն պահուն իսկ երբ կը խորհինք թէ չատեր ցաւեր ունին, պէտք է որ մոռնան զանոնք տարին անգամ մը գոնէ: Տօն է:

Ուրախութիւնները կան որ թչուառութիւն են եւ կը թչուառացնեն հոգիները:

×

Տխրութիւն մը կայ: Զկան այլեւ երբեմնի Ծնունդները: Եւ զանոնք յիշելու համար է որ յաճախ կը ուտենք զանոնք հիմա: Եւ երբ մեր մտածումը կ'երթայ անոնց, ամայութիւն կը տեսնենք: Ամայութիւն՝ հոն ուրկէ եկած եւ անցած են կաղանդները ու Ծնունդները:

Ամայութիւն՝ երբ մանկութիւն կը յիշենք:

Եւ թչուառ կ'երեւայ ուրախութիւնը մանկութեան օրերուն: Կաղանդ էր այդ օրերուն, որովհետեւ նոր հագուստ եւ նոր կօշիկներ կային եւ խաղալիկներ: Ձոխ էր սեղանը:

Շատ աւելի թչուառ, վրդովիչ է հիմա՝ ուրախութիւնը արդի տղոց: Շատ աւելի իրապաշտութիւն, եւ հայր մը կ'ըսէր:

— Մեր պատմանները չէին ներեր, բայց չուզեցինք որ մեր տղաքը տխրին տեղացի տղոց ուրախութեան նայելով, չտարուին անոնց հետ ուտելով Ծնունդը: Ծախք ու ջանք չխնայեցինք: Այլապէս տրամադիր չէինք:

Միամտութիւն, անձնասիրութիւն, այլասերում, նիւթապաշտութիւն կը տեսնենք չատ մը ուրախութիւններու ետին, տղոց մէջ, պահանջկոտ յաճախ:

Ունայնութիւն: Պարտադիր կը տեսնենք չատ մը խանդավառութիւններ եւ ուրախութիւն տուող չատ մը զաղափարներ, երբ կեղծիքներ ու չարիքներ կը տեսնենք եւ կը տեսնենք թէ ոչ ոք բան մը հասկցած է կեանքն ի վեր: Ցուզումով, ցաւով կը յիշենք անոնք որ նուիրուած, զոհուած եւ մոռցուած են:

Եւ մեծ տխրութիւն է հոն, ուր մաքուր եւ վսեմ է ուրախութիւնը՝ մեծ հոգիներու մէջ: Աչխարհին բոլոր ուրախութիւններէն հեռանալով է որ անոնք կը հասնին երանութեան: Մինակ են:

×

Մարդիկ ունեցած են միչտ ուրախութեան ծարաւը եւ ուրախացած են յաճախ, բայց ցաւն է որ եղած է միչտ՝ սխալական: Երջանկութիւն չէ եղած աչխարհի վրայ եւ չի կրնար ըլլալ գալիք դարերուն մէջ: Մեծ գալիքներ կան անշուչտ, գալիք մոգական աչխարհ, ուղեւորութիւն՝ անսահմանին մէջ, մեծ դիտութիւն: Բայց առասպանքը միչտ: Ցաւելով է որ կ'ածի կը մեծնայ այդ դիտութիւնը եւ ցաւեր տալով: Եւ որքան ալ ածի եւ մեծնայ, պիտի մնայ պզտիկ՝ անսպառ անսահմանին առջեւ: Եւ միչտ բախտաւորը՝ հոգիներուն միջեւ:

Մարդիկ ունեցած են միչտ՝ երջանկութեան ծարաւը, բայց դիտութեան ծարաւը աւելի մեծ է կարծէք: Կարելի չէ յուսալ այդ երջանկութիւնը երբ մարդը, տառապելով հանդերձ, բարձրանալ կ'ուզէ եւ ուրախութիւն մը կ'առնէ իր այդ բարձրացումէն:

Մեծ տխրութիւն է, երբ կը խորհինք, բայց մեծ ուրախութիւն է նաեւ: Եւ տախտակած ենք փառաւորելու այդ դիտութիւնը, որովհետեւ մեծութեան մը կը ձգտի ան՝ եւ կը մեծցնէ մարդը:

Եւ կամայ ակամայ, տախտակած ենք նաեւ փառաւորելու տառապանքը՝ յանուն այդ մեծութեան որ չի կրնար ըլլալ առանց անոր: Ոչ վերելք, ոչ ալ կեր – տում, ոչ դիտութիւն եւ ոչ ալ ոգեկան մեծութիւն՝ առանց անոր:

Եւ թէեւ երջանկութիւն չկայ, մարդիկ կրնան ուրախանալ միչտ խորաններուն առջեւ եւ դիտութեան հրաչալիքներուն առջեւ: Ուրախանալ՝ իրենց տուրքը բերելով այդ մեծ կերտումին, մարդկային գալիք մեծութեան՝ որ տառապածային է: Ծառայել:

×

Այսպէս, ուրախութիւն է դարձեալ, մինչ կաղանդներն ու Ծնունդները կուգան տխրութեամբ: Կը մաղթենք որ անպակաս ըլլան ծոները: Ծառերը մանեն տուներէն ներս եւ ըլլան վառեալ փառաւորեալ մոմենիներու պէս: Եւ կը մաղթենք որ զանգակները հնչեն միչտ: Եւ մարդիկ բարութեամբ նային պահ մը՝ իրարու, իրար չնորհաւորեն, նուէրներ տան իրարու: Ըլլան հոգի:

Ցաւիտենական է ուրախութեան պահանջը: Մարդիկ ունենան զայն պահ մը, կան պտուղն է ներքին այդ ահաւոր պայքարին:

Սարաֆեան իրաւ բանաստեղծը մեզի կ'ընծայաբերէ այդ եզակի պտուղը: Հայ քերթողութեան ամէնէն աչքառու յազթանակներէն մէկը, չահուած օտար հողի վրայ, ամէնէն գժուարին պայմաններու տակ:

Աւտով իսկ աւելի արժէքաւոր:

Կ. ՓՕԼՍՏԵԱՆ

...եւ ԱՅՍՕՐ

Ն. Սարաֆեանն է, ըստ իս, որ կրցած է և՛ գրական թեքնիքի և՛ ամբողջ խառնուածքի մը տարբերը առնել իր միջավայրէն: Զինք անձնապէս ճանչցողները դիտեն, որ Սարաֆեան էնթելլէ մարդուն ճի՛չտ հակառակն է իրր հոգեբանական անհատ. բայց, գրական դեմքի վրայ, հակայ համամարդում մը կրցած է իրագործել՝ քիչ մը Վալերիով բնորոչուղ, քիչ մը՝ Մալարմէով, նաեւ Ափոլինէրով: Այս անուններու նչումը բան մը ըսել չուզեր. հիմնականը այն է, որ Սարաֆեան, գրական արժէքներու եւ գրական մթնոլորտի տեսակէտէն, ամէնէն աւելի խորունկ համամարդութիւնը իրագործողը եղած է հաւանաբար: Էնթելլեկտուալ մը իրագործած է գրական մթնոլորտի, գրական արժէքներու, քաղաքակրթական ընդհանուր արժէքներու, նաեւ ընդհանուր էնթակառոյցներու եւ գրականութեան մէջ:

Ց. ՔԻՒՐՔՃԵԱՆ

×

Սարաֆեան չատ նման է Շահնուրին, բազմաթիւ մանրամասնութիւններով: Օրինակ, անոր պէս կուտայ արեւմտահայ մարդուն եւ փարիզահայ մարդուն հակադրութիւնը, կամ Փարիզ հաստատուած Հայուն ներքին պատակաւոր: Շահնուրի «Դերձակ մը, իր երկու հիւրերը երբ գալիք դարերը ըլլան ծանր՝ անոտհմանին ծարաւով:

Ցաւիտենական է մարդկային ըլլալու պահանջը եւ Կաղանդներն ու Ծնունդները դան, յիչեցնեն գայն միչտ՝ ինչպէս ըլած են գարերն ի վեր՝ որ եղած են գաժան:

Եւ ըլլայ մարդկութիւն՝ գրկուածնե – րուն, հիւանդներուն, անիրաւուածներուն եւ տառապողներուն հանդէպ:

Եւ կը մաղթենք որ ծառերուն եւ խրանիներուն լոյսերը մնան մանկութեան յիչատակներուն վրայ գերբնական չնորհի պէս:

Կը մաղթենք որ տղաքը ունենան միչտ արիութեան, բարութեան եւ պայքարի կարօտները եւ պահեն միչտ՝ երազը բարի, գեղեցիկ աչխարհին, ուր աւելի իրական է, քանզի անոր է որ կը ձգտին միչտ՝ մարդիկ: Ցաւիտենական է բարութեան ծարաւը:

Եւ պիտի ուզէինք որ սրտաբուխ նուէրներու պէս ըլլային մեր այս մաղթանքները: Այդպէս ընդունուէին:

×

Ուրախութիւն մը կայ երբ կաղանդն ու Ծնունդը կուգան եւ խաչեցեալին պէս են տերեւաթափ ու թաց ծառերը պղտոտաներուն վրայ, կապարագոյն երկինքին տակ: Եւ չատ աւելի չքեղ ու գանկալի են կաղանդներն ու Ծնունդները հիմա՝ երբ խառով է աչխարհը:

Ն. ՍԱՐԱՖԵԱՆ

1–1–1961

ՍԱՐԱՖԵԱՆԻ ՄԱՍԻՆ

ԽՄԲ.— Ստորեւ փունջ մը կարծիքներ Սարաֆեանի գրականութեան մասին, ուր կը պակսին անշուշտ շատ մը վաւերական այլ գրիչներ: Մեր յարգանքի այս առաջին արտայայտութեան մէջ, ժամանակը թոյլ չէր տար, որ աւելի լրիւ ըլլար մեր ընտրութիւնը:

ԵՐԷԿ...

Ն. Սարաֆեան ընտրած է բանաստեղծութեան ամէնէն գժուար ձեւը՝ վիպազականը, եւ կիրարկած գայն յաղողութեամբ, ինչպէս նաեւ միւս ձեւերը: Նախ ընտրած է այնպիսի նիւթեր, որոնք իրենց վեհութեամբը ու խորքովը այդ ձեւին կուտան արծուային թռիչք մը: Գիտակից է ան թէ արուեստը լեզու մըն է նաեւ ձեւերու: Հաճելի է գինք մտիկ ընել այդ ձեւով:

Զ. ԳԱԶԱԶԵԱՆ

×

Ն. Սարաֆեանի արուեստը նորութիւն մըն է, հոծ, ուժեղ պատկերներով եւ ազատ ձեւով արտայայտութեան:

Հ. ՄԵՍՐՈՊ ՃԱՆԱՇԵԱՆ

×

Տանտամեակներէ ի վեր ան ինքզինք կը վերլուծէ, ինքզինք կը պեղէ:

Եւ ան, այդպէս, ինքն իրմէ միշտ դըժգոհ, բարդոյթներէ տառապող, չէյքսփիրեան մոռայլ հերոսի մը կը նմանի, բայց որ կը յառաջանայ անդողդողդ, գլուխը բարձր բռնած: Մոռայլ հերոսի մը, որ գիտէ թէ ո՛ւր կ'երթայ ի՛նչ կը փնտռէ, ի՛նչ կ'ուզէ:

Ստեղծագործական տենդը, իր ներքին սատանան, «ասն ակմօն ու լա քրէատիոն» կը չարչարէ գինք դիչեր ցերեկ, կը կրծէ սիրտը, կ'արիւնէ ուղեղը, թոյլ չտալով որ ան ապրի խաղաղ, ըլլայ ուրախ, երջանիկ, ուրիչ մարդոց նման:

Ստեղծագործական խէժալ հոգեվիճակ մը, պիտի ըսուի, բացառիկ խառնուածք մը, տաղանդ եւ ըսելիք ունեցող արուեստագէտի մը համար: Ճիշդ է: Ճիշդ է ու նաեւ ահռելի: Սպառիչ՝ այդ մչտատեւ մենամարտը, իր չուրջ եւ իր մէջ թաւալող մթին, ամեհի ուժերուն դէմ:

Իրաւ է որ ճգմարիտ բանաստեղծութիւն մը միշտ ալ հաղուագիւտ իմացական պտուղն է ներքին այդ ահաւոր պայքարին:

Սարաֆեան իրաւ բանաստեղծը մեզի կ'ընծայաբերէ այդ եզակի պտուղը: Հայ քերթողութեան ամէնէն աչքառու յաղթանակներէն մէկը, չահուած օտար հողի վրայ, ամէնէն գժուարին պայմաններու տակ:

Աւտով իսկ աւելի արժէքաւորը:

Կ. ՓՕԼՍՏԵԱՆ

...եւ ԱՅՍՕՐ

Ն. Սարաֆեանն է, ըստ իս, որ կրցած է և՛ գրական թեքնիքի և՛ ամբողջ խառնուածքի մը տարբերը առնել իր միջավայրէն: Զինք անձնապէս ճանչցողները դիտեն, որ Սարաֆեան էնթելլէ մարդուն ճի՛չտ հակառակն է իրր հոգեբանական անհատ. բայց, գրական դեմքի վրայ, հակայ համամարդում մը կրցած է իրագործել՝ քիչ մը Վալերիով բնորոչուղ, քիչ մը՝ Մալարմէով, նաեւ Ափոլինէրով: Այս անուններու նչումը բան մը ըսել չուզեր. հիմնականը այն է, որ Սարաֆեան, գրական արժէքներու եւ գրական մթնոլորտի տեսակէտէն, ամէնէն աւելի խորունկ համամարդութիւնը իրագործողը եղած է հաւանաբար: Էնթելլեկտուալ մը իրագործած է գրական մթնոլորտի, գրական արժէքներու, քաղաքակրթական ընդհանուր արժէքներու, նաեւ ընդհանուր էնթակառոյցներու եւ գրականութեան մէջ:

Ց. ՔԻՒՐՔՃԵԱՆ

×

Սարաֆեան չատ նման է Շահնուրին, բազմաթիւ մանրամասնութիւններով: Օրինակ, անոր պէս կուտայ արեւմտահայ մարդուն եւ փարիզահայ մարդուն հակադրութիւնը, կամ Փարիզ հաստատուած Հայուն ներքին պատակաւոր: Շահնուրի «Դերձակ մը, իր երկու հիւրերը երբ գալիք դարերը ըլլան ծանր՝ անոտհմանին ծարաւով:

Ցաւիտենական է մարդկային ըլլալու պահանջը եւ Կաղանդներն ու Ծնունդները դան, յիչեցնեն գայն միչտ՝ ինչպէս ըլած են գարերն ի վեր՝ որ եղած են գաժան:

Եւ ըլլայ մարդկութիւն՝ գրկուածներուն, հիւանդներուն, անիրաւուածներուն եւ տառապողներուն հանդէպ:

Եւ կը մաղթենք որ ծառերուն եւ խրանիներուն լոյսերը մնան մանկութեան յիչատակներուն վրայ գերբնական չնորհի պէս:

Կը մաղթենք որ տղաքը ունենան միչտ արիութեան, բարութեան եւ պայքարի կարօտները եւ պահեն միչտ՝ երազը բարի, գեղեցիկ աչխարհին, ուր աւելի իրական է, քանզի անոր է որ կը ձգտին միչտ՝ մարդիկ: Ցաւիտենական է բարութեան ծարաւը:

Եւ պիտի ուզէինք որ սրտաբուխ նուէրներու պէս ըլլային մեր այս մաղթանքները: Այդպէս ընդունուէին:

×

Ուրախութիւն մը կայ երբ կաղանդն ու Ծնունդը կուգան եւ խաչեցեալին պէս են տերեւաթափ ու թաց ծառերը պղտոտաներուն վրայ, կապարագոյն երկինքին տակ: Եւ չատ աւելի չքեղ ու գանկալի են կաղանդներն ու Ծնունդները հիմա՝ երբ խառով է աչխարհը:

Ն. ՍԱՐԱՖԵԱՆ

1–1–1961

ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆ

Եկեր եմ ծով՝ կարօտով, եւ կապոյտ ծով է անհուն,
Նաւահանգիստ, պերճ բաղաք, ամառ, եւ գիւղ է խաղաղ·
Առաւօտուն, ճիչ, խայտաւէտ՝ ծիծառներու, աճաղաղ,
Եւ տեսիլ է հայրենի՝ հոս, լուսացման այս պահուն:

Ափ է օտար, անծանօթ, ծանօթ՝ սակայն, ծանօթ ծով,
Միջերկրական, Արեւելք՝ Արեւմուտքին մէջ, երկիր···
Եւ մանկութեան աշխարհիս նման ժայռեր են կարմիր,
Այդ աշխարհիս ջուրերուն նման ծովն է իր կոծով:

Նման փայլող բլուրներ եւ նոճիներ, լուսաբաց՝
Նարնջագոյն ու կարմիր··· Յարութիւն է անցեալի,
Մինչ ուղեւոր մեծութիւն ծովն է, հզօր, կը փայլի,
Իր յուշերով դարաւոր, կ'առաջանայ լայնաբաց:

Հոս՝ հեռացածն է ներկայ եւ գալիքն է միասին,
Հին, նոր խինդեր միասին: Այստեղ տեսածս է նման՝
Մանկութեան մէջ տեսածիս, մաքուր, խաղաղ, անսահման,
Եւ նման է ապագայ աշխարհի մեր երազին:

Ձամբուս վրայ՝ թափառման՝ երկիր այս ծովն է եւ հուն,
Եւ ուղեւոր մարդկութեան, եւ հայերու գերբնային
Ձայն է, եւ մերք հայերուս ձայնն է··· Տարուած կը նայիմ,
Տարուած եւ լի, լայնաբաց՝ լուսաբացի այս պահուն:

×

Բայց լռութեան մէջ, տես, վրդովիչ կոծն է ծովին,
Ձայնն է կտրած ծովերուս: Օ՛, ի՛նչ ժլատ ճակտի գիր,
Մեծութիւններ մարդկային ցանկալ սակայն տարագիր
Շրջիլ, ոչ մէկ մեծութեան կրնալ կապուիլ սրտովին:

Քաղցրութիւններ հեռացած կը յիշեմ, գիս կը յուզեն,
Եւ հեռացած կը զգամ գիս: Ջուրեր կանչէ, գերբնային
Ձեռքերու պէս կուտան լոյս: Խորէն ժայռեր կը նային:
Վերացման պահ է, բայց զուրկ եւ կուշտ կը զգամ գիս լոյսէն:

Եւ հեռանալ կ'ուզեմ դեռ, թէեւ տեսիլ է վսեմ,
Ու կրակներ են նորէն, մինչ ծնունդ է խաւարին
Խորէն, հուրեր՝ հրաշէկ մետաղներու··· կը վառին
Անցեալ յոյսեր: Միշտ՝ ծովին առջեւ, լոյսին կը սպասեմ···

Եւ ալիքներ են կրկին՝ այս սպասման մէջ լռին···

Ն· ՍԱՐԱՖԵԱՆ

թերը եւ զանազան դէպքեր» պատմուածքը եւ Սարաֆեանի «Մուչէն Փարիզ» բանաստեղծութիւնը մթնոլորտային խոր նմանութիւն մը ունէին: Երկուքին մէջ ալ կը զանենք Փարիզի նոր կեանքին յարմարիլ փորձող, բայց հին միջավայրէն ու ապրումներէն բոլորովին չանջատուած մարդերու ապրնակը: Սփիւռքային կա – ցութիւն մըն է արուածը, այսինքն նոր կեանքէն բխող իրականութիւն մը: Եւ նոր թեքնիքով: Սարաֆեանի մտահակցութիւնը իր չքնաղ գոյութենական կացու – թեան՝ ես իր արուեստին մէջ կը զտնեմ մտատանգ: Պատկերներու առատութիւն մը եւ յանդգնութիւն մը ունի, որ միայն պերճրապաշտներու պատկերային «խրախճանք»էն եաք կարելի է երեւակայել: Կը մտածեմ տակաւին Սարաֆեանի ձայնային կարգ մը պատկերներուն մասին, օրինակ «Արեւ–անձրեւ» բանաստեղծութեան մէջ, որոնք կարծես ուղղակի կապ ունին Ափոլինէրի պատկերային աշխարհին հետ («Լա չանսոն ափ մալէմէ»):

Գ.Ր. ՇԱՀԻՆԵԱՆ

×

Սարաֆեանի «Միջերկրական»ը ծրագրուած, մտածուած երկ մըն է, ըրուած տարիներու երկայնքին, բայց սեւեռուած իրբեւ ամբողջութիւն: Հաղուագիւտ են Սփիւռքի մէջ հրատարակուած գիրքերը որոնք ո՛չ միայն մտածել տան, այլ նաեւ հանին այս լռութենէն: Կրնայինք թուել գրքին զտնագան արժանիքները: «Մտածումի եւ պատկերի» հաւասարակշռութիւն, յուզում, ջերմութիւն, չունչ, եւայլն: Կ'ուզէի չեշտը դնել յատկանշական երեւոյթի մը վրայ: Սարաֆեան քերթող մըն է, որուն համար բանաստեղծութիւնը գրական սեռ մը չէ, այսինքն ընդունուած կանոններու ներյայտ ամբողջութիւն մը, կիրարկելի ամէն տեղ: Բանաստեղծութիւնը ապրելու եղանակ մըն է, եւ իրրեւ այդ հարց մը՝ որուն մասին կ'արտայայտուի ան իր քերթուածներուն մէջ: Այս ալ նորութիւն մըն է մեր մէջ: Թէ ի՞նչ է բանաստեղծութիւնը կարեւոր չէ հոս, էականը Սարաֆեանի ըմբռնումն է բխող քերթողութիւնն է:

Գ. ՊԸԼՏԵԱՆ

×

Ն. Սարաֆեան, անկասկած, սփիւռքեան մեր գրականութեան հաղուագիւտ ու բացառիկ քերթողներէն մէկն եղաւ, որ արտակարգ զգայնութեամբ մը ապրեցաւ խռովահոգ ժամանակաշրջաններու Մակընթացութիւններն ու տեղատուութիւնները: Բազմաչնորհ նկարիչի մը նման՝ տպաւորապաշտ եւ տեսլապաշտ միաժամանակ, ան 1928ին ցայսօր, իր միջավայրէն եւ շրջապատէն քաղեց գրական իւրայատուկ թեքնիքի եւ ամբողջ խառնուածքի մը կենսանորոգ տարրերը՝ զանոնք համապատկան ճամբով եւ բիւրեղ նկարագրով «հրամցնելու» համար արուեստի քուրմին:

Բանաստեղծին բազմալար դիւրը մի՛շտ ինքնատպութեան մը փնտռտուքը կատարեց՝ խոկալով միաժամանակ ժամանակաշրջանը յուզող եւ զայն չարժման պատուտակին վրայ պահող իմացական եւ հոգեկան երեւոյթներուն վրայ: Որովհետեւ նոր՝ բայց օրուան մարդը մնայ ան, ամէն բանէ առաջ: Որովհետեւ ըմբռնեց, թէ քիչ անդամներ միայն կեանքի, իրականութեան բնազդը կը փրկէ քերթողը, ա՛յն որ կեանքը չճաչակած ու չապրած՝ գմայլելի՛ կերպով կեանքը կ'երգէ, անոր առթած հրապոյրներու կամ դառնութիւններու յորձանուտին մէջ կը լողայ:

Շրջանի եւ միջավայրի մը մէջ, ուր դեռ տիրական կը մնար — եւ, անշուշտ, չառերու մօտ դեռ այսօր ալ — աւանդական «նիւթ»երը ծանծաղուտ ծաւալով, դանդաղկոտ կրկնութիւններով եւ յաճախ ալ նաեւ աչք կապող գոյներով ներկայացնելու տրամադրութիւնը, Սարաֆեան Սփիւռքին կը բերէր Արեւելքէն Արեւմուտք նետուած ու հոն կայք հաստատած մարդուն տպնապները: Ճըշդենք այնուամենայնիւ, որ բանաստեղծին տպնապները չունին «դասական» նկարագիրը: Աւսլ ըսել կ'ուզենք, թէ ան հրապարակ կը դնէր եւ աստիճանական կարգով կը զարգացնէր այն «հակադրութիւնը», որ առեղծուած էր նոր իրականութեան մը՝ սփիւռքի իրականութեան ակներեւ ներկայութեամբ հայ մարդուն ոգիին տակ եւ արտին մէջ:

Ժ. ՄԻՐԻՃԵԱՆ

×

... Երկու երկեր, որոնց միջեւ կայ անվերջ երթ եւ դարձ, վարանում: Ծովուն երկու կողմերը նոյնքան հարազատ են այս պարագային, կամ աւելի ճիշդ՝ նոյնքան օտար· «եւ ըլլամ խորթ իրրեւ Հայ, խորթ աշխարհին նոյն առեն»: Հողի եւ աշխարհի այս համահաւասարութիւնը արդէն իսկ անըմբռնելի է անոնց համար, որոնք կ'ուզեն անպայման ընտրութիւն մը, եւ անմիջապէս Սարաֆեանի դործը կը զատորոշէ ընթացիկ հայրենաբաղձութիւն երգող — կեղծող — բանաստեղծութենէն եւ դաղափարախօսութենէն: Բայց նոյն առեն երկուութեան մասին խօսիլը կը նշանակէ որ Սարաֆեան, ինքն ալ, կ'ընդունի երկու իրականութիւններու անպրդուելի, անվոխարինելի բնոյթը, մէկ անդամ ընդմիշտ սահմանուած: Եւ երեւութապէս կ'ընդունի այդ բնոյթը· Արեւելք–Արեւմուտք, հայրենիք–աշխարհ վերջնական իրակա – նութիւններ կը թուին ըլլալ, որոնց միջեւ քերթողը բաժնուած է:

ՄԱՐՔ ՆՇԱՆԵԱՆ

«ՅԱՌԱՋ»Ի ԹԵՐԹՕՆԸ (67

ՀԱՑԱԳՈՐԾ ԿԻՆԸ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ՀՐՁԻԳԸ

Ժ·

Ու պաշտօնեան սալոն գնաց, ուր նախկին գործապետ ժաք կը պրպտէր անդրլիական քերականութիւնը եւ բառարանը, որովհետեւ կ'ուզէր որ քիչ առենէն կարենար իր միտքը դէշ ազկ բացատրել: Պաշտօնեան մօտեցաւ անոր ու ըսաւ·

— Ինդրեմ, ներեցէք լինճի: Դուք էք յարդելի Բօլ Հարման:

Ժաք կարօ դլուխը վեր առաւ խկոյն ու ապշահառն եւ մտահոդ հետաքրքրութեամբ մը·

— Այո՛, ես եմ: Ի՞նչ կ'ուզէք:

— Երկրորդ կարգի ուղեւոր մը կը խնդրէ ձեզի հետ տեսակցիլ յատաջակոչման բարձրաւանդակին վրայ:

Նախկին գործապետին զարմանքը կ'աւելնար:

— Բայց չոգենաւին մէջ մարդ չեմ ճանչնար:

— Այդ ուղեւորը չատ լաւ կը ճանչնայ ձեզ:

— Անունը ի՞նչ է:

— Օվիա Սօլիվօ:

Փօլ Հարման իր յիշողութիւնը պրպտեց: Պաշտօնեան յարեց·

— Այո, Օվիա, Սոլիվօ··· մեքենավար··· Ֆրանսատպաւոակ··· Տիժօն(Ֆօթ ո՛Օռ) ծնած···: Ան կ'ըսէ թէ իր զարմիկն էք, զոր մեռած կը կարծէր:

Ժաք կարօ սարսռաց, զունատեցաւ ու յանկարծ ոտքի ելաւ, իր վրդովումը ծածկելու համար:

— Իմ զարմիկս··· իմ զարմիկս Օվիա Սօլիվօ, թոթովեց ան: Լաւ··· չնորհակալ եմ··· վեր պիտի ելլեմ հիմա:

Պաշտօնեան հեռացաւ: Նախկին գործապետը ոտքօնէն դուրս ելաւ, բայց վոխապետը նակ առնդուխին կողմը երթալու անմիջապէս, դէպի իր խցիկը խոյացաւ:

— Ի՞նչ կը նշանակէ ատ, հարցուց ժաք մտովի: Օվիա Սոլիվօ իսկապէս Փ· Հարմանի զարմի՞կն է մի՞թէ, որ ժընեւի մէջ մեռած է, մինչ ես վերահինդատացուցած եմ զայն···: Բայց, այո՛, Բօլ Հարմանի եմ զայն··· Բայց, այո՛, Բօլ Հարմանի եմ զայն··· Բայց, այո՛, Բօլ Հարմանի մայրը Սօլիվօ ընտանիքէն էր—— իմ ձեռքըս պտնուած իքնութեան թուղթը կը վկայէ այդպէս ըլլալը, եւ ես մոռցած էի զայն···:

Ժաք խօսած պահուն թղթապանակը հանած էր: Ինքնութեան թուղթը առաւ անոր մէջէն, բացաւ զայն ու հետեւեալը կարդաց·

«Բօլ Օնօրէ Հարման, որդի Սէդէր Հարմանի եւ Տէզիրէ Քլէր Սօլիվօյի···»:

— Հանդուցեալ ընկերոջս մէկ ազդականն է, յարեց ժաք: Ի՞նչընելու է հիմա: Եթէ երբեք այդ կարծեցեալ զարմիկին քով չերթամ, ան կասկածներ պիտի ունենայ, նամակներ պիտի դրէ եւ տեղեկութիւններ պիտի քաղէ, որով կորստեան պիտի մատնուիմ: Պէտք է յանդգնութիւն ցոյց տալ: Պիտի կրնամ այդ մարդուն հետ դլուխ ելլել ու ապացուցանել թէ ես Բօլ Հարմանն եմ···: Բայց մի՞թէ կարելի պիտի ըլլա՞յ ապացուցանել, եթէ երբեք ան ստուգապէս դիտէ թէ իր զարմիկը մեռած է: Չար բախտս՝ խոչընդոտ մը կը հանդիպիմ ճամբուս վրայ: Պէտք է վերյընել այդ խոչընդոտը ու խորտակել զայն:

Ժաք արբեց քրանաթաթաւ ճակատը, թղթապանակին մէջ դրաւ ինքնութեան թուղթը, զրպանին մէջ տեղաւորեց թղթապանակը, յետոյ պատրաստ՝ դիմադրաւելու այն փոթորիկին որ կրնար իր դլխուն վրայ պայթիլ, յատաջակոչմի բարձրաւանդակը հասաւ: Երբ Օվիա նըշքան պտնուած իքնութեան թուղթը կը վեր

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Տէր եւ Տիկին Մարտիրոս Աճէմեան եւ զաւակները, Տէր եւ Տիկին Խոսրով Աճէմեան եւ զաւակները, Տէր եւ Տիկ· Ամենակ Աճէմեան եւ զաւակները, Տէր եւ Տիկ· Արմէն Աճէմեան եւ աղջիկը, Տէր եւ Տիկին Ժան Տեւոնեան եւ զաւակները շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր անոնց որոնք անձամբ, զրաւոր յաւակցութիւն յայտնեցին իրենց հօր եւ մեծ–հօր՝

ՊԵՏՐՈՍ ԱՃԷՄԵԱՆԻ

մահուան առթիւ (մեռած Լիոն, Դեկտ· 16ին 77 տարեկանին: Յուղարկաւորու – թիւնը կատարուած է Դեկտ· 18ին):

×

ԿՐՃՆՈՊԼԻ·— Այրի Տիկ· Ա· Մուրատեան եւ զաւակները շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր անոնց որոնք իրենց ներ– կայութեամբ, նամակով եւ հեռագրով, մահնակից եղան իրենց ծանր վշտին, ի– րենց ամուսնոյն եւ հօր՝

ՊԵՏՐՈՍ ՄՈՒՐԱՏԵԱՆԻ

մահուան կսկծալի առթիւ:

Շնորհակալութիւն նոյնպէս բոլոր ա– նոնց որոնք փոխան ծաղկեպսակի՝ տե – ղական Կապ· Ֆաչի դպրոցին, իրենց ըրած դրամական նուէրներով յարգեցին ննջեցեալին յիշատակը:

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ԵՒԶԱՐՔՈՒԹԵԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ

13, Rue du Perche — PARIS (3e)

24 Դեկտ· ՃՐԱԳԱԼՈՅՑ — Ճայնաւոր պատարագ ժամը 18ին:

25 Դեկտ· ԾՆՈՒՆԴ Տ· Մ· Յ· Ք·Ի — պատարագ ժամը 11ին:

«ՅԱՌԱՋ»Ի ԲԱՐԳԱՒԱՃՄԱՆ ՀԱՄԱՐ

Պաղէոմիլէն Պ· Գարեգին Նորսիկեան 80 Ֆր· կը նուիրէ:

ՓՈԽԱՆ ԾԱՂԿԵՊՍԱԿԻ

Տէր եւ Տիկին Մամարեան Սոնիա Բա– պուեեանի եւ Մկրտիչ Կիւրեղեանի մահ– ուան առթիւ, փոխան ծաղկեպսակի 100 Ֆրանք կը նուիրեն «Ցառաջ»ին:

ՆՈՒԷՐ

Նիսէն Տիկին Մ· Զօհեան 30 Ֆր· կը նուիրէ «Ցառաջ»ի, Տիկին Մաննիկ Գան– ճանի ի յիշատակ:

ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ

ՄԱՐՍԷՅԼ·— Վասպ· Հայր· Միութեան կեդր· Վարչութիւնը Տէսինի եւ Վիչիի մասնաճիւղերով յաւակցութիւն կը յայտ– նէ, այրի Տիկին Վ· Հայցապօծեանին, զաւակներուն, Սապունճեան ընտանիքին եւ բոլոր պարագաներուն, իրենց ամուս– նոյն, հօր եւ պապականին, Վասպուրա – կանի Հերոսամարտի մարտիկներէն ՅՈՎՀԱՆՆԷՍ ՀԱՅՑԱԳՈՐԾԵԱՆԻ կսկծալի մահուան առթիւ:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Իսիի Հայ Մշակոյթի Տան վարչութիւնը շնորհակալութեամբ առացած է 50 Ֆր· Տէր եւ Տիկին Գէորգ Շահինեանէ իրենց սիրելի հայրենակից Միրիճան Տէրտէր– եանի մահուան առթիւ, փոխան ծաղկե – պսակի:

H. PASDERMADJIAN

Professeur à l'Université de Genève

Histoire de l'ARMÉNIE

DEPUIS LES ORIGINES JUSQU'AU TRAITE DE LAUSANNE

Troisième édition, Paris, 1971, 437 pages
Reliure pleine toile

Prix : 36 Frs
Avec les frais d'envoi : 39 Frs

LIBRAIRIE ORIENTALE H. SAMUELIAN
51, Rue Monsieur-le-Prince, Paris (6e)
C. C. P. 1278-35, Tél. : 324-88-65

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

ՄԱՐՍԷՅԼԻ ՍՐԲԱՎԱՅՐԸ

Դեկտ· 26ին, Երեքշաբթի ժամը 16·30ին *Հոմի Լեւոնեան հայ Դպրեվանքի ա– շակերտութեան ուխտագնացութեան ա– ռիթով Նոթր Տամ տը լա Կառտ, սրբա– վայրին մէջ ճայնաւոր պատարագ կը մատուցուի: Ցառաջ պատարագի, սըր– բավայրի սրահին մէջ մտերմիկ հանդի – պում մը տեղի կ'ունենայ մեր ազգային– ներուն հետ:*

Դեկտ· 28ին Հինգշաբթի օրը ժամը 20–22 (Salle Mazenod — Rue d'Aubagne)

Վազգէն Ա· կաթողիկոսի եւ Կարդինալ Գրիգոր–Պետրոս Ագաճանեանի կեանքին հայող չարժանկարներ կը լուսարձակուին:

Այս առթիւ, Լեւոնեան վարժարանի ա– շակերտներէն ոմանք, հակիրճ կերպով պիտի խօսին մեր ժողովուրդին սրտին մօտ հարցերու շուրջ:

Մուտքը ազատ է բոլորին:

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Հ· Բ· Ը· Միութեան Մարսէյլի Տիկ– նանց Օժանդակ Մարմինի տարեկան մեծ պարահանդէսը 13 Ցունուար, Շարաթ դի– շեր, Օթէլ Սվլանտիտի սրահին մէջ: Հայկական չէնչող միջավայր, ճոխ պիւ– ֆէ եւ ընտիր նուագախումբ:

×

Մարսէյլի Հ· Բ· Ը· Միութեան եւ Ս· Սահակ – Մեսրոպ Մայր եկեղեցւոյ վար– չութիւններու հովանաւորած հայերէնի դպրոցին տարեկան ոճնածառը տեղի պի– տի ունենայ 7 Ցունուար, Կիրակի օր, կէսօրէ ետքը ժամը 4ին, Միութեանս սրահին մէջ, 7 Ռիւ Փափէր:

×

Կապոյտ Ֆաչի Մարսէյլ քաղաքի դպրո– ցական ոճնածառը Կիրակի 7 Ցունուար ժամը 3ին Ա·Հարոնեան ակումբը եւ մաս– նաւորապէս կը հրաւիրուին կայան եղած բոլոր երախաները:

×

Կապ· Ֆաչի Սեւրանի մասնաճիւղի ոճ– նածառը Ցունուար 14ին:

×

Հայ Արիներու Միութեան տարեկան ցերեկոյթը Կիրակի Մարտ 4ին կէսօրէ վերջ ժամը 14·30ին Սալ տը լա Շիմի:

×

Հայ Կարմիր Ֆաչի տարեկան ցերե – կոյթ – պարահանդէսը 1973 Մարտ 11:

×

Վասպուրականի Հերոսամարտի 58րդ տարեդարձը կը ոճնուի Նախաձեռնու – թեամբ Տէսինի մասնաճիւղին, մասնակ– ցութեամբ Վիչիի միութեան եւ Հովանա– ւորութեամբ Մարսէյլի կեդր· Վարչու – թեան՝

Մայիս 6ին

DIMANCHE 7 JANVIER A 15 H.

Salle St. Dominique, 92, Rue St. Dominique, Métro Invalides

MATINÉE ARTISTIQUE DE DANSES

Organisée par le

Ballet Arménien de ÉVA ARZOUIAN

Au profit de l'Ecole des Sœurs Arméniennes d'Arnouville - les - Gonesse

ARBRE DE NOEL ET DISTRIBUTION DE FRIANDISES

Prix des places : 10 et 20 F. 5 F. pour les étudiants et les enfants

S'adresser : HERATCHIAN, 6 Rue Lamartine
MARKARIAN, 32 Rue de Trévise
ou à Mme PETROSSIAN, 32 Ave Rapp — Tél. : 551-39-09

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐԸ

ՓԱՐԻԶԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ կապ· Ֆաչի Շրջ· Վարչութեան, մասնակցութեամբ Փարիզ– եան չրջանի իր մասնաճիւղերուն, Մա– նուկներու Օրը կը ոճնուի Փարիզի մէջ
ՅՈՒՆՈՒԱՐ 28ԻՆ

×

ԼԻՈՆԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ կապոյտ Ֆաչի Լիոնի մասնաճիւղին Ցունուար 14ին:

×

ՊՕՄՈՆԻ ՄԷՋ

Կապոյտ Ֆաչի Պօմոնի մասնաճիւղին դպրոցին ոճնածառի հանդէսը 7 Ցունուար Կիրակի կէսօրէ վերջ ժամը 3ին եկեղեց– ւոյ սրահին մէջ:

Կաղանդ պապան կը ներկայանայ պէս– պէս նուէրներ բաշխելու փոքրիկներուն:

×

ԿՐՃՆՈՊԼԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ կապ· Ֆաչի մաս– նաճիւղին, մեծ պատրաստութեամբ կը ոճնուի Ցունուար 21ին Կիրակի ժամը 15·30ին:

×

ՏԷՍԻՆԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ կապ· Ֆաչի մաս– նաճիւղին, Ցունուար 14, Կիրակի կէսօրէ վերջ ժամը 15ին, Ֆաղաքապետարանի չքեղ սրահին մէջ:

Գեղարուեստական բաժին դպրոցի ա– շակերտներու կողմէ·— Երգ, արտասա – նութիւն եւ հայկ· պարեր: Նուէրներ կա– ղանդ պապային կողմէ:

ԽՆՋՈՅՔ

ՏԷՍԻՆԻ ՄԷՋ

Վասպուրականի Հայր· Միութիւնը Ծնունդի առթիւ խնջոյք մը կազմակեր– պած է ճաշով, Ցունուար 6ին, ժամը 20էն մինչեւ լոյս, Ֆաղաքապետարանի սրա – հին մէջ:

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ Ս. ԽԱՉ ԵԿԵՂԵՑԻ

10 bis, Rue Thouin, PARIS (5e)

25 Դեկտեմբեր — Ճայնաւոր պատա – րագ ժամը 10·30ին:

ՖՐԱՆՍԱՀԱՅ ԳՐՈՂՆԵՐՈՒ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ

Գրական երեկոյթը 12 Ցունուար, Ուր– բաթ ժամը 20·45ին, Մառէան Փաթաթ մէջ Փլաս տը լա Ռեփիւպլիք Ճատաիւ Օր· ԱՏՐԻՆԷ ՏԱՏՐԵԱՆԻ, 1972 թուի Հարեցի պրակեան պարգեւի յատկացման առթիւ:

Կը նախագահէ Տիկ· Էլիզ Ա.Վ.Ա.Ջեան

Կը խօսին

ԶԱՐԵՀ ՈՐԲՈՒՆԻ եւ Ա· ԱԼԻՔՍԱՆԵԱՆ

Կ'արտասանեն Տիկին Բալուեան եւ օրիորդներ Սոնա Վարդանեան, Ագապի Պալեան:

Կ'ըլլայ ներկայացում մը մէկ արար
Մուտքը ազատ է

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ՀԱՄԱԽԱՐԲԵՐԴՑԻԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

Ցրանսայի չրջանի

1973 Ի ՕՐԱՑՈՅՑԸ

Գին 3 ֆրանք

Դիմել մասնաճիւղերու վարչութեանց կամ

K. Khamarian
9, Avenue Camille Pelletan
13 - Marseille (2e)

ԽՆՋՈՅՔ

Համախարբերդցիական Միութեան Ցը– րանսայի չրջանի Վալանսի մասնաճիւղը կը հրաւիրէ բոլոր հայրենակիցները իր խնջոյքին այս Կիրակի 24 Դեկտ· երե – կոյեան ժամը 9էն մինչեւ առաւօտ

Շքեղ ճաշ մը, բուն Ֆարբերդցի մթնո– լորտի մէջ, հայկական պարերով եւ եր– գերով:

Օթէլ Նասիոնալ, Ռութ տը Սայոն (Առտէշ)

IMPRIMERIE SPÉCIALE
DU JOURNAL «HARATCH»
32, RUE DE TRÉVISE — PARIS (9e)

ԸՆԹԱՑԻԿ ԱԶԴԵՐՈՒ ՍԱԿԱԳԻՆ

ՄԷԿ ԱՆԳԱՄՈՒԱՆ ՀԱՄԱՐ

ՄԱՀԱԶԴ	70 Ֆ·	միջեւ 1/4 սիւնակ
ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ	30 Ֆ·	միջեւ 1/8 սիւնակ
ՑԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ	15 Ֆ·	» » »
ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ	30 Ֆ·	» » »
ՀԱՐՍԱՆԻՔ, ՆՇԱՆՏՈՒՔ	30 Ֆ·	» » »
ԾՆՈՒՆԴ	30 Ֆ·	» » »
«ԿԸ ՓՆՏՐՈՒԻ»	15 Ֆ·	» » »
ԾԱՒՈՒ Է	25 Ֆ·	» » »

Այս գիները մէկ անգամ հրատարակելի եւ ճշգրտուած ծաւալով ազդերու համար են, չորրորդ էջը:

Կանխիկ վճարումը պարտաւորիչ է:

Առեւտրական կամ այլ ազդերու մասնաւոր պայմաններուն համար դիմել Վարչութեան

ԿԻՐԱԿԻ
24
ԴԵԿՏԵՄԲԵՐ
DIMANCHE
24 DECEMBRE
1972

LE NUMÉRO 0,70 F.

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ
ՀԻՄՆԱԴԻՐ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

HARATCH

LE SEUL QUOTIDIEN ARMÉNIEN EN EUROPE OCCIDENTALE
Directrice : ARPIK MISSAKIAN
32, RUE DE TRÉVISE PARIS 9

— Tél. : 770-86-60 —
C. C. P. Paris 15069-82
Fondé en 1922
R. C. Seine 57 A 2731

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա	Տար. 120 ֆր.	Վեցամսեայ	65 ֆր.
Արտասահման	Տար. 135 ֆր.	Հատը	0,70 ֆր.

48ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 12.598

Fondateur : SCHAVARCH MISSAKIAN

48e ANNÉE — N° 12.598

ԲԵԹՀԵՂԷՄԻ ԱՍՏՂԸ

———o———

Աւետաբանը կը պատմէ, թէ երեք մոգեր, իմաստուններ Արեւելքէն, ճամբայ եղան գտնելու համար Փրկիչը։ Եւ հետեւեցան ուղեցոյց աստղին։ Ու երկար թափառումներէ ետք՝ գտան Աստուածորդին։

Հէքեաթ՞ թէ իրականութիւն՝ ի՛նչ փոյթ, երբ խորհուրդը կը մնայ սեւեռուն, հակառակ ժամանակներու փոխիններուն։ Թաւալուն դարերուն։

Մարդու աստուածացումը, կամ՝ չըլլադարձային ձեւով մարդ էակին մէջ աստուածայնութեան փնտռտուքը եթէ պիտի նախանձներու ձգտումը չէ եղած միշտ, այսուհանդերձ, իմաստուններու մչտական մոգութեան մեծամասնութիւնը պարպակէս քարշ կուտայ իր կեանքը՝ կէս անօթի, կէս կուշտ։

Բայց մանաւանդ տօնական այս օրերուն, հաղարաւորներ հաւկիզուած են պիչերել ապաստարաններու մէջ՝ ռումբերու տեղատարափին հետեւանքով։

Մինչ մանուկները որոշ երկնակամարներու տակ, ծիանելոյին յառած իրենց աչքերը՝ երկինքէն հանող նուէրին կը սպասեն հրճուադին, ա՛յլ ղիմաղիծով հազարաւոր մանուկներ նո՛յն պահուն՝ կ'սրբանան։

Ապաստութեան չեփորահարները փաղանդ կազմած տղանոցներին դարեր չարունակ, ամէնուր։ Իսկ այսօր հոգերուժարաններ կը պահուին՝ մարդոց ապատ խօսքը սանձահարելու համար։

Բեթհեղէմի աստղը, հետեւաբար, այսօր յուշ մըն է լոկ չատերու համար։ Ապահովաբար հէքեաթ մը։

Բայց կը հաւատանք հէքեաթին, որովհետեւ ամէն մարդու մէջ մանուկ մը կայ ծուարած անպայման։

Մաղթենք, որ այլեւս այդ մանուկը չըլլայ միայն հաւատացողը Բեթհեղէմի աստղին։

Այլ պիտակից մարդկութիւնը։

Ժ. Մ.

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՀԱՆՕՑ ՌՈՒՄԲԵՐՈՒ ՏԱԿ

———o———

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԼՈՒՐԵՐԸ՝ ԳՐԱՔՆՈՒԱԾ

Դեռ քանի մը օր առաջ երբեք այսքան մօտեցած չէր խաղաղութիւնը Վիէթնամի համար, եւ այսօր, երբեք այսքան աստիճանած չէ պատերազմը, այն աստիճան, որ առաջին անգամ ըլլալով Միացեալ Նահանգներու Պատերազմական նախարարութիւնը դրաքնութիւն հաստատած է Վիէթնամի ամերիկեան զօրքերուն եւ կօրուստներուն վրայ։

Ամէն պարագայի մէջ, Մամուլի Ազատական Գործակալութեան համաձայն, հարիւրաւոր մեռեալներ կան եւ անչուչա ամերիկեան օդուժն ալ ծանր կորուստներ ունի։ Բայց ամէնէն ծանր վիճակը կ'սպրի Հանոյի ժողովուրդը, որ քիչ ելեկտրականութիւն ունի եւ տեղ-տեղ ջուրն ալ կը պակսի։ Քաղաքին ամբողջ բնակչութիւնը չորս պիչեր է չի քնանար, մինչ ռումբերը անխնայ կը տեղան, յատկապէս վայրերու վրայ, որոնք ռազմավարական ոչ մէկ բնոյթ ունին։

Ամերիկեան ռմբակոծութեանց սպառնալիքին տակ է, որ Հիւս. Վիէթնամ տոնած է Ազատագրութիւնը Ֆրանսայէն ղէմ Հանոյի ապստամբութեան 26րդ տարեդարձը եւ ժողովրդական բանակի կազմութեան 28րդ տարեդարձը։ Ասօք առած է նաեւ Զօր. Ճիափ որ չէչտած է թէ «Վիէթնամի ժողովուրդը կը նախընտրէ մեռնիլ քան իր երկիրը կորսնցնել»։

Ամէն պարագայի մէջ, չատ պարզ է որ այս ռմբակոծութիւնները չեն որ համակրանք պիտի ստեղծեն միջազգային հանրային կարծիքին մօտ, Ամերիկացիներուն հանդէպ, ընդհակառակն։

Կարգ մը լուրերու համաձայն, Հիւս. եւ Հարաւ. Վիէթնամ համաձայնած են Ծնունդի պինպաուլի (24 ժամ) համար, բայց ցանօթ չէ Ամերիկացիներուն դիրքը։

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ մամուլը արձագանգ կը հանդիսանայ լարուած կացութեան, որ ստեղծուած է Իրաքի եւ Քուէյթի միջեւ։ Համաձայն լիբանանեան թերթերու, պաղատած զօրագունդ մը եւ օդանաւեր վտխադրած է Քուէյթի սահմանագլուխը։ Քուէյթ խորհրդարանական պատուիրակութիւն մը պիտի ղրկէ Պաղտատ, այս վերջնոյն հրաւէրով՝ խօսակցութիւններ ունենալու համար սահմանային հարցեր չուրջ։ Իրաքցի բանուորներ՝ ապահովութեան տակ, սահմանը անցած են ճամբայ չինելու պատրուակով։

ՓԱՐԻԶ առաջարկեց Արեւելեան Գերմանիոյ խօսակցութիւններու ձեռնարկել դիւանագիտական յարաբերութիւններու հաստատման համար։ Ատլանտեան Ուխտի վերջին ժողովին՝ Ֆրանսայի, Անգլիոյ, Մ. Նահանգներու եւ Գերմանիոյ Արտաքին նախարարները Արեւելեան Գերմանիան ճանչնալու ժամանակացոյցը ճըշդած էին։ Երկու Գերմանիաներու համաձայնագիրի կնքումէն եւ Պունտըսթագի կողմէ անոր վաւերացումէն ետք, որ Գերմանիոյ դաշնակիցները դիւանագիտական յարաբերութիւններ պիտի հաստատեն Արեւելեան Գերմանիոյ հետ։ Ուրիչ երկիրներ ալ կը պատրաստուին նոյն քայլը առնել։ Ատոնք են՝ Իտալիա, Յունաստան, Դանիա, Նորվեկիա եւ Արժանթին։

ԱՆԴԵԱՆ լեռներու վրայ, Ուրուկուէյ, վար ինկած օդանաւի մը բեկորները երեան եկած են եւ գտնուած են 16 հոգի, որոնք տասը չաբաթէ ի վեր քարշ կուտան իրենց կեանքը՝ սպասելով հրաչքի մը։ Օդանաւը 45 ճամբորդ ունէր եւ կը կարծուէր թէ բոլորն ալ մեռած էին։

ԵՐԵՒԱՆ ⇐⇒ ՓԱՐԻԶ
ՀԵՌԱՏԻՊ

ԵՐԵՒԱՆ (Արմէնփրէս, Դեկտ. 18–19)

ԲՆՈՒԹԻՒՆԸ ՎԵՐԱՓՈԽԵԼՈՒ ՁԳՏՈՒՄՈՎ

Հայաստանի լեռնային բնութիւնը, հակառակ իր մակերեսի անհարթութիւններուն եւ չոր կլիմային, տասնեակ պազատու ծառերու հայրենիքն է եղած։ Բուսաբաններու կարծիքով, Հայաստանէն է, որ օտար երկիրներ տարածուած են ծիրանը, ցորենը եւ բազմաթիւ այլ պըտուղներ եւ բոյսեր։ Սակայն հարիւրամեակներու ընթացքին տասնեակ արժէքաւոր մշակութիւններ անհետացած են, կամ վայրի վիճակի մէջ մնացած են անմատչելի վայրերու մէջ։ Մեկի հատած են միայն մեծ արժէք ներկայացնող այն պատուղները, որոնք իրրեւ ապրուստի միջոց օգտագործուած եւ, հետեւաբար, պահպանուած են բնակչութեան կողմէ։

Հայոց լեռնաշխարհի բնութեան նախկին տեսքը վերահաստատելու, անհետացումէն բոյսի տեսակները վերկելու եւ պանդք աւելի լաւորակ զարձնելու հարցով զբաղած են խաղողագործութեան եւ պտղաբուծութեան պետահետազօտական հիմնարկութեան մասնագէտները։

Ահա թէ ինչ կ'ըսեն այս մասին մասնագէտները։

Դարերէ ի վեր ժողովրդական ընտրութեամբ ստեղծուած պատուղներու չատ տեսակներ ժամանակի ընթացքին անհետացած են, կամ նուազելով, կորստուած զանազան անկիւնները։ Մասնագէտներուն գործն է գտնել կորստուածը, բուծել նոքերը։ Շատ բան կատարուած է այս ասպարէզին մէջ։

Բուսաբաններու ջանքերով նկատելի կերպով հարստացած են հայկական համբաւաւոր դեղձի եւ ծիրանի տեսակները։ Ամերիկեան եւ տեղական տեսակներու խաչաձեւումէն ստացուած են չատ հատկանշող, ցուրտի դիմացող մեծ եւ որակով լաւ նոր դեղձեր, որոնք կը հաստատեն Յուլիսին։

Խաչաձեւումներու ընտրեալ ստեղծուած են նաեւ ծիրանի տեսակներ, որոնք իրենց կենսաբանական յատկութիւններով կը գերազանցեն տեղական բարձրարժէք ծիրաններուը, աւելի բերքատու են եւ համեղ։ Ատոնց բերքահաւաքը կը սկսի աստիճանին 5–15 օր առաջ։

Ծանօթ է, որ Նոյեմբերեանի չրջանին մէջ մասնագէտները ստեղծած են մերձարեւադարձային պատուղներու եւ բոյսերու դօտի մը։ Նուռի, թուզի, ձիթապտուղի եւ նուշի ցրտադիմացկուն ծառերու եւ թուփերու հաստատումը այդ չրջանի մէջ՝ մասնագէտներու առաջնահերթ առաջադրութիւնն է։

Կարեւոր աշխատանք կը կատարուի խնձորի նոր տեսակներ արտադրելու համար։ Հայկական խնձորները առհասարակ աչքի կը զարնեն իրենց երկարակեցութեամբ եւ բարձր բերքատուութեամբ։ Սակայն համի տեսակէտով ուրիչ երկիրներու խնձորներէն նուազ համեղ են։ Մասնագէտները կը ստեղծել խնձորի այնպիսի տեսակներ, որոնք իրենց յատկանիշերուն կողքին, որակով հասնին եւրոպական խնձորներուն։

Այսպէս բուսաբաններու ջանքերով ապահովաբար կը կերպարանափոխուի Հայաստանի բուսական ծածկոյթը։

×

ՆՈՐ ՃԱՇԱՐԱՆ

Երեւան ունեցաւ նոր ճաշարան մը «Մովինար» անունով։ Կը գտնուի այսպէս կոչուած Երեւանեան արուեստական լիճին ափին։ Ներկայիս Հայաստանի մէջ կայ մօտաւորապէս հինգ հազար ճաշարան եւ սրճարան։

×

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԵԿՈՑԹՆԵՐ ԼԵՆԻՆԳՐԱԴԻ ՄԷՋ

Հայկական երկու երեկոյթներ տեղի ունեցան Լենինկրատի մէջ։ Քաղաքին արուեստագէտները համերգ մը տուած են, որու ընթացքին հայկական ժողովրդական երգեր, կոմիտասեան խմբերգներ եւ հայ բանաստեղծներէ քերթուածներ ներկայացուած են։ Համերգին մասնակցած է Ջութախահարուհի Անահիտ Ցիցիկեան։

Հայկական արուեստի մասին խօսեցաւ Ակադ. Բորիս Պիոտրովսկի, որ էրմիտաժի տնօրէնն է։

×

ՆՈՐ ԺԱՊԱՒԻՆ

Երեւանի մէջ ցուցադրուեցաւ նոր ժապաւէն մը՝ «Վերածնած հայրենիք»ը, որ կը պատկերացնէ Հայաստանի վերելքը արդիւնաբերութեան, դիւղատնտեսու-թեան, դիւտութեան եւ մչակոյթի մարզերէն ներս։ Զայն պատրաստած է լրատու նահապետը Վահէ Սուրեան։ Ժապաւէնը դունաւոր է։

×

ՀԱՅ ԳՐԱԳԻՏՆԵՐՈՒ ԳԻՐՔԵՐԸ ԼԻԹՈՒԱՆԻՈՅ ՄԷՋ

Լիթուանիոյ «Վագա» հրատարակչականը լոյս ընծայեց Գէորգ Աբչակեանի «Ճերմակ եւ սեւ կարապներ» վէպը, թարգմանուած Ռ. Եանսուսկայտէի կողմէ։ Ան թարգմանած է նաեւ Ա. Շիրվանզադէի, Պ. Զէյթունցեանի, Վ. Պետրոսեանի եւ ուրիչ գրողներէ վէպեր ու պատմուածքներ։

Ռ. Եանսուսկայտէ 14 տարեկանէն սկսեալ ինքնաչխատութեամբ սորված է հայերէն, այնուհետեւ չաճախած եւ աւարտած է Երեւանի համալսարանը։

Վերջին տարիներուն Լիթուաներէն լոյս է տեսած հայ հեղինակներէ թարգմանուած 25 գիրք։

×

ՀՐ. ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ ԴԱՓՆԵԿԻՐ

Պոզնան քաղաքի (Լեհաստան) միջազգային մրցումին մասնակցեցան 14 երկիրներէ ժամանած երիտասարդ չութախահարներ։ Երեւանէն Հրաչեայ Յարութիւնեան արժանացաւ դափնեկիրի կոչումին։

ԾՆՈՒՆԴԻ առթիւ խմբագրատունը փակ է երկուշաբթի օր եւ «Յառաջ» լոյս չի տեսնիր։ Մեր յաջորդ թիւը՝ Չորեքշաբթի (Դեկտ. 27)։

ԳՐՔԵՐԻ ԵՒ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԵՏ

ԿԱՊԻՏԱԼԻՍՏ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ ԴՐԱՄ ՍՏԱՆԱԼՈՒ ԵՒ ԼՐՏԵՍՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ա.

Մեր ձեռքն ընկաւ՝

Z. A. Zeman and W. Sharlau. «*The Merchant of Revolution*», *The life of Alexander Israel Helfand* (*Parvus*) 1867-1924, Oxford University Press, London, 1966.

Հրատարակուած դիրքը։

Այս երկու հեղինակները, մէկը՝ անգլիացի, միւսը՝ դերմանացի, վերոյիշեալ աշխատութիւնը կազմել են և՛ կայզերական Գերմանիայի, և՛ Անգլիայի, և՛ Ամստերդամի Ինստիտուտի հոչակաւոր արխիւից փաստաթղթեր հաւաքելով և ուսումնասիրելով։

Ո՞վ էր Պարվուսը։

Արդի սովետ ընթերցողներին ծանօթ չէ այս անունը՝ Պարվուս, մինչդեռ Պարվուսի մասին 50–60 տարի առաջ շատ է դրուել ու խօսուել և՛ ռուսական, և՛ եւրոպական ու ամերիկեան մամուլում։

1890ական թուականներին և 20րդ դարու սկզբին Պարվուսը կարեւոր դեր ունէր դերման Սոցիալ – Դեմոկրատ կուսակցութեան մէջ իբրեւ ծայրայեղ ձախ թեւի ղեկավար։ Միաժամանակ, նա աշխատակցում էր ռուս Սոցիալ – Դեմոկրատ կուսակցութեան օրգան «Իսկրա»ին (Կայծ)։

Միւնխէնում, ուր այն ժամանակ ապրում էր Պարվուսը, մտերմացաւ Լենինի, Մարտովի եւ Պոտրեսովի հետ։ Յետոյ մտերմացաւ Տրոցկու հետ եւ մեծ ազդեցութիւն ունեցաւ Տրոցկու վրայ։

1905 *թուի ռուսական առաջին յեղափոխութեան օրերին, Պարվուսը մեծ դեր է խաղում «Բանուորական Դեպուտատների Սովետ»ում, Պետերբուրգում։ Սովետի միւս ղեկավարների հետ նա ձերբակալուեց, նստեց Պետրոպաւլովսկի ամրոցում, աքսորուեց Սիբիր, սակայն ճամբին փախաւ եւ անցաւ Գերմանիա։*

Ա։ Համաշխարհային պատերազմին (1914–1918) Պարվուսը դարձաւ գերմանի կայզերական կառավարութեան գլխաւոր լրտես – գործակալը, նա *ուժեղ պրոպագանդ էր մղում եւ ֆինանսաւորում յեղափոխականներին ուրիշ երկրների, բայց մա՛նաւորապէս ռուս սոցիալիստների, յօդուտ Կենտրոնական Պետութիւնների՝ Վիլհելմեան Գերմանիայի եւ Աւստրօ – Հունգարիայի* (նա՛եւ՝ Թիւրքիայի, որ նրանց դաշնակիցն էր) եւ՝ *Ռուսաստանի անդամահատութեան։*

Պարվուսի իսկական անունն է՝ Ալեքսանդր Լազարովիչ Գելֆանդ, *ծագումով՝ Հրեայ, ծնուել է 1867 թուին Բերեզինա աւանում* (Ռուսաստան, նախկին Մինսկի նահանգում)։ *Աւարտել է Օդեսայի Գիմնազիան, ուր սկզբում յաջող է նարոդովոլից* (1) *համբին։ Ապա 19 տարիքում մեկնել էր Ցիւրիխ, որ կենտրոնն էր ռուս յեղափոխական տարագիրների։ Ցիւրիխում Պարվուսը ծանօթանում է «Աշխատանքի Ազատագրման Խումբ»ի հետ, որի ղեկավարներն էին՝ Պլեխանովը, Ակսելրոդը եւ Վերա Զասուլիչը, որոնց ազդեցութեան տակ Պարվուսը դարձաւ Մարքսիստ։* 1891 *թուին Պարվուսը աւարտեց Բազէլի համալսարանը քաղաքական տնտեսութեան եւ փիլիսոփայութեան դոկտրի աստիճանով։ Ցետոյ Պարվուսը Գերմանիա մեկնեց եւ մտաւ գերման Սոցիալ – Դեմոկրատ կուսակցութեան մէջ։ Թէեւ Պարվուսը երբեք չէր սիրում ռուս յեղափոխական մտաւորականներին, սակայն իր կապերն էլ չէր խզում։*

Գերմանիայում Պարվուսը հաստատուեց Շտուտգարտ, ուր ապրում էին Կարլ Կաուցկին եւ Քլարա Ցետկինը։ Կաուցկին խմբագրում էր «Դի Նոյէ Ցայտ» (Նոր ժամանակներ) օրգանը, իսկ Քլարա Ցետկինը խմբագրում էր կանանց «Դի Գլայչհայտ» թերթը։ Պարվուսը մտերմացաւ նրանց հետ եւ սկսեց աշխատակցել նրանց մամուլին։ Սակայն Պարվուսը ձգտում էր Բերլին հաստատուելու, ուստի մեկնում է եւ աշխատակցում սոցիալ – դեմոկրատների կենտրոնական օրգան «Վորվերց»ին։

Բերլինում ոստիկանութիւնը հետապնդում է նրան, ուստի քաղաքից–քաղաք է թափառում, ապրելով իբրեւ ազգասէր, որովհետեւ թերթերից ստացած honorarը բաւարար չէր։ Կաուցկու յանձնարարութեամբ Պարվուսը աշխատակցում է աւստրիական Սոցիալ – Դեմոկրատ կուսակցութեան օրգան «Արբայտեր Ցայտունգ»ին, մտերմանալով Վիկտոր Ադլերի հետ։

Պարվուսը տենդօրէն ձգտում էր որեւէ դերման երկրի քաղաքացի դառնալ։ Սակայն Պարվուսը իր կապերը միշտ պահում էր ռուս սոցիալ – դեմոկրատների հետ եւ նոյնիսկ մասնակցում է 1896 թուի Լոնդոնի Կոնգրէսին։

Պարվուսը լուրջ բախումներ է ունենում Բերնշտայնի հետ որ քննադատում էր Կարլ Մարքսի տեսութիւնը, որի համար եւ կոչուեց վերաքննական (ռեվիզիոնիստ) (2)։ Պարվուսի հետ էին եւ նրանով խանդավառուում էին Լենինը եւ միւսները. նոյնիսկ Լենինը աքսորավայրից դրում էր իր մօրը, որ Պարվուսի յօդուածները ուղարկի իրեն։

Մէկ օրից միւսը՝ Միւնխէնում Պարվուսը նիւթական նեղութիւն չունէր. նրա տունը միշտ բաց էր բոլոր ռուս եւ դերման սոցիալ – դեմոկրատների առջեւ։ Լենինը եւ իր կին Կրուպսկայան յաճախ հիւրն էին Պարվուսի. սա էր որ համոզեց Լենինին «Իսկրա» թերթը հաստատել Միւնխէնում։ Պարվուսի այդ տունն էր, որ Ռոզա Լիւքսէմբուրգը առաջին անգամ հանդիպեց Լենինին։ Պարվուսը աշխատակցում է «Իսկրա»ին, երբ սա լոյս էր տեսնում Միւնխէնում (3)։

1904 *թուի ռուս – Ճափոնական պատերազմի առթիւ Պարվուսը նախատեսում էր ցարական Ռուսիոյ պարտութիւնը եւ ոգի ի բուն աշխատում էր ռուս յեղափոխականներին մղել իրենց երկիրը ներսից պայթեցնելու։ Կոչ էր անում, իր յօդուածներով, միացեալ ճակատ կազմել ցարիզմի դէմ։ Միաժամանակ Պարվուսը դրում էր։*

« Ռուսական յեղափոխութիւնը պիտի խախտի ամբողջ կապիտալիստական աշխարհի հիմքերը, եւ ռուս բանուոր դասակարգին է վիճակուած առաջապահի դեր խաղալ համաշխարհային սոցիալիստական յեղափոխութեան մէջ »։

Հէնց այդ օրերին էր (1904 *թ.*), *որ Պարվուսը առաջին անգամ հանդիպեց Լեւ Տրոցկիին. այս մասին Տրոցկին գրել է իր ինքնակենսագրութեան մէջ։ Տրոցկին 12 տարով փոքր էր Պարվուսից եւ դանուում էր նրա հմայքի եւ ազդեցութեան տակ։*

Պարվուսը ձիշդ էր նախատեսել, գործնական Ռուսիան պարտուեց ռուս–Ճափոնական պատերազմում եւ պայթեց Ռուսիոյ առաջին յեղափոխութիւնը 1905 թուին (4)։

Պարվուսը, այս պատրաստուած, ճարպիկ եւ արդէն իսկ խորհրդատուը միջոցներով հարստացած Հրեան, ամենայայտնի լրտեսներից էր կայզերական Գերմանիայի եւ մեծ ազդեցութիւն, գործակցութիւն է ունեցել բոլշեւիկ լիդերների հետ։

Երբ արտասահման լուր հասաւ Պետերբուրգի Յունուար 9ի դէպքերի մասին, Տրոցկին ժրին էր գանուում։ Որոշեց ապօրինի կերպով անցնել Ռուսիա։ Իր ճամբին, նա հիւրը եղաւ Պարվուսին՝ Միւնխէնում, խորհրդակցելու համար Ռուսիոյ դէպքերի մասին եւ նրա քննութեանը ենթարկելու իր մի բրոշիւրը, ուր առաջին անգամ չօչափում եւ զարգացնում էր իր տեսութիւնը՝ «Պերմանիիսմ (յարատեւ) յեղափոխութեան» մասին (բրոշիւրի վերնագիրն էր՝ «Մինչեւ Յունուար 9ը»)։

Պարվուսը հաւանեց այդ տեսութիւնը եւ յառաջարան գրեց Տրոցկիի բրոշիւրի մէջ։ Գիրքոյկը հրատարակեցին մենշեւիկները Ժընեւում։

Իր նախաբանում Պարվուսը աշխատում էր ապացուցել՝ քանի որ Ռուսաստանում բուրժուազիան չատ թոյլ է, դիւզացութիւնը ապէտ է եւ անկազմակերպ, իսկ բանուոր դասակարգը քաղաքականօրէն աւելի զիտակից է եւ մասամբ էլ կազմակերպուած, ապա ժողովրդի յաղթութիւնը ցարիզմի վրայ կը վերջանայ դրանով, որ իշխանութիւնը կ՚անցնի բանուոր դասակարգի ձեռքը՝ սոցիալ – դեմոկրատ ղեկավարութեամբ (5)։

Աւելին։ Պարվուս եւ Տրոցկի այդ ղեկոքում խօսում էին նաեւ այն մասին, որ ռուս ինքնակալութեան անկումից յետոյ պրոլետարիատը կ՚օգտագործի իր իշխանութիւնը ո՛չ միայն նրա համար, որ դեմոկրատիկ կարգեր հաստատի, այլ եւ նրա համար, որ քաղաքական յեղափոխութիւնը Ռուսիայում վերածի իրրեւ նախապատրաստութիւն Եւրոպայում սոցիալիստական յեղափոխութիւն առաջացնելուն (6)։ *Եւ այդ յեղափոխութիւնը կանգ չէ առնի մինչեւ այն պահը, երբ պրոլետարիատը Եւրոպայում կ՚իրականացնի պրոլետարական դիկտատուրան։*

«Պերմանենտ յեղափոխութեան» այս տեսութիւնը, ասենք մի կողմնակալ, հակասում էր բոլշեւիկների եւ մենշեւիկների մինչ այդ քարոզած տեսութեան։ Դրանց մէջ՝ Լենինն իրրեւ ղեկավար։

Տրոցկին մեկնեց Ռուսիա։ Նրան հետեւեց Պարվուսը եւ Պետրոպաւլովսկի ամրոցը եղաւ Տրոցկու՝ իր աշակերտի եւ ընկերոջ։ Առաջին հերթին գնեցին «Ռուսական թերթ»ը (Ռուսկայա գազետա) որ կարդում էին, մեծ մասամբ, բանուորները։ Պարվուս եւ Տրոցկի քարոզում էին իրենց տեսութիւնը յօդուածներով։ Թերթի տպաքանակը երեսուն հազարից բարձրանում է 100·000ի։ Երկուսը միասին ղեկավարում էին նաեւ «Բանուորական Դեպուտատների Սովետ»ը, երբ Եւրոպայից վերադարձան բոլշեւիկ եւ մենշեւիկ ղեկավարները։

Մենշեւիկ ղեկավարները՝ Մարտով, Պոտրեսով, Մարտինով եւ Դան հիմնեցին «Նաչալո» (Սկիզբ) օրաթերթը, որին սկսեցին մասնակցել նաեւ Պարվուսը եւ Տրոցկին, քարոզելով իրենց «Պերմանենտ յեղափոխութեան» տեսութիւնը, այլեւ գործնականում աշխատելով անջատել բանուոր դասակարգը միւս դասակարգերից։ Ներանք անընդհատ յարձակում էին ալ թէ ձախ ազատամիտների եւ դեմոկրատների վրայ։ Ցայտարարում էին երկրորդ ընդհանուր գործադուլ։

Ցարական իշխանութիւնը քնած չէր. անմիջապէս ձերբակալուեցին և՛ «Սովետ»ի նախագահը, և՛ «Կենտրոնական Գործադիր Կոմիտէ»ի անդամները, և՛ Տրոցկին։

Պարվուսը չձերբակալուեց, անցաւ զաւադիր գործունէութեան, հիմնեց գաղտնի «Սովետ» իր նախագահութեամբ, յայտարարեց երրորդ ընդհանուր գործադուլ, պահանջելով անմիջական արձակումը բանտարկեալների. սակայն գործադուլը լիակատար ձախողութեան մատնուեց, գաղտնի «Սովետ»ի բոլոր անդամները, Պարվուսի հետ, ձերբակալուեցին եւ ղըրկուեցին Պետրոպաւլովսկի ամրոցը։ Մի քանի ամիս յետոյ Պարվուսը վարչական կարգով աքսորուեց Սիբիր, սակայն ճամբին փախաւ եւ անցաւ Գերմանիա։

Ա. ԱՄՈՒՐԵԱՆ

Թեհրան

(Շար. – 1)

---

(1) Նարոդովոլից = ժողովրդական ազատութիւն։ — Ա. Ա.

(2) Բացի Բերնշտայնի, էդ. Դաւիթը եւս քննադատեց Կ. Մարքսի գիւղատնտեսական տեսութիւնը։ Նա եւս ռէվիզիոնիստ էր։ — Ա. Ա.

(3) Մենշեւիկ եւ բոլշեւիկ կուսակցութեան պառակտումից յետոյ «Իսկրա»ն սկսեց լոյս տեսնել Ժընեւում, իբրեւ մենշեւիկների օրգան։ — Ա. Ա.

(4) Ցարական «Օխրանա»յի արխիւում («Հուվըր Ինստիտուշըն» Քալիֆորնիա) փաստաթղթեր կան, որ ռուս մենշեւիկ եւ բոլշեւիկ կուսակցութիւնը ձափոնիայից ստացաւ գէնք եւ դրամ, Ռուսիան ներսից պայթեցնելու համար։ — Ա. Ա.

(5) Ձիշդ է, անցաւ այդ իշխանութիւնը «պրոլետարիատի» ձեռքը, բայց այժմ Սովետ. Միութեան մէջ իշխողը իշխանատեղիներն ու բիւրոկրատներն են... այլեւ՝ աշխարհիկալները։ Իսկ «դեմոկրատիա»յի մասին խօսելն իսկ աւելորդ է, որովհետեւ գէթ խօսքի ազատութիւն իսկ չկայ սովետական «դրախտ»ում...

(6) Վա՛յ եւրոպական պրոլետարիատին, որին դեկավարողը պիտի լինի սովետ տգէտ, յետամնաց եւ ազատազուրկ պրոլետարիատը։ — Ա. Ա.

Ծաղկած փշալարեր

(ՎԻՊԵՐԳ)

Երբ մենք վերջացրինք ընթրիքը, լուր տարածուեց, որ յանձնաժողովը մտել է կանանց գօտին։ Մեր բարաքը կամ ու պատրաստ սպասում էր բարձր հիւրերի ժամանմանը։ Աչքովս ընկաւ Մամօն. նա անհանգիստ երթեւեկում էր չափելով բարաքի և՛ լայնութիւնը և՛ երկարութիւնը։

Մի անգամ միայն նա մօտեցաւ, խընդրեց, որ Աչոտ ղային մի քիչ կանչայ, որից յետոյ նրա ականջին մի բան ասաց եւ դնաց, — ի՞նչ ասաց, — հարցրի ես Աչոտ ղայուն։ — Աչոտ ղային պատասխանեց, — ինչ բոլորին է յայտնի... եւ նա իմ ականջին Մամոյի չեչոտվ, ազգբէջաներէն ասաց, — կոմիտեան մտել է կանանց բարաքը...

Ցետոյ ականջէ–ականջ անցաւ, որ յանձնաժողովը դուրս եկաւ կանանց գօտուց։ Ցետոյ՝ յանձնաժողովը վերադարձաւ պետի առանձնասենեակը։ Ցետոյ...

Ցետոյ բարաքով մէկ հնչեց ժիլելեակովու կոմինչը.

— Մամէդով Մամօ, պետի մօտ...

Ահա թէ ինչ։

Բարաքը սկսուեց, Մամօն երկու քայլ եա դնաց ասես թափ առնելու համար, կծկուեց եւ առաջ ընկաւ։

Մնացածը կատարուեց չատ արագ։ Մամոյին տարան պատժարան, իսկ Գերմանուհուն հրամայուեց միւս օրը, այսինքն այսօր դուրս չգալ աշխատանքի։ Այդ նշանակում է, որ այսօր նրան պիտի տանեն Առաջին ճամբարի կլօղրը՝ ծննդաբերական բարաքը։ Ահա թէ ինչ։ Մնացածը յայտնի է, մի քանի օրից Մամոյին բաց կը թողնեն պատժարանից եւ եթէ ամէն ինչ բարեյաջող անցնի, այսինքն ցրտից եւ անօթութիւնից չհիւանդանայ եւ չբարձրանայ Մահմէդի ծնկներին, դուրս կը գայ եւ կը չարունակի իր աշխատանքը։ գալով Գերմանուհու ճակատագրին, այդ էլ յայտնի է։ եթէ Ադբըջանի եւ Գերմանիայի զաւակը (— Սիրտս ասում է, որ տղայ կը լինի, — ասաց մի անգամ Մամօն...) ողջ մնայ, մի առժամ յետոյ մօրը կը հանեն հեռաւոր էտապ, իսկ եթէ...

Հերթապահ կանայք, որոնք վաղ առաւօտեան տղամարդկանց գօտին են եկել հաց եւ վրիկ ստանալու, պատմել են, որ Գերմանուհին՝ եթէ ցանկալը, կարող էր այնպէս անել, որ իրեն չնկատեն, բայց նա կարծես դիտումնաւոր՝ ցուցադրել է իրեն և յանձնաժողովի անդամներից մէկը կանգնել է նրա մօտ եւ ասել.

— Օհօ՛, նորահա՛րս...

Ցետոյ դարձել ու հարցրել է բարաքի աւագուհուն.

— Քո բարաքում չատե՞րն են դրաղուած այս գործով...

— Ոչ, քաղաքացի պետ, մէկին է, — պատասխանել է աւագը։

— Իսկ ո՞վ է փեսան, — հարցրել է յանձնաժողովի նոյն անդամը։

— Այդ ինձ յայտնի չէ, քաղաքացի պետ, — պատասխանել է աւագը։

Երբ նոյն հարցով այս անգամ յանձնաժողովի երրորդ անդամը դիմում է Լիւդմիլա Շարիին, նա պատասխանում է ընդգծուած համարձակութեամբ.

— Մամէդով Մամօ, բրուտանոցի բանուոր...

ԳՈՒՐԳԷՆ ՄԱՀԱՐԻ

(37 – Շար.)

ԿԱՆԱՐԿՆԵՐ

ԳԻՐՔԵՐՈՒ ՀԵՏ

(«Հ. ԵՂԻԱ ՓԷՋԻԿԵԱՆ ԵՒ ԻՐ ԽՕՍՔԸ»)

———o———

Այս է անունը 450 մեծադիր էջերէ բաղկացած ալնուամիսկ հատորի մը, զոր հրատարակած է Ս. Ղազարու Մխիթարեանց լուսոյ օջախը՝ համազբարար ներկայացնելու համար զրական վաստակը հոգելոյս Հ. Եղիա Վրդ. Փէշիկեանի (1895–1964):

Այս տարուան Սեպտեմբեր 8ին, հոգեկից իր երկու ընկերներուն՝ Հայր Վահան Վրդ. Յովհաննէսեանի եւ Հայր Սահակ Վրդ. Ֆերահեանի քահանայական ձեռնադրութեան յոբնամեակին նշումին հետ, նաեւ իր կիսադարեան ծառայութիւնը պիտի յիշատակուէր: Մխիթարեան կից իր եղբայրները, հետեւաբար, սրբատուչ չարժուձեւով մը, որ յարգանքի եւ սիրոյ անկորուստ արտայայտութեան կը վերածէ իրենց նախաձեռնութիւնը, պատէն նկատած են առիթը՝ ի մի ամփոփելու համար անձնդիր մշակին եւ հոգեւորականին քերթողական, զրական, թարգմանական ու զրախօսական էջերը, համապարփակ ներածութեամբը լոյս ծաշատ զրաղէտ – զրապատմագէտ Հայր Մեսրոպ Վրդ. Ձանաչեանի:

Վաթսունըվինը տարիներու իր անցաւոր կեանքին քառասունըերկու տարիները վանական, ուսուցչական, դաստիարակչական եւ ուսումնական մարզերու մէջ արձնաւորած է Հայր Փէշիկեան, որ ապրումի եւ ապնիւ առնչերու ճամբով կրցաւ իր ընդունակութիւնները ի սպաս դնել եկեղեցիին ու Ազգին, — երկու նուիրական խմացումները եւ անխորտակ իրականութիւններ, որոնց ծառայութիւնը կեանքի ղերազոյն նպատակն է եղած երբեմն հայ հոգեւորականութեան ու անոնց ամբոյ մինչեւ այսօր հերկ ու վարուցան կատարող սակաւ ընտրեալներու:

Նախ աշխատակից, ապա բազմամեայ խմբագրապետ պարբերական հայ մամուլի նահապետ «Բազմավէպ»ի, միաբանական – վանական կեանքի թէ ուսումնական – զրական աշխատանքներու մարզերուն մէջ ի յայտ բերած է արտակարգ կենսունակութիւն՝ քանակական թէ որակական առումով: Գրաբարագէտ, աշխատարի անսայթաք մշակ, զրի պաշտամունքով ոգեւոր եւ բազմաճիւղ աշխատանքի տրամադիրը, մօտաւորապէս վէս զոր խօսեցաւ ու զրեց, ներշնչեց ու քարոզեց՝ Մուրատ – Ռափայէլեան յարկին տակ ուսանող պատանի եւ երիտասարդ սերունդներուն փոխանցելով Մայրենիքի սէրը, ճանաչումի եւ զիտութեան կիրքը, ազգային ծառայութեան ոգին:

Մեսրոպ – Սահակ – Մխիթար երրորդութիւնը եղաւ աղբիւր ստեղծագործական – դաստիարակչական իր անսպառ կորովին: Ազգային մշակոյթի անխաթար խմացումը ղինք պահեց հայ հատուածքի, հայ զրի եւ հայարմատ կեանքի պաշտպանութեան զիրքերուն վրայ՝ ապատեղումի վտանգին հանդէպ մշտարթուն եւ խստաբերբ: «Ծառն արմատով է ծառ, տունն հիմամբ է տուն», — Ալիշանեան այս կարզախօսը մեկնակէտ դաւանեցաւ՝ պայքարելու համար արդիապաշտութեան անունով ի յայտ բերուած խաթարիչ հակամտութեանց դէմ: « Արդիութիւն՝ հնութեան վրայ », — ա՛յս բանաձեւումով ծառացաւ լեզուական անիշխանութիւններու, զրական նորաբանութեանց, բարքերու այլայլումին դէմ:

Ու հիմա՝ երբ չկայ ինք կենդանի ձայնով, քառասո՛ն տարիներու անցեալէն առաւել ուժգնութեամբ կը հնչէ իր կոչը·

— «Ամէն հայ տուն՝ հայ դպրոց, ու ամէն Հայ՝ հայ գրի գիտուր պէտք է դառնայ: Տեսէ՛ք Հայ Մամուլը, որ կը ճոնչէ անդադար· հայ գրագէտ՝ որ կեանքի սպառումով կը տճնի· ամէն օր կը մեռնի, ցեղն ապրեցնելու համար:

«Հա՞յ ես, քարեկա՛մ: Լսէ՛ մեր անզուգական երգիչը, որ կ'երգէ· «գիր սիրէ՛, գալամ սիրէ՛, դավթար սիրէ»:

«Վտանգի մէ՞ջ է հայ գիրը, — ուրեմն ե՛ւ ազգդ: Ամէն տուն հարկ է որ բերդ դառնայ, եւ ամէն յարկ՝ գիտարան: Ամէն Հայ՝ գիտուր: Հայ գրով ու գրքով է որ պիտի պայքարիս »:

Մ. Թ.

ՇԱՐԺԱՊԱՏԿԵՐԸ ԱՆՑԵԱԼԻՆ ԵՒ ԵՐԷԿ

ՎԱՉԵՎՈՂՈՍ ՓՈՒՏՈՎՔԻՆ

Փուտովքին ծնած է 1893ին, Փենզա քաղաքին մէջ: Եղած է բեմադիրի օգնական, դերասան, սենարիստ, եւ վերջապէս՝ բեմադիր: Նախ կը պատրաստէ կարճ ժապաւէններ:

1926ին կուտայ իր կարեւոր գործը, «Մայրը» ժապաւէնը, ներշնչուած Մաքսիմ Կորքիի նոյնանուն վէպէն: Գլխաւոր դերակատարուհին էր Հռչակաւոր Վերա Պարանովսքայան:

«Մէն Փեթերսպուրկի վախճանը» նորութիւն մը չէ բերեր արուեստի տեսակէտէն: Փուտովքինի անունը կապուած կը մնայ 1929ին բեմադրած «Փոթորիկ Ասիոյ վրայ» ժապաւէնին: Այս գործին համար նշանակուած էր ուրիշ վերնագիր մը՝ «Ճենկիզ Խանի ժառանգորդը», որ ճշդորոշումէն կը բնորոշէ նիւթը: Կեդրոնական Ասիոյ մէկ անկիւնը, տեղ կ'ունենայ ոճիր մը· մուշտակի որսորդ մը, որ կը պատկանի մոնկոլ ցեղին, կը սպաննէ եւրոպացի վաճառական մը, որուն հետ խնդիր ունեցած էր: Որսորդը կը ձերբակալուի եւ մահուան կը դատապարտուի դաղթատիրական իշխանութիւններու (Անգլիացիներու) կողմէ: Զօրավարներէն մէկը սակայն, կը յղանայ յանդուգն ծրագիր մը: Անոնց տեղ կը յայտնէ, թէ այդ սրսորդը ձենկիզ Խանի ուղիղ ժառանգորդն է, եւ պիտի փորձէ վերականգնել իր նախորդին անսահման կայսրութիւնը: Որսորդը ազատ կ'արձակուի եւ կը հրահրէ ցեղախումբերը, որպէսզի դուրս վտարեն դաղթարարները:

Փուտովքին անորոշութեան մէջ կը թողու այդ դաղթարարներուն դիմագիծը, որոնք կրնան պատկանիլ որեւէ ազգութեան: Այս ժապաւէնին մէջ, Փուտովքին կը ներկայանար ոչ թէ իբրեւ համայնավար քարոզիչ, այլ իբրեւ ռուս ազգայնասէր, որ լաւ աչքով չի դիտեր Անգլիացիներու ոտնձգութիւնները:

« Փոթորիկ Ասիոյ վրայ » ժապաւէնը լայն ասպարէզ դուռ արտաքին աշխարհի մէջ եւ մեծ յաջողութիւն դուռ հանդիսատեսութեան մօտ, դանազան պատճառներով: Միջավայրը խորհրդաւոր էր եւ անծանօթ, նիւթը՝ յանդուգն, բայց մանաւանդ կար անոր դլխաւոր դերակատարը, Վալերի Ինքիժինոֆը, որուն մասին կը չզլէին անհաւատալի առասպելներ, իբրեւ թէ ան եղած ըլլար անմահ ու վայրենի մոնկոլ հովիւ մը, որուն հանդիպած էր բեմադիրը չզլապատյան մը ընթացքին եւ անոր յանձնած՝ ճենկիզ Խանի ժառանգորդին դերը: Իրականութիւնը բոլորովին տարբեր էր: Վալերի Ինքիժինոֆ փորձառու դերասան մըն էր, խորհրդաւոր ժպիտով եւ սուր երկդիմի նայուածքով, ճիշդ ու ճիշդ մոնկոլ իշխանի մը դիմագիծը: Մեծ տպաւորութիւն դործեց աշխարհի բոլոր հանդիսատեսներուն վրայ, որովհետեւ Ինքիժինոֆ դեռ բոլորովին չէ քաչուած ասպարէզէն եւ երբեմն իր անունը կը կարդանք պատառներու վրայ: Փուտովքին ոչ միայն կը տերապեւտէ սթիւտյի տեսարաններուն վրայ, այլեւ ան մասնագէտ մըն է արտաքին տեսարաններու մէջ, երբ կ'ուզէ ամբոխները չարժման մէջ դնել, բանակներ երարու դէմ հանել:

Այս երկու հսկաներու կողքին, արդար է որ յիշենք ուրիշ քանի մը տաղանդաւոր բեմադիրներ եւ իրենց դլխաւոր իրագործումները·

Ալեքսանդր Տովժենկո, ծնած Քիեւ, հիմնադիրն է «Հողը» աշխարհահռչակ դործին: Գործադրութիւնը տեղի կ'ունենայ պղտիկ դիւղի մը մէջ, որ թշուառութեան մէջ կ'ապրի: Երիտասարդ դիւղացի մը կը փորձէ աշխատելու նոր մեթոտներ սորվելով–կամաց–կամաց համակրութիւնը կը շահի դիւղացիներու մէկ մասին, բայց նախանձողները զայն կը սպաննեն: Ժապաւէնին վերջին պատկերը դիւղ–գործոց մըն է: Ամբողջ դիւղը կը հետեւի երիտասարդի դագաղին, դարնան դեղեցիկ օր մը, երբ բնութիւնը կը սկսի կեանք տրուել ամէն կողմ:

Օլկա Փրէօպրաժենսքայա, նախկին դերասանուհի մը, որ դարձած էր բեմադիր, արտադրեց «Մեղքի դիւղը» մելոտրամա մը, որ ոչ մէկ կապ ունի քաղաքական մտահոդութիւններու հետ: Հերոսուհին երիտասարդ կին մըն է, որուն ամուսինը դինուոր դացած է հեռաւոր չրջան մը: Հարսը կը մեղանչէ իր ամուսնոյն հօրը հետ, եւ երբ երիտասարդը կը վերադառնայ դինուորութենէն, խեղճ հարսը ամօթէն անձնասպան կ'ըլլայ: Բեմադիրը մէկդի դրած դիւրին իրապաշտութիւնը, դործին տուած է մարզկային տարողութիւն: «Մեղքի դիւղը» մեծ յաջողութիւն դառ արտաքին աշխարհի հանդիսատեսներուն մօտ եւ երկրի սահմաններէն ներս:

Թրաուպերկ, դործակցելով Քպղինսկեի հետ, արտադրած է «Նոր Բաբելոն» ժապաւէնը, որ պատմութիւնն է Փարիզի Կոմունին, դիտուած խորհրդային ակնոցով: Աւելի հետաքրքրական է անոր «Մոնկոլ կառաչարը», որուն գործողութիւնը տեղի կ'ունենայ կառաչարի մը մէջ: Դասակարգային պայքարի մէկ մանրանկարն է այս ժապաւէնը, որուն մէջ երբորդ կարգի վահանի մը մէջ թիմնուած Չինացիները կը յարձակին առաջին կարգի պուրժուա ճամբորդներուն վրայ:

Ֆետոր Օգէփ տուած է իրապաչտ գործ մը, ուր կը վերապրի զղայական մթնոլորտ մը: «Դեղին անցագիրը» ժապաւէնին մէջ ան կը պատմէ երիտասարդ դիւղացի աղջկան մը ողիսականը, որ սպասուհի է հարուստ քաղքենիի մը տունը: Կը բռնաբարուի տիրոջ կողմէ ու կը դառնայ հռչակաւոր կին: Երկիմաստ չեշտ մըն ալ նչմարելի է այս գործին մէջ: Գիւղացի աղջկան դերը տրուած է խոստմնալից արուեստագիտուհի Աննա Սթէնի: Այս գործէն ետք, Ֆետոր Օգէփ մեկնեցաւ Պերլին՝ բեմադրելու համար Լէօ Թոլսթոյի «Կենդանի դիակը»: Աննա Սթէն կը զբաղուէր Պերլին, երբ հրաւէր ստացաւ Հոլիվուտի մեծադոյն ընկերութիւններէն մէկուն կողմէ:

ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ԱՌԹԻԻ

“ ՅԱՌԱՋ ”

ՆՈՒԻՐԵՑԷՔ

ՀԱՑԱԳՈՐԾ ԿԻՆԸ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

ՀՐՉԻԳԸ

Ժ·

— Ա՛հ, զարմիկս, ո՛րքան բախտաւոր եմ, ձեզ դանելուս համար: Մինչ ես կը կարծէի որ մեռած էք դուք:

— Մեռա՞ծ, կրկնեց Ժաք ժպտալին: Ասօքը մէջերնիս, հատատալ չի զար: Ո՞ր չուտիկը յերիւրած է այդ պատմութիւնը:

— Գաւառին մէջ կ'ըսէին, ուր հինգ տարի առաջ զացի, բայց բոլորովին վրատ չէին:

— Ուրկէ՞ բխած էր այդ արտառոց զրոյցը···

— Տիժոնէն անցնող Ժընեւցի զործա-

— Զարմանալի՛ հարցում, Օվիա: Շուարե՞ր կս: Գիտես թէ մեքենաւոր եմ···:

Նախկին զործատէրը խածաւ իր չըթունքը:

— Այո, իրաւունք ունիս: Արտառոց հարցում մը ըրի քեզի: Ներողութիւն, այդ պահուն մտախոհութեան մատնուած էի:

— Հոդ չէ:

— Ո՞ւր կ'երթաս:

— Նիւ Եորք, իբր մեքենայարդար աշխատելու համար:

— Կը յուսա՞ս որ պիտի կրնաս դիւրաւ աշխատանք դտնել:

— Աշխատանք փնտռելու պէտք չունիմ: Արդէն խոկ պատրաստ է:

— Ի՞նչպէս կ'ըլլայ, հարցուց Ժաք կարօ:

— Երկրացի ճարտարապետի մը՝ ձէյմս Մորթիմէրի հաչուին վարձուած եմ, պատասխանեց Օվիա:

— Ձէ՛յմս Մորթիմէր, կրկնեց նախկին զործատէրը:

— Կը ճանչնա՞ս զայն:

— Այո, զէմքով միայն: Կարծեմ ալեխառն մազերով մարդն է, որուն կ'ընկերակցի չատ հմայիչ աղջիկ մը:

ԿԶԱՎԻԼ ՏԸ ՄՈՆԹԼՓԷՆ

(Շար·)

«ՅԱՌԱՋ»Ի ԲԱՐԳԱՒԱՃՄԱՆ ՀԱՄԱՐ

(Համակրաւիճ տեղահանուրթեան առթիւ)

Տիկին Հրանդ Բալուեան իր ամուսնոյն մահուան 3րդ տարեդարձին ի յիշատակ 100 ֆր. *կը նուիրէ :*

×

ՄԱՐՍԷՅԼԷՆ, Տիկին Ալնիւ Տէրտէրեան 100 ֆր. :

×

ԱԼՖՈՐՎԻԼԷՆ, Պ. Գէորգ Գէորգեան 80 ֆր. :

ՎԷՆՍԷՆՆԷՆ, Պ. Գր. Հասրմեան 30, *ՓԱՐԻԶԷՆ Տիկին Ազաքսի Մալաքեան* 30, *ՊՈՒԱ. ՔՈԼՈՄՊԷՆ Տիկին Ս. Իսքէնտէր* 30 ֆր. :

ՑԱԽԱԿՑՈՒԹԻՒՆ

Կապոյտ Խաչի Փարիզի մասնաճիւղի վարչութիւնը իր ցաւակցութիւնները կը յայտնէ ընկերուհիներ Ա. Ուզունեանի, Տէր եւ Տիկին Գ. Եսիպարասչեանի եւ ընտանեկան բոլոր պատասխաններուն, իրենց հօրաքրոջ Տիրուհի Եսիպարասչեանի մահուան առթիւ :

Վարչութիւնս հնարհակալութեամբ լսած է իր դպրոցին ի նպաստ Տիկին Ուզունեանէ 30 ֆր. *Տիկ. Եսիպարասչեանէ* 20 ֆր. :

Այս առթիւ Տիկին Ուզունեան 20 ֆր. *կը նուիրէ «Յառաջ»ի եւ Տիկին Եսիպարասչեան* 30 ֆր. :

ԽՆԴՈՅՔ

ՏԷՍԻՆԻ ՄԷՋ

Վասպուրականի Հայր. Միութիւնը Ծնունդի առթիւ խնջոյք մը կազմակերպած է ճաշով, Յունուար 6ին, ժամը 20ին մինչեւ լոյս, Քաղաքապետարանի սրա – հին մէջ :

SAINT-PLACIDE IMMOBILILR

100, Rue de Vaugirard
75006 PARIS
Tél. 222-18-49 et 544-08-76

Heures d'ouverture : :

de 9 h. 30 à 19 h. tous les jours
Le Samedi de 9 h. 30 à 12 h.

×

Տնօրէնուհին՝ ՏԻԿԻՆ ՏԱՎԼԱՇԵԱՆ

ձեր տրամադրութեան տակ է ձեզի խորհուրդ տալու եւ առաջնորդելու համար, փարիզ թէ արուարձան յարկաբաժին մը ծախելու, գնելու վարձելու կամ վարձու տալու համար :

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Հ. Բ. Ը. Միութեան Մարսէյլի Տիկնանց Օժանդակ Մարմինի տարեկան մեծ պարահանդէսը 13 *Յունուար, Շաբաթ գիշեր, ՕԹԷԼ Սիլանտիոի սրահին մէջ : Հայկական չքնաղ միջավայր, ճոխ պիւֆէ եւ ընտիր նուագախումբ :*

×

Կապ. Խաչի Սեւրանի մասնաճիւղի տոնածառը Յունուար 14*ին :*

ՍԱՄՈՒԷԼ - ՄՈՒՐԱՏԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆ

ՆՈՐ ՇԷՆՔԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Ման 5·000
Մանուկեան 1·500
Եսայեան 500, *Աբթինեան* 500, *Յակոբեան Յ.* 500, *Դաւեմի Միւթիւն (Ամերիկա)* 500, *Պէրպէրեան* 200 ֆր. :

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

ՄԱՐՍԷՅԼ.— Տէր եւ Տիկին Մարպար Ծերուկեան չնորհակալութիւն կը յայտնեն բոլոր անոնց որոնք անձամբ, պրա – ւոր, ծաղկեպատկով կամ մամուլով ցաւակցութիւն յայտնեցին

ՈՍԿԻՒԱՆ ԾԵՐՈՒԿԵՄԱՆԻ

մահուան առթիւ :

Il y a dans Paris un centre commercial où l'on entend toute la journée des airs arméniens, et où l'on peut découvrir et admirer la riche variété de notre patrimoine culturel.

Grande Exposition ARMÉNIE

AU CENTRE COMMERCIAL DU PARC ETOILE - FOCH - AVE

Entrée par le Parking (gratuit) ou, Escalators angle Rue Presbourg-Ave. Foch
Métro : Etoile, R.E.R. direct

En semaine de 13 h. à 20 h., Samedi, Dimanche de 13 h. à 21 h.

Jusqu'au 4 Janvier seulement

LE PLUS GRAND CHOIX D'ARTICLES JAMAIS REUNIS CONCERNANT L'ARMENIE !

Allo ! « Arménie Information » : 727-64-59

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ՀԱՄԱԽԱՐԲԵՐԴՑԻԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

Ֆրանսայի Հրջանի

1973 Ի ՕՐԱՑՈՅՑԸ

Գիւմ 3 փրաճէ

Դիմել մասնաճիւղերու վարչութեանց կամ

K. Khamarian

9, Avenue Camille Pelletan
13 - Marseille (2e)

ՖՐԱՆՍԱՀԱՅ ԳՐՈՂՆԵՐՈՒ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ

Դրական երեկոյթը 12 *Յունուար, Ուրբաթ ժամը* 20·45*ին, Մոտէռն Փալասի մէջ Փլաս տը լա Ռեփիւպլիք իպտաիւ Օր· ԱՏՐԻՆԷ ՏԱՏՐԵԱՆի*, 1972 *թուի Հարեցք պրսկան պարգեւի յատկացման առթիւ :*

Կը նախագահէ Տիկ· ԷԼԻԶ ԱՅՎԱԶԵԱՆ

Կը խօսին

ՋԱՐԵՀ ՈՐԲՈՒՆԻ եւ Ա. ԱԼԻՔՍԱՆԵԱՆ

Կ'արտասանեն Տիկին Բալուեան եւ օրիորդներ Սոնա Վարդանեան, Ագապի Պալեան :

Կ'ըլլայ ներկայացում մը մէկ արար

Մուտքը ազատ է

ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ԵՒ ԾՆՈՒՆԴԻ ՏՕՆԵՐՈՒՆ ԱՌԹԻՒ

ԱՒՈՒՎԻԼԻ ԵՒ ՇՐՋԱԿԱՅՔԻ ՄԻԱԿ ՀԱՅ ՆՊԱՐԱՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ՝

ՆԻԿՈՂՈՍԵԱՆ

կը շնորհաւորէ իր յաճախորդները զոյգ տօներուն առթիւ եւ կը յիշեցնէ անգամ մը եւս թէ իր մօտ պիտի գտնէք մատչելի գիներով ամէնէն ընտիր եւ նոխ հայկ· աղանդերներն ու անուշեղէնները, եւ չոր պտուղներն որ պիտի զարդարեն ձեր սեղանները

N. NIGOGHOSSIAN

121, Ave. Henri-Barbusse — 95400 - ARNOUVILLE - LES - GONESSE
Tél. : 985-04-46

IMPRIMERIE SPÉCIALE
DU JOURNAL «HARATCH»
32, RUE DE TRÉVISE — PARIS (9e)

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐԸ

ՓԱՐԻԶԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Կապ· Խաչի Շրջ· Վարչութեան, մասնակցութեամբ Փարիզեան չրջանի իր մասնաճիւղերուն, Մանուկներու Օրը կը տօնուի Փարիզի մէջ

ՅՈՒՆՈՒԱՐ 28ԻՆ

×

ԼԻՈՆԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Կապոյտ Խաչի Լիոնի մասնաճիւղին Յունուար 14*ին :*

×

ՊՕՄՈՆԻ ՄԷՋ

Կապոյտ Խաչի Պօմոնի մասնաճիւղին դպրոցին տօնածառի հանդէսը 7 *Յունուար կիրակի կէսօրէ վերջ ժամը* 3*ին եկեղեցւոյ սրահին մէջ :*

Կազմող պատան կը ներկայանայ պէսպէս նուէրներ բաշխելու փոքրիկներուն :

×

ԿՐԸՆՈՊԼԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Կապ· Խաչի մասնաճիւղին, մեծ պատրաստութեամբ կը տօնուի Յունուար 21*ին կիրակի ժամը* 15·30*ին :*

×

ՏԷՍԻՆԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Կապ· Խաչի մասնաճիւղին, Յունուար 14, *կիրակի կէսօրէ վերջ ժամը* 15*ին, Քաղաքապետարանի չքեղ սրահին մէջ :*

Գեղարուեստական բաժին դպրոցի աշակերտներու կողմէ :— Երգ, արտասանութիւն եւ հայկ· պարեր : Նուէրներ կազմող պատան կողմէ :

×

ՎԻԵՆԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Կապոյտ Խաչի Վիէնի մասնաճիւղին Յունուար 7, *կիրակի կէսօրէն վերջ ժամը* 15*ին, Գասպար Իփէկեան սալոնին մէջ՝* 40, *Ռիւ Վիքթոր Ճօժիւ :*

Երգ, արտասանութիւն, պար, դպրոցի աշակերտներու կողմէ :

Կազմող պատան կը ներկայանայ նուէրներ բաշխելու համար փոքրիկներուն :

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

ՄԱՐՍԷՅԼԻ ՍՐԲԱՎԱՅՐԸ

Դեկտ· 26ին, երեքշաբթի ժամը 16·30ին *Հոմմի Լեւոնեան հայ Դպրեվանքի աշակերտութեան ուխտադնացութեան առիթով* Նոքր Տամ տը լա Կառտ, *սրբավայրին մէջ ճայնաւոր պատարագ կը մատուցուի : Յաւարտ պատարագի, սրբավայրի սրահին մէջ մտերմիկ հանդիպում մը տեղի կ'ունենայ մեր ազգային– ներուն հետ :*

Դեկտ· 28ին Հինգշաբթի օրը ժամը 20–22
(Salle Mazenod — Rue d'Aubagne)

Վազդէն Ա. կաթողիկոսի եւ կարդինալ Գրիգոր–Պետրոս Ագաճանեանի կեանքին հայող չարժանկարները կը լուսարձակուին :

Այս առթիւ, Լեւոնեան վարժարանի աշակերտներէն ոմանք, հակիրճ կերպով պիտի խօսին մեր ժողովուրդին սրտին մօտ հարցերու շուրջ :

Մուտքը ազատ է բոլորին :

ՔԱԼՈՒԹԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

ՆՈՐ ԳԻՐՔԵՐ – ՆՈՐ ՍԱԼԵՐ

Ազգապահպանման լաւագոյն միջոցներէն մէկն է կարդալ եւ ծանօթացնել հայ երգն ու երաժշտութիւնը, օտարներուն եւ մեր մատաղ սերունդին : Հասցէ՝

43, Rue Richer, Paris (9e) — Métro Cadet — Tél. 770-25-46

ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ԱՌԹԻՒ՝ գիրք եւ սալ նուիրեցէք

Գրատունը ճոխ է բազմատեսակ գրքերով եւ պատրաստ՝ ապսպրանքները ընդունելու ամէն վայրերէ :

Կը ծախուի նաեւ Նայիրի եւ Սփիւռք չարաթաթերթերը :

Առաքման ծախքը գնողին վրայ է :
Գրատունը բաց է ամէն օր ժամը 10*էն սկսեալ մինչեւ երեկոյեան* 7*ը :*

ԸՆԹԱՑԻԿ ԱԶԴԵՐՈՒ ՍԱԿԱԳԻՆ

ՄԷԿ ԱՆԳԱՄՈՒԱՆ ՀԱՄԱՐ

ՄԱՀԱԶԴ	70 Ֆ·	միւչեւ	1/4	սիւճակ
ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ	30 Ֆ·	միւչեւ	1/8	սիւճակ
ՅԱՒԱԿՑՈՒԹԻՒՆ	15 Ֆ·	»	»	»
ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ	30 Ֆ·	»	»	»
ՀԱՐՍԱՆԻՔ, ՆՇԱՆՏՈՒՔ	30 Ֆ·	»	»	»
ԾՆՈՒՆԴ	30 Ֆ·	»	»	»
«ԿԸ ՓՆՏՌՈՒԻ»	15 Ֆ·	»	»	»
ԾԱՒՈՒ Է	25 Ֆ·	»	»	»

Այս գիները մէկ անգամ հրատարակելի եւ ճշգուած ծաւալով ազդերու համար են, չորրորդ էջը :

Կանխիկ վճարումը պարտաւորիչ է :

Առեւտրական կամ այլ ազդերու մասնաւոր պայմաններու համար դիմել **Վարչութեան**

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ
27
ԴԵԿՏԵՄԲԵՐ
MERCREDI
27 DECEMBRE
1972

LE NUMÉRO 0,70 F.

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ
ՀԻՄՆԱԴԻՐ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

HARATCH

LE SEUL QUOTIDIEN ARMÉNIEN EN EUROPE OCCIDENTALE
Directrice : ARPIK MISSAKIAN
32, RUE DE TRÉVISE PARIS 9

— Tél. : 770-86-60 —
C. C. P. Paris 15069-82

Fondé en 1928
R. C. Seine 57 A 2781

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա	Տար. 120 ֆր.	Վեցամսեայ	65 ֆր.
Արտասահման	Տար. 135 ֆր.	Հատը	0,70 ֆր.

48ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 12·599

Fondateur : SCHAVARCH MISSAKIAN

48e ANNÉE — N° 12.599

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ԾՆՈՒՆԴԸ ԱՀԽՈՐՀԻ ՄԷՋ

———o———

ՆԻՔՍԸՆ ՌՈՒՄԲ ԿԸ ՏԵՂԱՅՆԷ

ԵՐԿՐԱՇԱՐԾ ՆԻՔԱՐԱԿՈՒԱ՝ ՄՕՏ 20 ՀԱՋԱՐ ՁՈՀ

ՊԱՊԸ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ ԿԸ ՔԱՐՈԶԷ

«Պիղատոսներու ծնունդը» կը խորհրդէր, երկուշաբթի օր, Հռոմպա օրթոթերթը, իր առաջին էջի լուրերը։ Հաւանաբար ամէնէն ճիշդ խորագիրը, որ կը յարմարի օրուան դէպքերուն երբ մարդիկ պատուհասական քարոզներով պատերազմ ու ջարդ կը դատապարտեն, մինչ ռումբերը կը տեղան անմեղ ժողովուրդի մը գլխուն, մանուկներ կը մեռնին կամ կ'որբանան, երկիրը կը չարժի՝ Նիքարագուա, աւերակներու տակ թաղելով ամբողջ բնակչութիւն մը եւ մայրաքաղաք մը կը ջնջուի քարտէսէն։

Հակիւ քանի մը ժամ առեւոյ Նիքսընեան գինադուլը, ու Հիւս. Վիէթնամի ժողովուրդը չարունակեց ճաշակել ամերիկեան «ուժը»։ Ցաջորդաբար Զօր. Ճիւփի մահուան լուրը տարածուեցաւ ու հերքուեցաւ մինչ Սպիտակ Տունը չհասկցաւ թէ ռումբերու լեզուն կը ծառայէ միայն ամբանդելու ժողովուրդներու կամքը։

Անդին, կեդրոնական Ամերիկայի մէջ, մայրաքաղաք մը քանդուեցաւ երկու վայրկեանէն։ Մեռելներուն թիւը 20 հազարի կը մօտենայ, հարիւր հազարաւոր անօթի – ծարաւ անապաստան աղէտահարներ ու համաճարակը կը սպառնայ։ Մանագուայի մէջ ջերմութիւնը 40 աստիճան է եւ դիակներու լեռները, ողողումները եւ հրդեհները կը սպառնան վերապրողներուն։

Հռոմի մէջ, Պապը ապարդիւն կոչեր կ'ընէ, ուրպի էր ուրպի օրհնութիւնը կուտայ բազմաթիւ լեզուներով (երբեք՝ հայերէն, առաջին քրիստոնեայ ժողովուրդներէն մին որ չարժանացաւ ոչ մէկ Պապի ամէնէն չնչին ուշադրութեան) ու կը փորձէ խօսք հասկցնել բարի կամեցողութիւն ունեցող մարդոց։

Աշխարհ կը դատապարտէ ամերիկեան ռմբակոծութիւնները։ Ամերիկեան եկեղեցիները հովուական գիրով մը կը չեշտեն թէ արարքը չի դիմանար Աստուծոյ դատաստանին, Շուէյտի վարչապետը կ'ոչնչեկոչէ՝ կեռնիքեան, Օստաուրը եւ Թրեպլինքան, Ֆրանսա կը բողոքէ բայց Նիքսընն կը կարծէ թէ Հանոյ տեղի պիտի տայ ռումբերու տարափին տակ։

Երկուշաբթի առաւօտ յանկարծ կը յայտարարուէր թէ ռմբակոծութիւնները դադրած են։ Կը կարծուի թէ Նիքսընն կը յուսայ բանակցութիւնները վերսկսիլ, տրուած ըլլալով որ ամերիկեան իսկ հեռատեսիլէն Հանոյի ներկայացուցիչն ըսած էր թէ ոչ մէկ բանակցութիւն կրնայ կատարուիլ ցորշափ ռումբերը կը տեղան։

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՍՈՒՐԻՈՅ պետական խորհուրդը ընդունեցաւ հրապարակուած վճիռով մը յարանուանական զգրօցներու անհատական ընթերը։ Ծանօթ է որ կրօնաւորներու ուսուցչութիւնը վայելող քրիստոնեայ

ՕՐՈՒԱՆ ՇԱՐԺՈՒՄԻՆ ՀԵՏ

ԹՈՒՐՔ ԵՒ ԱՐԱԲԱԿԱՆ ՄԵՐՁԵՑՈՒՄ

———o———

ԼՄԲ։— «Հռոմպա»ի մէջ ժորժ Ալուերսըն, որ մասնագէտ է Միջին Արեւելեան հարցերուն, հետեւեալ յօդուածը սուր – բագրած է թերթին Դեկտեմբեր 21ի թիւին մէջ։

Անգարայի կառավարութիւնը հակազդելու համար յառաջդիմական զաղափարներու ծաւալումին, հարկագրուած է նըպաստելու պահպանողական եւ ուսանողական չարժումներուն, որոնք համխըլութեան զաղափարներով կը սնանին։

Թէ մահմետական զգրօցները ապստամբուեցան 1967ին։ Ասոր իրրեւ հետեւանք Լուսաւորութեան նախարարութիւնը որ զրաւած էր այդ զգրօցները, պէտք է պարպէ։ Պէյրութի L'Orient-Le Jour, որ լուրը կը հաղորդէ, կ'աւելցնէ թէ այս որոշումը չէ տրուած խնայելու համար կրօնական միաբանութիւնները, այլ որովհետեւ պետական զգրօցներու մակարդակը չատ ցած է եւ բազմաթիւ ընտանիքներ կը հեռանան Սուրիայէն այդ պատճառով։

ԱՆՏՐԷՅ ՏՈՒՊՈՒԼԵՒ, հայրը նշանաւոր Տուպոլեւներու, մեռաւ առջի օր 84 տարեկանին։ 120 զանազան տեսակի օդանաւեր յղացած էր ու ճաշակած աստլինեան բանաւորը։

ՑՈՐԴԱՆԱՆԻ Հիւսէյն թագաւորը 3րդ անգամ ըլլալով ամուսնացաւ։ Այս երրորդ կինը պաղեստինցի 25 տարեկան աղջիկ մըն է, որու շնորհիւ Հիւսէյն կ'ուզէ ապահովել Ցորդանանի արքայական յաջորդութիւնը։ Արդարեւ, ասկէ 11 տարի առաջ Հիւսէյն կ'ամուսնանար Անգլուխի մը հետ բայց ամուսնութիւնը մորկանական ըլլալով, զաւակները դահա – ժառանգ չէին կրնար ըլլալ։

ԻՍՐԱՑԷԼԻ վարչապետը Փարիզ պիտի դայ Յունուար 14–15ին մասնակցելու համար Բ. Միջազգայնականի համագումարին։ Տիկին Կոլտա Մէյր, այս առթիւ, չի զար իրրեւ վարչապետ Իսրայէլի, այլ պարզապէս իրրեւ պարագլուխ Իսրայէլեան Ընկերվարական Աչխատաւորական կուսակցութեան։

ԱՆԳԱՐԱՑԻ համալսարանի լրատարութեան փրոֆեսէօր Ուկուր Ալճաքափան վեց տարի բանտարկութեան զատապարտուած է, այն ամբաստանութեամբ թէ գոյքի մը մասնակցած էր առկէ երկու տարի առաջ, պաչարման վիճակի հռատատումէն չորս ամիս առաջ։

ՓԱՐԻԶԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ որոշեց 10,5 առ հարիւր բարձրացնել «տեղական» (ղոfo) տուրքերը եւ յարակից ուրիչ տուրքերը։ Այս որոշումը տուաւ, որպէսզի հաւաստրակչէ մայրաքաղաքին պլուտճէն, որ 4,5 միլիար ֆրանքի կը հասնի։

ՖՐԱՆՍԱԿԱՆ օդանաւ մը ինկաւ Քաբիլեաններու մօտ։ 12 համբորդ մեռաւ։ Նորվեկիական օդանաւ մըն ալ Օսլոյի մօտերը։ 40 մեռեալ կայ։

ՄԻՆՉԵՒ ԴԵԿՏ. 31 միայն պայմանաժամ կայ արձանագրուելու համար ընտրական ցանկերու վրայ։ Ցիշենք որ Ֆրանսայի մէջ, եթէ քուէարկութիւնը պարտաւորիչ չէ, արձանագրութիւնը պարտաւորիչ է։

Ոստում մը նկատուի թէ երկար ժամանակի ծրագիրը, փառան այն է, որ «երիտասարդ Թուրքերը», որոնք մեծամասնութեամբ դեկնոկրատներ են, յաջողած են նոր ուղղութիւն մը տալ Թուրքիոյ արտաքին քաղաքականութեան։ Այդ ուղղուղղութիւնը արտարասէր քաղաքականութիւնն է։

Քաղաքական նոր ուղեգիծը արդէն իր արտայայտութիւնը գտած էր, երբ Թուրքիոյ Արտաքին Նախարարը՝ Պայիւլքէն, Յորդանան եւ Իրաք այցելեց Օգոստոսի վերջերը եւ Սեպտեմբերի սկիզբները։ Ասիկա առելի յայտուն կը գառնայ, երբ նկատի առնուի Թուրք Արտաքին Նախարարին բարեկամական այցը Դամասկոս, Դեկտեմբեր 23ին, որուն պիտի յաջորդէին Պէյրութի եւ Գահիրէի այցելութիւնները՝ նախատեսուած Յունուարի համար։ Անշուշտ «պատահական» պէտք չէ նկատել Պայիւլքէնի Դամասկոս այցը այնպիսի չրջանի մը, երբ Սուրիա մանաւանդ հողատարածութեան կ'արժանանայ Խորհ. Միութեան կողմէ։ Պէյրութի «Ալ Նահար» թերթը միակը չէ հաստատելու համար, որ Ռուսերը օդային կամուրջ մը ստեղծած են Օտեսայի եւ Դամասկոսի միջեւ՝ փեչտայի ճամբով, որպէսզի սուրիական բանակը օժտեն զէնքերով։ Այս զէնքերը լրենց որակով եւ գործնականութեամբ անհամեմատ աւելի լաւ են, քան եգիպտոսի յանձուած զէնքերը։

Իրաց այս կացութեան մէջ, ոչ ոք պիտի կրնար ժխտել, թէ Անգարայի եւ ամբողջ երկիրներու եւ, յատկապէս, Դամասկոսի միջեւ ստեղծուած մերձեցումը նպաստաւոր չէ Իսրայէլի համար։ Ասիկա աւելի յատկանշական ձեւով կը յայտնուի, երբ նկատի առնուի, որ Սուրիա եւ Թուրքիա տասնամեակներ չարունակ թշնամական դիրքի վրայ կը գտնուին։ Տարակարծութեան հիմնական պատճառը Դամասկոսի հողային պահանջներուն մէջ էր։ Դամասկոս Թուրքիայէ կը պահանջէ Իսքէնտէրունի (Ալեքսանդրէթի սանճաք) տահմանային նահանգը, որ արդէն Դամասկոսի մէջ լոյս տեսած աշխարհագրական քարտէսներու մէջ իրրեւ սուրիական Հանրապետութեան անբաժան մասը կը նկատուի։

Իմէջ Ինէօնիւ եւ անոր հետեւելով Նիհատ Էրիմ որոշած էին զեսպանական աստիճանի բարձրացնել լրենց դիւանագիտական ներկայացուցչութիւնը Թել Աւիվի մօտ։ Այս ծրագիրը ձախողեցուց էջեւիտ Ալիքան, առաջնորդը «Նոր Թուրքիա» կուսակցութեան (այժմ լուծուած)։ Որոշ աղբիւրներու համաձայն՝ Իսրայէլի հիւպատոս էլ Ռոմի առեւանգումն ու սպանութիւնը կը միտէր տադնապ մը ստեղծել Թուրքիոյ եւ Իսրայէլի միջեւ։

Ս. Տէմիրէլի (վարչապետ) եւ Արտաքին Նախարար Զաղլիյանկիւլի հրաժարումներէն ետք 1971ին, նոր Արտաքին Նախարարը՝ Օլճայ, որ մղում ստուած էր Փեքէնի – Անգարա յարաբերութիւններու բարելաւման, վճռական կերպով ղէմ կեցաւ Իսրայէլի ի նպաստ առնուած որեւէ քայլի։

Անգարայի համար Արաբներու հետ դրացակցութիւնը աւելի եւս անհրաժեշտ նըկատուեցաւ, երբ Անգարա իր չահերը ուզեց պաչտպանել Կիպրոսի մէջ։ Սակայն այն ինչ որ երկար ժամանակ երեսի վրայ ձգուեցաւ, անհրաժեշտութիւն դարձաւ կարգ մը պատճառներով։ Ուաչինկթընի համագործակցութիւնը Մոսկուայի հետ, Եւրոպայի ամերիկեան ուժերու կրճատումը, Հելսինքիի խորհրդաժողովը, լուրջ մտահոգութիւն կը պատճառեն Անգարայի։ Ուրկէ նաեւ անոր դիւանագիտական քաղաքականութեան փոփոխութիւնը։

Թ. Ա. Թ.

ԵՐԵՒԱՆ ⇄ ՓԱՐԻԶ
ՀԵԹԱՏԻՊ

ԵՐԵՒԱՆ (Արմէնփրէս, Դեկտ. 20–21)

«ԱՐԱՐԱՏ»Ի ՆՈՐ ՄԱՐԶԻՉԸ

«Արարատ»ի նոր մարզիչն է Նիկիտա Սիմոնեան, որ 46 տարեկան է։ Մարզիչը չորս անգամ ատացած է Խորհ. Միութեան ախոյեանի ոսկէ չքանչան։ Մելպուրնի 1956ի ոլիմպիական խաղերուն նոյնպէս ախոյեանի ոսկէ չքանչան ատացած է։ Վերջին 11 տարիներուն ան գլխաւորեց Մոսկուայի «Սպարտակ»ը։ Անոր դեկավարութեամբ այդ խումբը երեք անգամ դարձած է Խորհ. Միութեան ախոյեան։

×

«ՑԻՍՈՒՆ ԳԱՐՈՒՆ»

Պաքուի մէջ լոյս տեսաւ վերջերս Լեռնային Ղարաբաղի հայ գրագէտներու գործերու հաւաքածոն։ «Ցիսուն Գարուն» խորագիրը կը կրէ այդ հաւաքածոն։

ԺԵՐԱՐ ՖԻԼԻՓի ՑԻՇԱՏԱԿԻՆ

Ֆրանսացի անուանի գերասան Ժերար Ֆիլիփի ծննդեան 50ամեակին նուիրուած յիշատակի երեկոյթ մը տեղի ունեցաւ Երեւանի մէջ։ Դերասանին կեանքն ու նոր բեմական գործունէութիւնը պատկերացուց Ս. Յասմիկեան։ Այս առթիւ քանի մը ժապաւէններ ցուցադրուեցան։

×

ՆՈՒՆԵՐ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆԻՆ

Նիւ Եորքէն Արսէն եւ Արմանդ Փուչման Երեւանի Մատենադարանին նուիրեցին հայերէն առաջին տպագրուած բառարանը։ Ասիկա Ֆրանչիսկոս Ռիվոլայի հայլատիներէն բառգիրքն է, լոյս տեսած 1621ին Միլանօ Բառարանին հեղինակը Միլանոյի Ամպրոզիոնի գպրոցի հայերէնի դասախօսն էր եւ, ըստ երեւոյթին, եւրոպացիներէն առաջինը, որ զբաղած է հայագիտութեամբ։ Մօտ 11·000 բառէ կազմուած բառարանը հեղինակը պատրաստած է Իտալիա ապրած հայ վաճառականներու խօսակցական լեզուն քննելով։

Բառարանը, որ բաղկացած է 479 երկսիւն մեծադիր էջերէ, իր չրջանին օգտակար հանդիսացած է, քանի որ հեղինակը յաճախ բառիմաստին հետ տուած է նոյն բառի հականիշ ձեւը, ինչպէս նաեւ քերականական ծանօթութիւններ։

350 տարուան հնութիւն ունեցող այս հազուագիւտ հրատարակութիւնը եղած է դործածական։ Արդարեւ, 1633ին գիրքը վերհրատարակուած է Փարիզի մէջ։

×

ԳԵՐՄԱՆ ԱՄՍԱԳԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԱՍԻՆ

Արեւելեան Պերլինի «Ֆրայէ Վելտ» հանդէսը քանի մը էջ նուիրած է Հայաստանի, իր վերջին թիւին մէջ։ Հանդէսը ներկայացուցած է աշխարհի ամէնէն հին քարտէսը՝ Բաբելոնեան (Ք. Ա. 5րդ դար), ուր հնագոյն վեց երկիրներու կարգին պատկերացուած է նաեւ Հայաստան։

×

ՅՈՒՅԱՀԱՆԴԷՍ ՊԱՂՏԱՏԻ ՄԷՋ

Պաղտատի մէջ տեղի ունեցաւ Հայաստանի գծագրիչ վարպետներու ցուցահանդէսը։ Տեղի ունեցան նաեւ համերգներ։

×

ՊԵԼԿՐԱՏԻ ՄԷՋ ՀԱՄԵՐԳ

Հայաստանի երգի – պարի խումբը՝ դեկավարութեամբ երգահան Էդկար Յովհաննիսեանի, չատ յաջող համերգ մը տուաւ Պելկրատի մէջ։ Անկէ առաջ յաջողութիւն գտած էր Զակրէպի, Սարայեվոյի, Լիուբլեանայի եւ այլ քաղաքներու մէջ։

ԳՐՔԵՐԻ ԵՒ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԵՏ

ԿԱՊԻՏԱԼԻՍՏ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ ԴՐԱՄ ՍՏԱՆԱԼՈՒ ԵՒ ԼՐՏԵՍՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Բ.

Ռուսիոյ իր զարծունեութեամբ, Պարվուսի վարկը բարձրացել էր գերման սոցիալ – դեմոկրատների աչքում, ուստի կառուցին մի քանի յօդուածներ գրեց «Նոյէ Ցայտ» (Նոր ժամանակ) օրգանի համար, Ռուսիոյ մասին:

Լոյս տեսաւ նաեւ Պարվուսի գիրքը՝ «Ռուսական Բաստիլում, յեղափոխութեան ժամանակ»: Եւ նոյնիսկ գերման սոցիալ – դեմոկրատների գլխաւոր օրգան «Ֆորվերցը» իր էջերը բացեց Պարվուսի առջեւ, մինչդեռ առաջները չէր ուզում նրա անունը լսել...

Սակայն Պարվուսը, չուտով, մեզադրուեց դրամներ իւրացնելու մէջ եւ գերման Սոցիալ – Դեմոկրատ կուսակցութիւնը գատի քաշեց նրան: Բանը նրանումն էր, որ Մ. Գորկու «Յատակում թատերախաղը ներկայացւում էր գերման բեմերի վրայ, աւելի քան 500 անգամ մի մեծ Բերլինում, եւ այդ գրամները պահում էր Պարվուսը: Այս կերպ՝ նա իւրացրել էր 100.000 մարք: Յետադայում Մաքսիմ Գորկին պատմեց այս էպիզոդը Լենինի մասին իր գրած մի յօդուածում: Ըստ Գորկիի, պայմանագիր էր կնքուած, եկամուտի 20 տոկոսը պիտի մնար Պարվուսին, իսկ մնացորդը պիտի բաժանուէր այսպէս՝ մէկ չորրորդ մասը՝ Գորկիին, երեք չորրորդը Սոցիալ – Դեմոկրատ կուսակցութեան գանձարկղին: Դրամի փոխարէն, Պարվուսը պետանիկուն մի նամակով յայտնեց, որ այդ բոլոր գրամները ինքը ծախսել է մի օրիորդի վրայ, Իտալիա ճամբորդելով...

Այդ մասին Մաքսիմ Գորկին գրում է. «Քանի որ նրա այդ չատ հաճելի ճամբորդութիւնը անձամբ ինձ վերաբերում էր մեծ քանորդով (մէկ չորրորդը հեղինակին պիտի տրուէր ըստ պայմանի: — Ա. Ա.), ապա ես իրաւունք համարեցի մատնացոյց անել Գերմանական կուսակցութեան կենտրոնական Կոմիտէին՝ մնացորդ երեք չորրորդի վրայ: Կենտ. Կոմիտէն անտարբեր դանուեց Պարվուսի ճամբորդութեան նկատմամբ: Աւելի ուշ ես լսեցի, որ դրա համար Պարվուսին դրկել էին ինչ որ կուսակցական ատեանների: Ինձով ասեմ, ես կը նախընտրէի որ նրա ականջները քաշէին», վերջացնում է իր խօսքը Մ. Գորկին:

ՊԱՐՎՈՒՍԸ ԳՈՐԾԱԿՑՈՒՄ Է ՀԱՑ ՓՈՂՈՎՐԴԻ ԴԱՀԻՃ՝ ՅԵՂԱՍՊԱՆ «ԻՓԹԻՀԱԴ»Ի ՀԵՏ

Սոցիալ – դեմոկրատների «պատասխանատու» գործիչներից մէկը, Ալեքսանդր Պարվուսը, որ ծնած է Ռուսիոյ մէջ, Մինսկի նահանգում, եւ ապրած է երկար տարիներ Ռուսիոյ մէջ, ուր եւ ստացած է իր կրթութիւնը, ներկայիս ապրում է Գերմանիա, ուր հարստացել է ռուսական յեղափոխութեան շնորհիւ:

Պարվուսը իր յօդուածում՝ «Ռեմոկրատիայի համար, յարիգմի դէմ» վերնագրով, ցրում է, որ «Գերմանիան ունի ամէնէն կարող Սոցիալ – Դեմոկրատ կուսակցութիւնը, ուստի Գերմանիան ներկայումս է իրրեւ մարմնացումը յառաջդիմութեան, եւ քանի որ Անգլիան եւ Ֆրանսան այս պատերազմում դաշնակիցն են ռուսական բռնապետական պետութեան, ապա պարզ է, թէ որտեղ են գտնւում Սոցիալիզմի թշնամիները»:

ՊԱՐՎՈՒՍԸ ԳԵՐՄԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ԼՐՏԵՍ

Ա. Աշխարհամարտի սկզբում Պարվուսը գործում էր գերման Սոցիալ – Դեմոկրատ կուսակցութեան ծրագրի համեմատ, բայց արմհետեւ նա միշտ սիրում էր դրամը եւ խորութիւն չէր դնում միջոցների մէջ, ապա շուտով նա դարձաւ գերման կայսերական կառավարութեան լրտեսը(2): «Յեղափոխութեան վաճառականը» գրքի մէջ, վերոյիշեալ աշխատութիւնը կազմել են ե՛ւ կայսերական Գերմանիայի, ե՛ւ Անգլիայի, ե՛ւ Աւստրեւհունգարիոյ ականաւոր պետական եւ կուսակցական գործիչների յուշերից, նաեւ՝ արխիւներից, մինչեւ իսկ Ամստերդամի Ինստիտուտի հոչակաւոր արխիւից փաստաթղթեր հաւաքելով եւ ուսումնասիրելով, վկայում են, որ գերման Արտաքին նախարարութեան հրատարակած փաստաթղթերից տեղեկանում ենք, որ 1914 թուի Օգոստոս 8ին Վիլհելմ Բ. կայսրը հրամայեց մեծ գումար յատկացնել Ռուսաստանում յեղափոխական բարոզչութեան համար:

Սրանից անմիջապէս յետոյ Վիէննայում եւ Լվովում ուկրայնացի սոցիալիստների խումբը աւազակական կառավարութեան դրամներով առեղծեց «Սպիլկ Վըզվոլենիա Ուկրայնի» (Ուկրայնացի – նայի Ազատագրութեան Միութիւն): Նրա նպատակն էր Ուկրայնան անջատել Ռուսաստանից եւ առեղծել ինքնօրէն ուկրայնական Պետութիւն: Աւստրեւհունգար կառավարութիւնից այդ Միութիւնը ստացնում էր մեծապատիւ դրամներ, քարոզչութիւն մղելու համար Աւստրիոյ եւ Գերմանիոյ ռուս գերիների, նոյնպէս եւ Ուկրայնացի մէջ:

Այս փաստը հաստատուած է Գերմանիայի Արտաքին նախարարութեան փաստաթղթերից, որոնք Բ. Աշխարհամարտից յետոյ ընկան Ամերիկացիների եւ Անգլիացիների ձեռքը, նոյնպիսի փաստաթղթեր նաեւ աւստրեւհունգարական Արտաքին նախարարութեան փաստաթղթերից, որոնք ապացուցում են որ ԼԵՆԻՆԸ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՍԿԶԲՈՒՄ «ՍՈՑԻԱԼ ՎԸԶՎՈԼՆԻԱ ՈՒԿՐԱՑՆԻ»Ի ՍՏԱՑԱԾ Է 5000 ԴՈԼԱՐ, ՎԵՐԱՀՐԱՏԱՐԵԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԻՐ «ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ» ԹԵՐԹԸ, որը նա հրատարակում էր Ջուիցերիայում:

Լենինի այդ թերթը տպւում էր փոքր քանակով եւ ժամանոց թղթի վրայ, ապա նրա առանձին օրինակները ուղարկւում էին Գերմանիա, ուր լուսանկարչական եղանակով արտատպւում էին ծխախոտի թղթի վրայ, գերմանական Ծովային նախարարութեան տպարանում, մեծ քանակութեամբ, յետոյ այդ թերթերը նախկին բոլշեւիկ, ապա՝ գերմանական լրտես դարձած Էստոնացի Ալեքսանդր Կեսկիւլի միջոցով ուղարկւում էին Կոպենհագէն եւ Ստոքհոլմ, այստեղից էլ՝ Ռուսաստան:

ԱՅՍ ԱՌԱՋԻՆ ՎՃԱՐՆ ԷՐ (5000 դոլար) ՈՐ ԼԵՆԻՆՆ ՍՏԱՆՈՒՄ ԷՐ ԳԵՐՄԱՆ ՀԵՏԱԽՈՒԶԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻՑ, ՈՒԿՐԱՑՆԱՑԻՆԵՐԻ ԳԾՈՎ:

Շարունակենք, սակայն, Պարվուսի մասին, այլ փաստեր եւ վճարներ հրապարակ հանելու համար:

«Սոցիալ Վըզվոլիւնիա Ուկրայնի»ի գլխավար Մելինովսկի Բաստիլը, դեռ պատերազմի սկզբում, Պոլսում հանդիպում է Պարվուսին: Սա իր պատրաստակամութիւնն է յայտնում ամէն կերպ օգնել Ուկրայնական Միութեան: Մելենովսկին Պարվուսին ծանօթացնում է Դոկտ. Յիմմերի հետ, որ գերմանական եւ աւստրեւհունգարական դիւանագիտական առաքելութեանց ներկայացուցիչն էր եւ գլխավորում էր Ուկրայնական Միութեան գործունէութիւնը. եւ Պարվուսը այդ ժամանակից սկսեց աշխատել ձեռք–ձեռքի Դոկտ. Յիմմերի հետ: 1915 թուի Յունուարին Պարվուսը խնդրեց Յիմմերին տեսակցութիւն յաջողեցնել իրեն եւ գերման դեսպան Ֆոն Վանդէնհայմի հետ: Յունուար 7ին Վանդէնհայմը ընդունեց Պարվուսին եւ սա բացայայտեց իր ծրագիրը: Այս ծրագրի մասին «Յեղափոխութեան վաճառականը» գրքում ասուած է հետեւեալը.

«Գերման կառավարութեան չահերը, — ասաց Պարվուսը գերման դեսպանին, — լիովին համընկնում են ռուս յեղափոխականների չահերի հետ: Ռուս սոցիալ – դեմոկրատները կարող են իրենց նպատակին հասնել միմիայն ցարիզմի լիակատար ոչնչացումով: Միւս կողմից՝ Գերմանիան չի կարող այս պատերազմից յաղթական ելնել, եթէ մինչ այդ յեղափոխութիւն չյարուցի Ռուսաստանում: Բայց յեղափոխութիւնից յետոյ էլ Ռուսաստանը մեծ վտանգ պիտի ներկայացնի Գերմանիայի համար, եթէ նա չանգա – մահատուի եւ վերածուի մի չարք ինքնուրոյն պետութիւնների: Ռուս յեղափոխականների առանձին խմբակցութիւնները արդէն գործում են այս ուղղութեամբ: Բայց նրանց միջեւ դեռ չկայ սերտ կապ եւ միութիւն: Մենշեւիկները, օրինակ, դեռ չեն միացել բոլշեւիկների հետ (3): Գործի յաջողութեան համար անհրաժեշտ է, առաջին հերթին, հրատիրել, եթէ հարկաւոր է՝ ժրնեւում, բոլոր յեղափոխական դեկավարների համագումար, որպէս առաջին քայլ նրանց միջեւ միութիւն առաջացնելու, բայց դրա համար կարիք կը լինի ՆՇԱՆԱԿԱՒԱՒԻՑ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ:*

Ահա՛ այդպիսին էր Պարվուսի ծրագիրը: Ցոն Վանդէնհայմը յաջորդ օրն իսկ, Յունուար 8ին, մանրամասն հեռագիր ուղղեց գերման Արտաքին նախարարութեան՝ Բերլին, ընդգծելով որ այս լուսածանօթ ռուս սոցիալիստի եւ հրապարակագրի գիրքը, պատերազմի հէնց սկզբից, եղել է «որոշապէս պրօ–գերմանական»:

Վանդէնհայմի հետ ունեցած տեսակցութիւնից յետոյ Պարվուսը համոզուած էր, որ պատասխանը կը լինի դրական, գերման Արտաքին նախարարութեան կողմից: Եւ Պարվուսը չէր սխալուել:

Ա. ԱՄՈՒՐԵԱՆ

(Շար. – 2)

---

(1) Այս երկու երկիրները դեռեւս չէզոք էին. պատերազմող կողմերը աշխատում էին նրանց դարձնել իրենց կողմը:

(2) Յիշել Սվետլանայ Ստալինեայի վերաբերութիւնը իր հօր՝ Ստալինի մասին. «Հայրս խորութիւն չէր դնում միջոցների մէջ, իր նպատակին հասնելու համար»: Բոլշեւիզմը եւս նոյնն է:

(3) Բոլշեւիկները պաշտօնապէս բաժանուեցին մենշեւիկներից 1912 թուի Յունուարին, երբ գումարեցին Պրագայի 6րդ համագումարը:

Ծաղկած Փշալարեր

(ՎԻՊԵՐԳ)

Գալով Մամոյին, ինչպէս ապամեց Փիլեմաւսկին, յանձնաժողովի առաջ նա հրաժարուեց որեւէ հարց – պատասխան – նից, առարկելով, որ ռուսերէն չգիտէ: Պէտք եղաւ բաղնիքի վարիչ Բաղիրեն – գովին կանչել որպէս թարգմանիչ, որից յետոյ Մամօն չի ժխտել, խոստովանել է, որ՝ այո, ինքն է «փեռան»:

Ահա թէ ինչ: Ինչ խօսք, ե՛ւ բաժան – մունքի ե՛ւ ճամբարի պետի համար աւելի ձեռնտու է, երբ կոմմերից մէկը կամ միւսն էլ՝ ժխտում են իրենց մէջ որեւէ կապի գոյութիւնը, այդ նշանակում է կինը «փորձանքի է հանդիպել» եւ ինքն էլ չգիտէ ի՞նչպէս եւ ե՞րբ, ինչպէս պատահել է Ցիսուս–Քրիստոսի մօտ, տիկին Թէ օրիորդ Մարիամի հետ: Իսկ երբ յայտնի են կոմմերը, նշանակում է տեղի են ունեցել սխատեմատիկ հանդիպումներ, տեւական աշխատանք, այդ նշանակում է վատ է դրուած հսկողութեան, աւելի չուտ վերահսկողութեան գործը տուեալ ճամբարում: Ահա թէ ինչու երկու պետերը նայում էին Մամոյին զժգոհ ու չար աչքերով, իսկ բարձր յանձնաժողովի անդամներից մէկը ճամբարի պետին ուղղելով խօսքը՝ կծու հեգնանքով ասել է.

— Հաչուեառման ենթարկէք ամուսնացած կալանաւորներին, եթէ պարզուի, որ բարձր է տոկոսը, Զաղսի բաժանմունք բացէք ճամբարում...

— Գուցէ կը լինեն այնպիսիք, — չարանակել է միւսը թունոտ ժպիտով, — որոնք չեն ցանկանայ Զաղսով ամուսնանալ կամ կնքել իրենց սիրոյ պատուհաններին, նրանց համար կարելի է մի փոքր եկեղեցի չհիմել: Տէրտէր ձեզ մօտ կը ճարուի երեւի...

Յանձնաժողովի երրորդ անդամը ոչինչ չի ասել եւ բաւականացել է միայնակ, չարագուշակ չատ բան ասող մի բացատրութեամբ.

— Տա՛, — Տա՛... այո՛...

Բայ անելով «կալանաւոր Մամօ Մահմուտովի գործը», յանձնաժողովը դատ, որ չարժի պրազուել ուրիշ մանր–մունր գործերով ու թեթեւ ընթրիքից յետոյ՝ ծանր տպաւորութեամբ մեկնել է ճամբարից, թողնելով երկու զոհ:

Դուռը բացուեց ու ներս մտաւ դեր – ձակոնոցի ցեխից ժենեա Լուգունովան, կապոյտ խոշոր աչքերով, բարակիկ մի կին՝ որի անուն–ազգանունն յայտնի դարձաւ ճամբարում այն դէպքից յետոյ, երբ նա իրեն եւ փիղիլեավսկուն միայն յայտնի պատճառներով ապտակեց վերջինիս եւ մնաց անպատիժ: Լուգունովան դիմեց Աչոտ դայուն.

— Վարպետ, ամանս կոտրուեց: Աւում են վատ նշան է: Տուէք ինձ նորը եթէ կարելի է...

— Կարելի է, — ասաց Աչոտ դային ու մատս չորանոց: Լուգունովան նրա հետեւից:

Շատ չանցած նա դուրս եկաւ չորանոցից, հրաժեշտ տուեց մեզ ու դնաց դատարկ ձեռքով: Պարզ էր, որ ուրիշ դրծով էր եկել:

Աչոտ դային նստեց դազգահի մօտ եւ պրպտուեց ատացած երկտողի ուսումնասիրութեամբ: Երկտողը Գերմանուհուց էր. դա մի թղթի կտոր էր փոքրաթուած չորի կտորով, կարուած խաչաձեւ կտրով: Երկտողը գրուած էր խնամուած ռուսերէնով, ինչպէս երեւում է, նրան օգնել էին.

«Սիրելի մայեսթրօ, կատարուեց ապահովին, որը, երեւի իմ անձնական ճակատագրի ձգձգուած եւ քերականական սխալներով հարուստ նախադասութեան եզրափակիչ մասն է: Եթէ Մումուն ողջ եւ առողջ դուրս եկաւ պատժախցից, համբուրիր իմ կողմից եւ ասա՛, թող մեր մասին չմտածի: Գրում եմ, բայց պիտեմ, որ անկարելին եմ պահանջում: Մի խօսքով՝ եղածը պիտի լինէր եւ լինելիքը պիտի լինի: Զգիտեմ «մնաս բարով» ասեմ թէ «ցտեսութիւն», որովհետեւ երկուսն էլ սարսափելի են: Ջերմ բարեւներ ձեզ եւ տղաներին. ես ձեղնից միայն եւ միայն լաւը տեսայ եւ հոգուս չափ չնորհակալ եմ: Ձեր՝ Լ. Շ.»:

Ահա այդ երկտողը: Ուշադրաւն այստեղ, ի հարկէ, «չգիտեմ «մնաս բարով» ասեմ, թէ «ցտեսութիւն», որովհետեւ երկուսն էլ սարսափելի են» նախադասութիւնն է: Պէտք է միայն հասկանալ: «Մնաս բարով» նշանակում է, որ եթէ երեխան ողջ մնայ, կ'ուղարկեն իրեն հեռու ու անվերադարձ. «ցտեսութիւն» նշանակում է՝ կ'արժանանան իրար տեսութեան, եթէ երեխան... մահանայ...

Յաջորդ այցելուն Բիչկօն էր: Նա կարճ մատակը խրել էր թաղիքէ թեթեւ ոտնամանի փողից ներս: Ոտնամանների վարի մասը երեսպատուած էր սեւ կաշիով, որը տալիս էր կրողին վայելչութիւն, ան – պա՛մ ինքնավստահութիւն.

ԳՈՒՐԳԷՆ ՄԱՀԱՐԻ

(38 – Շար.)

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՅԱԿՈՑՔ

(1828–1868)

Պ. ՊԵՇԻԿԹԱԼԵԱՆ

—o—

1820–1860ական թվականների հայ հասարակական կյանքի ամենաուշագրավ երևույթներից մեկը Հայկական Հայաստանի ազատագրության գաղափարի ծագումն ու տարածումն է։ Այդ գաղափարի ծագումը կապված է Ռուսաստանի հետ Հայաստանի միացման և ռուսական տիրապետության հաստատման հետ։ Ռուսական տիրապետությունը, որ ազատեց հայ ժողովրդին պարսկական լծից, ստեղծեց նրա համար ավելի նպաստավոր պայմաններ ազգային կյանքի զարգացման համար։ Ռուսական տիրապետության հաստատումից հետո հայ ժողովրդի առաջադեմ մտավորականության մեջ սկսեցին տարածվել ազատագրական գաղափարներ

ԿԱՊՈՅՏ ԽԱՉԻՆ

Կապոյտ Խաչի Լիոնի մասնաճիւղը 10 հազար ֆրանք (մէկ միլիոն) կը նուիրէ կայանի նոր չէնքին կառուցման ի նպաստ։

ՓՈԽԱՆ ԾԱՂԿԵՊՍԱԿԻ

Տէր եւ Տիկին Միքայէլ Ճանիկեան 30 ֆր. կը նուիրեն «Յառաջ»ին եւ 30 ֆր. Իսիի Հայ Մշակոյթի Տան խաչիկ Տրդատեանի եւ Տիգրան Մուրատեանի մահուան տխուր առիթներով (Մարսէյլ), Սերաստիոյ Խորանայ դիւղէն։

(Մտանալ «Յառաջ»էն)։

Ամանորի Առթիւ «ՅԱՌԱՋ» կը Նուիրեն

Ոմն, Փարիզէն, մէկ տարեկան «Յառաջ» կը նուիրէ Տիկին Կարապետեանի (Փարիզ 20րդ)։

ԱՄԱՆՈՐԻ ԱՌԹԻՒ

Ինչպէս ամէն տարի, Ամանորի առթիւ, Պ. Հրանդ Պալեան վերապյէն հեռեւեալ նուէրները կ'ընէ։— Կարմիր Խաչին 200, Կապոյտ Խաչին՝ 200, Սամուէլ Մուրատեան վարժարանին՝ 200, Դպրոցասէրին՝ 200, Ազգապահպանմանն՝ 200։

(Մտանալ «Յառաջ»էն)։

DIMANCHE 7 JANVIER A 15 H.

Salle St. Dominique, 92, Rue St. Dominique, Métro Invalides

MATINÉE ARTISTIQUE DE DANSES

Organisée par le

Ballet Arménien de ÉVA ARZOUIAN

Au profit de l'Ecole des Sœurs Arméniennes d'Arnouville - les - Gonesse

ARBRE DE NOEL ET DISTRIBUTION DE FRIANDISES

Prix des places : 10 et 20 F. 5 F. pour l es étudiants et les enfants

S'adresser : HERATCHIAN, 6 Rue Lamartine
MARKARIAN, 32 Rue de Trévise
ou à Mme PETROSSIAN, — Tél. : 551-39-09

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Հ. Բ. Ը. Միութեան Մարսէյլի Տիկնանց Օժանդակ Մարմնի տարեկան մեծ պարահանդէսը 13 Յունուար, Շաբաթ դիշեր, Օթէլ Սվլանտիսի սրահին մէջ։ Հայկական չէնչող միջավայր, ճոխ պիւֆէ եւ ընտիր նուագախումբ։

×

Կապ. Խաչի Սեւրանի մասնաճիւղի տօնածառը Յունուար 14ին։

×

Մարսէյլի Հ. Բ. Ը. Միութեան եւ Ս. Սահակ – Մեսրոպ Մայր եկեղեցւոյ վարչութիւններու հովանաւորած հայերէնի դպրոցին տարեկան տօնածառը տեղի պիտի ունենայ 7 Յունուար, կիրակի օր, կէսօրէ ետքը ժամը 4ին, Միութեանս սրահին մէջ, 7 Ռիւ Փափէր։

×

Կապոյտ Խաչի Մարսէյլ քաղաքի դպրոցական տօնածառը կիրակի 7 Յունուար ժամը 3ին Ս.Յարոնեան ակումբը եւ մասնաւորաբար կը հրաւիրուին կայան եղած բոլոր երախաները։

×

Հայ Արիներու Միութեան տարեկան ցերեկոյթը կիրակի Մարտ 4ին *կէսօրէ վերջ ժամը 14·30ին* Սալ տը լա Շիմի։

×

Կապոյտ Խաչի Մարսէյլ քաղաքի ճաշարահանդէսը Շաբաթ Մարտ 24ին։

×

Վասպուրականի հերոսամարտի 58րդ տարեդարձը կը տօնուի նախաձեռնութեամբ Տէսինի մասնաճիւղին, մասնակցութեամբ Վիէնի միութեան եւ հովանաւորութեամբ Մարսէյլի կեդր. վարչութեան՝

Մայիս 6ին

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ

ՀԱՄԱԽՐԲԱՐԴՑԻԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

Ֆրանսայի չրջանի

1973 Ի ՕՐԱՑՈՅՑԸ

Գին 3 ֆրանք

Դիմել մասնաճիւղերու վարչութեանց կամ

K. Khamarian
9, Avenue Camille Pelletan
13 - Marseille (2e)

ՈՒԽՏԱԳՆԱՑՈՒԹԻՒՆ

ՄԱՐՍԷՅԼԻ ՍՐԲԱՎԱՅՐԸ

Դեկտ· 28ին Հինգշաբթի օրը ժամը 20–22
(Salle Mazenod — Rue d'Aubagne)

Վարդվն Ա. Կաթողիկոսի եւ Կարդինալ Գրիգոր–Պետրոս Աղաճանեանի կեանքին հայող չարժանկարներ կը լուսարձակուին։

Այս առթիւ, Լեւոնեան վարժարանի աշակերտներէն ոմանք, հակիրճ կերպով պիտի խօսին մեր ժողովուրդին սրտին մօտ հարցերու չուրջ։

Մուտքը ազատ է բոլորին։

SAINT-PLACIDE IMMOBILILR

100, Rue de Vaugirard
75006 PARIS
Tél. 222-18-49 et 544-08-76

Heures d'ouverture : :

de 9 h. 30 à 19 h. tous les jours
Le Samedi de 9 h. 30 à 12 h.

×

Տնօրէնուհին՝ ՏԻԿԻՆ ՏԱՎԼԱՇԵԱՆ

ձեր տրամադրութեան տակ է ձեզի խորհուրդ տալու եւ առաջնորդելու համար, փարիզ թէ արուարձան յարկաբաժին մը ծախելու, գնելու վարձելու կամ վարձու տալու համար։

H. PASDERMADJIAN

Professeur à l'Université de Genève

Histoire de l'ARMÉNIE

DEPUIS LES ORIGINES JUSQU'AU TRAITE DE LAUSANNE

Troisième édition, Paris, 1971, 437 pages
Reliure pleine toile

Prix : 36 Frs
Avec les frais d'envoi : 39 Frs

LIBRAIRIE ORIENTALE H. SAMUELIAN
51, Rue Monsieur-le-Prince, Paris (6e)
C. C. P. 1278-35, Tél. : 324-88-65

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐԸ

ՓԱՐԻԶԻ ՄԻՋ

Նախաձեռնութեամբ Կապ· Խաչի Շրջ· վարչութեան, մասնակցութեամբ Փարիզեան չրջանի իր մասնաճիւղերուն, Մանուկներու Օրը կը տօնուի Փարիզի մէջ
ՅՈՒՆՈՒԱՐ 28ԻՆ

×

ԼԻՈՆԻ ՄԻՋ

Նախաձեռնութեամբ Կապոյտ Խաչի Լիոնի մասնաճիւղին Յունուար 14ին։

×

ՊՕՄՈՆԻ ՄԻՋ

Կապոյտ Խաչի Պօմոնի մասնաճիւղին դպրոցին տօնածառի հանդէսը 7 Յունուար կիրակի կէսօրէ վերջ ժամը 3ին եկեղեցւոյ սրահին մէջ։

Կաղանդ պապան կը ներկայանայ պէսպէս նուէրներ բաչխելու փոքրիկներուն։

×

ԿՐԸՆՈՊԼԻ ՄԻՋ

Նախաձեռնութեամբ Կապ· Խաչի մասնաճիւղին, մեծ պատրաստութեամբ կը տօնուի Յունուար 21ին կիրակի ժամը 15·30ին։

×

ՏԷՍԻՆԻ ՄԻՋ

Նախաձեռնութեամբ Կապ· Խաչի մասնաճիւղին, Յունուար 14, կիրակի կէսօրէ վերջ ժամը 15ին, Քաղաքապետարանի չքեղ սրահին մէջ։

Գեղարուեստական բաժին դպրոցի աշակերտներու կողմէ։— Երգ, արտասանութիւն եւ հայկ· պարեր։ Նուէրներ կապանդ պապային կողմէ։

×

ՎԻԷՆԻ ՄԻՋ

Նախաձեռնութեամբ Կապոյտ Խաչի Վիէնի մասնաճիւղին Յունուար 7, կիրակի կէսօրէն վերջ ժամը 15ին, Գասպար Իփէկեան ակումբին մէջ՝ 40, Ռիւ Վիքթոր Ճոժիէ։

Երգ, արտասանութիւն, պար, դպրոցի աշակերտներու կողմէ։

Կաղանդ պապան կը ներկայանայ նուէրներ բաչխելու համար փոքրիկներուն։

×

ՊՈՒԼ· ՕՏՏՈՑԻ ՄԻՋ

Կապոյտ Խաչի Պուլ· Օտտոյի մասնաճիւղի վարչութիւնը կը տօնէ մանուկներու օրը 14 Յունուար կիրակի կէսօրէ վերջ ժամը 15ին, եկեղեցիին մէջ։ Կը հրաւիրուի հայ հասարակութիւնը։

ԽՆՋՈՅՔ

ՏԷՍԻՆԻ ՄԻՋ

Վասպուրականի Հայր· Միութիւնը Ծնունդի առթիւ խնջոյք մը կազմակերպած է ճաշով, Յունուար 6ին, ժամը 20էն մինչեւ լոյս, Քաղաքապետարանի սրահին մէջ։

ԾՈՒՇԱՏԵՏՐ

ԿԱՊՈՑՏ ԽԱՉԻ Պանէօ – Քաչանի մասնաճիւղը ընդհ· ժողովի կը հրաւիրէ բոլոր ընկերուհիները յառաջիկայ Հինգշաբթի Դեկտ· 28, ժամը 20·30ին ընկերուհի Գարաօղլանեանի բնակարանը, Բրեկենդան տօնելու պատրաստութեան համար։

IMPRIMERIE SPÉCIALE
DU JOURNAL «HARATCH»
32, RUE DE TRÉVISE — PARIS (9e)

ԱՄԱՆՈՐԻ ԱՌԹԻՒ ԿՈՉ

Սիրելի հայրենակիցներ,

Ահա տօնական օրերը, Նոր Տարի եւ Ս· Ծնունդ, որոնք պատեհութիւն կուտան, ընտանեկան յարկերէն ներս եւ բարեկամական չրջանակին միջեւ սիրոյ եւ համակրանքի սիրազեղ զգացումներու եւ նուէրներու փոխանակութեան։

Խիստ փափաքելի պիտի ըլլար որ սոյն խրախճանքի պահերուն, յիչէիք նաեւ մեր հոգատարութեան ներքեւ գտնուող տարեցները եւ բախտազուրկները, որոնց թիւը երկու հարիւրէ աւելի է եւ որոնք կ'օգտուին ամէն ամիս ղրամապէս, պարեղէններով եւ ածուխի համարժէք ղումարով։

Փարիզի Աղքատախնամ ընկերակցութիւնը, կը համարձակի կոչ ընելու որ գաղութը չմոռնայ սոյն դժբախտները այս բացառիկ օրերուն լայնօրէն հատցնելով իր նուէրները, առիթ տալով մեր կազմակերպութեան բարեգործելու համար անոնց եղած աչակցութիւնը։

— Ի սրտէ չնորհակալութիւն բոլորին կողմէ։

— Ջերմ չնորհակալութիւն նոյնպէս մեր կողմէ ձեր բերելիք եղբայրական առատաձեռն ժէտօնին որ երախաիքով պիտի արձանագրուի։

Դրամական առքումները կարելի է ընել պանքի եւ փոսթի չէքերով, յանուն՝

ASSOCIATION ARMENIENNE D'AIDE SOCIALE
77, Rue La Fayette — 75009 PARIS
CCP. PARIS 10 775 28

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ
ԱՂՔԱՏԱԽՆԱՄ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ

ՔԱԼՈՒԹԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

ՆՈՐ ԳԻՐՔԵՐ – ՆՈՐ ՍԱԼԵՐ

Աղգապահպանման լաւագոյն միջոցներէն մէկն է կարդալ եւ ծանօթացնել հայ երգն ու երաժչտութիւնը, օտարներուն եւ մեր մատաղ սերունդին։ Հասցէ՝

43, Rue Richer, Paris (9e) — Métro Cadet — Tél. 770-25-46

ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ԱՌԹԻՒ՝ գիրք եւ սալ նուիրեցէք

Գրատունը ճոխ է բազմատեսակ գրքերով եւ պատրաստ՝ ապսպրանքները ընդունելու ամէն վայրերէ։

Կը ծախուի նաեւ Նայիրի եւ Սիփւոճ չարաթաթերթերը։

Առաքման ծախքը գնողին վրայ է։
Գրատունը բաց է ամէն օր ժամը 10էն սկսեալ մինչեւ երեկոյեան 7ը։

ՀԻՆԳՇԱԲԹԻ
28
ԴԵԿՏԵՄԲԵՐ
JEUDI
28 DECEMBRE
1972

Le Numéro 0,70 F.

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ
ՀԻՄՆԱԴԻՐ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

HARATCH

Le Seul Quotidien Arménien en Europe Occidentale
Directrice : Arpik Missakian
32, rue de Trévise Paris 9

— Tél. : 770-86-60 —
C. C. P. Paris 15069-82
Fondé en 1928
R. C. Seine 57 A 2781

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻԻՆ

Ֆրանսա	Տար. 120 փր.	Վեցամսեայ	65 փր.
Արտասահման	Տար. 135 փր.	Հատը	0,70 փր.

48ՐԴ ՏԱՐԻ — ԹԻԻ 12·600

Fondateur : SCHAVARCH MISSAKIAN

48e ANNÉE — N° 12.600

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՆԻՔԱՐԱԿՈՒԱՅԻ ՕԴՈՒՕՒԹԻՒՆԸ ՂԱԲԵՐԳՈՒԹԻՒՆԸ

—o—

Նիքարակուայի մայրաքաղաքը՝ Մանագուա առջի օրուան ցօրաւոր չափին հեռաւոնգով աւերակոյտի վերածուած է։ Պաշօնական աղբիւրներու տուեալներով, 3000էն 6000 մեռեալ կայ եւ 20·000 ալ ծանր վիրաւոր։ Նախապէս 20·000 մեռեալի մասին խօսք կ'ըլլար։ Յամենայն դէպս օդուժեան չոկատները կը փորձեն մէկ կողմէ թաղել կամ այրել մեռելները, որպէսզի առաջքն առնեն համաճարակ – ներու, մինչեւնոյն առեն կ'աշխատին ապահով աւերակոյտերու տակ մնացողները։

Պաշօնական աղբիւրները կը չեշտեն, թէ դեղերը չեն որ կը պակսին, քանի որ պետական երկիրներէ մեծ քանակութեամբ դեղօրայք կը հասնի՝ բժիշկներու եւ հիւանդապահներու հետ։ Ուտեստեղէնի պակասը կը զգացուի։

Իշխանութիւնները որոշեցին պարպել ամբ քաղաքը իր բնակիչներէն (չափէն առաջ 300·000 բնակչութիւն ունէր Մանագուա)։ Շատեր կը մերժեն հեռանալ իրենց տուներէն, որով կառավարութիւնը որոշած է պարտադրել իր որոշումը։

Ֆրանսա, ինչպէս ուրիշ բազմաթիւ երկիրներ օդնութեան հասած է, առաջին առթիւ օդանաւ – հիւանդանոց մը զրկելով ու նաեւ հագուստ–կապուստ, վեր – մակ եւ հականեխիչ դեղեր։

Ֆրանսական կարմիր Խաչը սիրով նըւէրներ կ'ընդունի այս նպատակով (Շէք–փոսթալ՝ Փարիզ 60·000)։

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՀԷՐԻ ԹՐՈՒՄԸՆ, մեռաւ առջի օր, 88 տարեկանին, երկար հոգեվարքէ մը եաք։ Կառավարութիւնը ապագային յուշարկութիւն պիտի ընէ։ Յանուն Ֆրանսայի նախարար Փլէվէն ներկայ պիտի ըլլայ արարողութեան։ Թրումըն Ռուզվելթի կը յաջորդէր 1945ին եւ յանկարծ կ'լսէնար ծանր պատասխանատուութեանց ներքեւ, եւ չէր վարաներ նոյնիսկ առաջին հիւլէական ռումբը նետելու որոշումը տալ։ Արդարեւ Թրումընի անունը կապուած պիտի մնայ մինչա Հիրոշիմային։ Իր վարդապետութիւնն էր օգնել այն երկիրներուն որոնք համայնավարութեան «սպառնալիքին տակն են»։ Այդ իսկ պատճառով Թրումըն առաջին օրէն սկսաւ լայն օժանդակութիւն ընծայել Յունաստանի եւ Թուրքիոյ։

ՎԻԼՖՆԱՄի վրայ ռումբերը մինչա կը տեղան եւ յայտնի չէ թէ ո՞վ ի՞նչ նպատակ կը հետապնդէ։

ՍԱՆԹԻԱԿՈՑԻՆ հասած լուրերը կը հաստատեն թէ Անդեան լեռներու վեր – ապրողները մարդակերութեամբ է որ կրցած են դիմանալ։ Արդարեւ, ծանօթ է որ առջի օր 16 հոգի գտնուած է, ողջ, Անդեան լեռնաշղթային մէջ։ Ասոնք հրաշքով վերապրած էին Հոկտեմբերին պատահած օդանաւի արկածէ մը։ Պաշտօնապէս հաստատուեցաւ թէ ասոնք ապրած են որովհետեւ իրենց մեռած ընկերներուն մինը կերած են։

ԱՐԵՒՄՏԵԱՆ ՊԵՐԼԻՆԻՆ տասնեակ հազարաւորներ, օգտուելով միջ–գերման համաձայնագիրի պայմաններէն, ծանօթացան օրերու առթիւ Արեւելեան Պերլինի այցելեցին։ Անոնք արտօնութիւն ունէին նաեւ այցելելու Լայփցիկ, Փոցտամ, Վայմար եւ այլ քաղաքներ, որոնք արգիլուած չրջաններ կը նկատուէին մին – չեւ հիմա։ Միջ–գերման համաձայնութիւնը իրաւունք կուտայ Արեւմտեան Պերլինցիներուն տարին ընդամէնը 30 օր Արեւելեան Գերմանիա այցելել։ Արեւելեան Գերմանացիները արտօնութիւն չեն տանար Արեւմտեան Գերմանիա այցելելու նոյն համեմատութեամբ։

ՖՐԱՆՍԱՑԻ Ընկերվարական կուսակցութիւնը ճղում մը հրապարակած է, ուր կը չեշտուի թէ Ընկերվարական Միջազգայինի համագումարը մաս կը կազմէ անոր տարեկան հերթական նիստերուն եւ պէտք չէ կարծել որ ընտրական զրպարտութիւններ կան։ Մոլիայի փոխ–նախագահ Տիկին Կոլտա Մէյըրի ներկայութիւնն ալ շատ բնական երեւոյթ մըն է։

ԴՐԱՄԱՏՈՒՆԵՐԸ թէեւ զործադուլի չարժումի մը ձեռնարկած են Դեկտ. 29էն Յունուար 4, բայց եւ այնպէս կիշէնները բաց կը մնան։

քի ըեմէն քաղուած տրամագրութիւններն ու ապրումները։

«Ու անոնք եկան բամպան։ Ու անոնք հայ գաղութեան մատուցուեցան հարուստ խորքով եւ ինքնատիպ կազապարով։

«Որովհետեւ, բանաստեղծը ապրեցաւ իր տաղնապը՝ արուեստագէտի եւ, միաժամանակ, հայ մարդու անզոհականքը։

«Սփիւռքեան տառապ իր լրումին հասած վիճակի մէջ կը դանենք անոր մօտ։ Անկասկած Հայ էր ան իր սրտին զարկերակովը, իր մտքի պիտակցութեամբը, կամ՝ ինչպէս ասովորութիւն է ըսել նման պարագաներու՝ իր ողջ էութեամբը։ Այլ ատկայն ան ծնած էր օտար ափերու վրայ եւ վառնայէն Պոլիս, Նովորիսկէն Փարիզ, մշակոյթներու եւ քաղաքակրթութիւններու հնոցին մէջ, ինչպէս լաւան ժայթքող, իր հունը փնտռեց ան։

«Եւ, Միջերկրականը այլեւս դադրեցաւ դուռ աշխարհագրական դիմապիծ մը ներկայացնելէ անոր համար։ Միջերկրականը քերթողին համար լազուարթ ծով մը չէր լոկ, ուր ուրիշներ գացած էին հոն կապտորակ երգեր յօրինելու։ Այլ անիկա մշակոյթներու հնոց մը դարձաւ։ Փառատղին հին եւ նոր ճամբաներու։ Պաշտե – րուկը՝ հեթանոս եւ քրիստոնեայ աչ – խարհներու։

«Քերթողը իր էութեան դրոշմը գտաւ հոն, ինչպէս գինքը ծնող ժողովուրդը գայն գտած էր այնտեղ, գործեր չարուցանակ։

«Սարաֆեան այս ափերուն վրայ նոր տրոփով եւ նոր կշռոյով երգեց հայ արուեստի փառերը՝ այն որ կուգար թէ – քէեանի տեսլականով, Մեծարենցի բնանկարով կամ Զարդարեանի չարահիւսական դեղեցկութեամբ։

«Ահա թէ ինչո՛ւ Յառաջ, որ Սարաֆեանի գրական ընտանիքն էր գործած տասնամեակներէ ի վեր, այսօր, առաւել անձկութեամբ կ'ըմբռնէ բացը, որ օր աւուր կ'ընդլայնի անդունդի մը նման, սփիւռքեան իրականութեան մէջ, Սարաֆեաններու մահով։

«Պաշտօն։ Արդարեւ տասկ հասկերէ կազմուած դեղեցիկ փունջ մը կը ներկայացնէ Սարաֆեանի քերթողութիւնը։ Եւ, որովհետեւ, տասապային աշխատանքով էր երկնուած ան։ Եւ, որովհետեւ, ապրուած տաք սիրտ մը եւ իմաստութեան փայլեր կային հոն, ան, նման վաստակաւէտ մշակին, Մեծատաքնէի Այգեպանին հրամցուց իր վաստակը, երկիւղած խոնարհութեամբ։

—Տէ՛ր, աշխատանքս է բերքուած,
Եւ ընդունէ՛ զայն՝ որպէս աղօթք
հաւատք լուսեղէն,
Տէ՛ր, որ անվերջ կը շինես ու կը շինուիս
նոյն ատեն»։

×

Ապա, գազաղը առաջնորդուեցաւ Թիէի դերեզմանատունը, ուր, Սարաֆեան առաջատպէս պիտի հանդչի մինչեւ որ իր վերջնական հանգիստը գտնէ Քան, Մի – ջերկրականի ափին։

Ընտանիքէն զատ, ծաղկեպատկներ զրկած էին Ֆրանս–Սուար եւ «Յառաջ»։

Գերեզմանատունը թաղուած էր ձիւ – ներու տակ, եւ հայ բանաստեղծը պիտի սիրէր այդ անիրական տեսարանը, որ կը նմանէր Ծնունդի հէքեաթի մը։ Ձերմակ ծառեր խաղաղութեան եւ մահուան մասին կը խօսէին, հայ քահանան Հոլոցը կ'արտասանէր, մինչ երիտասարդներ կը պպային թէ որքան անզոհ է Սփիւռքի հայ գրագէտին մահը, Դեկտեմբերի այս օրը, երբ կը սկսի ձմեռը, Սփիւռքի մեր գառն ձմեռը, որ նոր գարունի մը լոյսը չի տեսներ։

ՆԻԿՈՂՈՍ ՍԱՐԱՖԵԱՆԻ ՅՈՒՂԱՐԿԱԻՈՐՈՒԹԻՒՆԸ

—o—

Շաբաթ, Դեկտ. 23ին, փարիզի Ս. Յովհ. Մկրտիչ եկեղեցւոյ մէջ կատարուեցաւ Նիկողոս Սարաֆեանի յուղարկաւորութիւնը։ Եկեղեցին լեցուած էր տարաբախտ գրագէտին գրչի ընկերներով եւ բազմութեամբ մը որ եկած էր իր վերջին յարգանքը մատուցանելու Սփիւռքի վերջին մշակներէն մէկուն։

Արարողութենէն եաք, կաթ. պատուիրակ Սերովբէ Արք. Մանուկեան ողեկոչեց Սարաֆեանի յիշատակը եւ չեշտեց այն նոր բացը, որ կը ստեղծուի անոր մահով։ Բայ մը, որ ուելի զգալի է այսօր քան քանի մը տասնեակ տարիներ առաջ, վասնզի այսօր Սարաֆեաններու տեղը հասնողներ չկան եւ այդ իսկ պատճառով բոլորին ցաւը ուելի մեծ է եւ ստեղծուած պարապներու տպաւորը՝ ուելի սուր։

Յանուն «Յառաջ»ի խմբագրութեան, Ժիրայր Միքիճեան հետեւեալ խօսքերով, ողեկոչեց անհետացող գրագէտին թաղման յիշատակը.—

«Ժամանակաշրջանի մը մէջ, երբ մարդկային հոգին իսկ նիւթեղէն երեւոյթ մը նկատելու ձգտումը կը տիրէ, երբ կեանքի իմաստը — դո՛ւք ըսէք խորհուրդը — փետրաթափ կաշաղակի տեսքն է առած – ցած, արուեստը կը մնայ այն միակ մարդը, սեռը մեր կեանքի զանազան երեսներուն, ուր մարդիկ դեռ կրնան կրօտուղ, անհետացող դեղեցկութիւնը գտնել։

«Բայց թերեւս այդպէս էր բոլոր ժամանակներու մէջ։ Ամբոխը՝ յարաչարժ կեանքն է, մարդը՝ այն ստեղծագործ ուժը, որով կը ստեղծուին հոգեկան ինքնատիպ արտայայտութիւնները։ Արուեստը՝ իր բազմազան երեսներով։

«Նիկողոս Սարաֆեան եղաւ այն քերթողը, որ սփիւռքեան կեանքի մեր թոհ ու բոհին մէջ, առօրեայի մեր տենդին մէջ, մենակեաց առաքեալի մը նուիրումով սկուտեղի վրայ մեզի հրամցուց զբաղխակիը արուեստը.— Հայ Քերթողութիւնը։

«— Տէր, աշխատանքս է քերթուած։

«Գրականութիւնը անոր համար մնայ հոգեկան հեւք մը, որով զոյն եւ դիմապիծ կը ղգենուն կեանքի եւ բնութիւնը։ Ան ոչ միայն ներկայացուց իր ժամանակի ապրումները, այլ եւ ներկայացուց իր ժամանակի ապրողները։ Ան ոչ միայն ներկայացուց իր ժամանակի ապրողները, այլ եւ ներկայացուց իր ժամանակի ապրողներուն ապրումները։

«Ան ոչ միայն ներկայացուց իր ժամանակի ապրողները եւ ապրում

ԳՐՔԵՐԻ ԵՒ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԵՏ

ԿԱՊԻՏԱԼԻՍՏ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ ԴՐԱՄ ՍՏԱՆԱԼՈՒ ԵՒ ԼՐՏԵՍՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Գ.

Նա հանդիպումներ ունեցաւ վերմանղիստանների հետ եւ վստահեցրեց, որ մինչեայն ռուս սոցիալ – դեմոկրատները ի վիճակի են նախապատրաստել նոր ընդհանուր գործադուլ՝ «Ազատութիւն եւ խաղաղութիւն»նշանաբանով, և ընդգծում էր, որ բոլշեւիկները, Լենինի գլխաւորութեամբ, ներկայացնում են ամենէն ազդեցիկ կազմակերպութիւնը: Պարվուսը հաշւում էր, որ բոլոր սոցիալ – դեմոկրատ կուսակցութիւնները՝ բոլշեւիկները եւ մենշեւիկները, հրէական «Բունդ»ը, Ուկրայնական «Սպիլկա»ն, Լեհաստանի երկու Սոցիալիստական կուսակցութիւնները, Ֆինլանդական եւ լատիշական Սոցիալիստական կուսակցութիւնները եւս պիտի ներառուեն միացեալ ճակատների մէջ: Այս բոլոր Սոց. – Դեմոկրատ կուսակցութիւնների զեկավարների գումարուելիք համաժողովը Պարվուսը լաւագոյն միջոցն էր համարում՝ նպատակին հասնելու համար: Սակայն սրա հետ նոյն ինքն Ռուսիայում պիտի ծաւալել խաղաղութեան լայն քարոզչութիւն. սրա համար պէտք է ուժգին դրամական օժանդակութիւն ռուս տարագիր մամուլին, որ հակապատերազմական եւ պարտուողական – կան քարոզչութիւն կը վարի:

Այս առթիւ, Պարվուսը զերման կառավարութեան ներկայացրած իր յուշագրում ակնարկ էր անունը «Գոլոս» (ձայն) լրագրի (1) որ լոյս պիտի տեսնէր Մարտովը եւ Տրոցկին:

Պարվուսի ներկայացրած ծրագիրը՝ զերման կայսերական կառավարութեան՝ բաղկացած էր 11 կէտերից, որոնցից առաջինը յայտարարում էր՝ «ԵԼՄՏԱԿԱՆ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ ՌՈՒՍ ՍՈՑԻԱԼ–ԴԵ – ՄՈԿՐԱՏ ԲՈԼՇԵՒԻԿԵԱՆ ԲԱՆՈՒՈՐԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ, ՈՐԸ ՅԱՐԻՋԱՄԻ ԴԷՄ Է ԿՌԻՒՄ ԲՈԼՈՐ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՆՀՏԻՐ: Ներա զեկավարները գտնւում են Զուրիցերիայում, Լենինի խմբակը լաւագոյն երաշխիքն է ապագայ համառուսական զործադուլի յաջողութեան:

Բերլինի կառավարութեան ձեռնաու էր Ռուսիոյ քայքայումը եւ անջատ հաշտութիւն կնքելը, զեռեւս 1915 թուի Յուլիսին: Պէտք էր միայն՝ Ռուսիոյ մէջ առաջացնել ուժեղ անկարգութիւններ եւ խառնակութիւն, Ռուսիան անջատելու դաշնակիցներից եւ չեզոքացնելու: Սակայն Պարվուսն ու Լենինը կողմնակից չէին Ռուսիոյ անջատ հաշտութեան, որովհետեւ կարող էր կրկնուել 1906ը, այսինքն՝ յեղափոխութեան հզմումը:

Պարվուսը լիազօրութիւններ ստացաւ զերման լրտեսական կազմակերպութիւնից, նրան յանձնարարուեց միացեալ ճակատ կազմել հրեայ սոցիալիստներից, ցարիզմի դէմ, զործադուլներ, աշխատաւորական ջարդերի եւ պարտուղական քարոզչութիւն կատարելով:

1915 *ԹՈՒԻ ՄԱՐՏԻ ՎԵՐՋԸ ՊԱՐՎՈՒՍԸ ԱՅՍ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԳԵՐՄԱՆ ԱՐՏԱՔԻՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆԻՑ ՍՏԱՑԱՒ ԱՌԱՋԻՆ ՄԷԿ ՄԻԼԻՈՆ ՄԱՐՔԸ:*

Պարվուսը կարդադրեց, որ այդ դրամները օտարերկրեայ վաճառատան վերած – ուէին Բուքրէշի, Յիւրիխի եւ Կոպէնհագէնի դրամատներում:

Լենինի ստացած 5000 դոլարից յետոյ, այս երկրորդ գումարն էր՝ մէկ միլիոն գերմանական մարք, որ ստանում էր բոլշեւիկ զեկավար եւ գերման կայսերական հետախուզութեան լրտես՝ Պարվուսը:

«Յեղափոխութեան վաճառականը» դրքի հեղինակները փաստաթղթերով վկայում են հետեւեալը.

«Պարվուսի առաջին հանդիպումները զերման ընկերների հետ Բերլինում յատկապէս բարեկամական չէին: Մինչեւ իսկ այն սոցիալ – դեմոկրատները, որոնք լիովին Ջատագով էին զերման կառավարութեան պատերազմական քաղաքականութեանը, Պարվուսի մասին չէին կարողանում լաւ խօսք ասել, չնայած որ նրա քաղաքական դիրքը համարեա՛ համընկնում էր զերման կառավարութեան դիրքի հետ: Կուսակցութեան նախագահ Հիւզօ Հաազէնը այնտեղ հասաւ, որ նախազուշացրեց իր ընկերներին որեւէ չափով ունենալ Պարվուսի հետ: Հաազէն կասկած յայտնեց, որ Պարվուսը ռուսական կառավարութեան լրտեսն է»...

Իսկ երբ Պարվուսը այցելեց «Ֆորվերց»իմբագիր Շտրեսեւին, վերջինս նրան ընդունեց անտքող անվստահութեամբ: Վատ վերաբերմունք ցոյց տուին նաեւ ձախ թեւի իր նախկին մտերիմ ընկերները: Երբ ներկայացաւ Ռոզա Լիւքսեմբուրգին, սա ո՛չ միայն չխօսեց հետը, այլ եւ՝ դուռը ցոյց տալով վռնտեց: Նրան չատ սառը ընդունեցին նաեւ Կարլ Լիբնեխտը եւ Կլարա Յետկինը: Վերջինս նրան կոչեց «իմպերիալիզմի աջակից, որը վաճառուել է գերման կառավարութեան»: Եւ նրանք բոլորը խզեցին իրենց կապերը Պարվուսի հետ:

«Միմիայն ռուս բոլշեւիկ դեկավարները չխզեցին իրենց կապը բոլշեւիկ–գերման լրտես Պարվուսի հետ: 1915 *Թուի Մայիսին Պարվուսը Զուրիցերիա ժամանեց, ուր մեծ ապատրուէին զործեց ռուս քաղաքական տարագիրների վրայ: Նա լչեւանեց Յիւրիխի ամենաչքեղ հիւրանոցը, այնտեղ սկսեց ապրել ռուսական սուլթանների պէս, շրջապատուած չիկահեր զեղեցկուհիներով եւ ամենաընտիր եւ սուղ չամփայնի չիշերով...*

«Պարվուսի զործակիցը զարձաւ, նրա հետ մտերմութիւն ունեցած՝ եկատերինա Գրոմանը, դեռեւս Պետերբուրգի սոցիալ – դեմոկրատ կազմակերպութիւնից, ուր աշխատել էին միասին: Եկատերինան ռուս տարագիրների մէջ չեմփրեց Պարվուսի ժամանումը, եւ սրանից ստացած մեծ գումարները (2) սկսեց բաժանել ռուս տարագիրներին: Այս պարագան ուելի ստոկացրեց չչուկների Պարվուսի ունեցած առասպելական հարստութեան մասին»:

Սակայն Պարվուսի առաջին եւ անյաջաձգելի զործն էր հանդիպումը Լենինի հետ: Այս մասին «Յեղափոխութեան վաճառականը» դրքի հեղինակները գրում են.

«Լենինի հետ հանդիպումը Պարվուսի գլխաւոր ինդիրն էր: Նա գիտէր, որ բոլոր Սոց. – Դեմոկրատ կազմակերպութիւնների մէջ ամենալաւ կազմակերպուած զործը բոլշեւիկներն էին: Լենինն արդէն արտայայտուել էր գարական կառավարութեան պատերազմից յաղթական դուրս գալու դէմ: Լենինն ուզում էր անմիջական յեղափոխութիւն՝ բոլոր կառոյզ երկրներում, աչխարհակալ պատերազմը քաղաքացիական պատերազմների վերածելու համար. սակայն նա առաջին հերթին ուզում էր Ռուսաստանում տեսնել յեղափոխութիւն: Ուստի, եթէ Պարվուսին յաջողուէր համախոհութեան գալ Լենինի հետ, ապա իրեն համար գժուար չէր լինի իր կողմը գրաւել մնացած բոլոր ֆրակցիաների ներկայացուցիչներին: Պարվուսի ծրագրի մէջ Լենինը բանալին էր յաջողութեան: Մայիսի վերջին Պարվուսը, ընկերակցութեամբ եկատերինա Գրոմանի, յայտնուեց այն ճաչարանում, ուր ճաչում էին ռուս քաղաքական տարագիրները: Ռուսներից մէկը Պարվուսին մօտեցրեց այն սեղանին, որի մօտ նստած էր Լենինը իր կնոջ՝ Կրուպսկայայի, նաեւ՝ Լենինի մտերմիկ բարեկամուհի Ինէսսա Արմանդի եւ Լենինի ընկեր՝ Զինովեւի հետ:

«Կարճ զրոյցից յետոյ Լենինը եւ Կրուպսկայան ճաչարանից մեկնեցին Պարվուսի հետ իրենց համեստ բնակարանը: Ինքը՝ Պարվուսը իր զերմաներէն «Յանուն ճշմարտութեան՝ կռիւ» բրոշիւրի մէջ, այսպէս է նկարագրել իր խօսակցութիւնը Լենինի բնակարանում. «Ես բացատրեցի Լենինին իմ հայեցքները պատերազմի սոցիալ – յեղափոխական հետեւանքների մասին եւ միեւնոյն ժամանակ նրա ուշադրութիւնը հրաւիրեցի այն բանի վրայ, որ քանի դեռ պատերազմը չարունակւում է՝ ոչ մի յեղափոխութիւն չի լինի. յեղափոխութիւնը հնարաւոր է միայն Ռուսիայում, որը կը պայթի զերման յաղթանակների հետեւանքով: Նա, Լենինը, սակայն երազում էր մի ընդհատակեայ միջազգային սոցիալիստական մի թերթ հրատարակելու մասին, որի օգնութեամբ նա յոյս ունէր ամբողջ եւրոպական պրոլետարիատը մղել անմիջական յեղափոխութեան համար»:

«Լենինը չէր համակրում Պարվուսին, քանի որ նա Պարվուսի մէջ տեսնում էր վտանգաւոր մի մրցորդի եւ եթէ նա յաջողէր, ապա մեծ ազդեցութիւն ձեռք կը բերէր, իր մտքի եւ դրամի ուժով, ռուս սոցիալիստական կազմակերպութիւնների վրայ եւ կը գլէր կ'անցնէր կուսակցական բոլոր զեկավարներին:

Սակայն Պարվուսը, վերջ ի վերջոյ, եղաւ պատ: Յիւրիխից մեկնելուց առաջ, նա յանձնարարեց եկատերինա Գրոմանին՝ հաղորդել ռուս էմիգրանտներին, որ ինքը ուզում է հաւաքել հետազօտիչների մի խումբ՝ գիտական – հետազօտական մի ինստիտուտի համար, ուսումնասիրելու համաչխարհային պատերազմի պատճառները ու հետեւանքները: Այս ինստիտուտը նա պատրաստւում էր բանալ Կոպէնհագէնում: Ինստիտուտում էր որ ինստիտուտի աչխատողները Կոպէնհագէնն կարող են մեկնել Գերմանիայի վրայով օրինական անցագրերով, ուստի սրանով կասկած յարուցեց չատ ռուս տարագիրների մէջ եկատերինա Գրոմանին, վլադիմիր Բոնչ–Բրուեւիչին, Գէորգի Զուդնովսկիին եւ երկրորդ պետական Դումայի պատգամաւոր Արշակ Զուրաբովին (3):

Նախկին բոլշեւիկ Գրիգոր Ալեքինսկին իր՝ «Սվորոդա ի Ռոսսիա» (Ազատութիւնը եւ Ռուսաստանը) իր «Սոցիալիստ–Օբորոնեց» կուսակցութեան օրգանում (Փարիզում լոյս տեսնող) պնդեց, որ «Պարվուսի ինստիտուտը» հիմնուած է գերման կառավարութեան դրամով եւ նրա նպատակն է պարտուղական պրոպագանդ ծաւալել դաշնակից երկրներում, գլխաւորապէս՝ Ռուսաստանում: *Այս յայտարարութեան դէմ մամուլով եւ լոյթ ունեցան«Ինստիտուտ»ի մասնակիցները՝ Զուրաբով (Զուրաբեան), Պերազիչ եւ ուրիշներ, բողոքելով Ալեքինսկու դէմ իբրեւ բամբասող, սակայն զերման Արտաքին նախարարութեան փաստաթղթերի համաձայն, որոնք այժմ հրատարակուած են Ամերիկայում եւ Անգլիայում, ճշդօրէն հաստատուած է, որ* Պարվուսեան ինստիտուտը հիմնուել էր գերման կառավարութեան դրամներով եւ յատկապէս ա՛յն նպատակով որ գրել էր Ալեկսինսկին:

Աւելի ուշ, այդ «ինստիտուտը» մտաւ Մոիսէյ Ուրիցկիին, որ յետագայում աչքի

Ծաղկած Փշալարեր

(ՎԻՊԵՐԳ)

— Նո՞ւ, արծիւներ, ո՞նց են գործերը:

— Գործերը դնում են, զրասենեակը զրում է, — պատասխանեց Աչոտ զային:

— Նայած ի՛նչ գործեր եւ նայած թէ զրասենեակն ի՞նչ է զրում,—զատեց Բիչիկօն, զուրս քաչելով մարակը, — այս անգամ վերին զրասենեակը երկու պետերի ապզանունների դիմաց զրեց՝ «խիստ նկատողութիւն վերջին նախազուչացումի՝ թոյլ վերահսկողութեան համար»: Ինձ էլ կարող էին զատել, բայց ի՞նչ են ասել, որ ի՞նչ վերցնեն: Շատ–չատ աչխատանքից կարող են հանել: Թո՛ղ հանեն: Կը պատկեմ բարաքում եւ կը թքեմ առաստաղին: Ինձ մի տարի է մնացել...

— Մեր տէրն էլ՝ Աստուած, — ծիծաղեց Աչոտ զային:

— Ծիծաղում է, — զիմեց ինձ Բիչիկօն տարակուսանքով, յետոյ զարձաւ Աչոտ զային, — ձեր զրութիւնն իմի հետ համեմատած, ոնց որ... ոնց որ Սեւ ծովը համեմատես մի բաժակ ջրի հետ... Բայց բանն այն է, որ ես կարող եմ խեղդուել մի բաժակ ջրով, իսկ դուք կարող էք Սեւ ծովից դուրս դալ... Ոչինչ չկայ կայուն, որովհետեւ չկայ օրէնք ու օրինականութիւն... ուզածդ բոպէին ինձ էլ կարող են քաղաքական զարձնել եւ տալ տասից մինչեւ քսանհինգ տարի, էլ չեմ ասում, որ կարող են թրեխկացնել: Մէկ էլ տեսար ձեզ բաց թողին որպէս անմեղ զոհեր... Մեծ քիմիայի ժամանակաչրջան է, մի օրում մարդուն կարող են աղրի վերածել կամ աղրը զարձնել մարդ... Հիմա ի՞նչ էք ասում, ձեզ մի աչխատող չաո՞մ... ա՞յս ինչ բան է... Մամօն է, որ կայ: Գլուխը թաղել է այտռեղ, ինքը դնացել մտել... չդիտես... ա՛յ դու Մամօ... տեսա՞ր ուր հասաւ: Նա ծխախոտ վառեց եւ փչեց քանդակների կողմը: Հիմա ես ի՞նչ լմանամ, կոնտրիկի գլուխ քանդակելը քաղաքական սխա՞լ չի... Ինձ չե՞ն զատի դրա համար... Մի խօսքով... Մի խօսքով իմ եզրակացութիւնը եւ պահէք չորանոցում, կարիք չկայ մարդկանց աչքը կոխելու... ասում էք նոր մարդու կարիք չկա՞յ... մի կե՞րպ... դէհ լաւ, ես դնացի...

Ու դնաց:

— Գլուխը տաք էր, — ասաց Աչոտ զային, — գլուխը տաք էր, հայդո՛ւկ... Ձիչո՞ւմ ես անցեալ տարուայ Մայիսի մէկի օդեկոլոնը: Զուղեցիր խմել:

Ձիչեցի: Անցեալ տարի Մայիսին մէկին, Աչոտ զային լինճ խնամքով ածիլեց, ապա գրպանից հանեց օդեկոլոնի մի չիչ՝ տակին երեւի 20 գրամի չափ օդե – կոլոն: Նա տուեց լինճ չիչը եւ ասաց.

— Ուզում ես խմիր, ուզում ես ցանիր գլխիդ: Գեղ եմ թողնում ընտրութիւնը:

Ես հոտոտեցի չիչը, ութ տարի էր, ինչ չէի զգացել այդ հոտը: Ինձ թուաց, որ ես թեւ պիտի առնեմ եւ օդեկոլոնի նման, ուր որ է պիտի չոգիանամ օդում: Աւելս գեղեցկացանք ես եւ աչխարհը եւ ես աւելի գեղեցիկ էի քան աչխարհը եւ աչխարհը հազար անգամ լինճնից գեղեցիկ էր: Ես հարբած էի: Ինչ–որ լուսաւոր սենեակներ անցան մաքիս հայելիներով, մետաքսէ կապոյտ չորեր... ես ամէն ինչի մասին մտածեցի. բայց ոչ այն մասին, որ սա գրեթէ օդու ուժ ունի. կարելի է խմել: Շիչը վերադարձրի Աչոտ զային եւ ասի.

— Յանիր գլխիս...

Այն ժամանակ դա լինճ թուաց մեծ հեռատեսութիւն, բայց հիմա... մեծ, չատ մեծ հարց է, որ եթէ Աչոտ զային օդեկոլոնի փոխարէն օդի տար լինճ, ես կը ցանէի՞ գլխիս... կամ քաջութիւն կ'ունենայի՞ հրաժարուելու խմելուց: Դըժուար...

— Այս օրը յայտարարում եմ սանիտարական օր, — ասում է Աչոտ զային — կարգի բերենք բրուտանոցը, նախապատրաստենք կաւը եւ վաղուանից անցնենք գործի... եթէ հնար լինէը, այսօր միասին մի չիչ օդի կը խմէինք... (նա լռեց եւ աւելացրեց) այսինքն եթէ մաքիս գնեմ, կը գանեմ...

Մի սառանայ խլրտաց ներսումս.

— Աչոտ զայի, դուռ ամենապօր ես եւ ամենակարող, — ասացի ես, — կարող ես անպա՛մ այս բոպէիս գրպանիդ անմահական լինճոր հանել, բայց օդի գըտնել... այդ դուրս է քո ուժերից...

— Ինձ մի չարացնի, հայդո՛ւկ, եթէ որոչեմ, կը ճարեմ, քարի տակից կը հանեմ, — տաքացաւ Աչոտ զային:

— Քարի տակից դուռ կարող ես անպա՛մ Մամոյին հանել, բայց օդի՝ երբեք:

— Մամոյին չեմ կարող հանել, — հառաչեց Աչոտ զային, — իսկ օդի, եթէ ուզեմ... խե՛ղճ Մամօ, տեսնես հիմա ի՞նչ է անում... ի՞նչ է անում Գերմանուհին... Մամոյին երեկոյեան հաց պիտի հասցնել: Գէտք է խօսել Մեսրոպի հետ...

ԳՈՒՐԳԻՆ ՄԱՀԱՐԻ

(39 – Շար.)

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՈՂՄ

ՆԱՍԱԶԴ ՊԱՆՈ

ՀՐՑԱԳԵ

Դ.

Օվիս ընտրեց նոցունից ամենաերկարաճիտը եւ սկսեց ասել.

— Ես ուզեցի ձեզ հետ խոսել այս հարցի շուրջ, որովհետեւ ես ինձ համարում եմ ձեր ամենամեծ բարեկամը եւ ամենամտերիմ ընկերը։ Ես ձեզ հետ միասին ապրել եմ ամբողջ կյանքս, ուրախություններ եւ տառապանքներ եմ կիսել ձեզ հետ, եւ ես ուզում եմ, որ մենք միշտ էլ այդպես ապրենք։ Ես ուզում եմ, որ մենք միշտ էլ միասին լինենք, որ ոչ ոք մեզ չկարողանա բաժանել։ Ես ուզում եմ, որ մենք միշտ էլ միասին ուտենք, միասին խմենք, միասին քնենք, միասին զբոսնենք, միասին ճանապարհորդենք, միասին ծերանանք եւ միասին մեռնենք։ Ես ուզում եմ, որ մեր ոսկորները միասին հողի տակ փտեն։ Ես ուզում եմ, որ մեր գերեզմանների վրա միասին ծաղիկներ բուսն

«ՅԱՌԱՋ»Ի ԲԱՐԳԱՒԱՃՄԱՆ ՀԱՄԱՐ

(Համակրաւիճ տեղահանուրեան առթիւ)

Վէնէհէն Պ. Գրիգոր Սողոմոնեան 50 Ֆր. կը նուիրէ։

×

Պ. Թաթուլ Ինճէեան 30 Ֆր. կը նուիրէ։

×

Տիկին Հռ. Իփէկեան 30 Ֆր. կը նուիրէ։

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Տիկին Շնորհիկ Տէրտէրեան, Տէր եւ Տիկին Նազարէթ Տէրտէրեան եւ զաւակները, Օր. Մարի Տէրտէրեան, այրի Տիկին Փէհլիվանեան եւ զաւակները, Տէր և Տիկին Հաճիպապ Սայրիմ եւ զաւակները եւ ընտանեկան համայն պարագանները շնորհակալութիւն կը յայտնեն բոլոր ա-նոնց որոնք անձամբ, գրաւոր, ծաղիկով, մամուլով մասնակից եղան իրենց սուգին

ՄԻՐԻՃԱՆ-ՄՈՒՐԱՏ ՏԷՐՏԷՐԵԱՆԻ

մահուան առթիւ։

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Լիոնի Հայ Առաք. եկեղ. Ազգ. Մխիթարեան վարչութիւնը շնորհակալութեամբ առած է հետեւեալ գումարները։—

Մարտիրոս Խժտահարեանի մահուան քառասունքի հոգեհանգստեան առթիւ Պ. Բարսէղ Խժտահարեան (Մարսէյլ), Պ. Արտաշ Խժտահարեան 100ական Ֆրանք, Տէր եւ Տիկին Շահէն Էքմէքճեան (Վա-լանս) 50, այրի Տիկին Խաղնէճեան, Պ. Անահիտ Խաղնէճեան 20ական եկեղեցւոյ, Պ. Ալթունեան իր կնոջ Տ. Ալթունեանի մահուան Բ. տարելիցին առթիւ 50։

Յակոբ Շահպազեանի մահուան առթիւ փոխան ծաղկեպսակի՝ Լիոնի Հայ Առաք. եկեղ. Ազգ. Մխիթարեանը 100 դոլրոցին, Տէր եւ Տիկին Տիրատուր Սիմոնեան (Վա-լանս) 50 եկեղեցւոյ, Պ. Կօչխարեան 10 դոլրոցին, 10 եկեղեցւոյ։ Եկեղեցւոյ պայ-ծառութեան Տէր եւ Տիկ. Աբա Թոմասեան 300, Պր. Ճիլպրայէլ Պահատուրեան 100, Տիկ. Փանոսեան 10, Ոմն Ազաքատա-խանմին 100։ Մ. Յակոբի ոգւոյ մատաղ-օրհնութեան մասնակցողներ՝ այրի Տիկ. Կիւլպէնկեան, այրի Տիկ. Էքմէքճեան 100-ական, Կապոյտ Խաչի վարչութիւն, Պ. Ճիլպրայէլ Պահատուրեան, այրի Տիկ. Մարտիրոսեան, Ոմն, այրի Տիկ. Սառա Աբգլեան, Տիկ. Սրբուհի Փափազեան 50-ական, այրի Տիկ. Թադեոսեան 30, Տիկ. Գեղանուշ Ֆէլլահեան 25 եւ ոչխար մը, Տիկ. Լիւսի Սաղաթէլեան, Տիկ. Անժէլ Տիւրկէրեան, Տիկ. Զրաճեան 20ական, Տիկ. Գալայճեան 15, Տիկ. Վարդուհի Դերձակեան, Ոմն, Տիկ. Թադուհի Բէթ-բաքեան, Տիկ. Թադուհի Զալաքեան, Տի-կին Մարիամ Սիւզմէճեան, Տիկ. Մարիամ Եանաքոյեան, Տիկ. Աբշալոյս Ինէքճեան, Տիկ. Արաքսի Զաքոյեան, Տիկ. Գրիգո-րոֆ, Տիկ. Մառի Տէտէեան, Պ. Ազատ Ռաֆայէլեան 10ական ֆրանք։

ԽՆԴՈՅՔ

ՏԷՍԻՆԻ ՄԷՋ

Վասպուրականի Հայր. Միութիւնը Ծնունդի առթիւ խնջոյք մը կազմակերպած է ճաշով, Յունուար 6ին, ժամը 20էն մինչեւ լոյս, Քաղաքապետարանի սրա-հին մէջ։

ԿԱՊՈՑՏ ԽԱՉԻՆ

Փարիզէն Տիկին Յարութիւնեան 200 Ֆր. կը նուիրէ Ամանորի առթիւ։

Նոյն առթիւ Պ. Գասարճեան 30 Ֆր. կը նուիրէ։ (Ստանալ «Յառաջ»էն)։

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Կապոյտ Խաչի Պանեէօ – Քաչանի մասնաճիւղը շնորհակալութեամբ առած է Նոր Տարուան եւ Ս. Ծնունդի առթիւ այրի Տիկ. Շնորհիկ Մխճեանէ 150 Ֆր. եւ Տէր եւ Տիկ. Գըզըրեանէ 200։

ԳՊՐՈՑԱԿԱՆ ՏՕՆԱԾՈՒՄ

Կարմակերպուած Հ. Բ. Ը. Միութեան Մարսէյլի մասնաճիւղի եւ Ս. Սահակ-Մեսրոպ Մայր եկեղեցւոյ վարչութիւն-ներու կողմէ։

Տեղի պիտի ունենայ 7 Յունուար, կի-րակի կէսօրէն հաք ժամը 4ին, Միու-թեան սրահին մէջ, 7 Ռիւ Փափէր։

Կը հովանաւորէ Յակոբ եպիսկոպոս Վարդանեան։

Տօնածառի հանդիսութեան կը մասնակ-ցի հայերէնի դասընթացքի երկտեղ ա-շակերտութիւնը իրենց հայերէն երգերով, արտասանութիւններով եւ պանդան ա-նակնկալներով։

Կը հրաւիրուին բոլոր ծնողքներն ու հայրենակիցները անխտիր։

ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ Է

Ի ՅԻՇԱՏԱԿ

Ամնուվիլէն ընկեր Ղազարոս Մարկոս-եան 100 Ֆր. կը նուիրէ «Յառաջ»ին, իր հղոր Յակոբ Մարկոսեանի (մեռած Պէյ-րութ) մահուան քառասունքին ի յիշա-տակ։

×

Տէր եւ Տիկին Թորգոմ Նալպանտեան 50 Ֆր. կը նուիրեն «Յառաջ»ի Յակոբ Տէր-Մելիոնեանի մահուան առթիւ։

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ՀԱՄԱԽԱՐԲԵՐԴՑԻԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

Ծրանասալի չրջանի

1973 Ի ՕՐԱՑՈՅՑԸ

Գին 3 ֆրանք

Դիմել մասնաճիւղերու վարչութեանց կամ

K. Khamarian
9, Avenue Camille Pelletan
13 - Marseille (2e)

ՇԱԽԻԼԻ Ս· ԳՐ· ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

Դպրոցի աշակերտներուն ծնողքները սովորաբար խորհրդակցական ժողովի կը հրաւիրուին այս Շաբաթ 30 Դեկտ. ժամը 14·30ին, դպրոցի սրահին մէջ։

ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ԵՒ ԾՆՈՒՆԴԻ ՏՕՆԵՐՈՒՆ ԱՌԹԻՒ

ԱՌՆՈՒՎԻԼԻ ԵՒ ՇՐՋԱԿԱՅՔԻ ՄԻԱԿ ՀԱՅ ՆՊԱՐԱՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ՝

ՆԻԿՈՂՈՍԵԱՆ

Կը շնորհաւորէ իր յաճախորդները գոյգ տօներուն առթիւ եւ կը յիշեցնէ անգամ մը եւս թէ իր մօտ պիտի գտնէք մատչելի գիներով ամէնէն ընտիր եւ նոխ հայկ. աղանդերներն ու անուշեղէնները, եւ չոր պտուղներն որ պիտի զարդարեն ձեր սեղանները

N. NIGOGHOSSIAN

121, Ave. Henri-Barbusse — 95400 - ARNOUVILLE - LES - GONESSE
Tél. : 985-04-46

ՆԿԱՏԻ ՈՒՆԵՆԱԼ

Հ. Բ. Ը. Միութեան Մարսէյլի Տիկ-նանց Օժանդակ Մարմինի տարեկան մեծ պարահանդէսը 13 Յունուար, Շաբաթ գի-շեր, Օթէլ Սվլանտիւի սրահին մէջ։ Հայկական չէնչող միջավայր, ճոխ պիւ-ֆէ եւ ընտիր նուագախումբ։

×

Կապոյտ Խաչի Մարսէյլ քաղաքի դպրո-ցական ոգնածառը Կիրակի 7 Յունուար ժամը 3ին Ա.Հարոնեան ակումբը եւ մաս-նաւորաբար կը հրաւիրուին կեանք եղած բոլոր երախաները։

ՊԱՏՐԱՍՏՈՒԵՑԷՔ

ԷՍԱԵԱՆ ՍԱՆՈՒՑ ՄԻՈՒԹԵԱՆ

ՊԱՐԱՀԱՆԴԷՍԻՆ

IMPRIMERIE SPÉCIALE
DU JOURNAL «HARATCH»
32, RUE DE TRÉVISE — PARIS (9e)

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐԸ

ՓԱՐԻԶԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Կապ. Խաչի Շրջ. Վարչութեան, մասնակցութեամբ Փարիզ-եան չրջանի իր մասնաճիւղերուն, Մա-նուկներու Օրը կը տօնուի Փարիզի մէջ

ՅՈՒՆՈՒԱՐ 28ԻՆ

×

ԼԻՈՆԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Կապոյտ Խաչի Լիոնի մասնաճիւղին Յունուար 14ին։

×

ՊՕՄՈՆԻ ՄԷՋ

Կապոյտ Խաչի Պօմոնի մասնաճիւղին դպրոցին տօնածառի հանդէսը 7 Յունուար կիրակի կէսօրէ վերջ ժամը 3ին եկեղեց-ւոյ սրահին մէջ։

Կաղանդ պապան կը ներկայանայ պէս-պէս նուէրներ բաշխելու փոքրիկներուն։

×

ԿՐԸՆՈՊԼԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Կապ. Խաչի մաս-նաճիւղին, մեծ պատրաստութեամբ կը տօնուի Յունուար 21ին Կիրակի ժամը 15·30ին։

×

ՏԷՍԻՆԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Կապ. Խաչի մաս-նաճիւղին, Յունուար 14, Կիրակի կէսօրէ վերջ ժամը 15ին, Քաղաքապետարանի չքեղ սրահին մէջ։

Գեղարուեստական բաժին դպրոցի ա-շակերտներու կողմէ.— Երգ, արտասա-նութիւն եւ հայկ. պարեր։ Նուէրներ կա-պանդ պապային կողմէ։

×

ՎԻԼՆԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Կապոյտ Խաչի Վիլնի մասնաճիւղին Յունուար 7, Կի-րակի կէսօրէն վերջ ժամը 15ին, Գասպար Իփէկեան ակումբին մէջ՝ 40, Ռիւ Վիք-թոր Ճօժիէ։

Երգ, արտասանութիւն, պար, դպրոցի աշակերտներու կողմէ։

Կաղանդ պապան կը ներկայանայ նուէր-ներ բաշխելու համար փոքրիկներուն։

×

ՊՈՒԼ. ՕՏՏՈՑԻ ՄԷՋ

Կապոյտ Խաչի Պուլ. Օտտոյի մասնա-ճիւղի վարչութիւնը կը տօնէ մանուկնե-րու օրը 14 Յունուար Կիրակի կէսօրէ վերջ ժամը 15ին, եկեղեցիին մէջ։ Կը հրաւիրուի հայ հասարակութիւնը։

ՅՈՒՇԱՏԵՏՐ

ԿԱՊՈՑՏ ԽԱՉԻ Պանեէօ – Քաչանի մասնաճիւղը ընդհ. ժողովի կը հրաւիրէ բո-լոր ընկերուհիները յառաջիկայ Հինգ-շաբթի Դեկտ. 28, ժամը 20·30ին ընկե-րուհի Գարաօղլանեանի բնակարանը, բա-ցակենդան տօնելու պատրաստութեան հա-մար։

ԳՈՅԱՄԱՐՏ ՕՐԱՑՈՅՑ 1973

Հրատարակութիւն Հ. Ց. Դ. Ն. Ս.ի Մարսէյլի չրջան։ Գունաւոր կողք, 12 էջեր պատմական, աղգային ու այժմէական նիւթերով։

Գին 10 ֆրանք

Ապսպրանքներու համար դիմել իւրաքանչիւր չրջաններու մէջ Հ. Ց. Դ. Նոր Սերունդի անդամներուն կամ հետեւեալ հասցէին՝

G. HOVSEPIAN
51, Bd. des Grands Pins — 13010 Marseille — C.C.P. 254289 Marseille

Մարսէյլի չրջանին համար դիմել հետեւեալ անձերուն՝

Սէնթ Անթուան.— *Ա. Շտոյեան եւ Մ. Սուքիասեան*
Պուլ. Օտտօ.— *Հ. Սարգիսեան եւ Ց. Արզումանեան*
Մարսէյլ ֆաղաֆ.— *Ա. Քէօսէեան, Ծերիկեան զրատուն*
Սէնթ Մարկրիթ.— *Վ. Մուրատեան*
Սէն Ժերոմ.— *Խ. Ուլուսեան եւ Մ. Աւտոյեան*
Պօմոն.— *Ղ. Տէրտէրեան եւ Ց. Տէր-Վարդանեան*
Սէն Լու, Լափոմ, Վալպարէյ.— *Գր. Փիլիկեան, Մ. Նազաչեան, Ս. Գինոսեան*
Կարտան-Էքս.— *Վ. Գամպերեան եւ Ա. Տէր-Սահակեան*
Նիս.— *Ս. Ալեքսանեան եւ Գ. Խոսրովեան*
Ավինեոն.— *Թ. Մարճոյեան*

ԲԱԼՈՒԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

ՆՈՐ ԳԻՐՔԵՐ – ՆՈՐ ՍԱԼԵՐ

Աղգապահպանման լաւագոյն միջոցներէն մէկն է կարդալ եւ ծանօթացնել հայ երգն ու երաժշտութիւնը, օտարներուն եւ մեր մատաղ սերունդին։ Հասցէ՝

43, Rue Richer, Paris (9e) — Métro Cadet — Tél. 770-25-46

ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ԱՌԹԻԻ՝ գիրք եւ սալ ճուիրեցէք

Գրատունը ճոխ է բազմատեսակ գրքերով եւ պատրաստ՝ ապսպրանքներ ըն-դունելու ամէն վայրերէ։

Կը ծախուի նաեւ Նայիրի եւ Սփիւռք շաբաթաթերթերը։

Առաքման ծախքը գնողին վրայ է։
Գրատունը բաց է ամէն օր ժամը 10էն սկսեալ մինչեւ երեկոյեան 7ը։

ՈՒՐԲԱԹ
29
ԴԵԿՏԵՄԲԵՐ
VENDREDI
29 DECEMBRE
1972

Le Numéro 0,70 F.

ՅԱՌԱՋ

ՕՐԱԹԵՐԹ
ՀԻՄՆԱԴԻՐ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

HARATCH

Le Seul Quotidien Arménien en Europe Occidentale
Directrice : Arpik Missakian
32, rue de Trévise Paris 9

— Tél. : 770-86-60 —
C. C. P. Paris 15069-82
Fondé en 1928
R. C. Seine 57 A 2731

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա	Տար. 120 ֆր.	Վեցամսեայ	65 ֆր.
Արտասահման	Տար. 135 ֆր.	Հատը	0,70 ֆր.

48րդ ՏԱՐԻ — ԹԻՒ 12.601

Fondateur : SCHAVARCH MISSAKIAN

48e ANNÉE — N° 12.601

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՄԵՐՁԱԻՈՐ ԱՐԵՒԵԼՔԸ ՉԻ ՀԱՆԴԱՐՏԻՐ

—o—

Իսրայէլեան նոր յարձակում մը կատարեցաւ Սուրիոյ տահմանին վրայ։ Օդանաւեր ռմբակոծեցին Կալանի տուրիական դիրքերը եւ, համաձայն Դամասկոսի, մէկ հոգի մեռած եւ երկու վիրաւորուած են։

Այս «փոխադարձութիւնը» տահմանափակ եղած է, ինչ որ որոշ մեկնաբանութիւններու առիթ կուտայ քաղաքական չըլլանակներու մօտ։ Իսրայէլացիք, որ պղտեռնեան տահաբեկչական գործողութեանց դէմ վերջին չըլլանին զօրաւոր հակահարձակումներու կը դիմէին, այս անգամ տահմանափակ չըլլափեի մը թեթեւ ռմբակոծութեամբ գոհացած են։ Դէտեր նկատել կուտան, թէ Թել Ավիվ հարկադրաբար նկատի կ'առնէ այժմ միջազգային հանրային կարծիքը, որ չընդունիր Թել Ավիվի արդելքած «զօրաւոր հարուած»ի քաղաքականութիւնը արաբ երկիրներու դէմ, ամէն անգամ որ պատեռնեցիք տահաբեկչական արարք մը գործեն։

Միւս կողմէ նկատելի է, որ Սուրիացիք այս անգամ չպատասխանեցին Իսրայէլեան ռմբակոծութեան։ Դամասկոս, որ կը փորձէր «տահմանափակ պատերազմի» վիճակ տեղծել Իսրայէլեան տահմաններուն վրայ, այժմ հրաժարած կը թուի ըլլալ իր ծրագրէն, որովհետեւ Գահիրէ ընդառաջ չդնաց Դամասկոսի պահանջին, բախումներ տեղծել նաեւ Սուէզի ճակատին վրայ։ Եւ ասիկա հակառակ այն իրողութեան, որ Եգիպտոսի Պատերազմի նոր նախարարը՝ Զօր. Իսմայիլ Ալի, ի տարբերութիւն իր նախորդին (Զօր. Մ. Սատէք) համոզուած է, թէ պէտք է «մաշումի պատերազմ» մղել Իսրայէլի դէմ։

Դամասկոս սուրիական ճակատէն հեռացուցած է Պաղեստինցիները՝ անոնց կայանները փոխադրելով երկրին հիւսիսը՝ Համա, Տէր-Զօր եւ Գամիշլի։ Միեւնոյն տահն յարաբերութիւնները լաւ չեն Սուրիոյ նախագահին եւ Արաֆաթի միջեւ։ Յատկանշական կը նկատուի այն պարագան, որ Դամասկոս լուռ մնաց այն միջադէպերուն չուրջ, որոնք տեղի ունեցան վերջերս Լիբանանեան բանակի եւ Պաղեստինցիներու միջեւ։

ՅԱԻԵԼՈՒՄՆԵՐՈՒ ԴԷՄ՝...

Նոյեմբերի ընթացքին յաւելումները միայն 0,6 առ հարիւրի հասած են, Ֆրանսայի մէջ, մինչ Հոկտեմբերին 0,9 առ հարիւր էր ինչ որ ծանր մտահոգութեանց պատճառ եղած էր։

Ելմտական նախարարը, որ այս առիթը խօսք առաւ հեռատեսիլէն, կոչ ըրաւ առեւտրականներուն որ զօրավիգ կենան Թ. Վ. Ա.ի գործողութեան։ Ծանօթ է որ կառավարութիւնը 23 առ հարիւրէն 20 առ հարիւրի կ'իջեցնէ Արժէքին Վրայ Աւելցուած Տուրքը, առաջքն առնելու համար յաւելումներուն եւ այս ձեւով իր կրպնդուցած եօթուկէս միլիառը պահելու համար, փոխառութիւն մը մէջտեղ կը դնէ, որ 7 առ հարիւր տոկոս պիտի բերէ։ Այս մասին, ժիւքար տ'Էսթէն նոր մանրամասնութիւններ պիտի տայ, Յունուարի առաջին օրերուն իսկ։ Կը կարծուի սակայն թէ այս վոխառութիւնը Յունուար 2ին պիտի յայտարարուի եւ պիտի պարծպրուի Յունուար 8էն 16։ 15 տարուան վրայ հինգուկէս միլիառի փոխառութիւն մըն է, որ սակայն հարկային մտանուր առաւելութիւններ պիտի չունենայ։

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ՀԱՆՕՑԻ վրայ ռմբակոծութիւնները կը շարունակուին նոյն ատստակութեամբ եւ ֆրանսական մամուլի զործակալութեան թղթակիցները «Դժոխքի պիչերուան» մասին կը խօսին։ Մայրաքաղաքին կարգ մը թաղամասերը հիմնայատակ քանդուած են, բնակութեան տուներ, հիւանդանոց եւ պարզ ալ չեն խնայուած։ Ամերիկացիներն ալ բաւական օդանաւեր կորսնցուցած են։ Իտալական մամուլին համաձայն, Պապը նամակ մը գրած է Նիքսընի վճռականօրէն յանձնարարելով որ վերջ տայ ռմբակոծութեանց։ Վատիկան չի հաստատեր այս լուրը, բայց չի ալ հերքեր։

ՆԻՔԱՐԱԿՈՒԱՅԻ մայրաքաղաքը օրէ օր աւելի զժոխային պատկեր մը կը պարզէ։ Պարենաւորումը դադրեցուած է ատիկուլ համար բնակիչներուն որ քաղաքէն հեռանան։ Շատ խիտ միջոցներ ձեռք առնուած են բոլոր անոնց դէմ որոնք կողոպտուելէ ձեռնարկած են առիթէն օգտուելով։ Եւ արդէն տեղն ու տեղը զբնդակահարուած են երկու զինուոր։ Սովը եւ ծարաւը, նաեւ համաճարակը, քանի որ 40 աստիճան տաքին զարշահոտ դիակները թիֆիւսի եւ քուեռայի վառնդ կը ատեղծեն, ողբերգական վիճակ մը կը պարզեն։

ԹՈՒՐՔ հրատարակիչ մը՝ Պուլէնթ Հալօղլու, 32 տարեկան, եօթուկէս տարուան բանտարկութեան դատապարտուեցաւ, որովհետեւ լոյս ընծայած էր Տրոյկիի «Մշտական յեղափոխութիւն» գիրքը։

ԼՈՆՏՈՆ մերժեց ընթացք տալ Մալթայի վարչապետի նոր պահանջին՝ 10 տոկոս բարձրացնել կղզիին անգլիական կայաններու «վարձք»ի գինը։ Լոնտոն յիշեցուց Մոմ Մինթոֆի Մարտ 26ի համաձայնագրի պայմանը, որով Անգլիա Մալթայի իր կայաններուն համար տարեկան 14 միլիոն սթերլին կը վճարէ։

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ դրագիններէ Անտրէյ Սինիավսկի, որ 1971 Մայիսին ազատ արձակուեցաւ Պոտմայի (Մորտովի մէջ) ճամբարէն, ուր վեց տարի բանտարկուած մնացած էր, Ֆրանսա հաստատուած է։ Սակայն Օվիրը (խորհրդային Ներքին Նախարարութեան վիզայի գրասենեակը) դեռ պատասխան չէ տուած։ Միւս կողմէ Մոսկուայի Ֆրանսական դեսպանատունը կը մերժէ հաստատել կամ հերքել այս լուրը։ Խորհրդային գրագիտը «հակախորհրդային գործունէութեան» ամբաստանութեամբ ձերբակալուած էր 1965 Սեպտեմբերին եւ վեց ամիս եօք եօթը տարուան աքսորի դատապարտուած էր «իր լաւ ընթացքին» համար ճամբարին մէջ։

ՄՈՍԿՈՒԱՅԻ կարգ մը պղերիւններու համաձայն «թիքէ»ի դրութիւն մը հաստատուած է որոշ չըլլաններու մէջ, պաննաւորման համար։ Զափատոմսեր բաժնուած են Եարոսլավ, Կազան, Աստրախան եւ Պիանոք։ Ծանօթ է որ կլիմայի հետեւանքով Խորհրդային Միութիւնը շատ վնաս կրեց այս տարի։

ԱՐԵՒԵԼԵԱՆ ԳԵՐՄԱՆԻԱ կը մերժէ հաստուցում տալ այն անձերուն, որոնք տուժած են հիթլերական վարչակարգէն եւ որոնք պահպան միութիւններ հիմնած են Պելժիա, Հոլանտա, Դանիա, Նորվեկիա։ Արեւելեան Գերմանիա կը պատճառանէ թէ ինք պահպանում տուած կ'ըլլայ հիթլերի պահերուն երբ ոչ մէկ հին նացի զործի դլուխ կանգնի իր երկրին մէջ, մինչդեռ ամէն ոք գիտէ թէ դլխաւորապէս Արեւելեան Գերմանիոյ մէջ է որ նացի պատասխանատուներ կարեւոր պաշտօններ կը վարեն։

ԵՐԵՒԱՆ ⇔ ՓԱՐԻԶ
ՀԵՌԱՏԻՊ

ԵՐԵՒԱՆ (Արմէնփրէս, Դեկտ. 22–25)

ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՆՀՈՆԶ ԹԱՐՄԱՆԻԶԸ

Ծննդեան ութսունամեակն է բանաստեղծ եւ դրագէտ Սերգէյ Շերվինակիի, որ չուրջ 60 տարիէ ի վեր թարգմանութիւններ կատարած է հայ բանաստեղծներու գործերէ։

Ան առաջին անգամ հայ բանաստեղծութեան ծանօթացած է 1915ին, երբ Վալերի Բրիւսով ծրագրեց կազմել «Պոէզիա Արմէնի» հատաքածոն։ Շերվինակիի, որ 23 տարեկան էր այն ժամանակ, հրաւիրուեցաւ իր աշխատակցութիւնը բերելու այդ գործին՝ թարգմանելով Վարուժան եւ Սիամանթօ։ «Ռուս բանաստեղծը կարողացաւ խորութեամբ թափանցել Վարուժանի պոէզիայի առնական խոստութեան եւ ողբերգական պաթոսի, Սիամանթոյի քնարական հնչերանգի եւ պատկերների սիմվոլիկայի մէջ»։

Շերվինակի 30ական թուականներուն Վ. Դերժավինի, Ա. Կոչետկովի եւ Կ. Լիպսկերովի հետ թարգմանեց «Սասնայ ծռեր» դիւցազնավէպը։

Ան յետպատերազմեան թարգմանեց «Վէրք Հայաստանի»ն, ինչպէս նաեւ քերթուածներ հայ բանաստեղծներէ։

×

ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՐՑԵՐՈՒ ՆՈՒԻՐՈՒԱԾ ԺՈՂՈՎ

Դեկտեմբեր 20–21ին Երեւանի մէջ տեղի ունեցաւ համագումար մը, որու ընթացքին քննութեան առնուեցան գեղատնտեսականներու դեղապիտութեան դասախտակութեան հետ կապ ունեցող հարցեր։ Ժողովին մասնակցեցան հայ մանկավարժներու կողքին վրացի, ազերի, Հասոնացի եւ ռուս մանկավարժներ։

Համագումարին բացումը կատարեց Բ. Աչեան, Հայաստանի Լուսաւորութեան նախարարի առաջին տեղակալը։

×

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻՆ ԿԻՍ ԴԱՐԸ

Փանոս Թէրլեմէզեան անունով մկրը տուած զեղարուեստի ուսումնարանը հիմնուած է յիսուն տարի առաջ։

Ուսումնարանի յոբելենական տարեդարձին առթիւ հանդիսաւոր նիստ մը տեղի ունեցաւ Հայֆիլհարմոնիայի փոքր սրահին մէջ, նախագահութեամբ բարձրաստիճան եւ միջնակարգ մասնագիտական կրթութեան նախարար Աչոտ Աւետեանի, որ այս առթիւ «պատուոյ դիր» մը յանձնեց ուսումնարանի անօրէնութեան։

Ուսումնարանի յիսուն տարուան գործունէութեան մասին զեկուցեց անօրէնը Գ. Յովհաննիսեան։ Այդ տարիներու ընթացքին ուսումնարանը 1500 որակեալ մասնագէտներ պատրաստած է նկարչութեան եւ յարակից արուեստներու մարզին մէջ։

×

ԳՐԱԿԱՆ ՏԱՐԱՁՆԵՐՈՒ ԲԱՌԱՐԱՆ

«Լոյս» հրատարակչութիւնը հրատարակ հանեց Եղուարդ Զրբաշեանի եւ Հենրիկ Մախչանեանի «Գրական տերմիններու բառարան»ը, որ կ'ընդգրկէ 567 տարազ։

Առանց առընթեր բառարանը կազմող – ները զետեղած են նաեւ անոնց միջազգային համանիշները, որոնք ծագում առած են յունարէնէ եւ լատիներէնէ եւ կ'օգտագործուին եւրոպական լեզուներու մէջ։

Հայ տպագիր բառարանագիտութիւնը մօտ 350 տարուան պատմութիւն ունի, որու ընթացքին լոյս են տեսած հարիւր – բաւոր բառարաններ։ Սակայն գրական տարազներու առաջին բառարանը լոյս է տեսած 1957ին։ Այս նոր բառարանը նախատեսուած է ոչ միայն մասնագէտներու, այլեւ միջնակարգ դպրոցներու աշակերտներու համար։

×

Ռ. ԱՆԴՐԷԱՍԵԱՆ

Հայֆիլհարմոնիայի փոքր սրահին մէջ յուշի երեկոյ մը տեղի ունեցաւ, նուիրուած՝ Ռոբերտ Անդրէասեանի յիշատակին։

Երեկոյթին բացումը կատարեց Երեւանի երաժշտանոցի տեսուչը՝ Ղազարոս Սարեան։ Դաշնակահար երգահանին արուեստը բնութագրեց Շուշանիկ Ափոյեան։

×

ԱԲՈՎԵԱՆ ՔԱՂԱՔԸ

Տասը տարիներու անցեալ ունի Աբովեան քաղաքը։ Բնակչութեան 30 տոկոսը կազմուած է ներգաղթողներէ։ Քաղաքը ունի վեց նախակրթարան դպրոց։ Այժմ քաղաքի դպրոցներուն եւ ուսումնական միւս հաստատութիւնները կը յաճախեն վեց հազարէ աւելի պատանիներ եւ պարմանուհիներ։ Անոնց կրթութեամբ կը զբաղին 500 ուսուցիչներ։

"ՅԱՌԱՋ"Ի ՏԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆԸ

—o—

Հակառակ մեր բոլոր ջանքերուն եւ յոյսերուն, կարելի չեղաւ «Յառաջ»ի համբակրատան եւ տպարանի փոխադրութիւնը իրագործել Ամանորէն առաջ։

Ներքին աշխատանքներու յապաղումը, էլեկտրականութեան եւ ջերմութեան սարքաւորմանց հաստատութիւնը դեռ քանի մը շաբաթով կը յետաձգեն մեր տեղափոխութիւնը։

Ցնոր անօրինութիւն, բոլոր թղթակցութեանց համար ի զօրու կը մնան մեր սովորական հասցէները (32 Rue de Trévise, կամ 17 Rue Pixo)։

«ՅԱՌԱՋ» ՏՆՕՐԻՆՈՒԹԻՒՆ

ԳՐՔԵՐԻ ԵՒ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԵՏ

ԿԱՊԻՏԱԼԻՍՏ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ ԴՐԱՄ ՍՏԱՆԱԼՈՒ ԵՒ ԼՐՏԵՍՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Դ.

Դոկտ. Ձիմմերը, որ ներկայացուցիչն էր պերման կառավարութեան, մինչ ընդմիջման մէջ լինելով Պարվուսի հետ, հարցրեց Բելլին.

«Պարվուսի ստեղծած կազմակերպութեան մէջ աշխատում են 8 մարդիկ եւ մօտ 10 հոգի ճամբորդում են Ռուսաստանում, քանի որ դա անհրաժեշտ է մինչեւ կապ պահելու համար տարբեր կազմակերպութիւնների միջեւ: Կոպէնհագէնի կենտրոնը անընդհատ նամակագրութիւն ունի այն անձերի հետ, որոնց հետ գործակալները (լրտեսները) կապ են հաստատել: Աշխատանքը այնքան լաւ է ընթացած, որ յաճախ այն մարդիկ, որոնք աշխատում են կազմակերպութեան մէջ, չգիտեն որ այդ բոլորի եռեւ կանգնած է պերման կառավարութիւնը»:

Լենինը երբեք Պարվուսին չէր կոչում պերման լրտես եւ երբեք չէր խօսում 1915ի իր տեսակցութեան մասին, Պարվուսի հետ: Լենինը նպատակայարմար չէր գտնում բացարձակօրէն անջատուել Պարվուսից, վերջնականօրէն իր կապերը խզելով:

1915 թուի Նոյեմբեր 30ին Պարվուսը Կոպէնհագէնի պերման դեսպան Բրոկդորֆ Ռանցաուին ներկայացրեց մի յուշագիր, որի մէջ արձարծում էր խաղաղութեան հարցը եւ անում էր մի չարք նոր առաջարկութիւններ այն մասին, թէ ինչպէս կարելի է խաթարել յեղափոխական շարժումը Ռուսաստանում: Պարվուսը նա խաղդուչացնում էր պերման կառավարութեանը ցարական կառավարութեան հետ անջատ հաշտութիւն կնքելուց: Եթէ ցարը հաշտութիւն կնքի Գերմանիայի հետ, պնդում էր Պարվուսը, ապա կարելի է ապահով, որ Ռուսիայ իշխանութեան գլուխ կ'անցնի ծայրայեղ նացիոնալիստ մի կառավարութիւն, որը իրեն կապուած չի զգայ ցարի առած խոստումին: Այսպիսով՝ Գերմանիան կը գրկուի ճակատի վրայ իր յաղթանակի քաղաքական արդիւնքներից: Խաղաղութեան ծարաւը եւ ծայրայեղ քայքայումը երկրում անմիջապէս կը յանգի յեղափոխութեան. յեղափոխական կառավարութիւնն էլ, որ իշխանութեան գլուխ կ'անցնի, առաջին հերթին ստիպուած կը լինի պատերազմին վերջ տալ եւ առաջարկել անմիջական խաղաղութիւն:

Բրոկդորֆ Ռանցաուն Պարվուսի յուշագիրը անմիջապէս ուղարկեց պերման կանցլեր Բեթման Հոլվեգին, որի մէջ ընդգծում էր, որ Պարվուսի յուշագիրը գրուած է զաղտնի հաղորդումների վրայ իր վստահելի լրտեսի, որ վերջերս Պետերբուրգից Կոպէնհագէն է հասել:

Գերման Արտաքին նախարարութիւնը անմիջապէս Պարվուսին կանչեց Բելլին: Դեկտ. 10–20ը Պարվուսը մնաց Բելլինում, ուր արծարծեց իր ծրագիրները Արտաքին եւ Ֆինանսների նախարարութեան մէջ: Պարվուսը խոստում ստացաւ, որ գերման կառավարութիւնը ե'ւս մի միլիոն մարք կը տրամադրի՝ յատկապէս ռուս բանակի մէջ պրոպագանդ մղելու համար:

Բրոկդորֆ Ռանցաուն գրում էր գերման կառավարութեան.

«Ցաղթանակը եւ նրա վարձատրութիւնը՝ առաջին տեղ գրաւելը աշխարհում՝ Գերմանիան կ'ապահովի, եթէ մեզ յաջողուի պատեհ առիթով յեղափոխութիւն ծագեցնել Ռուսաստանում, գրանով կոծանելով Անտանտային: Խաղաղութիւն կնքելուց յետոյ Ռուսիայ ներքին քայքայումը մեզ համար ոչ մէկ արժէք կ'ունենայ, հնարաւոր է՝ որ նոյնիսկ անցանկալի կը լինի: Անկասկած ճիշդ է, որ Դոկտոր Գելֆանդը (Պարվուս) սուրբ մէկը կամ ցանկալի հիւր չէ: Նա, սակայն, հաւատում է իր առաքելութեան եւ նրա հմտութիւնը փորձուած է 1905ի ռուս-ճափոնական պատերազմից յետոյ եղած յեղափոխութեան մէջ: Ուստի ես կարծում եմ, որ մենք պէտք է օգտագործենք նրան, քանի դեռ ուշ չէ»:

1915 թուի Դեկտ. 29ին ՊԱՐՎՈՒՍԻՆ ՍՏԱՑԱՒ ՄԻԿ ՄԻԼԻՈՆ ՄԱՐՔ ԵՒՍ, Ռուսաստանում յեղափոխութեանը նպաստաւորելու համար:

1916 թուի Յունուար 3ին Պարվուսը հեռագրեց Բրոկդորֆ Ռանցաուին, Սոսկուայից. «Ամէն ինչ ընթանում է ինչպէս որ պէտք է: Պատասխանների եմ սպասում Պետերբուրգից»:

Նոյն 1916ի Յունուարին Պետրոգրադում եւ մի քանի այլ քաղաքներում ունէին բանուորական գործադուլներ, թէեւ՝ տարերային, բայց յեղափոխութեան չյանդգնեցին, հակառակ Պարվուսի կանխատեսութեանց եւ ըստ պատճէների: Սրանից յետոյ գերման Արտաքին նախարարութեան, անվստահութիւնն ուժեղացաւ Պարվուսի նկատմամբ: Կասկած յայտնեց, որ գրամական փոխանցները, որ գերման կառավարութիւնը յատկացրել էր Ռուսիոյ յեղափոխութեան, հոսում էին Պարվուսի գրպանը:

1917 թուի Մարտ ամսում պայթեց յեղափոխութիւնը Ռուսաստանում եւ ժամանակաւոր կառավարութիւնը իշխանութեան գլուխ անցաւ:

Այնուհետեւ Պարվուսը թելադրեց գերման կառավարութեան, ուժ տալ Ռուսիոյ ծայրայեղ հոսանքին՝ բոլշեւիկներին (Լենինի գլխաւորութեամբ) երկիրը անիշխանութեան մատնելու համար: Եւ ահա 1917ի Ապրիլին Գերմանիայի կանցլեր Բեթման Հոլվեգը լիազօրեց Բեռնի Ցոն Ռոբերտ դեսպանին՝ շփման մէջ մտնել ռուս բաղաքական տարագիրների հետ եւ նրանց առաջարկել Գերմանիայի վրայով Ռուսաստան մեկնելու:

« Յեղափոխութեան վաճառականը » դրքի հեղինակները այս առթիւ գրում են.

«Մինչդեռ ռուս յեղափոխական առաջնորդներին Ռուսիա փոխադրելու գաղտնի եւ տեխնիկ մի[illegible]ների մասին էր խորհում գերման Արտաքին նախարարութիւնը, Պարվուսը առաջին գործնական քայլն առաւ: Քանի որ ռուս յեղափոխական ներկի մեծ թուով ուղարկելը բաւական բարդ խնդիր էր, ապա նա հաշուում էր, որ առաջին հերթին պէտք է անմիջապէս Ռուսիա ճամբու դնել, Գերմանիայի վրայով, Լենինին եւ Զինովեւին, բոլշեւիկ երկու ղեկաւար ղեկավարներին: Այստեղ Պարվուսի եւ Լենինի միջեւ Գանիցկիի միջոցով կապը չատ արժէքաւոր եղաւ: Պարվուսը սկզբում համաձայնութիւնը ստացաւ գերման գլխաւոր սպայակոյտի, ապա յանձնարարեց Գանիցկիին Լենինին յայտնել, որ իր եւ Զինովեւի մեկնումը, Գերմանիայի վրայով, կազմակերպուած է, սակայն պարզօրէն չասել թէ ի՛նչ ապրիւրից է ցոյց արուում օգնութիւնը:

Գերման լրտես Գէորգ Սկլաացը անմիջապէս մեկնեց Ցիւրիխ՝ ուղեկցելու Լենինին եւ Զինովեւին Գերմանիոյ վրայով մեկնելուն: Բայց Պարվուսը սխալուել էր, ենթադրելով որ Լենինը անմիջապէս պիտի ընդունէր առաջարկը: Մարտ 24ին (հին տոմարով) Լենինը խնդրեց Զինովեւին Գանիցկիին ուղարկել հետեւեալ հեռագիրը. «Նամակը ուղարկուած է: Բեռին (այսինքն Լենինը) ուզում է աւելի մանրամասնութիւններ իմանալ Գերմանիայի վրայով պաշտօնական մեկնումը միայն մի քանի հոգիների՝ անընդունելի է» (1):

Եթէ Լենինն ընդունէր առաջարկը եւ Զինովեւի հետ մխայն երկուսով մեկնէին Ռուսիա, ապա այնպէս կը վստահէր իրեն, որ ոչ մի օգուտ չէր բերի ո՛չ բոլշեւիկներին եւ ոչ էլ՝ Գերմանացիներին: Երբ Պարվուսն իմացաւ այս մասին, նա անմիջապէս մեկնեց Բերլին, խորհրդակցելու համար Ռուսիոյ դէպքերի մասին գերման պիւանագէտների եւ մխաժամանակ նաեւ սոցիալ – դեմոկրատ ղեկավարների հետ:

Գերման Սոց.–դեմոկրատների ղեկավար Ֆիլիպ Շէյդեմանը, որ պատերազմի ժամանակ պաշտպանում էր գերման կառավարութեան քաղաքականութիւնը, իր յուշերի Ա. հատորում (լոյս տեսած 1928 թուին) գրում էր.

«Ես յետագայում իմացայ, որ Լենինի եւ իր ընկերների Ռուսիա մեկնումը Գերմանիայի վրայով կազմակերպուած էր Դոկտ. Գելֆանդ – Պարվուսի կողմից, որը այս մասին տեղեկացրել էր միայն մի քանի հոգու: Մեզ, Սոց.–դեմոկրատներս, նա այդ մասին ոչինչ չէր ասել»:

« Յեղափոխութեան վաճառականը » դրքի հեղինակները այս մասին գրում են.

«Գերման Սոց.–դեմոկրատների ղեկավարները ոչինչ չգիտէին Պարվուսի կապերի մասին Արտաքին նախարարութեան հետ եւ նրա գործունէութեան մասին՝ Ռուսաստանում քաոսը հրահրելու... եւ նրանք օժտեցին նրան նամակով, որով լիազօրում էին բանակցութիւններ վարել ռուս փախստականների հետ, այսինքն՝ Լենինի եւ ուրիշների, պաշտօնապէս Սոցիալ – Դեմոկրատ կուսակցութեան կենտրոնական կոմիտէի անունից»:

Լենինը երբ Ստոկհոլմ եկաւ, մերժեց Պարվուսի հետ անձամբ տեսակցել, բայց Գանեցկին չարունակում էր գաղտնի միջնորդը լինել Լենինի եւ Պարվուսի միջեւ: Լենինի հետ Ստոկհոլմ եկաւ կառղեկը: «Յեղափոխութեան վաճառականը» դրքի հեղինակները գրում են այս առթիւ.

«Ֆիւրստենբերգ — Գանեցկին դեռ չարունակում էր միջնորդի դեր խաղալ Լենինի եւ Պարվուսի միջեւ, բայց այժմ բեմի վրայ երեւաց Կառղեկը: Նա, ինչպէս յայտնի է, աւստրիական հպատակ էր: Յատկապէս Կառղեկի հետ Պարվուսը Ապրիլ 13ին անցկացրեց օրուայ մեծ մասը. սա մի վճռական եւ մխանգամայն պաղտնի հանդիպում էր»...

Պարվուսը ի վիճակի էր խոստանալու բոլշեւիկներին ֆինանսական մեծ օժանդակութիւն՝ նրանց՝ Ռուսաստանի իշխանութիւնը ձեռք ձգելու յետագայ պայքարի համար: Իսկ Կառղեկը լիազօրուած էր Լենինի կողմից՝ ընդունելու այդ առաջարկը: Եւ յետագայ ամիսների ղէպքերը բաւական ապացոյցներ տուին, որ յատկապէս այդ համաձայնութիւնը տեղի ունեցաւ Ստոկհոլմում, 1917 թուի Ապրիլ 13ին:

« Յեղափոխութեան վաճառականը » դրքի հեղինակները չարունակութեան մէջ նշում են, որ Կառղեկը իրրեւ աւստրիահպատակ, այն ժամանակ հնարաւորութիւն չունեցաւ Լենինի եւ մխաս ընկերների հետ եւ Պետրոգրադ մեկնելու: Նա մնաց Ստոկհոլմում: Պարվուսը երեք օր յետոյ վերադարձաւ Կոպէնհագէն եւ անմիջապէս դնաց գերման դեսպան Բրոկդորֆ Ռանցաուի մօտ: Նա մանրամասն պատմեց դեսպանին Կառղեկի հետ իր ունեցած բանակցութիւնների մասին, եւ այն մասին, որ Լենինը լիազօրել էր Կառղեկին ընդունելու Պարվուսի առաջարկները, որ արել էր գերման կառավարութեան անունից: Բրոկդորֆ Ռանցաուն անմիջապէս այս բոլորի մասին հեռագրեց Արտաքին նախարարութեան եւ հաղորդեց, որ ինքը՝ Պարվուսը Ապրիլ 18ին կը ժամանի Բերլին եւ կը սպասի ունկնդրութիւն ունենալու հրաւէրին՝ Յիմմերմանի հետ, որ գերման կառավարութեան Արտաքին Գործոց գլխաւորն էր: Մի քանի օր յետոյ Պարվուսն ստացաւ այդ հրաւէրը: Այդ տեսակցութիւնը գաղտնի էր, ոչ մի այլ վկայ չկար եւ այդ երկար տեսակցութեան մասին, Յիմմերմանի հետ, արձանագրութիւն չէ պահուած:

Ա. ԱՄՈՒՐԵԱՆ

(Շար. – 4)

---

(1) Զինովեւի հեռագիրը յետոյ հրատարակուեց «Լենինի հաւաքածոյ»ի մէջ, բիւ 13ում:

Ծաղկած Փշալարեր

(ՎԻՊԵՐԳ)

Իրիկուն լուռ էր. մխայն աչքերը փայլում էին մանկական հրճուանքով, երբ մենք վիճում էինք, իսկ հիմա նայում է նա ցաւով եւ տխրութեամբ՝ Մամոյի պլիսաքանդակին:

Տխրեց լուսինը: Մենք փոխադրեցինք Լիուդմիլայի արուեստի սրբազան գալերիան չորանոցը եւ տեղաւորեցինք Մամոյի անկիւնում: Ջարմանքով վերահասու եղանք, որ նրա անկիւնը դատարկ է, երկուսն էլ նախագրում էին մօտեցող վտանգը եւ երեւի վերցրել էին հետները՝ իրենց խեղճ ունեցուածքները: Դատարկ էր նաեւ նրա համբաւաւոր չռեմարանը: Աչոտ դային հազար երկու անգամ առանց բերանը բանալու, — ըհը՛–ըհը՛: Նա գըբխին քաշեց իր ականջակալներով գըլխարկը, հնամաչ քուրքն առաւ ուսերին ու դուրս եկաւ:

Մենք չարունակեցինք մեր աշխատանքը, տախտակները մէկ–մէկ վար առնինք, մաքրեցինք փոշուց, թաց լաթով թարմացրինք: Մտածելու շատ բան կար, խօսելու ոչինչ, ու մենք լուռ աշխատում էինք ու դիտէինք, որ մտածում ենք նոյն բանի մասին:

Ներս մտաւ Աչոտ դային:

— Ինչո՞ւ ճաշի չես դնում, հայդուկ, — հարցրեց նա:

Գոնդը եղել է, իսկ մենք չենք լսել:

— Ի՞նչ տեսակի կալանաւորը էք, — ասում է Աչոտ դային, — շատ բան կարող է չլսել կալանաւորը, բայց չլսել ճաշի ձայնը... Մամօն գոնդից առաջ է լսում...

Ես լուացւում եմ, լուանում եմ փայտէ գոյլը եւ վազում խոհանոց:

— Մամօն թռա՞ւ, — հարցնում է չէկ բեխերով Ռիժիկովը, որը խոհարարութեան հետ այնքան կապ ունի, որքան ես՝ աստղագիտութեան, դուցէ մի քիչ աւելի, որովհետեւ նա յեղափոխութիւնից առաջ եղել է խոհարարների արհեստակցական միութեան նախագահը, իսկ ես, ճիշդ է, աստղագէտ չեմ, բայց կապուած եմ աստղերի հետ հազար ու մի թելերով:

Նստում ենք ճաշի եւ... եւ կատարւում է հրաշքը: Քիչ բան ասած կը լինեմ, եթէ ասեմ, որ ես աչքերիս չհաւատացի եւ շատ բան ասած չեմ լինի, եթէ ասեմ զարմանքից բերանս բաց մնաց: Եթէ դումարենք դոկտոր Վաթսոնի բոլոր զարմանքներն ի տես Շերլոկ Հոմսի հրաշագործութիւնների, դժուար թէ հաւասարուէին իմ զարմանքին: Տարիներ շարունակ խօսուել է այն մասին, որ խմիչքը չի թափանցում բանակից ու ճամբարների փշալարերից ներս, տարիներ շարունակ անդրադառնալ, հաստատուել եւ նորից վերահաստատել այս անժխտելի իրողութիւնը, տարիներ շարունակ Նոր Տարին սօնել եռման կամ լուսադէմ պէպքում դուռնաւոր ջրով լեցուն թիթեղէ դաւաթներն իրար խփելով եւ յանկարծ, այս անգամ Աչոտ դային...

— ... Թող այս բաժակն էլ կալանաւորների կենացը լինի: Ասում են կայ մի պետութիւն, որն ընդամէնը մի փոքրիկ բանտ ունի: Բանտի միակ ծերուկ պահակն անդորձութիւնից ձանձրանում է, իսկ երբ մէկին բռնում են, սեւ գրօչակ են բարձրացնում բանտի վրայ: Թող մեզ մօտ էլ այդպէս լինի: Մենք մերոնց կենացը, նրանք չատ են: Ա՛խ, չատ–չատ են: Ինչո՞ւ այսպէս եղաւ, այս ինչ զարմանալի պատմութիւն է... Արդար կարգերի երկրում այսքան կալանաւո՛ր... սա մի մեծ բամբասանք է, մի մեծ զըրպարտութիւն: Անմեղ, անշառ ու պէտքական, շատ պէտքական մարդկանցով են լցրել բանտերն ու լագերները: Ո՞ւմ է հարկաւոր, ինչո՞ւ այս մեծ անարդարութիւնը:

(40–Շար.)

ԴՈՒՐԳԵՆ ՄԱՀԱՐԻ

ՆՈՐ ՏԱՐՈՒԱՆ ԱՌԹԻՒ

"ՅԱՌԱՋ"

ՆՈՒԻՐԵՑԷՔ

ՀԱՅԿԱԿԱՆ ԿՂԶԻ

ՆԱՒԱՊԱՏՈՒ ՊՈՒՍՆ

ՀՊՏԱԿ

Ա.

Ֆաուստոս պիտի չուայտ ասիկա մէկ թէ մարդ: Մեկը ու ամբողջ տունի: Ամէն տարուան աշնան ինծի համար ուրիշ մեկնում չկար: Ես ու մայրիկս միայն կը մնայինք տանը: Հայրիկ ալ ամէն տարի կը գնար Ղարաքիլիսա, ուր ունէինք մեր հին տունը, ուր ես ծնած էի: Ինչո՞ւ կը գնար, չեմ գիտեր: Ինչ որ ալ ըլլայ պատճառը, ես ուրախ էի, որ հայրիկս չկար: Ինծի համար ամենահաճելի օրերն էին անոնք, որովհետև մայրիկս ամբողջովին իմն էր: Ես ալ անոր միակ զբաղումն էի: Ամբողջ օրը անոր հետ էի, ամբողջ գիշերն անոր գիրկը կը քնանայի: Ինչպէ՞ս կրնայի չսիրել մայրիկս, որ ինծի համար ամէն բան էր աշխարհիս վրայ: Ես ալ անոր համար ամէն բան էի: Ինծի համար ամէն բան ըրած էր մայրիկս: Ինծի համար ամէն բան ըրած էր մայրիկս: Ինծի համար ամէն բան ըրած էր մայրիկս

«ՅԱՌԱՋ»Ի ԲԱՐԳԱՒԱՃՄԱՆ ՀԱՄԱՐ

(Համակրաւիճ տեղահանուրեան առթիւ)

Տիկին Դարբինեան 50 *ֆր.*,
Տիկին Շահրիկեան 50 *ֆր.*,
Պ. Ղուկաս Մարտիրոսեան (Վալանս) 50 *ֆր.*, *Տիկին Առաքելեան (Պրոն)* 30 *ֆր.*, *Պ. Զ. Բեհլիվանեան (Պրոն)* 30 *ֆր.*, *Պ. Տիգրանեան* 10 *ֆր.*:

×

Փարիզէն Տիկին Հր. Զիլինկիրեան իր ամուսնոյն՝ ողբ. Պ. Զիլինկիրեանի յիշատակին կը նուիրէ 50 *ֆր. «Յառաջ»ի տեղահանուեան առթիւ:*

ՆՈՒԷՐ

Շաւիլէն ընկ. Մոմճեան Տմիրճեան իր ապաքինման առթիւ 100 *ֆր. կը նուիրէ «Յառաջ»ին:*

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

ՄԱՐՍԷյԼ.— Այրի Տիկին Յովհ. Հայկազեան, այրի Տիկին Էլէն Սապունճեան եւ զաւակը, Տէր եւ Տիկին Էտուար Սապունճեան եւ աղջիկը, այրի Տիկին Լիլիկ Սապունճեան իրենց խորին շնորհակալութիւնները կը յայտնեն բոլոր անոնց որոնք անձամբ, ծաղկեպատկով, փոխան ծաղկեպատկի նուէրներով, մասնակցութիւն բերին անոնց սիրելի ամուսնոյն, հօր եւ մեծ-հօր խոր սուգին

ՍՏԵՓԱՆ ՍԱՐԱՖԵԱՆԻ

մահուան առթիւ:

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

ՇԱՒԻԼԻ

Եկեղեցւոյ հաղարամեակութիւնը շնորհակալութեամբ ստացած է հետեւեալ նուիրատուութիւնները, եկեղեցւոյ վերաշինութեան 15րդ տարելիցին առթիւ.—

Պ. Ժ. Զիլինկիրեան 1500 *ֆր.*, *Տիկ. Ս. Մատաթ* 500, *Ոմն* 600, *Պ. Ա. Գասուդեան* 300, *Տէր եւ Տիկին Գ. Թորոսեան* 100, *Ոմն* 100, *Տէր-Յակոբեան* 100:

IMPRIMERIE SPÉCIALE
DU JOURNAL «HARATCH»
32, RUE DE TRÉVISE — PARIS (9e)

Առաւօտի Աղթիւ «ՅԱՌԱՋ» կը Նուիրուի

Մարսէյլէն Տոքթ. Ալփոնս Պիպէրեան մէկ տարեկան «Յառաջ» կը նուիրէ իր դասընկերոջ՝ Զաւէն Նահապետեանի, վերնախնամեկան յիշատակներով:

ՓՈԽԱՆ ԾԱՂԿԵՊՍԱԿԻ

Ստեփան Սարաֆեանի *մահուան առթիւ փոխան ծաղկեպատկի՝ այրի Տիկին Սարաֆեան եւ զաւակները 50 ֆր. կը նուիրեն «Յառաջ»ի եւ 50 ֆր. Սամուէլ Մուրատեան վարժարանին:*

Հիւրին, Տէր եւ Տիկին Միքայէլեան եւ զաւակները 50 ֆր. կը նուիրեն «Յառաջ»ի եւ 50 ֆր. Աղքատախնամին:

(Տառնալ «Յառաջ»էն):

ՆՈՒԷՐ

Պ. Յովհ. Սէմէրճեան (Կլիւկեզի) 50 ֆրանք կը նուիրէ Պանեէզ-Քաշանի Կապ. Խաչի մանուճիւղին (առնալ «Յառաջ»էն) եւ 50 ֆր. «Յառաջ»ի բարեգործութեան:

DIMANCHE 7 JANVIER A 15 H.

Salle St. Dominique, 92, Rue St. Dominique, Métro Invalides

MATINÉE ARTISTIQUE DE DANSES

Organisée par le

Ballet Arménien de ÉVA ARZOUIAN

Au profit de l'Ecole des Sœurs Arméniennes d'Arnouville - les - Gonesse

ARBRE DE NOEL ET DISTRIBUTION DE FRIANDISES

Prix des places : 10 et 20 F. 5 F. pour l es étudiants et les enfants

S'adresser : HERATCHIAN, 6 Rue Lamartine
MARKARIAN, 32 Rue de Trévise
ou à Mme PETROSSIAN, — Tél. : 551-39-09

ՊԱՏՐԱՍՏՈՒԵՑԷՔ

ԷՍԱԵԱՆ ՍԱՆՈՒՑ ՄԻՈՒԹԵԱՆ

ՊԱՐԱՀԱՆԴԷՍԻՆ

Խնջոյք

ՏԷՄԻՆԻ ՄԷՋ

Վասպուրականի Հայր· Միութիւնը Ծնունդի առթիւ խնջոյք մը կազմակերպած է ճաշով, Յունուար 6ին, ժամը 20էն մինչեւ լոյս, Քաղաքապետարանի սրահին մէջ:

Ս· ՅՈՎՀ· ՄԿՐՏԻՉ ԵԿԵՂԵՑԻ

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒԹԻՒՆ

Ս· ԾՆՈՒՆԴԻ ՏՕՆԱԿԱՆ ՕՐԵՐՈՒ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆՑ

Երկուշաբթի, 1 Յունուար — ԿԱՂԱՆԴ եւ ՏԱՐԵՄՈՒՏ: *Գ· օր ծննդեան պահոց:* *Ժամը 10ին պատարագ կը մատուցուի:*

Ուրբաթ, 5 Յունուար.— Ճրագալոյց Ծնունդեան եւ Աստուածայայտնութեան *Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Սկիզբ ժամերգութեանց ժամը 8ին: Բազմաձայն պատարագ ժամը 10ին: Կը պատարագէ եւ կը քարոզէ՝ ՍԵՐՈՎԲԷ ԱՐՔ. ՄԱՆՈՒԿԵԱՆ (Կաթող· Պատուիրակ Հայոց Եւրոպայի):* Պատարագի աւարտին կը կատարուի ջրօրհնէք:

Կիրակի, 7 Յունուար 1973 — *Բ· օր Ծննդեան: Յիշատակ է մեռելոց: Ժամը 10ին պատարագ կը մատուցուի: Պատարագի աւարտին մանուկներ Հոգեհանգիստ կը կատարուի վասն համօրէն ննջեցելոց:*

Շաբաթ, 13 Յունուար — *Ը· օր· Ծնունդեան: Տօն Անուանակոչութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի: Ժամը 10ին պատարագ կը մատուցուի: Պատարագի աւարտին Առաջնորդարանի սրահին մէջ տնօրհնէք կը կատարուի:*

×

Համաճայն Հայաստանեայց Եկեղեցւոյ աւանդութեան, տարին երկու տաճարներ՝ Ս· Ծնունդին եւ Զատիկին, Հայոց տուները կ'օրհնուին՝ տնօրհնէք կը կատարուի:

Այն ընտանիքները, որոնց եկեղեցական մը չայցելէ՝ տաներէց չունին, թող հաճին տեղեկացնել եկեղեցւոյս դիւանին՝ տալով իրենց հասցէն, որպէսզի հոգեւոր հայր մը ուղարկուի:

Շ. Յ. Դ. ԲԱՆԳԱՐԱՆԻՆ

Ոմն 30 *ֆր. կը նուիրէ Թանգարանին:*

ԼՈՑՍ ՏԵՍԱԻ

ՀԱՄԱԽԱՌԲԵՐԴՑԻԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

Ֆրանսայի չրջանի

1973 Ի ՕՐԱՑՈՅՑԸ

Գին 3 ֆրանք

Դիմել մասնաճիւղերու վարչութեանց կամ

K. Khamarian
9, Avenue Camille Pelletan
13 - Marseille (2e)

ՇԱԻԻԼԻ Ս· ԳՐ· ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

Դպրոցի աշակերտներուն ծնողքները առիթաղտաբար խորհրդակցական ժողովի կը հրաւիրուին այս Շաբաթ 30 Դեկտ. ժամը 14·30ին, դպրոցի սրահին մէջ:

ՄԱՆՈՒԿՆԵՐՈՒ ՕՐԸ

ՓԱՐԻԶԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Կապ· Խաչի Շրջ· Վարչութեան, մասնակցութեամբ Փարիզեան չրջանի իր մասնաճիւղերուն, Մանուկներու Օրը կը տօնուի Փարիզի մէջ ՅՈՒՆՈՒԱՐ 28ԻՆ

×

ԼԻՈՆԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Կապոյտ Խաչի Լիոնի մասնաճիւղին Յունուար 14ին:

×

ՊՕՄՈՆԻ ՄԷՋ

Կապոյտ Խաչի Պոմոնի մասնաճիւղին դպրոցին տօնածառի հանդէսը 7 Յունուար կիրակի կէսօրէ վերջ ժամը 3ին եկեղեցւոյ սրահին մէջ:

Կաղանդ պապան կը ներկայանայ պէս-պէս նուէրներ բաշխելու փոքրիկներուն:

×

ԿՐԸՆՈՊԼԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Կապ· Խաչի մասնաճիւղին, մեծ պատրաստութեամբ կը տօնուի Յունուար 21ին կիրակի ժամը 15·30ին:

×

ՏԷՄԻՆԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Կապ· Խաչի մասնաճիւղին, Յունուար 14, կիրակի կէսօրէ վերջ ժամը 15ին, Քաղաքապետարանի չքեղ սրահին մէջ:

Գեղարուեստական բաժին դպրոցի աշակերտներու կողմէ.— Երգ, արտասանութիւն եւ հայկ· պարեր: Նուէրներ կաղանդ պապային կողմէ:

×

ՎԻԻՆԻ ՄԷՋ

Նախաձեռնութեամբ Կապոյտ Խաչի Վիէնի մասնաճիւղին Յունուար 7, կիրակի կէսօրէն վերջ ժամը 15ին, Գասպար Իփէկեան ակումբին մէջ՝ 40, Ռիւ Վիքթոր Ցօժիւ:

Երգ, արտասանութիւն, պար, դպրոցի աշակերտներու կողմէ:

Կաղանդ պապան կը ներկայանայ նուէրներ բաշխելու համար փոքրիկներուն:

×

ՊՈՒԼ· ՕՏՏՈՅԻ ՄԷՋ

Կապոյտ Խաչի Պուլ· Օտտոյի մասնաճիւղի վարչութիւնը կը տօնէ մանուկներու օրը 14 Յունուար կիրակի կէսօրէ վերջ ժամը 15ին, եկեղեցիին մէջ: Կը հրաւիրուի հայ հասարակութիւնը:

×

ՄԱՐՍԷյԼԻ ՄԷՋ

Կապոյտ Խաչի Մարսէյլ քաղաքի դպրոցական տօնածառը կիրակի 7 Յունուար ժամը 3ին Ա.Հարոնեան ակումբը եւ մասնաւորաբար կը հրաւիրուին կայան եղած բոլոր երախաները:

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏՕՆԱԾԱՌ

Կազմակերպուած Հ· Բ· Ը· Միութեան Մարսէյլի մասնաճիւղի եւ Ս· Սահակ-Մեսրոպ Մայր եկեղեցւոյ վարչութեանց կողմէ:

Տեղի պիտի ունենայ 7 Յունուար, կիրակի կէսօրէն հաք ժամը 4ին, Միութեան սրահին մէջ, 7 Ռիւ Փափէր:

Կը հովանաւորէ Յակոբ եպիսկոպոս Վարդանեան:

Տօնածառի հանդիսութեան կը մասնակցի հայերէնի դասընթացքի երկսեռ աշակերտութիւնը իրենց հայերէն երգերով, արտասանութիւններով եւ զանազան անակնկալներով:

Կը հրաւիրուին բոլոր ծնողքներն ու հայրենակիցները անխտիր:

ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ է

Կ'ՈՒԶՈՒԻ

Տարեց կնոջ մը ընկերութիւն ընելու համար (ճաշ եւ քիչ մըն ալ մաքրութիւն) կը փնտռուի մէջին տարիքի հայ կին մը: Բնակութիւն եւ լաւ վճարում:

Դիմել.—

ARTINIAN
10, Rue des Feuillants — 02 Soissons
Tél. (16-23)-53-12-23

Disque VOGUE n° 30152

Chants Romantiques Arméniens

20ème VOLUME

Հրապարակ ելաւ հայ ռոմանթիք երաժշտութեան նուիրուած նոր երգապնակ մը՝ պատրաստութեամբ

ԱՐԱ ՊԱՐԹԵԼԵԱՆԻ

Խմբերգ – մեներգ եւ նուագախումբ *Կը պարունակէ* 12 *հետեւեալ երգերը*
Արուեան — Իմ Անուշ Տաւիղ — Մանուկն ու վարդը — Հոգիս մրմուռ — Երազ — Նաւերգ — Ես լսեցի — — Ոսկի ջուրթակ — Գարուն — Սարեր կ'ադաչեմ — Իրիկուն — Եարիս:

Ինչպէս նաեւ երկու եռանուագ (Թռիչ) թիւ 790, *երկու սրինդի, քլարինէթի եւ տաւիղի համար*

Մեծածաւալ երգապնակ, գին 30 *ֆրք· յաւելեալ առաքման ծախքը:*

Կը դրկուի ֆոնթրը ռամպուրսման
Երգարանով միասին առանձին համար դիմել հեղինակին՝

M. A. BARTEVIAN 14, RUE PETIT, PARIS 19
TÉLÉLHONE : 208-99-22

Նախկին երգապնակները են. Կոմիտասեան Պատարագ (թիւ 451), Եկմալեան Պատարագ (442), *Գանձարան Հայ Եկեղեցական երաժշտութեան* (454 եւ 547)
Chants d'Arménie et du Caucase (526) — Arménie (527 et 199) — Reflets d'Arménie (516) — Promenade en Arménie (596) — Soirée Arménienne (20162) — Arménie Légendaire (20181) — Le Caucase (182) — Oeuvres Symphoniques (20176) — Au fil des Songes (714)

ՇԱԲԱԹ
30
ԴԵԿՏԵՄԲԵՐ
SAMEDI
30 DECEMBRE
1972

LE NUMÉRO 0,70 F.

ՀԱՅՐԱՆԴ

ՕՐԱԹԵՐԹ
ՀԻՄՆԱԴԻՐ ՇԱՒԱՐՇ ՄԻՍԱՔԵԱՆ

HARATCH

LE SEUL QUOTIDIEN ARMÉNIEN EN EUROPE OCCIDENTALE
Directrice : ARPIK MISSAKIAN
32, RUE DE TRÉVISE PARIS 9

— Tél. : 770-86-60 —
C. C. P. Paris 15069-82

Fondé en 1928
R. C. Seine 57 A 2781

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ֆրանսա	Տար. 120 ֆր.	Վեցամսեայ	65 ֆր.
Արտասահման	Տար. 135 ֆր.	Հատը	0,70 ֆր.

48ՐԴ ՏԱՐԻ — ԹԻՒ 12·602

Fondateur : SCHAVARCH MISSAKIAN

48e ANNÉE — N° 12.602

ՕՐՈՒԱՆ ԽՕՍՔԸ

ՄԵԾԱՍՔԱՆՉԻ ՍՊԱՍԱՐԿՈՒՆ

—o—

Սփիւռքի հայ մամուլը — խօսքը, առջեւ, ընտրելազօրի մասին է — բոլոր տարբեր պատկեր պիտի պարզէր, իրրեւ բովանդակութիւն, ինչպէս նաեւ ձեւ ու ոճ, եթէ Մեծ Աղէտէն ետք բախտաւորութիւնը չունենար ան իրեն առաջնորդ ունենալու Մեծասքանչի սպասարկուներու փայլուն հոյլ մը :

«Ազատամարտ»ի, «Ազդակ» չաբաթաթերթի եւ քանի մը այլ պոլսահայ թերթերու մէջ արդէն իսկ մշակուած եւ բարձրորակ ասպիճանի մըն էր հասած հրապարակագրական մեր լեզուն : Եւ Զարդարեան, օրինակ, զայն հասցուցած էր մինչեւ գրական մակարդակի :

Միթքերու յստակութիւն, առոյգ եւ կենդանի ոճ, կորուկ նախադասութիւն — ներ, հակիրճ պատկերներ, ընտրուկ ներ — կայացուած բառեր եւայլն, գլխաւոր յատկանիշերը կազմեցին այդ շրջանի մեր հրապարակագրական լեզուին :

Սփիւռքի մէջ լրագրական այդ «աւանդ — ներ»ը չարունակեցին եւ ասպիճան մը աւելի զարգացուցին «կրասեր» գրիչներ, անոնք՝ որոնք այժմ մեր հրապարակա — գրութեան մեծերը կ'որակուին արդար դնահատումով :

Շաղկապը հինի եւ նորի, երկուստեք գործ – դաւառի եւ արտասահմանի միջեւ եղաւ բնական, ներդաշնակ : Որովհետեւ Մեծասքանչի սպասարկուներու հոյլը ո՛չ միայն իր ուիչն էր ստացած արմատէն, այլեւ, որովհետեւ, ան գիտակցութիւնը ունեցաւ իր կապը չխզելու կորսուած հողի կանչին, անոր թելադրած կոչին, արեան պատգամին հետ : Եղաւ ժիր մշակ արի, ինչպէս պիտի ըսէին հինները :

Բենիամին Թաչեան, որուն մահուան տարելիցը դեռ նոր վերջացաւ, տասնամեակներ չարունակ կոչումի վերածեց հրապարակագրական ասպարէզը : Ա՛յն ինչ որ ամենց համար նկատուեցաւ պրչի մարդ — զայր, Թաչեանի ու իր նմաններուն համար գործաւ սրբատեղի : Ի վերջոյ հայ մամուլը նիւթ հրամցնող էջ մը չէր լոկ : Եւ ոչ ալ լրատուութեան պարզ միջոց մը անոնց համար : Այլ ա՛ն նախ եւ առաջ բեմ մըն էր, ուր կը տողանցեն զերակատարները մեր պատմութեան, ուր չարք կը կազմեն մեր մշակոյթի արժէքները՝ նոթերուն, յեռնորդներուն, այլ խօսքով մեղի փոխանցելով ոգին մեր երկրին, մեր անցեալին, ինչպէս նաեւ լման զեղեցկութիւնը մեր լեզուին :

Ասկէ նաեւ անոր խստապահանջ վերաբերումը արժէքներու հանդէպ, որ ազդին զգալի դիմագիծ ունին : Ասկէ նաեւ անոր «ոսոխականան» կեցուածքը Մեծասքանչը կոպտահարող, կայլնահարող մարդոց դէմ : Դաւաճանել մեր լեզուին, կը նշանակէր դաւաճանել մեր պատմութեան, մեր հայրենիքին :

Ինքն է որ կ'ըսէ եւ լսեցէ՛ք զայն իրրեւ պատգամ՝ «Մենիք հայրենապաւ կը կոչենիք անոնիք, որ կ'ուրանան իրենց հայրենիքը կամ կը դաւեն անոր դէմ : Բայց գրեթէ անտարբեր, գրեթէ ներողամիտ ենիք ա — նո՛ց հանդէպ, որոնիք նոյն սրբապղծու — թիւնը կը գործեն իրենց «երկրորդ հայրենիք»ին՝ մայրենի լեզուին դէմ» :

Մեծասքանչի սպասարկուն՝ Բ. Թաչեան լեզուն նկատեց անկորնչելի զրամագլուխ մը : Կորսնցնել զայն՝ կը նշանակէր կորսնցնել ե՛ւ հայրենիք, ե՛ւ պատմութիւն, ե՛ւ մշակոյթ : Այլ խօսքով՝ ամէն

ՕՐՈՒԱՆ ԴԷՊՔԵՐԸ

ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ԱՀԱԲԵԿՈՒՄ ՊԱՆՔՈՔԻ ՄԷՋ

ԻՍՐԱՅԵԼԱՅԻ ՊԱՏԱՆԴՆԵՐԸ ԱՁԱՏԵՑԱՆ

—o—

Մինիմի մէջ գտնուող կրկնուեցաւ այս անգամ ասիական երկրի մը՝ Թայլանտի մայրաքաղաքին մէջ, սակայն, առանց ահռելիներուն եղերական վախճանն ունենալու :

« Սեւ Սեպտեմբեր » պաղեստինեան դաղանի կազմակերպութեան պատկանող չորս ահաբեկիչներ Պանքոքի իսրայելեան դեսպանատունը մտնելով կը փակեն դուռները եւ պատանդ կը բռնեն վեց Իսրայելացիներ, որոնք հոն կը գտնուէին : Ասոնք դեսպանատան անձնակազմին կը պատկանին : Երկուքը կին էին :

Պաղեստինցիները իրենց առեւանգումի համար ընտրած են Թայլանտի աղղային ծօնը, որովհետեւ ոսոխականական հակա — դութիւնը աւելի թոյլ է այդ օրը : Աղդին Իսրայէլի դեսպանն ալ պաշտօնական ընդունելութեան ներկայ էր :

« Սեւ Սեպտեմբեր »ի ահաբեկիչները դեսպանատունը «զրաւելէ» ետք պաղեստինեան դրօշը պարզած են պատշգամին եւ պատուհանէն թուղթ մը նետելով ներ —

քին : Ահա թէ ինչո՛ւ անոր խստապահանջ ոգին աննկուն էր մեղանչումներու դէմ : Ու իր զրչին շափ չարժուն եղաւ նաեւ անոր «մկրատը»՝ այլանդակ արտայայտութիւնները, անհարազատ ոճերը, այլ մանաւանդ խժաձայն օտար բառեր մկրատելու համար :

Եւ ի՛նչ պատկեր պիտի պարզէր, այսօր, սփիւռքի մեր մամուլը, ա՛յն որ աւանդութիւններու ճամբով կը քալէ, եթէ Գահիրէի մէջ Բ. Թաչեան, Փարիզի մէջ՝ Շ. Մխաքեան, այլ քաղաքներու մէջ անոնց նմանները Մեծասքանչի տաճարէն չվտարէին լեզուի փղշտացիները :

Ռ. Զարդարեանէն ետք Շ. Մխաքեան, Մ. Աւետեան, Գ. Մխիթարեան, Բ. Թաչեան եւ դեռ ուրիշներ արթուն պահակները մնացին Տիրոջ Այդիին եւ թոյլ չտուին, որ յանուն չեզ պիտեր ինչ տեսութիւններու, ինչ վարդապետութիւն — ներու, ցուցամոլութիւններու եւ այլ յոռի վարկածներու ու տրամադրութիւններու այդ Այգին դառնայ այլանդակ, անբոյր վանդակ եւ անպիտանի լքեալ դոյգ :

Բ. Թաչեան եւ Մեծասքանչի միւս սպասարկուները արեւմտահայերէնը օժտեցին ինքնատիպ դեղեցկութեամբ մը հրապարակագրական մարզին ներս : Կարճ եւ հատուն, պատկերաւոր եւ յստակատես միանգամայն, կենսահաղորդ, թրթռուն եւ առոյգ միաժամանակ : Այլ մանաւանդ՝ հարազատ մեր լեզուի աւանդական կառոյցին եւ ոգիին :

Ու ասիկա բացառիկ նուաճում մըն է անկասկած : Հարստութիւն մը անպակասման :

Բ. Թաչեանի մահուան տարելիցը թող կոչ մը ըլլայ բոլորիս համար՝ պահպանել անաղարտ մեր ժողովուրդի հնագոյն եւ, միաժամանակ, մեծագոյն հարստութիւնը — զո՛ւք ըսէք՝ զանձը — մայրենի լեզուն :

Այս է անկասկած Մեծասքանչի սպասարկուին եւ իր նմաններուն պատգամը՝ ուղղուած մեզի :

Ժ. Մ.

կայացուցած են իրենց պահանջները : Ասոնք կը պահանջէին, որ Իսրայելացիք ազատ արձակեն իրենց 36 ընկերները, որոնք բանտարկուած են Իսրայէլի մէջ : Ասոնց մէջ է այն ճափոնցին, որ Լոդ օդակայանի ջարդին մասնակցած էր : Երեք երիտասարդ ֆրանսացիներ եւս, որոնք մաս կազմած էին այսպէս կոչուած 1971ի « Զատկուան արձակպէնիներու » խմբակին, եւ որ ձերբակալուած ու բանտարկութեան էին դատապարտուած, պէտք է ազատ արձակուէին :

Մինչ պինուորական չղթայ մը կը հսատատուէր դեսպանատան չուրջ, կ'իմացուէր, որ իսրայելեան իշխանութիւնները կը մերժեն ընթացք տալ ահաբեկիչներու պահանջին :

Պաղեստինցիք դեռ անծանօթ մնացած պատճառներով կ'ընդունէին ազատ արձակել իրենց պատանդները : Թայլանտի կառավարութիւնը առաջարկած ըլլալով արձակել, որ Գահիրէ մեկնին օդանաւով, այս վերջինները ընդունած են պայմանը :

Զորս ահաբեկիչները Գահիրէ մեկնեցան : Իսրայէլի վարչապետը, Տիկին Կոլտա Մէյր անձկութեան պահեր անցընելէ ետք, իր ուրախութիւնը յայտնած է այս չգող լուծումին համար եւ մասնաւորապէս չնորհաւորած Թայլանտի իշխանութիւնները :

ՀԱՆՕՅ ՌՈՒՄԲԵՐՈՒ ՏԱԿ

ՎԵՑ ԹԱՂԱՄԱՍ՝ ՔԱՐՈՒԲԱՆԴ

—o—

Պաշտօնապէս, յարդ, միայն Շուէտն է որ բողոքած է ամերիկեան ռմբակոծութեանց դէմ եւ այդ իսկ պատճառ է որ չատեր վրդովին ի տես բարեացակամ լռութիւններու : Այսպէս Անգլիոյ Աշխատաւորական կուսակցութիւնը կ'ուզէ որ վարչապետ Հիթ դատապարտէ Նիքսընի արարքը, մինչ Ֆրանսայի Համայնավար կուսակցութիւնը նոյնը կը պահանջէ Նախագահ Փոմփիտուէն : Շուէտի մէջ սակայն բոլոր քաղաքական կուսակցութիւնները հատաքական յայտարարութիւն մը տարածած են «յանուն Շուէտի ժողովուրդին» պահանջելով ռմբակոծութեանց դադրեցումը : Պարզ է որ Շուէտի եւ Միացեալ Նահանգներու յարաբերութիւնները զգալի կերպով վտանգուած են, մանաւանդ երբ առջի օր վարչապետը Հանոյի ռմբակոծութիւնները բաղդատեց դարուս վատթարագոյն վայրագութեանց հետ, ոգեկոչելով Թրեպլինքան, Կեռնիքան եւ Օրատուրը :

Պէտք է ըսել որ ամերիկեան մամուլն ալ խիստ է : Նիւ Եորք Թայմզ եւ Ուա — շինկթըն Փոսթ կը պահանջեն որ Նիքսըն լսէ իր լուութիւնը եւ բացատրութիւն տայ ամերիկացի ժողովուրդին : Երկու թեր — թերն ալ — ազատական — արդէն իսկ դէմ են որ Ամերիկա միջամտէ վիէթնամեան «քաղաքացիական պատերազմի մը» :

Տեղւոյն վրայ, Հանոյ, մամուլի թղթակիցները կը հաստատեն թէ մայրաքաղաքին վեց թաղամասերը քարուքանդ եղած են : Ամերիկացիք ալ բաւական օդանաւեր կորսնցուցած են թէեւ ամերիկեան եւ Հիւս. Վիէթնամի պաղիւրները նոյն բանը չեն ըսեր անշուշտ : Ուշադրութեան 15 օդանաւ միայն կորսուած կը յայտարէ մինչ Հանոյ 71 օդանաւի մասին կը խօսի : Ամէն պարագայի մէջ եւ հաւանակ համաչխարհային վրդովումին, յայտնի չէ թէ ի՞նչ է Նիքսընի նպատակը եւ թէ պիտի դադրեցնէ՞ թէ ոչ ռմբակոծութիւնները :

ՄԿՐՏԻՉ ԱՐՄԷՆԻ ՄԱՀԸ

Երեւանի Հեռատիպի Դեկտեմբեր 27ի հաղորդումէն ցաւով կ'իմանանք Հայաստանի ամէնէն վաստակաւոր արձակագիրներէն Մկրտիչ Արմէնի մահը, 66 տարեկանին :

×

Ողբացեալ գրագէտը ծնած էր Ալեքսանդրապոլ (այժմ Լենինական) 1906ին : Գրական առաջին քայլերը առած է քերթուածներ գրելով, բայց արձակի մէջ է որ Մկրտիչ Արմէն տիրական դէմք մը պիտի դառնար : Դեռ վերջերս կը հրատարակէինք իր ամէնէն զեղեցիկ վէպը, որ նաեւ լատպոյն էջերէն է արեւելահայ արդի գրականութեան՝ Հեղնար Ազբիւր : Այս գործը լոյս կը տեսնէր առաջին անգամ 1935ին բայց 1937ին «ռէակցիոն ռոմանտիզմ» կը նկատուէր եւ տարաբախտ գրագէտը կ'աքսորուէր ու տասը տարի կը ճաշակէր սթալինեան բանտերը : 1955ին կը վերահրատարակուէր «Հեղնար աղբիւրը» Հայկահրատի կողմէ :

Հեղինակն է նաեւ բազմաթիւ նորա — վէպերու որոնց մէկ մասը լոյս տեսած է 1957ին «Պատմուածքներ» խորագրով հատորին մէջ : Իր նորավէպերէն «Ցառաջ»ի մէջ հրատարակած ենք «Ցունիս 23ը», «Միակ Երգը», «Իմ տատը» եւայլն :

Մկրտիչ Արմէնի թաղումը կատարուած է Դեկտ. 27ին քաղաքային Պանթէոնի մէջ :

Իր մահով, մեր արդի գրականութիւնը կը կորսնցնէ իր ամէնէն վայելուն ներկայացուցիչներէն մէկը, եւ մանաւանդ՝ մեծ արձակագիր մը :

ՔԱՆԻ ՄԸ ՏՈՂՈՎ

ԳՐԱՆՍԱՑԻ հարաւը, մանաւանդ Վառնահանդին մէջ, աստիճ անձրեւներ պատճառ եղած են ադէտալի ողղումներու :

ԵԳԻՊՏՈՍԻ նախագահը յայտարարեց, թէ հրահանգած է կառավարութեան պատրաստ պահուիլ հաւանական պատերազմի մը Իսրայէլի դէմ : Թէլ Աւիվ եւ պիպատայի երեք զերիներ յանձնեց Եգիպտոսի : Ասոնք հիւանդ էին եւ կը կարօտէին բժշկական խնամքի : Այժմ 97 եգիպտացի զերիներ կը մնան իսրայէլեան կալանքներու մէջ :

ՀԱՐի ԹՐՈՒՄԸՆի յաղարկաւորութիւնը կատարուած է պինուորական պատիւներով բայց նաեւ որոշ պարզութեամբ : Կինը՝ 80 տարեկան ներկայ չէ եղած արարողութեան :

ՔԱՆԱՏԱՑԻ նախկին վարչապետը՝ Լէսթըր Փիրսըն մեռած է առջի օր, 75 տարեկանին, ընդհանրացած քանէրի հետեւանքով : Խաղաղութեան Նոպէլի մրցանակը ստացած էր : Իր քաղաքական կեանքը սկսած էր 1928ին : Նախկին պարագլուխն էր նաեւ Քանատայի ազատական կուսակցութեան :

ԱՆԳԱՐԱՑԻ Պաշարման Վիճակի երկրորդ Ատեանը 10 ամիսէն 10 տարուան բանտարկութեան պատիժներ տուաւ թուրք ուսուցիչներու սենտիքայի 59 անդամներու : Ասոնց մէջ է ծանօթ գրագէտ՝ Ֆաքիր Պայքուրթ, որ ութ տարի բանտարկութեան պատիժ ստացած է : Պուլկնթ Հապուրա հրատարակիչը եօթնուկէս տարի բանտարկութեան դատապարտուած է :

ԳՐՔԵՐԻ ԵՒ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՀԵՏ

ԿԱՊԻՏԱԼԻՍՏ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ ԴՐԱՄ ՍՏԱՆԱԼՈՒ ԵՒ ԼՐՏԵՍՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Ե.

« Յեղափոխութեան վաճառականը » գրքի հեղինակները գրում են.

«Ոչ մի կասկած որ Պարվուսը ապագայում էր Յիմմերմանին անհրաժեշ – տութիւնը Գերմանիայ կողմից օժանդակելու Բոլշեւիկեան կուսակցութեան: Բոլշեւիկներին դրամ էր պէտք, իրենց խաղաղութեան պրոպագանդը ծաւալելու ռուսական թիկունքում, այլեւ ճակատում գտնուղ զինուորների մէջ, որ արդէն սարսում էր չար ամիսների ընթացքում: Այդ պրոպագանդը այժմ նշանակալից կերպով պէտք էր ուժեղացնել եւ կապուէր բոլշեւիկների քաղաքականութեան հետ: Վառնդը, որ արեւելեան ճակատում գերմանի զինուորական յարձակումը կը յանգէր միացմանը բոլոր հայրենասէր տարրերի Ռուսաստանում եւ կ'անդամալուծ – ծէր խաղաղութեան պրոպագանդին՝ գեռեւս զոյութիւն ունէր: Սրանից ամէնից աւելի պիտի տուժէին բոլշեւիկները: Պարվուսը նորից պնդում էր, որ ռուսական ճակատի վրայ ոչ մի յարձակում տեղի չունենար մի քանի ամիսների ընթացքում: Դեռ առաջ Արտաքին նախարարութիւնը խնդրել էր՝ պետական գանձարկղից հինգ միլիոն մարքի մի նոր գումար յատկացնել Ռուսաստանում գաղափական նպատակների համար եւ Ապրիլ 3ին այդ խնդիրը բաւարարուեց»:

Ապա Պարվուսը ճամբորդում է Կոպէնհագէն եւ Ստոկհոլմ: « Յեղափոխութեան վաճառականը » գրքի հեղինակները գրում են.

«Ստոկհոլմում Պարվուսը իր ժամանակի մեծ մասը անց էր կացնում բոլշեւիկեան կուսակցութեան Արտասահմանի կենտրոնական Կոմիտէի ղեկավարների հետ: Այնպէս էր երեւում, որ ինքը իրր նրանցից մէկն էր: Դա միակ արտասահմանեան ներկայացուցչութիւնն էր բոլշեւիկեան կենտրոնական Կոմիտէի, որը արդէն այդ ժամանակ գտնւում էր Պետրոգրադում: Նա նոյնպէս պրոպագանդի Բիւրօ էր, որը հրապարակում էր բոլշեւիկեան երկու օրգաններ գերմաներէն լեզուով՝ « Ռուսական յեղափոխութեան լրատու» եւ « Պրուզայի Թղթակցութիւններ »ը: Այդ հրատարակութիւնները վարում էին՝ Գանեցկին, Ռադեկը եւ Վացլաւ Վարովսկին, որը յայտնի էր Պ. Օրլովսկի ծածկանունով... Բոլշեւիկեան Բիւրոյի տիրական դէմքը Ռադեկն էր... Բայց Պարվուսից՝ Ռադեկը չափում ունէր նաեւ մեն Գոլդենբերգի հետ, որը գործակալն էր գերման Ռայխստագի պատգամաւորը էրցբերգերի, նոյնպէս եւ չափում ունէր Զուիցերական սոցիալիստ կառլ Մօրի հետ, որը միաժամանակ աշխատում էր չէխ-յայտնական, ուսարիական եւ գերմանական կառավարութիւնների համար... Այս մարդկանց միջոցով Ռադեկը իմացնում էր գերման կառավարութեան, որ բոլշեւիկների յաղթանակը ժամանակաւոր կառավարութեան (Ռուսիոյ) վրայ ժամանակի խնդիր է միայն: Եւ նա ասում էր, որ ինքը Ստոկհոլմում բնակարան չի փնտռում ձմեռուայ համար, ոլովհետեւ անմիջապէս պետրոգրադ պիտի մեկնի՝ բոլշեւիկների յաղթանակից յետոյ»:

Բոլշեւիկների արտասահմանեան կենտրոնական կոմիտէի երեք անդամներն էլ՝ Գանեցկին, Ռադեկը եւ Վարովսկին՝ փորձուած ընդյատակեայ գործիչներ էին եւ չարունակում էին պայքարել «ժամանակաւոր կառավարութեան» դէմ նոյնպիսի միջոցներով որ պայքարել էին ցարական վերապետութեան դէմ: Բայց նրանք այժմ աւելի ձեռնտու պայմանների մէջ էին: Գերմանացիները նրանց տրամադրութեան տակ էին դրել իրենց դիւանագիտական յարաբերութիւնների ամբողջ կազմը: Բացի դրանից, գոյութիւն ունէին նաեւ լաւ փորձուած կապեր Ռուսիոյ եւ Սկանդինաւեան երկրների հետ, որ կարգադրել էր Պարվուսը, Կոպէնհագէնում «Արտասահման կայան» հաստատելով: Այդ ընկերութեան վարիչն էր Գանեցկին: Այն չէուկները, թէ Պարվուսը, շնորհիւ Գերմանիայի եւ Թիւրքիոյ հետ ունեցած իր կապերի՝ միլիոններ է շահել, իրր թէ Բալկաններից հայ մատակարարելով զերման բանակին, այդ չէուկները տարած էին զլխաւորապէս ռուս ա'յն յեղափոխականների կողմից, որոնք գաղտնի կապեր ունէին նրա (Պարվուսի) հետ եւ նրա միջոցով գերման կառավարութիւնից դրամներ էին ստանում իրենց պարտուցական պրոպագանդի համար:

« Յեղափոխութեան վաճառականը » գրքի հեղինակները հետեւեալ պատմութիւնն են մէջ բերում Ստոկհոլմի աւստրօհունգարական դեսպանատան գրասենեակի պաշտօնեայ Ֆրիդրիխ Ստրասսերի մասին:

«Անկասկած է որ Պարվուսը եւ Ֆիւրստենբերգ Գանեցկին կարող էին եւ իրապէս տանում էին, Գերմանիայի օգնութեամբ, արտածման առեւտուր Ռուսաստանի հետ, Սկանդինաւեայի վրայով: Այդ արտածումը գերման ապրանքների դէպի Ռուսաստան ընթանում էր կանոնաւոր կերպով եւ նշանակալից քանակով՝ Պարվուս – Գանեցկի փիրմայի միջոցով հետեւեալ ձեւով. Պարվուսը Գերմանիայից ստանում էր մի քանի ապրանքներ, ինչպէս՝ վիրաբուժական գործիքներ, ղեղեր եւ քիմիական արտադրութիւններ, որոնց չատ կարիքն ունէր Ռուսիան, իսկ յետոյ Գանեցկին, որպէս ռուսական գործակալ, ղրանց ուղարկում էր Ռուսիա: Բայց այդ ապրանքների համար նրանք ԳԵՐՄԱՆԻԱՅԻՆ ՈՋԻՆՉ ՉԷԻՆ ՎՃԱՐՈՒՄ, իրենց ձեռք բերած բոլոր դրամները ներքին Ռուսիոյ յեղափոխութեան առաջին իսկ օրից օգտագործում էին, գլխաւորապէս, Լենինի պրոպագանդայի համար Ռուսաստանում»:

«Լենինը, գրում են գրքի հեղինակները, ամբողջովին վստահում էր Ստոկհոլմի իր քաղաքական Բիւրոյին: Պետրոգրադի եւ Ստոկհոլմի միջեւ ամբողջ ժամանակը փոխանակւում էին բազմաթիւ նամակներ: Լենինի նամակներում, Գանեցկիին ուղղուած, ՍԿԶԲԻՒՆ Ի ՎԵՐ ԴՐԱՄԻ ՀԱՐՑԸ, Բոլշեւիկեան կուսակցութեան համար, գրաւում էր առաջին տեղը: *Իր առաջին նամակում, Գանեցկիին ուղղուած, Պետրոգրադ հասնելուց մի քանի օր յետոյ, Լենինը դանդաւում էր որ մինչ այդ չի ստացել որեւէ դրամ: Հին տոմարով, Ապրիլ 12ին, Լենինը գրում էր Գանեցկիին.*

«Թանկագին ընկերներ, մինչեւ այժմ ոչի'նչ ուղղակի ոչի'նչ ո'չ նամակով, ո'չ ծրարով եւ ոչ էլ դրամ չենք ստացել ձեզնից: Միայն երկու հեռագիր Գանեցկիից ... Գրեցէք յաճախ. եղէք զերազանցօրէն զգոյշ ձեր յարաբերութիւնների մէջ: Ձեր Վ. Ուլեանով»: Իսկ Ապրիլ 22–23 նամակում (հին տոմար), Լենինը գրում էր. «ԴՐԱՄԸ (երկու հազար) ԿԱՋԱՆ – ՎՍԿՈՒՑ ՍՏԱՑՈՒԱԾ է: Ծրարները մինչեւ այժմ չենք ստացել... Սուբհանդակների հետ զործ հարթելը դիւրին չէ, սակայն այնուամենայնիւ միջոցներ ձեռք կ'առնենք: Այժմ յատուկ մարդ է մեկնում ամբողջ գործը կազմակերպելու համար: Ցոյս ունենք նրան կը յաջողուի ամէն բան հարթել... Ռադեկին բարեւ ենք ուղարկում»:

Լենինի այս նամակները առաջին անգամ հրատարակուեցին Գանեցկիի կողմից, հինգ տարի յետոյ, Մոսկուայի կոմունիստական «Պրոլետարական յեղափոխութիւն» թերթի Թիւ 9ում, 1922 թուին:

Յուլիսին Պարվուսը Բերլին էր գնում եւ համոզում էր գերման Արտաքին նախարարութեան ներկայացուցիչներին, որ բոլշեւիկեան յաղթանակը անխուսափելի է: Յուլիս 22ին Պարվուսը մեկնեց Զուիցերիա: Այդ իսկ օրերում Պետրոգրադում պայթեց բոլշեւիկների ապստամբութիւնը: « Յեղափոխութեան վաճառականները » գրքի հեղինակները գրում են.

«Յուլիս 16 եւ 17ին, նոր տոմարով, այն ժամանակ երբ Գելֆանդ – Պարվուսը Բերլինում դիւանագէտներին հաւատացնում էր բոլշեւիկների յառաջիկայ յաղթանակի մասին, Լենինը եւ իր կուսակցութիւնը կազմակերպեցին ապստամբութիւն «ժամանակաւոր կառավարութեան» դէմ, Պետրոգրադում: Ապստամբութիւնը ճնշուեց որոշ դժուարութիւնների, եւ կենտրոնական կառավարութիւնը վճռեց պատժել բոլշեւիկներին: Յուլիս 18ին «ժամանակաւոր Կառավարութեան» Արտաքին գործոց նախարարութիւնը հրատարակեց մի շարք փաստաթղթեր, որոնք նպատակ ունէին ապացուցելու, որ Լենինը եւ Բոլշեւիկեան կուսակցութիւնը մեղաւոր են պետական դաւաճանութեան մէջ: Այդ փաստաթղթերը ապացուցում էին, որ ԲՈԼՇԵՒԻԿՆԵՐՔ ԴՐԱՄ ԷԻՆ ՍՏԱՆՈՒՄ ԳԵՐՄԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԻՑ: Հրատարակուած փաստաթղթերի մէջ էին գործի հեռագիրներ Գանեցկիից եւ Կաղլովսկուց Տիկին Սամեճնոին, որ Նեստ Փիրմայի Պետրոգրադի ներկայացուցիչն էր, եւ Լենինի հեռագիրները Գանեցկիին եւ Ալեքսանդրա Կոլլոնտային: Յաջորդ օրը, Յուլիս 19ին, ռուսական ամբողջ հայրենասիրական մամուլը մեծ վերնագիրներով հանրութեան տեղեկացրեց Լենինի դաւաճանութեան մասին: Լրագրական այդ պայքարի ղեկավարներն էին՝ Գրիգորի Ալեկսինսկին, որ նախկին ղեկավարն էր բոլշեւիկների կողմից երկրորդ Պետական Դումայում, եւ Վլադիմիր Բուրցեւը, հին յեղափոխական եւ յեղափոխական չարժման յայտնի պատմաբանը: Այս երկու անձերը մեղադրում էին բոլշեւիկներին դաւաճանական դործունէութեան մէջ դեռեւս 1914 թուից եւ դեռ դրանից էլ շատ առաջ առում էին Պարվուսին»:

Ժամանակաւոր Կառավարութեան Արտաքին նախարարութեան նախարարութիւնը բոլշեւիկներին մեղադրում էր պետական դաւաճանութեան մէջ: Մեղադրագրի մէջ առում էր, որ Գանեցկին եւ Ալեքսանդրա Կոլլոնտային դրամներ էին փոխադրում, որ ստանում էին Պարվուսից Ստոկհոլմի Նէա–Բանկից փոխադրուած Սիբիրսկի բանկի վրայ, Պետրոգրադ, յատուկ հաշուին Տիկին Սամեճնոյ, որի հետ բոլշեւիկները կապ ունէին:

Ա. ԱՄՈՒՐԵԱՆ

(Շար. – 5)

Ծաղկած Փշալարեր

✳

(ՎԻՊԵՐԳ)

Երեւի կայ մէկը, որին ձեռնտու չեն աղմուկ, շիտակ, համարձակ մարդիկ եւ նրա հրամանով այդպիսիներին ոչընչացնում են...

Աչոտ դային լռեց: Բուտանոցի խորշերից մէկում մի ծղրիթ ծղրտաց: Փշալարերից ներս, տարիների ընթացքում ես տեսել ու ճանաչել էի Աչոտ դայուն: Այսօր նա ուրիշ էր: Այս ահաւո՜ր Աչոտ դային:

— Մեր կալանաւորների կենացը, — կրկնեց նա, — մեռած թէ կենդանի, միեւնոյն է, որովհետեւ մեռածները միշտ մեզ հետ են, իսկ կենդանիները մեռած են...

Ու մենք համում ենք: Գոնէ ես, համում եմ՝ ու թւում է, թէ համածս ոչ թէ օղի է, այլ ջուր, գուցէ մի քիչ զառնաւո՞ւն: Բայց այդքանը միայն: Մեծ տպաւորութիւն թողեց առաջին բաժակը: Ութ տարուայ դադարից յետոյ, այդ առաջին բաժակ օղին իմ մէջ ոդեկոչեց կեանքիս մէջ համած բոլոր օղիները: Ես ինձ զգացի վառուղ ու այրող բացերում եւ կարծես կորուեցի հողից: Մշուշուեցին Աչոտ դայու եւ Խոնասի դէմքերն ու բրուտանոցն ու ամբողջ աշխարհն ասես չարժուեցին տեղից ու լողացին դէպի անյայտութիւն: Ցետոյ իմ ականջին հասան Աչոտ դայու խօսքերը եւ կամաց–կամաց, ասես խարխափելով, դուայ ինձ:

— ... Հիւանդ արդարութեան կենացը համենք, ծանր է նրա դրութիւնը, բայց նա չի մեռնի: Երբ հիւանդ է արդարութիւնը, մարդիկ խեղճանում են, մանրանում, դառնում երկկրեսանի, չար, եսասէր, ատրաքարչ: Ներանք քծնում են, լիզում իրենց ոտնակոխող սարսկինները, սուտ են խօսքեր, որոնք իրենցը չեն, կատարում են գործեր, որոնց համաձայն չեն, բայց կատարում են, որովհետեւ արդարութիւնը հիւանդ է, չի կարող նրանց կարգի բերել:

— ... Հին է ու միշտ նոր չարի ու բարու կռիւը եւ միշտ բարին է յաղթահակել: Համենք այն մեծ օրուայ կենացը, երբ վերջին բանտարկեալը կը թողնի վերջին բանտը: Թող բանտերի տեղ դպրոցներ չինուեն ու ճամբարների դրաւած լայնածաւալ հողերը գորենի արտեր դառնան: Հայդուկ, ինձ լսի'ր, կը գայ այդ օրը:

Այնուհետեւ Խոնասը մի երգ է երգում: Ես առաջին անգամն եմ լսում այդ երգի եղանակն ու խօսքերը, բայց ինձ թւում է, որ գիտեմ, թէ ինչի մասին է: Աչոտ դային հարցնում է.— Ինչի՞ մասին է այդ երգը, — Խոնասը նայում է իր բարեկ մատներին եւ պատասխանում.— Կէս գիշեր է, բայց աքաղաղներն անգամ գիտեն, որ լուսաբացը հեռու չէ: Իսկ ես, մարդ տեղովս, յուսահատուել եմ... — Այդ ո՞ւմ խօսքերն են, — հետաքրքրւում եմ ես: — Իմ խօսքերն են, — կարմրում է Խոնասը:

Այդ ես չգիտէի, վճռականապէս չգիտէի:

Այդպէս: Այստեղից՝ հետեւութիւն, — վիշտն իրաւարանի՛ն անգամ կարող է բանաստեղծ դարձնել: Ես յիշում եմ իմ ընկերներից մէկին, իրաւաբան Վահրամ Շատուորեանին: Նա ծաղրում էր բանաստեղծներին: Տեսնես նասո՞ծ է, թէ... եթէ նասած է, չպէտք է կասկածել, որ նա էլ հիմա բանաստեղծի է վերածուել: Խե՛ղճ Վահրամ:

— Հայդուկ, — զառնում է ինձ Աչոտ դային խմելով իր օղին, — ո՞նց էր այն մանկական բանաստեղծութիւնը... ա՛յն, յիշո՞ւմ ես, հիւանդանոցում...

Ու նա ցուցամատը դնելով ճակատին՝ յիշում է.

Էսպիսի բան ո՞վ է տեսել աւետառում,
այ քաւոր,
Որ ժանտաֆիսը դառնայ թագաւոր,
թագաւոր...

— Լաւ մանկական բանաստեղծութիւն է, խօսք չկայ, — չարունակում է Աչոտ դային, — եկէք խմենք մեր Մամոյի ու «Լո՛ւռ՛ուղմիլա»ի կենացը: Սիրոյ կենացը: Եթէ ես գրող լինէի, մի մեծ գիրք կը գրէի նրանց սիրոյ մասին: Երկուսն էլ հիմա տանջւում են, — ինչո՞ւ համար, ո՞ր մեղքի համար: Ո՞ր օրուանից սէրը գործել է յանցագործութիւն: Ու որպէսզի լրիւ լինի կենացը, խմենք նաեւ կենացը, որը պիտի աշխարհ գայ: Նա ի՞նչ իմանայ, թէ ինչ աշխարհ է գալիս: Եթէ սխալուի, ապրի, ոչ հօրը պիտի ճանաչի, ոչ մօրը: Ինչպէս Թումանեանն է ասել՝

Անհեր ու անմեր
Իմ Գառնիկ ախպեր...

— Խմենք միլիոնաւոր Գառնիկ ախպերների կենացը, ճանաչո՞ւմ են իրենց հայրերին թէ ոչ, կը վերադառնա՞ն իրենց հայրերը թէ ոչ... ես կ'ուզենայի, հոգուս չափ կ'ուզենայի, որ նրանք իրենց հայրերին գտնէին, որ նրանք...

ԳՈՒՐԳԷՆ ՄԱՀԱՐԻ

(41 – Շար.)

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐԳԵ

ՆԱՊԱՀԴ ՊԱՍ

ՀՊՊԱՀԻ

Ա.

— Նապաստակ մը, որուն կ՚ըսեն ես եմ։

Ես ու Վիկեն կը նայինք իրարու։ Ինչո՞ւ համար ան ինքզինքը նապաստակ կ՚անուանէ։ Ինչո՞ւ համար ան կ՚ուզէ, որ ես ալ զինքը նապաստակ անուանեմ։ Ես ու Վիկեն կը նայինք իրարու, ու ոչ մէկ բառ կ՚արտասանենք։ Ան ալ կը նայի մեզի, ու ոչ մէկ բառ կ՚արտասանէ։ Ան կը նստի մեր դիմաց, ու ոչ մէկ բառ կ՚արտասանենք

Տէր եւ Տիկին Շամլիկեան եւզատակները, Տէր եւ Տիկին Արամ Գառնիկեան եւ զաւակները, այլ եւ Տիկին Սիրվարդ Օհան – եան, Ֆրէնկեան ընտանիքները, Գրկոյ – եան ընտանիքը եւ բոլոր պարագաները ցաւով կը ծանուցանեն իրենց հօր, մեծ–հօր, եղբօր, մօրեղբօր եւ աղգականին՝

ԹԱԳՒՈՐ ԳԱՌՆԻԿԵԱՆԻ

մահը, որ պատահեցաւ Դեկտ. 27ին։

Յուղարկաւորութիւնը կը կատարուի այս Շաբաթ (Դեկտ. 30) ժամը 10·30ին Ռուիլա Հաստատութիւնը, 76, Ռիւ տը Փիքփիւս, ուրկէ մարմինը կը փոխադրուի Թրէլ գերեզմանատունը։

Մահագդ դրկուած չըլլալով կը խնդրուի ներկայս իրրեւ այդ նկատել։

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Այլ եւ Տիկին Վահան Աբաջեան, զաւակներն ու թոռները՝ Մանուկ, Հայկուհի, Զարեհ եւ Վահան, Տիկին Մանուշակ Աբաջեան, զաւակներն ու թոռները՝ Լօրան, Լվլին, Ժան–Քլօտ եւ Ժեռար, ընտանիքներ՝ Ագնատուրեան, Քելէչեան, Մուրաճեան, Տըժիռօլմօ, Գալեման, Նուրեան, Սերճանեան։ Ամերիկայէն՝ ընտանիքներ՝ Մալխասեան, Պաղդը–Սարգիս, Մապլում կը ծանուցանեն թէ հոգեհանգստեան պաշտօն կը կատարուի Կիրակի 7 Յունուար Ս. Ցոմկ. Մկրտիչ եկեղեցին

ՎԱՀԱՆ ԽԼՏԼՃԵԱՆԻ

մահուան քառասունքին առթիւ, եւ

ՋԱՐԵՀ ԽԼՏԼՃԵԱՆԻ

մահուան յիշատակին։

Ի դիտութիւն ողբացեալներուն յիշատակը յարգողներուն։

×

Տէր եւ Տիկին Գալեման (Փավիյոն–նուա–Պուա), զաւակներն ու թոռները եւ ընտանեկան պարագաները կը ծանուցանեն թէ հոգեհանգստեան պաշտօն կը կատարուի Կիրակի 7 Յունուար առաւօտ Փարիզի Ս. Ցոմկ. Մկրտիչ եկեղեցին իրենց մօր եւ մեծ–մօր՝

ՔԱՐՈԼԻՆ ԱԶԻԶԵԱՆԻ

մահուան յիշատակին։

Ի դիտութիւն ողբացեալին յիշատակը յարգողներուն։

×

Այլ Տիկին Ագնիւ Ագնատուրեան (Մարսէյլ – Սէն Լուս 95 տարեկան), զաւակները թոռներն ու թոռները թոռները եւ բոլոր պարագաները կը ծանուցանեն թէ հոգեհանգստեան պաշտօն կը կատարուի Կիրակի 7 Յունուար առաւօտ Փարիզի Ս. Ցոմկ. Մկրտիչ եկեղեցին՝

ԿԱՐԱՊԵՏ ԱԶՆԱՒՈՒՐԵԱՆԻ
(Ամասիացի)

մահուան 15րդ տարեդարձին առթիւ։

Ի դիտութիւն ողբացեալին յիշատակը յարգողներուն։

×

Պ. Սարգիս Մելքոնեան հոգեհանգստեան պաշտօն կատարել կուտայ 1915ին իր բոլոր նահատակուած ՊՈՒՐՀԱՆՑԻ (Սեբաստիոյ նահանգ) հայրենակիցներուն յիշատակին, Կիրակի, Յունուար 7, Փարիզի Ս. Ցոմկ. Մկրտիչ եկեղեցւոյ մէջ։

Յիշատակը յարգողները կը հրաւիրէ։

«ՅԱՌԱՋ»Ի ԲԱՐԳԱՒԱՃՄԱՆ ՀԱՄԱՐ

(Համակրաւիճ տեղահանութեան առթիւ)

Փոխան ծաղկեպսակի Ցովհ. Հացա – գործեանի մահուան առթիւ,—

Մարսէյլէն՝ Պ. Ա. Զրբաշեան 200 Ֆր., Շալճեան ընտանիք 50, այլ Տիկին Թադուհի Գալուստեան եւ զաւակները 30 Ֆր.։

×

Տրակինեանէն, այլ Տիկին Վ. Համեան 80 Ֆր. կը նուիրէ, Պ. Թէրզեան 20։

Մարսէյլէն, Տիկին Ա. Էթմէքճեան 30 Ֆր. կը նուիրէ, Պ. Թունկուրեան 30 Ֆր.։

Տէր եւ Տիկին Պերճ Գալոֆեան (Ռոպէնհան) 30 Ֆր. կը նուիրեն։

Ամանորի Առթիւ «ՅԱՌԱՋ» կը Նուիրուի

Մարսէյլէն Պ. Մկրտիչ Թոնկուրեան մէկ տարեկան «Յառաջ» կը նուիրէ իր կնքահօր՝ Գրիգոր Փանոսեանի՝ Մարսէյլ։

ՅԱՒԱԿՅՈՒԹԻՒՆ

ԱԼՖՈՐՎԻԼ.— Հ. Յ. Դ. «Ս. Մինասեան» ենթակոմիտէն ցաւակցութիւններ կը յայտնէ Տէր եւ Տիկին Սարգիս Սարգիսեանի, Տէր եւ Տիկին Սերոբ Գալիբեանի եւ ընտանեկան բոլոր պարագաներուն, իրենց մօր եւ մեծ–մօր՝ այլ Տիկ. Տիրուհի Եսիքարտաչեանի մահուան առթիւ։

ՓՈԽԱՆ ԾԱՂԿԵՊՍԱԿԻ

Տրակինեանէն, այլ Տիկին Վ. Համեան Տիկին Վարդանուշ Պզտիկեանի մահուան առթիւ կը նուիրէ 100 Ֆր. Սամուէլ Մուրատ վարժարանին, 100 Ֆր. Դպրոց – ցասէր Տիկնանց վարժարանին, 50 Ֆր. Կապոյտ Խաչին (առանձ «Յառաջ»էն)։

×

Ողբացեալ Ցովհաննէս Հացագործեանի մահուան տխուր առթիւ Պօմոնի Ս. Գր. Լուսաւորիչ եկեղեցւոյ կը նուիրեն, փոխան ծաղկեպսակի.—

Պ. Կուրտիկեան 100 Ֆ., Վարդան Պանտիկեան, Վասպուրականի Հայր. Միութիւն, Դարբինեան ընտանիք, Պր. Աղաւնիեան, Պ. Քրիսթոֆ Թէրզիպաշեան, Պ. Մելքոնեան Ժան, Տէլիպօյաճեան ընտանիք, Շալճեան ընտանիք 50ական, Տէր եւ Տիկ. Վահրամ Գրիգորեան, Պ. Անդրանիկ Էլօեան, Պ. Հացագործեան ձորձ 30ական, Տէր եւ Տիկ. Նուպար Հէլվաճեան 25, Տէր եւ Տիկ. Նիկողոսեան, Պ. Յակոբ Տօլպաշեան, Պ. Միսաք Ավտոյեան, Տիկ. Ռոզա Տօրումեան, Պ. Գալուստեան, Տիկ. Հայկուհի Թէրզիպաշեան, Տէր եւ Տիկ. Գուրգէն Սաեւեան, այլ Տիկ. Սոֆի Ատրանեան, այլ Տիկ. Թագուհի Գալուստեան եւ զաւակները, Տէր եւ Տիկին Գր. Պօյաճեան 20ական Ֆ., Տիկին Նեկտար Մանէսէեան, Պր. Անդրանիկ Ղըմեան, Պ. Ցովհ. Տէր–Վարդանեան 10ական Ֆր.։

IMPRIMERIE SPÉCIALE
DU JOURNAL «HARATCH»
32, RUE DE TRÉVISE — PARIS (9e)

ԿԱՊՈՅՏ ԽԱՉԻՆ

Կապոյտ Խաչի Շաւիլի մասնաճիւղը 2000 Ֆր. կը նուիրէ ի նպաստ կայանի նոր չէնքի Ֆոնտին։

ՇՆՈՐՀԱԿԱԼԻՔ

Տէսինի Մշակոյթի Տան նորոգութեան յանձնախումբս շնորհակալութեամբ ստացած է 400 Ֆր. Տիկին Հռիփսիմէ Մուրատեանէ՝ չէնքին նորոգութեան համար, իր ամուսնոյն ողբ. Տիգրան Մուրատեանի մահուան չորրորդ տարելիցին առթիւ։

Յանձնախումբս կը յուսայ նաեւ, որ ուրիշներ ալ օրինակեն այս օրհնաբեր ուրիշներ ալ մօտաւոր ժամանակներ։

ՇԱԻԻԼԻ Ս. ԳՐ. ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

Դպրոցի աշակերտներուն ծնողքները սիրայօժար խորհրդակցական ժողովի կը հրաւիրուին այս Շաբաթ 30 Դեկտ. ժամը 14·30ին, դպրոցի սրահին մէջ։

ԽՆԴՈՅՔ

ՏԷՍԻՆԻ ՄԷՋ

Վասպուրականի Հայր. Միութիւնը Ծնունդի առթիւ խնջոյք մը կազմակերպած է ճաշով, Յունուար 6ին, ժամը 20ին մինչեւ լոյս, Քազաքապետարանի սրահին մէջ։

ՀՈԳԵՀԱՆԳԻՍՏ

Այլ Տիկին Վահան Աբաջեան, զաւակներն ու թոռները՝ Մանուկ, Հայկուհի, Զարեհ եւ Վահան, Տիկին Մանուշակ Աբաջեան, զաւակներն ու թոռները՝ Լօրան, Լվլին, Ժան–Քլօտ եւ Ժեռար, ընտանիքներ՝ Ագնատուրեան, Քելէչեան, Մուրաճեան, Տըժիռօլմօ, Գալեման, Նուրեան, Սերճանեան։ Ամերիկայէն՝ ընտանիքներ՝ Մալխասեան, Պաղդը–Սարգիս, Մապլում կը ծանուցանեն թէ հոգեհանգստեան պաշտօն կը կատարուի Կիրակի 7 Յունուար Ս. Ցոմկ. Մկրտիչ եկեղեցին՝

ԿԱՐԱՊԵՏ ԱԶՆԱՒՈՒՐԵԱՆԻ
(Ամասիացի)

մահուան 15րդ տարեդարձին առթիւ։

Ի դիտութիւն ողբացեալին յիշատակը յարգողներուն։

×

Պ. Սարգիս Մելքոնեան հոգեհանգստեան պաշտօն կատարել կուտայ 1915ին իր բոլոր նահատակուած ՊՈՒՐՀԱՆՑԻ (Սեբաստիոյ նահանգ) հայրենակիցներուն յիշատակին, Կիրակի, Յունուար 7, Փարիզի Ս. Ցոմկ. Մկրտիչ եկեղեցւոյ մէջ։

Յիշատակը յարգողները կը հրաւիրէ։

ՆՈՐ ՏԱՐՕՒԱՆ ԵՒ ԾՆՈՒՆԴԻ
ՏՕՆԵՐՈՒՆ ԱՌԹԻՒ

ԱՌՆՈՒՎԻԼԻ ԵՒ ՇՐՋԱԿԱՅՔԻ ՄԻԱԿ ՀԱՅ ՆՊԱՐԱՎԱՃԱՌԱՏՈՒՆԸ՝

ՆԻԿՈՂՈՍԵԱՆ

կը շնորհաւորէ իր յաճախորդները զոյգ տօներուն առթիւ եւ կը յիշեցնէ անգամ մը եւս թէ իր մօտ պիտի գտնէք մատչելի գիներով ամէնէն ընտիր եւ նոխ հայկ. աղանդերներն ու անուշեղէնները, եւ չոր պտուղներն որ պիտի զարդարեն ձեր սեղանները

N. NIGOGHOSSIAN

121, Ave. Henri-Barbusse — 95400 - ARNOUVILLE - LES - GONESSE
Tél. : 985-04-46

Ս. ՅՈՎՀ. ՄԿՐՏԻՉ ԵԿԵՂԵՑԻ

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ս. ԾՆՈՒՆԴԻ ՏՕՆԱԿԱՆ ՕՐԵՐՈՒ ԱՐԱՐՈՂՈՒԹԵԱՆՑ

Երկուշաբթի, 1 Յունուար — ԿԱՂԱՆԴ. եւ ՏԱՐԵՄՈՒՏ։ Գ. օր Ծննդեան պահոց։ Ժամը 10ին պատարագ կը մատուցուի։

Ուրբաթ, 5 Յունուար.— Ձրագալոյց Ծննդեան եւ Աստուածայայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Սկիզբ ժամերգութեան եւ ընթերցուածներու՝ երեկոյեան ժամը 4·30ին, ձրագալոյցի պատարագ ժամը 5·30ին։

Շաբաթ, 6 Յունուար — Տօն Ծննդեան եւ Աստուածայայտնութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Սկիզբ ժամերգութեանց ժամը 8ին։ Բաղմաձայն պատարագ ժամը 10ին։ Կը պատարագէ եւ կը քարոզէ՝ ՍԵՐՈՎԲԷ ԱՐՔ. ՄԱՆՈՒԿԵԱՆ (Կաթող. Պատուիրակ Հայոց Եւրոպայի)։ Պատարագէ ետքն կը կատարուի ջրօրհնէք։

Կիրակի, 7 Յունուար 1973 — Բ. օր Ծննդեան։ Ցիշատակ Է մեռելոց։ Ժամը 10ին պատարագ կը մատուցուի։ Պատարագէ ետքն մասնաւոր Հոգեհանգիստ կը կատարուի վանն համօրէն ննջեցելոց։

Երեքշաբթի, 13 Յունուար — Ը. օր Ծնընդեան։ Տօն Անուանակոչութեան Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի։ Ժամը 10ին պատարագ կը մատուցուի։ Պատարագի ետքն մասնաւոր Հոգեհանգիստ կը կատարուի վանն համօրէն ննջեցելոց։

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՏՕՆԱՒԱՃԱՌ

Կազմակերպուած Հ. Բ. Ը. Միութեան Մարսէյլի մասնաճիւղի եւ Ս. Սահակ–Մեսրոպ Մայր եկեղեցւոյ վարչութեան ներու կողմէ։

Տեղի պիտի ունենայ 7 Յունուար, Կիրակի կէսօրէն ետք ժամը 4ին, Միութեան սրահին մէջ, 7 Ռիւ Փաւէէր։

Կը հովանաւորէ Յակոբ եպիսկոպոս Վարդանեան։

Տօնաճառի հանդիսութեան կը մասնակցի հայերէնի դասընթացքի երկտեւ աշակերտութիւնը իրենց հայերէն երգերով, արտասանութիւններով եւ դանազան անակնկալներով։

Կը հրաւիրուին բոլոր ծնողքներն ու հայրենակիցները անխտիր։

ՄՈՒՏՔԸ ԱԶԱՏ Է

ատարան Առաջնորդարանի սրահին մէջ անօրհնէք կը կատարուի։

×

Համաճայն Հայաստանեայց եկեղեցւոյ աւանդութեան, տարին երկու տաւիթներով՝ Ս. Ծնունդին եւ Զատիկին, Հայոց տուները կ'օրհնուին՝ տնօրհնէք կը կատարուի։

Այն ընտանիքները, որոնց եկեղեցական մը չայցելէ՝ տաներէկ չունին, թող հաճին տեղեկացնել եկեղեցւոյս դիւանին՝ տալով իրենց հասցէն, որպէսզի հոգեւորական մը ուղարկուի։

ՉԱՏԻԿԸ ՊԷՅՐՈՒԹ ԵՒ ԵՐՈՒՍԱՂԷՄ

ԱՊՐԻԼ 18ԷՆ ՄԱՅԻՍ 3

Ուղեկցին կ'ընկերանան Վարուժան Սարգիսեան եւ Դաւիթ Ծ. Վ. Սահակեան (Երուսաղէմ)

ՄԵԿՆՈՒՄ Փարիզէն, Լիոնէն, Մարսէյլէն կամ Նիսէն։

Pâques à Beyrouth et Jérusalem

DU 18 AVRIL AU 3 MAI

Accompagnateurs V. Sarkissian et pour Jerusalem R. P. Tavit Sahaguian

DEPART de : Paris, Lyon, Marseille ou Nice

Renseignements et Inscriptions :

agence de voyages SEVAN

50, Cours de la Liberté — LYON
Tél. : 60-13-66

DANS LE VASTE SALON DU PLUS GRAND HOTEL DE FRANCE

LE MERIDIEN

81, Bd. Gouvion St. Cyr, Paris (17e)
Vendredi, 12 Janvier à 20 heures

GRAND COMBAT INTERNATIONAL DE

BOXE

Dîner au champagne, fin de Soirée dansante

Super-Welters — 10 reprises de 3 minutes

Jacques KECHICHIAN

contre

Antonio TORRES

Location : l'Equipe, 10, Fbg. Montmartre (824-70-80)
Le Méridien, 81, Bld. Gouvion, St. Cyr (758-12-30)

Clôture de la location : 8 Janvier
PARKING ASSURE